

ԱՐՄԵՆ ԱԳԱԳՑԱՆ

ՀՅՈՒՄԻՄԿՈՎԿԱՍՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ
ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՅԱՔԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏՅՔՄԱՆՈՒՄ
(1920 – 1971 թթ.)

9(56)

2h-77

h2

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ

1094

ՀՅՈՒՄԻՍԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

(1920 - 1971 թթ.)

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2011



Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան
խմբագիր՝ Դավիթ Չիլինգարյան

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է «ՆԱՐ-ԱՌ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

Ավագյան Արսեն

Ա. 770 Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920 – 1971 թթ. / Ա. Ավագյան; Պատասխ. խմբ.՝ Ն. Հովհաննիսյան; Խմբ.՝ Դ. Չիլինգարյան. – Եր.: Հեղ. հրատ., 2011, 343 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր Արսեն Ավագյանի մենագրությունը նվիրված է հայ պատմագրության մեջ տակավին չուսումնասիրված մի խնդրի: Գրքում տարատեսակ և բազմաբնույթ արխիվային փաստաթղթերի, իրադարձությունների մասնակիցների, քաղաքական գործիչների ու ակնատեսների հուշագրությունների, հյուսիսկովկասյան վտարանդիության պարբերականների և տարբեր լեզուներով հրատարակված գրականության գիտական վերլուծության հիման վրա ներկայացվում են 1920-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության քաղաքական գործունեությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում կառավարող շրջանների կողմից հյուսիսկովկասյան վտարանդիության օգտագործման տագնապարական ուղեգիծը, ինչպես նաև տարբեր պետություններով ցրված հյուսիսկովկասյան վտարանդիության 1920–1971 թթ. ընդհանուր պատմությունը:

Մենագրությունը հասցեագրված է թուրքագետներին, կովկասագետներին, պատմաբաններին և տվյալ թեմայով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանին:

ՀՏԴ 94/99:32.001

ԳՄԴ 63.3 + 66

Հյուսիսային Կովկասի արևմտյան հատվածի ժողովուրդները (չապսուղներ, ադրդներ, արդագներ, ուպրխներ և այլն, որոնց Մերձավոր Արևելքի երկրներում անվանում են «չերքեզներ»¹) հայերի, հրեաների կամ իռանդացիների նման պիյուոքածին ազգեր են, քանի որ նրանց գերակշռող մասն ապրում է իրենց հայրենիքի սահմաններից դուրս²: Չերքեզները ներկայումս ապրում են մոտ 40 պետություններում, սակայն նրանց ամենաստվար զանգվածը բնակվում է Թուրքիայում³:

¹ «Չերքեզ» տերմինի ծագումնաբանության և տարածման մասին ավելի հանգամանորեն տես *Арсен Авакян. Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Е., Изд. «Гитутюн», 2001, сс. 13–30*: Ռուսաստանում «չերքեզ» տերմինն օգտագործվում է որպես ադրդների ընդհանուր անվանում, ԽՍՀՄ-ում այն վերաբերել է Կարաչայ-Չերքեզական ԻՄ հիմնական բնակչությանը (տես «ՀՄՀ», հ. 9: Ե., 1983, էջ 15): Մույն աշխատությունում «չերքեզ» անվանումն օգտագործված է այն իմաստով, որով օգտագործվել է Օսմանյան կայսրությունում և այժմ հանրապետական Թուրքիայում, այն է՝ բոլոր կովկասյան ժողովուրդների նկատմամբ, որպես ռուսական «*чужие*» տերմինի համարժեքը: Նման մոտեցումը բնորոշ է նաև Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի պատմությունն ուսումնասիրող եվրոպացի գիտնականներին: Այսպես, հյուսիսկովկասյան համայնքի պատմության ճանաչված մասնագետ, Մտամբուլի Անատոլիական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի (French Institute of Anatolian Studies – IFEA) գիտաշխատող դ-ր Ալեքսանդր Տումարկինը «չերքեզ» անվանումն օգտագործում է «հյուսիսկովկասցի (Kuzey Kafkasyalı)» իմաստով (տես *Alexandre Toumarkine. Kafkas ve Balkan Göçmen Dernekleri: Sivil Toplum ve Milliyetçilik. «Türkiye’de Sivil Toplum ve Milliyetçilik», İstanbul, İletişim Yayınları, 2001, s. 425*):

² Տես *Doç. Dr. Sevda Alankuş Kural. Diasporik Bir Topluluk Olarak Çerkesler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 259; Yalçın Karadaş, Çerkes Kimliği. Türkiye’nin Sorunları. İstanbul, Sorun Yayınları, 2009, s. 75–77*:

³ Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասցիների թվաքանակի մասին կան տարբեր տվյալներ: Հյուսիսկովկասյան համայնքի տվյալներով՝ Հյուսիսային Կովկասից դուրս ապրում են մոտ 6 մլն հյուսիսկովկասցի, որոնցից 5 մլն-ը՝ Թուրքիայում (տես *Muhittin Ünal. Kafkas Halklarının Anavatanlarından Sürülüşlerin 136 Yılı Anma Töreni. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 113*): Չերքեզական ծագում ունեցող մի շարք գիտնականներ այդ թիվը հասցնում են 8 մլն-ի (տես *Prof. Dr. Anıl Çeçen. Çeçenistan Dosyası. Ankara, Yeni Avrasya Yayınları, 2002, s. 145*): Քաղաքական նկատառումներով թուրքական մամուլում

Մերձավոր Արևելքում առաջին անգամ չերթեզական փոքրամասնության հայտնվելը պայմանավորված էր ստրկավաճառությամբ: Հյուսիսային Կովկասի սահմաններից դուրս յուրահատուկ «չերթեզական» պետություն դարձավ մավրբական Եզիպտոսը, որտեղ ստեղծվեց չերթեզ կառավարիչների «բուրջի» հարստությունը³: Սակայն Հյուսիսային Կովկասից պարտադրված գանգվածային բռնագաղթեցումը տեղի ունեցավ 19-րդ դարի երկրորդ կեսին՝ 60 տարուց ավելի տևած Կովկասյան պատերազմում լեռնականների կրած պարտությունից հետո: Օսմանյան կայսրություն հյուսիսկովկասյան ժողովուրդների արտագաղթը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի:

Առաջին՝ ամենագանգվածային, արտագաղթը տեղի ունեցավ 1859–1866 թթ., երբ գաղթեցին Արևմտյան Կովկասի աղբղե-արխագական ցեղերը: Պատմագրության մեջ այդ գաղթը հայտնի է որպես «մեծ գաղթ», կամ «մահաջիրություն»⁴: Կովկասյան

երկրում ապրող հյուսիսկովկասցիների թիվը նույնպես ուժեղացվում է: Այսպես, 1996 թ. հունվարին ռուսական «Ավրասիա» շոգևավի գավթմանն առնչվող իրադարձությունների ժամանակ «Միլիյեթ» օրաթերթի պունակագիր Սամի Քոհենը գրել է, որ Թուրքիայում ապրում են «կովկասյան ծագում ունեցող 7 մլն բաղաբացի, որոնք Կովկասի հետ կապված հարցերում ուժեղ լոբբի են ստեղծում» (տես *Sami Kohen. Kan Akmadan Bitmeli. «Milliyet», 18 Ocak 1996*): Մեկ այլ թուրքական օրաթերթ՝ «Տումուրիեթը», գրել է, որ «Թուրքիայում կա մոտավորապես 6 մլն կովկասյան ծագում ունեցող բաղաբացի» (տես «Kafkaslar». «Cumhuriyet», 18 Ocak 1996): Սակայն մի շարք գիտնականներ այդ թիվը չափազանցված են համարում և գտնում, որ այն Թուրքիայում 3-4 մլն է, նույնիսկ չի գերազանցում 1,5 – 2 մլն-ը (տես *Peter Alford Andrews. Ethnic Groups in the Republic of Turkey. Wiesbaden, 1989, pp. 144 –148, 236 – 246*):

³ Տես *К. Э. Босворт. Мусульманские династии. М., «Наука», 1971, с. 101*:

⁴ Տես *Dr. Cahit Tutum. 1864 Göçü ile İlgili Bazı Belgeler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 8*: Վերջին շրջանում ավելի հաճախ օգտագործվում են «արտաքսում» և «ցեղասպանություն» որակումները:

ժողովուրդներն 1859–1866 թթ. իրենց արտաքսումն անվանում են «*Yistanbilak'ue* (ճանապարհորդություն դեպի Ստամբուլ)»⁵:

Երկրորդ փուլը ներքին տեղահանման շրջանն է, երբ օսմանյան կառավարությունը 1878–1879 թթ. Բալկաններում տարածքներ կորցնելուց հետո այնտեղ բնակեցված չերթեզներին տեղափոխեց Օսմանյան կայսրության ասիական վիլայեթներ՝ Անատոլիա, Սիրիա, Հորդանան⁶:

Երրորդ՝ վերջին, գանգվածային արտագաղթը տեղի ունեցավ 1919–1928 թթ.: Այն պայմանավորված էր Ռուսաստանում մղվող քաղաքացիական պատերազմով, Կովկասում խորհրդային կարգերի հաստատմամբ և Հյուսիսային Կովկասում հակախորհրդային ապստամբությունների ճնշմամբ⁷: Սակայն բացի այս հիմնական գաղթերից, 1864–1920 թթ. ժամանակահատվածում Հյուսիսային Կովկասի տարբեր ժողովուրդներ ու ցեղեր փոքր խմբերով ևս գաղթել են Օսմանյան կայսրություն⁸:

Հյուսիսկովկասյան փոքրամասնության իրավական կարգավիճակի, սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության զգալի առանձնահատկությունները կախված են բնակության երկրում առկա պայմաններից: Եթե Հորդանանում չերթեզները պետութենակերտ ազգ

⁵ A.g.e.:

⁶ Տես *Kemal H. Karpat. Avrupalı Eg- nenliğinde Müslümanların Konumu Çerkeslerin Sürgünü ve Suriyedeki İskanı. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», s. 88–90*:

⁷ Թուրքիա հյուսիսկովկասցիների արտագաղթի (մահաջիրության) վերաբերյալ ավելի հանգամանորեն տես *İzzet Aydemir. Göç. Kuzey Kafkasya'lıların Göç Tarihi. Ankara, Gelişim Matbaası, 1988*; *Г. А. Дзидзария. Махаджирство и проблемы истории Абхазии XIX века. Сухуми, 1975*; *Арсен Авакян. Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Е., Изд. «Гитутюн», 2001*; *Նիկոլայ Հովհաննիսյան. Արաբական երկրների պատմություն. հ. II, Ե., «Զանգակ – 97», 2004*:

⁸ Տես *Арсен Авакян, указ. раб. сс. 94–145*: Օրինակ՝ Օսմանյան կայսրություն կարաչայների և բալկարների գանգվածային գաղթը տեղի ունեցավ 1884–1887 և 1905 – 1906 թթ. (տես *З. Б. Кипкеева. Карачаево-балкарская диаспора в Турции. Ставрополь, 2001, сс. 8 – 26*), արխագների՝ 1878 – 1879 թթ.:

են և նույնիսկ ունեն ավելի մեծ արտոնություններ, քան բնիկ արաբ ազգը, իսկ Իսրայելում բնակվող չերքեզների ազգային ինքնության սրահպանման ու զարգացման համար ստեղծված են բոլոր պայմանները, ապա Թուրքիայում իրականացվող թուրքացման բաղադրականության հետևանքով չերքեզների մի ստվար զանգված ուժացավ, իսկ «չերքեզ» տերմինն սկսեց արտահայտել ոչ թե էթնիկական, այլ մշակութային պատկանելությունը: Նույնիսկ 1990-ական թվականներից հետո, երբ Թուրքիայում իրագործվեցին էական ժողովրդավարական փոփոխություններ և ըստ այդմ ստեղծվեցին ազգային ինքնության վերախմաստավորման ու զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ, չերքեզ մտավորականության մի զգալի հատված հանդես է գալիս «թուրքական ինքնության հետ մեկտեղ չերքեզներին բնորոշ մշակութային ինքնության պահպանման» դիրքերից⁹: ՌԻստի Թուրքիայի չերքեզների մի մասի կարծիքով՝ չերքեզական ինքնության պահպանումը պահանջում է առաջին հերթին բարենպաստ պայմաններ ստեղծել լեզվի ու մշակութային ավանյությունների պահպանման համար: Եկվոր լինելու հանգամանքը երաշխիք է, որ Թուրքիայում չերքեզները չեն կարող հանդես գալ անջատողական կամ քաղաքական պահանջներով և հավատարիմ կլինեն իրենց համար երկրորդ հայրենիքը դարձած պետությանը, հատկապես, որ ավանդաբար իրենց պետութենամիտությամբ հայտնի չերքեզները դիտվում են որպես «վստահելի տարր»¹⁰:

Թուրքիայում և այլ պետություններում հաստատված հյուսիսկովկասյան սփյուռքում ինքնության պահպանման և քաղաքական ակտիվության տեսակետից 1920-ական թվականների վտարանդիները նախորդ շրջաններում գաղթածների համե-

⁹ *Shu Yaşar Bağ. Çerkeslerin Dramı: İşgal, Soykırım, Sürgün ve Göç. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», s. 217:*

¹⁰ *Shu Yalçın Karadağ. Çerkes Kimliği. Türkiye'nin Sorunları. İstanbul, Sorun Yayınları, 2009, s. 16:*

մատությամբ աչքի են ընկնում մի շարք կարևոր առանձնահատկություններով:

1. 1920–1927 թթ. գաղթականության հիմնական զանգվածը կազմված էր քաղաքանապես ակտիվ անձանցից, այդ թվում՝ Լեոնականների հանրապետության նախկին ղեկավարներից, խորհրդային կարգերի դեմ եռանդուն պայքար մղածներից, ցարական բանակում ծառայածներից և սպիտակ գվարդիականներից, որոնք ստիպված էին լքել հայրենիքը՝ դրսում պայքարը շարունակելու և հաղթանակից հետո Հյուսիսային Կովկաս վերադառնալու ակնկալիքով:
2. 1920–1927 թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության մի զգալի մասը Թուրքիան համարում էր ժամանակավոր ապաստան ու ջանքեր էր գործադրում իր ինքնությունը պահպանելու և չձուլվելու ուղղությամբ՝ դրանով իսկ տարբերվելով Օսմանյան կայսրություն նախկինում գաղթած լեոնականներից, որոնք արդեն ինտեգրվել էին և դարձել թուրքական հասարակության բաղկացուցիչ մաս: «Մեծ գաղթի» ժամանակ տեղափոխվածների սերունդներից շատերը Թուրքիան համարում էին հայրենիք, իսկ իրենց՝ «հյուսիսկովկասյան ծագում ունեցող թուրքեր», կամ «չերքեզ թուրքեր»: Այսպես, Թուրքիայի վարչապետ Ռաուֆ Օրբայը* չէր սիրում հիշել իր արխազական ծագման մասին¹¹, իսկ թուրքական գաղափարախոսության ջատագով, ազգությամբ

* Չարկ ենք համարում նշել, որ սույն աշխատության մեջ մենք ձգտել ենք միօրինակացնել անձանուկների հայերեն տառադարձությունը՝ այն հնարավորինս մոտեցնելով թուրքերենի հնչողությանը, թեև դա երբեմն հակասում է ավանդական և խորհրդահայ (որը հիմնված է ռուսական տառադարձության կանոնների վրա) գրությանը (օրինակ՝ Մուհամեդ-Մուհամադ-Մուհամմեդ-Մահմեդ, Իզմեթ, և այլն):

¹¹ *Shu C. H. Аралов. Воспоминания советского дипломата. М., Изд-во Института международных отношений, 1960, с. 175:*

չերբեզ գրող Օմեր Սեյֆեդինը համարում էր, որ «թուրքերեն խոսող բոլոր մահմեդականները թուրք են»¹²:

3. Նոր քաղաքական վտարանդիությանը միավորում էին ԽՍՀՄ-ի նկատմամբ թշնամանքն ու հակախորհրդային պայքարը, և նրանք ակտիվ կապեր էին պահպանում ու համագործակցում Փարիզում, Բեռլինում, Վարշավայում և Պրահայում գործող կովկասյան վտարանդիական քաղաքական կենտրոնների հետ: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի պարտությունից հետո այդ վտարանդիության մի հատված հիասթափություն ապրեց և, անհիմաստ համարելով ԽՍՀՄ-ի դեմ հետագա պայքարը, հրաժարվեց վերադարձի հույսերից ու փորձեց, պահպանելով իր ազգային ինքնությունը, ինտեգրվել թուրքական հասարակության մեջ: Գործնականում դա առաջին հերթին նշանակում էր Թուրքիան ժամանակավոր ապաստանի վայր դիտելու գաղափարից զիտակցված անցում նրա՝ որպես երկրորդ հայրենիքի ընկալմանը: Մինևույն ժամանակ, հյուսիսկովկասյան վտարանդիությունը և նրա սերունդները ներքաղաքական կյանքում ավելի մեծ համառություն էին դրսևորում իրենց ինքնության պահպանման հարցում և ավելի ակտիվ ջանքեր էին գործադրում թուրքացմանն ընդդիմանալու համար:

4. Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասցիների համար «չերբեզ» հավաքական տերմինը այսպես կոչված «վերին ինքնություն» է, որը, սակայն, ավելի ճիշտ կլինի ընկալել որպես «միջին», քանի որ հյուսիսկովկասցին նախ իրեն ճանաչում է էթնիկական պատկանելությամբ՝ ուլաբի, աբխազ, շապսուղ, չեչեն, ավար,

¹² Տե՛ս *Ömer Seyfettin. Türklük Üzerine Yazılar, Bütün Eserler*, Cilt 16. İstanbul, Bilgi Yayınevi, 1993, s. 81:

երկրորդ աստիճանում՝ որպես հավաքական «չերբեզ», որից հետո միայն «թուրք», կամ «թուրքիացի», որն էլ արտահայտում է վերին ինքնությունը: Ինքնության կորստյան եզրին գտնվողներն իրենց անվանում են «հյուսիսկովկասյան, կամ չերբեզական, արմատներ ունեցող թուրքեր»: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել հայրենիքում և սփյուռքում բնակվող լեռնականների ինքնությունների միջև եղած տարբերությունը՝ պայմանավորված հայրենիքում և սփյուռքում տեղի ունեցած տարբեր պատմական զարգացումներով:

Այդ զարգացումներից առաջին հերթին հարկ է հիշատակել այն հանգամանքը, որ եթե Թուրքիայում ընթանում էր տարբեր հյուսիսկովկասյան ժողովուրդների համախմբում ու միավորում համընդհանուր «չերբեզ» վերին ինքնությամբ, ապա Հյուսիսային Կովկասի հանրապետությունները «միկրոազգայնական» զարգացում ապրեցին, քանի որ ԽՍՀՄ-ում բոլոր փոքր ժողովուրդների համար հնարավորություն ստեղծեց ունենալու ինքնավար պետական-քաղաքական միավորումներ և դրանց շրջանակներում զարգացնելու մշակույթը, լեզուն ու գրականությունը: Թուրքիայի և այլ պետությունների չերբեզական սփյուռքում տեղի էր ունենում հայրենիքի «առասպելացում»^{*}: Սակայն 1990-ական թթ., երբ Թուրքիայի չերբեզները հնարավորություն ստացան այցելելու Հյուսիսային Կովկաս, նրանցից շատերը հիասթափություն ապրեցին, քանի որ պապերի պատմածների հիման վրա ձևավորված իրենց պատկերացումները խորտակվեցին՝ չհամապատասխանելով իրականությանը^{**}:

^{*} Հայրենիքի «առասպելացումն» այս կամ այն չափով բնորոշ է սփյուռք ունեցող յուրաքանչյուր ազգի (այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ruth Butler, Judith Peltz. Mythical Landscapes Then and Now. The Mystification of Landscapes in Search for National Identity*. Yerevan, «Antares», 2006):

^{**} Այսպես. աբխազական և չեչենական պատերազմների մասնակից, 1994 թ. Տրասպիգոնում ռուսական «Ավրասիա» շոգենավը զավթած խմբի ղեկավար Մուհամեդ

5. Հին ու նոր վտարանդիության միջև տարբերակում դրվում էր ոչ միայն հյուսիսկովկասյան համայնքի, այլև թուրք հասարակության կողմից: 1953 թ. Ստամբուլում «Կովկաս» անունը կրող հանդեսի հիմնադիր ու խմբագիր Իսմայիլ Զիյա Ընրսիսը, «Կովկասցիները և չերքեզները» հոդվածում նշում էր, որ ընթերցողներից մեկին հետաքրքրել է, թե «դուք Կովկասի հետ ի՞նչ կապ ունեք: Ձեր պապերը տեղափոխվել են 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, այստեղ բնակություն հաստատել, ավելի ճիշտ՝ թուրքացել»¹³: Մեր ուսումնասիրության տեսակետից կարևոր են Թուրքիայում չերքեզական ինքնության պահպանման գործում* 1920-ական թվականների գաղթականության ունեցած ավանդը և այն, որ թուրքական հասարակությունը 1920–1960-ական թթ. «չերքեզի» և «հյուսիսկովկասցու» միջև տարբերություն էր դնում:

6. Թուրքիայի հյուսիսկովկասյան հասարակության մեջ հին ու նոր կովկասյան գաղթականության միջև հարաբերությունների ուսումնասիրությունը, համայնքում դերերի բաժանման և մի շարք առանցքային հարցերի նկատմամբ մոտեցումների

Եվրո Տոքչանը, նկարագրելով իր առաջին այցը նախնիների հայրենիք Աբխազիա, գրում է, որ իրական շոկ ապրեց, երբ տեսավ, թե ինչպես աբխազ մարտիկները ծխում էին, խմում, խոզի միս ուտում, Ղուրան չէին կարդում և չէին աղոթում, իսկ միասնական Հյուսիսային Կովկասի գաղափարը, որով աչքում է հյուսիսկովկասյան սփյուռքը, պատմական հայրենիքում սակավաթիվ կողմնակիցներ ունի, ուստի և ակիրականանալի է (տես *Muhammet Emin Tokçan. Kafkasyalı. Kayıp Ülkenin, Kayıp İnsanları. İstanbul, AN Yayıncılık, 2002, s. 157*):

¹³ *Şevki İzzet Aydemir. Muhacretteki Çerkes Aydınları. Ankara, 1991, s. 43*:

* Տվյալ հանգամանքը, ինչպես նաև վերջին շրջանում այդ ինքնության արտահայտության հաճախակի դրսևորումներն անակնկալ էին նաև թուրք մտավորականության մի զգալի հատվածի համար, քանի որ նա համոզված էր, որ տասնամյակներ շարունակ վարվող թուրքացման քաղաքականության հետևանքով չերքեզները կորցրել են իրենց ինքնությունը և ձուլվել թուրքերին (տես *Nazlı Ilıcak. Güneş bizi de aydınlatsın. «Sabah», 15.06.2010*):

տարբերության վերլուծությունը հնարավորություն են տալիս պարզելու և հստակեցնելու պատկերացումները Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան փոքրամասնության ինքնության ձևավորման առանձնահատկությունների, մշակութային կազմակերպությունների ստեղծման ու գործունեության, ինչպես նաև տարբեր քաղաքական գործընթացներին համայնքի մասնակցության ու քաղաքական ակտիվության աստիճանի մասին: Թուրքիայի էթնիկական խճանկարում չերքեզների կարևորությունն ընկալելու համար բավական է նշել, որ նրանք թվաքանակով թուրքերից ու քրդերից հետո երրորդ տարրն են, իսկ բանակում և հատուկ ծառայություններում* ներկայացվածությամբ տոկոսային առումով առաջին տեղում են¹⁴:

7. Չնայած 1923 թվականից երկրում իրականացվող ակտիվ թուրքացման քաղաքականությանը, որի հետևանքով

* Խոսքը Ազգային հետախուզության կազմակերպության (ԱՀԿ՝ Milli İstihbarat Teşkilatı – MİT) և Անվտանգության տնօրինության (Emniyet Müdürlüğü) մասին է:

¹⁴ *Şevki Yalçın Karadağ. a.g.e., s. 211*; «Devletin En Derin Evlatları: Çerkesler». «Tempo», İstanbul, sayı: 07/950, 17 Şubat 2008, ss. 57-59; *Hüsamettin Arslan, 1923 Müslümanlara “Türk” dedi. «Radikal», 19/12/2005*: Հարկ է նշել, որ ԹՀ Ազգային հետախուզական կազմակերպությունում հյուսիսկովկասյան ծագում ունեցողների թվային գերակշռությունը և չերքեզների շրջանում* սերնդից սերունդ այդ կառույցում ծառայելու ավանդույթը թուրք քաղաքական գործիչների ու գիտնականների կողմից ներկայացվում է որպես պետության հանդուրժողականության ապացույց: Այսպես. Ուլուչալի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Հուսամեթին Աբսլանը «Ռադիկալ» օրաթերթին տրվաց հարցազրույցում նշել է. «Եթե Թուրքիայի Հանրապետությունը, ինչպես պետվում է, չէջող դներ թուրք տարրի վրա, պետության հետախուզական կազմակերպությունը արդյոք կհանձներ չերքեզներին: Նույնիսկ այսօր Ազգային հետախուզական կազմակերպությունում չերքեզները գերակշռում են: Հանրապետության հիմնադիրները պետության գաղտնի կազմակերպությունը չեն վիճել. օսմանյան ժամանակ եղած գաղտնի կազմակերպությունը շարունակեց իր գոյությունը և հասավ մինչև այսօրվա MİT-ը, որը «Հատուկ կազմակերպության» շարունակությունն է» (տես *Hüsamettin Arslan, a.g.e.*):

արգելվեցին և փակվեցին բոլոր մահմեդական փոքրամասնությունների մշակութային ու քաղաքական կազմակերպությունները, Թուրքիայի իշխանությունները, առաջնորդվելով իրենց քաղաքական շահերով, 1920-ական թվականներին արտագաղթած հյուսիսկովկասցիներին տվեցին քաղաքական գործունեություն վարելու, խորհրդային կարգերի դեմ պայքարի համար կազմակերպություններ ստեղծելու, պարբերականներ հրատարակելու, եվրոպական երկրներում գործող այլ կովկասյան կառույցների հետ կապ պահպանելու և ֆինանսավորում ստանալու արտոնություն: Թուրքական իշխանությունների մտադրությունները համահունչ էին ինչպես խորհրդային իշխանությունների դեմ պայքարը շարունակելու ձգտող գաղթականության ցանկություններին, այնպես էլ եվրոպական պետությունների նպատակներին՝ վտարանդիության այդ զանգվածը ակտիվորեն ներգրավելու և օգտագործելու մղվող հակախորհրդային պայքարում:

8. 1970-ական թվականներին հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը՝ որպես այդպիսին, դուրս մղվեց քաղաքական ասպարեզից, քանի որ 1920-ական թվականների պանդուխտներից շատերն արդեն մահացել էին, իսկ նրանց սերունդը 1960-ական թթ. երկրորդ կեսին սկսեց ակտիվորեն ինտեգրվել Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքին: 1920-ական թվականների հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության սերունդներին բնորոշ էր այն, որ նրանք, իրենց մյուս ցեղակիցների նման, ավելի շատ խորհում էին իրենց հայրենիքը դարձած Թուրքիայի խնդիրները լուծելու մասին՝ ակտիվ կերպով մասնակցելով 1960-1970-ական թվականներին ծավալված աջամետ ու ձախամետ ուժերի պայքարին, քան՝ Կովկասում խորհրդային կարգերը տապալելու: Չի կարելի նաև միանշանակ կերպով պնդել, թե «Կովկաս վերադառնալու»

գաղափարն ու շարժումը 1920-ական թվականների վտարանդիության սերունդներում ավելի մեծ թվով կողմնակիցներ ունեին, քան Թուրքիայում ծնված երրորդ սերնդի լեռնականների շրջանում:

9. Որպես երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունք սկսեց ձևավորվել ռուսաստանյան վտարանդիության երկրորդ ալիքը, կամ, ինչպես այն հաճախ կոչվում է, «խորհրդային» վտարանդիությունը, որն ուներ միանգամայն այլ բնույթ: Այդ վտարանդիության հյուսիսկովկասյան հատվածի ներկայացուցիչները, ինչպիսիք են, օրինակ, Աբդուրահման Ավտորխանովը, Ռամազան Տրախան և շատ ուրիշներ, որպես ապաստան ընտրում էին ոչ թե Թուրքիան, այլ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և ԱՄՆ-ը¹⁵:

10. Կովկասյան վտարանդիության պատմության մեջ թուրքական գործոնի առկայությունը պատճառ դարձավ, որպեսզի հայ վտարանդիությունը՝ հանձինս հայ քաղաքական կուսակցությունների, անջատվի նրանից, չհամագործակցի նրա հետ. միայն երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում հայ վտարանդիության մի որոշ մասը մասնակցեց կովկասյան վտարանդիության միասնական գործունեությանը: Թուրքիայի հետախուզությունը հաճախակի օգտագործում էր վրացական և հյուսիսկովկասյան վտարանդիական կառույցները հայ քաղաքական կուսակցությունների, առաջին հերթին՝ Դաշնակցության մասին տեղեկություններ հավաքելու համար:

11. Հյուսիսկովկասյան վտարանդիության օգտագործման ու վերահսկման քաղաքականությունը համատեղ և համակարգված

¹⁵ Шу А. В. Попов. Мюнхенский институт по изучению истории и культуры СССР и вторая волна эмиграции. «Новый исторический вестник», М., РИТУ, 2004, N 1(10), сс. 54 – 70:

մշակում էին արտաքին գործերի նախարարությունը և հետախուզական կառույցները (Գլխավոր շտաբ, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներ և Ազգային հետախուզական կազմակերպություն): Ընդհանուր առմամբ, Թուրքիայի հետախուզական ծառայությունները և արտաքին գործերի նախարարությունը կովկասյան մահմեդական քաղաքական վտարանդիությունն ընկալում էին որպես մեկ ամբողջություն և ըստ այդմ վարում նրա օգտագործման չտարբերակված քաղաքականություն: Մույն աշխատությունում մենք փորձել ենք ուշադրությունը հնարավորինս կենտրոնացնել կովկասյան վտարանդիության հյուսիսկովկասյան հատվածի վրա և ներկայացնել նրա տեղն ու դերը Թուրքիայի արտաքին քաղաքականության պրոբլեմների լուծմանը նպատակաուղղված դիվանագիտական շահարկումներում:

Վերջին հանգամանքը հաշվի առնելով՝ հարկ ենք համարում նշել, որ արտաքին քաղաքականության ոլորտում կովկասյան գործոնի օգտագործման տեսակետից Թուրքիան առավել ակտիվ և ինքնուրույն կերպով գործեց 1920–1930-ական թթ.: Իսկ 1930-ական թվականների վերջերից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը կովկասյան վտարանդիական քաղաքական կառույցների օգտագործման և դրանց գործունեության ուղղորդման ոլորտում թուրքական դիվանագիտությունը համագործակցեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, հետագայում՝ ֆաշիստական Գերմանիայի հետ: Այդ շրջանում թուրքական դիվանագիտությունը կովկասյան գործոնի անմիջական օգտագործման հետ մեկտեղ պատրաստ էր այն օգտագործելու այլ պետությունների հետ համատեղ կամ նրանց առաջարկելու իր ծառայությունները: Այսպես, 1935–1945 թթ. Թուրքիան կովկասյան վտարանդիության գործունեության վերահսկողության և համատեղ օգտագործման բարդ խաղ էր վարում Գերմանիայի, իսկ 1945

թվականից հետո՝ ԱՄՆ-ի հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նույնիսկ այն տպավորությունն ստեղծվեց, թե Թուրքիան կորցրել է կովկասյան գործոնի օգտագործման իր առաջնորդային դերը և այն զիջել է ԱՄՆ-ին, հատկապես, որ 1950-ական թվականներին կովկասյան հակախորհրդային վտարանդիությունն սկսեց համախմբվել Մյունխենում ստեղծված «ԽՍՀՄ պատմության ու մշակույթի ուսումնասիրության ինստիտուտի» և «Ազատություն» օտդիոկայանի շուրջը: Արևմուտքը ևս իր ուշադրության կենտրոնում մշտապես պահում էր ԽՍՀՄ ամենաերերուն տարածաշրջաններից մեկում՝ Հյուսիսային Կովկասում, ընթացող զարգացումները, քանի որ այնտեղ հակախորհրդային (հակառուսական) դիմադրությունը շարունակվեց մինչև 1944 թ.՝ իր գագաթնակետին հասնելով 1932 և 1940 թթ. Չեչենական ապստամբություններով¹⁶: Հյուսիսային Կովկասում հակախորհրդային դիմադրությունը Մտալինի վարչակարգի համար առիթ դարձավ կյանքի կոչելու Հյուսիսային Կովկասի խնդրի լուծման սովանդական ցարական քաղաքականությունը՝ հյուսիսկովկասյան ժողովուրդների զանգվածային տեղահանման միջոցով: 1944 թ. Հյուսիսային Կովկասից չեչենները, ինգուշները, կարաչայները, ինչպես նաև Ղրիմից թաթարները, հայերն ու հույները արտաքսվեցին Միջին Ասիա և Ալթայ, իսկ որպես դրա պատճառ ներկայացվեց կոլլաբորացիոնիզմի մեջ մեղադրանքը, ընդ որում, խորհրդային փաստաթղթերում ֆաշիստական Գերմանիայի հետ մեկտեղ նշվում էր նաև Թուրքիան¹⁷:

¹⁶ Հայրենական մեծ պատերազմի նախօրեին Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած ապստամբությունների և ընդվզումների մասին ավելի հանգամանորեն տես *А. Авторханов. Народоубийство в СССР. Убийство чечено-ингушского народа. М., 1991:*

¹⁷ *Տես Игорь Пыхалов. За что Сталин выселял народы? Сталинские депортации – преступный произвол или справедливое возмездие? М., «Яуза-Пресс», 2008, сс. 117, 286 – 288:* Տվյալ աշխատությունում հեղինակն օգտագործել, հաճախ նաև ամբողջությամբ մեջբերել է Ռուսաստանի Պետական արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք լուսարևում են Հյուսիսային Կովկասում 1920 – 1940 թթ. տիրած իրավիճակը:

Ընդհանուր առմամբ, կովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման քաղաքականության (ռազմավարության) մեջ տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են լինում տարածաշրջանում և միջազգային ասպարեզում Թուրքիայի կարևորության աճմամբ կամ նվազմամբ: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն մի շարք հանգամանքներ, որոնք չի կարելի անտեսել: Դրանք են.

1. Հանրապետական Թուրքիայում հյուսիսկովկասյան համայնքի գործունեությունը կամ արտաքին քաղաքականությունում հյուսիսկովկասյան գործոնի օգտագործումը չի կարելի դիտել Թուրքիայի վարած ընդհանուր քաղաքական ուղեգծից կամ մահմեդական այլ էթնիկական փոքրամասնությունների, առաջին հերթին՝ աղբրեջանական, համայնքային քաղաքական կառույցներից անջատ, քանի որ թե՛ կրոնական գործոնի ու շահերի համընկնման, թե՛ պետության որդեգրած քաղաքական գծի շնորհիվ նրանք շատ դեպքերում գործել են միասին*: Կարևոր է նաև այն, որ մինչև 1990-ական թթ. հյուսիսկովկասյան ժողովուրդները նույնպես համարվում էին «թուրքեր», օրինակ՝ «չեչեն թուրքեր», «ինգուշ թուրքեր» և այլն: Հանրապետության շրջանում այս արտաքին քաղաքական ուղեգիծը հայտնի է որպես «արտաքին թուրքերին աջակցման քաղաքականություն»:


2. Հաճախ Հարավային ու Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ միևնույն համատեքստում են դիտվում նաև Ղրիմի

* 1946 թ. Թուրքիայում պաշտոնապես թույլատրված առաջին համայնքային կազմակերպությունը համատեղ չեքքեզաղբրեջանական «Բարեկամի ձեռք փոխօգնության միություն (Dost Eli Yardımlaşma Derneği)» էր, որի համար նախատիպ էր եղել 1920 թ. Աղբրեջանալեռնական կոմիտեն:

թաթարները, և նրանց նկատմամբ վարվում է ընդհանուր քաղաքականություն*:

Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում հյուսիսկովկասյան վտարանդիության տեղի ու դերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու այն քաղաքական զարգացումները, որոնք հայ քաղաքական կուսակցություններին՝ հանձինս Հ. Յ. Դաշնակցության, Ս. Դ. Հնչակյան և Ռամկավար-ազատական կուսակցությունների, հեռու պահեցին կովկասյան վտարանդիության հետ համագործակցությունից: Պատմագրության մեջ ձևավորված «կովկասյան քաղաքական վտարանդիություն» հասկացությունն իր մեջ ներառում է վրացական քաղաքական կուսակցությունները, աղբրեջանական և հյուսիսկովկասյան վտարանդիությունը: Մինչև 1930-ական թթ. կեսերը հայ քաղաքական կուսակցությունները գործում էին ընդհանուր կովկասյան վտարանդիությունից անջատ և իրականացնում իրենց ուրույն ուղեգիծը: Թուրքական գործոնը, հյուսիսկովկասյան և աղբրեջանական քաղաքական վտարանդիության թուրքամետ կողմնորոշումն ու գործելաճը պատճառ դարձան, որ աղբրեջանական, վրացական ու հյուսիսկովկասյան վտարանդիությունների ներկայացուցիչների հետ 1921 թ. Փարիզում ստորագրելով Կովկասյան համադաշնություն ստեղծելու մտադրության մասին համաձայնագիրը՝ հայ քաղաքական ուժերը՝ հանձին Դաշնակցության, 1923 թ. հրաժարվեցին համատեղ գործունեությունից, և միայն 1934 թ. նրա մի

* Ռուսերենում գոյություն ունի «кавказская эмиграция» հասկացությունը, որն ընդգրկում է Հարավային և Հյուսիսային Կովկասի բոլոր ժողովուրդները: Նմանատիպ ձևակերպումներ՝ «Kafkas muhacirleri» ու «Caucasus emigration», գոյություն ունեն նաև թուրքերենում և անգլերենում: Փաստաթղթերը, ինչպես նաև իրենց հուշերում տարբեր գործիչներ վկայում են, որ ԽՍՀՄ, Թուրքիայի և Լեհաստանի հետախուզական գերատեսչություններում բոլոր կովկասյան ժողովուրդների վտարանդիական կազմակերպություններով ու քաղաքական կուսակցություններով զբաղվել է միևնույն ստորաբաժանումը, որի գործառույթներում ներառված էին նաև Ղրիմի թաթարների հարցերը:



չնչին մասը՝ հիմնականում արտաքին պայմանների թելադրմամբ և մեկուսացման վտանգից խուսափելու նպատակով, դիմեց կովկասյան վտարանդիության հետ համագործակցության: Սակայն 1936 թ. ձեռնարկված հայ-վրացական մերձեցման փորձը, հանդիպեց ադրբեջանալեռնական հատվածի դիմադրությանը: Կովկասյան քաղաքական վտարանդիության հետ Դրոի գլխավորած՝ Ղազնակցության մի որոշ զանգվածի համատեղ գործելու կարճաժամկետ շրջան եղավ միայն 1940–1944 թվականների ժամանակահատվածը, այն էլ այդ համագործակցությունը ոչ թե բխում էր երկու կողմերի շահերից, այլ թելադրված էր Գերմանիայի կառավարության կողմից¹⁸:

Ամփոփելով՝ ուզում ենք նշել, որ թեև մեր ուսումնասիրության թեմային առնչվող հարցերի շուրջ գոյություն ունեն բազմաթիվ տարաբնույթ հետազոտություններ¹⁹, Թուրքիայի իշխանությունների արտաքին քաղաքական խնդիրների լուծման համատեքստում հակախորհրդային տրամադրություններով ստորված հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման հարցը պատկանում է գիտականորեն տակավին չուսումնասիրված հիմնահարցերի թվին, այն լուսաբանող հավաստի աղբյուրներն էրը

¹⁸ Տե՛ս Դրոն եւ իր Գործը. Անդրադարձ. «Յուսաբեր», Չալեպ, մայիս 1948. «Դրո. Կենսագրական, հուշեր, վկայություններ», Ե., «Ազատ խոսք», 1991, էջ 395:
¹⁹ Տե՛ս, օրինակ, *Izzet Aydemir*. Muhaceretteki Çerkes Aydınları, Ankara, 1991; *Peter Alford Andrews*. Ethnic Groups in the Republic of Turkey. Wiesbaden, 1989; *Wassan-Giray Cabağı*. Kafkas-Rus Mücadelesi, İstanbul, Baha Matbaası, 1967; *Kadırcan Kaflı*, Şimali Kafkasya, İstanbul, Vakıf Matbaası, 1942; *E. Archer*. The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926. Leiden, 1984; *Fuat Dündar*, Türkiye Nüfus Sayımlarında Azınlıklar, İstanbul, Doz Yayınları, 1999; *Tuncay Özkan*. MİT'in Gizli Tarihi. İstanbul, ALFA, 2003; *Prof. Dr. Mustafa Balcıoğlu*. Teşkilat-ı Mahsusadan Cumhuriyete. Ankara, Nobel Yayın Dağıtım, 2001; *G. Mamoulia*. Les combats indpendantistes des Caucasiens entre URSS et les puissances occidentales. Le cas de la Giorgie. Paris, L'Narmattan, 2009; *A. Авторханов*. Народоубийство в СССР. Убийство чечено-ингушского народа. М., 1991; *Арсен Авакян*. Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Е., Изд. «Гитутюн», 2001; *З. Б. Кипкеева*. Карачаево-балкарская диаспора в Турции. Ставрополь, 2001 և այլն:

սակավաթիվ են, ուստի և սույն աշխատության աղբյուրագիտական բազան ներառում է մեծ մասամբ ռուսական, թուրքական ու հայկական արխիվային նյութեր և իրադարձությունների մասնակիցների հուշեր: Գրքում օգտագործված հյուսիսկովկասցի և թուրք քաղաքական ու հասարակական գործիչների հուշերը²⁰ շատ դեպքերում կողմնակալ են և անվստահելի, ուստի անհրաժեշտ է եղել դրանք համեմատել ու բաղդատել այլ աղբյուրների և իրադարձությունների հետագա զարգացման արդյունքների հետ: Առանձնահատուկ նշանակություն ունեն վտարանդիության պարբերական մամուլը, տարբեր երկրներում լույս տեսնող պարբերականները²¹ և Թուրքիայի չեքրեզական համայնքի կողմից կազմակերպված գիտաժողովների նյութերի կամ խնդրին առնչվող տարբեր գիտական հոդվածների ժողովածուները²²:

²⁰ Տե՛ս *Pşimaho Kosok*. Kuzey Kafkasya. Hürriyet ve İstiklal Savaşı Tarihinden Yapraklar. İstanbul, Celtut Matbaası, 1960; *Mustafa Bulbay*. Kafkasya Hatıraları. Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 1990; *Cafer Seydahmet Kurimer*. Bazı Hatıralar. İstanbul, EMEL Türk Kültürünü Araştırma ve Tanıtma Vakfı, 1993; *Mustafa Kemal Atatürk*. «Nutuk». İstanbul, Kum Saati Yayınları, 2002; *Kazım Karabekir*. İstiklal Harbimiz. İstanbul, Emre Yayınları, 1995; *İncişi* 'Günlükler (1906-1948), Cilt 1, 2, İstanbul, Yapı Kredi Yayınları, 2009; *İncişi* 'İstiklal Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkanı, İstanbul, Tekin Yayınevi, 1990; *Ali Fuat Cebesoy*. Moskova Hatıraları (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, «Vatan» Neşriyatı, 1955; *İncişi* 'Siyasi Hatıralar. Büyük Zaferden Lozana. Cilt 1. İstanbul, Temel Yayınları, 2002; *Yusuf Kemal Tengirşenk*. Vatan Hizmetinde. İstanbul, Bahar Matbaası, 1976; *Dr. Rıza Nur'un* Moskova-Sakarya Hatıraları. İstanbul, Bogaziçi Yayınları, 1991; *Arif Cemil*. 1 Dünya Savaşında Teşkilat-ı Mahsus. İstanbul, Arba Yayınları, 1997; *Arif Cemil (Denker)*. İttihatçı Şeflerin Gürbet Maceraları. Hazırlayan: Yücel Demirel. İstanbul, Arma Yayınları, 1992; *Hüsamettin Ertürk*. İki Devrin Perde Arkası. İstanbul, Sebül Yayınevi, 1996; *Talat Aydemir'in Hatıraları*. İstanbul, 1968; *Мамед Эмин Расулзаде*. Сборник произведений и писем. М., Издательство «Флинта», 2010; *С. И. Аралов*. Воспоминания советского дипломата. М., Изд-во Института международных отношений, 1960; *Г. С. Агабеков*. Г. П. У. (Записки чекиста). Берлин, Издательство «Стрела», 1930; *Միսիթ Թորլաբեան*, Օրերուս հետ: Պէրլուք, 1963, և այլն:

²¹ Տե՛ս «Yeni Kafkasya», «Kafkas», «Çağırış-Призыв», «Кавказский горец», «Северный Кавказ» և այլն:

²² Տե՛ս «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001; «Türkiye'de Sivil Toplum ve Milliyetçilik». İstanbul, İletişim Yayınları, 2001; «Modern Türkiye'de Siyasi Düşüncüler». Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim

Արխիվային նյութերը բավական մանրամասնորեն լուսաբանում են 1920-1930 թթ. ժամանակահատվածը²³, մինչդեռ 1940-1950 թթ. կամ «Պրոմեթևս» շարժմանը վերաբերող հավաստի արխիվային փաստաթղթերը սակավաթիվ են²⁴: Վերջին տարիներին լույս են տեսել մի քանի աշխատություն, որոնց հեղինակները հնարավորություն են ստացել աշխատելու դեռևս չգաղթնագերծված արխիվային փաստաթղթերի հետ, և նրանց գրքերում ամբողջությամբ մեջբերվում են արժեքավոր արխիվային փաստաթղթեր: Նման աշխատություններից առանձնակի ուշադրության են արժանի հետախուզության գեներալ-մայոր Լև Մոցկովի գիրքը, որի հեղինակն օգտագործել է Ռուսաստանի Դաշնության արտաքին հետախուզության արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթեր²⁵, և Իգոր Պիխալովի արդեն հիշատակված գիրքը:

Yayınları, 2002; «Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar». Editor: Baskın Oran, Cilt I: 1919-1980, İstanbul, İletişim Yayın., 2001 և այլն:

²³ Ств. Российский государственный военно-исторический архив (РГВИА); Российский государственный военный архив (РГВА); Архив внешней политики Российской Империи (АВПРИ); Архив внешней политики РФ (АВП РФ); Российский государственный архив социально-политической истории (РГАСПИ); Государственный архив Российской Федерации (ГАРФ); Հայաստանի Ազգային արխիվ-(ՀԱԱ), ТВММ Gizli Celse Zabıtları, Cilt 1, 2, 3, 4. Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985; Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar, Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından N 2, Paris, 1937: Խնդրին առնչվող փաստաթղթեր են զետեղված նաև պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյանի կազմած և խմբագրած «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», Ե., 1999, գրքում:

²⁴ Լեհական Գլխավոր շտաբի՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ տեղափոխված և այժմ ՌԴ-ում գտնվող արխիվային նյութերի հիման վրա մի խումբ ռուսաստանցի պատմաբաններ գրել են «Պրոմեթևս» շարժման պատմությունը (տես *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев. Организация “Прометей” и “прометейское” движение в планах польской разведки по развалу России/СССР. «Труды общества изучения истории отечественных спецслужб», т. 3. М., Изд-во «Кучково поле», 2007, сс. 318 – 414*):

²⁵ Մեր ձեռքի տակ է գրքի ինտերնետային տարբերակը՝ *Лев Соцков, Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера* (<http://lib.tr200.net/v.php?id=484&sp=15>):

Գլուխ I

Հյուսիսկովկասցիների գաղթը Թուրքիա 1920-1927 թթ.
և կովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությունը
մինչև «Պրոմեթևս» շարժման ձևավորումը

*Երիտթուրքերի և ազգայնականների կովկասյան
քաղաքականությունում լեռնականների օգտագործման ավանդույթը
1908 - 1920 թթ.*

Օսմանյան կայսրությունում կովկասյան քաղաքականության նպատակների իրականացման համար լեռնականների օգտագործման ավանդույթն սկսեց ձևավորվել դեռ Կովկասյան պատերազմի առաջին տարիներին, երբ թուրքական գործակալների դերում հանդես էին գալիս կայսրությունում բնակություն հաստատած չերքեզները: Քաղաքական նպատակների ընդլայնումը, հատկապես 1853–1855 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ Հյուսիսային Կովկասում իմամ Շամիլի հետ համաձայնեցված գործողություններ վարելու անհրաժեշտությունը օսմանյան իշխանություններին դրդեցին մշակելու նոր մոտեցումներ քարոզչությանը և կապի ապահովման բնագավառում լեռնականներին, հատկապես՝ նրանց առաջնորդներին, ավելի արդյունավետ կերպով օգտագործելու նկատմամբ: Լեռնականների միջոցով Հյուսիսային Կովկասում թուրքական ազդեցությունը տարածելու և ամրապնդելու, Թուրքիայի շահերի իրականացման համար նրանց օգտագործելու քաղաքական ավանդույթի արտացոլում էր սուլթան Աբդուլ Ազիզի օրոք Թուրքիանե թաղամասում մեծ վեզիրի խորհրդով ու թուրքական իշխանությունների հովանավորությամբ «Չերքեզական մեջլիսի» ստեղծումը: Դրա անդամներ էին Կովկասյան պատերազմում լեռնականների առաջնորդներ Մուհամեդ Էմինը, Զանոքա Կարա-

Բաթիրը, Իսմայիլ Բարաթայը, Իբրահիմ Ալին և ուրիշներ²⁶: «Չերքեզական մեջլիսի» որոշ անդամներ, օրինակ, Արևմտյան Կովկասում Շամիլի նայիբ Մուհամեդ Էմինը և Սեֆեր Չանը, կապեր էին հաստատել նաև Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանության հետ²⁷:

«Չերքեզական մեջլիսը» փորձում էր հանդես գալ օսմանյան իշխանությունների և Հյուսիսային Կովկասում գտնվող ազգերի առաջնորդների միջև միջնորդի դերում, ինչպես նաև զբաղվել կայսրություն տեղափոխվող լեռնցի գաղթականների խնդիրների կարգավորմամբ: Սակայն դա հաստատութենականացված կառույց չէր. իշխանության հետ նրա շփումները կանոնակարգված չէին, և նա չէր ընկալվում նույնիսկ որպես խորհրդակցական մարմին: Կովկասյան պատերազմի ավարտից հետո «մեջլիսի» անհրաժեշտությունը վերացավ, և այն ցրվեց:

Օսմանյան կայսրությունում չերքեզական գործոնը վերջնականապես ձևավորվեց «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե Թերափքի) կուսակցության կառավարման օրոք (1908–1918 թթ.): Այդ շրջանը իրենք՝ չերքեզները, բնութագրում են որպես «Օսմանյան կայսրությունում չերքեզների ոսկե դար»²⁸: Երիտթուրքական կառավարությունը, շարունակելով ռուս-թուրքական հարաբերություններում հյուսիսկովկասյան գործոնի շահարկման սուլթանական իշխանությունների վարած քաղաքականությունը, զարգացրեց այդ ավանդույթը և դրան հաստատութենական բնույթ հաղորդեց՝ դարձնելով արտաքին քաղաքական խնդիրների իրականացման գործիքներից մեկը: Թուրքական կառավարությունն իր կովկասյան քաղաքական ծրագրերում կարևոր տեղ էր հատկացնում

չերքեզների (լեռնականների) թուրքամետ տրամադրությունների²⁹, ինչպես նաև հայրենիքում ապրող ազգակիցների հետ Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի կապերի օգտագործմանը³⁰: 1912 թ. առաջին Բալկանյան պատերազմում կրած պարտությունն ու եվրոպական տարածքների մեծ մասի կորուստը երիտթուրքերին ստիպեցին իրենց հայացքն ուղղել դեպի Արևելք և որդեգրել պանթուրանական քաղաքականություն, որում առանձնահատուկ տեղ էր հատկացվում Հյուսիսային Կովկասին³¹:

Երիտթուրքերի արտաքին քաղաքականության ներքին գործիք էր Օսմանյան կայսրությունում վերաբնակեցված լեռնականների քաղաքական կազմակերպությունների ստեղծման խրախուսումը: Դրանք օգտագործվում էին որպես թուրքական ծրագրերի իրականացմանը նպաստող լրացուցիչ կառույցներ:

²⁹ Տես АВПРИ, ф. 180, Посольство в Константинополе, оп. 517/2, д. 4226, л. 275: Սկսած 1911 թվականից ռուսական ԳՇ զեկուցագրերում պարբերաբար նշվում էր, որ հավանական պատերազմի դեպքում կովկասյան մահմեդականների համակրանքը լինելու է Թուրքիայի կողմում, և Կովկասի ուղղությամբ թուրքական զորքերի առաջխաղացման պարագայում պետք է հաշվի առնել Հյուսիսային Կովկասում նրանց ապստամբելու հավանականությունը:

³⁰ Տես նույն տեղում, թթ. 274–276: Հարկ է նշել, որ երիտթուրքական կառավարությունը նման քաղաքականություն էր վարում նաև Ռուսական կայսրության մյուս մահմեդական ժողովուրդների նկատմամբ, հատկապես՝ ադրբեջանցիների («Մուսավաթ» կուսակցության միջոցով) և Ղրիմի թաթարների: Ստամբուլում չերքեզական կազմակերպությունների օրինակով ստեղծվեց «Ղրիմի ուսանողների միությունը (Kırım Talebe Cemiyeti)», որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ակտիվ գործունեություն ծավալեց Ղրիմում և կարևոր դեր ունեցավ 1918 թ. մարտի 25-ին Ղրիմի թաթարների առաջին համագումարի կազմակերպման գործում: Ստամբուլում գործում էր նաև «Ղրիմի թաթարների բարեգործական կազմակերպությունը (Kırımlılar Cemiyeti Hayriyesi)», իսկ 1918 թ. մարտի 23-ին ստեղծվեց «Ղրիմի մահմեդականների կազմակերպությունը (Kırım Müslümanları Cemiyeti)» (տես *Cafey Seydahmet Kırimer. Bazı Hatıralar, İstanbul, EMEL Türk Kültürünü Araştırma ve Tanıtma Vakfı, 1993, s. 308, 310, 312*):

³¹ Տես *Ümit Özdağ. Türk Milliyetçiliği ve Jeopolitik, «Modern Türkiye’de Siyasi Düşüncüler», Cilt 4, Milliyetçilik, qrpnuđ. İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 173*:

²⁶ Տես РГВИА, ф. 38, Департамент Генерального Штаба, оп. 7, д. 422, лл. 5, 5 об.:

²⁷ Տես *Wassan-Gıray Cabağı. Kafkas-Rus Mücadelesi. İstanbul, Baha Matbaası, 1967, ss. 66-70*:

²⁸ Տես *Арсен Авакян, указ. раб., сс. 198-199*:

Օսմանյան կայսրության չերքեզական վերնախավի համախմբմանը և կրթամշակութային ծրագրերի իրականացմանը նպաստեց 1908 թ. դեկտեմբերի 5-ին ստեղծված «Միության և փոխօգնության չերքեզական կազմակերպությունը (Çerkes İttihad ve Teavün Cemiyeti)»*, որի նախագահ ընտրվեց մարշալ Ֆուադ փաշան («Դալի Ֆուադ փաշա») **: Չնայած կազմակերպությունը քաղաքական նպատակներ չէր հետապնդում³² և սահմանափակվում էր չերքեզների շրջանում միայն կրթամշակութային գործունեությամբ՝ այն օրինակ դարձավ հետագայում չերքեզական քաղաքական կազմակերպությունների հիմնադրման համար: Մակայն, ի տարբերություն հետագա տարիներին ստեղծված չերքեզական այլ կազմակերպություններից, «Միության և փոխօգնության չերքեզական կազմակերպություն» հիմնադրելու նախաձեռնությամբ հանդես էին եկել հենց իրենք՝ կայսրությունում բնակվող չերքեզները, և նրանք էին որոշում կազմակերպության գործունեության օրակարգը: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին «Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեի (Şimali Kafkasya Cemiyet-i Siyasiyesi)»*** ստեղծման նախաձեռնությամբ հանդես էր եկել երիտթուրքական կառավարությունը: Նրա կովկասյան ձեռնարկումների մասնակից, «Միության և փոխօգնության չերքեզական

* Այն գործել է 1908–1923 թթ. (ավելի հանգամանորեն տես *Арсен Авакян*, указ. раб. сс. 201 - 204; *Izzet Aydemir*, Muhaceretteki Çerkes Aydınları, Ankara, 1991, ss. 120-121):

** «Դալի (խենթ)» մականվամբ հայտնի Ֆուադ Թխուգա փաշան (1835–1931 թթ.) առանձնահատուկ դեր է խաղացել Թուրքիայի չերքեզական համայնքի պատմությունում:

³² Տես *Yismeyl Özdemir Özbay*, Sürgünün Sonuçları ve Geri Dönüş Konusu, «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebligler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 219: «Միության և փոխօգնության չերքեզական կազմակերպության» սակավաթիվ քաղաքական բնույթի նախաձեռնությունների շարքում կարելի է նշել Հյուսիսային Կովկաս վերադառնալու գաղափարի առաջ քաշումը և այդ կապակցությամբ սուլթան Աբդուլ Համիդ II-ին արված դիմումը:

*** Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեն փակվել է անգլիացիների կողմից 1919 թ.:

կազմակերպության» և «Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեի» անդամ Մուստաֆա Բուրքայն իր հուշերում գրում է, որ «Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեն» Թուրքիայում այն յուրահատուկ ատյանն էր, որտեղ զբաղվում էին կովկասյան քաղաքականության մշակմամբ, այդ իսկ պատճառով անդամագրումը կատարվում էր հույժ գաղտնի, ընդամեն ընդունվում էին միայն Իթթիհատի վստահությունը վայելող անձինք³³: «Որևէ ազգային նպատակ չկար. եթե այդպիսին և եղել էր, ապա այն մնացել էր հետին պլանում: Կազմակերպությունը գտնվում էր էնվերի և Թալեաթի ղեկավարության տակ: Հաշվի առնելով, որ այս փաշաներից մեկը «խլամական էր», իսկ մյուսը՝ «ազգայնական», ըստ ամենայնի, Կովկասի կոմիտեն միավորում էր այդ երկու նպատակները», նշում է նա³⁴:

Երիտթուրքերի կառավարման օրոք ստեղծված նման կարգի կազմակերպությունների գործունեությունը վերահսկվում և ուղորդվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի և երիտթուրքական կառավարության կարևոր կառույցներից մեկի՝ «Հատուկ կազմակերպության (Teşkilat-ı Mahsusa)» կողմից*:

Օսմանյան կայսրության պարտությունից հետո էլ «Հատուկ կազմակերպությունը» չդադարեցրեց իր գործունեությունը³⁵, այլ դարձավ ազգայնական շարժման ձևավորման կարևոր մեխանիզմներից մեկը³⁶: 1919–1922 թվականներին՝ ազգայնական շարժման տարիներին,

³³ Տես *Mustafa Butbay*. Kafkasya Hatıraları, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 1990, s. 2:

³⁴ Ա.գ.ե.

* Պաշտոնական փաստաթղթերում «Հատուկ կազմակերպություն» անվանումն առաջին անգամ հիշատակվել է 1914 թ. օգոստոսի 5-ին (տես *Tuncay Özkan*. MIT'in Gizli Tarihi. İstanbul, ALFA, 2003, s. 49): Դրա անդամներից մեկի՝ Արիֆ Ջեմալի պնդմամբ՝ կազմակերպությունն ստեղծվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշմամբ (տես *Arif Cemil*, I Dünya Savaşında Teşkilat-ı Mahsusa. İstanbul, Arba Yayınları, 1997, s. 9):

³⁵ Տես *Hüsamettin Ertürk*. İki Devrin Perde Arkası. İstanbul, Sebil Yayinevi, 1996, ss. 166-167:

³⁶ Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Hüsamettin Ertürk*, İki Devrin Perde Arkası, İstanbul, Sebil Yayinevi, 1996; *Prof. Dr. Mustafa Balcıoğlu*, Teşkilat-ı Mahsusa'dan

«Հատուկ կազմակերպության» հնարավորությունները, մասնավորապես՝ Կովկասում, Թուրքմենստանում և Հնդկաստանում ստեղծված բնդարձակ գործակալական ցանցը³⁷, փորձում էր բուլշևիկների հետ հարաբերություններում որպես խաղաքար սօցտագործել Էնվեր փաշան, որը նաև տաժում էր այդ կազմակերպության հիման վրա համամահմեդական հեղափոխական կոմիտե հիմնելու հույսեր³⁸:

Հաշվի առնելով այն փաստը, որ «Հատուկ կազմակերպությունը» Հանրապետական Թուրքիայի ներկայիս հետախուզական կառույցների հիմքն է, և հյուսիսկովկասյան կառույցների օգտագործման նրա ռազմավարությունը վերափոխումներով շարունակվում է մինչ այսօր, անհրաժեշտ ենք համարում համառոտակի ներկայացնել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Հատուկ կազմակերպության» հյուսիսկովկասյան ուղղության գործունեությունը, հատկապես, որ Թուրքիայի հետախուզական ծառայություններում չերքեզների գերակայության ավանդույթի հիմքերը դրվեցին «Հատուկ կազմակերպության» ստեղծմամբ և ստեղծման պահից մինչև լուծարման մասին պաշտոնական հայտարարությունը նրա բոլոր ղեկավարներն ունեին հյուսիսկովկասյան ծագում³⁹:

Cumhuriyete. Ankara, Nobel Yayın Dağıtım, 2001; *Emin Demirel*, Teşkilat-ı Mahsusa'dan Günümüze Gizli Servisler. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002; *Ergün Hıçılmaç*, Teşkilat-ı Mahsusa'dan MIT'e. İstanbul, Varlık Yayınları, 1990; *E. J. Zürcher*, The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926. Leiden, 1984:

³⁷ Stü Osmanlı İmparatorluğu Teşkilat-ı Mahsusa Reisinin Gizli Dosyaları, «Tarih Konuşuyor», Cilt: 3, Sayı: 14, Mart 1965, İstanbul, s. 1100:

³⁸ Stü ABİP РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 28.

* «Հատուկ կազմակերպության» ղեկավարներն էին՝ Սուլեյման Սաքրիի (հիմնադրումից մինչև 1915 թ. ապրիլի 14-ը), Ալի Բաշհամիան (1915 թ. մայիսի 24 – 1918 թ. հոկտեմբերի 31) և Հուսամեթին Էրթուրքը (5 ղեկումների 1918) (տես *Prof. Dr. Mustafa Balcioğlu*, a.g.e., s. 5): Մի շարք թուրք մասնագետներ, հասկապես՝ այսպես կոչված «դավադրության տեսության (komplo teorisi)» կողմնակիցները, իրենց աշխատություններում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում և փորձում հիմնավորել այն տեսակետը, թե «Հատուկ կազմակերպությունը» իրականում

«Հատուկ կազմակերպության» համակարգում Կովկասի ուղղությամբ աշխատանքը կենտրոնացված էր «Արևելքի մասնաճյուղի Կովկասի բաժնում», որը ղեկավարում էր լեյտենանտ Ադնանը³⁹: «Կովկասի բաժնից» բացի, «Հատուկ կազմակերպության» թարգմանչական բյուրոյում կար երկու ենթաբաժին, որտեղ կենտրոնանում էր Հարավային և Հյուսիսային Կովկասին վերաբերող հետախուզական ու բաց տեղեկույթը: Այդ երկու ենթաբաժինները, կոչվում էին, համապատասխանաբար, «Հարավային Կովկասի թղթապանակ (Cenub-i Kafkasya Dosyası)» և «Հյուսիսային Կովկասի թղթապանակ (Şimali Kafkasya Dosyası)»⁴⁰:

«Հատուկ կազմակերպության» վերահսկողությամբ գործող չերքեզական քաղաքական կազմակերպություններից առաջինը հիմնադրվեց 1914 թվականին: Դա «Կովկասի հեղափոխական կազմակերպությունն (Kafkas İhtilal Cemiyeti)» էր, որի նպատակն էր Կովկասում ապստամբության հարուցումը⁴¹: Հյուսիսկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներից բացի, այդ կազմակերպության մեջ ներգրավված էին նաև մահմեդական վրացիներն ու ադրբեջանցիները⁴²: 1915 թ. Ստամբուլում նման կազմով ստեղծվեց «Կովկասի միության կոմիտեն (Kafkas İttihat Cemiyeti)», որը նպատակ ուներ «Չերքեզիան», Դաղստանն ու Վրաստանը ազատագրելուց հետո դրանք միավորել մեկ համադաշնային պետական կազմավորման մեջ⁴³:

Հյուսիսկովկասյան ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգելու համար, ինչպես վերը նշվեց, 1914 թ. Ստամբուլում

* չերքեզական կազմակերպություն էր» (տես *Yalçın Küçük*, Sırlar. İstanbul, YGS Yayınları, 2002, s. 98):

³⁹ Stü *Prof. Dr. Mustafa Balcioğlu*, a.g.e., s. 6:

⁴⁰ A.g.e., s. 5:

⁴¹ A.g.e., s. 161:

⁴² Կազմակերպության մասին ավելի հանգամանորեն տես *Arif Cemil*, I Dünya Savaşında Teşkilat-ı Mahsusa, İstanbul, Arba Yayınları, 1997, ss. 28 - 31:

⁴³ A.g.e., s. 162:

ստեղծվեց «Հյուսիսային Կովկասի քաղաքական կոմիտեն»⁴³, որը կյուրթական աջակցություն էր ստանում երիտթուրքական կառավարությունից, իսկ 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարից հետո վերանվանվեց «Հյուսիսային Կովկասի վտարանդիների բարեգործական կազմակերպություն (Şimali Kafkasya Muhacirleri Cemiyet-i Hayriyesi)»⁴⁴:

Հյուսիսային Կովկասի ժողովուրդների անկախանալու և միասնական պետության մեջ միավորվելու գաղափարը Օսմանյան կայսրության դաշնակից պետություններին ներկայացնելու նպատակով «Կովկասի հեղափոխական կոմիտեի» նախագահ Ֆուադ փաշան 1915 թ. դեկտեմբերին հատուկ ուղևորություն կատարեց Վիեննա⁴⁵: Նրա նախաձեռնությամբ 1915 թ. հոկտեմբերի 15-ին Ստամբուլում տեղի ունեցավ լեռնականների և վրացիների⁴⁶ ներկայացուցիչների ժողով, որն

⁴³ Այս կազմակերպության ակտիվ անդամներից էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության աչքի ընկնող անդամ, Թալեաթ փաշայի կառավարությունում երբևէ գործերի նախարար, ազգությամբ չերքեզ (աղբղական Հաթթո ընտանիքից) Բամայիլ Ջամվոլթաթը (տե՛ս *Seyhun Tunasar, Gizemli Bir Devrimci: İsmail Cambolat. Ankara, Piramit Yayınları, 2004, s. 68*):

⁴⁴ Տե՛ս *Mustafa Butbay, a.g.e., s. 2*: Գրականության մեջ հանդիպում է նաև «Անկախ Հյուսիսային Կովկասի հեղափոխական կոմիտե (Müstakil Şimali Kafkasya İstiklal Komitesi)» անվանումը: Այսպես, Վարշավայում հիմնադրված և կարճատև կյանք ունեցած ռուսերեն ու թուրքերեն լույս տեսնող «Призыв – Çağırış» («Կանչ») հյուսիսկովկասյան հանդեսի խմբագիր Բալո Բիլաթին (1920 թ. Օսթրիայից գաղթել է Թուրքիա, այնուհետև անցել Չեխոսլավակիա, 1937 թ. բնակություն հաստատել Վարշավայում) իր «Հյուսիսային Կովկասը և 1918 թ. մայիսի 11-ը» հոդվածում նշել է, որ «առաջին համաշխարհային պատերազմից առաջ Թուրքիայում հյուսիսկովկասցիները հիմնադրել էին «Անկախ Հյուսիսային Կովկասի հեղափոխական կոմիտե (Müstakil Şimali Kafkasya İstiklal Komitesi)», որի նախագահն էր 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս մարշալ Ֆուադ փաշան» (տե՛ս *Balo Bilati, Kuzey Kafkasya ve 11 Mayıs 1918, «Призыв – Çağırış» N 1-2, Май-Июнь 1938г. с. 9*):

⁴⁵ Տե՛ս *İzzet Aydemir, a.g.e., s. 80*:

⁴⁶ Ըստ ամենայնի ինքըր մահմեդական վրացիների՝ աջարների մասին է, քանի որ օսմանյան փաստաթղթերում շատ դեպքերում «Gürcü» նշանակում էր մահմեդական վրացի:

ընդունեց Օսմանյան կայսրության հետ դաշնություն կազմելու որոշում⁴⁶:

Սակայն թուրքական զորքերի պարտությունը և Արևմտյան Հայաստանի տարածք պատերազմական գործողությունների տեղափոխումը խափանեցին Հյուսիսային Կովկասի նկատմամբ մշակված թուրքական ծրագրերը, որոնք նոր լիցք ստացան միայն Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո: Այսպես, Հյուսիսային Կովկասի լեռնականների առաջին համագումարը, որը կայացավ 1917 թ. մարտին, ընդունեց որոշումներ, որոնք առաջ բերեցին ռուսական մամուլի հետևյալ միաձայն արձագանքը՝ «մենք զիտենք այդ որոշումների պատճառը. հյուսիսկովկասցիները պաշտպանում են Թուրքիայի շահերը»⁴⁷: Հաշվի առնելով Ռուսաստանում ստեղծված նոր իրավիճակը՝ «Հատուկ կազմակերպությունը» 1917 թ. մարտի 5-ին կայացած ժողովում վերանայեց Ռուսաստանի մահմեդականների նկատմամբ իր ռազմավարությունը՝ դրանում փոփոխություններ կատարելով և նպատակադրվելով այն Հյուսիսային Կովկասից տարածելու դեպի բոլոր մահմեդական շրջանները⁴⁸: Նույն թվականին «Միություն և առաջադիմություն» կուսակցության ԿԿ և ռազմական նախարարության համատեղ որոշմամբ ստեղծվեց «Կովկասի ազատագրման կոմիտե (Kafkasya İstiklal Komitesi)»⁴⁹:

Հարկ է նշել, որ երիտթուրքական կառավարության օրոք Ստամբուլում հիմնադրված չերքեզական կազմակերպությունները նախատիպ դարձան այն բոլոր հյուսիսկովկասյան կազմակերպությունների համար, որոնք հետագայում՝ 1920–1930-ական թթ., ստեղծվեցին Թուրքիայում և տարբեր եվրոպական երկրներում: Այս

⁴⁶ Տե՛ս *Prof. Dr. Mustafa Balcıoğlu, a.g.e., ss. 162 - 163*:

⁴⁷ Տե՛ս *Kadircan Kaflı, Şimali Kafkasya. Umumi Bilgiler – Tarih – Güzel Sanatlar ve Kültür. İstanbul, Vakıf Matbaası, 1942, ss. 130 - 131*:

⁴⁸ Տե՛ս *Prof. Dr. Mustafa Balcıoğlu, a.g.e., s. 164*:

⁴⁹ Տե՛ս *Арсен Авакян, указ. раб. с. 210*:

կազմակերպությունների կողմից առաջին անգամ մշակվեց Հյուսիսային Կովկասի անկախ միասնական պետության ստեղծման գաղափարը, մի պետության, որը պետք է «Թուրքիան պաշտպաներ հյուսիսից սպառնացող վտանգից և հանդես գար որպես բախարզելիչ տարածք»⁵⁰:

1917 թ. մայիսի 1-ին Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած հյուսիսկովկասյան ժողովուրդների առաջին համագումարում որոշում ընդունվեց Հյուսիսային Կովկասի և Դաղստանի լեռնականների միություն ստեղծելու մասին, իսկ 1918 թ. մայիսի 11-ին հայտարարվեց Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության ստեղծման մասին, որին Թուրքիան նույն օրը պաշտոնապես ճանաչեց և անմիջական օգնություն ցուցաբերեց: Ազգությամբ չեքքեզ Յուսուֆ Իզեթ փաշայի՝ հրամանատարությամբ թուրքական բանակը 1918 թ. սեպտեմբերի 13-ին մտավ Դաղստան, հոկտեմբերի 6-ին զրավեց Դերբենդ քաղաքն ու այն հանձնեց Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետությանը: Կովկաս ներխուժած թուրքական բանակի հաջողությունը զարգացնելու նպատակով այնտեղ նշանակվում էին չեքքեզական ծագում ունեցող սպաներ, ստեղծվում էին հյուսիսկովկասցիներից կազմված ջոկատներ⁵¹: Յուսուֆ Իզեթ փաշան,

⁵⁰ Տե՛ս *Balo Bilatti*. Kuzey Kafkasya ve 11 Mayıs 1918, «Призыв – Çağırış», Май-Июнь 1938 г., N 1-2:

⁵¹ Յուսուֆ Իզեթ փաշան (Մեթ Չունաթուրա Իզեթ՝ 1875–1922 թթ.) թուրքական բանակի գեներալ էր, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, չեքքեզական հասարակական գործիչ, չեքքեզների պատմության վերաբերյալ գրքերի հեղինակ և չեքքեզական առաջին այբուբենի ստեղծման նախաձեռնող: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Յուսուֆ Իզեթ փաշայի գլխավորած բանակը հասել էր Հյուսիսային Կովկաս, և նա անձամբ մեծ դերակատարություն էր ունեցել Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության ստեղծման գործում (տե՛ս *Izzet Aydemir*, a.g.e., ss. 7–13; ինչպես նաև «Portraits From The Circassian History: Yusuf Izzet (Met Chunatuko Yusuf Izzet; Yusuf Izzet Pasha)» (www.circassianworld.com/new/circassians/1505-portraits-yusuf-izzet-pasha.html)):

⁵² Տե՛ս *E. Ф. Лудшувейт*. Турция в годы первой мировой войны 1914 - 1918 гг. М., Изд-во Московского университета, 1966, с. 225: Օրինակ՝ 1918 թ. Արխազիա ուղարկված

համախմբելով իր հետ եկած և ռուսական բանակում ծառայած լեռնցի սպաներին, ձեռնամուխ եղավ նաև Լեռնականների հանրապետության գինված ուժերի ստեղծմանը⁵²:

Ուշագրավ է, որ Թուրքիան, ձեռնարկելով բացահայտ ինտերվենցիա, փորձեց իր գործողությունները ներկայացնել որպես մահմեդական ժողովուրդներին ցույց տրվող հովանավորություն, իսկ թուրքական բանակի առաջխաղացումը բացատրել նրանց իսկ խնդրանքով: Այսպես, 1918 թ. հունիս – օգոստոս ամիսներին Աբխազիայի ղեկավարներից Ալեքսանդր Շիրվաշիձեն, Թաթաշ Մարշանիան և Սիմոն Բասարիան թուրքական կողմի հորդորներով մի քանի անգամ դիմեցին օսմանյան կառավարությանը և Թուրքիայում ապրող իրենց հայրենակիցներին՝ օգնություն խնդրելու կոչով⁵³: Հյուսիսային Կովկասի ուղղությամբ թուրքական զորքերի հարձակմանը նախորդեց Թիֆլիսում Յուսուֆ Իզեթ փաշայի և Լեռնականների հանրապետության կառավարության երկու անդամների՝ Փշիմահո Կոսոքի՝ ու Վասան-Գիրեյ (Գիրայ) Ջաբադիի (Ջաբադին) հանդիպումները և վերջիններիս պաշտոնական խնդրագիրը⁵⁴:

Սակայն, Թուրքիան, պարտություն կրելով պատերազմում, ստիպված եղավ ըստ 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված

թուրքական դեսանտը կազմված էր արիազ մուհաջիրներից, որոնց ընդհանուր հրամանատարն էր արիազ իշխան Ջեմալ-բեյ Մարշանիան:

⁵² Տե՛ս *Feridun Kandemir*, a.g.e., s. 1240:

⁵³ Կովկասում երիտթուրքերի ծրագրերի իրականացման հիմնական խոչընդոտը հայերն էին: Ինչպես նշել է Իթթիհատի գործիչներից Ալի Բասանը՝ «Եթե չլինեին հայերը, ապա Կովկասը վաղուց մերը կլիներ» (տե՛ս *Nikolay Hovhannisyán*. The Armenian Genocide - Armenocide. Yerevan, «Tatev», 2002, p. 68):

⁵⁴ Տե՛ս *Станислав Лакоба*. К вопросу о Кавказской конфедерации. (www.fatiha.ru/fatih/konfederac.htm):

⁵⁵ Կոնկ Պշեմախո Տամաշիչ (1884–1962 թթ.): Թուրքիա սեղափոխվելուց հետո թուրքերենում «ց» տառ և հնչյուն չլինելու պատճառով գրվում էր որպես Պշիմահո Կոսոք (Pşimaho Kosok (Kotse)):

⁵⁶ Տե՛ս *Wassan – Giray Cabağı*. Kafkas-Rus Mücadelesi. İstanbul, Baha Matbaası, 1967, ss. 89 - 90:

Մուղոսի զինադադարի պահանջների նույն թվականի նոյեմբերին գորքերը դուրս բերել Կովկասից: Այս պայմաններում երիտթուրքական կառավարության կովկասյան քաղաքականության վերջին նախաձեռնությունն էր Կովկասում թուրքական ազդեցության պահպանումը այստեղ գտնվող թուրքական կամավորների և գործակալների ցանցի միջոցով: Ազգայնական շարժման օրակարգում Հյուսիսային Կովկասի խնդիրը պահպանելու նպատակով երիտթուրքական կառավարությունը, 1918 թ. նոյեմբերին թուրքական գորքերը Կովկասից հետ քաշելու հրաման արձագեցրելով, հայտարարեց, որ կամավորները կարող են մնալ և ծառայության անցնել Լեռնականների հանրապետության բանակում: Ըստ այդմ, մեծ թվով թուրք սպաներ նման ցանկություն հայտնեցին, և Թիմուրխանշուրա** քաղաքի թատրոնում տեղի ունեցավ Լեռնականների բանակում թուրք սպաների ծառայության անցնելու և երդում տալու հանդիսավոր արարողությունը⁵⁵: Մակայն Անտանտի պետությունների ճնշման տակ սուլթանական կառավարության արձակած երկրորդ հրամանով բոլոր թուրք սպաներին և զինվորներին պարտադրվեց վերադառնալ հայրենիք, ընդամին չվերադարձողները ենթարկվելու էին

* Երիտթուրքական եռապետության ամենազդեցիկ անդամ, ռազմական նախարար Էնվերն առանձնահատուկ հույսեր էր կապում Կովկասի, այնտեղ գտնվող «Իսլամական բանակի» մնացորդների և իր եղբայր Նուրի փաշայի հետ, ուստի և Ստամբուլից փախուստից հետո մինչև Բեռլին մեկնելը Հյուսիսային Կովկաս անցնելու մի քանի անհաջող փորձ էր կատարել (տես *Şevket Süreyya Aydemir. Makedonya'dan Ortaasya'ya Enver Pasa. Cilt III, 1914-1922. İstanbul, Remzi Kitabevi, 1999, ss. 480-485*): Հարկ է նշել, որ Կովկասից դուրս բերվող ստորաբաժանումները կազմալուծվող թուրքական բանակի ամենամարտունակ և կարգապահ ստորաբաժանումներն էին, և երիտթուրքերի պարագլուխների սկզբնական ծրագրի համաձայն՝ Թուրքիայում ազգայնական շարժումը պետք է առաջնորդեր Կարսում տեղակայված 9-րդ բանակային կորպուսի հրամանատար Յադուր Շևքեթ փաշան (տես *E. J. Zürcher, The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926. Leiden, 1984, pp. 86-87*):

** Ներկայումս Դաղստանի Բույնաքսկ քաղաքն է: 1919 թ. նոյեմբեր - 1920 թ. մայիս հատվածում այս քաղաքում էր գտնվում Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության կառավարությունը:

⁵⁵ Տես *Kadircan Kafli, a.g.e., ss. 139-140*:

հետապնդման⁵⁶: Մի շարք թուրք սպաներ***, չենթարկվելով վերջին հրամանին, մնացին Հյուսիսային Կովկասում՝ ակտիվ կերպով մասնակցելով Դենիկինի բանակի և բոլշևիկների դեմ մղվող մարտերին⁵⁷: Միևնույն ժամանակ, Թուրքիայում գործող չեքքեզական կազմակերպությունների ջանքերով նոր կամավորներ հավաքագրվեցին և ուղարկվեցին Հյուսիսային Կովկաս: Նրանց շարքերում գերակշռում էին մտավորականներն ու կրոնականները: Կամավորների մի մասը, հիասթափվելով, մի քանի ամիս անց վերադարձավ Թուրքիա, իսկ գերակշռող մասն ստիպված եղավ վերադառնալ Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Հյուսիսային Կովկասում սակավաթիվ մնացածները, օրինակ՝ Օսմանյան կայսրությունում առաջին չեքքեզական թերթի՝ «Գուազեի» հիմնադիր և

⁵⁶ A.g.e.

*** Նրանց մի զգալի մասը հյուսիսկովկասյան ծագում ուներ, ինչը հարկ եղած դեպքում շահարկվում էր: Այսպես, երբ 1919 թ. բրիտանական հրամանատարությունը Խոսրով-բեկ Սուլթանովից պահանջեց Դարաբադից արտաքսել թուրք սպա ուն Բյազիմին, Սուլթանովը պատասխանեց, թե «Բյազիմը ոչ թե թուրք է, այլ չեքքեզ» (տես «Нагорный Карабах в 1918 – 1923 гг. Сборник документов и материалов». Ер., Издательство АН Армении, 1992, с. 151):

⁵⁷ Տես *А. И. Деникин. Очерки русской смуты в 3 книгах. Кн. 3, т. 4 – 5, М., 2006, с. 195*:

Իր հուշերում Կամավորական բանակի գերագույն հրամանատար Ա. Դենիկինը նշում է, որ 1919 թ. օգոստոսին Չեչնիայի և Դաղստանի ապստամբությունները ղեկավարում էին թուրք և ադրբեջանցի սպաներ: Հյուսիսկովկասյան Թուրքական մշակութային միության նախագահ և հանրապետական Թուրքիայում չեքքեզների ու Հյուսիսային Կովկասի մասին առաջին ուսումնասիրություններից մեկի հեղինակ Քադրբջան Քաֆլը իր «Հյուսիսային Կովկաս» գրքում նույնիսկ առաջ է քաշում այն տեսակետը, թե տեղի բնակչությունն ավելի վստահում էր այդ մնացած թուրք սպաներին, քան ռուսական ռազմական դպրոցներն ավարտած հայրենակիցներին, սակայն պարզաբանում է, որ խոսքը հյուսիսկովկասյան ծագում ունեցող թուրքական սպաների մասին է (տես *Kadircan Kafli, a.g.e., ss. 147-150*): Լեռնականների հանրապետության խորհրդարանի նախագահ և ֆինանսների նախարար Վասան-Գիրեյ Ջաբաղին իր հուշերում գրում է, որ իրենց բանակի այն բարձրաստիճան սպաների մեկ մասը, որոնք ավարտել էին ռուսական զինվորական հաստատություններ, համագործակցել են Դենիկինի հետ և նրան աջակցել Լեռնականների հանրապետության գրավման գործում (տես *Wassan – Giray Cabağı, a.g.e., ss. 100-101*):

զլխավոր հողվածագիր Յուսուֆ Մուադ Նեգուչը, խորհրդային կարգերի հաստատումից հետո արտրվեցին Սիբիր»⁵⁸:

1919 թ. Թուրքիայում սկսվեց նոր պաշտոնական կովկասյան քաղաքականության մշակումը: Այն իր առաջին ձևակերպումն ստացավ Ք. Աթաթյուրքի նամակ-առաջարկությունում՝ 1920 թ. ապրիլի 24-ին հղված Վ. Լենինին, իսկ վերջնականապես ձևակերպվեց 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում՝ դառնալով հանրապետական Թուրքիայի հետագա կովկասյան քաղաքականության հիմքը:

Անկարայի կառավարության կովկասյան քաղաքականությունը կարելի է բաժանել երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի: Երկարաժամկետ ծրագրերի նպատակն էր այդ տարածաշրջանում ռուսական իշխանության վերահաստատման պայմաններում թեկուզ և բողարկված ձևով պահպանել իր ազդեցությունը և աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման դեպքում դարձյալ փորձել իրականացնել անկախ Հյուսիսային Կովկասի՝ որպես պատնեշի օգտագործման գաղափարը: Այդ քաղաքականությունում կարևոր դեր էր վերապահված կովկասյան վտարանդիությանն ու նրա քաղաքական կառույցներին, ըստ այդմ էլ Թուրքիան 1920-1930 թթ. կիրառեց կովկասյան վտարանդիության օգտագործման համապատասխան ռազմավարություն:

Կարճաժամկետ ծրագրերի նպատակն էր ազգայնական շարժմանն աջակցության ապահովումը՝ Հյուսիսային Կովկասի պրոբլեմի՝ որպես խաղաքարտի օգտագործմամբ: Ինչպես նշվում է թուրքական պատմագրության մեջ, «Անկարան, այք փակելով Կովկասում բոլշևիկյան իշխանության հաստատման վրա, փոխարենը ապահովագրեց արևելյան ռազմաճակատը և ամբողջ ուժն ուղղեց արևմտյան ռազմաճակատ, ինչը մեծ դեր խաղած պատերազմում

հաղթելու գործում»⁵⁹ և, մինևույն ժամանակ, ստացավ ազգայնական պայքարի համար կենսական նշանակություն ունեցող զենք, զինամթերք և կյուրական օգնություն:

Ազգայնական շարժման առաջին փուլում, որը տևեց մինչև 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, քեմալական կառավարության առաջնային նպատակն էր փրկել Անատոլիան մասնատումից, իսկ արտերկրում գործող «Միություն և առաջադիմության» կուսակցության առաջնորդները ջանում էին ապահովել արտաքին աջակցությունն այդ շարժմանը, որի կարևոր բաղադրիչ տարրերից էին հարաբերությունները բոլշևիկների հետ: Ուշագրավ է, որ եթե բոլշևիկների հետ հարաբերություններում երիտթուրքական առաջնորդները, մասնավորապես՝ Էնվերը և Ջեմալը, օգտագործում էին իսլամական գործոնը՝ առաջարկելով նպաստել մահմեդական երկրներում բոլշևիկների ազդեցության տարածմանը և համատեղ պայքարել Մեծ Բրիտանիայի դեմ, ապա քեմալական կառավարությունը հիմնականում շահարկում էր կովկասյան գործոնը՝ ակնարկելով, որ Թուրքիան ի վիճակի է Ռուսաստանի տեսակետից կենսական նշանակություն ունեցող Կովկասյան տարածաշրջանում նրա համար հարուցելու խնդիրներ կամ հակառակը՝ օգնելու այդ խնդիրների հարթմանն ու խորհրդային կարգերի հաստատմանը:

Ստեղծված իրավիճակում Հյուսիսային Կովկասում Լեռնականների հանրապետության հետ շփումները, իսկ այդ կառավարության անկումից հետո՝ Հյուսիսային Կովկասի քաղաքական ուժերի հետ կապող օղակի դերում հանդես եկող կովկասյան վտարանդիության հետ համագործակցությունը իրականացվում էր Անկարայից՝ Գլխավոր շտաբի օղակներով, և Էրզրումից՝ 15-րդ բանակային կորպուսի, ապա Արևելյան ռազմաճակատի հրամանատար

⁵⁸ Sıkı İzzet Aydemir, a.g.e., ss. 125, 129 – 130:

⁵⁹ Sıkı «Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar». Editor: Baskın Oran. Cilt I: 1919-1980. İstanbul, İletişim Yayın., 2001, s. 161:

Քյազիմ Կարաբեքիրի* միջոցով: Քյազիմ Կարաբեքիրի շտաբում էր կենտրոնանում նաև արևելյան ուղղություններից ստացվող տեղեկությո՞ւր, ներառյալ՝ Ռուսաստանի, Հյուսիսային և Հարավային Կովկասի հանրապետությունների, Իրանի և Աֆղանստանի վերաբերյալ տեղեկությունները⁶⁰: Պատմական փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հյուսիսային Կովկասի հարցում Աթաթյուրքի և Կարաբեքիրի ռազմավարական տեսակետներն ու մոտեցումերը համընկնում էին, իսկ տարաձայնությունները վերաբերում էին զուտ մարտավարական եղանակներին ու երկրորդական խնդիրներին: Աթաթյուրքը, ընդհանուր առմամբ կիսելով Կարաբեքիրի այն կարծիքը, թե թուրք ազգայնական շարժման տեսակետից ձեռնտու է, որ Հյուսիսային Կովկասում պահպանվի խառնաշփոթի և անկայունության իրավիճակը, ջանում էր հնարավորինս խուսափել Կովկասի և կովկասցիների պատճառով բոլշևիկների հետ ընդհարումից ու հարաբերությունների սրումից՝ Հյուսիսային Կովկասի խնդիրն օգտագործելով զուտ որպես խաղաքարտ: Քյազիմ Կարաբեքիրի տեսակետն ավելի կարծր էր. Հյուսիսային Կովկասում ընդվզումների ու ապստամբությունների հրահրմամբ և բոլշևիկների համար հնարավորինս լուրջ խնդիրների ստեղծմամբ կարելի է նրանց ստիպել ավելի մեծ աջակցություն ցուցաբերել թուրք ազգայնական շարժմանը և Հարավային Կովկասի հարցում դիմել թուրքերի համար ավելի ցանկալի զիջումների:

Հյուսիսային Կովկասի և կովկասյան վտարանդիության հնարավորությունների օգտագործման հարցում Աթաթյուրքի և Կարաբեքիրի տեսակետների միջև եղած որոշակի տարբերությունը ցույց է տալիս, որ 1919–1920 թթ. քեմալական կառավարությունը դեռ

* Թուրքերեկից ճիշտ թարգմանությամբ անհրաժեշտ է գրել Քյազըմ Քարաբեքիր, սակայն հայկական պատմագրությունում, ինչպես նաև հանրագիտարաններում ընդունված է Քյազիմ Կարաբեքիր ձևը: Չխախտելով ավանդույթը մեր գրքում նույնպես պահպանվում է հայկական պատմագրությունում ռուսական ազդեցությամբ ընդունված Քյազիմ Կարաբեքիր ձևը:

⁶⁰ Տե՛ս *Kazım Karabekir. İstiklal Harbimiz. Cilt 5. İstanbul, Emre Yayınları, 1995, ss. 2395–2410:*

յուներ կովկասյան գործոնի օգտագործման հստակ և միասնական քաղաքականություն, այլ կային միայն ընդհանուր պատկերացումներ և մոտեցումներ, ինչպիսին էր, օրինակ, Հյուսիսային Կովկասում ապստամբություններ ու դժգոհություն՝ հրահրելու ցանկալիության վերաբերյալ կարծիքը: Նշված շրջանում կովկասյան գործոնի օգտագործման Անկարայի քաղաքականությունը շատ դեպքերում ինտեգրիոն էր՝ լինելով նախորդ երիտթուրքական կառավարության մշակած ծրագրերի շարունակություն, գերազանցապես իմպուլսիվ և արձագանքային էր, երբեմն տարածաշրջանում նոր ստեղծված իրողությունների անտեսմամբ: Որոշ դեպքերում Անկարայի և Էրզրումի գործողությունները համակարգված չէին. Կարաբեքիրն ստացված տեղեկությունները ուշացումով էր հաղորդում Անկարա, ինքն էր վերահսկում լեռնականների ղեկավարների հետ շփումները և զբաղվում Կովկասից ժամանող վտարանդիների տեղավորման հարցերով:

Քյազիմ Կարաբեքիրը գործնական հարաբերություններ էր հաստատել նաև բոլշևիկյան կովկասյան կառույցների ղեկավարների ու 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության հետ և 1919 թ. բոլշևիկների հետ առաջին շփումներ հաստատելուց մինչև 1920 թ. ղեկտնմբեր ջանում էր բոլոր կապուլիներով և օղակներով հայթայթել տեղեկություններ, թե բոլշևիկյան կառավարությունը ինչպես է պատկերացնում Հյուսիսային Կովկասի հետագա կարգավիճակը: Այսպես Ռուսաստան մեկնած Իսմայիլ Հաքքիի և Ազիզ Մեքերի* միջոցով նա փորձում էր տեղեկություններ ստանալ Հյուսիսային Կովկասում և հատկապես Դադստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին և ճշտել Ռուսաստանի բոլշևիկյան

* Պրոֆեսոր Ազիզ Մեքերը Օսմանյան կայսրության բոլոր չեքքեզական կազմակերպությունների անդամ էր, մարշալ Ֆուադ փաշայի հետ Եվրոպա կատարած ճամփորդության ժամանակ ծանոթացել էր Վ. Լենինի հետ, հետագայում այդ ծանոթության շնորհիվ թուրքական պատվիրակության կազմում մասնակցել էր տարբեր մակարդակներով ընթացած թուրք-ռուսական բանակցություններին (տե՛ս *Izzet Aydemir, a.g.e., ss. 89 - 90*):

կառավարության մտադրությունը Դադատանի անկախության ճանաչման հարցում: 1920 թ. հուլիսի 31-ին այդ կապակցությամբ Աթաթյուրքին հղած հեռագրում Կարաբեքիրը, հավատարիմ մնալով իր այն կարծիքին, թե Հյուսիսային Կովկասում լարվածությունը ձեռնտու է Թուրքիային, նշել է, որ «Թուրքիայի տեսակետից Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունները շատ դրական են»⁶¹, սակայն շեշտել է, որ ծայրահեղ անհրաժեշտություն է պարզել բոլշևիկների նպատակները, քանի որ եթե Հյուսիսային Կովկասը մնա Մոսկվայից կախում ունեցող հանրապետության կարգավիճակում, ապա դա կվնասի իսլամի և թուրքերի միասնականության ապահովմանը⁶²:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրք ազգայնական պայքարի միավորիչ գործոնը ոչ թե այդ տարիներին դեռևս ձևավորման փուլում գտնվող թուրքական ազգայնականությունն էր, այլ իսլամը՝ ուղղված քրիստոնյա ազգային փոքրամասնությունների և նրանց հավատակից Անտանտի պետությունների դեմ, Աթաթյուրքը Խորհրդային Ռուսաստանի կողմից Դադատանի անկախության ճանաչման առթիվ 1920 թ. դեկտեմբերի 18-ին Լենինին ուղղված շնորհավորական հեռագրում շեշտում է, որ «այս երջանիկ որոշումն անկասկած դրական ազդեցություն կունենա բոլշևիկյան և մահմեդական աշխարհների հարաբերությունների վրա և դրանով իսկ մեզ ավելի կմոտեցնի մեր ընդհանուր նպատակին՝ ժամանակակից կապիտալիզմը սնուցող արևմտյան իմպերիալիզմի նկատմամբ հաղթանակի»⁶³:

Այսպիսով՝ 1919–1920 թթ. ձևակերպվեց Թուրքիայի կովկասյան քաղաքականության նաև մյուս կարևոր հիմնադրույթը՝ կրոնական գործոնի օգտագործումը, և Թուրքիայի՝ որպես մահմեդականների

⁶¹ Տես *Kazım Karabekir*. İstiklal Harbimiz c. 5, s. 1744:

⁶² A.g.e., s. 1745:

⁶³ Տես АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 3, папка 2, д. 33, л. 70:

հովանավոր հանդես գալու քաղաքական ուղեգիծը, որը բնորոշ էր Թուրքիայի ոչ միայն կովկասյան, այլև միջինասիական ուղղությանը: Հյուսիսային Կովկասի բազմատարրության և ազգամիջյան հակասությունների, ընդհանուր ազգային ինքնության չձևավորվածության պայմաններում լեռնականները նույնպես փորձում էին որպես միավորիչ գործոն օգտագործել մահմեդականությունը, ուստի և Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության դրոշի վրա պատկերված լուսինն ու կանաչ գծերը նպատակ ունեին խորհրդանշել իսլամը⁶⁴:

Բոլշևիկների դեմ ուղղված ապստամբությունները ևս տեղի էին ունենում կրոնական կարգախոսներով⁶⁵: Լեռնականների հանրապետության վարչապետ Պ. Կոսոքի կարծիքով՝ «կրոնը և անսասան տեղական աղաթները Հյուսիսային Կովկասի ազգություններին միավորող և դեռևս միավորումը շարունակող հիմնական տարրեր են»⁶⁶: Սակայն լեռնականներին, ի տարբերություն քեմալականներից, չհաջողվեց կրոնական գործոնը օգտագործել ո՛չ որպես միավորիչ, ո՛չ էլ որպես բոլշևիկների դեմ ուղղված հզոր գործոն⁶⁷, իսկ 1920-ական թթ. վերջերից Թուրքիայում ուժեղացող թուրքական ազգայնականության հոսանքը, երկրում թուլացնելով կրոնի դիրքերը, նվազեցրեց արտաքին քաղաքականությունում դրա օգտագործման լծակները:

⁶⁴ Տես *Wassan – Giray Cabağı*, a.g.e., s. 83:

⁶⁵ Տես *Pşimaho Kosok*. Kuzey Kafkasya. Hürriyet ve İstiklal Savaşı Tarihinden Yapraklar. İstanbul, Ciltut Matbaası, 1960, s. 42:

⁶⁶ A.g.e., s. 19:

⁶⁷ A.g.e., s. 40: Հակաբոլշևիկյան պայքարում կրոնական գործոնի օգտագործման անհաջողությունը Պ. Կոսոքը բացատրում է բոլշևիկ-կոմունիստ Ջեմալ Կորքմազի գործունեությամբ, մի գործչի, որին հաջողվեց Հյուսիսային Կովկասի մի շարք հեղինակավոր կրոնական առաջնորդներից, ինչպիսիք էին Ալի Շաջին, Չեչևիայի Շուայիփ մոլլան և Կարաբոլայում Նազիր Քաթգանը, ստանալ «ֆետվա», որ «իսլամի և բոլշևիզմի միջև հակասություն չկա, և նրանք թշնամիներ չեն»:

1921 թ. վերջին Աթաթյուրքի դիրքերի ամրապնդման պատճառով Ք. Կարաբեքիրն ստիպված եղավ կովկասյան հարցում իր ձեռնարկող քայլերն ավելի մեծ չափով համաձայնեցնել Անկարայի վարած ընդհանուր քաղաքական ուղեգծի հետ: 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ստորագրումից հետո Աթաթյուրքի և Կարաբեքիրի մոտեցումների միջև հիմնական տարբերությունը դրսևորվեց Թուրքիա զաղթած կովկասյան վտարանդիության օգտագործման և նրան ցուցաբերվող աջակցության չափի հարցում:

Այսպիսով՝ ազգայնականների հյուսիսկովկասյան քաղաքական ուղեգիծը երիտթուրքական շրջանի համեմատությամբ ավելի իրատեսական ու հավասարակշռված էր, ավելի համահունչ էր տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխություններին: Ի վիճակի չլինելով ընդդիմանալու այդ տարածաշրջանում Ռուսաստանի իշխանության վերականգմանը՝ Թուրքիան փորձեց այնտեղ գոնե պահպանել իր ազդեցությունը, ինչի կարևոր միջոցներից էին կովկասյան վտարանդիությունն ու նրա ծավալված քաղաքական գործունեությունը:

*Հյուսիսային Կովկասի անկախության խնդրի շահարկումը
1920 թ. ռուս-թուրքական բանակցություններում*

Քեմալական կառավարությունն իր արտաքին քաղաքականության բնագավառում, մասնավորապես՝ բոլշևիկների հետ հարաբերություններում, Հյուսիսային Կովկասի խնդիրն առաջին անգամ պաշտոնապես շահարկել է 1920 թ. օգոստոսին տեղի ունեցած բանակցություններում: Դրա նպատակն էր Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում Թուրքիայի ազդեցության գործոնի հաշվառմամբ Հյուսիսային Կովկասի խնդիրը որպես խաղաքարտ օգտագործել Հարավային Կովկասում հնարավոր տարածքային ձեռքբերումների և ազգայնական շարժմանը ֆինանսական ու զինամթերքով աջակցություն ստանալու հարցերում: Այդ համատեքստում քեմալական դիվանագիտությունը Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններում փորձում էր հանդես գալ որպես Կովկասի մահմեդականների հովանավոր⁶⁸: 1920–1921 թթ. թուրք-բոլշևիկյան բանակցությունների ժամանակ քեմալական կառավարության որդեգրած դիվանագիտական խնդիրն էր՝ Հյուսիսային Կովկասի գործոնի կիրառմամբ ստիպել բոլշևիկներին զիջումների գնալ և ստանալ ազգայնական պայքարի համար կենսական նշանակություն ունեցող զենք, զինամթերք, այլ նյութական օգնություն⁶⁹:

Կովկասի խնդրում Անկարայի տեսակետը և գործնական առաջարկությունը շարադրվեցին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալի (Աթաթյուրք) 1920 թ. ապրիլի 24-ին Վ. Լենինին հղված նամակում, ըստ որի՝ քեմալական կառավարությունը

⁶⁸ Տես Ա. Ավագյան, Թուրքիայի՝ որպես մահմեդականների հովանավորի դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում: «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր)», Ե., «Նախիջևան» հրատար., 2001, էջ 47–56:

⁶⁹ Տես «Türk Dış Politikası», s. 161:

պարտավորվում էր «ռուս բոլշևիկների հետ համաձայնեցնել ամբողջ աշխատանքն ու միավորել ռազմական գործողությունները, և եթե խորհրդային ուժերը մտադիր են Վրաստանի դեմ ռազմական գործողություններ ծավալել կամ դիվանագիտական ճանապարհով՝ ազդեցության գործադրմամբ, Վրաստանին ստիպել միության մեջ մտնել, իսկ անգլիացիներին բշել Կովկասից, ապա Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է գործողություններ ձեռնարկել Հայաստանի դեմ և Ադրբեջանի Հանրապետությանն ստիպել ընդգրկվել խորհրդային հանրապետությունների կազմում»⁷⁰:

1920 թ. հունիսի 2-ին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովիսար Վ. Չիչերինի ստորագրած պատասխան նամակում նշված էր, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը գոհունակությամբ տեղեկացել է Անկարայում Մեծ ազգային ժողովի կողմից ղեկավարվող կառավարության արտաքին քաղաքականության սկզբունքների մասին⁷¹:

Թեև Մուստաֆա Քեմալի նամակում Հյուսիսային Կովկասի մասին չէր խոսվում, բայց ռուս-թուրքական բանակցությունների և Մոսկվայի պայմանագրի նախապատրաստման աշխատանքների ժամանակ այս խնդիրը մի քանի անգամ շահարկվել է: Մասնավորապես՝ բոլշևիկներին անհանգստացնում էին թուրքերի ազդեցությունը Հյուսիսային Կովկասում, ինչպես նաև այն, որ մի շարք ընդվզումներ ու դժգոհություններ հրահրվում կամ ղեկավարվում էին Թուրքիայից: Քեմալական կառավարությունն իր հերթին շահագրգռված էր հնարավորինս շուտ Մոսկվա պատվիրակություն ուղարկելու մեջ⁷²: Այդ պատվիրակությունը քեմալական կառավարության արտասահման

⁷⁰ Ств АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 3, папка 2, д. 3, 1920 г., л. 3:

⁷¹ Ств Проф. Ю. В. Ключников и проф. А. В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III «От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской Революции». Выпуск I «Акты советской дипломатии», М., Издание Литиздата НКВД, 1928, сс. 26 – 27:

⁷² Ств Yusuf Kemal Tengirşenk. Vatan Hizmetinde. İstanbul, Bahar Matbaası, 1976, s. 146:

ուղարկված առաջին պաշտոնական պատվիրակությունն էր⁷³: Այն ղեկավարում էր արտաքին գործերի նախարար Բեքիր Սամին (Քունդուխ): Պատվիրակությունը Մոսկվա ժամանեց 1920 թ. հուլիսի 18-ին՝ 69. օր տևած ուղևորությունից հետո⁷⁴: Մոսկվայում Թուրքիայի Ազգային ժողովի պատվիրակությունն արժանացավ սառն ընդունելության և առաջին օրերին չկարողացավ հանդիպել Վ. Չիչերինի հետ, որը Պետրոգրադում մասնակցում էր Երրորդ ինտերնացիոնալի երկրորդ համագումարի նիստերին: Այդ ընթացքում Բեքիր Սամին պատվիրակությունը հյուրընկալվեց Մոսկվայի թաթարական դպրոցում, որտեղ կազմակերպված ճաշկերույթի ժամանակ հանդիպեց Էնվեր փաշային⁷⁴, որի ներկայությունը Մոսկվայում ուժեղացրեց պատվիրակության անհանգստությունը և անհրաժեշտություն առաջացրեց հրատապ լուծելու այն հարցը, թե ով իրավունք ունի խոսելու Թուրքիայի անունից: Այդ պատճառով Վ. Չիչերինի և Լ. Կարախանի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ Թուրքիայի Ազգային ժողովի պատվիրակությունը հարց բարձրացրեց, որ միայն ինքն է իրավասու ներկայացնելու Թուրքիան, և որ Էնվեր, Ջեմալ ու Հալիլ փաշաները նման իրավասություն չունեն⁷⁵: Մյուս կողմից՝ Բաքվից Մոսկվա ժամանած Հալիլ փաշան նույնպես ներկայացել էր որպես ԹԱՄԺ-ի կառավարության ներկայացուցիչ⁷⁶:

1920 թ. օգոստոսին ռուս-թուրքական բանակցությունների ամենաբարդ հարցը, որում բախվեցին երկու պետությունների շահերն ու թուրքական պատվիրակությունը որպես խաղաքարտ օգտագործեց

⁷³ Ств Mustafa Kemal Atatürk. Nutuk. İstanbul, Kum Saati Yayinlari, 2002, s. 363:

⁷⁴ Բեքիր Սամինի ղեկավարած պատվիրակության կազմում ընդգրկված էին Յուսուֆ Քեմալ Թեղիբշենքը, Իբրահիմ Թալի Օնգորենը, Լազիստանի պատգամավոր Օսման լիլը (վերջինս ընդգրկված էր ռուսերենին տիրապետելու պատճառով և թարգմանչի դեր էր կատարելու) և Սեֆի Օզգորենը, (տես «Türk Dış Politikası», s. 168):

⁷⁴ Ств Yusuf Kemal Tengirşenk, a.g.e., s. 153:

⁷⁵ A.g.e., s. 160:

⁷⁶ Ств Ali Fuat Cebesoy. Moskova Hatıraları (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, «Vatan» Neşriyatı, 1955, s. 136:

Հյուսիսային Կովկասի խնդիրը, Հայաստանի նկատմամբ քաղաքականությունն ու այդ համատեքստում Վանի, Մուշի ու Բիթլիսի վիլայեթները Հայաստանին հանձնելու Վ. Չիչերինի պահանջն էր:

Վ. Չիչերինի հետ հանդիպումից առաջ՝ 1920 թ. օգոստոսի 4-ին, Մոսկվայում թուրքական պատվիրակությունը նույնպես հանդիպումն ունեցավ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդավարի տեղակալ Լ. Կարախանի հետ: Այդ հանդիպման ընթացքում բարձրացվեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային հանձնված տարածքները վերադարձնելու և Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հարցերը: Սակայն Կարախանը, մերժելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նշված սահմանը՝ որպես հիմք ընդունելու պահանջը, պատասխանեց, որ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը իրենք նպատակահարմար չեն համարում նախ այն պատճառով, որ Ռուսաստանը մտադիր է ինքնուրույնաբար լուծելու Հայաստանի խնդիրը, ինչպես նաև թուրքական հարձակումը կզրգոյի Եվրոպայի հասարակական կարծիքը⁷⁷: Այնուհետև՝ 1920 թ. օգոստոսի 17-24-ը Խորհրդային Ռուսաստանի և Անկարայի կառավարության միջև քաղաքական պայմանագիր կնքելու անարդյունավետ բանակցությունների ժամանակ, թուրքական պատվիրակությունն անակնկալի եկավ՝ տեղեկանալով Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի ստորագրման մասին, ինչից հետո Չիչերինը հայտարարեց, որ այսուհետև Ռուսաստանը թուրքերի հետ կսպ հաստատելու համար երկաթգիծը բացելու հարցում չի կարող ճնշում գործադրել Հայաստանի վրա⁷⁸:

* Անդրկովկաս թուրքական ներխուժումից հետո՝ 1918 թ. սեպտեմբերի 20-ին, Թալեթի կառավարությանը հղած նոտայով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային վերաբերող մասով չեղյալ էր հայտարարել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը (տես «Новейшая история Турции», М., Издательство «Наука», 1968, с. 17):

⁷⁷ Տես *Yusuf Kemal Tengirşenk*, a.g.e., s. 159:

⁷⁸ A.g.e., s. 160:

Ուշագրավ է, որ այն օրվա առաջին կեսին, երբ Վ. Չիչերինը առանձնազրույցի ժամանակ ներկայացրեց Վանի, Մուշի ու Բիթլիսի վիլայեթները Հայաստանին վերադարձնելու պահանջը⁷⁹, Բեքիր Սամին հանդիպել էր Հյուսիսային Կովկասից եկած մի խումբ երիտասարդների հետ և այդ հանդիպման ժամանակ քննարկված թեմաների մասին որևէ տեղեկություն չէր հաղորդել պատվիրակության մյուս անդամներին⁷⁹: Տեղեկանալով Չիչերինի առաջարկության մասին՝ պատվիրակության փոխնախագահ, ԹԱՄԺ-ի կառավարության տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալը հետաքրքրվեց, թե Բեքիր Սամին այս հարցով Չիչերինի հետ բանակցություն վարել է, թե՛ ոչ, և, ստանալով բացասական պատասխան, նշեց, որ իրենք չեն կարող նման հարցով բանակցել, քանի որ վերադառնալուն պես Ազգային մեծ ժողովն իրենց կախաղան կհանի⁸⁰: Չնայած թուրքական պատվիրակության մերժմանը՝ Չիչերինի համառ պահանջով այս խնդրի շուրջ բանակցություններ այդուհանդերձ տեղի ունեցան⁸¹:

Թուրքական պատվիրակությունը նախ հանդես եկավ այն ավանդական փաստարկով, թե հայերը Թուրքիայի որևէ շրջանում մեծամասնություն չեն կազմում, ուստի նման պահանջը հակասում է հենց բոլշևիկների հոչակած սզբունքներին, ոտնահարում է մահմեդականների իրավունքները և այդ իսկ պատճառով չի կարող

* Վ. Չիչերինի առաջարկը Բեքիր Սամինի համար այնքան անակնկալ եղավ, որ նա, չկարողանալով զսպել իրեն, բացականչեց. «Այդ դեպքում մենք ինչի՞ համար ենք պատերազմում: Արևմուտքում՝ հույներին, արևելքում՝ հայերին հող չտալու համար, այդպես չէ» (տես *Şevket Süreyya Aydemir*. Tek Adam Mustafa Kemal. Cilt II 1919-1922. İstanbul, Remzi Kitabevi, 1999, s. 380):

⁷⁹ Տես *Yusuf Kemal Tengirşenk*. a.g.e., s. 160.

⁸⁰ A.g.e., s. 164:

⁸¹ Տես «TBMM Gizli Celse Zabıtları», Cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, ss. 157 – 187: Թուրքական պատվիրակության փոխնախագահ Յուսուֆ Քեմալը բանակցությունների ամբողջ ընթացքն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ հատուկ այդ խնդրի քննարկմանը նվիրված զաղտնի (փակ) նիստերում, որոնք տեղի են ունեցել 1920 թ. հոկտեմբերի 16-ին և 17-ին:

դրական պատասխանի արժանանալ: Ավելին. պատվիրակությունը համոզված է, որ Խորհրդային Ռուսաստանի առաջարկությունն ընդունելու դեպքում թուրք ժողովրդի աչքում Անկարայի կառավարությունը, համաձայնվելով Վանն ու Բիթլիսը հայերին հանձնել, ոչնչով չի տարբերվի Սևրի պայմանագիրն ստորագրած սուլթանական կառավարությունից⁸²: Չիչերինը հակադարձեց, որ հնարավոր տարբերակ է հայերի՝ նախատեսված շրջաններ գաղթի կազմակերպումը⁸³, իսկ այն փաստարկը, թե ամբողջովին մահմեդականներով բնակեցված Բայազետի լիվան (շրջանը) կարող է Հայաստանի երկու մասերի միջև պատնեշ լինել, հերքեց՝ նշելով, որ այդ լիվայի տարածքով նեղ միջանցք տրամադրելու դեպքում նշված վիլայեթները կմիանան Հայաստանին⁸⁴:

Չիչերինի առաջարկության իմաստը ճիշտ ընթռնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ բոլշևիկյան ղեկավարության մեջ գոյություն ունեւր Կովկասում մահմեդականության վրա հիմնվելու գաղափարի կողմնակիցների խմբավորում, որի ներկայացուցիչն էր Նարիման Նարիմանովը⁸⁵: Այդ հոսանքի կարևորության մասին պատկերացում ունեւին նաև թուրքական պատվիրակության անդամները, հատկապես՝ Բեքիր Սամին, որը հանդիպել էր և՛ Ադրբեջանի, և՛ Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչների հետ: Թե՛ 1920, թե՛ 1921 թվականների Մոսկվայի բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունն օգտվեց ինչպես ադրբեջանցիների, այնպես էլ հյուսիսկովկասցիների աջակցությունից: Այսպես, երբ Խորհրդային Ռուսաստանի և

⁸² Տեւ *Yusuf Kemal Tengirşenk*. a.g.e., s. 167:

⁸³ Տեւ АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 53001, л. 3: Թուրքիայի խորհրդարանում Յուսուֆ Քեմալն ասել է, որ ի պատասխան թուրքերի այս փաստարկի՝ Վ. Չիչերինը հայտարարեց. «Հանեք այնտեղից թուրքական բնակչությունը, և մենք այդտեղ կտեղավորենք հայերին»:

⁸⁴ Տեւ *Yusuf Kemal Tengirşenk*. a.g.e., s. 168:

⁸⁵ Տեւ АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 43:

Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված պայմանագրի պատճառով թուրք-ռուսական բանակցությունները փակուղի մտան, թուրքական պատվիրակությանը խորհուրդ տրվեց հարցը քննարկել անմիջականորեն Վ. Լենինի հետ, և «մահմեդական ուղղության ներկայացուցիչները» կազմակերպեցին այդ հանդիպումը⁸⁶:

Հայաստանի հարցով բանակցությունների ձախողման շրջանում՝ 1920 թ. սեպտեմբերի 1-ին, Բեքիր Սամին նամակով դիմեց Կարախանին՝ ներկայացնելով Միդիատ անունով մի մարդու, որը Հյուսիսային Կովկասի վտարանդիներից Վ. Լենինին ուղղված նամակ էր բերել, և Վ. Չիչերինին ու Լ. Կարախանին խնդրեց կազմակերպել նրա հանդիպումը Վ. Լենինի հետ⁸⁷: Նույն օրը Էնվեր փաշային Բաքու գրված մեկ այլ նամակով Բեքիր Սամին մանրամասնորեն տեղեկացրեց երեք վիլայեթները Հայաստանին հանձնելու Վ. Չիչերինի առաջարկության և Հյուսիսային Կովկասին անկախություն տալու իր հանդիպակած առաջարկության մասին, ինչպես նաև Էնվերին խնդրեց որպես ճնշման հավելյալ լծակ Հյուսիսային Կովկասի անկախության հարցը բարձրացնել Բաքվում տեղի ունեցող Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում⁸⁸:

Էնվերին գրված այդ նամակը վկայում է նաև, որ Անկարայի կառավարությունն իր պատվիրակությանը տեղյակ է պահել երիտթուրքերի առաջնորդների հետ Ռուսաստանի վերաբերյալ իր նամակագրության մասին: 1920 թ. օգոստոսի 26-ին Մ. Քեմալին հղված նամակում Էնվերը, հաղորդելով բոլշևիկների հետ իր բանակցությունների մասին, նշեց, որ բոլշևիկները խոստացել են ճանաչել Հյուսիսային Կովկասի և Ադրբեջանի անկախությունը⁸⁹:

⁸⁶ Տեւ *Yusuf Kemal Tengirşenk*. a.g.e., ss. 163, 178:

⁸⁷ Տեւ АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 31:

⁸⁸ Տեւ *Masayuki Yamauchi*. Hoşnut Olamamış Adam – Enver Paşa. Türkiye'den Türkistan'a. İstanbul, Bağlam Yayıncılık, 1995, s. 99:

⁸⁹ Տեւ *Ali Fuat Cebesoy*. Moskova Hatıraları (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, «Vatan» Neşriyatı, 1955, s. 157:

Այնուհետև Բեքիր Սամին խորհրդային ղեկավարությունից թույլտվություն խնդրեց այցելել Հյուսիսային Կովկաս՝ այնտեղ ապրող իր քրոջն ու բարեկամներին տեսնելու պատրվակով*։ Կովկասյան իր շրջագայության ժամանակ նա ունեցավ մի քանի գաղտնի հանդիպումներ, որոնց հաջորդեց Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում հակաբոլշևիկյան ընդվզումների և ընդհարումների բռնկումը։ ՌԻշագրավ է, որ Բեքիր Սամիի շրջագայությունը հնարավոր եղավ բոլշևիկյան կուսակցության կովկասյան կառույցների մի շարք ղեկավարների անհետատեսության հետևանքով, քանի որ շատերն այն կարծիքին էին, թե Թուրքիայի Ազգային ժողովի կառավարության արտաքին գործերի նախարարի հանդիպումները կնպաստեն Հյուսիսային Կովկասում կոմունիստների դիրքերի ուժեղացմանը⁹⁰։ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան երկրամասի ղեկավարներից Սկաչկոն դեռ 1920 թ. հուլիսի 2-ին Վ. Չիչերինին հղված նամակում գրել էր, որ «թուրքական ազգայնական շարժումը երբևիցե չի անցնի Անտանտի կողմը, այդ իսկ պատճառով ընդհանրապես պետք է բացառել Թուրքիայի՝ Խորհրդային Ռուսաստանին դավաճանելու հնարավորությունը։Այսօր սլայքարել Կովկասի մահմեդական ժողովուրդների շրջանում Թուրքիայի ունեցած ազդեցության դեմ նշանակում է ուժեղացնել նրանց շրջանում Անտանտի ազդեցությունը։ Թուրքական ազդեցությունից վախենալն անհեթեթություն է։ Դրանից կարող են վախենալ միայն վրացի կամ հայ ազգայնամուլները, իսկ կոմունիստները նման հիմք չունեն»⁹¹։

* Բեքիր Սամին ազգությամբ օս էր՝ Քունդուխ, կամ Կունդուխով, հայտնի գերդաստանից։ ՌԻշագրավ է, որ թեև Թուրքիայում ազգանունները մտցվել էին միայն 1934 թ., Բեքիր Սամին Ռուսաստան ոտք դրած պահից բոլոր տեղերում ներկայացել է իր ազգանվամբ՝ Բեքիր Սամի Կունդուխով (տես *Yusuf Kemal Tengirsenk*, a.g.e., s. 149)։

⁹⁰ Տես АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 64։ Այսպես «Известия ЦИК» պաշտոնական տեղեկագիրը հայտնում էր, որ 1920 թ. հոկտեմբերի 7-ին «Գրոզնի է ժամանել Թուրքիայի հեղափոխական կառավարության՝ Բեքիր Սամիի ղեկավարած պատվիրակությունը»։

⁹¹ Տես АВП РФ, ф. 0132, Референтура по Турции, оп. 3, папка 102, д. 15, лл. 178, 178 об.։

Վ. Չիչերինը, Հյուսիսային Կովկասում Բեքիր Սամիի գտնվելու և դրան հաջորդած ժամանակահատվածում ստանալով մտահոգիչ տեղեկություններ, ի տարբերություն կովկասյան բոլշևիկյան կուսակցական կառույցների ղեկավարներից, լավ հասկացավ և՛ այդ այցի վտանգը, և՛ այն, թե իրականում Բեքիր Սամին ու թուրք ազգայնականները ինչ գործունեություն են ծավալում ինչպես Հյուսիսային, այնպես էլ Հարավային Կովկասում։ Իր այդ մտահոգությունը նա հայտնեց 1920 թ. հոկտեմբերի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Քաղբյուրոյին հղած նամակում. «Հայ-ադրբեջանական վեճերի քննարկման ժամանակ ես մշտապես նշել եմ, որ Կովկասում թուրքական քաղաքականության նվաճողական միտումների ի հայտ գալու դեպքում Հայաստանը դրա դեմ պատնեշ կլինի և կպաշտպանի մեզ։ Այժմ Օրջոնիկիձեն գրում է Կովկասում թուրք փաշաների հակահեղափոխական դերի մասին, Սիտինի զեկույցները ցույց են տալիս, որ լեռնականների շրջանում մեր դեմ ուղղված շարժումը շատ ուժեղ է։ Օրջոնիկիձեի խոսքով՝ թուրքերի առաջխաղացումը կբարձրացնի մահմեդական Կովկասի բոլոր հակահեղափոխական տարրերի ոգին։ Չէ՞ որ այնտեղ է նաև Նուրի փաշան՝ Բաքվի նվաճողը և հակաբոլշևիկյան նվաճողական քաղաքականության ներկայացուցիչը։ ՌԻՎավրը մեզ տեղեկություններ չի ուղարկում, էլիավան ժամանակին Թուրքիա չմեկնեց, և մենք զրկված ենք քեմալականների տրամադրվածությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններից՝ դրանք քաղելով մեզնից զենք ստացող փաշաների ու խորհրդարանի պատգամավորների պատմածներից։ Դա մեկ անգամ ևս ապացուցում է, որ չի կարելի առանց վերահսկման զենք տրամադրել։Բեքիր Սամին ասաց, որ մեկնում է Վլադիկավկազ՝ քրոջ հետ հանդիպելու։ Դաշնակցին չէր կարելի մերժել, բայց ես պայմանավորվել էի Մենժինսկու՝ հետ, որ քույրը նրան կսպասի

* Նամակում նշված ժամանակ Մենժինսկին Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի (ՀԱՀ՝ Всероссийская чрезвычайная комиссия - ВЧК) Հատուկ բաժնի

Ռոստովում, այնուհետև՝ պատրվակ բռնելով ինչ-որ հուզումներ, նրան (Բեքիր Սամիին, – Ա.Ա.) Ռոստովից հեռու չթողնեն: Չեմ հասկանում, թե ինչու դա չարվեց: Օրջոնիկիձեի խոսքով՝ նա ինգուշների շրջանում անկախություն է քարոզում: Այս մեղադրանքում չի կարելի չտեսնել այն տեսակետի հերքումը, թե լեռնականներին միայն տնտեսական օգնություն է հարկավոր: Ռադեկն ասում է. «Լեռնականներին ոչ թե ինքնավարություն է պետք, այլ տաբատ»: Եթե դա այդպես լիներ, ապա Բեքիր Սամիի քարոզչությունը մեր բողոքը չէր հարուցի: Ակնհայտ է, որ լեռնականներին նաև ինչ-որ այլ բան է հարկավոր»⁹²:

Հյուսիսային Կովկասից վերադառնալուց հետո Բեքիր Սամին 1920 թ. նոյեմբերի 5-ին Վ. Չիչերինին ուղարկեց մի գաղտնի նամակ, որում ներկայացրեց իր տպավորությունները Հյուսիսային Կովկասում տիրող իրավիճակի, լեռնականների տրամադրությունների և խորհրդային իշխանություններից նրանց սպասումների մասին⁹³: Այս նամակը շատ ուշագրավ է. այստեղ Բեքիր Սամին քողարկված ձևով սպառնում է Խորհրդային Ռուսաստանին և լեռնականների անունից բարձրացնում Հյուսիսային Կովկասին անկախություն տրամադրելու անհրաժեշտության հարցը: Նամակը բաղկացած է երեք բաժնից. «1) ներքին իրավիճակը, 2) ինչ են սպասում լեռնականները Խորհրդային կառավարությունից և 3) Վրանգելի կողմնակիցները և Անտանտի գործունեությունը»⁹⁴: Առաջին մասում Սամին նկարագրում է, որ Կովկասում տիրում է համատարած ահաբեկչություն, ոչ ոք չի կարող վստահ լինել ո՛չ իր ունեցվածքի, ո՛չ էլ իր կյանքի համար: Դա մեծ դժգոհության պատճառ է դարձել, և մոտ 20 000 մարդ թաքնվել են լեռներում: «Մի խոսքով՝ ներկայումս Կովկասում գործող ահաբեկչության» համակարգը միայն հարուցում է ժողովրդի

պետ էր:

⁹² Ств АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 40:

⁹³ Ств АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52991, лл. 13-16:

⁹⁴ Ств նույն տեղում, թ. 13:

դժգոհությունը, խորհրդային իշխանության նկատմամբ անվստահություն և լեռնականներին վերածում է անհաշտ թշնամիների. դա ընդհանուր կարծիք է, որը ես ամենայն անկեղծությամբ հայտնում եմ Ձեզ», գրում է նա⁹⁵: «Լեռնականների սպասումները» մասում Բեքիր Սամին նշում է, որ «բոլոր լեռնականներն առանց բացառության, չհաշված միայն նրանց, ով շահում է ահաբեկչությունից, և որոնց թիվը շատ չնչին է, միաձայն պահանջում են ստեղծել Կովկասյան Խորհրդային Հանրապետություն, որը պետք է ճանաչվի Մոսկվայի կառավարության կողմից: ...Լեռնականները ցանկանում են ձեռք բերել քաղաքական անկախություն՝ մնալով Մեծ Խորհրդային Դաշնային Հանրապետության անդամ: ...Որպես իմ երկրի մեծ ընկեր և բնական դաշնակից Մեծ Խորհրդային Ռուսաստանի Հանրապետության անկեղծ բարեկամ՝ ես ինձ թույլ կտամ արտահայտել ստորև բերվող մտքերը:

Լեռնականներն ազատություն են տենչում, նրանք դրա մասին բացեիքաց խոսում են իրենց պաշտոնական հավաքների ժամանակ և հույս ունեն, որ խորհրդային կառավարությունը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, թույլ կտա ազատորեն տնօրինել իրենց ճակատագիրը: Հաշվի առնելով բնակչության հոգեբանությունը, անկախության և ազատության նկատմամբ տաճած սերը, բնավորության հիմնական գիծ հանդիսացող հավատարմությունն ու երախտագիտությունը՝ կարող ենք վստահաբար ասել, որ եթե Մոսկվան տա նրանց այն, ինչի հույսեր նրանք ունեն, ապա նրանք կդառնան և կմնան Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության իրական բարեկամներ: Խորհրդային կառավարությանն այլևս պետք չի լինի անհանգստանալ, թե Կովկասի կողմից նրան որևէ վտանգ է սպառնում, քանի որ նրա թշնամիների խառնակությունները պարարտ հող չեն գտնի և դադապարտված կլինեն կատարյալ անհաջողության: ...Հակառակ դեպքում, եթե խորհրդային կառավարությունը շարունակի մերժել նրանց պահանջները և Հյուսիսային Կովկասը պահել ռուսական

⁹⁵ Ств նույն տեղում, թթ. 13-14:

նահանգի կարգավիճակում, ինչպես դա ցարիզմի օրոք էր, ես կարծում եմ, որ Անտանտի կողմնակիցները կօգտվեն ընդհանուր դժգոհությունից, մոտ ապագայում երկրում մեծ ընդվզումներ կիրահրեն, և Կարմիր բանակը ստիպված կլինի մարտնչել նոր ռազմաճակատում»⁹⁶:

Բեքիր Սամին իր նամակում նշեց երկու հանգամանք, որոնք հետագայում Թուրքիան օգտագործեց և՛ Հյուսիսային Կովկասի նկատմամբ վարած իր քաղաքականությունում, և՛ բոլշևիկների հետ բանակցություններում: Առաջինը մի նախագուշացում էր՝ «Անտանտականները վերջերս Բեյրութից հրավիրել են Շամիլի՝ որդուն՝ Քյամիլ փաշային, և նրա որդի Սաիդ բեյին»⁹⁷: Երկրորդը՝ «բարեկամական» առաջարկություն. «Իմ տեսակետից՝ Թուրքիա արտագաղթելու թույլտվություն տալը նույնպես օգտակար կլինի լեռնականների համակրանքը շահելու համար»⁹⁸:

Ինչ վերաբերում է լեռնականների շրջանում իր քարոզչությանը, ապա Բեքիր Սամին փորձեց հավաստիացնել, որ նա բացատրում էր, թե Մեծ Բրիտանիան խալիֆի նստավայր Թուրքիային թշնամի պետություն է, մինչդեռ «խալամի միակ բարեկամ պետությունը Խորհրդային Ռուսաստանն է, և միայն նա կարող է Կովկասում ապահովել բարեկեցություն ու բարգավաճում»⁹⁹:

Վ. Չիչերինին հասցեագրված այս նամակն ուղղված էր նաև բոլշևիկյան կուսակցության և կառավարության այլ անդամների, քանի որ Սամին գիտեր, որ ըստ գոյություն ունեցող կարգի Չիչերինը պարտավոր էր այն ներկայացնել Քաղբյուրոյի անդամներին, որոնցից

⁹⁶ Տես նույն տեղում, թթ. 14-15:

⁹⁷ Խոսքը Կովկասյան պատերազմի (1817-1864 թթ.) ժամանակ Հյուսիսային Կովկասը մեկ միասնական «Հյուսիսկովկասյան իմամատ» իսլամական կրոնապետության մեջ միավորած և լեռնականների պատերազմը ղեկավարած իմամ Շամիլի մասին է:

⁹⁸ Տես նույն տեղում, թ. 14:

⁹⁹ Տես նույն տեղում, թ. 16:

⁹⁹ Տես նույն տեղում, թ. 15:

մի քանիսն այնքան էլ համաձայն չէին Հայաստանի հարցում Չիչերինի վարած ուղեգծին^{*}: Բեքիր Սամին իր նամակով նպատակ էր հետապնդում ուժեղացնել այդ տարաձայնություններն ու կասկածները Չիչերինի վարած քաղաքական ուղեգծի վերաբերյալ, որն էր՝ Հայաստանի և Վրաստանի միջոցով թուլացնել մահմեդական գործոնը^{**}:

Արևմտյան Հայաստանի երեք շրջանների պահանջի դիմաց Հյուսիսային Կովկասի խնդրի արծարծմամբ Բեքիր Սամին Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը քողարկված ուղերձ հղեց, թե՛ ի տարբերություն Վանից, Մուշից և Բիթլիսից, որտեղ այդ ժամանակ արդեն հայկական բնակչություն չէր մնացել, և ռուսներն ազդեցության կամ ճնշում գործադրելու որևէ իրական մեխանիզմ չունեին, Թուրքիան հնարավորություն ունի Հյուսիսային Կովկասում թե՛ ազդեցություն գործելու, թե՛ լուրջ խնդիրներ հարուցելու: «Անկախության դիմաց

^{*} Բեքիր Սամին նամակի մասին տեղեկություններ են հաղորդվել նաև այն անդամներին, որոնք այդ պահին Մոսկվայում չէին: Օրինակ՝ Ի. Մտալինը այդ ժամանակ գտնվում էր Բաքվում, և Չիչերինը 1920 թ. նոյեմբերի 9-ի հեռագրով նրան մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հյուսիսային Կովկասի անկախացման վերաբերյալ Սամին առաջարկության մասին: Նոյեմբերի 16-ի պատասխան հեռագրում Ի. Մտալինը, նշելով, որ Բեքիր Սամին օսական Կուսկուլյուկների ազնվական տոհմից է, որի կալվածները պետականացվել են, գրում է. «Բեքիր Սամին բոլոր տեղեկություններն ստացվել են բացառապես իրենց հոդերը կորցրած օսականականներից, այդ իսկ պատճառով Բեքիր Սամին տեղեկացված լինելը կորցնում է իր արժեքը, դեռ չեմ սառնում, որ նրա բոլոր տեղեկությունները վերաբերում են Օսթրիայի մի փոքր մասին, որը չի վերածածկում ամբողջ Օսթրիան և Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդների» (տես РГАСПИ, ф. 558 (Сталина), оп. 1, д. 5581, л. 1):

^{**} Այն, որ քեմալականների և, մասնավորապես, Բեքիր Սամին ներկայացված տեսակետը տարածում էր գտել բոլշևիկների շրջանում, վկայում է նաև ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լև Կարախանին Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Յակով Մուրիցի 1927 թ. հոկտեմբերի 10-ին գրված զաղտնի նամակը, որում հեղինակը, արծարծելով այն հարցը, թե ճիշտ էր արդյոք Թուրքիային օգնել 1920-1921 թթ., միանշանակ կերպով դրական պատասխան է տալիս՝ նշելով, որ «մենք այդ օգնությամբ խոչընդոտում էինք իմպերիալիստների ներթափանցմանը մեր Կովկաս: Այդ օգնությունը թելադրված էր ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ մեր համակրանքով, այլև մեր տարածքի ռազմական անվտանգության պահանջներով» (տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 265, л. 27):

անկախություն» բանաձևով Բեքիր Սամիին հաջողվեց որոշակիորեն արժեքազրկել Վ. Չիչերինի առաջարկությունը*:

Վ. Չիչերինի առաջարկությունն արժեքազրկելու համար թուրքական դիվանագիտությունն օգտագործեց նաև մեկ այլ միջոց. այն ներկայացվեց որպես ոչ թե խորհրդային կառավարության համաձայնեցված դիրքորոշում, այլ հայ կոմունիստների, առաջին հերթին Չիչերինի տեղակալ Լ. Կարախանի, բանցյուղտեսչության ժողովի տեղակալ և ՀԱՀ-ի նախագահության անդամ Վ. Ավանեսովի ազդեցության դրսևորում¹⁰⁰: Այդ մարտավարությունը կիրառվեց նաև 1920 թ. հոկտեմբերի 25-ին Անկարայում Խոհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջին քարտուղար ՌԻ-վալ-Անգորսկու և Անկարայի կառավարության արտաքին գործերի նախարարի տեղակալի հանդիպման ժամանակ, երբ վերջինս Չիչերինի «անսպասելի առաջարկությունը» վերագրեց «Կարախանի և Ավանեսովի անձնական ազդեցությանը, քանի որ նրանք, լինելով լավ կոմունիստներ, դրա հետ մեկտեղ չեն կարողանում հրաժարվել հայերի նկատմամբ ունեցած վտանգավոր համակրանքից»¹⁰¹:

ՌԻ-շագրավ է, որ թուրք պատմաբանները, մասնավորապես՝ «ձախ քեմալականության» ներկայացուցիչները, որպիսին է Դոդան Ավջրօղլուն, հենվելով 1921 թ. Մոսկվայի բանակցությունների մասնակից Ռզա Նուրի վկայության վրա, համարում են, որ Բեքիր

Սամիին համագործակցել է բոլշևիկների հետ¹⁰²: Նուրը գրել է, թե «երբ Չիչերինը հայերի համար պահանջեց Վանը, Բեքիր Սամին և Յուսուֆ Քեմալը համաձայնվեցին: Սակայն ասեցին՝ «Նախ Ազգային մեծ ժողովին հարցնենք»: Բեքիր Սամին էլ ասեց. «Եթե օսերին անկախություն տաք, ես էլ, համոզվելով մեջլիսին, Վանը հայերին կհանձնեմ»: Այդ մասին ես հարցրեցի Չիչերինին, որն էլ հաստատեց դա: ...Բեքիր Սամին, Ռուսաստան գնալով, հրաժարվեց իր անունից և դարձավ «արքայազն Կոնդուխ»: Ռուսաստանում հարցնում էի Բեքիր Սամիի մասին, չէին ճանաչում: Ընտանիքի ազգանունը Կոնդուխ էր, և արքայազն էր... Երբ ես տեղեկացա, դրանից նեղվեցի: Թուրքական կրթությամբ և հացով մեծացած մեկը, դարձյալ թուրքական փողով թուրքական պետության ամենածանր օրերին թուրքի փրկության համար է ուղարկվում: Իսկ նա, թուրքի գործը թողած, իր հայրենակից օսերի անկախության համար է աշխատում: Նպատակը այնտեղ արքայազն լինելն էր»¹⁰³:

Մոսկվայի բանակցությունների մասին պատմող իր հուշերում Ռզա Նուրը, մի այլ տեղ բնութագրելով Բեքիր Սամիի դիվանագիտական գործունեությունը, գրել է. «Բեքիր Սամիի դիվանագիտությունը լի էր վատ նշաններով: Այս մարդը նոր Թուրքիայի առաջին դիվանագետն էր, և նրա ամբողջ գործունեությունն անհաջողությունների շարան էր»¹⁰⁴:

¹⁰² Տե՛ս *Doğan Avcioğlu*, Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e. Cilt I. İstanbul, Tekin Yayinevi, 1998, ss. 233–234: Հասկանալի է, որ նույն պատճառով Թուրքիայի կոմսիսկովկասյան համայնքում Բեքիր Սամին հարզված անձնավորություն չէր, որովհետև մեղադրվում էր այն բանում, որ, մասնակցելով բազմաթիվ միջազգային համաժողովների՝ ջանքեր էր գործադրում ոչ թե համաչեքքեզական ուղղությամբ, այլ գոտ հանուն իր հարենակիցների՝ օսերի, ինչի համար էլ համայնքը նրան բնութագրում էր որպես «և՛ իր հայրենակիցների, և՛ Թուրքիայի հարցում անհավասարակշռված քաղաքականություն վարած անձ» (տե՛ս *İzzet Aydemir*, a.g.e., ss. 81–82):

¹⁰³ Ռզա Նուրի այս վկայությունը բերվում է ըստ *Doğan Avcioğlu*, Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e. Cilt I. İstanbul, Tekin Yayinevi, 1998, ss. 233–234:

¹⁰⁴ Տե՛ս *Dr. Rıza Nur'un Moskova-Sakarya Hatıraları*. İstanbul, Bogaziçi Yayınları, 1991, s. 121:

* Վ. Չիչերինին նամակ գրելու նույն օրը՝ 1920 թ. նոյեմբերի 5-ին, Բեքիր Սամին էնվեր փաշային Բեռլին գրված մեկ այլ նամակով նրան տեղեկացրեց բոլշևիկների հետ բանակցությունների և Հյուսիսային Կովկաս իր կատարած այցի մասին: ՌԻ-շագրավ է, որ նամակում էնվերին խորհուրդ տրվեց գործունեություն ծավալել Անատոլիայի սահմաններից դուրս՝ իսլամական աշխարհում (տե՛ս *Masayuki Yamauchi*, a.g.e., ss. 118–119):

¹⁰⁰ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», Cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, ss. 160:

¹⁰¹ Տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52991, л. 2:

Եթե հաշվի առնենք, որ հետագայում Բեքիր Սամին հեռացվեց իր պաշտոնից և մեղադրվեց բոլոր անհաջողություններում, ապա միանգամայն հասկանալի են դառնում և՛ Ռեա Նուրի վրդովմունքը, և՛ Բեքիր Սամին չկատարված հանցանքների վերագրումը: Այն, որ Բեքիր Սամին իր բանակցությունների մասին մանրամասն հաշվետվություն է ներկայացրել Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, ակնհայտ է դառնում Չիչերինի առաջարկության քննարկմանը նվիրված՝ ԹԱՄԺ-ի 1920 թ. հոկտեմբերի 16-ի և 17-ի գաղտնի նիստերի արձանագրություններից¹⁰⁵:

Ի տարբերություն Հայաստանին Մուշի, Բիթլիսի և Վանի վիլայեթներից տարածք հատկացնելու հարցում բոլշևիկյան ղեկավարության մեջ եղած տարաձայնություններից*, Անկարայի կառավարության բոլոր անդամներն այդ հարցում միակարծիք էին, քանի որ նման առաջարկությունը հակասում էր ամբողջ ազգայնական շարժման էությանը, որովհետև այն առաջին հերթին նպատակաուղղված էր Հայաստանին և Հունաստանին տարածք զիջելու դեմ: Ըստ այդմ՝ Վ. Չիչերինի պահանջը քեմալական կառավարությունն ընկալեց որպես վտանգավոր միտում: Ինչպես իր հուշերում նշում է Մուսկավայում ԹԱՄԺ-ի կառավարության ղեսպան Ալի Ֆուսաղ Ջեբետայը, «Եթե բոլշևիկները, օգտագործելով մեր շատ նեղ վիճակը, Վանի և Բիթլիսի վերաբերյալ իրենց առաջարկությունը բանակցությունների թեմա դարձնեին, ապա, անկասկած, որոշ ժամանակ անց մենք կանգնելու էինք Տրապիզոնի մեր վիլայեթը Վրաստանին միացնելու, նույնիսկ պատերազմի ժամանակ զավթաց մեր արևելյան վիլայեթները Ռուսաստանին հանձնելու առաջարկությունների առջև»¹⁰⁶:

Թուրքիայի համար Ազգային ուխտի սահմաններում նշված տարածքներին տիրանալու խնդիրն ուներ կենսական նշանակություն,

¹⁰⁵ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», Cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, ss. 157 – 187:

* Բոլշևիկյան կառավարության անդամներից շատերն այն կարծիքին էին, թե տվյալ հարցը լուծվել է դեռ 1918 թվականի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով:

¹⁰⁶ Տե՛ս Ali Fuat Cebesoy, a.g.e., s. 74:

ինչի վկայությունն են նաև փակ նիստերում պատգամավորների բուռն ելույթները, ընդամին ոմանք անգամ կոչ արեցին հրաժարվելու բոլշևիկների հետ համագործակցությունից: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1920 թ. հոկտեմբերի 16-ի և 17-ի գաղտնի նիստերում պատգամավորները խոսեցին նաև Հյուսիսային Կովկասի խնդրի մասին: Նախ, 1920 թ. հոկտեմբերի 16-ի նիստում Մուսկավա մեկնած պատվիրակության անդամ Յուսուֆ Քեմալը հայտարարեց, որ, չնայած Կովկասում տեղի ունեցած վերջին իրադարձություններին, մասնավորապես՝ Թուրքիայի օգնությամբ Ադրբեջանի խորհրդայնացմանը, «Ադրբեջանը դարձյալ պատրաստ է զոհաբերվելու հանուն թուրքերի: ...Թուրքիա ասելիս ես նկատի չունեմ միայն թուրքերին: Որովհետև նույնն են ասում նաև հյուսիսկովկասցիները»¹⁰⁷:

1920 թ. հոկտեմբերի 17-ի նիստում Բուլուից ընտրված պատգամավոր, ազգությամբ չերքեզ գեներալ Յուսուֆ Իզեթ փաշան իր ելույթում նշեց. «Հետաքրքիր է, թե միայն Օսմանյան պետությունում՝ Թուրքիայում, են զանգվածաբար մարդիկ ոչնչացվել: Չերքեզների, Դաղստանի բնակչության, ամբողջ մահմեդականների մարդասպանները ռուսներն են»¹⁰⁸:

Այնուհետև նա հարց տվեց, թե ինչու խորհրդարանը չի քննարկում Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի պրոբլեմը: Ի պատասխան այս հարցադրմանը՝ Յուսուֆ Քեմալը, նկատի ունենալով Բեքիր Սամին գործոնը, ասաց. «Յուսուֆ Իզեթ փաշան նշեց, որ Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի մասին չի խոսվում: Հյուսիսային Կովկասի մասին խոսելու հնարավորություն չեղավ: Որովհետև մեր ղեկավարը հյուսիսկովկասյան ծագում ունեցող և Հյուսիսային Կովկասի մասին մտածող մի արժեքավոր անձնավորություն է: Սակայն ես

¹⁰⁷ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», Cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 172:

¹⁰⁸ A.g.e., s. 184:

կարծում եմ, որ այսօր այստեղ քննարկվող խնդրի վերաբերյալ վերջին առաջարկությունը պետք է տա կառավարությունը»¹⁰⁹:

Խորհրդարանի նիստերից հետո Սուստաֆա Քեմալը Թուրքիայում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջին քարտուղար ՌԻպմալ-Անգոբսկու հետ հանդիպման ժամանակ նշեց, որ մեջլիսը բացասաբար է արձագանքել Չիչերինի առաջարկությանը, որ պատգամավորներից շատերը պահանջել են հրաժարվել բոլշևիկների օգնությունից, և եթե ինքը հարցը քվեարկության դնէր, դա կնշանակեր հարաբերությունների անհապաղ խզում: Այդ իսկ պատճառով նա խուսափել է նման քայլից և խոստացել անձամբ կարգավորել խնդիրը¹¹⁰: Այնուհետև նա ասել է, որ Թուրքիան հրաժարվում է ռուս-թուրքական պայմանագիրն այդ պայմանով ստորագրելուց¹¹¹:

Այսպիսով՝ Անկարայի կառավարությունը, օգտագործելով Հայաստանի հարցում բոլշևիկյան ղեկավարության մեջ եղած տարակարծությունը, Հյուսիսային Կովկասի խնդիրը և ԹԱՄԺ-ի միասնական կոշտ դիրքորոշումը, կարողացավ ի չիք անել և թուրք-ռուսական բանակցությունների օրակարգից հանել Վանը, Բիթլիսն ու Մուշը Հայաստանին վերադարձնելու Չիչերինի պահանջը:

¹⁰⁹ A.g.e, s. 187:

¹¹⁰ Տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 53001, л. 3:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում:

Կովկասից մահմեդականների զանգվածային գաղթ

կազմակերպելու խնդիրը

1920–1921 թթ. ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ

Հանրապետական Թուրքիան շարունակեց Օսմանյան կայսրության՝ Բալկաններից և Կովկասից մահմեդական, առաջին հերթին՝ թուրքական, բնակչությունն Անատոլիայում վերաբնակեցնելու քաղաքականությունը: 1919–1922 թթ. հույն-թուրքական պատերազմից անմիջապես հետո Աթաթյուրքի կառավարությունը Թուրքիա գաղթելու կոչով դիմեց Բալկաններում ապրող բոլոր մահմեդականներին¹¹², իսկ 1923 թ. Լոզանի համաժողովում Հունաստանի հետ բնակչության փոխանակման պայմանագիր ստորագրեց¹¹³: Հետագայում Թուրքիայում վերաբնակեցվեցին գաղթականների մեծ զանգվածներ Բալկաններից, Միջին Ասիայի թյուրքալեզու հանրապետություններից, Աֆղանստանից՝

Քեմալական կառավարությունը մշակեց Կովկասից ևս արտագաղթ կազմակերպելու, Անատոլիայում հույն ու հայ բնակչության ոչնչացման պատճառով սմայացած շրջանները մահմեդականներով բնակեցնելու քաղաքական ուղեգիծ: Անկարան գաղթող մահմեդական տարրը դիտում էր որպես քրդական բնակչությանը հակակշիռ: Այսպես. 1922 թ. փետրվարի 4-ին Քյազիմ Կարաբեքիրը պաշտոնապես դիմեց կառավարությանը՝ առաջարկելով «որպես հակակշիռ հայությանը և քրդությանը Ռուսաստանից թուրք մուհաջիրների բերել և բնակեցնել

¹¹² Տե՛ս Kemal Karpat, a.g.e., s. 92:

¹¹³ Տե՛ս «Crossing the Aegean, an appraisal of the 1923 compulsory population exchange between Greece and Turkey». Edited by Renee Hirschon. New York – Oxford: Berghahn Books, 2006, pp. 13–14:

* Այսպես. 1950 թ. օգոստոսի 12-31-ը Բուլղարիան երկրից արտաքսեց 250 000 թուրքի, որոնցից 156 000-ն ապաստան գտան Թուրքիայում (տե՛ս Ismail Soysal. Türk Dış Politikası İncelemeleri İçin Kılavuz (1919-1993). İstanbul, EREN, 1993, s. 66):

Վանա լճի շրջանում»¹¹⁴: Այդ առաջարկությունը հավանության արժանացավ, համապատասխան հրահանգ տրվեց արտաքին գործերի նախարարությանը, իսկ առողջապահության նախարարությանը հանձնարարվեց ապահովել նոր բնակավայրերի ստեղծումը¹¹⁵:

Հյուսիսային Կովկասից Թուրքիա տեղափոխվել ցանկացող մահմեդականներին արտոնություն տալու և զանգվածային արտագաղթ կազմակերպելու առաջարկությունը բուլշևիկների հետ հարաբերություններում բարձրաձայնեց Բեքիր Սամին 1920 թ. նոյեմբերի 5-ին Չիչերինին ուղղված իր գաղտնի նամակում¹¹⁶: Արտագաղթի հարցում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը ճշտելու համար նա այնուհետև դիմեց պաշտոնական խնդրանքով՝ իր բարեկամ 200 օսական ընտանիքներին թույլատրել իր հետ Թուրքիա մեկնել: Բեքիր Սամիի առաջարկության մասին Չիչերինը 1920 թ. նոյեմբերի 9-ի հեռագրով տեղեկացրեց Բաքվում գտնվող Ի. Ստալինին՝ հավելելով, որ «արտաքին գործերի ժողովուհարը չի առարկում, քանի որ դրանում որևէ վտանգ չի տեսնում: Խնդրում ենք հայտնել ձեր կարծիքը»¹¹⁷: 1920 թ. նոյեմբերի 16-ի պատասխան հեռագրում Ի. Ստալինը նույնպես դրականորեն արձագանքեց Բ. Սամիի խնդրանքին¹¹⁸:

Քեմալական կառավարությունը, ոգեշնչված լինելով իր առաջին փորձական նախաձեռնության դրական արդյունքներով, 1921 թ. փետրվար – մարտ ամիսներին Մոսկվայում ռուս-թուրքական պայմանագրի մշակման վերաբերյալ բանակցությունների ժամանակ Հյուսիսային Կովկասից Թուրքիա մահմեդականների զանգվածային արտագաղթ կազմակերպելու կետն ընդգրկեց պայմանագրի նախագծի

¹¹⁴ Տե՛ս *Kazım Karabekir. Günlükler (1906-1948). Cilt 2. İstanbul, Yapı Kredi Yayınları, 2009, s. 781*:

¹¹⁵ A.g.e.

¹¹⁶ Տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52991, л. 16:

¹¹⁷ Տե՛ս РГАСПИ, ф. 558, (Сталина), оп. 1, д. 1992, л. 10:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 5581, թ. 1:

թուրքական տարբերակում և դիմեց պաշտոնական առաջարկությամբ: Ընդ որում, ռուս-թուրքական պայմանագրի տեքստը քննարկելիս արտագաղթին վերաբերող 9-րդ կետի երկրորդ պարբերությունը, որով արտագաղթի իրավունքը տարածվում էր ցանկություն հայտնած բոլոր մահմեդականների վրա, նախապես ոչ թե գրավոր ներկայացվեց ռուսական պատվիրակությանը, այլ միայն բարձրաձայնվեց քաղաքական կոմիտեի առաջին նիստում¹¹⁹: Թուրքական խմբագրությամբ այս հոդվածն ուներ հետևյալ ձևակերպումը. «համաձայն այս հոդվածի՝ մինչև 1918 թ. Ռուսաստանի կազմում եղած և ներկայումս ՌԽԴՍՀ-ի կողմից որպես Թուրքիայի ինքնիշխանության ներքո գտնվող տարածք ճանաչված շրջանների բնակչությունը սույն պայմանագրի հիման վրա իրավունք ունի ազատորեն լքելու Թուրքիան և իր հետ տանելու իրերն ու ունեցվածքը կամ ստանալու դրան համարժեք փոխհատուցում: Նույն իրավունքը տարածվում է նաև Ռուսաստանում բնակվող մահմեդականների վրա: Նրանց իրավունք կտրվի առանց արգելքի տեղափոխվել Թուրքիա՝ իրենց հետ վերցնելով ունեցվածքը կամ դրա լիարժեք փոխհատուցումը»¹²⁰:

1921 թ. մարտի 8-ին Վ. Չիչերինը թուրքական պատվիրակության առաջարկությունը գաղտնի նամակով ներկայացրեց Հատուկ հանձնաժողովի կարծիքի և հաջորդ իսկ օրը պատասխան ստացավ: Հաշվի առնելով այդ փաստաթղթի կարևորությունը՝ ստորև ներկայացնում ենք նամակի հիմնական բովանդակությունը՝ բնագրաբեռույթ հայերեն թարգմանությամբ: «Տրանսպորտի քայքայված վիճակի և ուղիղ կապ չլինելու պատճառով Ռուսաստանից Թուրքիա մահմեդականների զանգվածային արտագաղթը ներկայումս գործնականում անհնար է: Մեր տրանսպորտը չի կարողանում լուծել նույնիսկ ռազմագերիների տեղափոխման հարցը՝ էլ չասած

¹¹⁹ Տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52998, л. 43:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում:

օպտանաների* մասին: Վառելիքի ճգնաժամն ու բանակի զորացրումը մահմեդականների զանգվածային արտագաղթը դարձնում են ակադեմիական ցանկություն, իսկ եթե մենք համաձայնվենք արտագաղթի հետ, և այն զգալի չափերի հասնի, ապա երկաթգծերի սանիտարական ու պարենային վիճակը կվերածվի աղետի: ՌԽԴՍՀ ներքին անվտանգության տեսակետից Թուրքիայի հետ պայմանագրում մահմեդականների զանգվածային արտագաղթի՝ որպես իրենց անքակտելի իրավունքի կետի ներառումը կարի մեր հարաբերությունները մահմեդականների հետ, որոնք բոլոր դեպքերում ֆիզիկապես ի վիճակի չեն լինելու մեկնել: Ժողովրդական տնտեսության տեսակետից դա կարող է բերել ՌԽԴՍՀ-ի հետ դաշնային կապ ունեցող մահմեդական հանրապետություններում տնտեսության քայքայմանը, քանի որ, ինչպես դա տեղի է ունենում օպտանաների դեպքում, մահմեդականները կսկսեն վաճառել իրենց ունեցվածքը և տեղահանվել՝ հաշվի չառնելով անմիջապես հեռանալու անհնարինությունը: Եվ, վերջապես, միջազգային հարաբերությունների տեսակետից թուրքական պայմանագրի՝ մահմեդականների արտագաղթի վերաբերյալ կետը թուրքական կառավարությանը իրավունք կտա միջամտելու մեր ներքին գործերին, հանդես գալու մահմեդականություն դավանող ռուսաստանյան քաղաքացիների շահերի պաշտպանի և ներկայացուցչի կարգավիճակով: Դա կհանգեցնի բազմաթիվ բախումների, և թուրքերին հնարավորության կտա իրենց համար ամեն հարմար պահի մահմեդականներին հալածելու պատրվակով պատռել պայմանագիրը, մի խոսքով՝ մեր արևելյան քաղաքականության ամբողջ ապագան պայմանավորված կլինի թուրքերի և, հնարավոր է, Անտանտի բարի կամքով, ընդ որում, հարաբերությունների խզման հիմնավորման բոլոր շահեկան քարտերը կտա թուրքերի ձեռքը: Եթե մեր քաղաքական իրավիճակն այնպիսին է, որ պայմանագիրը կնքելու համար ՌԽԴՍՀ-ն չունի այլ տարբերակ, քան

ընդունել զանգվածային արտագաղթի կետը, թեև դրանով այն կվերածվի թղթի կտորի, ապա ես կխնդրեի վերապահումներ մտցնել, որ այդ կետը կարող է ուժ ստանալ միայն տրանսպորտի և ազատ ուղևորության վերականգնումից. հետո, կամ սահմանել ժամկետ՝ պայմանագրի ստորագրումից երկու երեք տարի հետո»¹²¹:

Հատուկ հանձնաժողովի նախագահ Ֆ. Դերժինսկու կարծիքն ստանալուց հետո ռուսական պատվիրակությունը ռուս-թուրքական քաղաքական կոմիտեի 1921 թ. մարտի 12-ի նիստում ներկայացրեց Ռուսաստանից մահմեդականների արտագաղթի իր տարբերակը, որում ամբողջովին հանված էր թուրքական պատվիրակության առաջարկած պարբերությունը: Ռուսական պատվիրակությունը, նախ, մերժեց մահմեդականների զանգվածային արտագաղթի պահանջը և իր պատասխան տարբերակի 4-րդ կետում միայն նշեց, որ «մինչև 1918 թ. Ռուսաստանի մաս կազմող և սույն պայմանագրով Թուրքիային զիջվող տարածքների բնակչությունն իրավունք ունի անարգել կերպով հեռանալու Թուրքիայից և իր հետ տանելու ունեցվածքը կամ դրա լիարժեք փոխհատուցումը»¹²²:

Մահմեդականների՝ Ռուսաստանից Թուրքիա զանգվածային արտագաղթի խնդիրը քննարկվեց քաղաքական կոմիտեի 1921 թ. մարտի 14-ի նիստում, որում նախագահում էր Յուսուֆ Քեմալը: Ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ թեև սկզբունքորեն չի առարկում, սակայն նշում է, որ եթե մահմեդական բնակչությանը անմիջապես Թուրքիա գաղթելու թույլտվություն տրվի, ապա բոլոր ունևոր տարբերը, որոնք իրենց համարում են հեղափոխությունից տուժած, կպահանջեն Ռուսաստանից անհապաղ հեռանալու իրավունք, ինչն իր հերթին Ռուսաստանում տրանսպորտի ներկայիս վիճակի հաշվառմամբ բազմաթիվ դժվարությունների պատճառ կդառնա¹²³:

¹²¹ Ств АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52992, лл. 25, 25 об.:

¹²² Ств նույն տեղում, գ. 52997, թ. 38:

¹²³ Ств ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 118:

* Օպտանա՝ քաղաքացիություն ընտրող:

Մյուս կողմից՝ պետք է հարցում կատարել շահագրգիռ ինքնավար հանրապետություններին: Համապատասխան եզրակացություններ ստանալու դեպքում հնարավոր է Ռուսաստանի և Թուրքիայի միջև այդ հարցի վերաբերյալ կնքել հատուկ համաձայնագիր¹²⁴:

Ի պատասխան դրա՝ թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ նա բնավ նպատակ չունի Ռուսաստանի կառավարության կամ ինքնավար կառավարությունների համար դժվարություններ ստեղծել և միայն, հաշվի առնելով Ռուսաստանի ու Թուրքիայի մահմեդականների բարօրության հարցը, սահմանափակվում է այն հայտարարությամբ, թե վերը նշված դժվարությունների հաղթահարումից հետո Ռուսաստանը պարտավորվում է քննարկել այս պրոբլեմը և թույլ տալ մահմեդականների վերադարձը հայրենիք¹²⁵: Այսպիսով՝ նա հրաժարվեց իր պահանջից՝ բացառությամբ այն հատվածի, որը վերաբերում էր Բաթումի շրջանին¹²⁶:

Այդ քննարկման արդյունքը եղավ այն, որ 1921 թ. մարտի 16-ին ստորագրված Մոսկվայի պայմանագրում որպես արտագաղթին վերաբերող կետ ընդունվեց ռուսական պատվիրակության հակաառաջարկությունը հետևյալ խմբագրությամբ. «հոդված XII. Մինչև 1918 թվականը Ռուսաստանի մաս կազմած և սույն պայմանագրի հիման վրա ներկայումս Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության կառավարության կողմից Թուրքիայի ինքնիշխանության ներքո ճանաչվող տարածքների յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի անարգել կերպով լքելու Թուրքիան և իր հետ տանելու իր իրերն ու ունեցվածքը կամ դրա լիարժեք փոխհատուցումը: Նույն իրավունքը սույն պայմանագրով

¹²⁴ Տես նույն տեղում:

¹²⁵ Տես նույն տեղում:

¹²⁶ Տես նույն տեղում:

տարածվում է նաև Թուրքիայի կողմից որպես Վրաստանի մաս ճանաչված Բաթումի շրջանի բնակիչների վրա»¹²⁷:

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում արտագաղթի խնդրին նման լուծում տալը ամեննին չէր նշանակում, թե Թուրքիան կհրաժարվի նույն թվականի հոկտեմբերին տեղի ունենալիք Կարսի խորհրդածոդովում կամ հետագայում Ռուսաստանից մահմեդականների զանգվածային արտագաղթի հարցը բարձրացնելուց: Ռուսաստանից Թուրքիա մահմեդականների զանգվածային արտագաղթ կազմակերպելու առաջարկությունը մշտապես արժարժվել է թուրքական դիվանագիտության կողմից, իսկ Անատոլիայում վերաբնակեցված գաղթական բնակչությունն իր լուրսն է ունեցել թե՛ Թուրքիայի ներքին կայունության ամրապնդման, թե՛ արտաքին քաղաքականությունում որպես Ռուսաստանի վրա ճնշման լծակ օգտագործված լինելու հարցում:

Մոսկվայից վերադարձած թուրքական պատվիրակությունը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1921 թ. սեպտեմբերի 13-ի զաղտնի նիստում ներկայացրեց Մոսկվայի խորհրդածոդովի մասին մանրամասն հաշվետվություն: Խորհրդարանի նիստում ներկայացվեցին Կարսի խորհրդածոդովի նպատակն ու նախապատրաստական աշխատանքները, ինչից հետո տեղի ունեցավ խորհրդածոդովում հավանական զարգացումների քննարկում¹²⁸: Պատվիրակության անդամներն ունեին այն մտահոգությունը, որ չնայած 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի վերջին կետի և Հայաստանի վրա ռուսների ամբողջ ճնշմանը՝ խորհրդածոդովը կարող է ընթանալ Թուրքիայի համար ոչ ցանկալի հունով, ուստի և առաջարկեցին գործի դնել թուրքական դիվանագիտության զինանոցում եղած բոլոր միջոցները, որպեսզի այնտեղ ի հակակշիռ բոլոր

¹²⁷ Տես АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52997, л. 46:

¹²⁸ Տես «TBMM Gizli Celse Zabıtları». Cilt 2, 17 Mart 1337 (1921) – 25 Şubat 1337 (1922). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, ss. 226 – 229:

հնարավոր փաստարկների արծարծվեն այնպիսի պրոբլեմներ, որոնք դժվար կացության մեջ կդնեն խորհրդային հանրապետությունների պատվիրակությանը*։ Դրանցից էր Կովկասից մահմեդականների զանգվածային արտագաղթի հարցը։

Հատկանշական է, որ այն նույն օրը, երբ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում տեղի ունեցավ ապագա խորհրդաժողովի նախապատրաստման և ներկայացվելիք հարցերի շրջանի քննարկումը, Վ. Չիչերինը Տրապիզոնում ՌԽՄՍՀ ներկայացուցիչ Նացարենուսին զրված գաղտնի նամակում կարծիք հայտնեց, թե՛ «Կարսի խորհրդաժողովի անմիջական խնդիրները կարծես թե դժվար չեն։ Մոսկվայի պայմանագրի հիման վրա պետք է պայմանագրեր կնքել կովկասյան հանրապետությունների հետ՝ թույլ չտալով մեր ընկեր թուրքերին զիջել ավելին, քան մենք զիջեցինք այստեղ, մյուս կողմից՝ թուրքերի ծանր դրությունը չօգտագործել նրանց վնաս հասցնելու համար։ Ռիդեգիծը պետք է հստակ լինի։ Այն, ինչ որոշվել է Մոսկվայի խորհրդաժողովում, մնում է ուժի մեջ, մենք այլևս թուրքերին այստեղ զիջածից ավելի ոչ մի բան չենք տալու՝ ո՛չ տարածքային առումով, ո՛չ էլ ինչ-որ իրավունքների հարցում։ Բայց մենք թուրքերից Մոսկվայի պայմանագրի շրջանակներից դուրս ավելին չենք խլում»¹²⁹։

Այսպիսով՝ ակնհայտ է երկու կողմերի դիրքորոշման մեջ եղած տարբերությունը. եթե ռուսական կողմը մտադիր էր անջեղորեն առաջնորդվելու Մոսկվայի պայմանագրով, ապա թուրքերը ձգտում էին հնարավորության դեպքում Մոսկվայի պայմանագրում նախանշվածից ավելին ձեռք բերելու, ինչպես նաև մեկ անգամ ևս օրակարգ մտցնելու նույնիսկ արդեն քննարկված և համաձայնեցված հարցերը՝ ի

* Օրինակ՝ Ռզա Նուրը առաջարկեց փոխհատուցում պահանջել Բաքվում գնդակահարված թուրք ռազմագերիների համար՝ նշելով, որ նրանց գնդակահարությունը կազմակերպել է թուրք կոմունիստ Մուստաֆա Մուրիին (տես «ТВММ Gizli Celse Zabıtları», Cilt 2, 17 Mart 1337 (1921) – 25 Şubat 1337 (1922). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 231):

¹²⁹ Տես АВП РФ, ф. 0148, Реперентура НКВД по Закавказью, оп. 5, папка 10, д. 80, л. 6.

հակադրություն հայկական պատվիրակության կողմից Անիի ավերակների տարածքը վերադարձնելու և Կողբի աղահանքի շահագործման իրավունքը Հայաստանին տալու պահանջներին։ Ի թիվս նման հարցերի թուրքական պատվիրակությունը Կարսի խորհրդաժողովի աշխատանքի առաջին իսկ օրերին պահանջեց բոլոր մահմեդականներին տալ Թուրքիա ազատ տեղափոխվելու իրավունք¹³⁰։ Հարավային Կովկասից Թուրքիա մահմեդականների զանգվածային արտագաղթ կազմակերպելու թուրքական առաջարկությունը ուներ հետևյալ խմբագրությունը. «Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները պարտավորվում են իրենց տարածքում ապրող մահմեդականներից Թուրքիա տեղափոխվել ցանկացողների արտագաղթին որևէ արգելք չհարուցել։ Իր հերթին Թուրքիան նման պարտավորություն է վերցնում իր տարածքում այդ հանրապետությունների ազգությանը պատկանող և նշված հանրապետություններ տեղափոխվել ցանկացող բնակչության արտագաղթի հարցում։ Միանգամայն հասկանալի է, որ նման տարբերի ներգաղթը այն երկիր, որի հայատակ նրանք ցանկանում են դառնալ, կախված է այդ երկրի կառավարությունից»¹³¹։

1921 թ. հոկտեմբերի 5-ին Կովկասի խորհրդային հանրապետությունների պատվիրակության ղեկավար Գանեցկին Չիչերինին հղած իր հեռագրում, նրան տեղեկացնելով, որ թուրքերը ներկայացրել են մահմեդականների Թուրքիա արտագաղթելու մի նախագիծ¹³², գրեց, որ այդ առաջարկությունն ինքը մերժել է, բայց թուրքերը մեկ օրով հետսաձգել են փոխանցվող տարածքների բնակչության տեղափոխմանը վերաբերող պայմանագրի 14-րդ հոդվածի քննարկումը¹³³։ Մահմեդականների արտագաղթի խնդիրը քննարկվեց

¹³⁰ Տես նույն տեղում, թ. 15։

¹³¹ Տես ՀԱԱ, ֆոնդ 113, ցուցակ 3, գործ 23, թ. 49։

¹³² Տես նույն տեղում, թ. 48։

¹³³ Տես նույն տեղում։

1921 թ. հոկտեմբերի 6-ին՝ խորհրդածողովի նիստից առաջ, Քյազիմ Կարաբեքիրի խնդրանքով Գանեցկու հետ տեղի ունեցած առանձնագրույցի ժամանակ, և վերջնական լուծում ստացավ այդ օրը կայացած նիստում: Ինչպես նշել է Գանեցկին. «Մենք նրանց քննադատեցինք ու կտրականապես մերժեցինք, և թուրքերը վերջնականապես հանեցին իրենց առաջարկությունը»¹³⁴: Նույն օրը Մյասնիկյանին հղված հեռագրում Կարսի խորհրդածողովում հայկական պատվիրակության ղեկավար Մուսլյանը նշել է. «Վրաստանի հարցում թուրքերը նույնպես զիջում են, բայց դրա դիմաց լկտիորեն պահանջում են Անդրկովկասից մահմեդականների ազատ արտագաղթ թուրքիա: Դա նրանց մերժվեց»¹³⁵:

Գաղթականների հարցում խորհրդային պատվիրակության «հաջողությունը» իրականում թուրքական պատվիրակության պարտությունն չէր, քանի որ թուրքական պատվիրակությունը Կարսի խորհրդածողովում մահմեդականների արտագաղթի խնդիրը բարձրացրեց ոչ թե այն հույսով, որ բոլշևիկները կիրառարվեն Մոսկվայի պայմանագրում նշված ձևակերպումից, այլ ավելի շատ օգտագործեց որպես խաղաքարտ: Դա է փաստում նաև Քյազիմ Կարաբեքիրը, որն իր օրագրում արձանագրել է. «1921 թ. հոկտեմբերի 7, ուրբաթ: Խորհրդածողովում ընդհանուր ներում հայտարարելու և մուհաջիրների խնդիրներն ընդունելի տարբերակով լուծեցինք: Սակայն Գյումրու երկաթգծի իրերը վերադարձնելու խնդիրը երկար բանակցությունների պատճառ դարձավ»¹³⁶:

Այն, որ թուրքիան շահագրգռված էր ոչ թե փախստականների տարբեր զանգվածներ ընդունելու, այլ իր վերահսկողության ներքո մահմեդականների կանոնավոր զանգվածային արտագաղթ կազմակերպելու մեջ, սպացուցում է Ահմեթ Մուհթարի կողմից 1921 թ.

մարտի 9-ին Վ. Չիչերինին ուղղված հեռագիրը, որտեղ նա զգուշացրել է, որ «եթե Կովկասում տեղի ունեցող ռազմական գործողությունների ինտենսիվությամբ մահմեդական բնակչությունը տուժի և փախստականների սովոր զանգված անցնի թուրքիա, ապա դա հույժ բացասաբար կազդի բոլշևիկների նկատմամբ թուրքական հասարակական կարծիքի վրա և կարող է թուրքական կառավարությանը դնել ծանր դրության մեջ»¹³⁷:

Կովկասից մահմեդականների զանգվածային արտագաղթ կազմակերպելու պրոբլեմը Կարսի պայմանագրի կնքմամբ ամենևին էլ դուրս չեկավ թուրքիայի քաղաքական օրակարգից. թուրքական դիվանագիտությունը, պատեհ առիթն օգտագործելով, տարբեր տարիներին ու մակարդակներով բարձրացրեց այս հարցը: Այսպես. Օդեսայում 1926 թ. նոյեմբերի 18-ին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովում Վ. Չիչերինի հետ հանդիպման ժամանակ թուրքիայի արտաքին գործերի նախարար Թեֆիկ Ռուշթու Արասը արձարծեց Հայաստանի որոշ շրջաններում մահմեդական բնակչության առեղծվածային «հետապնդման» հարցը և առաջարկեց լուծման երկու տարբերակ. կա՛մ խորհրդային իշխանությունները հայտարարելու են, թե «իրենց ցանկալի չէ թուրքերի ներկայությունը Հայաստանում, և մենք կազմակերպված ձևով կիրականացնենք նրանց տեղափոխումը, կա՛մ հոգ է տանելու այն մասին, որ թուրքերը չենթարկվեն հալածանքների»¹³⁸: Հարկ է նշել, որ 1918–1925 թվականներին Խորհրդային Հայաստանի մահմեդական բնակչության (աղբրեջանցիներ) մի մասն արդեն տեղափոխվել էր թուրքիա¹³⁹, իսկ Թեֆիկ Ռուշթուի կողմից կատարված այդ

¹³⁷ Տե՛ս АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 4, папка 5, д. 8, л. 18:

¹³⁸ Տե՛ս АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 8, папка 13, д. 39, л. 22:

¹³⁹ Տե՛ս Lowell Bezanis, *Soviet Muslim emigres in the Republic of Turkey*. «Central Asian Survey», vol. 13, N 1, 1994, p. 65: թուրքիայի էթնիկական խմբերի մասին գրքի հեղինակ Փիտեր Էնդրյուսը նշում է, որ Կարսում ապրող ազերիների մեծ մասը 1920–1925 թվականներին գաղթել է Խորհրդային Հայաստանից (տե՛ս Peter Alford Andrews, *Türkiye'de Etnik Gruplar*. İstanbul, Tümm zamanlar Yayınları, 1992, ss. 96–103): Դրա հետ մեկտեղ 1921–1922 թ. նկատվել է գաղթ նաև հակառակ ուղղությամբ. 1918–1920 թթ. Հայաստանից թուրքիա և Իրան գաղթած աղբրեջանցիները վերադարձան

¹³⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 50:

¹³⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 57:

¹³⁶ Տե՛ս Kazım Karabekir. *Günlükler (1906–1948)*, Cilt 1. İstanbul, YKY, 2009, s. 755:

հարցադրումը հաջորդել էր 1925 թ. շեյխ Սաիդի քրդական ապստամբության ճնշմանը, ընդամին թուրքական իշխանություններն արևելյան շրջաններում քրդական ազդեցությունը թուլացնելու համար շահագրգռված էին այնտեղ, հատկապես՝ ԽՍՀՄ սահմանի երկայնքով, արյունակից թուրքական տարր բնակեցնելու հարցում:

Թեև Թուրքիայի հետ կնքված պայմանագրերում չկար Կովկասի մահմեդականներին զանգվածային արտագաղթի իրավունք արտոնելու վերաբերյալ հատուկ կետ, դա ամենին էլ չխոչընդոտեց նման արտագաղթի կազմակերպմանը: Սակայն դա արվեց ոչ այն ծավալներով, որոնք ծրագրում էր քեմալական կառավարությունը: 1919 – 1927 թթ. Հյուսիսային Կովկասից լեռնականները մեծ և փոքր խմբերով գաղթեցին Թուրքիա, իսկ ամենասովոր զանգվածը տեղափոխվեց 1919–1925 թթ.: 1919 թ. սկզբին լեռնականների արտագաղթը պայմանավորված էր Դենիկինի բանակի առաջխաղացմամբ, իսկ նույն թվականի հուլիսին՝ Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության անկումից հետո, տեղի ունեցավ նրանց երկրորդ արտագաղթը: Գաղթականության երրորդ՝ հիմնական, զանգվածի արտագաղթը կապված էր 1920 թ. Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգերի հաստատման հետ: Ամեն դեպքում թուրքական կառավարությունը խրախուսում էր ներգաղթը և մշտապես պատրաստակամություն հայտնում ընդունելու տարագիրների նորանոր խմբեր: Այսպես, 1926 թ. նոյեմբերին թուրքական թերթերը տեղեկություններ հրապարակեցին, որ Կովկասից Անատոլիա են ժամանելու 80000 վտարանդի, և որ կառավարությունը, որը մեծ նշանակություն է տալիս ներգաղթի քաղաքականությանը, այդ գաղթականների զանգվածն ընդունելու համար անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել¹⁴⁰: Թուրքական «Աքշամ» թերթը 1926 թ. դեկտեմբերի 8-ին

Ջանգիբասարի, Սիսիանի և Կապանի շրջաններ (տես «Беженцы 1918–1920, 1948–1952, 1988–1989». Баку, «Гянджалик», 1992, сс. 124, 215, 432):

¹⁴⁰ Տես АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 34, л. 241:

«ԽՍՀՄ-ից փախած մահմեդականները» հողվածում նշում էր, որ «քաղաքացիական գրանցման բաժանմունքները ողողված են թողաքացիություն ստանալու խնդրագրերով: Մասնավորապես՝ ընդունված կարգի համաձայն, Կովկասից և Դրիմից գաղթած մահմեդականների խնդրագրերն ընդունվում են առանց ուշացման»¹⁴¹: Հետագա տարիներին քեմալական կառավարությունը փոքր ու մեծ խմբերով ժամանող գաղթականներին հիմնականում տեղավորում էր քրդաբնակ վիլայեթներում*:

Քանի որ ներգաղթը կազմակերպված չէր, Հյուսիսային Կովկասից 1920–1927 թթ. արտագաղթած և Թուրքիայում բնակություն հաստատվածների վերաբերյալ ստույգ տվյալներ չկան: Վտարանդիները Թուրքիա էին հասնում տարբեր ճանապարհներով, և աշխարհում տեղի ունեցող զանազան քաղաքական իրադարձությունների բերումով մի քանի անգամ երկրից երկիր անցնում*: Այդ իսկ պատճառով տարբեր աղբյուրներում հաղորդվում են

¹⁴¹ Տես նույն տեղում, թ. 375:

* Այսպես, Կարո Սասունին, որն ուսումնասիրել է հայ-քրդական հարաբերությունները, գրել է, որ «թուրք պետությունը դեռ 1927ին՝ որոշած էր 100000 թուրք տեղափոխել Արեւելեան նահանգներուն մեջ, ու այդ առթիւ մէկ միլիոն ոսկիի պիտոճէ քուէարկուած էր: Կառավարութիւնը մտադրած էր 50000 թուրք բերել Կովկասէն, 15000՝ Սուրիայէն, 5000 Կիպրոսէն և 30000՝ զանազան այլ վայրերէ: Արդ, Արարատի գործունէութեան (խոսքը 1927 թ. Արարատի ապստամբության մասին է, որը համատեղ կազմակերպել էին քրդական «Չոյրուն» կազմակերպությունը և Դաշնակցությունը – Ա.Ա.) շնորհիւ, թրքական այս ծրագիրը խորտակուեցաւ» (տես Գ. Սասունի, 20-30-ականներու քրտական շարժումը եւ Հ.Յ.Դ. դերակատարութիւնը: «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք)». Դ. Հատոր. 1918–1992: Աթենք, 1995, էջ 245):

** Տարածված է այն տեսակետը, թե քաղաքացիական պատերազմի պատճառով Ռուսաստանից Թուրքիա են գաղթել մոտ 500 000 մարդ: 1920 թվականների կեսերին Ստամբուլում Ռուսաստանից գաղթածների թիվը կազմել է մոտ 400 000, որոնց մեծ մասը հյուպատոսարաններում հերթագրված էր տարբեր եվրոպական երկրներ գաղթելու համար: Հետագայում նրանց գերակշռող մասը թույլտվություն ստացավ տեղափոխվելու Եվրոպա (տես Елена Солнцева, Гусь с айвой. Как белоэмигранты встречали Новый год в Стамбуле (www.svobodanews.ru/articleprintview/371493.html)):

միմյանց հակասող տեղեկություններ՝ մի քանի հարյուր հոգուց մինչև մի քանի հարյուր հազար մարդ: Օրինակ՝ պատմաբան Ռամազան Տրախոն գրել է, որ «բոլշևիկների կողմից Կովկասի բռնազավթումից հետո 1917–1922 թվականների վտարանդիների թիվը կազմում էր 500-600»¹⁴³: «1917–1922 թվականների վտարանդիությունը կազմված էր Քաղաքացիական պատերազմի ժամանակ Կովկասից իրենց ընտանիքներով փախած չերքեզներից, որոնք վախենում էին բոլշևիկների հալածանքներից, այսինքն՝ սպիտակ զվարդիայում ծառայած զինվորներից և սպաներից», նշել է նա¹⁴⁴: Սակայն, անշուշտ, 1917–1922 թվականներին վտարանդիությունը չէր սահմանափակվում միայն զինվորականների զանգվածով:

Դրա հետ մեկտեղ կան թուրքական պաշտոնական տվյալներ, որոնք, սակայն, վերաբերում են ոչ թե հյուսիսկովկասցիներին, այլ ընդհանուր գաղթականությանը: Այսպես, բնակչության տեղափոխումների վերաբերյալ Լոզանի խորհրդածողովի որոշման հիման վրա Հունաստանից ու Բալկաններից Թուրքիա գաղթածների թիվը կազմեց 400 000 մահմեդական¹⁴⁵: Թուրքիայի Պետական վիճակագրական ինստիտուտի 1928 թ. հրապարակած տվյալների համաձայն՝ 1921–1928 թթ. Հունաստանից, Բուլղարիայից, Հարավսլավիայից, Ռումինիայից և Խորհրդային Միությունից Թուրքիա ներգաղթածների ընդհանուր թիվը կազմել է 463 534¹⁴⁶: 1923 թ. Թուրքիայի բնակչությունը կազմեց 12 մլն, իսկ 1927 թ. բնակչության փոփոխության և ներգաղթի շնորհիվ այն հասավ 13,6 մլն-ի¹⁴⁷: 1923–1934 թթ. մուհաջիրներին և փոխանակված բնակչությանը տրամադրվել է

¹⁴² Տե՛ս *P. Трахо*. Черкесы (Circassians – Northern Caucasians). Нальчик, 1992, с. 118: Այս գիրքն առաջին անգամ լույս է տեսել Մյունխենում 1956 թ.:

¹⁴³ Там же.

¹⁴⁴ Там же, с. 120:

¹⁴⁵ Տե՛ս «Ömek Köyün Kurulması» (www.etimesgut.bel.tr):

¹⁴⁶ Տե՛ս *H. Yıldırım Ağanoğlu*. Osmanlıdan Cumhuriyete Balkanların Makus Talihi – Göç. İstanbul, Kum Saati Yayınları, 2001, s. 280:

¹⁴⁷ A.g.e.

6000000 հեկտար հող, Բալկաններից, Կովկասից, Իրանից, Սիրիայից և Իրաքից գաղթած 58 027 ընտանիքի (284 332 մարդ) տասը տարվա ընթացքում անվճար տրամադրվել է 40962 տուն, 6321 հողակտոր և 1567472 դոնում հողատարածք¹⁴⁸:

Այստեղ հարկ է նշել հանրապետության առաջին տարիներին Թուրքիայում կայացած մարդահամարների առանձնահատկությունները: Առաջին մարդահամարներն անցկացվում էին ըստ էթնիկական պատկանելության՝ թուրք, քուրդ, չերքեզ, չեչեն, արխազ, արաբ, սակայն լայն հասարակայնության համար այդ տվյալները չէին հրապարակվում, քանի որ նրանք ներկայացնում էին որպես մահմեդական ընդհանրություն¹⁴⁹: Հետագայում՝ մինչև 1970-ական թվականները, անցկացվող մարդահամարներում էթնիկական տարրերի թվաքանակի մասին հստակ պատկերացում ունենալու համար հարցաթերթիկներում մտցվել էր «տանը խոսելու լեզուն» ստորը¹⁵⁰: Ուշագրավ է, որ օգտագործվել էր ոչ թե «մայրենի լեզու», այլ «խոսելու լեզու» ձևակերպումը, քանի որ շատերը, Ստամբուլում բնակվող հրեաների նման, զգուշանալով, որպես մայրենի նշում էին թուրքերենը: Դա հնարավորություն է տալիս որոշելու ձուլման աստիճանը, քանի որ թուրքացման քաղաքականության ամենակարևոր տարրերից մեկը թուրքերենի տարածումն էր*, իսկ տանն այլ լեզվով խոսելը և այն երեխաններին դասավանդելը նշանակում էր դիմադրություն ուժացման քաղաքականությանը: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ մինչև 1990-ական թթ. թուրքական պաշտոնական մարդահամարները

¹⁴⁸ A.g.e.

¹⁴⁹ Տե՛ս *Fuat Dündar*. Türkiye Nüfus Sayımlarında Azınlıklar. İstanbul, Doz Yayınları, 1999, ss. 25–26:

¹⁵⁰ A.g.e., s. 50:

* Մոտեցման հիմքում դրված է Քեմալ Աթաթյուրքի այն թեզը, թե «մարդ, որն ասում է, թե պատկանում է թուրք ազգին, առաջին հերթին պետք է թուրքերեն խոսի» (a.g.e.):

քաղաքական նկատառումներով միտում ունենի նվազեցնելու գաղթական չերթեզների թվաքանակը*:

Մակայն առանձնակի կարևոր է ոչ թե 1920-ական թվականներին Թուրքիա ներգաղթաց լեռնականների ստույգ թվաքանակը, այլ այն հանգամանքը, որ ներգաղթածները քաղաքականապես ակտիվ, կրթված, քաղաքականությամբ զբաղվելու փորձ ունեցող և արտասահմանում քաղաքական պայքարը շարունակելու վճռականությամբ լի գանգված էին¹⁵¹: Այդ համատեքստում հատկանշական է, որ «ռուսական վտարանդիություն» հասկացության ձևավորման կենտրոններից մեկը Ստամբուլն էր¹⁵²: Անկասկած, թուրքական իշխանություններն ունենի ստույգ տեղեկություններ «սպիտակ» լեռնականների քվաքանակի ու բնակության վայրերի մասին, քանի որ նրանք գտնվում էին երիտասարդ հանրապետության ձևավորվող հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում:

1920–1927 թթ. Հյուսիսային Կովկասից արտագաղթի տեսանկյունից կարևոր պրոբլեմ է վտարանդիության շրջանում տարբեր խավերի տոկոսային հարաբերակցության խնդիրը, քանի որ դրանով էին պայմանավորված նրանց քաղաքական գործունեության և ստեղծվող կառույցների բնույթը, ռուսաստանյան այլ ժողովուրդների

* Թուրքիայի, Սիրիայի և Հորդանանի չերթեզական համայնքների խնդիրներով զբաղվող ռուսաստանցի արևելագետ Ֆասիլա Բադերխանը նշում է, որ «Թուրքիայի Հանրապետությունում 1927 թ. անցկացված առաջին մարդահամարի համաձայն՝ երկրի բնակչությունը 13 648 270 հոգի էր, որոնցից չերթեզների թիվը 100 000 էր: Բսկ 1935 թ. մարդահամարի համաձայն՝ համապատասխանաբար, 13 899 073 և 91973: Այդպիսով՝ եթե դատենք ըստ ակնհայտորեն ազգայնական միտում ունեցող պաշտոնական տվյալների, ապա գաղթականների թիվը գնալով նվազում է (1940 թ.՝ 81 հազ., 1960 թ.՝ 65 հազ., 1965 թ.՝ 48 հազ.): Իրականում ձուլման գործընթացները չէին կարող այդպես արագ ընթանալ» (տես Փ. Բադերխան. Северокавказская диаспора в Турции, Сирии и Иордании. М., ИВ РАН, 2001, с. 47):

¹⁵¹ 1917 թվականից հետո քանակապես փոքր, բայց քաղաքապես ակտիվ լեռնական վտարանդիության հանգամանքը շեշտում են խնդիրն ուսումնասիրած, բոլոր գիտնականները (տես, օրինակ, Lowell Bezanis, ibid, p. 63):

¹⁵² Ibid.

վտարանդիության հետ համագործակցության հարցում նրանց դիրքորոշումը: Այսպես, օսեթական վտարանդիության շրջանում բարձր էր զինվորականության տոկոսը, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ մինչև 1917 թ. հեղափոխությունը ցարական բանակում կար երեք հազարից ավելի ազգությամբ օս սպա, և նրանց գերակշռող մասը 1918–1920 թթ. սպիտակ զվարդիայի շարքերում մարտնչում էր ընդդեմ բոլշևիկների¹⁵³: Մեծ թվով օսեր գաղթեցին կազակների հետ¹⁵⁴: Քանի որ այդ շրջանում Թուրքիայի կառավարությունը նպատակ ուներ օգնություն ստանալ բոլշևիկյան կառավարությունից, ապա գաղթականների բնակեցման հարցում անհրաժեշտ աջակցություն չցուցաբերեց, և 1921 թ. աշնանը գաղթականներն սկսեցին լքել Թուրքիան¹⁵⁵:

Չեչենական, կաբարդինական, ինգուշական վտարանդիության շրջանում մեծամասնություն էին կազմում քաղաքացիական անձինք՝ Լեռնականների հանրապետության նախկին պաշտոնյանները*: Քաղաքացիական անձանց գերակշռումը նկատելի է նաև հայկական, վրացական և ադրբեջանական վտարանդիության շրջանում, քանի որ նրանց հանրապետությունների խորհրդայնացումից հետո բարձրաստիճան զինվորականությունը ձեռքակալվեց և մասամբ գնդակահարվեց:

¹⁵³ Տես «Осетинская эмиграция в 1920-30 годах». «Кавказский узел», 29 марта 2009 г. (www.kavkaz-uzel.ru/articles/152276/?print=true):

¹⁵⁴ Там же.

¹⁵⁵ Там же.

* Ա. Ավտորխանովը հիշատակում է չեչեն-ինգուշական մտավորականության այն գործիչներին, որոնք, պարտություն կրելով խորհրդային կարգերի հաստատման դեմ պայքարում, ստիպված էին լքել Հյուսիսային Կովկասը, ինչպես Հյուսիսային Կովկասի լեռնականների հանրապետության նախագահ Տապա Չերմոնը, խորհրդարանի նախագահ Վասան-Գիրեյ Ջաբաղին, Չեչենական ազգային խորհրդի նախագահ Իբրահիմ Չուլիկովը, գեներալ Մաֆարի Մալսազովը, ինգուշական գնդի կրամանատար Մոզրբկո Մալսազովը և ուրիշներ (տես А. Авторханов, указ.раб., с. 26):

Ամփոփելով՝ նշենք նաև հետևյալ հանգամանքը, որով պայմանավորված է Թուրքիայում տարբեր ժամանակահատվածներում կովկասյան քաղաքական վտարանդիության թվաքանակի տատանումները: Հյուսիսային Կովկասից ներգաղթաց 1920-ական թվականների վտարանդիությունն սկզբնական շրջանում բնավ նպատակ չունեի ինտեգրվելու թուրքական հասարակության մեջ կամ Թուրքիան դիտելու որպես հայրենիք: Այդ պետությունն ընկալվում էր միայն որպես ժամանակավոր ապաստան և որպես խորհրդային կարգերի դեմ պայքարում դաշնակից: ՌԻՍՏԻ նրանք, ելնելով քաղաքական իրավիճակից, տեղափոխվում էին ու բնակություն հաստատում իրենց համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծող այլ պետություններում, ինչպիսիք են Լեհաստանը կամ Գերմանիան: Պատահական չէ, որ այս վտարանդիության ղեկավարներից շատերը դարձան Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի ներսում ձևավորված «վերադարձի (dönüş)» շարժման առաջնորդներ^{*}: Հետագայում «հին» և «նոր» համայնքների ներկայացուցիչների ինքնությունների, քաղաքական կողմնորոշումների, Թուրքիայում տեղի ունեցող գործընթացներին մասնակցության ակտիվությունների միջև եղած տարբերությունը դրսևորվեց ավելի ակնհայտորեն^{**}:

Մի շարք գիտնականներ Թուրքիայում կովկասյան վտարանդիությունից կազմված «նոր» չեքքեզական համայնքի ներսում ևս առանձնացնում են երկու հոսանք՝ նրանց միավորելով «քաղաքանապետ ակտիվ տարբեր» անվամբ. «1. այն մահմեդական

^{*} Այստեղ մենք խուսափում ենք «գաղափարախոս» տերմինն օգտագործելուց, քանի որ Թուրքիայի հյուսիսկովկասյան մտավորականներից շատերը իրավացիորեն նշում են, որ վերադարձի գաղափարախոսությունը ձևավորվեց Կովկասյան պատերազմին հաջորդած «մեծ ներգաղթից» անմիջապես հետո՝ դեռ Կովկասում ծնված չեքքեզների սերնդի շրջանում, և նպաստեց այն բանին, որ նրանք չձուլվեն (տես *İzzer Aydemir*. a.g.e., s. 5):

^{**} Ինչպես կներկայացվի ստորև, այն իր արտահայտությունն ստացավ թե՛ ստեղծվող հյուսիսկովկասյան կազմակերպություններում, թե՛ Թուրքիայի «չեքքեզական» մամուլի էջերում:

ազգայնականները, որոնք կապ ունեին Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ժամանակ ստեղծված և կարճ կյանք ունեցած թուրքական կամ հյուսիսկովկասյան պետությունների հետ և Թուրքիա տեղափոխվեցին 1920-ական թվականների սկզբին, 2. նախկին լեզեռնականները^{*}, որոնք ծառայում էին նացիստական Գերմանիայում և 1948 թվականից հետո բնակություն հաստատեցին Թուրքիայում¹⁵⁶: Լոուել Բեզանիսը, որն ուսումնասիրել է խորհրդային մահմեդականների տարագրության խնդիրը, նշել է, որ առաջին խումբը ձևավորեց վերնախավ, քանի որ աչքի էր ընկնում և՛ քաղաքական պայքարի իր փորձով, և՛ կրթությամբ ու մասնագիտական կարողություններով¹⁵⁷:

^{*} Խոսքը վերաբերում է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին վերնախտի կազմում ստեղծված մահմեդական գորամիավորումների՝ հյուսիսկովկասյան և ադրբեջանական լեզեռնների անդամներին:

¹⁵⁶ Տես *Lowell Bezanis*, *ibid*, p. 63:

¹⁵⁷ *Ibid.*: Վերնախավի մասին խոսելիս հարկ է նշել, որ 19-րդ դարում Օսմանյան կայսրության ազնվականության մի զգալի մասն ուներ հյուսիսկովկասյան արմատներ (տես *Leyla Açba*. *Bir Çerkes Prensesinin Harem Hatıraları*. İstanbul, L and M Yayınları, 2004): Այս փաստն իր արտացոլումն է ստացել նաև թուրքական գրականության մեջ: Այսպես, հայտնի թուրք երկիծաբան Ազիզ Նեսինն իր «Ֆուտբոլի արքա» վեպում, ծաղրելով ազնվական ծագում ունեցող մի ընտանիքի, նշել է նրա չեքքեզական ծագումը և արքունիքում դաստիարակություն ստանալու փաստը (տես *Aziz Nesin*. *Король футбола*. Избранные произведения. М., «Художественная литература», 1985, с. 55):

*1921 – 1922 թթ. Հյուսիսային Կովկասում տիրող իրավիճակը և
Թուրքիայում ստեղծված առաջին հյուսիսկովկասյան վտարանդիական
քաղաքական կազմակերպությունները*

Թուրքիան ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավված էր 1919–1922 թթ. Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող իրադարձություններում: Որոշ դեպքերում թուրքական իշխանությունների ներգրավվածությունն արտահայտվում էր ավելի ակնհայտորեն, ինչպես, օրինակ, Հյուսիսային Կովկասում և Թուրքիայում Սաիդ Շամիլի գործունեության կամ 1921 թ. Նուրի փաշայի կողմից Ադղանում և Գյանջայում* հրահրված խժոժության դեպքում, մյուս դեպքերում Թուրքիան դիտվում էր որպես բնական դաշնակից, ինչպես 1920–1921 թթ. Նեջմեթին Գոտցիևսկու ապստամբության ժամանակ: Այդ շրջանում Թուրքիայի վարած կովկասյան քաղաքականությունը հիմնված էր այն տեսակետի վրա, որ Թուրքիային ձեռնառն են Հյուսիսային Կովկասում հնարավորինս հաճախ հրահրվող ընդվզումները և անկայուն իրավիճակի պահպանումը: Խորհրդային իշխանությունների համար Կովկասում հնարավորինս շատ խոչընդոտներ ստեղծելու քաղաքականությունը բխում էր այն իրողությունից, որ քեմալական կառավարությունը թեև ստիպված համակերպվել էր Կովկասում խորհրդային կարգերի հաստատման հետ և՛ նույնիսկ որոշ չափով աջակցել այդ կարգերի հաստատմանը, ինչի ցայտուն օրինակն է Ադրբեջանի խորհրդայնացման գործում այն դերը, որը խաղացին ադրբեջանական բանակում ծառայող թուրք սպաներն ու կառավարությունում գտնվող թուրք խորհրդականները**:

* 1921 թ. նոյեմբերին էնվերի դավադրության մեջ ներգրավված լինելու պատճառով Նուրի փաշան Մ. Քեմալի կառավարության որոշմամբ արտաքսվեց Անատոլիայից և անցավ Ադրբեջան (տես ԱՅՊ ԲՓ, ֆ. 132, Референтура по Турции, оп. 1, папка 1, д. 18, л. 39):

** Ադրբեջանի խորհրդայնացման գործում Թուրքիայի, մասնավորապես՝ թուրք զինվորականության դերը իր հուշերում մանրամասնորեն նկարագրում է Հալիլ

այլուհանդերձ տակավին շահագրգռված չէր, որ Կովկասում խորհրդային իշխանությունը լինի կայուն և ամուր:

Երկարաժամկետ կտրվածքով Թուրքիայի շահերից բխում էին Հյուսիսային Կովկասի պառակտվածությունը և վերածումը մշտական ընդվզումների օջախի: Նման քաղաքականության իրականացման տեսակետից Հյուսիսային Կովկասում ազգերի բազմազանությունը, ազգամիջյան հակասություններն ու բախումները թուրքական դիվանագիտության համար ստեղծում էին տարաշարժի լայն դաշտ ու հնարավորություններ:

Քեմալական կառավարությունը 1919–1922 թթ. վարում էր այնպիսի հյուսիսկովկասյան քաղաքականություն, որի հիմքում դրված էր քաղաքական վտարանդիության օգտագործման գաղափարը, և որի գլխանացում կային հետևյալ գործիքները.

1. Կովկասում գործող թուրք գործակալներն ու «Հասուն կազմակերպությունից» մնացած ցանցը,
2. Թուրքիայում կովկասյան վտարանդիության քաղաքական կազմակերպությունները և զինված ջոկատներ ստեղծելու, ինչպես նաև դրանք Կովկասում տեղի ունեցող իրադարձություններում օգտագործելու հնարավորությունը,
3. Մոսկվայում թուրքական դեսպանությունը՝ որպես հյուսիսկովկասյան քաղաքականության համակարգման և

փաշան, որն ինքն էլ ակտիվ կերպով մասնակցել է 11-րդ Կարմիր բանակի մուտքն Ադրբեջան դուրացնելուն և ադրբեջանական զորքերի կողմից դիմադրություն ցույց չտալուն (տես Halil Paşa. İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmiyen Savaş. İstanbul, Kamer Yayınları, 1997, ss. 318-337): Ադրբեջանի բանակում ծառայող թուրք սպայության կողմից Կարմիր բանակին ցուցաբերված պջակցությունը, մասնավորապես՝ Հալիլ փաշայի կողմից ԱՂՀ ռազմական նախարարի օգնական Ալիադա Շիլիևսկուն համոզելը, որ իրաման տա չլիմադրել խորհրդային բանակին, նկարագրում է նաև ԱՂՀ անվտանգության ծառայության ղեկավար Նաքի Քեյքուրունը: Սակայն նա փորձում է սպառնացել, թե իբր Անկարայի կառավարությունն անտեղյակ էր Ադրբեջանում ծառայող թուրք սպաների նախաձեռնությանը (տես Naki Keykurun. Azərbaycan İstiklal Mücadelesinden Hatıralar (1905–1920). Ankara, İlke Kitabevi Yayınları, 1998, ss. 137–139):

տարածաշրջանում գործող թուրքամետ ուժերի ուղղորդման կենտրոն,

4. Անտանտի հետ բանակցություններում, մասնավորապես՝ 1921 թ. Փարիզում Բեքիր Սամիի միջոցով Հյուսիսային Կովկասի անկախության և բոլշևիկների հետ ձեռք բերված համաձայնությունների խնդիրների օգտագործումը որպես համաձայնության հնարավոր կետի:

Մինչև 1922 թ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման քաղաքականությունում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրն ու Մոսկվայում Անկարայի կառավարության դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյը իրենց հաշվարկներում և գործունեությամբ զգալիորեն առաջ էին անցել Անկարայի կառավարության վարած քաղաքական ուղեգծից: Նրանք ոչ միայն ձգտում էին Հյուսիսային Կովկասում բոլշևիկների համար ստեղծելու հնարավորինս շատ խոչընդոտներ, այլև ծրագրում էին, որ Թուրքիայում հյուսիսկովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունների ստեղծումը հնարավորություն կտա քաղաքական իրավիճակի փոփոխության դեպքում դրանք օգտագործելու ներկայումս իրենց դաշնակից բոլշևիկների դեմ: Նման ձգտումները պատճառ դարձան մի շարք անհաշվենկատ և անհեռատես քայլերի, որոնք 1922 թ. հանգեցրին թուրք-ռուսական դիվանագիտական միջադեպի:

Այս համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում Աթաթյուրքի գործելաճր: Նրան բնորոշ էր անմիջական կապից խուսափելու և որոշ հեռավորություն պահպանելու ձգտումը, ինչը հնարավորություն էր տալիս այն դեպքերում, երբ իրադարձությունները զարգանում էին իր հաշվարկներին հակառակ, խնդիրը հարթելու՝ մեղքն ավելի ստորին օղակների վրա բարդելով, ինչպես դա տեղի ունեցավ, մասնավորապես՝ բոլշևիկների դժգոհության ծագման

պարագայում, երբ մեղավոր ճանաչվեցին Ալի Ֆուադ Ջեբեսոյը և Բեքիր Սամին*:

Մինչև 1920 թ. հունիս ամիսը քեմալական կառավարությանը հաջողվեց պետական մակարդակով խուսափել Խորհրդային Ռուսաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածաշրջանում ապստամբական շարժումներ հրահարելու մեջ մեղադրանքներից: Սակայն 1920 թ. մայիսին Կովկասում թուրքական իշխանությունների ձեռնարկած ոչ կշռադատված քայլերի արդյունք եղան Ադրբեջանի Գյանջա քաղաքում Նուրի փաշայի հրահրած ընդվզումը և բնակչության հարձակումը Կարմիր բանակի ստորաբաժանումների վրա: Իրադարձությունների հետ թուրքական իշխանությունների կապը և Նուրի փաշայի գործունը հարուցեցին խորհրդային իշխանությունների վրդովմունքը. նրանք Թուրքիայի ներգրավվածությունը մեկնաբանեցին որպես իրենց դեմ ուղղված թշնամական քայլ:

Նուրի փաշայի անհեռատես գործողությունների հետևանքով քեմալական կառավարությունը հայտնվեց միանգամայն անցանկալի իրավիճակում, ընդ որում՝ այն շրջանում, երբ Խորհրդային Ռուսաստանի օգնությունը կենսական նշանակություն ուներ ազգայնական շարժման հետագա զարգացման համար: Քանի որ Նուրի փաշայից կապը ձգվում էր դեպի Քյազիմ Կարաբեքիրի շտաբ, վերջինս 1920 թ. հունիսի 24-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը գրած իր նամակում ժխտեց թուրքական իշխանությունների որևէ մասնակցությունը Գյանջայի դեպքերին՝ ամբողջ պատասխանատվությունը բարդելով Թբիլիսիում ապաստան գտած ադրբեջանական մուսավաթական կառավարության և «թուրք ազգի

* Այսպես, Բեքիր Սամին անգլիացիների հետ 1921 թ. բանակցությունների ժամանակ փորձեց շահարկել Հյուսիսային Կովկասի հարցը և հանդես եկավ այնտեղ ռուսների դեմ բախարգելիչ պետություն ստեղծելու առաջարկությամբ: Այդ մասին տեղեկանալով՝ Չիչերինը խիստ նոստա հղեց, ինչից հետո Բեքիր Սամին հետ կանչվեց (տես *Doğan Avcioğlu*, a.g.e., s. 233):

քաղաքականությունից անտեղյակ մի խումբ օսմանցի սպաների վրա»¹⁵⁸։ Ղարաբաղում Նուրի փաշայի գործողությունները Լ. Կարախանը 1920 թ. թուրք-ռուսական բանակցությունների ժամանակ որակեց որպես «անխելամիտ արարք», իսկ թուրքական պատվիրակությունն շտապեց տեղեկացնել, որ Նուրի փաշայի «զաղափարների հայր» Մանաստիրցի Բեհաեդդինը* Քյազիմ Կարաբեքիրի հրամանով ձեռքակալվել է¹⁵⁹։ Մոսկվայում Անկարայի կառավարության ղեկավար Ալի Ֆուատ Ջեբեույի խոստովանությամբ՝ Նուրի փաշայի գործողությունները թուրքական պատվիրակության առաջ հարուցեցին բազմաթիվ խնդիրներ¹⁶⁰։

Գյանջայի ղեկավարը քննարկվեցին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1920 թ. հոկտեմբերի 16-ի փակ նիստում, որտեղ մի քանի պատգամավորներ Նուրիին մեղադրեցին Թուրքիայի շահերին դավաճանելու մեջ։ Անկարայի կառավարության տնտեսության նախարար և 1920 թ. թուրք-ռուսական բանակցությունների պատվիրակության անդամ Յուսուֆ Քեմալը խորհրդարանին տրված պարզաբանումներում նշեց, որ ղեկավար պատճառը «ոչ թե դավաճանությունն է, այլ հայերի խառնակություններն ու Նուրի փաշայի երեխայությունը»¹⁶¹։ Ի վերջո, Գյանջայի ղեկավարը հարթվեցին առանց թուրք-ռուսական հարաբերությունների համար որևէ էական հետևանքի։

¹⁵⁸ Տե՛ս *Ali Fuat Cebesoy*, a.g.e., s. 34:

* Ըստ ամենայնի, խոսքը ինչ-որ իթթիհաթական գործչի մասին է, որն Անատոլիայի և Նուրի փաշայի միջև կապող օղակ էր։ Քյազիմ Կարաբեքիրի օրագրում այդ անձը նույնպես հիշատակվում է որպես «Մանաստիրցի Բահա», սակայն պարզաբանումներից երևում է, որ նկատի չունի Իթթիհատի Կենտրոնական Կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիրին, որը հայտնի էր որպես «դոկտոր Բահա» (տե՛ս *Kazım Karabekir. Günlükler* (1906-1948). 1 Cilt. İstanbul, YKY, 2009, s. 685):

¹⁵⁹ Տե՛ս *Ali Fuat Cebesoy*, a.g.e., s. 66:

¹⁶⁰ A.g.e.

¹⁶¹ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları». Cilt 1. 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 177:

Երկրորդ իրադարձությունը, որով բացահայտվեց թուրքական իշխանությունների անմիջական ներգրավվածությունը Հյուսիսային Կովկասում ընթացող հակախորհրդային պայքարում, կապված էր Նեջմեթին Գոտցինսկու ապստամբությանը իմամ Շամիլի թոռ Սաիդ Շամիլի մասնակցության հետ։

1920 թ. մայիսի 11-ին Չեչնիայի Վեդենո բնակավայրի մոտակայքում տեղի ունեցավ մեծ համաժողով, որտեղ Հյուսիսային Կովկասում հակաբոլշևիկյան ապստամբության առաջնորդ ՌԻՊուն Հաջին ղիմեց ներկաներին՝ առաջարկելով, որ շարժումը ընդլայնելու և ուժեղացնելու համար այն պետք է ղեկավարի իմամ Շամիլի՝ այդ պահին միակ կենդանի մնացած զավակ Քյամիլ փաշան։ ՌԻՊուն Հաջիի առաջարկությունն ընդունվեց, և Քյամիլ փաշայի մոտ Թուրքիա պատվիրակություն ուղղարկվեց¹⁶²։ Նա ընդունեց Վեդենոյի ժողովի առաջարկությունը, սակայն իր ձերբության և վատառողջության պատճառով առաջարկեց, որ ապստամբությունը ղեկավարի իր քսանամյա որդի Սաիդ Շամիլը։

Սաիդ Շամիլի՝ Թրիլիսի ժամանելու պահին (1920 թ. հունիս) Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում արդեն խորհրդային կարգեր էին հաստատվել, սակայն 1920 թ. սեպտեմբերին Դադստանում բռնկվել էր Նեջմեթին Գոտցինսկու ղեկավարած ապստամբությունը*։ Սաիդ Շամիլը դարձավ Գոտցինսկու ապստամբության ռազմական գործողությունների ղեկավար և մոտ մեկ տարի՝ մինչև 1921 թ. հունիս, մնաց Հյուսիսային Կովկասում**։

¹⁶² Տե՛ս *Kadircan Kasli*, a.g.e., s. 153:

* Գոտցինսկին դեռ 1918 թ. սկզբին իրեն հռչակել էր «Չեչնիայի և Դադստանի իմամ» (տե՛ս *T. M. Музев. Союз горцев. Русская революция и народы Северного Кавказа, 1917 – март 1918 г. М., 2007, c. 436*):

** Մի շարք աղբյուրներում նշվում է, որ ապստամբությունն սկսվել էր 1921 թ. հունվարին և ընդգրկել Չեչնիայի միայն լեռնային շրջանները, իսկ այն նաև Հարավային Չեչնիայի վրա տարածելու՝ ապստամբության առաջնորդ Ն. Գոտցինսկու ջանքերն ապարդյուն էին (տե՛ս *И. Пыхалов, указ. раб., c. 236*):

Հակախորհրդային ապստամբության ղեկավարների շարքում Սախլ Շամիլի հայտնվելը պատճառ դարձավ, որպեսզի 1920 թ. հունիսին բոլշևիկյան «Новый Восток» (Նովիյ Վոստոկ) թերթում հրատարակվի Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող ապստամբություններին նվիրված մեծ հոդված, որում ամբողջ պատասխանատվությունը դրվում էր թուրք սպաների վրա: Հոդվածում ընդգծվում էր, որ «բոլոր այս շարժումների հետևում կանգնած են թուրք սպաները, և հենց նրանք են ղեկավարում ռազմական գործողությունները»¹⁶³:

Հյուսիսային Կովկասում հակաբոլշևիկյան ապստամբությունների ուժգնացմանը զուգահեռաբար 1920 թ. աշնանն սկսվեց լեռնականների՝ դեպի Թուրքիա գաղթի ակիբը, ընդամին հյուսիսկովկասցի գաղթականները կենտրոնանում էին Ստամբուլ, Տրապիզոն և Սամսուն քաղաքներում, սակավ թվով՝ Էրզրումում: Քեմալական կառավարության աջակցությամբ Տրապիզոնում և Մամսունում վտարանդիական քաղաքական կոմիտեներն ու կազմակերպությունները շարունակեցին իրենց գործունեությունը, նաև ստեղծվեցին նորերը: Ինչպես վերը նշվեց, մի շարք դեպքերում լեռնականների քաղաքական կոմիտեների ստեղծման նախաձեռնությունը գալիս էր անմիջականորեն թուրքական իշխանություններից: Մասնավորապես՝ Հյուսիսային Կովկաս կատարած այցելության ժամանակ նման նախաձեռնությամբ հանդես եկավ քեմալական կառավարության արտաքին գործերի նախարար Բեքիր Սամին: Թուրքիա վերադառնալիս նա Թբիլիսիում հանդիպեց Լեռնականների հանրապետության նախկին արտաքին գործերի նախարար Հայդար Բամատի հետ* (Բամատով): Բեքիր Սամին շեշտեց

¹⁶³ Տես *Kadircan Kasli*, a.g.e., s. 152:

* Վերջինս այնտեղ էր գտնվում որպես Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության պաշտպանության խորհրդի արտաքին կապերի պատասխանատու և Վրաստանի ու Հայաստանի կառավարություններում ներկայացուցիչ (տես *Georgii Mamulia*. Его высшим политическим идеалом была

ապստամբ լեռնականների և Անկարայի կառավարության միջև կապ հաստատելու անհրաժեշտությունը¹⁶⁴: Որպես հանդիպման արդյունք՝ Բեքիր Սամիի վերադարձալուց հետո 1920 թ. դեկտեմբերին Տրապիզոն ժամանեց լեռնականների մեծ խումբ՝ Կոցնի ղեկավարությամբ: Ինչպես 1921 թ. փետրվարի 9-ի գաղտնի հեռագրով Տրապիզոնում խորհրդային հյուպատոս Բադիրովը տեղեկացնում էր Անկարայում Խորհրդային Ռուսաստանի դեսպանության առաջին քարտուղար ՌԻպմալ-Անգորսկուն, «Այդ խումբն արդեն անցել է աշխատանքի: Նա վայելում է թուրքական իշխանությունների լիակատար վստահությունն ու հովանավորությունը: Նրանց սաղրանքի հետևանքով օրերս մեր երկու ընկերները ձեռքակալվեցին որպես անգլիական լրտեսներ և ազատ արձակվեցին միայն իմ անձնական միջամտությունից հետո: Այդ խումբը հաճախակի ասեկոսեներ է տարածում Անգլիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև Անատոլիան բաժանելու վերաբերյալ պայմանագիր կնքելու, Լեհաստանի կողմից Խորհրդային Ռուսաստանին պատերազմ հայտարարելու մասին և այլն: Նպատակն է՝ մեզ կովեցնել քեմալականների հետ: Կոստանդնուպոլսում ևս «լեռնական կոմիտե» է կազմավորվել: Նպատակն է՝ ամբողջ իսլամական աշխարհը ոտքի հանել բոլշևիկների դեմ»¹⁶⁵: Տրապիզոնում ռուսական հյուպատոսի բազմաթիվ դիմումներից հետո թուրքական իշխանությունները խոստացան քաղաքից վտարել լեռնցի գաղթականներին¹⁶⁶:

Տրապիզոնում լեռնցի գաղթականների գործունեությունը Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին անհանգստացրեց այն պատճառով, որ նրանք, օգտվելով Հյուսիսային Կովկասին մտն

Кавказская конфедерация: Гайдар Баммат и группа "Кавказ" (1934-1939). Историко-культурный журнал «PROMETHEUS», N5 (www.chechen.org/page.9.393-zhurnal-chast.html): Թուրքերեն Հայդար Բամատի ազգանունը գրվում է որպես Բամաթ, սակայն, հաշվի առնելով, որ նրա իսկական ազգանունը Բամատով էր, մենք նախապատվություն ենք տալիս Բամատ տառադարձությանը:

¹⁶⁴ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 17, л. 1:

¹⁶⁵ Տես նույն տեղում, թթ. 1-1 հավ.:

¹⁶⁶ Տես նույն տեղում, թ. 68:

գնտվելու հանգամանքից, կարողանում էին հեշտությամբ ներթափանցել հայրենիք: Սակայն սկզբնական շրջանում արտաքին գործերի ժողկոմատը, չունենալով թուրքական իշխանությունների և լեռնական քաղաքական վտարանդիության համագործակցության վերաբերյալ համոզիչ սպացույցներ, բավարարվեց միայն տեղեկությունների հավաքմամբ ու ճշտմամբ: Այսպես. Անկարայում ռուսական դեսպանությունից Տրապիզոնում հյուպատոսին 1921 թ. հունիսի 30-ին տրված կարգադրության մեջ ասված էր. «Ձեր շրջանում են գտնվում մեծ թվով սպիտակգվարդիական լեռնականներ՝ մահմեդականներ և ոչ մահմեդականներ: Նրանք զինաթափված չեն, կազմում են հինգ հարյուր հոգանոց ջոկատ, որը զինված է ռուսական հրացաններով: Ջոկատի հրամանատարն է գնդապետ Շանանը: Տրապիզոնի մոտակայքում կա Կոկովի գլխավորությամբ սպիտակգվարդիական սպաների մեկ այլ խումբ, որը նույնպես զինաթափված չէ և թուրքական իշխանություններից ստանում է այնպիսի ռոճիկ, ինչպիսին ստանում են թուրք սպաները: Շտապ բոլոր միջոցները ձեռնարկել այս տեղեկություններն ստուգելու և մանրամասները ճշտելու համար: Արդյունքների մասին անմիջապես հեռագրեք»¹⁶⁷:

Տրապիզոնից ստացված պատասխան գաղտնի հեռագրում հյուպատոս Տրաբունը փոխդեսպան Նացարենուսին հաղորդեց հետևյալ տեղեկությունները. «Թոքաթ քաղաքում գտնվում է դադստանցի վեց սպաներից կազմված խումբ: Նրանց առաջնորդներն են լեռնական սպիտակգվարդիական կառավարության նախագահ Կոցըր (կարաբոլին) և գնդապետ Մուսանանը: Այդ խումբն ամբողջովին ապրում է թուրքերի խնամակալությամբ: Շրջանում ապրում են նաև Ադրբեջանալեռնական կոմիտեի անդամներ Ալիխան Գանտեմիրը և Հայդար Բամատը, որոնք կապ ունեն Անկարայի և Քյազիմ բեյի (Քյազիմ Կարաբեքիր, – Մ. Ա.) հետ: Մի խումբ դադստանցի սպաներ՝ գնդապետ Մաջանի և Մալիկով

երայրների գլխավորությամբ, թուրքական միջոցներով հակահետախուզություն են կազմակերպել, ինչի մասին հաղորդվել է»¹⁶⁸:

1921 թ. լեռնականների՝ Թուրքիայում գործող կազմակերպությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) Հյուսիսային Կովկասում 1920 թ. խորհրդային կարգերի հաստատումից հետո Վրաստան տեղափոխված, իսկ 11-րդ Կարմիր բանակի՝ Թբիլիսի մտնելուց հետո 1921 թ. Թուրքիա տեղափոխված կառույցներ, ինչպիսին էր, օրինակ, Լեռնական-ադրբեջանական կոմիտեն՝ բ) Թուրքիայում ստեղծված նոր քաղաքական կառույցներ: Այս երկու խմբերի կազմակերպություններն էլ գտնվում էին քեմալական իշխանությունների անմիջական վերահսկողության տակ և նրանից աջակցություն ստանում: Այդ վերահսկողությունը, նյութական աջակցությունը և քաղաքական ուղղորդումը իրականացնում էր Քյազիմ Կարաբեքիրը: Համենայն դեպս, Անկարայում ռուսական դեսպանության և Տրապիզոնում հյուպատոսության կողմից հավաքված, ինչպես նաև լրտեսներից ստացված տեղեկություններում որպես բարձրագույն ատյան, որտեղ խաչվում էին լեռնական և ադրբեջանական վտարանդիության բոլոր ուղղությունները, նշված էր միայն նրա անունը:

1920 թ. Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո Թբիլիսի, իսկ 1921 թ. Վրաստանի խորհրդականացումից հետո՝ Տրապիզոն տեղափոխվեց «Հյուսիսային Կովկասի ազատագրման Լեռնականների կոմիտեն»: 1920 թ. աշնանը Թբիլիսիում ստեղծվեց «Լեռնական-ադրբեջանական կոմիտեն (Горско-азербайджанский комитет)»^{**}, որը Վրաստանի կառավարությունը

¹⁶⁸ Տես նույն տեղում, թ. 88:

* Մի շարք փաստաթղթերում նշվում է նաև որպես Ադրբեջանալեռնական կոմիտե:

** Ռուսաստանի Դաշնության Արտաքին հետախուզության արխիվի գաղտնի փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կովկասյան վտարանդիության գործունեությանը նվիրված գրքի հեղինակ գեներալ-մայոր Լև Մոցկովը սխալմամբ այն անվանում է «Ադրբեջանալեռնական միավորման կոմիտե (Комитет азербайджанско-

¹⁶⁷ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 76:

Ճանաչեց որպես Հյուսիսային Կովկասի և Ադրբեջանի օրինական կառավարություն, իսկ Կոմիտեի կազմավորած ռազմական գործադիր մասնակցեց Թբիլիսիի ուղղությամբ հարձակվող 11-րդ Կարմիր բանակի դեմ մղվող մարտերին¹⁶⁹: 1921 թ. փետրվարին՝ Վրաստանի խորհրդայնացման նախօրեին, Լեոնական-ադրբեջանական կոմիտեի նախագահ ընտրվեց Հայդար Բամատը¹⁷⁰: Վրաստանի խորհրդայնացումից հետո Կոմիտեն, ինչպես նաև նրա զինված ջոկատը տեղափոխվեցին Տրապիզոն, որտեղ Կոմիտեի ղեկավարությունն ստանձնեց ԱՂՀ խորհրդարանի անդամ դոկտոր Սուլթանովը*:

Սուլթանովին հաջողվեց կանոնավոր շփումներ հաստատել թուրքական իշխանությունների հետ և ներկայացնել համատեղ ադրբեջանալեոնական կոմիտեի վերակազմավորման նախագիծը: Նախատեսված էր, որ ստեղծվելիք կազմակերպությանը կից պետք է ձևավորվեն զինված ջոկատներ՝ Կովկաս անցնելու նպատակով: Նախագիծն արժանացավ Կարաբեքիրի հավանությանը, և նա Սուլթանովին հրահանգ տվեց ձեռնամուխ լինել դրա իրականացմանը: Կարաբեքիրը նաև կյուրական միջոցներ տրամադրեց Կովկասից գաղթող լեոնականներին հավաքագրելու համար:

Տրապիզոնում ռուսական հյուպատոս Տրաբունը 1921 թ. նոյեմբերի 8-ին փոխդեսպան Նազարենուսին հղած իր գաղտնի հեռագրում տեղեկացրեց, որ «Տրապիզոնում բնակվող՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարության նախկին անդամ դոկտոր Սուլթանովը խանութ բացելու համար Տրապիզոնի վայից ստացել է 2 000 լիրա: Խանութը պետք է սպասարկի միայն սպիտակզվարդիական

горского объединения)», որի ղեկավար նշում է Սաիդ Շամիլին (տես *Лев Соцков. Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера, с. 1*):

¹⁶⁹ Տես *Георгий Мамулия, указ. раб.*:

¹⁷⁰ Там же.

* Խոսքը ԱՂՀ նախկին ռազմական նախարար, հետագայում ԱՂՀ կառավարության կողմից «Ղարաբաղի և Զանգեզուրի զեներալ-նահանգապետ» նշանակված Խոսրովի Սուլթանովի մասին է:

գաղթականներին: Այդ գումարը հատկացվել է Կարաբեքիր փաշայի կարգադրությամբ: Վային հրահանգ է ստացել գաղթականների նկատմամբ լինել ավելի ուշադիր և բարյացակամ: Բացի վերը նշված գումարից, Կարաբեքիրի հրահանգով նա (վային, – *Մ.Մ.*) 200 լիրա է տվել Սաիդ Շամիլի գործակալ չորս չեչենների և, հետագայում, լրացուցիչ ևս 800 լիրա հատկացրել նրանց: Նրանց թվում է նաև Չերգիզովը*, որն ստացել է 50 լիրա: Չերգիզովի հետ խոսակցության ժամանակ վային ասել է, որ մահմեդականների համար լավ ժամանակներն են գալիս, և կգա այն պահը, երբ կովկասյան մահմեդականները կզգան դա»¹⁷¹:

1921 թ. Ստամբուլում ստեղծվեց «Հյուսիսային Կովկասի լեոնական ժողովուրդների ազատագրման ազգային կոմիտե (Национальный комитет освобождения горских народов Северного Кавказа)», որը բաժանվեց երկու մասի՝ «Հյուսիսային Կովկասի լեոնական ժողովուրդների ազատագրման կոմիտեի (Комитет освобождения горских народов Северного Кавказа – КОГНСК)» և «Լեոնական միապետական կենտրոնի (Горский монархический центр – ГМЦ)»: Վերջինիս նախագահ ընտրվեց Բեթա Խաբանը, իսկ ղեկավար կազմում էին իշխան Տեմբոթ Բեկովիչ-Չերկասկին, չերքեզներ Սուլթան Բեկեչ-Գիրեյը (Բլըչ Սուլթան-Գիրեյ) և ՈԻլուզայը, դադստանցի Միխայիլ Խալիլովը (Միքայել Խալիլ փաշա) և ուրիշներ¹⁷²: Կոմիտեն կապեր էր պահպանում Ֆրանսիայում գործող Բարձրագույն միապետական միության հետ¹⁷³, ինչպես նաև Անատոլիայում գտնվող սպիտակզվարդիական լեոնականների առաջնորդների հետ:

* Չերգիզովը սպիտակզվարդիական լեոնականներից էր, եղել է Տրապիզոնում ռուսական հյուպատոսության գաղտնի գործակալ (տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 424):

¹⁷¹ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 422:

¹⁷² Տես А. В. Казаков. Возникновение северокавказской политической эмиграции после Гражданской войны в России (www.gazavat.ru/history3.php?rub=17&art=128):

¹⁷³ Там же.

«Հյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների ազատագրման ազգային կոմիտեի» պատակտման պատճառ դարձավ այն, որ Խարանի գլխավորությամբ լեռնական-միապետականների կողմից առաջ քաշվեց նախագիծ, որն առաջարկում էր Վրանգելին ճանաչել որպես Ռուսաստանի կառավարիչ*։ Քանի որ լեռնական առաջնորդների քաղաքացիական մասը դեմ էր Վրանգելին ու միասնական Ռուսաստանի ճանաչմանը, ապա և լեռնական վտարանդիությունը բաժանվեց երկու թևի, թեև Վրանգելի կողմնակից միապետականները սակավաթիվ էին և չունեին էական ազդեցություն։

Հյուսիսային Կովկասից Թուրքիա գաղթելու ժամանակ լեռնականների ղեկավարների հիմնական մտահոգությունն այն էր, որ լեռնցիների զինվորական զանգվածը չցրվի ու դադարի որպես միավորված ու կայուն ռազմական միավոր գոյություն ունենալուց, այլ հնարավորինս կենտրոնացած լինի մեկ տեղում, նախկին զինված ջոկատները վերակազմավորվեն ու պատրաստ լինեն գաղտնի անցնելու Կովկաս՝ այնտեղ խորհրդային կարգերի դեմ պայքարը շարունակելու համար։ Ինչպես նշում էր Ռուսաստանի հյուսիսարևմտյանը, «Մամսունի շրջանի չերքեզական գյուղերը լի են Կովկասից գաղթաց լեռնականներով»¹⁷⁴։ Այսպես, երբ Հյուսիսային Կովկասից Տրապիզոն գաղթաց չեչենները ուղևորվեցին Մամսուն, մտադրություն ունենալով բնակվելու այդ շրջանի չեչենական գյուղերում, այնտեղ ժամանեց Սաիդ Շամիլը և ընտրեց մի քանի ազդեցիկ արքայազների՝ «մոտ ժամանակներս Կովկաս քարոզչության ուղարկելու նպատակով»**։

* Վրանգելը Ղրիմում եղած ժամանակ ճանաչել էր Հյուսիսային Կովկասի լեռնականների հանրապետության անկախությունը, իսկ 1920 թ. փետրվարի 8-ից մարտի 22-ը Կոստանդնուպոլսում եղած ժամանակ լեռնական-միապետականների հետ հանդիպման ընթացքում վերահաստատեց իր այդ դիրքորոշումը (տես *II. H. Врангель. Записки* (<http://militera.lib.ru/memo/russian/vrangel1/index.html>))։

¹⁷⁴ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 424։

** Նրանց թվում էր նաև ռուսական հյուսիսարևմտյան գործակալ Չերգազովը, որի շնորհիվ ռուսական իշխանությունները հնարավորություն ստացան հետևելու և տեղեկանալու Սաիդ Շամիլի ու թուրքական իշխանությունների՝ հանձնի Բյազիմ

Սաիդ Շամիլը Մամսունից Բյազիմ Կարաբեքիրի հրավերով 1921 թ. օգոստոսին մեկնեց Կարս, որտեղ տեղեկություններ հաղորդեց Կովկասում տիրող իրավիճակի մասին և առաջարկեց Հյուսիսային Կովկասի լեռնականների շրջանում ապստամբությունների կազմակերպման ծրագիր¹⁷⁵։ Բյազիմ Կարաբեքիրը ներկայացված ծրագրին հավանություն տվեց, սակայն նշեց, որ իր կարծիքով դեռ վաղ է ձեռնամուխ լինել դրա իրականացմանը¹⁷⁶։ Կարաբեքիրը նաև հայտնեց, որ Խորհրդային Ռուսաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ունեցող հարաբերությունների հաշվառմամբ համարում է, որ Կարսում Սաիդ Շամիլի ներկայությունը աննպատակահարմար է, և նրան առաջարկեց տեղափոխվել Էրզրում¹⁷⁷։ Վեց օր Կարսում հյուրընկալվելուց հետո Սաիդ Շամիլը մի խումբ լեռնականների հետ մեկնեց Էրզրում, որտեղ մնաց երկու ամիս՝ յուրաքանչյուր ամսվա համար թուրքական իշխանություններից ստանալով 700 լիրա ռոճիկ¹⁷⁸։ Երկու ամիս անց նա, համոզվելով, որ իր առաջարկությունների վերաբերյալ Կարաբեքիրից որևէ պատասխան չի ստանա, նամակ գրեց նրան, որում բողոք հայտնեց իր վիճակի անորոշության համար և խնդրեց պատասխանել Հյուսիսային Կովկասում հակախորհրդային ապստամբություններ կազմակերպելու իր առաջարկություններին՝ սպառնալով հակառակ դեպքում մեկնել Ստամբուլ¹⁷⁹։

Կարաբեքիրի միջև տեղի ունեցող շփումների և Հյուսիսային Կովկասում թուրքերի ծրագրվող գործողությունների մասին։ Չերգազովը ինքնակամ ներկայացել էր Տրապիզոնում ՌԽՂՍՀ հյուսիսարևմտյան, որտեղից ուղարկվել Կովկաս և դերակատարություն ունեցել այնտեղ գործող թուրքական լրտեսական ցանցի բացահայտման գործում (տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 424)։

¹⁷⁵ Տես նույն տեղում։

¹⁷⁶ Տես նույն տեղում, թ. 430։

¹⁷⁷ Տես նույն տեղում։

¹⁷⁸ Տես նույն տեղում։

¹⁷⁹ Տես նույն տեղում։

Սաիդ Շամիլի պահվածքում ուշագրավ է հետևյալ հանգամանքը: Քաջ զիտակցելով, որ Անտանտի պետությունները նույնպես ցանկանում են Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարում օգտագործել լեռնական վտարանդիությանը, նա սպառնաց մեկնել այն ժամանակ Անտանտի վերահսկողության տակ գտնվող Կոստանդնուպոլիս, որտեղ ֆրանսիական և անգլիական աջակցությամբ ստեղծվում էին մի շարք ռուսական ու լեռնական վտարանդիական քաղաքական կոմիտեներ: Այդ կազմակերպություններից մի քանիսը իրական ռազմական ուժ էին ներկայացնում և գործնական քայլեր էին ձեռնարկում Հյուսիսային Կովկաս վերադառնալու ուղղությամբ: Դրանցից էր 1921 թ. Բուլղարիայում ստեղծված «Գեներալ Պոկրովսկու կազմակերպությունը (Организация генерала Покровского)», որի ներկայացուցիչն էր Ստամբուլում չերքեզ գնդապետ Քյուչուք Ռիլուզայնը*։ Սակայն Կովկասում այդ կազմակերպության ջոկատների ավիանման փորձերն անհաջողության մատնվեցին, քանի որ դրանցից մեկը ցրվեց դեռ Թուրքիայի տարածքում՝ Տրապիզոնի շրջանում, իսկ մյուսը ավիանումից հետո ծուղակի մեջ ընկավ և ոչնչացվեց¹⁸⁰:

Հատկանշական է Քյազիմ Կարաբեքիրի մոտեցումը՝ նյութական ու քաղաքական աջակցության շնորհիվ պահպանել լեռնականների ներուժը և Հյուսիսային Կովկասում հակաբոլշևիկյան խռովություններ կազմակերպելու հնարավորությունները: Իսկ դրա համար անհրաժեշտ էր կանխել նրանց ուժերի ջլատումը և չերքեզական գյուղերով ցրումը՝ նախկինում գաղթածների զանգվածների հետ ձուլմամբ: Այսպիսով՝ Քյազիմ Կարաբեքիրի գործունեությունն արտահայտում էր թուրքական

քաղաքականությունը՝ Հյուսիսային Կովկասից նախկինում գաղթած և նոր քաղաքական վտարանդիության տարբերակմամբ: Եթե առաջիններն ընկալվում էին որպես պարզապես մահմեդականներ, թուրք հասարակության բաղկացուցիչ մաս, ապա նոր քաղաքական վտարանդիությունն այն ժամանակ ընկալվում էր որպես մի օտար զանգված, որն անջատ էր «թուրք չերքեզներից», և որի ներուժը հարկավոր էր պահպանել Թուրքիայի արտաքին քաղաքականության շահերի առաջնդման համար: Դրա հետ մեկտեղ՝ 1919–1922 թթ. քաղաքական իրավիճակը բարենպաստ չէր Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունները սրելու համար, քանի որ այդ շրջանում ոչ միայն Խորհրդային Ռուսաստանը աջակցություն էր ցուցաբերում թուրք ազգայնականներին, այլև քեմալականները Անտանտի հետ բանակցություններում որպես կարևոր խաղաքարտ օգտագործում էին իրենց կապերը բոլշևիկների հետ: Այդպես եղավ, օրինակ, 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 12-ը Լոնդոնի խորհրդածոդովում¹⁸¹: 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի պայմանագիրը ևս կարևոր դեր խաղաց մի քանի օր անց՝ հոկտեմբերի 20-ին, Ֆրանսիայի հետ պայմանագրի ստորագրման գործում¹⁸²:

Ի պատասխան Սաիդ Շամիլի նամակին՝ Քյազիմ Կարաբեքիրը էրզրում գործուղեց Ռուշադ բեյին (հետագայում՝ փաշա), որը նրա անունից Սաիդ Շամիլին հավաստիացրեց, որ «թուրքերը չեն մոռացել կովկասյան մահմեդականներին, սակայն այդ միությունը կախված է միջազգային իրավիճակից, և Հունաստանի հետ պատերազմը խոչընդոտում է Թուրքիայի կողմից բոլշևիկյան լծի տակ տառապող կովկասյան մահմեդականներին ակտիվ օգնության ցուցաբերմանը: Երբ Թուրքիան, պատռելով Սևրի դաշնագիրը, խաղաղություն կկնքի Անտանտի պետությունների հետ և կավարտի հույների դեմ մղվող պատերազմը, ապա անպայման կպատերազմի բոլշևիկների դեմ

* Քաղաքացիական պատերազմի տարիներին եղել է Չերքեզական հեծյալ գնդի հրամանատար:

¹⁸⁰ Տե՛ս *А. В. Казаков*, указ. раб.: Կ. Լ. Պոկրովսկու և նրա կազմակերպության գործունեության մասին ավելի հանգամանորեն տես նաև *В. Леонтович*, Генерал Виктор Леонидович Покровский. Мюнхен, «Молодая Россия», 1923, ինչպես նաև «Русские без Отечества: очерки антибольшевистской эмиграции 20-40-х гг». «Новый исторический вестник», 2002, N2 (2) (www.nivestnik.ru/2002-2/10):

¹⁸¹ Տե՛ս «Türk Dış Politikası», c. 1, s. 161:

¹⁸² *А. g. e.*, s. 175:

հանուն մահմեդական Արևելքի փրկության»¹⁸³: Սաիդ Շամիին հանձնված նամակում Կարաբեքիրը «նրբանկատորեն թույլ է տալիս Սաիդ Շամիին մեկնել Կոստանդնուպոլիս և խորհուրդ է տալիս Կովկասի հարցում Ֆրանսիայի դիրքորոշումը ճշտելու նպատակով ուղևորվել Փարիզ՝ Ֆրանսիայում Անկարայի կառավարության դեսպան, նախկին արտաքին գործերի նախարար Բեքիր Սամիի մոտ»¹⁸⁴:

Հիշատակված նամակից կարելի է եզրակացնել, որ՝

1. սկսած 1921 թվականից քեմալական իշխանությունները բոլշևիկների դեմ պայքարում Անտանտի պետությունների հետ համատեղ փնտրում էին հյուսիսկովկասյան գործոնի օգտագործման ուղիներ և նրանց ներկայացնում, թե ինչ կարևոր դերակատարություն կարող է ունենալ Թուրքիան Կովկասի նման կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում,
2. Հյուսիսային Կովկասի անկախության հարցով Անտանտի պետությունների հետ Բեքիր Սամիի շփումները, որոնք հարուցեցին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի դժգոհությունը, փաստորեն տեղի էին ունեցել ոչ թե Սամիի նախաձեռնությամբ, ինչպես հետագայում ներկայացվեց, այլ խրախուսվել էին Անկարայի կառավարության կողմից, մասնավորապես՝ Սաիդ Շամիլը Փարիզ է մեկնել Քյազիմ Կարաբեքիրի անմիջական ցուցումով:

Նախքան Ստամբուլ մեկնելը Սաիդ Շամիլը, վստահ լինելով, որ մոտ ժամանակներում Հյուսիսային Կովկասում Թուրքիայի օգնությամբ նոր ապստամբություն է բռնկվելու, իր գործակալներին՝ ուղարկեց տարածաշրջան՝ հրահանգելով բնակչությանը ամենուրեք

նախապատրաստել մոտակա թուրք-բոլշևիկյան անխուսափելի պատերազմին և տարածել լուրեր թուրքական բանակի անպարտելիության մասին: Հյուսիսային Կովկասում Սաիդ Շամիլի գործակալները պետք է ջոկատներ կազմեին, որոնց պարտականությունն էր ռուսական զորքերի առաջխաղացումը կանխելու համար քանդել կամ անանցանելի դարձնել ճանապարհները, ապստամբների համար լեռնային աուլներում ստեղծել պարենամթերքի պահուստներ¹⁸⁵: Խժողությունների ակտիվացման և ապստամբության նախապատրաստման նպատակով նախատեսված էր 1921 թ. դեկտեմբեր ամսից օրինական և անօրինական ճանապարհով Հյուսիսային Կովկաս անցկացնել մեծ թվով թուրք գործակալներ¹⁸⁶:

Քեմալական իշխանությունների համար Սաիդ Շամիլի Փարիզ «գործուղումը» կարևոր էր նաև հետևյալ տեսակետից: 1920 թվականից Փարիզը դարձել էր ռուսաստանյան, այդ թվում նաև կովկասյան, քաղաքական վտարանդիության հիմնական կենտրոններից մեկը, որտեղ ֆրանսիական և անգլիական իշխանությունների հովանավորությամբ և աջակցությամբ ստեղծվում էին հակաբոլշևիկյան վտարանդիական քաղաքական կազմակերպություններ, որոնք անմիջական կապ էին հաստատել Թուրքիայում գործող նման կառույցների ու Անատոլիայում և Ստամբուլում ապաստանած լեռնականների առաջնորդների հետ:

1921 թ. մայիսի 8-ին Փարիզում տեղի ունեցավ կովկասյան վտարանդիների առաջին խորհրդակցությունը, որին մասնակցեցին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները՝ Խորհրդակցության ժամանակ քննարկվեցին Կովկասում խորհրդային կարգերի տապալման և ընդհանուր

¹⁸⁵ Տես նույն տեղում, թ. 458:

¹⁸⁶ Տես նույն տեղում:

* Հյուսիսային Կովկասը ներկայացնում էր Աբդուլմեջիթ Չերմուկը:

¹⁸³ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 437:

¹⁸⁴ Տես նույն տեղում:

կովկասյան բլոկի ստեղծման խնդիրները¹⁸⁷: 1921 թ. հունիսի 10-ին խորհրդակցության մասնակիցները նախնական համաձայնության եկան բոլշևիզմի դեմ միասնական ճակատով հանդես գալու և Կովկասյան հանրապետությունների խորհուրդ ստեղծելու հարցում¹⁸⁸: Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության առաջնորդներից մեկը՝ Հայդար Բամատը, խորհրդակցության ընդունած որոշումները մեկնաբանեց հետևյալ կերպ. «1921 թ. Փարիզում հավաքված Կովկասի ազգային կառավարություններն ընդունեցին կովկասյան միության սկզբունքը և դրեցին ապագա համադաշնության հիմքը: Ստորագրվեցին այդ որոշմանը վերաբերող տարբեր փաստաթղթեր: Ցավոք սրտի, շատ շուտով պարզվեց, որ ոչ բոլոր կովկասյան կազմակերպություններն էին իրենց ձգտումներում նույնքան անկեղծ, և ոչ բոլորն էին ձգտում այդ զաղափարի իրականացմանը: Ընդունված որոշումները մնացին որպես մեռած տառ»¹⁸⁹:

1921 թ. հոկտեմբերի 2-ին Ստամբուլում հիմնադրվեց «Կովկասյան հանրապետությունների միասնական տեղեկատվական բյուրո (Единое информационное бюро Кавказских республик)», որին հանձնարարվեց աշխատանք տանել հետևյալ ուղղություններով. կովկասյան հանրապետությունների անկախության ճանաչում, բոլոր կովկասյան ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչում, պայքարի ժողովրդավարական հիմքերի ստեղծում, ժողովրդի իշխանության հաստատում, խոշոր հողային սեփականատիրության ոչնչացում, հողի հանձնում գյուղացիների սեփականությանը¹⁹⁰: Թվարկված նպատակներից պարզ է դառնում, որ կառույցն իրականում

¹⁸⁷ Shtu *Николай Джавахишвили*. Вместе против большевизма (www.kavkazweb.net/forum/index.php?showtopic=48686):

¹⁸⁸ Там же.

¹⁸⁹ Shtu *Гайдар Баммат*. О прекращении сотрудничества Национальной делегацией Республики Северного Кавказа с Грузинскими официальными учреждениями в Париже. «Кавказ», N 3, 1934, Париж:

¹⁹⁰ Shtu *Николай Джавахишвили*, указ. раб.:

ոչ թե գործնական, այլ ավելի շատ քարոզչական, պոպուլիստական բնույթի էր և չէր կարող վերածվել հակախորհրդային պայքարի լուրջ հարթակի:

Կարճ ժամանակ անց Փարիզյան կառույցի ստամբուլյան մասնաճյուղի հիմնադրման մասին տեղեկացավ Տրապիզոնում խորհրդային Ռուսաստանի հյուպատոսությունը, որն Անկարայում դեսպանություն՝ Միխայլովին, 1921 թ. դեկտեմբերի 13-ին ուղարկված հեռագրում նշեց. «Տեղեկություններ են ստացվել Փարիզում Կովկասյան դաշնության միասնական կոմիտե՝ ստեղծելու մասին: Այն ղեկավարում են Հայդար Բամատովը, Թոփչիբաշևը, Չերմուրը, Շեկոտչևը, Ջուբելին և մի քանի այքի ընկնող մենչևիկներ: Կոստանդնուպոլսում այդ Կոմիտեի ներկայացուցիչներն են Ալիխան Կանտեմիրը, Քոջուզելին և Չեքեշվիլին»¹⁹¹:

1921 թ. նոյեմբերի 9-ին Փարիզում տեղի ունեցավ կովկասյան վտարանդիների նոր խորհրդակցություն, որից հետո դրա վրացի մասնակիցներն սկսեցին Վրաստանում նախապատրաստել հակախորհրդային ապստամբություն:

Իրադարձությունների նման զարգացման պայմաններում թուրքական իշխանությունները հնարավորություն ստացան Մաիդ Շամիլի միջոցով կապ հաստատելու արտասահմանում գործող կովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունների հետ, մշտապես տեղեկություններ հավաքելու դրանց գործունեության և Անտանտի կողմից օգտագործման ծրագրերի մասին: Մյուս կողմից՝ Մաիդ Շամիլի համար ստեղծվեցին լուրջ նախադրյալներ դառնալու նաև Փարիզում գործող կովկասյան վտարանդիության ղեկավարներից մեկը:

* Объединенный Комитет Кавказской Федерации:

¹⁹¹ Shtu АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 567:

Ընդհանուր առմամբ, Հյուսիսային Կովկասում Սաիդ Շամիլի գործունեությունը և հակաբոլշևիկյան պայքարում նրա դերը** գնահատելիս ակներև է դառնում, որ նա ձգտել է համախմբող ու միավորիչ դեր խաղալու՝ առանց հաշվի առնելու քաղաքական իրողության փոփոխությունը: Միևնույն ժամանակ, Սաիդ Շամիլի ձախողման մեջ մեղքի բաժին ունեն նաև մյուս լեռնական առաջնորդները, որոնք նույնպես զերագնահատեցին կրոնական գործոնի միավորիչ հնարավորությունները*:

Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության ղեկավարները պետության անկման հիմնական պատճառ էին համարում ոչ այնքան Դենիկինի բանակի հարձակումը կամ բոլշևիկների գործունեությունը, որոնց դիրքերը տարածաշրջանում դեռ այնքան էլ ուժեղ չէին, որքան ազգային միասնություն և ընդհանուր ինքնություն չլինելու հանգամանքը¹⁹²: Դրա, ինչպես նաև տարբեր մակարդակների ազգային ինքնագիտակցություն ունենալու հետևանքով հյուսիսկովկասյան ժողովուրդները, անգամ իրավական տեսակետից միասնական պետության կազմում միավորված լինելու պարագայում, իրականում գործում էին իրարից անջատ և մի շարք կենսական, օրինակ՝ կազակների տեղահանման անհրաժեշտության, հարցերում հանդես էին գալիս իրարամերժ դիրքերից: Նույնիսկ տեղի

** Ըն Սոցկոմը գրում է, որ 1921 թ. հոկտեմբերին Կարսում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ խորհրդային ներկայացուցիչներն ապարդյուն փորձ էին արել համոզելու Ք. Կարաբեքիրին, որ իրենց հանձնի Սաիդ Շամիլին (տես *Лев Соцков*, указ. раб., с. 1): Կարսի խորհրդածոդովին վերաբերող՝ Հայաստանի Ազգային արխիվի 113 ֆոնդում պահվող նամակագրության և փաստաթղթերի մեջ նման փորձ որևէ կերպ չի հիշատակվում, նույնիսկ Գանեսկին, ներկայացնելով Ք. Կարաբեքիրի հետ ունեցած իր երկու առանձնագրույցները, չի նշում, թե առաջ է քաշել նման հարց (տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23):

* Ազգությունների հարցերով ժողկոմ Բ. Ստալինը Վլադիկավկազում 1921 թ. հունվարի 20-ին հայտարարեց, որ խորհրդային կառավարությունը՝ խորհրդային իշխանության ճանաչման և ապստամբության դադարեցման պայմանով ներում է խոստանում Սաիդ Շամիլի ապստամբության բոլոր մասնակիցներին: Այս հայտարարությունն զգալի դեր ունեցավ ապստամբության մարման գործում (տես *А. Авторханов*, указ. раб., с. 14):

¹⁹² Տես *Pşimaho Kosok*, a. g. e., s. 39:

չունեցավ Հյուսիսային Կովկասի ուղղությամբ հարձակվող Դենիկինի բանակի դեմ տարբեր ազգերի գորբերի համախմբում: Այսպես, երբ Դենիկինի բանակի առաջխաղացումը փորձեցին կասեցնել ինգուշական գորամիավորումները, Գոցկի կառավարությունը թեև նրանց օգնություն խոստացավ, բայց որևէ գործնական քայլ չձեռնարկեց¹⁹³:

Ազգային և ազգամիջյան միասնություն չլինելու պայմաններում մի շարք լեռնական քաղաքական գործիչների և ղեկավարների կողմից լեզենդար իմամ Շամիլի շատավրին հրավիրելու գաղափարի առաջ քաշումը նպատակ էր հետապնդում չձևավորված միասնականությունը փոխարինելու նրա թոռան շուրջը համախմբմամբ: Նրանց կարծիքով՝ Սաիդ Շամիլի անձը պետք է վկայեր, որ Թուրքիան սատարում է լեռնականների պայքարին:

Մի շարք ռուս պատմաբաններ առանձնացնում են Սաիդ Շամիլի դերը Նեջմեթին Գոտցինսկու ապստամբության մեջ, նույնիսկ համարում են, թե Գոտցինսկու ապստամբությունն «իրականում Սաիդ Շամիլի ապստամբությունն էր, քանի որ ապստամբությունում նրա դերն զգալի էր, իսկ Կովկասում Դենիկինի եղած ժամանակ լեռնականների նկատմամբ Ն. Գոտցինսկու և Ա. Ալիխանովի վարած դավաճանական քաղաքականության պատճառով ո՛չ բնակչության լայն զանգվածներում, ո՛չ էլ ապստամբների շրջանում նրանք բավական հեղինակություն չէին վայելում»¹⁹⁴: Հյուսիսային Կովկասում հակաբոլշևիկյան պայքարում Սաիդ Շամիլի հետ են կապում նաև կրոնական գործոնի ակտիվացումը*:

¹⁹³ Տես *Wassan-Giray Cabağı*, a. g. e., s. 97:

¹⁹⁴ Տես *Елена Жуликова*. Повстанческое движение на Северном Кавказе в 1920–1925 годах. Документальные публикации и новейшая отечественная историография (http://scepsis.ru/library/id_1060.html):

* Այսպես, ռուս պատմաբան Ելենա Շուպիկովան նշում է, թե «ճշմարտություն է, որ Չեչնիայում Գոտցինսկու խռովությունը իրականում աչքի էր ընկնում կրոնական մոլեռանդությամբ: Դա մասամբ բացատրվում է այն հանգամանքով, որ այն ղեկավարեց Շամիլի թոռ Սաիդ բեյը, որն անմիջականորեն ղեկավարում էր ռազմական գործողությունները» (տես *Елена Жуликова*, указ. раб.):

Այս համատեքստում, սակայն, կարևոր է այն փաստը, որ ոչ բոլոր լեռնական առաջնորդները սատարեցին Սաիդ Շամիլին: Լեռնականների հանրապետության մի շարք նախկին ղեկավարներ՝ հանձինս Բամատի, Ցալիկովի և ուրիշների, 1920 թ. հուլիսին Թբիլիսիում հանդիպելով Սաիդ Շամիլի հետ և տեղեկանալով հակաբոլշևիկյան ապստամբությունն արձագանքելու նրա նպատակներին, նշեցին նման ծրագրի ոչ խելամիտ լինելը, քանի որ խորհրդային իշխանությունները Հյուսիսային Կովկասում ամուր հիմքեր ունեն¹⁹⁵: Դրանից հետո Սաիդ Շամիլը շարունակեց խորհրդակցել միայն Հայդար Բամատի հետ, իսկ նպատակների հարցում ստիպված եղավ հրաժարվել իր նախկին հավակնոտ ծրագրերից ու միանալ Նեջմեթին Գոտցինսկուն¹⁹⁶: Թբիլիսիում Սաիդ Շամիլը հանդիպեց նաև Վրաստանի կառավարության ու ֆրանսիական ներկայացուցչության անդամների հետ, բայց չնայած իրենց խոստումներին՝ ապստամբության ժամանակ ո՛չ վրացիները, ո՛չ էլ ֆրանսիացիները նրան որևէ օգնություն ցույց չտվեցին¹⁹⁷:

Բնութագրելով Հյուսիսային Կովկասում Սաիդ Շամիլի ծավալած գործունեությունը՝ Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի հասարակական գործիչ Իզեթ Այդեմիրը գրել է. «Սաիդ Շամիլը ավելի շատ ուշադրություն էր դարձնում ռազմական գործողությունների ծրագրմանը, քան քաղաքականությանը: Ուստի և, ամենևին չկամենալով, որ Հյուսիսային Կովկասում իր հայրենակիցները ռուսների կողմից կոտորվեն, դարձավ դրա պատճառը: Իր պատիվ՝ իմամ Շամիլի փառքի շնորհիվ իրեն վերագրեց Հյուսիսային Կովկասում շատ մեծ կարևորություն և դրանով վնաս պատճառեց չերթեզներին»¹⁹⁸:

¹⁹⁵ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 2:

¹⁹⁶ Там же.

¹⁹⁷ Там же.

¹⁹⁸ Տե՛ս *İzzet Aydemir*, a.g.e., s. 196:

Հյուսիսային Կովկասում իմամ Շամիլի թոռան գործունեությունը գնահատելիս կարևոր է նաև հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. 1920–1940-ական թթ. Սաիդ Շամիլը Թուրքիայում ու Եվրոպայում ապաստանած լեռնական քաղաքական վտարանդիության ազդեցիկ և աչքի ընկնող գործիչներից էր, ուստի և հայտնվել էր լեհական, գերմանական ու խորհրդային հետախուզությունների ուշադրության կենտրոնում: 1926 թ. թուրքական իշխանությունների աջակցությամբ Սաիդ Շամիլը առանցքային դերակատարություն ունեցավ Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության (ԿԼԾԿ) ստեղծման գործում,
2. 1921–1922 թթ. Սաիդ Շամիլը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի դառնար Թուրքիայում ապաստան գտած լեռնական և ադրբեջանական քաղաքական վտարանդիության ղեկավար*, ինչպես նաև թուրքական իշխանությունների և վտարանդիության միջև կապող օղակ: Սակայն նրա մտադրությունը չիրականացավ ինչպես քաղաքական վտարանդիության ղեկավարների ընդդիմության, այնպես էլ թուրքական իշխանությունների դիքթորոշման հետևանքով:

Թեև 1921–1922 թթ. թուրքական իշխանություններին ձեռնառու էր մահմեդական հակաբոլշևիկյան վտարանդիության միասնական քաղաքական կառույցների ձևավորումը, սակայն՝ առանց իշխանությունների կողմից ճանաչման ու հովանավորության, քանի որ այդ դեպքում կսահմանափակվեր նրա քաղաքական առաջնորդների միջև տարաձայնություններն օգտագործելու և վերահսկողության ավելի արդյունավետ համակարգ ստեղծելու հնարավորությունը: Ավելին. ադրբեջանական ու լեռնական վտարանդիության միջև եղած տարաձայնությունների պատճառով երկար կյանք չունեցավ 1922 թ. վերջերին մի խումբ ադրբեջանցի ու լեռնցի վտարանդի գործիչների

* Նման դիրքի էր հավակնում նաև Խոսրով-բեկ Սուլթանովը:

ջանքերով հիմնադրված «Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի լեռնականների ազատագրման կոմիտեն (Комитет освобождения Азербайджана и горцев Северного Кавказа)», լեռնականները դուրս եկան նրա կազմից՝ ստեղծելով երկու նոր կազմակերպություն: Դրանք էին «Հյուսիսային Կովկասի միավորված լեռնականների խորհուրդը (Совет об'единенных горцев Северного Кавказа)», որը ղեկավարում էր գեներալ Խարանը, իսկ ղեկավար խորհրդում ընդգրկված էին ցարական ու սպիտակգլարդիական զենեարևների և գնդապետների կոչումներ ունեցող Բարձրաստիճան սպաներ, ինչպիսի էին Բեկովիչ-Չերկասկին, Խալիլովը, Ուլուգայը, Մուլթան Բլըչ-Գիրեյը¹⁹⁹, մյուսը «Լեռնական կոմիտեն (Горский комитет)» էր, որը միավորում էր Լեռնականների հանրապետության նախկին ղեկավար քաղաքացիական անձանց, ինչպիսիք էին Պշեմախո Կոսոբը, Վասան-Գիրեյ Ջաբաղին (Ջաբաղին), Ահմեդ Ցալիկովը և ուրիշներ²⁰⁰: Այս երկու կազմակերպությունների գոյությունը և տարբեր ղեկավար կազմերը վկայում են, որ տարածայնություններ կային նաև Լեռնականների հանրապետության նախկին իշխանության ռազմական ու քաղաքացիական թևերի միջև: Դրանցից հիմնականն այն էր, որ հակախորհրդային պայքարի ձևերի և այլ ազգերի վտարանդիական կազմակերպությունների հետ համագործակցության նպատակահարմարության հարցում նրանք ունեին տարբեր դիրքորոշում: Հյուսիսկովկասյան և ադրբեջանական վտարանդիության շրջանում տիրող իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև թուրքական իշխանությունների դիրքորոշումը Մաիդ Շամիլին հնարավորություն չտվեցին իրականացնելու իր նպատակները, թեև նա մինչև 1922 թ. վերջը չհրաժարվեց ադրբեջանալեռնական քաղաքական վտարանդիության առաջնորդ դառնալու ձգտումից:

¹⁹⁹ Տե՛ս «История Северной Осетии. XX век». М., «Наука», 2003, с. 299:

²⁰⁰ Там же.

1921 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Տրապիզոնի շրջանում լեռնականների կազմակերպությունների ստեղծմանը զուգահեռաբար տեղի էր ունենում նաև ադրբեջանական վտարանդիության քաղաքական կառույցների կազմավորում: Դրանք մինչև 1922 թ. վերջն ունեին համատեղ լեռնական-ադրբեջանական բնույթ: Մասնավորապես՝ թուրքական իշխանությունների՝ հանձին Ք. Կարաբեքիրի հավանությամբ այդ երկու վտարանդիության ղեկավարները ձեռնամուխ եղան միացյալ հեծելազորային գնդի կազմավորմանը: Տրապիզոնի ադրբեջանական քաղաքական վտարանդիության ղեկավար Մուլթանովի²⁰¹ եղբայրն այդ ժամանակ աշխատում էր Անկարայում Խորհրդային Ադրբեջանի ղիվանագիտական ներկայացուցչությունում*, և եղբայրները գտնվում էին նամակագրական կապի մեջ: Այդ պատճառով Տրապիզոնում ռուսական հյուպատոս Գոլուբը 1921 թ. դեկտեմբերի 9-ին Անկարայում ղեկավարություն ուղղարկած նամակում առաջարկեց պարտադիր կերպով ստուգել ադրբեջանական ներկայացուցչության անդամների՝ Կովկաս ուղարկվող նամակները²⁰²:

Տրապիզոնի հյուպատոսության տեղեկություններով՝ այդ քաղաքում էին գտնվում նախկին լեռնական ու ադրբեջանական

²⁰¹ Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539: Նմանատիպ գործունեություն վարելու համար Էրզրում էր ուղղարկվել ղոկտոր Ադալը՝ որպես «ավելի մեծ հեղինակություն վայելող անձ» (տե՛ս նույն տեղում, թ. 602): Վերջինս 1921 թ. նոյեմբերի 8-ին հանդիպեց Քյազիմ Կարաբեքիրի հետ (տե՛ս *Kazım Karabekir. Günlükler (1906-1948)*, 1 Cilt. İstanbul, YKY, 2009, s. 759):

* Տրապիզոնի հյուպատոսության նամակագրությունում նա նշված է որպես ռազմական կցորդ. ընդ որում, կասկածանքով՝ «կարծես թե ռազմական կցորդ (кажется, военным аташе)» ձևակերպմամբ (տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539): Իրականում Անկարայում Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության պաշտոնացանկում որպես ռազմական կցորդ նշված է Ասքեր Ասքերովը, իսկ Մուսա Մուլթանովն զբաղեցնում էր առևտրային կցորդի պաշտոն (տե՛ս *Betül Aslan. Türkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov (1920-1923)*. İstanbul, Analiz Basım Yayın, 2004, s. 175-176):

²⁰² Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539:

կառավարությունների մի շարք անդամներ, «որոնցից ներկայումս իրենց ակտիվությամբ աչքի են ընկնում մուսավաթական, Ադրբեջանի խորհրդարանի անդամ, ազգությամբ չեչեն դոկտոր Մուլթանովը», դոկտոր Աղանը, Դադասանի հանրապետության նախկին ռազմական նախարար գնդապետ Մուսալանը, մուսավաթականներ Իսկանդերն ու Շամխորսկին»²⁰³:

Նշված անձինք Վրաստանում Կարմիր բանակի դեմ մարտերին մասնակցած և Տրապիզոն տեղափոխվելուց հետո ցրված լեռնական-ադրբեջանական ջոկատի փոխարեն ստեղծեցին «Փախստականների կոմիտե», որը կապեր հաստատեց Ստամբուլի լեռնական կազմակերպությունների և Քյազիմ Կարաբեքիրի շտաբի հետ²⁰⁴: «Այս կոմիտեն ներկայումս վարում է ակտիվ գործունեություն մոտ ապագայում Կովկասում ապստամբություններ կազմակերպելու ուղղությամբ և, ամենայն հավանականությամբ, գործում է ըստ Կարսից ու Կոստանդնուպոլսից ստացվող հրահանգների ու հանձնարարականների: Եղած տեղեկությունները վկայում են, որ թուրքական իշխանությունները շատ դեպքերում փախստականներին օգնում են ոչ պաշտոնապես, յուրաքանչյուրին սննդի համար օրական 70 պիաստր են հասկացնում, շատերը ծառայողական բնակարաններ են ստանում, բացի այդ, Կոմիտեն թուրքական իշխանություններից միանվագ ստացել է 2000 լիրա, և նրան 8000 լիրա գումար է տրվել Տրապիզոնում կինեմատոգրաֆ և սպառողական կրպակ բացելու

²⁰³ Այլ աղբյուրներում նշվում է, որ դոկտոր Խոսրով-բեկ Մուլթանովն ազգությամբ բուլղեր: Այսպես. 1919 թ. հունիսի 21-ի Ղարաբաղի Հայկական ազգային խորհրդի կողմից Շուշի քաղաքում և մերձակա շրջաններում ադրբեջանական իշխանությունների ձեռնարկած հայ բնակչության կոտորածի պաշտոնական գնահատականում նշվում է: «Մուլթանովները Ղարաբաղում ծնված քրդեր են: Նրանց ընտանիքը հայտնի է որպես հայկական Ղարաբաղում բոլոր ավազակային հարձակումների կազմակերպիչ: Առանձնահատուկ աչքի են ընկնում դոկտոր Մուլթանովի եղբայրները՝ Մուլթան ու Իսքանդերը, որոնք հայկական Ղարաբաղում մի շարք հարձակումների կազմակերպիչներ են» (տես «Нагорный Карабах в 1918 – 1923 гг.», с. 271):

²⁰³ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 524:

²⁰⁴ Տես նույն տեղում, թ. 533:

Հյուսիսային Կովկասում իմամ Շամիլի թոռան գործունեությունը վնասատելիս կարևոր է նաև հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1. 1920–1940-ական թթ. Մաիդ Շամիլը Թուրքիայում ու Եվրոպայում ապաստանած լեռնական քաղաքական վտարանդիության ազդեցիկ և աչքի ընկնող գործիչներից էր, ուստի և հայտնվել էր լեռնական, գերմանական ու խորհրդային հետախուզությունների ուշադրության կենտրոնում: 1926 թ. թուրքական իշխանությունների աջակցությամբ Մաիդ Շամիլը առանցքային դերակատարություն ունեցավ Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության (ԿԼԺԿ) ստեղծման գործում,
2. 1921–1922 թթ. Մաիդ Շամիլը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի դառնար Թուրքիայում ապաստան գտած լեռնական և ադրբեջանական քաղաքական վտարանդիության ղեկավար*, ինչպես նաև թուրքական իշխանությունների և վտարանդիության միջև կապող օղակ: Սակայն նրա մտադրությունը չիրականացավ ինչպես քաղաքական վտարանդիության ղեկավարների ընդդիմության, այնպես էլ թուրքական իշխանությունների դիրքորոշման հետևանքով:

Թեև 1921–1922 թթ. թուրքական իշխանություններին ձեռնառու էր մահմեդական հակաբոլշևիկյան վտարանդիության միասնական քաղաքական կառույցների ձևավորումը, սակայն՝ առանց իշխանությունների կողմից ճանաչման ու հովանավորության, քանի որ այդ դեպքում կսահմանափակվեր նրա քաղաքական առաջնությունների միջև տարաձայնություններն օգտագործելու և վերահսկողության ավելի արդյունավետ համակարգ ստեղծելու հնարավորությունը: Ավելին. ադրբեջանական ու լեռնական վտարանդիության միջև եղած տարաձայնությունների պատճառով երկար կյանք չունեցավ 1922 թ. վերջերին մի խումբ ադրբեջանցի ու լեռնցի վտարանդի գործիչների

* Նման դիրքի էր հավակնում նաև Խոսրով-բեկ Մուլթանովը:

ջանքերով հիմնադրված «Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի լեռնականների ազատագրման կոմիտեն (Комитет освобождения Азербайджана и горцев Северного Кавказа)»։ Լեռնականները դուրս եկան նրա կազմից՝ ստեղծելով երկու նոր կազմակերպություն։ Դրանք էին «Հյուսիսային Կովկասի միավորված լեռնականների խորհուրդը (Совет об'единенных горцев Северного Кавказа)», որը ղեկավարում էր գեներալ Խաբանը, իսկ ղեկավար խորհրդում ընդգրկված էին ցարական ու սպիտակգվարդիական գեներալների և գնդապետների կոչումներ ունեցող բարձրաստիճան սպաներ, ինչպիսի էին Բեկովիչ-Չերկասկին, Խալիլովը, Ուլուգայը, Սուլթան Քլըչ-Գիրեյը¹⁹⁹, մյուսը «Լեռնական կոմիտեն (Горский комитет)» էր, որը միավորում էր Լեռնականների հանրապետության նախկին ղեկավար քաղաքացիական անձանց, ինչպիսիք էին Պշեմախո Կոսոբը, Վասան-Գիրեյ Ջարադին (Ջարադին), Ահմեդ Յախիկովը և ուրիշներ²⁰⁰։ Այս երկու կազմակերպությունների գոյությունը և տարբեր ղեկավար կազմերը վկայում են, որ տարաձայնություններ կային նաև Լեռնականների հանրապետության նախկին իշխանության ռազմական ու քաղաքացիական թևերի միջև։ Դրանցից հիմնականն այն էր, որ հակախորհրդային պայքարի ձևերի և այլ ազգերի վտարանդիական կազմակերպությունների հետ համագործակցության նպատակահարմարության հարցում նրանք ունեին տարբեր դիրքորոշում։ Հյուսիսկովկասյան և ադրբեջանական վտարանդիության շրջանում տիրող իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև թուրքական իշխանությունների դիրքորոշումը Սաիդ Շամիլին հնարավորություն չտվեցին իրականացնելու իր նպատակները, թեև նա մինչև 1922 թ. վերջը չհրաժարվեց ադրբեջանալեռնական քաղաքական վտարանդիության առաջնորդ դատնալու ձգտումից։

¹⁹⁹ Տե՛ս «История Северной Осетии. XX век». М., «Наука», 2003, с. 299:

²⁰⁰ Там же.

1921 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Տրապիզոնի շրջանում լեռնականների կազմակերպությունների ստեղծմանը զուգահեռաբար տեղի էր ունենում նաև ադրբեջանական վտարանդիության քաղաքական կառույցների կազմավորում։ Դրանք մինչև 1922 թ. վերջն ունեին համատեղ լեռնական-ադրբեջանական բնույթ։ Մասնավորապես՝ թուրքական իշխանությունների՝ հանձին Ք. Կարաբեքիրի հավանությամբ այդ երկու վտարանդիության ղեկավարները ձեռնամուխ եղան միացյալ հեծելագորային գնդի կազմավորմանը։ Տրապիզոնի ադրբեջանական քաղաքական վտարանդիության ղեկավար Սուլթանովի²⁰¹ եղբայրն այդ ժամանակ աշխատում էր Անկարայում Խորհրդային Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունում^{*}, և եղբայրները գտնվում էին նամակագրական կապի մեջ։ Այդ պատճառով Տրապիզոնում ռուսական հյուպատոս Գոլուբը 1921 թ. դեկտեմբերի 9-ին Անկարայում դեսպանություն ուղղարկած նամակում առաջարկեց պարտադիր կերպով ստուգել ադրբեջանական ներկայացուցչության անդամների՝ Կովկաս ուղարկվող նամակները²⁰²։

Տրապիզոնի հյուպատոսության տեղեկություններով՝ այդ քաղաքում էին գտնվում նախկին լեռնական ու ադրբեջանական

²⁰¹ Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539: Նմանատիպ գործունեություն վարելու համար էրգրում էր ուղղարկվել դոկտոր Ադանը՝ որպես «ավելի մեծ հեղինակություն վայելող անձ» (տես նույն տեղում, թ. 602): Վերջինս 1921 թ. նոյեմբերի 8-ին հանդիպեց Քյազիմ Կարաբեքիրի հետ (տես *Kazım Karabekir. Günlükler (1906-1948)*, 1 Cilt. İstanbul, YKY, 2009, s. 759):

^{*} Տրապիզոնի հյուպատոսության նամակագրությունում նա նշված է որպես ռազմական կցորդ, ընդ որում, կասկածանքով՝ «կարծես թե ռազմական կցորդ (кажется, военным аташе)» ձևակերպմամբ (տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539): Իրականում Անկարայում Խորհրդային Ադրբեջանի դեսպանության պաշտոնացանկում որպես ռազմական կցորդ նշված է Ասրեր Ասրերովը, իսկ Մուսա Սուլթանովն զբաղեցնում էր առևտրային կցորդի պաշտոն (տես *Betül Aslan. Türkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov (1920-1923)*. İstanbul, Analiz Basım Yayın, 2004, s. 175-176):

²⁰² Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 539:

կառավարությունների մի շարք անդամներ, «որոնցից ներկայումս իրենց ակտիվությամբ աչքի են ընկնում մուսավաթական, Ադրբեջանի խորհրդարանի անդամ, ազգությամբ չեչեն դոկտոր Սուլթանովը»²⁰³, դոկտոր Ադաևը, Դադաստանի հանրապետության նախկին ռազմական նախարար գնդապետ Մուսալանը, մուսավաթականներ Իսկանդերն ու Շամխորսկին»²⁰³:

Նշված անձինք Վրաստանում Կարմիր բանակի դեմ մարտերին մասնակցած և Տրապիզոն տեղափոխվելուց հետո ցրված լեռնական-ադրբեջանական ջոկատի փոխարեն ստեղծեցին «Փախստականների կոմիտե», որը կապեր հաստատեց Ստամբուլի լեռնական կազմակերպությունների և Քյազիմ Կարաբեքիրի շտաբի հետ²⁰⁴: «Այս կոմիտեն ներկայումս վարում է ակտիվ գործունեություն մոտ ապագայում Կովկասում ապստամբություններ կազմակերպելու ուղղությամբ և, ամենայն հավանականությամբ, գործում է ըստ Կարսից ու Կոստանդնուպոլսից ստացվող հրահանգների ու հանձնարարականների: Եղած տեղեկությունները վկայում են, որ թուրքական իշխանությունները շատ դեպքերում փախստականներին օգնում են ոչ պաշտոնապես, յուրաքանչյուրին սննդի համար օրական 70 պիաստր են հատկացնում, շատերը ծառայողական բնակարաններ են ստանում, բացի այդ, Կոմիտեն թուրքական իշխանություններից միանվագ ստացել է 2000 լիրա, և նրան 8000 լիրա գումար է տրվել Տրապիզոնում կինեմատոգրաֆ և սպառողական կրպակ բացելու

²⁰³ Այլ աղբյուրներում նշվում է, որ դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովն ազգությամբ քուրդ էր: Այսպես. 1919 թ. հունիսի 21-ի Ղարաբաղի Հայկական ազգային խորհրդի կողմից Շուշի քաղաքում և մերձակա շրջաններում ադրբեջանական իշխանությունների ձեռնարկած հայ բնակչության կոտորածի պաշտոնական գնահատականում նշվում է. «Սուլթանովները Ղարաբաղում ծնված քրդեր են: Նրանց ընտանիքը հայտնի է որպես հայկական Ղարաբաղում բոլոր ավագակային հարձակումների կազմակերպիչ: Առանձնահատուկ աչքի են ընկնում դոկտոր Սուլթանովի եղբայրները՝ Սուլթան ու Իսքենդերը, որոնք հայկական Ղարաբաղում մի շարք հարձակումների կազմակերպիչներ են» (տե՛ս «Нагорный Карабах в 1918 – 1923 гг.», с. 271):

²⁰³ Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 524:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 533:

համար: Ամբողջ եկամուտը նախատեսվում է փախստականներին օգնելու համար: Սրճարան է բացվել, որը, փախստականների վկայությամբ, ֆինանսավորվում է թուրքական հակահետախուզության կողմից: Ընդ որում, նրանք էժան գնով ստանում են թեյ, սուրճ և այլն: Փախստականները Տրապիզոնի Կոմիտեի կողմից ապահովվում են կոշիկով և հագուստով: Կան փախստականներ, որոնք ստուգապես աշխատում են թուրքական հետախուզությունում: Տրապիզոնում նրանց հիմնական աշխատանքն է հյուպատոսության աշխատողների լրտեսումը: Կոստանդնուպոլսի հետ կապը պահպանվում է կանոնավոր կերպով: Չգիտես, թե որտեղից են հայտնվում փախստականները և ուր են կորչում: Խորհրդային իշխանությունների հանդեպ փախստականների վերաբերմունքը կատաղի թշնամական և ռազմատենչ է»²⁰⁵:

Փախստականների կոմիտեի ստեղծման պատճառներից մեկը եղավ այն, որ Ստամբուլ մեկնած Սուլթանովը վերադառնալուց հետո տեսավ, որ լեռնական-ադրբեջանական ջոկատը իրականում կազմված է չեչեններից ու դադաստանցիներից, իսկ ադրբեջանցի վտարանդիներն այնտեղ աննշան փոքրամասնություն են կազմում²⁰⁶:

Սուլթանովն իր գործակալների միջոցով կապեր հաստատեց Փարիզում և Ստամբուլում գործող կովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունների հետ և ներգրավվեց Կովկասում ապստամբության նախապատրաստման աշխատանքներում: Տրապիզոնում ռուսական հյուպատոսության տեղեկությունների համաձայն՝ Սուլթանովն ակտիվ նամակագրություն ուներ նաև Սաիդ Շամիլի, Թոփչիբաշևի ու Չերմուխի հետ, ինչպես նաև՝ «Կոմիտեն մշտական շփումներ ունի Կոստանդնուպոլսում գտնվող դաշնակցականների և վրաց մենշևիկների հետ»²⁰⁷:

²⁰⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁶ Տե՛ս Арсен Авакян, указ. раб., сс. 364-365:

²⁰⁷ Տե՛ս АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 16, л. 533:

Կովկասյան քաղաքական վտարանդիության և թուրքական իշխանությունների համագործակցությունը դրսևորվեց նաև 1924 թ. Վրաստանում հակախորհրդային ապստամբության նախապատրաստման գործում, որին ակտիվ կերպով մասնակցում էին Կովկասում թուրքական ներկայացուցչության* աշխատողներ գնդապետ Մահարբեյը և նրա տեղակալ Պաստաբեյը: Նաև նշված էր, որ «գոյություն ունեն պաշտոնական փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ օգոստոս ամսին թուրքական իշխանությունները հանդիպումներ են ունեցել սպիտակգլարդիական փախստականների հետ»²⁰⁸:

Ելևելով ստացված տեղեկությունների կարևորությունից՝ Անկարայում դեսպանությունը Տրապիզոնի հյուպատոսությանը հրահանգ տվեց տեղեկություններ հաղորդել Մուլթանովի ղեկավարած կոմիտեի** գործունեության, դրա անդամների և, հնարավորության դեպքում, կոմիտեի կանոնադրության հիմնական կետերի մասին²⁰⁹:

Թուրքական իշխանությունների խրախուսմամբ և անմիջական օգնությամբ Սևծովյան շրջանում լեռնական և աղբբեջանական վտարանդիության վարած ակտիվ գործունեությունը և դրան հետևելու անհրաժեշտությունը Տրապիզոնում Խորհրդային Ռուսաստանի հյուպատոսությանն ստիպեցին ստեղծել լրտեսական ցանց, իսկ Մոսկվայից ստացվող հատուկ գումարների շնորհիվ հյուպատոսությունը կարողացավ հավաքագրել որոշ վտարանդիների ու նրանց միջոցով «ներսից» տեղեկություններ ստանալ

* Փաստաթղթում նշված չէ, թե խոսքը ո՞ր ներկայացուցչության մասին է, սակայն կարելի է ենթադրել, թե՛ Թբիլիսիում թուրքական դեսպանության: Տվյալ ժամանակահատվածում ԹԱՄԺ-ի կառավարությունը հյուպատոսություններ ուներ Բաթում, Ալեքսանդրապոլ, Տուափուս քաղաքներում և դեսպանություններ՝ Բաքվում, Երևանում ու Թբիլիսիում:

²⁰⁸ Տես նույն տեղում:

** Նկատի ունեն Աղբբեջանալեռնական կոմիտեն:

²⁰⁹ Տես նույն տեղում, թ. 545:

Աղբբեջանալեռնական կոմիտեի մասին***: Կարելի է ենթադրել, որ Թուրքիայից ստացվող տեղեկությունները օգնեցին խորհրդային իշխանություններին բացահայտելու Հյուսիսային Կովկասում գործող հակախորհրդային ցանցը: Այսպես, 1923 թ. ձեռքակալվեց շեյխ Ալի Միտանը, որը, համագործակցելով վրացական ապստամբության ղեկավարների հետ, փորձում էր ապստամբություն հրահրել Չեչնիայում²¹⁰:

Լեռնցի փախստականների շրջանում հավաքագրված անձանց շնորհիվ Տրապիզոնի հյուպատոսությունը վերահսկեց նաև Փարիզի վտարանդիական կենտրոնի ու Տրապիզոնի լեռնականների առաջնորդների միջև նամակագրությունը, քանի որ Փարիզ մեկնած Սաիդ Շամիլը և Հայդար Բամատը մշտական կապի մեջ էին Անատոլիայում գտնվող համախոհների հետ:

Անկարայի դեսպանության տեղեկությունները նաև վկայում են, որ թուրքական հետախուզությունն սկսեց ակտիվորեն օգտագործել փախստականներին՝ նրանց հանձնարարելով խորհրդային ղիվանագիտական ներկայացուցչություններում ծառայողների լրտեսումը: Ավելի հարմար էր հարկ եղած դեպքում խորհրդային ղիվանագետների դեմ սադրանք կազմակերպել փախստականների միջոցով, քանի որ հնարավոր կլինեք ամբողջ պատասխանատվությունը բարդել խորհրդային կարգերից տուժած և վրեժխնդրությամբ լցված վտարանդիների վրա, ինչպես դա եղավ Շվեյցարիայում և

*** Այսպես, հյուպատոս Գոլուբը 1921 թ. դեկտեմբերի 31-ին զադոնի հեռագրով հայտնեց Միխայլովին, որ ԱԳՀ ֆինանսների նախկին նախարար Էմիրջանովը բազմաթիվ անգամ այցելել է Աղբբեջանալեռնական կոմիտե, որտեղ հանդիպումներ է ունեցել դոկտոր Էֆենդիևի ու Մուլթանովի հետ, և ներկայումս Ալիբեկով ազանվամբ պատրաստվում է շոգենավով մեկնել Կոստանդնուպոլիս: Գոլուբը նաև հայտնեց, որ մեկ շաբաթ առաջ Կոմիտեն նյութական օգնություն էր ստացել Մտամբուլից, և Կոմիտեում անդամագրված յուրաքանչյուր փախստական աղբբեջանցուն այդ գումարից թղթադրամով 30 թուրքական լիրա է տրվել (տես նույն տեղում, թթ. 545, 645):

²¹⁰ Տես *А. Авторханов, указ. раб., с. 20*, նաև՝ *Вадим Абрамов. Контрразведка. Шит и меч. Против Абвера и ЦРУ. М., «Яуза ЭКСМО», 2006, с. 55:*

Լեհաստանում խորհրդային դիվանագետների սպանության պարագայում:

Տրապիզոնում լեռնական-աղբբեջանական վտարանդիության գործունեության վրա խորհրդային իշխանությունների ուշադրության կենտրոնացման պատճառ դարձան այն ճշտված տեղեկությունները, թե Քյազիմ Կարաբեքիրի հրամանով Կարս – Էրզրում հատվածում ստեղծվում է չերբեզական հեծյալ դիվիզիա, որին անդամագրվելու՝ Սուլթանովի միջոցով առաջարկություն է տրվել նաև աղբբեջանցիներին²¹¹: 1921 թ. դեկտեմբերի 13-ի դրությամբ ավարտվեց հեծյալ բրիգադի կազմավորումը, որի հրամանատար նշանակվեց զեներալ Սուլթան-Գինեյը²¹²: Մոսկվայում առանձնահատուկ անհանգստություն հարուցեցին Գոլուբի հաղորդած այն տեղեկությունները, թե ստեղծվելիք դիվիզիայի լեռնական հրամանատարները քարոզչություն են վարում և փորձում են հավաքագրել Վրանգելի բանակի նախկին զինվորներին, որոնք Սամսունից Ղրիմ են վերադառնում, քանի որ Հյուսիսային Կովկասը լքած և Թուրքիայում ապաստան գտած լեռնականներն ու աղբբեջանցիները չեն ցանկանում ծառայել այդ դիվիզիայում²¹³:

Խորհրդային իշխանությունները անհանգստությունը միանգամայն արդարացված էր, քանի որ 1921–1922 թթ. ամբողջ ռուսաստանյան վտարանդիությունից առավել մեծ վտանգ էին ներկայացնում Վրանգելի բանակի նախկին զինվորները, որոնցից շատերին դաշնակիցները տեղափոխել էին Գալլիպոլի թերակղզի (Դարդանելի նեղուցում): Կարմիր բանակին կից ստեղծված հետախուզական ծառայության (ապագա Գլխավոր հետախուզական վարչությունը՝ ԳՀՎ (ГРУ)) առջև խնդիր դրվեց առանձնահատուկ ուշադրությամբ հետևել Վրանգելի բանակի ցրված, բայց դեռ

մարտունակությունը պահպանած ստորաբաժանումների գործունեությանը: 1921 թ. մայիս – հունիս ամիսներին Կարմիր բանակի հետախուզական բաժինը Ստամբուլի իր գործակալներից հավաստի տեղեկություններ ստացավ Վրանգելի բանակի թվաքանակի, կազմի, տեղաբաշխման, բարոյահոգեբանական վիճակի ու քաղաքական կապերի մասին²¹⁴: Այդ տեղեկությունները, որոնք համընկնում էին Ստամբուլից ՀԱՀ-ի հատուկ գործակալից ստացված տեղեկություններին, վերլուծվեցին, և դրա հիման վրա 1921 թ. պատրաստվեց «Արտասահմանում և Խորհրդային Ռուսաստանի տարածքում հակահեղափոխական զինված ուժերը» վերնագրով տեղեկանքը, որում հիմնականում ուշադրություն էր դարձվում Վրանգելի բանակի գործունեությանը²¹⁵: Նման պայմաններում այն տեղեկությունը, թե թուրքական իշխանությունները լեռնական վտարանդիների միջոցով (նրանց թվում կային նաև Վրանգելի բանակի նախկին սպաներ) փորձում են հավաքագրել վրանգելականներին, հարուցեց խորհրդային իշխանության մտահոգությունը: Ըստ այդմ՝ Կարմիր բանակի հետախուզական ծառայության վրա դրված պարտականությունների շարքում ավելացավ կովկասյան մահմեդական վտարանդիության գործունեության մասին տեղեկությունների հավաքումը, մասնավորապես՝ ռուսական և կովկասյան վտարանդիական կազմակերպությունների միջև եղած կապերի բացահայտումը:

Վ. Զիչերինը ևս Անկարայում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Նացարենուսին տվեց նման բովանդակությամբ հրահանգներ՝ դրանք լրացնելով արտաքին քաղաքականության վերաբերյալ որոշ ճշգրտումներով և թուրքական իշխանությունների կողմից հյուսիսկովկասյան առաջնորդներին ցուցաբերվող օգնությունը կասեցնելու պահանջով: Մասնավորապես՝ Նացարենուսին 1921 թ.

²¹¹ Служ. АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 563:

²¹² Служ. նույն տեղում, թ. 583: Ըստ ամենայնի, խոսքը Սուլթան Գինեյի մասին է:

²¹³ Служ. նույն տեղում, թ. 567:

²¹⁴ Служ. Н. Д. Егоров. Разведка Красной армии против белой эмиграции (20-е гг). «Новый исторический вестник», 2001, N1 (3) (www.nivestnik.ru/2001_1/2.shtml):

²¹⁵ Там же.

հունիսի 17-ին հղված գրության մեջ նշված էր. «Այնուհետև. ինչպես է ներկայումս թուրքական կառավարությունը վերաբերվում մեր սպիտակգվարդիականներին, մուսավաթականներին, լեռնական ու դադստանյան հակահեղափոխական զաղթականներին: Չեր առջև խնդիր է դրված՝ խստագույնս հետևելու, որպեսզի Թուրքիայում աջակցություն չցուցաբերվի Կոնգին և մյուսներին: Մինչև Մոսկվայի պայմանագրի ստորագրումը նման օգնություն ցուցաբերվում էր հատկապես Դադստանի և Բարվի մուսավաթականներին: Եթե այդ առումով որևէ բան դեռ արվում է, ապա դա Մոսկվայի պայմանագրի խախտում է: Մեր և Թուրքիայի միջև հարաբերություններն զգալի չափով կախված են այն բանից, թե ինչպես է Թուրքիան վարվելու մեր սպիտակների նկատմամբ»²¹⁶:

Պատահական չէ, որ Չիչերինն իր հրահանգում առանձնացրեց Կոնգին և հյուսիսկովկասցիներին: Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնությունն առանձնահատուկ դերակատարություն ունեցավ 1919–1922 թթ. ազգայնական շարժման մեջ^{*}: Բացի այդ, թուրքական հասարակությունն համակրանքով էր վերաբերվում լեռնականներին և

²¹⁶ Տես АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, л. 1:

^{*} Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Muhittin Unal. Kurtuluş Savaşında Çerkeslerin Rolü. İstanbul, Cem Yayınevi, 1996; Arsen Avagyan. Osmanlı İmparatorluğu ve Kemalist Türkiye'nin Devlet-İktidar Sisteminde Çerkesler. İstanbul, Belge Yayınları, 2004*: Թուրք պատմաբան Մուրաթ Չուլքուն նույնիսկ պնդում է, թե «ազգայնական շարժումն սկսել են չերքեզները, և նրանք են եղել դրա ամենաազդեցիկ ուժը» (տես *Murat Çulcu. Marjinal Tarih Tezleri. İstanbul, E Yayınları, 2000, s. 278-279*): Այլ հեղինակներ ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, որ ազգայնական շարժման մեկնարկ համարվող 1919 թ. Ամասիայի հռչակագիրն ստորագրել են չորս հոգի, որոնցից երեքը, բացառությամբ Աթաթյուրքի, չերքեզներ են: Դրանք են Ռաուֆ Օրբայը՝ արխազ, Բեքիր Մամին՝ օս, Սալիհ փաշան՝ աղբյուր (տես *Metin Sever. Kafdağı'nın Bu Yüzü. Türkiye'deki Kafkas Kökenliler. İstanbul, Doğan Kitapçılık, 1999, s. 40*): Որոշ պատմաբաններ շեշտում են այն փաստը, որ ազգայնական շարժման խորհրդանիշներից մեկն էր չերքեզական գլխարկը (կապակ), և որ Աթաթյուրքի դամբարանի տարածքում թաղվածներից 61-ն ունեն հյուսիսկովկասյան ծագում (տես *Çetin Öner. Şu Bizim Çerkesler. İstanbul, Can Yayınları, 2000, ss. 88-89, 94*):

դրականորեն արձագանքում նրանց վարած ազատագրական պայքարին^{**}: Չերքեզների նկատմամբ նման վերաբերմունք էր ունեցել նաև սուլթանական կառավարությունը, որը հույսեր էր կապում Արևմտյան Անատոլիայում քեմալականներին չերքեզների որոշ գանգվածի ցուցաբերած զինված դիմադրության հետ, իսկ սուլթան Վահեդեդդին Ջ նպատակ ուներ չերքեզական գործուն օգտագործել նաև անգլիացիների հետ բանակցություններում²¹⁷:

Օգտվելով Թուրքիայում գոյություն ունեցող երկու կառավարությունների բարիդրացիական վերաբերմունքից՝ 1919–1920 թթ. Անատոլիա տեղափոխված նախկին ցարական չերքեզ զենեթալներն ու լեռնցի իշխանները 1920 թ. գարնանը թուրքական իշխանություններից ստացան կազակների ներգաղթը թույլատրելու համաձայնություն, քանի որ մինչ այդ քեմալական կառավարությունը չէր ընդունում սպիտակգվարդիական կազակներով շոգենավերը²¹⁸:

Եվ այսպես. արտաքին գործերի ժողովուստը, քեմալական կառավարությանն ստիպելով հրաժարվել լեռնականներին ցուցաբերվող աջակցությունից, միաժամանակ կասեցնում էր սպիտակգվարդիականների կենտրոնացումը Թուրքիայում, որտեղից նրանք հնարավորություն ունեին անցնելու Հյուսիսային Կովկաս:

Ամփոփելով չերքեզական դիվիզիայի ստեղծման նախագծի հարցը՝ ցանկանում ենք նշել, որ մեր ձեռքի տակ եղած արխիվային կտորերն ու վկայությունները հնարավորություն չեն տալիս

^{**} Այսպես. 1919 թ. դեկտեմբերի 28-ին գյուղատնտեսական դարբոցում իր ելույթի ժամանակ Աթաթյուրքն անդրադարձել էր Կովկասում չերքեզների ոչնչացմանը և հրեաների նկատմամբ «պոգրոմ» անունով հայտնի ջարդերին (տես *Dr. Alexandre Toumarkine. Diaspora, Dönüş hareketi ve Devlet: Düünden alınan dersler ve gelecek için perspektifler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Kafkas Derneği Yayınları: 15, Ankara, 2001, s. 197*):

²¹⁷ Տես *Murat Çulcu. Marjinal Tarih Tezleri. İstanbul, E Yayınları, 2000, s. 280*:

²¹⁸ Տես *Самир Хотко. История адыгов в изложении краснодарских авторов (www.adygi.ru/index.php?newsid=58)*, ինչպես նաև «Осетинская эмиграция в 1920-30 годах» (www.kavkaz-uzel.ru/articles/152276):

հատակեցնելու, թե իրականում ի՞նչ նպատակ էր հետապնդում Քյազիմ Կարաբեքիրը՝ ռազմական հարուստ փորձ ունեցող լեռնական վտարանդիներից չերքեզական հեծելագոր կազմավորելով: Վտարանդիներին հայտարարվել էր, թե հունական բանակի դեմ մղվող մարտերին մասնակցելու նպատակով դիվիզիան պետք է տեղափոխվի Արևմտյան ռազմաճակատ, իսկ Տրապիզոնի ռուսական հյուպատոսության տեղեկություններով՝ այն նախատեսված էր այդ ժամանակ արդեն գոյություն չունեցող Արևելյան ռազմաճակատում օգտագործելու համար, այսինքն՝ պետք է տեղակայվեր Կովկասին սահմանակից վիլայեթներում²¹⁹:

Որպես հավանական վարկած՝ կարելի է առաջ քաշել այն թեզը, թե լեռնական վտարանդիներից կազմված մարտական ջոկատներն ըստ էության նախատեսված չէին Թուրքիայի արտաքին թշնամիների դեմ մարտերում օգտագործվելու համար, այլ պետք է լինեին էնվերի՝ ԹԱՄԺ-ի կառավարության դեմ ուղղված դավադրության կարևոր բաղադրատարր և Բաթումից էնվերի Անատոլիա անցնելուց հետո ընդգրկվեին նրան սատարող ուժերի կազմում: Մի շարք հանգամանքներ և պատմական փաստեր հիմնավորում են այդ վարկածը: Առաջին. նախաձեռնությունը և իրականացումը պատկանում էր Քյազիմ Կարաբեքիրին, որը հայտնի էր որպես էնվերի կողմնակից**

²¹⁹ Տես АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, л. 16, л. 563:

* Այստեղ օգտագործում ենք «վարկած» տերմինը, քանի որ գործնականում դիվիզիան չստեղծվեց, իսկ կազմավորված ջոկատը երկար կյանք չունեցավ, և համապատասխանաբար՝ ո՛չ արխիվային փաստաթղթերում, ո՛չ էլ իրադարձությունների մասնակիցների ու ժամանակակիցների հուշերում նրա հետագա ճակատագրի մասին չի խոսվել:

** Բալկանյան առաջին պատերազմի ավարտից հետո Ջեմալ փաշան ուզում էր Քյազիմ Կարաբեքիրին հանձնել ռազմական դատարանին, սակայն նրան փրկեց էնվերը (տես *Kazım Karabekir. İstiklal Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkanı*. İstanbul, Tekin Yayinevi, 1990, ss. 11-12): Իսկ Աթաթյուրքի և էնվերի հարաբերությունները լարված էին դեռ 1912 թ. իտալա-թուրքական պատերազմի տարիներից (տես *Harbiye Nazırı Sadrazam Mahmut Şevket Paşa'nın Günlüğü*. Derleyen Adem Sarıoğlu. İstanbul, İQ Kültürsanat Yayıncılık, 2001, s. 33):

և ըստ պատմագրությունում գոյություն ունեցող վարկածի՝ էնվերի դավադրության մասնակից²²⁰: Երկրորդ. չերքեզական դիվիզիան կազմավորվում էր Տրապիզոնի մոտակայքում, որն էնվերի դավադրության հիմնական կենտրոնն էր՝ իր ամենակարևոր օղակ Յախյա Քախյայի հրոսակախմբով²²¹: Երրորդ. էնվերը՝ որպես Կովկասը ռուսական լծից ազատագրման փորձ կատարած և իսլամական աշխարհի հերոս, մեծ հեղինակություն էր վայելում լեռնական և աղբյուրեջանական վտարանդիության շրջանում:

Կարելի է ենթադրել, որ իրադրության կտրուկ փոփոխությունը Ք. Կարաբեքիրին ստիպեց հրաժարվել լեռնական վտարանդիներից կազմված չերքեզական հեծյալ դիվիզիա ստեղծելու մտադրությունից: Իրադրության փոփոխման տարրեր էին 1922 թ. թուրք-ռուսական դիվանագիտական միջադեպը, որով ապացուցվեց, որ խորհրդային կառավարությունը մտադիր չէ այք փակելու թուրքերի հակա-խորհրդային գործունեության վրա, Արևմտյան ռազմաճակատում Խամթե Ինյունյույի և Չերքեզ Էթեհմի ընդհարումը, որն ավարտվեց հույների կողմը վերջինիս անցմամբ և թուրքական հասարակությունում հակաչերքեզական տրամադրությունների աճմամբ, էնվերի հուսահատությունն ու Բուխարա մեկնումը, հունական բանակի դեմ տարած հաղթանակների հետևանքով Աթաթյուրքի դիրքերի ամրապնդումը: Դրա հետ մեկտեղ Թուրքիան դեռ զգում էր Խորհրդային Ռուսաստանի կարիքը, ուստի և թուրքական իշխանությունները ձգտում էին քողարկելու իրենց կապերը կովկասյան քաղաքական վտարանդիության առաջնորդների հետ: Ինչպես 1921 թ. դեկտեմբերի 22-ի իր հեռագրում նշեց Գուլուրը. «Պնդում են, թե Տրապիզոնում, որտեղ խորհրդային ներկայացուցչություն կա, թուրքերը քաշվում են սպիտակ

²²⁰ Տես *Murat Çulcu*, a.g.e., ss. 281-282:

²²¹ A.g.e. Չեղինակը նշում է, որ «Անատոլիա էնվերի անցնելու համար երկու կարևոր անցակետ կար. մեկը Կարսն էր՝ որպես Կովկասի բանակի կենտրոն, մյուսը՝ իզմիրցի իթթիհատական Յախյա Քախյայի վերահսկողության ու կառավարման տակ գտնվող Տրապիզոնը» (a.g.e., s. 282):

կովկասցիների նկատմամբ իրենց համակրանքը դրսևորելուց, բայց այնտեղ, որտեղ ներկայացուցչություն չկա, թուրքերը պակաս ամաչքոտ են և, ինչպես ասվում է՝ սիրտները բաց են (что называют, душа парашаку)²²²:

Ք. Կարաբեքիրը հյուսիսկովկասյան և ադրբեջանական վտարանդիության օգտագործման հետ մեկտեղ գործուն կերպով մասնակցեց Աջարիայում հակախորհրդային ապստամբության նախապատրաստմանը: Հյուսաստու Գոլուբը 1921 թ. դեկտեմբերի 30-ի գաղտնի հեռագրում Տրապիզոնից տեղեկացրեց, որ Բաթումում ապրող աջար հակահեղափոխական Մամեդ բեյը նամակագրական կապ ունի Քյազիմ Կարաբեքիրի հետ և նրանից գումարներ է ստանում հետախուզություն ու քարոզչություն կազմակերպելու համար²²³: 1922 թ. հունվարի 4-ի հեռագրով նա հայտնեց, որ «թուրքական Աջարստանից մեջլիսի պատգամավոր մոլլա Ալի Ռիզա Բեքը, որը ներկայումս գտնվում է Արդվինում, Խորհրդային Աջարստանի սահմաններում հակահեղափոխական քարոզչություն է վարում: Նա թուրքիկներ է տարածում Խորհրդային Աջարստանը Թուրքիայի հետ միավորելու մասին: Վերը նշված մոլլան վերջերս Անկարայում էր և, ըստ ամենայնի, հրահանգներ է ստացել: Բացի այդ, Արդվինի ճանապարհին նա այցելել է Կարս, որտեղ մի քանի օր է անցկացրել»²²⁴:

Ամփոփելով 1921–1922 թթ. Թուրքիայում լեռնական ու ադրբեջանական վտարանդիների քաղաքական գործունեության* փոխկապվածության և թուրքական իշխանությունների կողմից միևնույն քաղաքականության շրջանակներում նրանց օգտագործման

ուղեգծի վերլուծությունը՝ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել ադրբեջանական քաղաքական վտարանդիության շրջանում տեղի ունեցած մի իրադարձության վրա, որը բացասական ազդեցություն գործեց ոչ միայն ադրբեջանական, այլև լեռնական վտարանդիության քաղաքական կառույցների միասնության վրա: 1921–1922 թթ. Թուրքիայում լեռնական և ադրբեջանական քաղաքական վտարանդիության միավորումը, որն առաջնորդելու հավակնություն ուներ Խոսրով-բեկ Սուլթանովը, խորհրդային իշխանությունների համար հղի էր անախորժ հետևանքներով, քանի որ այն կապ ուներ Ադրբեջանում գործող մուսավաթական հակահեղափոխական ընդհատակի հետ: Նպատակահարմար էր ադրբեջանական քաղաքական վտարանդիությունը թուլացնել ներսից՝ քաղաքական ղեկավարության շրջանում դժգոհություններ ու պառակտումներ առաջացնելու միջոցով, ինչը հնարավոր էր Սուլթանովի և Աղանի* կողքին ավելի հեղինակավոր անձնավորության հայտնվելու դեպքում, մի անձնավորության, որն ի վիճակի լիներ իր շուրջը միավորելու վտարանդիության քաղաքանապես ակտիվ ու գործուն զանգվածի որոշ մասը: Վերը նշվածի լույսով նոր երանգ են ստանում Ռուսաստանից ԱՂՀ նախագահ Մեհմեթ Էմին Ռասուլզադեի փախուստը և Թուրքիայում հայտնվելը:

Ադրբեջան 11-րդ Կարմիր բանակի մուտք գործելուց հետո Մ. Ռասուլզադեն ձերբակալվեց Շեմախայում, այնուհետև տեղափոխվեց Բաքու՝ Բայիլյան բանտ, որտեղից նրան ազատեց 1920 թ. Բաքու

²²² Ств АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 602:

²²³ Ств նույն տեղում, գ. 16, թ. 623.

²²⁴ Ств նույն տեղում, թ. 645:

* Թուրքիայում ադրբեջանական վտարանդիության քաղաքական գործունեության մասին ավելի հանգամանորեն տես *Dr. Nazile Abbasi. Azerbaycan Özgürlük Mücadelesi. İstanbul, Beyaz Balina Yayınları, 2001*, ինչպես նաև *Yrd. Doç. Dr. Şimşir Sebahattin. Azerbaycan'ın İstiklal Mücadelesi. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002*:

* Կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում Ահմեդ Աղանի դիրքերի թուլացմանը նպաստեց թուրքական իշխանությունների այն կասկածը, թե նա կապ ունի խորհրդային ղեկավարության հետ: Այդ կասկածայնությամբ ղեկավար Ս. Արալովը 1922 թ. սեպտեմբերի 15-ին Լ. Կարախանին գրված գաղտնի նամակում արել է հետևյալ կարևոր դիտարկումը. «Հատկանշական է աջ խմբերի վերաբերմունքը Ահմեդ բեյ Աղանին: Կարծում են, որ ես եմ նրան պահում: Ուրշագրավ է Ռուսֆ բեյի արտահայտությունը. «Բնչ է, «Հաքի Միլլիթի Միլլին» թուրքական պաշտոնաթերթը է, թե՛՞ ռուսական ղեկավարության պաշտոնաթերթը» (տես АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 53020, л. 173):

ժամանաձ Ստալինը և, Մոսկվա տանելով, 1920 թ. նոյեմբերի 29-ին պաշտոն տվեց իր ղեկավարած ազգությունների ժողովմատում²²⁵: 1922 թ. հունվարին Մ. Ռասուլզադեն «Մուսավաթ» կուսակցության անդամների ու թաթար քաղաքական գործիչ Մ. Բիգիևի, օգնությամբ Պետրոգրադից փախավ Ֆինլանդիա, որտեղից էլ մեկնեց Թուրքիա*:

Չբացատելով, որ խորհրդային իշխանություններն իրականում տեղյակ չէին Մ. Ռասուլզադեի նպատակներին**, այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ Թուրքիայում նրա հայտնվելը ոչ թե միավորեց և ուժեղացրեց, այլ թուլացրեց աղբրեջանական քաղաքական վտարանդիությանը, քանի որ մի խումբ ղեկավար անձինք անցան նրա կողմը: Դրանով իսկ ստեղծվեցին ազդեցության մի քանի բևեռներ, գործնականում թուլացան Սուլթանովի դիրքերը, աղբրեջանական քաղաքական վտարանդիությունը, այդ թվում նաև «Մուսավաթ» կուսակցությունը, պառակտվեց հակամարտ խմբավորումների: 1924 թ. Մ. Ռասուլզադեն Ստամբուլում հիմնադրեց Աղբրեջանի ազգային կենտրոն, որի հիմնական նպատակ հռչակվեց աղբրեջանական քաղաքական վտարանդիության միավորումը բոլշևիկյան զավթման դեմ պայքարելու և Աղբրեջանի անկախությունը վերականգնելու համար:

²²⁵ Տե՛ս *Мамед Эмин Расулзаде. Сборник произведений и писем. М., Издательство «Флинта», 2010, с. 8:*

* 1923 թ. դեկտեմբերին Ստամբուլից Մ. Ռասուլզադեն նամակ է գրել Բ. Ստալինին (հրատարակվել է «Նոր Կովկաս» հանդեսում): Ծնորհակալություն հայտնելով բանտից իրեն ազատելու համար՝ նա քննադատում էր խորհրդային իշխանություններին և բացատրում, թե ինչու լրեց Խորհրդային Ռուսաստանը (տե՛ս «Yeni Kafkasya», 23.01.1924):

** Մ. Ռասուլզադեն 1923 թ. Թուրքիայում հրատարակեց «Աղբրեջանի Հանրապետությունը» գրքույթը, որը հարուցեց Բ. Ստալինի գայրույթը, և նա 1923 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվի ղեկավարությանը գրված նամակում տվեց հստակ հրահանգներ, թե ինչ հակափաստարկներով պետք է հերքել Ռասուլզադեի առաջ քաշած դրույթները (տե՛ս ԲԳԱՍԻ, ֆ. 558, (Տալինա), օր. 1, լ. 4491, լ. 1-2): Պատմագրության մեջ Ստալինի այս նամակը բերվում է որպես ապացույց, թե ինչ վտանգ էր ներկայացնում Մ. Ռասուլզադեն խորհրդային իշխանությունների համար (տե՛ս *Мамед Эмин Расулзаде, указ. раб., сс. 8-9*):

և ըստ պատմագրությունում գոյություն ունեցող վարկածի՝ Էնվերի դավադրության մասնակից²²⁰: Երկրորդ. չերքեզական դիվիզիան կազմավորվում էր Տրապիզոնի մոտակայքում, որն Էնվերի դավադրության հիմնական կենտրոնն էր՝ իր ամենակարևոր օղակ Յալայա Քախայի հրոսակախմբով²²¹: Երրորդ. Էնվերը՝ որպես Կովկասը ռուսական լծից ազատագրման փորձ կատարած և իսլամական աշխարհի հերոս, մեծ հեղինակություն էր վայելում լեռնական և աղբրեջանական վտարանդիության շրջանում:

Կարելի է ենթադրել, որ իրադրության կտրուկ փոփոխությունը Ք. Կարաբեքիրին ստիպեց հրաժարվել լեռնական վտարանդիներից կազմված չերքեզական հեծյալ դիվիզիա ստեղծելու մտադրությունից: Իրադրության փոփոխման տարրեր էին 1922 թ. թուրք-ռուսական դիվանագիտական միջադեպը, որով ապացուցվեց, որ խորհրդային կառավարությունը մտադիր չէ աչք փակելու թուրքերի հակա-խորհրդային գործունեության վրա, Արևմտյան ռազմաճակատում Իսմեթ Ինյույույի և Չերքեզ էթեմի ընդհարումը, որն ավարտվեց հույների կողմը վերջինիս անցմամբ և թուրքական հասարակությունում հակաչերքեզական տրամադրությունների աճմամբ, Էնվերի հուսահատությունն ու Բուխարա մեկնումը, հունական բանակի դեմ տարած հաղթանակների հետևանքով Աթաթյուրքի դիրքերի ամրապնդումը: Դրա հետ մեկտեղ Թուրքիան դեռ զգում էր Խորհրդային Ռուսաստանի կարիքը, ուստի և թուրքական իշխանությունները ձգտում էին քողարկելու իրենց կապերը կովկասյան քաղաքական վտարանդիության առաջնորդների հետ: Ինչպես 1921 թ. դեկտեմբերի 22-ի իր հեռագրում նշեց Գոլուբը. «Պնդում են, թե Տրապիզոնում, որտեղ խորհրդային ներկայացուցչություն կա, թուրքերը քաշվում են սպիտակ

²²⁰ Տե՛ս *Murat Çulcu, a.g.e., ss. 281-282:*

²²¹ A.g.e. Հեղինակը նշում է, որ «Անատոլիա Էնվերի անցնելու համար երկու կարևոր անցակետ կար. մեկը Կարսն էր՝ որպես Կովկասի բանակի կենտրոն, մյուսը՝ իզմիրցի իթթիհատական Յալայա Քախայի վերահսկողության ու կառավարման տակ գտնվող Տրապիզոնը» (a.g.e., s. 282):

կովկասցիների նկատմամբ իրենց համակրանքը դրսևորելուց, բայց այնտեղ, որտեղ ներկայացուցություն չկա, թուրքերը պակաս ամաչքոտ են և, ինչպես ասվում է՝ սիրտները բաց են (что называется, душа нараспашку)²²²:

Ք. Կարաբեքիրը հյուսիսկովկասյան և ադրբեջանական վտարանդիության օգտագործման հետ մեկտեղ գործուն կերպով մասնակցեց Աջարիայում հակախորհրդային ապստամբության նախապատրաստմանը: Հյուպատոս Գուլուբը 1921 թ. դեկտեմբերի 30-ի գաղտնի հեռագրում Տրապիզոնից տեղեկացրեց, որ Բաթումում ապրող աջար հակահեղափոխական Մամեդ բեյը նամակագրական կապ ունի Քյազիմ Կարաբեքիրի հետ և նրանից գումարներ է ստանում հետախուզություն ու քարոզչություն կազմակերպելու համար²²³: 1922 թ. հունվարի 4-ի հեռագրով նա հայտնեց, որ «թուրքական Աջարստանից մեջլիսի պատգամավոր մուլլա Ալի Ռիզա Բեքը, որը ներկայումս գտնվում է Արդվինում, Խորհրդային Աջարստանի սահմաններում հակահեղափոխական քարոզչություն է վարում: Նա թուուցիկներ է տարածում Խորհրդային Աջարստանը Թուրքիայի հետ միավորելու մասին: Վերը նշված մուլլան վերջերս Անկարայում էր և, ըստ ամենայնի, հրահանգներ է ստացել: Բացի այդ, Արդվինի ճանապարհին նա այցելել է Կարս, որտեղ մի քանի օր է անցկացրել»²²⁴:

Ամփոփելով 1921–1922 թթ. Թուրքիայում լեռնական ու ադրբեջանական վտարանդիների քաղաքական գործունեության* փոխկապվածության և թուրքական իշխանությունների կողմից միննույն քաղաքականության շրջանակներում նրանց օգտագործման

ուղեգծի վերլուծությունը՝ անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել ադրբեջանական քաղաքական վտարանդիության շրջանում տեղի ունեցած մի իրադարձության վրա, որը բացասական ազդեցություն գործեց ոչ միայն ադրբեջանական, այլև լեռնական վտարանդիության քաղաքական կառույցների միասնության վրա: 1921–1922 թթ. Թուրքիայում լեռնական և ադրբեջանական քաղաքական վտարանդիության միավորումը, որն առաջնորդելու հավակնություն ուներ Խոսրով-բեկ Սուլթանովը, խորհրդային իշխանությունների համար հղի էր անսխալ հետևանքներով, քանի որ այն կապ ուներ Ադրբեջանում գործող մուսավաթական հակահեղափոխական ընդհատակի հետ: Նպատակահարմար էր ադրբեջանական քաղաքական վտարանդիությունը թուլացնել ներսից՝ քաղաքական ղեկավարության շրջանում դժգոհություններ ու պատակտումներ առաջացնելու միջոցով, ինչը հնարավոր էր Սուլթանովի և Աղակի* կողքին ավելի հեղինակավոր անձնավորության հայտնվելու դեպքում, մի անձնավորության, որն ի վիճակի լիներ իր շուրջը միավորելու վտարանդիության քաղաքանապես ակտիվ ու գործուն գանգվածի որոշ մասը: Վերը նշվածի լույսով նոր երանգ են ստանում Ռուսաստանից Ա.Ղ.Ն նախագահ Մեհմեթ Էմին Ռասուլզադեի փախուստը և Թուրքիայում հայտնվելը:

Ադրբեջան 11-րդ Կարմիր բանակի մուտք գործելուց հետո Ս. Ռասուլզադեն ձերբակալվեց Շեմախայում, այնուհետև տեղափոխվեց Բաքու՝ Բայիլյան բանտ, որտեղից նրան ազատեց 1920 թ. Բաքու

²²² Ств АВП РФ, ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, д. 19, л. 602:

²²³ Ств նույն տեղում, գ. 16, թ. 623:

²²⁴ Ств նույն տեղում, թ. 645:

* Թուրքիայում ադրբեջանական վտարանդիության քաղաքական գործունեության մասին ավելի հանգամանորեն տես *Dr. Nazile Abbasi. Azərbaycan Özgürlük Mücadelesi. İstanbul, Beyaz Balina Yayınları, 2001*, ինչպես նաև *Yrd. Doç. Dr. Şimşir Sebahattin. Azərbaycan'ın İstiklal Mücadelesi. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002*:

* Կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում Ահմեդ Աղակի դիրքերի թուլացմանը նպաստեց թուրքական իշխանությունների այն կասկածը, թե նա կապ ունի խորհրդային ղեկավարության հետ: Այդ կասկածային դեպքում Ս. Արալովը 1922 թ. սեպտեմբերի 15-ին Լ. Կարախանին գրված գաղտնի նամակում արել է հետևյալ կարևոր դիտարկումը. «Հատկանշական է աջ խմբերի վերաբերմունքը Ահմեդ բեյ Աղակին: Կարծում են, որ ես եմ նրան պահում: Ո՞րչազրավ է Ռաուֆ բեյի արտահայտությունը. «Ինչ է, «Հաքի Միլլիբեթի Միլլին» թուրքական պաշտոնաթերթ է, թե՞ ռուսական ղեկավարության պաշտոնաթերթը» (տես АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 53020, л. 173):

ժամանած Ստալինը և, Մոսկվա տանելով, 1920 թ. նոյեմբերի 29-ին պաշտոն տվեց իր ղեկավարած ազգությունների ժողկոմատում²²⁵: 1922 թ. հունվարին Մ. Ռասուլզադեն «Մուսավաթ» կուսակցության անդամների ու թաթար քաղաքական գործիչ Մ. Բիզիկի օգնությամբ Պետրոգրադից փախավ Ֆինլանդիա, որտեղից էլ մեկնեց Թուրքիա՝:

Զբացատրելով, որ խորհրդային իշխանություններն իրականում տեղյակ չէին Մ. Ռասուլզադեի նպատակներին^{**}, այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ Թուրքիայում նրա հայտնվելը ոչ թե միավորեց և ուժեղացրեց, այլ թուլացրեց աղբրեջանական քաղաքական վտարանդիությանը, քանի որ մի խումբ ղեկավար անձինք անցան նրա կողմը: Դրանով իսկ ստեղծվեցին ազդեցության մի քանի բևեռներ, գործնականում թուլացան Մուլթանովի դիրքերը, աղբրեջանական քաղաքական վտարանդիությունը, այդ թվում նաև «Մուսավաթ» կուսակցությունը, պառակտվեց հակամարտ խմբավորումների: 1924 թ. Մ. Ռասուլզադեն Ստամբուլում հիմնադրեց Աղբրեջանի ազգային կենտրոն, որի հիմնական նպատակ հռչակվեց աղբրեջանական քաղաքական վտարանդիության միավորումը բոլշևիկյան զավթման դեմ պայքարելու և Աղբրեջանի անկախությունը վերականգնելու համար:

²²⁵ Տե՛ս *Мамед Эмин Расулзаде. Сборник произведений и писем. М., Издательство «Флинта», 2010, с. 8:*

^{*} 1923 թ. ղեկտեմբերին Ստամբուլից Մ. Ռասուլզադեն նամակ է գրել Բ. Ստալինին (հրատարակվել է «Նոր Կովկաս» հանդեսում): Ենթահակադրություն հայտնելով բանտից իրեն ազատելու համար՝ նա քննադատում էր խորհրդային իշխանություններին և բացատրում, թե ինչու լքեց Խորհրդային Ռուսաստանը (տե՛ս «Yeni Kafkasya», 23.01.1924):

^{**} Մ. Ռասուլզադեն 1923 թ. Թուրքիայում հրատարակեց «Աղբրեջանի Հանրապետությունը» գրքույքը, որը հարուցեց Բ. Ստալինի զայրույթը, և նա 1923 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվի ղեկավարությանը գրված նամակում տվեց հստակ հրահանգներ, թե ինչ հակափաստարկներով պետք է հերքել Ռասուլզադեի առաջ քաշած դրույթները (տե՛ս ԲԳԱՍՊԻ, ֆ. 558, (Տալինա), օպ. 1, ձ. 4491, լ. 1-2): Պատմագրության մեջ Ստալինի այս նամակը բերվում է որպես ապացույց, թե ինչ վտանգ էր ներկայացնում Մ. Ռասուլզադեն խորհրդային իշխանությունների համար (տե՛ս *Мамед Эмин Расулзаде, указ. раб., сс. 8-9*):

Սակայն միավորման փոխարեն նորաստեղծ կենտրոնի և Եվրոպայում գործող աղբրեջանական վտարանդիական կազմակերպությունների միջև ստեղծվեց առճակատում, որը Թոփչիբաշևի ջանքերով հաղթահարվեց միայն 1928 թ.²²⁶: Հետագա տարիներին «Մուսավաթից» անկախացան մի խումբ հին անդամներ, որոնք միավորվեցին Վեքիլովի շուրջը, իսկ Մուլթանովն իր կողմնակիցների հետ հիմնադրեց Աղբրեջանի ժողովրդական կուսակցություն:

Այսպիսով՝ Թուրքիայում Մ. Ռասուլզադեի հայտնվելը ոչ միայն թուլացրեց աղբրեջանական քաղաքական վտարանդիությանը, այլև նպաստեց համատեղ աղբրեջանալեռնական քաղաքական կառույցների տրոհմանն ու լեռնականների առանձնացմանը: 1922 թ. նշանավորեց աղբրեջանական և լեռնական քաղաքական վտարանդիական կառույցների ժամանակավոր տարանջատման սկիզբը, իսկ հետագայում առաջին համատեղ կազմակերպությունը Թուրքիայում ստեղծվեց միայն 1952 թ.: Այս տեսակետից Մ. Ռասուլզադեի փախուստը խորհրդային իշխանությունների համար ունեցավ ավելի շատ դրական, քան բացասական հետևանքներ:

Եթե լեռնական վտարանդիության օգտագործման քաղաքականությունը Անատոլիայում համակարգում և ուղորդում էր Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը, ապա Մոսկվայում նույն դերը փորձեց ստանձնել Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյը՝:

²²⁶ Տե՛ս *Али Марданбек Топчибашев. Письма из Парижа. Баку, Азербайджанское государственное издательство, 1998, с. 9:*

^{*} Իր հուշերում Ա. Ֆ. Ջեբեսոյը գրել է, որ Մոսկվայում դեսպանի իր թեկնածությունն առաջադրելիս Աթաթյուրքն առաջնորդվել է այն նկատառումով, որ պատերազմի տարիներին Ջեբեսոյը կովել է Կովկասյան ռազմաճակատում (տե՛ս *Ali Fuat Cebesoy. Moskova Hatıraları (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, «Vatan» Neşriyatı, 1955 s. 134*): Իրականում Աթաթյուրքին պետք էր Ջեբեսոյին հեռացնել Արևմտյան ռազմաճակատի հրամանատարի պաշտոնից:

Թուրք-ռուսական հարաբերություններն ունեին յուրահատուկ բնույթ, ինչն իր ազդեցությունը գործեց նաև երկու պետությունների դեսպանությունների վրա, որոնք այլ պետությունների դեսպանություններից տարբերվում էին ինչպես աշխատողների թվաքանակով, որը զերազանցում էր ընդունվածը, այնպես էլ այն հանգամանքով, որ դրանց անվտանգությունն ապահովում էին իրենց իսկ զորաջոկատները: Այսպես Մոսկվայում Թուրքիայի դեսպանության անվտանգության ապահովման համար դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյն Արևմտյան ռազմաճակատից իր հետ բերել էր երեսուն հոգանոց հեծելախումբ²²⁷: Թուրքական դեսպանությունում ռազմական կցորդն ուներ իր առանձին սշխատակազմը, ինչը Ջեբեսոյը բացատրում էր այն հանգամանքով, որ նա, բացի իր ուղղակի ծառայողական պարտականություններից, կատարում էր նաև լրացուցիչ խնդիրներ, օրինակ, Թուրքիա էր ուղարկում խորհրդային կառավարության կողմից տրամադրվող զենքն ու զինամթերքը, կազմակերպում էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներից Ռուսաստանում մնացած թուրք ռազմագերիների վերադարձը հայրենիք և այլն²²⁸:

Ժամանակակիցների վկայությամբ՝ թուրքական դեսպանությունը Ջեբեսոյի օրոք դարձավ հյուսիսկովկասյան սպիտակզավարդիականների հավաքման և Թուրքիա տեղափոխման կենտրոններից մեկը: Դեսպանության օգնությամբ լեռնականները, ստանալով փախստականի վկայագիր, փոքր խմբերով տեղափոխվում էին Թուրքիա: Ինչպես իր հուշերում նկարագրում է 1922 թ. տեղի ունեցած լրտեսական սկանդալից հետո Մոսկվա ուղարկված ԹԱՄԺ-ի քննիչ հանձնաժողովի նախագահ Ռզա Նուրը. «Թաթարները մտահոգված ինձ հարցնում էին. «Այստեղ թուրքական, թե՞ չերքեզական դեսպանություն է»: Իմ «ինչո՞ւ» հարցին նրանք պատասխանում էին. «Որովհետև գրեթե բոլոր ծառայողները չերքեզ են, և հետո՝ որքան այստեղ ռուսաստանցի

²²⁷ Տե՛ս *Ali Fuat Cebesoy*. Moskova Hatıraları, s. 101:

²²⁸ A.g.e.

քրիստոնյա չերքեզ կա, բոլորը դեսպանությունում են: Եվ նրանք բոլորը ցարի կողմնակից են: Դա չի՞ վնասի կառավարության հետ ձեր քաղաքականությանը»: Լիովին իրավացի են: Այս մարդիկ քաղաքականություն . ավելի լավ էին հասկանում, քան մեր դիվանագետները: Ես տեղյակ չեի, որ միապետության կողմնակից չերքեզները գալիս են մեր դեսպանություն: Հետաքննություն անցկացրեցի. ճիշտ էր: Այսպիսով՝ ժամանակին թագավորի պալատում ծառայած քրիստոնյա չերքեզները, որպես աքտրավայր Մոսկվայում հավաքվելով, դառնում էին մեր դեսպանության աշխատողներ: Նրանք էին վարում ազգային բանակցությունները: Նշանակում է, որ մեր դեսպանությունը վերածվել է չերքեզական կոմիտեի»²²⁹:

Ռզա Նուրը, թվարկելով դեսպանության հյուսիսկովկասյան ծագում ունեցող բոլոր դիվանագետներին՝ սկսած դեսպան Ալի Ֆուադ Ջեբեսոյից և հյուպատոս Ֆուադից, որոնք երկուսն էլ աբխազական ծագում ունեին, նշել է, որ չերքեզ ծառայողներն իրենց քարտերի վրա գրում էին երկու անուններն էլ՝ և՛ թուրքական, և՛ չերքեզական, իսկ ոմանք՝ նույնիսկ միայն չերքեզականը²³⁰: Ռզա Նուրի պնդմամբ՝ հյուպատոսը հետամուտ էր լինում նախ լեռնականների, ապա նոր միայն թուրքերի գործերին: Եվ դա այն աստիճանի բացահայտորեն էր արվում, որ դիմողներից մեկը բացականչել էր, որ եթե ինքը լիներ ոչ թե թուրք, այլ՝ չերքեզ, ապա հյուպատոսը նրա խնդիրը վաղուց կարգավորած կլիներ²³¹:

Դեռ ավելին. թուրքական դեսպանությունը փորձ ձեռնարկեց հարուցելու և անմիջականորեն ուղղորդելու Հյուսիսային Կովկասում մի քանի խոռվություն:

Ռզա Նուրը ձգտել է այդ իրավիճակը բացատրելու Ալի Ֆուադ Ջեբեսոյի չերքեզական ծագմամբ և համոզելու այն բանում, թե

²²⁹ Տե՛ս *Rıza Nur*, a.g.e., s. 257:

²³⁰ A.g.e., s. 259:

²³¹ A.g.e., s. 258:

թուրքական կառավարությունը նման իրավիճակից անտեղյակ էր: Պետք է նկատի ունենալ, որ Ռզա Նուռը ոչ միայն նվիրյալ ազգայնամուլ էր, այլև ռասիստ, ուստի և չերթեզների մասին խոսելիս հաճախ օգտագործել է նսեմացուցիչ որակումներ, օրինակ՝ «չերքեզի արյան մեջ է արքունիքում ծառայելը» կամ, նկարագրելով, թե ինչպես Անկարայում իր հետ նույն տանն ապրող էմին փաշան տեղափոխվելիս վերցրել էր նաև իրեն՝ Նուռին, պատկանող իրերը, ընդհանրացրել է, թե «գողությունը չերքեզական ավանդույթ է»²³²: Ջուզահեռներ տանելով «մեծ գաղթի» ժամանակ Թուրքիա տեղափոխված և Հյուսիսային Կովկասում մնացած չերքեզների միջև՝ նա գրել է, թե «առաջինները մեր զլխավոր թշնամիներն են, ցանկանում են սպանել թուրքերին», իսկ երկրորդները նրանցից փրկություն են սպասում»²³³: Նա նաև հավելել է, թե Թուրքիայում լրտեսությանը զբաղվում են այբանացիները, բոսնիացիներն ու չերքեզները²³⁴:

Ռզա Նուռը վրդովմունքով է գրել նաև միմյանց սատարելու՝ չերքեզների շրջանում լայն տարածում ունեցող ավանդույթի մասին և որպես ապացույց վկայակոչել հետևյալ դեպքը. երբ իր ջանքերի շնորհիվ Մոսկվայի թուրքական դեսպանությունից Թահսին անունով մի չերքեզ հետ է կանչվել, արխազական ծագում ունեցող վարչապետ Ռաուֆ Օրբայը, «արխազությունից ելնելով», նրան նշանակել է Մաշհադում հյուպատոս, ընդ որում, մի քանի անգամ բարձրացրել է նրա դիվանագիտական կարգը²³⁵:

²³² A.g.e., ss. 259, 266:

* Ռզա Նուռը նկատի ունի ազգայնականների հիմնական թշնամի, Արևմտյան Անատոլիայում քեմալական կառավարության դեմ պատերազմող սուլթանական զորքերի հրամանատար Ազնավուրին, ինչպես նաև ազգայնական շարժման հերոս, հետագայում հույների կողմն անցած Չերքեզ էթեմին:

²³³ A.g.e., s. 122:

²³⁴ A.g.e., s. 153:

²³⁵ A.g.e., s. 274:

1922 թ. դիվանագիտական միջադեպի պատճառ դարձավ թուրք ռազմական կցորդի լրտեսական գործունեությունը: Մոսկվայում նա լրտեսների միջոցով** ձեռք բերեց Կարմիր բանակին վերաբերող գաղտնի փաստաթղթեր ու քարտեզներ: Միջադեպը պարզելու նպատակով ստեղծված հանձնաժողովի նախագահ Ռզա Նուռը համոզված էր, որ ռազմական կցորդը դա արել էր Ալի Ֆուադ Ջեբետայի հրամանով և լեհերի հետ համատեղ²³⁶: Ալի Ջեբետայն իր հերթին փորձեց արդարացնել և՛ իրեն և՛ ռազմական կցորդին՝ նշելով, որ «ռազմական կցորդի հիմնական պարտականությունների թվում են նաև հյուրընկալ պետության բանակների ամեն տեսակի գաղտնի գործերին տեղեկանալու ջանքերը: Սակայն դա անելիս հարկավոր է խուսափել հանցանքի վայրում բռնվելուց: Ավա՛ղ, մեր ռազմական կցորդը փորձի պակասության գոհ դարձավ: Միջադեպը վերածվեց հանցագործության»²³⁷: Ռիշագրավ է, որ հետագայում Հատուկ հանձնաժողովը ուսումնասիրեց այդ փաստաթղթերը և ի թիվս այլոց հայտնաբերեց երկու մանրամասն քարտեզ. մեկը՝ Ռուսաստանի, մյուսը՝ Կովկասի²³⁸:

Ռուսաստանի Հատուկ հանձնաժողովը, տեղեկանալով թուրք ռազմական կցորդի լրտեսական գործունեության մասին, 1922 թ. ապրիլի 20-ին ներխուժեց դեսպանատուն՝ ռազմական կցորդի աշխատասենյակ, և առգրավեց ապօրինի ճանապարհով ձեռք բերված գաղտնի փաստաթղթերով պայուսակը, ինչպես նաև մի շարք դիվանագիտական փաստաթղթեր: Դեսպան Ջեբետայը, խիստ նոտա ներկայացնելով արտաքին գործերի ժողովմատին, պահանջեց

** Հիմնականում հիշատակվում է Կարմիր բանակի մի սպա՝ Օլջևսկի ազգանունով (տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», cilt 3, 6 Mart 1338 (1922) – 27 Şubat 1338 (1923). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 437):

²³⁶ Ştu *Rıza Nur*, a.g.e., s. 227:

²³⁷ Ştu *Ali Fuat Cebesoy*. Siyasi Hatıralar. Büyük Zaferden Lozana. Cilt 1, İstanbul, Temel Yayınları, 2002, s. 8:

²³⁸ Ştu «TBMM Gizli Celse Zabıtları», cilt 3, 6 Mart 1338 (1922) – 27 Şubat 1338 (1923). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 437:

վերադարձնել պայուսակը, ինչին ի պատասխան Լ. Կարախանը ոչ միայն մերժեց Ջեբեալի պահանջը, այլև իր հերթին պահանջեց հետ կանչել ձեռքակալված թուրք ղիվանագետներին²³⁹: Միջադեպի լարվածության աճման վրա ազդեցին նաև երկու լրացուցիչ հանգամանք. ա) Ալի Ջեբեալի սերտ շփումները Մեծ Բրիտանիայի և Լեհաստանի դեսպանների հետ, և բ) բոլշևիկյան կառավարության կասկածները, որ Ջեբեալը համագործակցում է նաև Էնվերի հետ: Այս ամենի հետևանքով Ջեբեալը 1922 թ. մայիսի 10-ին դեսպանության այլ 15 աշխատողի հետ ստիպված եղավ լքել Մոսկվան²⁴⁰:

Մոսկվայում թուրքական դեսպանության հետ կապված միջադեպը քննարկվեց ԹԱՄԺ-ի 1922 թ. հունիսի 10-ի գաղտնի նիստում, որը վարեց վարչապետ Ռաուֆ Օրբայը²⁴¹: Երկար քննարկումներից հետո խորհրդարանը որոշում կայացրեց միջադեպը հետաքննելու համար ստեղծել հատուկ հանձնաժողով՝ Ռզա Նուրի գլխավորությամբ: Ի վերջո, Ռզա Նուրի և Անկարայում ՌԽԴՄԸ դեսպան Մեմյուն Արալովի ջանքերով այդ ղիվանագիտական սկանդալը հաջողվեց հարթել²⁴²:

Հիմնական խոչընդոտը, որին Ռուսաստանում բախվեց Ռզա Նուրը՝ այն էր, որ բոլշևիկյան իշխանությունները չէին ընդունում նրա այն պնդումները, թե քեմալական կառավարությունը տեղյակ չէր Ջեբեալի գործունեությանը և Մեծ Բրիտանիայի ու Լեհաստանի դեսպանների հետ կապերին²⁴³: Բարդացնող հանգամանք էր նաև այն, որ ռուսական կառավարությունը տեղեկացել էր ֆրանսիական և անգլիական կառավարությունների ներկայացուցիչների հետ Փարիզում Բեքիր Սամիի ունեցած բանակցություններին, որտեղ քննարկվել էր

Հյուսիսային Կովկասի հարցը, և ըստ այդմ լուրջ կասկածներ ուներ, որ թուրքերը իրենց թիկունքում գաղտնի համաձայնության են եկել Ֆրանսիայի և Լեհաստանի հետ: Ռզա Նուրի բոլոր վստահեցումները, թե Անկարայի կառավարությունը իրականում տեղյակ չէր Բեքիր Սամիի և Ալի Ջեբեալի գործունեությանը, իսկ տեղեկանալով՝ անմիջապես երկուսին հետ կանչեց ու պաշտոնանկ արեց, թերահավատությամբ էին ընդունվում²⁴⁴:

Հյուսիսային Կովկասի խնդիրը, Բեքիր Սամիի և Ալի Ֆուադ Ջեբեալի գործունեությունը, կովկասյան քաղաքական վտարանդիության հետ Քյազիմ Կարաբեքիրի կապերն այն հանգամանքներից էին, որոնց պատճառով թուրք-ռուսական հարաբերություններում ի հայտ եկան անվստահությունն ու լարվածություն: Սակայն հիմնական պատճառ եղան քեմալական Թուրքիայի ջանքերը՝ նեղուցների հարցում համաձայնության գալ Անտանտի պետությունների հետ, շրջանցելով Խորհրդային Ռուսաստանին՝:

Նման պայմաններում քեմալական կառավարությունը նախընտրեց խուսափել հարաբերությունների սրացումից և փորձեց

²⁴⁴ A.g.e.

* Այդ կապակցությամբ 1922 թ. դեկտեմբերի 12-ին Անկարայում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Մեմյուն Արալովին գրված նամակում Լև Կարախանը նշել է. «Թուրքերը, ինչպես և սպասվում էր, սրիկա գտնվեցին: ...Նեղուցների հարցում նրանք որոշել են մեզ ծախել, որպեսզի այդ գնով զիջումներ ստանան այլ հարցերում: Մեզ մնում է միայն ցանկանալ, որ նրանց հույսերի դերես լինեն, և դրանք, ըստ ամենայնի, չեն իրականանա: ... Չնայած նրանց դավաճանությանը՝ մենք թուրքերի հետ իհարկե չենք վիճի կամ կապերը չենք խզի: Նրանք դեռ կոյիմեն մեր օգնությանը: Այսպիսով՝ նրանց հետ խոսելուամբ պետք է լինի ընկերական, բայց՝ կոշտ, իսպառ մերկացուցիչ, պետք է մշտապես ապացուցել նրանց, որ հիմարություն են անում և դրա համար կպատժվեն» (տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 233, д. 53021, л. 49): Կարախանի այդ կոշտ դիրքորոշումը դրսևորվեց այն բանում, որ ղիվանագիտական միջադեպի հարթեցումից հետո, երբ քեմալական կառավարությունը հայտնեց Մոսկվայում դեսպանի պաշտոնում դարձյալ Ջեբեալին նշանակելու իր մտադրությունը, նա սպառնաց, որ վերջինիս չի տրվի սահմանն անցնելու իրավունք, և նա ամոթանքով հետ կուղարկվի Թուրքիա: Կարախանի սպառնալիքից հետո Անկարան հրաժարվեց այդ մտադրությունից (տե՛ս Rıza Nur, a.g.e., ss. 239-240):

²³⁹ Տե՛ս «Türk Dış Politikası», s. 175:

²⁴⁰ A.g.e.

²⁴¹ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», cilt 3, 6 Mart 1338 (1922) – 27 Şubat 1338 (1923). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 434-450:

²⁴² Տե՛ս «Türk Dış Politikası», s. 175.

²⁴³ Տե՛ս Rıza Nur, a.g.e., s. 232:

հարթել խնդիրը՝ թեկուզ և ռուսների պահանջների ընդունման գնով, հատկապես, որ դրանք չէին վերաբերում ազգայնական շարժման համար կենսական նշանակություն ունեցող հարցերին: Լրտեսական սկանդալից հետո Անկարա հետ կանչված Ալի Ֆուադ Ջեբեսոյի հետ զրույցում Աթաթյուրքը խոստովանեց, որ «մինչև Արևմուտքի հետ մեր խնդրի կարգավորումը մենք ստիպված ենք համագործակցել ռուսների հետ և պահպանել մեր բարեկամությունը»²⁴⁵: Թուրքական կառավարության մյուս անդամները նույնպես կիսում էին Ռուսաստանը կարևորելու և նրա հետ հարաբերություններում լարվածությունից խուսափելու Աթաթյուրքի մոտեցումը²⁴⁶:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման ուղեգծի տեսակետից 1922 թ. լրտեսական միջադեպում աչքի է զանոնում թուրք ու լեհ ռազմական կցորդների համագործակցության փաստը, որը կովկասյան գործոնի համատեղ օգտագործման առաջին դրսևորումն էր: Հետագայում այդ համագործակցությունն ավելի ամրապնդվեց «Փրումեթև» շարժման շրջանակներում:

1922 թ. խորհրդա-թուրքական հարաբերություններում տեղի ունեցած դիվանագիտական միջադեպը համընկավ կովկասյան վտարանդիության, քաղաքական գործունեության ռազմավարության

²⁴⁵ Steu *Ali Fuat Cebesoy. Siyasi Hatıralar. Büyük Zaferden Lozana. Cilt 1, İstanbul, Temel Yayınları, 2002, s. 9*: Թուրք պատմաբաններն ընդհանուր առմամբ շեշտում են, որ Աթաթյուրքի արտաքին քաղաքականության կարևոր սկզբունքներից էր չարել ռուսների հետ հարաբերությունները, իսկ մյուս սկզբունքն էր՝ ավարտի հասցնել Լոզանի պայմանագրով կիսատ մնացած Ազգային ուխտի իրականացումը, ինչի հետևանքով առաջին պլան մղվեցին Հաթայի և Մոսուլի պրոբլեմները (տես *Ümit Özdağ, a.g.e., s. 168*):

²⁴⁶ Այսպես, ԱԳ նախարար Յուսուֆ Քեմալին 1922 թ. փետրվարի 1-ին գրված նամակում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Բամեթ Բնյունյուն ավելի պարզ է արտահայտվում. «Աստված մի արասցե, եթե ռուսներին անհանգստացնենք, դա մեր պարտության պատճառ կդառնա» (տես *Tuncay Özkan. MIT in Gizli Tarihi. İstanbul, ALFA, 2003, s. 99*):

փոփոխման հետ, որը հանգեցրեց վտարանդիական կառույցների բնույթի արմատական վերափոխմանը:

Այսպիսով՝ 1919–1922 թթ. Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության մեջ ձևավորվեցին կովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման ռազմավարության հիմքերը: Ազգայնական շարժման շրջանի համար այդ քաղաքականությանը բնորոշ էին նախորդ՝ երիտթուրքական, շրջանում մշակված քաղաքական ուղեգծի իներցիոն շարունակումը և համեմատաբար կարճաժամկետ խնդիրների շեշտադրումը: Նշված ժամանակահատվածում քեմալական կառավարության վարած՝ Կովկասի մահմեդականներին հովանավորելու և օգտագործելու քաղաքական ուղեգծում հաճախ էին չհամակարգվածության և անհամաձայնության դեպքերը, ինչը բացատրվում է թուրք առաջնորդների տարբեր մոտեցումներով: Այնուամենայնիվ, քեմալական կառավարությունը կարողացավ խուսափել ռուս-թուրքական հարաբերություններում լարվածության ծագումից՝ 1922 թ. դիվանագիտական միջադեպի համար ամբողջ մեղքը բարդելով Բեքիր Սամիի և Ալի Ֆուադ Ջեբեսոյի վրա, որոնք, իբր, գործում էին իրենց նախաձեռնությամբ, մինչդեռ ԹԱՄԺ-ի կառավարությունն անտեղյակ էր ևրանց ձեռնարկած քայլերին: Դրա հետ մեկտեղ Քյազիմ Կարաբեքիրն ընդհանրապես մնաց սովերում:

Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությունն ու տեղը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում. 1923 – 1928 թթ.

1923 թ.՝ նոր պետության հիմնադրումից և հանրապետական կարգերի հաստատումից հետո, ազգայնական շարժման շրջանի հախուռն, ինտերգիոն և մեծ մասամբ կարճաժամկետ խնդիրների լուծման համար քաղաքական վտարանդիության ներուժի օգտագործումն իր տեղը զիջեց հստակ ծրագրված ու մշակված քաղաքականությանը: Հանրապետության հատուկ ծառայությունների ստեղծումից հետո նրանց վրա դրվեց կովկասյան վտարանդիության վերահսկողության պարտականությունը: Հետախուզական կառույցները արտաքին գերատեսչության հետ համատեղ համաձայնեցված կերպով մշակում էին կովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունների օգտագործման ռազմավարությունը, դրանում ճշգրտումներ կատարում ըստ Եվրոպայում և տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական զարգացումների:

Երկու գերատեսչությունների միջև վտարանդիության հետ աշխատանքի ու վերահսկողության պարտականությունների բաշխումը առաջացրեց պետության վերնախավի կողմից այդ ռազմավարության հաստատման անհրաժեշտություն: Նման ձեռնարկումը վկայում է, թե հանրապետական Թուրքիան ինչ կարևորություն էր տալիս իր քաղաքական զինանոցում ներառված այդ լծակին: Արտաքին քաղաքական խնդիրների լուծման համատեքստում հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման ռազմավարության մշակման վրա զգալի ազդեցություն ունեցան թուրքական ազգայնականության գաղափարախոսությունը և արտաքին

քաղաքականությունում դրա դրսևորումը, նախորդ գաղթերի հետևանքով երկրում հաստատված և թուրքական հասարակության բաղկացուցիչ տարր դարձած չերքեզական զանգվածի և 1920 թ. քաղաքական վտարանդիության միջև դրվող տարբերակումը, հյուսիսկովկասյան համայնքի նկատմամբ վարվող քաղաքականությունը, Թուրքիայում հետախուզական կառույցների ստեղծումն ու դրանց համակարգում քաղաքական վտարանդիության հետ աշխատող ստորաբաժանումների առանձնացումը: Աշխատության հիմնական խնդրի լուսաբանման տեսակետից հարկ ենք համարում համառոտակի ուսումնասիրել թվարկված խնդիրներից մի քանիսը:

1923 թ. հոկտեմբերի 29-ին հանրապետության հռչակման հետ նոր պետության հիմքում դրվեց ազգ – պետություն սկզբունքը: Սակայն դեռ հունական բանակի դեմ տարած պատմական հաղթանակից հետո՝ 1922 թ. նոյեմբերի 1-ին, Աթաթյուրքը, Էլույթ ունենալով խորհրդարանում, հայտարարեց, որ «ստեղծվող պետությունը թուրքական պետություն է»²⁴⁷: Նորաստեղծ հանրապետությունն սկզբից նեթ վարեց թուրքացման քաղաքականություն, որի հիմքում դրված էր թեև վերանայված, բայց ընդհանուր էությունը պահպանած երիտթուրքական քաղաքականության տարբերակը՝ նպատակաուղղված լեզվի ու կրոնի միասնության հիման վրա բազմատարր մահմեդական օսմանյան ազգից միատարր թուրք ազգի ձևավորմանը* : Խնդրի լուծմանը նպաստեց այն հանգամանքը, որ 1923 թ. դրությամբ քրիստոնյա փոքրամասնությունները հիմնականում պետությունից

²⁴⁷ Şen *Fikret Başkaya*. Batılılaşma, Çağdaşlaşma, Kalkınma. Paradigmanın İflosu. Resmi İdeolojinin Eleştirisine Giriş. İstanbul, Doz Yayınları, 1991, s. 64:

* 1918 թ. գրված մի հոդվածում պանթուրանականության գաղափարախոս, բանաստեղծ ու գրող Զիյա Գյոքալպը հիմնավորել էր այն միտքը, որ օսմանականությունն ու թուրանականությունը ոչ թե իրար հակասող, այլ միմյանց լրացնող գաղափարներ են, և պետք է ոչ թե «օսմանացնել թուրքերին, այլ հակառակը՝ թուրքացնել օսմանցիներին» (տե՛ս *Masami Arai*. Jön Türk Dönemi Türk Milliyetçiliği. İstanbul, İletişim Yayınları, 2000, ss.145-146):

վտարված կամ ոչնչացված էին: Ի տարբերություն երիտթուրքերի պանթուրանական և պանիսլամական անիրականանալի ծրագրերից, քեմալականները, հրաժարվելով դրանցից, որդեգրեցին «թուրքականությունը Անատոլիայի սահմաններում» բանաձևը՝ նպատակ ունենալով թուրքացնել այն բնակչությանը, որը գտնվում էր 1920 թ. Ազգային ուխտի գծած սահմաններում²⁴⁸:

Աթաթյուրքի օրոք իրականացվող թուրքացման քաղաքականությունը կարելի է բաժանել երկու փուլի²⁴⁹: Առաջինը չափավոր կամ նախապատրաստական փուլն էր, որը տևեց մինչև 1928 թ.: Երկրորդը բռնի, պարտադիր թուրքացման շրջանն էր, որն սկսվեց 1928 թ. լատինատառ այբուբենի ընդունմամբ: Թուրքացման քաղաքականության հիմնական միջոցներն էին՝ այլ էթնիկական խմբերին իրենց մայրենի լեզվով հաղորդակցման արգելումը և համատարած թուրքերենի պարտադրումը՝ «Հայրենակի՛ց, թուրքերեն խոսիր» կարգախոսով, չերթեզների, լագերի, քրդերի և մյուս ժողովուրդների գոյության ժխտումը, նրանց մշակութային ավանդույթների դրսևորումների արգելումը և թուրքական մշակույթի պարտադրումը: 1934 թ. ազգանունների մասին օրենքի ընդունմամբ մահմեդական փոքրամասնություններին՝ արգելվեց ավանդական անուններ և ազգանուններ կրելը, դրանք ևս ենթակա էին թուրքացման:

Այնուամենայնիվ, Աթաթյուրքը, զիտակցելով էթնիկապես բազմատարր միջավայրի թուրքացման դժվարությունները, թրքությունը և «թուրք» հասկացությունը դիտում էր որպես ոչ այնքան ծագումնաբանական, էթնիկական չափանիշ, որքան լեզվական ու մշակութային միասնության հիման վրա ազգային ձուլմամբ ընդհանուր

²⁴⁸ Տե՛ս *Ibrahim Bahadır. Ümmetten Millete. Türk Ulusu'nun İnşası (1860-1945)*. Ankara, Kalan Yayınları, 2001, s. 128, նաև՝ *Masami Arai, a.g.e.*, s. 146:

²⁴⁹ Թուրքիայի Հանրապետության առաջին տարիների թուրքացման քաղաքականության ու փուլերի դրա բաժանման մասին ավելի հանգամանորեն տես *Ayhan Aktar. Varlık Vergisi ve «Türkleştirme» Politikaları*. İstanbul, İletişim, 2000, ss. 101-134:

ինքնության ձևավորում^{*}, որը ամրապնդվելու է մինևույն քաղաքացիության կապով²⁵⁰:

Թուրքականության բնույթի ազգայնականությունն իր արտահայտությունն ստացավ նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Թուրք գիտնական Գոքչեն Ալիքայան, վերլուծելով տարբեր կառավարությունների ծրագրերը, Թուրքիայի արտաքին քաղաքականությունում ազգայնականության դրսևորումը բաժանում է երեք շրջանի. 1. գաղտնի, կամ քողարկված, 2. ծայրահեղ, 3. սովորական²⁵¹:

Գաղտնի, կամ քողարկված, ազգայնականության շրջանն սկսվում է հանրապետության հռչակմամբ և շարունակվում մինչև 1939 թ.՝ Ջելալ Բայարի երկրորդ կառավարությունը: Այդ շրջանին բնորոշ էր հիմնական ուշադրության կենտրոնացումը ներքին բարեփոխումների վրա²⁵²:

1939 թվականից մինչև 1944 թվականը՝ «ազգային շեֆի (Milli Şef Dönemi)» կառավարման շրջանում, Թուրքիան ագրեսիվ արտաքին քաղաքականություն էր վարում, որում ակտիվորեն արձարծվում էին «արտաքին թուրքերի» ազատագրման, Կովկասի միավորման և դեպի Միջին Ասիա ճանապարհ բացելու պրոբլեմները:

* Այդ մտեցումն արտացոլվեց նրա հանրահայտ «ինչ երջանիկ է նա, ով ասում է՝ ես թուրք եմ (Ne mutlu Türküm diyene)» արտահայտության մեջ, այսինքն՝ երջանիկ է ոչ թե՛ ծագումով թուրքը, այլ՝ իրեն թուրք համարողը: 1930-1940-ական թթ.՝ ազգայնամոլության և թուրքացման մոլեզման տարիներին, Աթաթյուրքի խոսքը թուրքականությունն արտահայտող պարբերականներում վերածնակերպվեց՝ «ինչ երջանիկ է թուրք ծնվածը (Ne mutlu Türk yaratılanlara)» (տես *Nizam Önem. Fethi Tevetoğlu. «Modern Türkiye'de Siyasi Düşünce»*, Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 623):

²⁵⁰ Տե՛ս *T. C. Anayasası (1995 değişiklikleriyle)*. İstanbul, Salan Yayınları, 1998, s. 49; 1982 թ. ԹՀ Սահմանադրության 66-րդ հոդվածում նշվում է, որ «Թուրքական պետության հեն քաղաքացիության կապով բոլոր կապվածները թուրք են»:

²⁵¹ Տե՛ս *Gökçen T. Alpaya. Türk Dış Politikası'nda Milliyetçilik. «Modern Türkiye'de Siyasi Düşünce»*, Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 157-162:

²⁵² *A.g.e.*, s. 158:

1945 թվականից հետո արտաքին քաղաքականությունում որդեգրվեց սովորական ազգայնականության ուղեգիծը, երբ թուրքական կառավարությունը պատեհ առիթներով օգտագործում էր «գերության մեջ գտնվող թյուրքերի, հյուսիսկովկասցիների ու Ղրիմի թաթարների ազատագրման անհրաժեշտության և նրանց արդար պայքարին սատար կանգնելու հարցերը»²⁵³:

Արտաքին քաղաքականության ընդհանուր շեշտադրումների փոփոխությունը համապատասխան շտկումներ էր մտցնում հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման ռազմավարության մեջ:

Այն, որ հանրապետության հիմքում դրվեց ազգային պետության (ulus-devlet) սկզբունքը, արտահայտվեց ոչ թուրք փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքի կտրուկ փոփոխությամբ, լեզվական ու մշակութային առանձնահատկությունների վերացման նպատակով ճնշման գործադրմամբ և թուրքական միջավայրում ուժացման քաղաքականության որդեգրմամբ:

Չերքեզական հասարակության առնչությամբ դրա դրսևորումներն էին՝ Ստամբուլի Բեշիքթաշ թաղամասում գործող չերքեզական դպրոցի փակումը, չերքեզակա՝ կազմակերպությունների արգելումը²⁵⁴, մի շարք չերքեզական գյուղերի վերանվանումը (թուրքացումը), գյուղական բնակավայրերում «Թուրքական օջախ» կազմակերպության ակտիվիստների կողմից այն թեզի քարոզումը, թե «չերքեզերեն խոսելն արգելված է»: Կարևոր ձեռնարկում էր ազգայնական շարժման պատմության վերաշարադրումը, ըստ որի՝ չերքեզների դերը նսեմացվեց և չերքեզներ Ազնավուրի ու Չերքեզ

էթեմի* «դավաճանությունների» շեշտադրմամբ «չերքեզականությունը» ներկայացվեց որպես դավաճանության հոմանիշ**:

1930–1940-ական թթ. թուրք ազգայնամուլներն ակտիվորեն շահարկում էին այն թեզը, թե նախկինում Օսմանյան կայսրության և Թուրքիայի բոլոր անհաջողությունների ու պարտությունների պատճառ

* Մինչև 1921 թ., երբ Չերքեզ էթեմի գործը ազգայնական շարժման ամենամարտունակ միավորումն էր ու Մ. Քեմալի իշխանության ամրապնդման ամենաազդեցիկ լծակը, իսկ էթեմը ճնշում էր Անատոլիայի տարբեր վայրերում Անկարայի կառավարության դեմ ուղղված սպստամբությունները, նա հայտնի էր որպես «քեմալական էթեմ»: Նշվում է, որ էթեմի պատվին ժողովրդական երգեր էին հորինվում, իսկ Անկարայի կառավարությունը նրան «ազգային հերոս (Ulusal Kahraman)» էր անվանում (տես *Çetin Öner. Şu Bizim Çerkesler. İstanbul, Can Yayınları, 2000, ss. 90-91*): «Չերքեզ էթեմ» անունը նա ստացավ միայն «դավաճան» էթեմ դառնալուց հետո, իսկ թուրքական պատմագրության մեջ գրանցվեց որպես «Չերքեզ էթեմ» (տես *Metin Sever. Kafdağ'ın Bu Yüzü. Türkiye'deki Kafkas Kökenliler. İstanbul, Doğan Kitapçılık, 1999, ss. 44-45*):

** Մեր օրերում Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնության պայքարի հիմնական նպատակներից մեկը այդ պիտակը հանելն է, ինչը հնարավոր է Չերքեզ էթեմի իրական պատմության վերաշարադրման միջոցով: Համայնքի «Կովկասյան սփյուռք» ինտերնետային կայքն իր հինգամյա գործունեությունը զնահատող խմբագրական հոդվածում հատուկ նշում է, որ «Չերքեզ էթեմը դավաճան չէր, նրան արդարացնելու և աճյունը Թուրքիայում վերաթաղելու քարոզարշավի» համար 10 000 ստորագրություն է հավաքվել և ուղարկվել Թուրքիայի Ազգային մեծ ժողով (տես *Oğuz Berk. 5 Yaşınç.yız. 12 Haziran 2010* (www.kafkasdiasporasi.com/haber_detay.asp?haberID=3436): «Հաբերթուրք»

հեռուստատեսիայի «Հայելու հետևի կողմը» հաղորդաշարում 2007 թ. դեկտեմբերի 19-ին հեռարձակվել էր «Չերքեզական դավաճանություն» ծրագիրը, ինչը մեծ ազդուկ և դժգոհության ալիք բարձրացրեց չերքեզական համայնքում, և «Կովկասյան սփյուռք» կայքը հրապարակեց «Չերքեզներն են դավաճան, թե՛ Հաբերթուրքը» հոդվածը (տես www.kafkasdiasporasi.com/yazar.asp?yaziID=1480): Չերքեզ էթեմի արդարացման խնդիրը հյուսիսկովկասյան համայնքի համար առաջնային նշանակություն ունի, քանի որ, ինչպես նշում է թուրք լրագրող Մեթին Սևերը, «չերքեզի անուն լսելիս թուրքական հասարակությունը պատկերացնում է չերքեզական ձևով պատրաստված հավ, գեղեցիկ, նեղ պարանոցով չերքեզ աղջիկներ, չերքեզական պարեր և Չերքեզ էթեմին» (տես *Metin Sever. Kafdağ'ın Bu Yüzü. Türkiye'deki Kafkas Kökenliler. İstanbul, Doğan Kitap, 1999, s. 55*):

²⁵³ Տես *Dr. Necip Hablemitoğlu. Kırım'da Türk Soykırımı. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002, s. 75*:

²⁵⁴ Տես «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişme». Ankara, Kaf Der Yayınları, 1999, s. 12: Խոսքը չի վերաբերում վտարանդիության քաղաքական կազմակերպություններին:

են եղել ոչ թուրք փոքրամասնությունները²⁵⁵: Աթաթյուրքի կառավարման օրոք արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնող Մահմուդ Էսադ Բոզորուրը 1930-ական թթ. համաժողովներում ունեցած իր ելույթներում մշտապես այն կոչն է արել, թե «թուրքական պետության գործերով պետք է զբաղվեն մաքուր թուրքերը, և, բացի գտարյուն թուրքերից, այլոց դրանք չպետք է հանձնվեն», քանի որ դրա վերջը դավաճանությունն է²⁵⁶: Որպես սպացույց նա բերում էր Բեքիր Սամիին, որը 1921 թ. Լոնդոնի խորհրդածոլովում «իր ամբողջ ուժն ուղղել էր Կովկասում չերքեզական պետության ստեղծմանը»²⁵⁷:

Քեմալական կառավարությունը Թուրքիայում չերքեզական հասարակության դեմ ուղղված իր առաջին քայլը ձեռնարկեց ազգայնական պայքարի ավարտից վեց ամիս անց. 1923 թ. մարտին Մարմարայի շրջանի 16 չերքեզական գյուղերի բնակչությունը «հակապետական ապստամբություններին մասնակցելու» պատճառաբանությամբ տեղահանվեց և արտրվեց Մալաթիայի շրջան²⁵⁸: Հետագայում արքայի վերաբերյալ որոշումը բեկանվեց, գյուղացիներին վերադարձրեցին իրենց նախկին բնակության վայրեր, սակայն բռնագրավված ունեցվածքը չվերադարձվեց²⁵⁹: Ուշագրավ է, որ

²⁵⁵ Stü Tanil Bora, a.g.e., s. 20:

²⁵⁶ A.g.e., s. 21:

²⁵⁷ Stü Mahmut Esat Bozkurt. Atatürk İhtilali. İstanbul, 1967, ss. 215–216:

²⁵⁸ Stü Yaşar Bağ. Çerkeslerin Dramı: İşgal, Soykırım, Sürgün ve Göç. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 216: Հարկ է նշել, որ Օսմանյան հասարակության մեջ ինտեգրվածության, ինքնության մեջ տեղի ունեցող ուժածման, կառավարության նկատմամբ հավատարմության և մի շարք այլ պատճառներով չերքեզական համայնքն ակտիվորեն չպայքարեց Մարմարայի շրջանի չերքեզական գյուղերի բնակչությանն արևելյան շրջաններ արքայելու որոշման դեմ: Որպես բացառություն կարելի է նշել սոցիոլոգ և պատմաբան, ծագումով ուլբի Մեհմեդ Ֆեթհիբեյին, որն այդ որոշումը քննադատող նամակներ ուղարկեց կառավարության անդամներին և խորհրդարանի պատգամավորներին (տես İzzet Aydemir, a.g.e., s. 17):

²⁵⁹ Stü Yaşar Bağ. a.g.e., s. 216:

արքայի որոշումն ստորագրել էր այն ժամանակվա վարչապետ, ազգությամբ չերքեզ Ռաուֆ Օրբայը²⁶⁰, որը նաև Լոզանի խորհրդածոլովում չերքեզներին Թուրքիայում փոքրամասնության կարգավիճակ տալու հարցի քննարկման դեմ էր արտահայտվել^{*}:

Հյուսիսկովկասյան վտարանդիության պատմության համատեքստում կարևոր է այն փաստը, որ նույնիսկ թուրքացման քաղաքականության պայմաններում թե՛ քեմալական, թե՛ հետագա կառավարությունները մինչև 1960-ական թթ. տարանջատում էին Օսմանյան կայսրության օրոք տեղափոխված ու վերաբնակեցված չերքեզներին, որոնց նրանք ընկալում էին որպես թուրք հասարակության բաղկացուցիչ մասի, և 1920-ական թվականների պանդուխտներին, որոնց ուժն ու կառույցներն անհրաժեշտ էր պահպանել արտաքին քաղաքական խնդիրների լուծման, քաղաքական առուծախի համար: Այդ խնդիրը լուծելու նպատակով քեմալական կառավարությունը դիմեց մի շարք քայլերի, որոնցից հարկ է նշել թեև պաշտոնապես քողարկված, բայց ակնհայտորեն բարյացակամ վերաբերմունքն ու աջակցությունը: Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունն օգտվում էր նաև պանթուրքականությամբ տոգորված թուրքական զանգվածի աջակցությունից, որն առավել ցայտուն կերպով էր արտահայտվում կովկասյան վտարանդիության կենտրոն դարգած Ստամբուլում:

ԽՍՀՄ դեսպան Յակով Սուրիցը 1927 թ. հոկտեմբերին Լև Կարախանին գրված զադտնի նամակում, պարզաբանումներ տալով այդ խնդրի վերաբերյալ, իրավիճակը նկարագրել է հետևյալ կերպ. «Եթե

²⁶⁰ A.g.e.

* Ըստ Իզզեթ Այդեմիրի՝ Ռաուֆ Օրբայը կյանքի վերջին տարիներին, հիշելով իր արմատները, սկսեց մասնակցել Ստամբուլի չերքեզական համայնքի հասարակական գործունեությանը: Չերքեզական հավաքներից մեկի ժամանակ նա ավստանք հայանեց իր այդ երկու որոշման համար (տես İzzet Aydemir, a.g.e., s. 94): Մի շարք աղբյուրներ որպես Մարմարայի շրջանի չերքեզական գյուղերի տեղահանման գաղափարի հեղինակ նշում են ուլբի Հունջ Ալի Սաիդ փաշային (տես Metin Sever, a.g.e., s. 32):

վերցնենք Կոստանդնուպոլսի հասարակությունը, հատկապես ծայրահեղ թուրքականությամբ տոգորված այն տարրերը, որոնք այս կամ այն կերպ հարում են «Թուրքական օջախին», ապա նա չի կարող մեր նկատմամբ դրականորեն տրամադրված լինել: Կովկասից մինչև Թուրքեստան ձգվող «Մեծ Թուրանի» մասին երազող այդ տարրերը չեն կարող գաղափարապես ու քաղաքանապես չմերձենալ կովկասյան ու թուրքեստանյան վտարանդիների հետ: Այստեղից բխում է Կոստանդնուպոլսի հասարակության այդ հատվածի՝ մեր նկատմամբ տածած բնական թշնամանքը, սրանով են պայմանավորված կովկասյան վտարանդիներին ցուցաբերվող ամեն տեսակի օգնությունն ու հովանավորությունը: Նրանք Կոստանդնուպոլսում գտնում են ապաստան, իրենց հակախորհրդային ելույթների ու գործողությունների համար օգնություն և որոշակի հենակետ: Տվյալ դեպքում տեղական ոստիկանությունը դառնում է հասարակության այդ հատվածի հավատարիմ օգնականը և աչք է փակում «Կովկասի գծով աշխատող» այն վտարանդի սպիտակզվարդիականների մուտքի ու գտնվելու վրա, որոնց Անկարայի կառավարությունը պաշտոնապես արգելել է մուտք գործել Թուրքիա»²⁶¹:

Սակայն Ստամբուլի ոստիկանության վերաբերմունքը կովկասյան վտարանդիներին, որոնցից շատերը ծառայում էին հենց այդ ոստիկանության շարքերում, պայմանավորված էր ոչ այնքան հասարակության վերաբերմունքով, որքան Անկարայից՝ հետախուզության ծառայությունից, ստացվող հրահանգներով:

Սկսած «Հատուկ կազմակերպությունից» մինչև 1965 թ. հուլիսի 6-ին առաջին անգամ հետախուզության մասին առանձին օրենքի ընդունումն ու Ազգային հետախուզական ծառայության ստեղծումը թուրքական հետախուզական կառույցները ռազմական բնույթի էին և գտնվում էին Գլխավոր շտաբի կազմում: Այդ իրավիճակը չփոխվեց նաև

1927 թ. հետախուզական կառույցի ստեղծմամբ²⁶²: Ջինվորականության գերակայության առանձնահատկության հետ մեկտեղ մեկ այլ աչքի ընկնող հատկությունը ավանդականության պահպանումն էր, երբ որոշ ընտանիքների զավակներ սերնդեսերունդ ծառայության էին անցնում այդ համակարգում, ինչով բացատրվում է հետախուզական կառույցներում չերթեզվերի արդեն նշված մեծ տոկոսային գերակշռումը²⁶³:

Ազգայնական շարժման տարիներին Անկարայի կառավարությանը կից ստեղծվեցին մի շարք հետախուզական և անվտանգային կառույցներ, որոնց բնորոշ էր գոյության կարճատևությունը՝

1920 թ. փետրվարի 18-ին ստեղծվեց Ռազմական ոստիկանության կազմակերպությունը (Askeri Polis Teşkilatı), իսկ 1921 թ. ապրիլի 1-ին՝ Հետախուզության վարչությունը (Tetkik Heyeti Amirlikleri): Այս երկու կազմակերպությունների ստեղծմամբ դրվեցին արտաքին ու ներքին հետախուզության ծառայությունների հիմքերը, ընդամին այդ կառույցներում ծառայության անցան նաև կովկասյան վտարանդիները: Նրանցից շատերը կատարում էին խորհրդային դիվանագետների և ծառայողների նկատմամբ գաղտնի վերահսկողություն ու հետապնդում, ինչպես նաև, օգտագործելով Կովկասում իրենց ունեցած հնարավորությունները, տեղեկություններ հավաքում ու տրամադրում ԹՀ Գլխավոր շտաբին: Վերը նշված կազմակերպություններից բացի,

²⁶² Տե՛ս *Tuncay Özkan*. MİT in Gizli Tarihi. İstanbul, ALFA, 2003, s. 77-78: Քաղաքացիական անձանց սկսեցին հետախուզական կառույցներ ընդունել 1970-ական թվականներին, իսկ իրականում ԱՀԾ-ն սկսեց «քաղաքացիականացվել» 1994 թ. (a.g.e.):

²⁶³ Տե՛ս *Mehmet Eymür*. Analiz. Bir MİT Mensubunun Anıları. İstanbul, AD Yayıncılık A.Ş., 1997, s. 161:

* «Հատուկ կազմակերպությունից» և դրա հիմքի վրա ստեղծված «Քարաքոլից» հետո 1920 թ. սեպտեմբերի 23-ին ստեղծվեց «Համազ խումբը (Hamza Grubu)», որը գործեց մինչև 1921 թ. օգոստոսի 31-ը, իսկ 1921-1923 թթ. դրան փոխարինեց «Ազգային պաշտպանության խումբը (Müdafaa-i Milliye Grubu, կամ Mım Mım Grubu)» (տե՛ս *Tuncay Özkan*, a.g.e., ss. 110-111, 121):

²⁶¹ Տե՛ս АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, л. 263, л. 80:

1922–1926 թթ. Կովկասում ակտիվ հետախուզական գործողություններ էր վարում նաև Գլխավոր շտաբի հետախուզական վարչությունը (Genelkurmay İstihbarat Dairesi), որը, բացի վտարանդիներից, օգտագործում էր նաև դեռ «Հատուկ կազմակերպության» ստեղծած հետախուզական ցանցը²⁶⁴:

Թուրքիայում հետախուզությունը որպես առանձին ծառայություն ստեղծվեց 1927 թ.: Դրա հիմնադիրը լեգենդար գնդապետ Վալտեր Նիկոլային էր, որը նաև Գերմանիայի ռազմական հետախուզության՝ Աբվերի կազմակերպիչներից էր: Վալտեր Նիկոլային Աթաթյուրքի հրավերով 1926 թ. հոկտեմբերին* ժամանեց Թուրքիա** ու ձեռնամուխ եղավ հետախուզական կառույցի և մասնագետների պատրաստմանը²⁶⁵: 1927 թ. հունվարի 5-ին ստեղծվեց Ազգային անվտանգության ծառայությունը՝ ԱԱԾ-ն (Milli Amele Hizmeti – MAH, կամ Milli Emniyet Hizmeti - MEH), որը, օրենքի սահմանմամբ լինելով ներքին գործերի նախարարությանը կից կառույց, գաղտնի կերպով ֆինանսավորվում էր անմիջապես կառավարության կողմից²⁶⁶: Կառույցը, որը բաղկացած էր չորս վարչությունից՝ հետախուզության, հակահետախուզության, քարոզչության, տեխնիկական,

արտասահմանում բացեց երեք ռեզիդենտային գրասենյակ՝ Վիեննայում, Թեհրանում և Կահիրեում:

ԱԱԾ-ի ստեղծմամբ կանոնակարգվեցին քաղաքական վտարանդիության հետ աշխատանքները և նրանց ու Թուրքիայի իշխանությունների միջև կապը: Այդ աշխատանքներում հիմնական պատասխանատու օղակն էր ԱԱԾ-ի ստամբուլյան կառույցը (ամիրիկ), քանի որ այնտեղ էր կենտրոնացած քաղաքական վտարանդիությունը:

Թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունները համընկան այդ երկրում և եվրոպական մի շարք պետություններում բնակություն հաստատած կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեության մեջ կատարվող փոփոխությունների հետ: Դրա հետևանքով այդ գործունեությունն ստացավ այնպիսի որակական, բազմակողմանի և վերախմաստավորված բնույթ, որը հնարավորություն է տալիս խոսելու կովկասյան վտարանդիության, այդ թվում նաև նրա կարևոր հատվածը կազմող հյուսիսկովկասյան վտարանդիության, քաղաքական գործունեության ռազմավարության վերանայման մասին: Մինչև 1924 թ., երբ Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո դեռ չէր անցել երկար ժամանակ, կովկասյան վտարանդիության շրջանում գերակշռում էր այն տեսակետը, թե ժողովուրդը դժգոհ է խորհրդային կարգերից, և հնարավոր է ապստամբությունների միջոցով տապալել նոր իշխանությունն ու վերականգնել անկախությունը: Այդ տեսակետի տիրապետությամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ մինչև 1923 թ. հյուսիսկովկասյան և ադրբեջանական վտարանդիությունները միավորել էին իրենց քաղաքական ջանքերն ու հանդես էին գալիս միասնական ճակատով, և որ վտարանդիության ղեկավար դիրքերում էին ռազմական գործողությունների վարման փորձ ունեցող ու Կովկասի տարբեր վայրերում գտնվող գործակալների միջոցով դժգոհություններ հարուցող, ապստամբությունների նախապատրաստմամբ զբաղվող այնպիսի անձինք, ինչպիսիք էին

²⁶⁴ Տե՛ս *Tuncay Özkan*, a.g.e., s. 161:

* Թուրքիայի հատուկ ծառայությունների պատմության մասնագետ Էրգուն Հիչլեմազը գրում է, որ Վալտեր Նիկոլային Անկարա է ժամանել 1928 թ., սակայն դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ 1927 թ. ԱԱԾ-ն արդեն գոյություն ուներ (տե՛ս *Ergun Hıçılmaç*, Teşkilat-ı Mahsusa'dan MIT'e. İstanbul, Varlık Yayınları, 1990, s. 85):

** Վալտեր Նիկոլային քաջածանոթ էր թուրքական իրականությանը, քանի որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ներկայացուցչության կազմում հետախուզական գործունեություն էր իրականացնում Օսմանյան կայսրությունում (տե՛ս *Вальтер Николаи*. Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время. «В. Николаи, М. Ронге, Ч. Э. Россель, Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время», Киев, «Княгиня Ольга», 2005, сс. 141-142):

²⁶⁵ Տե՛ս *Tuncay Özkan*, a.g.e., s. 162:

²⁶⁶ A.g.e., s. 163:

Սաիդ Շամիլը, գեներալ Խաբաևը, գնդապետ Մուսալաևը, դոկտոր Խոսրով-բեկ Մուլթաևը:

Ապստամբությունների ճնշումը և խորհրդային կարգերի կենսունակության . ապացուցումն անհրաժեշտաբար փոխեցին վտարանդիության քաղաքական գործունեության բնույթը. անցում կատարվեց դեպի երկարատև գաղափարական ու կազմակերպական աշխատանքն ու պայքարը, ինչը հնարավոր էր տարաբնույթ քաղաքական կազմակերպությունների (կոմիտեների) ստեղծման, դրանց միջև սերտ կապերի և համագործակցության հաստատման դեպքում: Եթե մինչև 1923 թ. գոյություն ունեին համատեղ լեռնական-ադրբեջանական, այսինքն՝ բացի ընդհանուր շահերից, նաև մահմեդականության սկզբունքով միավորված, կառույցներ, ապա 1924 թ. սկսեցին կազմավորվել առանձին ազգային կենտրոններ: Կովկասյան վտարանդիությունում սկիզբ առավ մի նոր՝ նախկին կառույցների տրոհման կամ ազգային քաղաքական միավորումների վերակազմավորման քաղաքական գործընթաց: Երկարատև բանակցություններից հետո նորաստեղծ կառույցները համաձայնության եկան Կովկասյան համադաշնությանն ստեղծման նպատակով համագործակցելու և իրենց ուժերը միավորելու հարցում: Կովկասյան վտարանդիական կառույցներում իշխանությունն անցավ անկախ հանրապետությունների նախկին առաջնորդներին՝ Մ. Ռասուլզադեին, Գեգեչկորիային, Հայդար Բամատին, Վասան-Գիրեյ Ջաբաղիին և ուրիշների: Նրանք բոլորն էլ ավելի երկարատև քաղաքական պայքարի կողմնակիցներ էին, իրենց գործունեությունում շեշտը դնում էին հակախորհրդային գաղափարական-տեղեկության պատերազմ վարելու վրա:

Կովկասյան վտարանդիությունում այս քաղաքական կերպափոխման վերջնակետ կարելի է համարել 1924 թ. հակախորհրդային ապստամբության ճնշումը Վրաստանում: Դա վտարանդիությանն ապացուցեց, որ պայքարի տվյալ ձևը

անարդյունավետ է և վտարանդիության հեղինակության տեսակետից վնասակար: Խորհրդային իշխանությունների կողմից Կովկասում յուրաքանչյուր ապստամբության ճնշմանը հետևում էին խիստ պատժամիջոցների շրջան, վտարանդիության գործակալների ցանցի բացահայտում ու ոչնչացում, ինչը հանգեցնում էր հայրենիքում վտարանդիության ունեցած ազդեցության թուլացմանն ու հեղինակազրկմանը: Արտասահմանում դրա հետևանք էր լինելու վտարանդիներին ապաստան տված և իրենց քաղաքական հաշվարկներում նրանց կարողություններն օգտագործելու ձգտող պետությունների համար վտարանդիության կարևորության անկումը:

Նման մտավախությունը ևս նպաստեց այն բանին, որ կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեության ռազմավարությունում կատարվեին համապատասխան փոփոխություններ: Դրանք ակհայտ կերպով դրսևորվեցին վտարանդիական կոմիտեների գործունեության բնույթի փոփոխման ձևով, առաջին հերթին Մտամբուլում, որը, ինչպես վերը նշել էինք, 1920-ական թթ. դարձել էր կովկասյան քաղաքական վտարանդիության գաղափարախոսական, մշակութային, հրատարակչական կենտրոն: Որպես քարոզչական-հրատարակչական պայքարին անցնելու ցայտուն ապացույց կարելի է հիշատակել «Նոր Կովկաս (Yeni Kafkasya)» հանդեսը, որի հրատարակումն սկսվեց 1923 թ. հոկտեմբերի 1-ին Մտամբուլում⁶: Այն աչքի ընկավ հակախորհրդային ուղղվածությամբ և առաջ քաշեց Ադրբեջանի ու Թուրքիայի միավորման գաղափարը²⁶⁷: Հանդեսի բովանդակությունը և ուղղվածությունը

⁶ Այլ տեղեկությունների համաձայն՝ հանդեսի առաջին համարը լույս է տեսել 1923 թ. սեպտեմբերի 26-ին (տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, л. 264, л. 118): Հանդեսի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը (1923–1928 թթ.) դադստանցի մուսաջիր Սեիդ Թախիր Դադստանին էր, որովհետև Թուրքիայում ոչ քաղաքացի լրատվամիջոցներ հրատարակելու իրավունք չուներ (տես А. С. Муртазалиев. Писатели дагестанского зарубежья. Библиографический справочник. Махачкала, Издательство «Эпоха», 2006, с. 32):

²⁶⁷ См АВП РФ, ф.132, Референтура по Турции, оп. 1, папка 1, д. 18, л. 79:

խորհրդա-թուրքական հարաբերություններում առաջացրին որոշակի լարվածություն, որի ստեղծման մեջ կարևոր դերակատարություն ունեցավ այն հանգամանքը, որ հանդեսի հրատարակումը հովանավորում էր կառավարող Ժողովրդական կուսակցությունը²⁶⁸: 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության պայմանագիրը թուրքական խորհրդարանի կողմից վավերացվելուց հետո հանդեսը 1926 թ. հունվարի 5-ին ժամանակավորապես փակվեց²⁶⁹, իսկ հետագայում սկսեց լույս տեսնել «Ազերի թուրք» անվամբ²⁷⁰:

1923-1924 թթ. կովկասյան վտարանդիության շրջանում կատարվող փոփոխություններին զուգահեռաբար եվրոպական քաղաքական շրջաններում ամրապնդվում էր այն կարծիքը, թե Կովկասում հնարավոր չէ առանց Թուրքիայի ներգրավվածության վարել արդյունավետ աշխատանք, և որ միայն այդ պետությունն իր աշխարհագրական դիրքի, պատմական, մշակութային, լեզվական և այլ կապերի բերումով իրական հնարավորություն ունի ազդելու կովկասյան ժողովուրդների ճակատագրի վրա:

Այսպես, Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Դեշները 1924 թ. արտաքին գործերի նախարարություն ուղարկված զեկուցագրում շեշտեց այն դրույթը, որ Թուրքիան, պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, իսլամադավանությամբ և անցյալում Կովկասում ներկայացվածությամբ, կարող է լինել այն երկիրը, որն ի վիճակի է նպաստելու նոր Կովկասի կազմավորմանը, և որ Թուրքիային Խորհրդային Միության մի շարք շրջանների հանձնումը համապատասխանում է Արևմուտքի շահերին²⁷¹: Այդ զեկույցում

²⁶⁸ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 6:

²⁶⁹ Տե՛ս АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 11, папка 78, л. 32, л. 314:

²⁷⁰ Տե՛ս *Зареванд*, Турция и Пантуранизм. Париж 1930, сс. 71-72:

²⁷¹ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 2: Ֆրանսիայի դեսպանը նաև կարծիք էր հայտնել, թե Մեծ Բրիտանիայի կառավարությունը չի առարկի, եթե Աջարիան, Նախիջևանը, Ղարաբաղը, Հայաստանի մի մասը և Ադրբեջանի մի մասը՝ մինչև Քուր գետը, տրվեն Թուրքիային (там же):

ուշագրավ է այն հաստատվածը, որտեղ պնդվում է, թե գործնականում Թուրքիան հնարավորություն ունի կապ հաստատելու Հյուսիսային Կովկասում գործող հակախորհրդային ուժերի հետ և ազդելու այդ տարածաշրջանում տիրող իրավիճակի վրա: Այդ համոզմունքը հիմնված էր նաև Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող ապստամբություններին Թուրքիայում ապաստան գտած վտարանդիության մասնակցության փաստի վրա: Օրինակ՝ 1924 թ. ապստամբության ժամանակ Չեչնիայի Բենոյ բնակավայրի (առկ) մոտակայքում գործող մեծ խմբավորումը առաջնորդում էր Թուրքիայից ժամանած Մուլթան Գիրեյը²⁷²:

Սակայն փաստերը վկայում են, որ ավելի ուշ՝ 1920-ական թթ. վերջերից, ֆրանսիական և բրիտանական հետախուզություններն սկսեցին անմիջականորեն աշխատել Թուրքիայում գտնվող կովկասյան մահմեդական քաղաքական վտարանդիության ներկայացուցիչների հետ, թեև մինչ այդ էլ օգտագործում էին Փարիզում գտնվող կովկասյան կենտրոնները և դրանց միջոցով հաղորդակցվում Ստամբուլում ակտիվորեն գործող վտարանդիության հետ: Կովկասյան քաղաքական վտարանդիության հետ 1920 թվականից սկսած ակտիվ և բազմաբնույթ աշխատանքներ վարեց Լեհաստանը, որտեղ 1920-1921 թթ. արդեն ձևավորվում էր այն գաղափարը, որ ռուսական տիրապետության տակ գտնվող ազգերի անջատողական շարժումներին սատարելու ճանապարհով կարելի է հասնել Ռուսաստանի, այնուհետև ԽՍՀՄ փլուզմանը^{*}:

Ստամբուլի կովկասյան մահմեդական վտարանդիության հետ լեհական իշխանությունների կապերը ակտիվացան 1924 թ., երբ

²⁷² Տե՛ս *Игорь Пыхалов*, указ. раб., с. 247:

* Այդ ռազմավարությունը, գործնականում մշակված լինելով Լեհաստանի Գլխավոր շտաբի «Արևելք» կոչվող երկրորդ բաժնի կողմից, հայտնի է որպես «Փրումեթևս» շարժում:

Թուրքիայում Լեհաստանի ներկայացուցիչ նշանակվեց Ռոման Կնոլը²⁷², որն Ստամբուլը դիտում էր որպես Կովկասում հակաբոլշևիկյան քարոզչության և հետախուզության համար ամենահարմար վայրը²⁷³: «Փրոմեթես» շարժման նախապատրաստական շրջանում Լեհաստանը փորձեց միավորել տարբեր երկրներում գործող ռուսաստանյան վտարանդիական կազմակերպությունները, և այդ համատեքստում Ռ. Կնոլը հանդես եկավ Կովկասի վտարանդիական կազմակերպությունների միավորման գաղափարով: Այդ գործունեության առաջին փուլն էր 1924 թ. հոկտեմբերին Ստամբուլում «Կովկասյան համադաշնայնականների կոմիտե (Комитет кавказских конфедералистов)» ստեղծելու մասին որոշման ընդունումը²⁷⁴: Ինչպես նշում է վրաց պատմաբան Գեորգի Մամուկիան, «Կոմիտեի կազմում ընդգրկվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի աջակողմյան քաղաքական կազմակերպություններից երեքական անդամ, որոնք թուրքական շրջաններում ունեին լավ կապեր»²⁷⁵: Հյուսիսային Կովկասը ներկայացնում էին Վասան-Գիրեյ Ջաբաղին, Ալիխան Կանտեմիրը և Այթեք Նամիթոքը²⁷⁶: 1925 թ. Վարշավայից ստացված ֆինանսավորմամբ Կոմիտեն ձեռնամուխ եղավ կոնկրետ գործողությունների՝ նպատակաուղղված Կովկասում գործող համախոհների հետ կապ հաստատելուն: Այդ նպատակով Կանտեմիրը

²⁷² 1922 – 1923 թթ. Ռ. Կնոլը Սոսկվայում Լեհաստանի դեսպանն էր (տես *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев. Организация “Прометей” и “прометейское” движение в планах польской разведки по развалу России/СССР. «Труды общества изучения истории отечественных спецслужб», т. 3. М., Изд-во «Кучково поле», 2007, с. 408*):

²⁷³ Տես *Георгий Мамулия: Идея кавказской конфедерации в рамках движения “Прометей”* (к истории пакта Кавказской конфедерации). Историко-культурный журнал «PROMETHEUS» N1 (www.chechen.org/page.5.348-zhurnal-chast.html):

²⁷⁴ Там же.

²⁷⁵ Там же.

²⁷⁶ Там же. Ադրբեջանի ներկայացուցիչներն էին Խոսրով-բեկ Սուլթանովը, Ֆուադ Էմիրջանը և նախկին շեյխ-ուլ-իսլամը, իսկ Վրաստանը՝ Ալեքսանդր Ասաթիանին, Դավիդ Վաչնաձեն, Միխայիլ Ծերեթելին:

մեկնեց Կարս, Վաչաձեն՝ Արդվին-Արդահանի շրջան, իսկ Սուլթանովը՝ Իրան²⁷⁷:

Այլ աղբյուրներում նշվում է, որ 1924 թ. Ստամբուլում ստեղծվեց նաև «Կովկասյան ազատագրական կոմիտե (Кавказский освободительный комитет)»²⁷⁸: Ադրբեջանցի պատմաբան Խալեդդին Իբրահիմլին այդ կոմիտեի ստեղծման տարեթիվ համարում է 1927 թ. և գրում է, որ այդ կոմիտեում Ադրբեջանը ներկայացնում էին Մ. Ռասուլզադեն ու Մ. Մելխոնիսը, Վրաստանը՝ Ն. Ժորդանիան, Ա. Զիեիձեն, Ա. Ասաթիանին, Ս. Մոլիվանին, Հյուսիսային Կովկասը՝ Մ. Շունշևը և Ի. Զմուշևը²⁷⁹:

Նման վտարանդիական քաղաքական կառույցների ստեղծումը աննկատ չանցավ խորհրդային դեսպանության կողմից, որը Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը 1924 թ. դեկտեմբերի 22-ին հանձնված հուշագրում, ի թիվս այլ խնդիրների, որոնց լուծումը պետք է նպաստեր երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը, նշել էր նաև «Թուրքիայում սպիտակգլավրդիական վտարանդիության հակախորհրդային գործունեությունը»²⁸⁰:

Կնոլի ստեղծաց ստամբուլյան Կոմիտեն եղավ այդ շրջանում լեհական իշխանությունների ամենաարդյունավետ քայլը, քանի որ 1923 թ. Պիլսուդսկու հրաժարականից հետո լեհական կառավարությունը թուլացրեց հակաբոլշևիկյան միասնական ճակատի ստեղծմանն ուղղված իր ջանքերը: Հաշվի առնելով ստամբուլյան Կոմիտեի հեռանկարները՝ Ռոման Կնոլն ու Տադեոշ Գոլովկոն* ջանքեր

²⁷⁷ Там же.

²⁷⁸ Տես *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев*, указ. раб., с. 332:

²⁷⁹ Տես *Халеддин Ибрагимли. “Кавказский дом” – миф или реальность. «Кавказ», 1997, N2*:

²⁸⁰ Տես «СССР и Турция», указ. раб., сс. 78-79:

* Լեհաստանի ԳՇ 2-րդ բաժնի աշխատող, որին Գ. Ադաբեկովը նշում է որպես «լեհական կառավարության ներկայացուցիչ Տ. Գոլովկո» (տես *Г. С. Агабеков. Г. П. У. (Записки чекиста). Берлин, Издательство «Стрела», 1930, с. 117*):

գործադրեցին, որպեսզի այդ կոմիտեն ընդլայնվի և դրա կազմում ընդգրկվեն Փարիզում գործող կովկասյան վտարանդիական կառույցի ներկայացուցիչներ, ընդամին նախապատվություն տրվեց կովկասյան հանրապետությունների նախկին ղեկավարներին և քաղաքական կուսակցությունների առաջնորդներին: 1924 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները, համաձայնության գալով Կովկասի համադաշնության ստեղծման հարցում, ստեղծեցին հատուկ հանձնաժողով՝ այդ ապագա պետության սահմանադրությունը մշակելու համար²⁸¹: Որոշում կայացվեց նաև Կովկասյան կոմիտեի ստեղծման մասին, որը պետք է «ընդհանուր առմամբ ղեկավարի Կովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը և միավորի արտասահմանում դիվանագիտական աշխատանքը»²⁸²:

Լեհական կառավարությունը Ստամբուլում գործող կովկասյան վտարանդիության կառույցները ֆինանսավորեց ամսական 1000 ԱՄՆ-ի դոլարի չափով, և մինչև 1928 թ. այդ գումարները փոխանցվեցին պարբերաբար Ստամբուլ ժամանող Տ. Գոլովկոյի միջոցով²⁸³: 1928 թ. լեհական կառավարությունը դադարեցրեց Ստամբուլում գործող կովկասյան քաղաքական վտարանդիության կառույցների ֆինանսավորումը²⁸⁴:

Ստամբուլում Ռ. Կնոյի ակտիվությունը հայտնվեց թուրքական հատուկ ծառայությունների և արտաքին գործերի նախարարության ուշադրության կենտրոնում: Ընդհանուր առմամբ, այն համապատասխանում էր Թուրքիայի շահերին, քանի որ վերջինս, ցանկանալով ավելի արդյունավետ կերպով օգտագործել կովկասյան վտարանդիությանը, այդուհանդերձ, խուսափում էր շատ ակնհայտ

²⁸¹ Տես *Георгий Мамулия*, указ. раб.:

²⁸² Там же. Կոմիտեում Հյուսիսային Կովկասը ներկայացնում էին Աբդուլմեջիդ Չերմեևը, Հայդար Բամատը և Գայդար Գայդարովը:

²⁸³ Տես *Г. С. Агабеков*, Г. П. У., с. 117:

²⁸⁴ Там же.

ձեռնարկումներից՝ զգուշանալով ԽՍՀՄ կոշտ հակազդեցությունից: Այդ պայմաններում Լեհաստանի դեսպանի ջանքերը, որոնք ուղղված էին Ստամբուլում գործող կովկասյան մահմեդական վտարանդիության միավորմանը և ուժեղացմանը, Փարիզի կովկասյան կենտրոնի հետ ինտեգրմամբ դրա վերածմանը կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեության համաշխարհային կենտրոնի, հենց այն էին, ինչ պետք է անեին թուրքական հատուկ ծառայությունները: Լեհական իշխանությունների շնորհիվ Թուրքիան, նվազագույն ֆինանսական ու կազմակերպական ջանքեր գործադրելով, պետք է ստանար կովկասյան վտարանդիության միավորված կենտրոն: ՌԻշագրավ է, որ Կնոյը ձգտեց Կոմիտեի անդամ դարձնելու այն վտարանդիական ղեկավարներին, որոնք կապեր ունեին թուրքական իշխանությունների հետ: Միևնույն ժամանակ, կովկասյան վտարանդիության առաջնորդները ոչ միայն ունեին կապեր թուրքական հետախուզության հետ, այլև իրենց գործունեության ու շփումների մասին պարբերաբար հաշվետվություն էին ներկայացնում հետախուզության Ստամբուլի գրասենյակ:

Ռուսաստանյան վտարանդիության միավորմանն ու ակտիվացմանն ուղղված լեհական իշխանությունների ջանքերը, հատկապես՝ կովկասյան հատվածի ուղղությամբ տարվող աշխատանքները, նոր հեռանկարներ ստեղծեցին նաև թուրքական դիվանագիտության համար: Մի կողմից՝ հնարավորություն եղավ վերածվելու եվրոպական պետությունների կողմից ռուսաստանյան վտարանդիության օգտագործման քաղաքականության ամենազդեցիկ օղակներից մեկի, մյուս կողմից՝ այդ պատճառով Խորհրդային Միության հետ հարաբերությունների վատթարացումից խուսափելու համար պահանջվեց մեծ ճկունություն:

Թուրքական դիվանագիտության համար զսպիչ ազդեցություն ունեցավ տարածաշրջանում 1925–1928 թթ. տևող ունեցած քաղաքական իրավիճակի փոփոխությունը՝ կապված քրդական հարցի ակտիվացման

հետ: Շնորհիվ դրա՝ Խորհրդային Միությունն ի դեմս քրդերի ձեռք բերեց Թուրքիայի վրա ազդելու լուրջ գործնական լծակ: Հետագայում արձանագրվեցին բազմաթիվ դեպքեր, երբ Թուրքիայի ու ԽՍՀՄ-ի միջև միջպետական բանակցությունների ու շփումների ժամանակ փոխկապվածության մեջ անթաքույց կերպով արծարծվեցին հյուսիսկովկասյան ու քրդական հարցերը, որոնք լուծվեցին փոխզիջման տարբերակով: Մասնավորապես՝ լեռնական-քրդական քաղաքական առուծախի առումով հետաքրքրական է հետևյալ երկու իրողությունների՝ գուգադիպությունը, 1925 թ. հունիս ամսին Թուրքիայում ճնշվեց շեյխ Սաիդի քրդական ապստամբությունը*, իսկ հուլիսին Խորհրդային իշխանությունները Հյուսիսային Կովկասի ամենապայթյունավտանգ և ապստամբ շրջանում՝ Չեչնիայում, ձեռնարկեցին բնակչության առաջին համընդհանուր զինաթափումը: Երկու օպերացիաների հաջողությունը պայմանավորված էր նաև խորհրդա-թուրքական համաձայնությամբ՝ քրդական ու լեռնական խմբերի անցուղարձը կանխելու նպատակով փակել սահմանը և այնտեղ հաստատել խիստ վերահսկողություն**։ Չեչնիայի զինաթափումը ոչ

* Պատմագրության մեջ այս ապստամբությունը երբեմն որակվում է որպես «հետադիմական», «հակակառավարական», «կրոնական՝ խալիֆայության վերականգմանն ուղված», մինչդեռ դրա տիրապետող գաղափարը անկախ Քրդստանի ստեղծումն էր: Այդ հանգամանքը նշվել է նաև 1925 թ. հունիսի 28-ին ապստամբության առաջնորդների դատավարության ժամանակ դատարանի նախագահի ելույթում, որում նա հայտարարել էր. «ձեզնից ոմանք հանդես էին գալիս կառավարության դեմ, ոմանք պատրվակ էին բռնել խալիֆայության պաշտպանությունը, սակայն բոլորիդ միավորող հանգամանքը անկախ Քրդստանի ստեղծումն էր» (տես *Fikret Başkaya*, a.g.e., s. 64):

** Չնայած խորհրդա-թուրքական սահմանը որոշվել է 1921 թ. մայրիսի 16-ի Մոսկվայի և 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով՝ տեղանքում սահմանագծի անցկացման վերաբերյալ վարվել են երկարատև բանակցություններ, որոնք ավարտվել են 1925 թ. հոկտեմբերի 22-ին, իսկ սահմանագծի անցման իրավական ձևակերպումը տրվել է 1926 թ. սեպտեմբերի 8-ին ստորագրված խորհրդա-թուրքական սահմանի անցման գծի մասին զվիսավոր արձանագրությունում (տես «СССР и Турция», с. 74):

միայն կատարվեց կարճ ժամկետում և քիչ ուժերի ներգրավվածությամբ, այլև դրա ընթացքում ձեռքակալվեց իմամ Գոտցինսկին²⁸⁵:

Սահմանի վերահսկման խստացումը և անջատողական խմբերի դեմ համագործակցությունը պատճառ դարձան, որպեսզի արևմտյան մամուլը յուրահատուկ մեկնաբանություններ հրապարակի 1925 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում երկու պետությունների միջև ստորագրված բարեկամության և չհարձակման մասին պայմանագրի վերաբերյալ՝ փորձելով հայտնաբերել այն գաղտնի հոդվածները, որոնցով կարգավորվում են սահմանային փոխօգնության խնդիրները: Մասնավորապես՝ բրիտանական «Մոնիինգ Փոստ» թերթը գրել էր. «տեղեկություններ կան, որ պայմանագրի գաղտնի հոդվածները շատ ավելի կարևոր են, քան հրապարակվածները: Այդ կետերին մեծ նշանակություն են տալիս հատկապես Գերմանիայում: Պնդվում է, որ այդ հոդվածներում Խորհրդային կառավարությունն իր վրա պարտավորություն է վերցնում վերահսկելու վրացական և հայկական սահմանակից շրջանները, որպեսզի Թուրքիային տա գորբերն այդ ճակատից այլ ճակատներ տեղափոխելու հնարավորություն: Գոյություն ունի ևս մեկ գաղտնի հոդված, որով Խորհրդային Միությունը պարտավորվում է թուրքերին ապահովել զինվորական հանդերձանքով»²⁸⁶:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ստամբուլը կովկասյան վտարանդիության կենտրոնն է, որը գտնվում է եվրոպական պետությունների ուշադրության կիզակետում, խորհրդային հետախուզությունն այնտեղ հիմնեց փորձառու գործակալներից բաղկացած լայն տարածված ցանց, որը դեռ 1925 թ. կազմակերպել էր

²⁸⁵ Տես *Игорь Пыхалов*, указ. раб., сс. 252–260:

²⁸⁶ Տես *АВП РФ*, ф.132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 32, л. 329: Իրականում, 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագրին նոր հոդվածներ ավելացվել են 1929 թ. դեկտեմբերի 17-ին՝ պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագրի ստորագրման ժամանակ (տես *Ismail Soysal*, a.g.e., s. 46):

Գլխավոր քաղաքական վարչության ռեզիդենտ Գոլդենշտեյնը²⁸⁷: Իսկ թե ինչպիսի կարևորություն էին ներկայացնում Ստամբուլից ստացվող հետախուզական տեղեկությունները ոչ միայն հյուսիսկովկասյան, այլև ամբողջ ռուսաստանյան քաղաքական վտարանդիության գործունեությունը վերահսկելու համար վկայակոչենք Պ. Ադաբեկովին, որն այդ ժամանակ աշխատում էր, իսկ երկու տարի անց՝ ղեկավարում ՄԳՔՎ արտասահմանյան բաժինը, որտեղ հավաքվում էին այդ տեղեկությունները. «Լայն տարածված գործակալական ցանցի շնորհիվ մեր ձեռքն էին ընկնում ուկրաինական կազմակերպության նամակագրությունը, որի ներկայացուցիչը գտնվում էր Կոստանդնուպոլսում, մուսավաթականների, լեռնականների և արտասահմանյան բյուրոներ բացած այլ հակախորհրդային խմբերի ժողովների արձանագրություններն ու նամակագրությունը: Այդ նամակագրությունից մենք տեսնում էինք, որ նշված խմբերը միավորվում են միայն այն բանի համար, որպեսզի մյուս օրը դարձյալ անջատվեն և յուրաքանչյուրն իր ուրույն քաղաքականությունը վարի: ԽՍՀՄ-ի համար դրանք անշուշտ վտանգ չէին ներկայացնում, բայց հետաքրքրական էր հետևել դրանց ներքին գծություններին: Ձեռք բերված փաստաթղթերի համաձայն՝ ամենամեծ բախումները տեղի էին ունենում ադրբեջանցիների շրջանում, որոնք նույնիսկ այնպիսի առաջնորդների, ինչպիսին է Թոփչիբաշևը, հայտարարել էին պանթուրքականության գործի դավաճան: Ձեռք բերված նամակագրությունից մենք տեղեկացել էինք, որ Դաշնակցական կուսակցությունը դեմ է մեկ համադաշնության մեջ կովկասյան կուսակցությունների միավորման գաղափարին՝ վախենալով կլանվել թուրքական խմբավորումների կողմից»²⁸⁸:

Ընդհանուր ռուսաստանյան քաղաքական վտարանդիության հետագա ճակատագրի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ

²⁸⁷ Ств АВП РФ, ф.132, Референтура по Турции, оп. 11, папка 78, д. 32, л. 215:

²⁸⁸ Ств Г. С. Агабеков, указ. раб., сс. 215 – 216:

1925 թ. Լեհաստանում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը, որի հետևանքով իշխանությանը կրկին եկավ մարշալ Պիլսուդսկին: 1926 թ. Լեհաստանի իշխանությունները սերտ կապեր հաստատեցին ռուսաստանյան վտարանդիական կազմակերպությունների և ազգային կետրոնների հետ, իսկ 1926–1928 թթ. դրվեցին նաև ոչ ռուսական վտարանդիության հետ համագործակցության և նրան ցուցաբերվող նյութական օգնության հիմքերը²⁸⁹:

Թուրքիայի կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում Պիլսուդսկու իշխանության գալը հանգեցրեց այն հետևանքի, որ նրա հետ անձնական կապեր ունեցող վրաց սոցիալ-դեմոկրատները հանդես եկան Կովկասյան համադաշնայնականների կոմիտեն լուծարելու և դրա հիմքի վրա նոր կառույց ստեղծելու պահանջով, մի կառույց, որը լիովին գտնվելու էր վրաց սոցիալ-դեմոկրատների և ադրբեջանական մուսավաթականների վերահսկողության տակ²⁹⁰: 1925 թ. հունիսին Փարիզի Կովկասյան կոմիտեն Ստամբուլում գործող Կովկասյան համադաշնայնականների կոմիտեին պաշտոնապես դիմեց միավորվելու առաջարկությամբ: Մեկ տարի տևած բանակցություններն ավարտվեցին 1926 թ. հունիսի 15-ին՝ Ստամբուլում Կովկասի անկախության կոմիտեի ԿԱԿ (Комитет независимости Кавказа – КНК) ստեղծելու որոշմամբ: Նորաստեղծ Կոմիտեն, սակայն, ուներ միայն համակարգող ու խորհրդակցական լիազորություններ, իսկ դրա որոշումները անդամների համար պարտադիր ուժ չունեին²⁹¹: Կոմիտեում Հյուսիսային Կովկասը ներկայացնում էին Սաիդ Շամիլն ու Ալիխան Կանտեմիրը: ԿԱԿ-ը Փարիզում բացեց երեք հոգուց կազմված իր «դիվանագիտական ներկայացուցչությունը»⁴:

²⁸⁹ Ств В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев, указ. раб., с. 341:

²⁹⁰ Ств Георгий Мамулия, указ. раб.:

²⁹¹ Там же.

⁴ Չխենկելի (Վրաստան), Չերմուր (Հյուսիսային Կովկաս) և Թոփչիբաշև (Ադրբեջան):

Կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում տեղի ունեցած այդ կարևոր զարգացումը չվրիպեց ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովմաստի ու հետախուզության տարբեր կառույցների ուշադրությունից: ԽՍՀՄ-ն առանձնակի մտահոգություն պատճառեցին Թուրքիայում Լեհաստանի դիվանագիտական ներկայացուցչության ակտիվությունը և նրա կապը թուրքական իշխանությունների հետ, հատկապես՝ եթե հաշվի առնվի այն փաստը, որ տվյալ կապը բացահայտվել էր դեռ 1922 թ. դիվանագիտական սկանդալի ժամանակ²⁹²:

Որպես ԽՍՀՄ դիվանագիտական ճնշման արդյունք՝ Վարչական ստիպված եղավ Թուրքիայից հետ կանչել Ռ. Կնուլին, որն իր մեկնելուց առաջ կովկասյան վտարանդիության հետ կապի պահպանումը հանձնարարեց Անկարայում իր ռազմական կցորդ Շետցելին²⁹²: Վերջինս այդ առումով կապեր էր պաշտպանում նաև թուրքական հետախուզության հետ²⁹³: Ըստ ամենայնի՝ թուրքական հետախուզության առաջարկությամբ էր, որ լեհ ռազմական կցորդի ուշադրության կենտրոնում հայտնվեց Սաիդ Շամիլը, որը խորհրդային հետախուզության տվյալներով՝ «պարտավորվել է Կովկասում տիրող իրավիճակի մասին տեղեկություններ հաղորդել լեհերին: Վերջիններս կովկասցիների նկատմամբ ընդհանրապես անտարբեր չեն, մանավանդ, որ Սաիդ բեյը հայտնի անձնավորություն է: Այդ իսկ պատճառով նրանք համաձայնվել են նրան ամսական 200 թուրքական լիրա ռոճիկ վճարել և օպերատիվ աշխատանքի համար տրամադրել հատուկ գումարներ»²⁹⁴:

²⁹² Լև Սոցկովը գրում է, որ ՄԳՔՎ արտասահմանյան բաժնին հաջողվել էր ձեռք բերել լեհական հետախուզության կողմից պատրաստված և թուրքական կողմին հանձնված մի ծավալուն տեղեկատվական փաթեթ, որը ներկայումս պահվում է Ռուսաստանի արտաքին հետախուզության արխիվում (տես *Лев Соцков, указ. раб., с. 1*):

²⁹² Տես *Лев Соцков, указ. раб., с. 1*:

²⁹³ Там же. Մասնավորապես՝ նշվում է գնդապետ Ազիզ Հուլան բեյը, որը 1927 թվականից ղեկավարեց Ազգային հետախուզական ծառայության Ստամբուլի մասնաճյուղը:

²⁹⁴ Там же.

Ելնելով զարգացումներից՝ Անկարայում ԽՍՀՄ դեսպանությունը ժամանակ առ ժամանակ թուրքական իշխանությունների առաջ բարձրացնում էր կովկասյան մահմեդական վտարանդիության հակախորհրդային գործունեության հարցը, սակայն թուրքական իշխանությունները սահմանափակվում էին Սուլթանովի կարգի մի քանի անցանկալի անձանց Թուրքիայի սահմաններից արտաքսմամբ: Մինևույն ժամանակ, թուրքական իշխանությունները անտեսում էին «Նոր Կովկաս» հանդեսը փակելու վերաբերյալ բոլոր պահանջները²⁹⁵: Ընդ որում, նրանք, քողարկելով կովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման իրենց քաղաքականությունը և Ստամբուլում այդ կարևոր կենտրոնի պահպանման հարցում շահագրգռվածությունը, մեղքը բարդում էին այլ պետությունների և կազմակերպությունների վրա: Այսպես, 1927 թ. հունվարի 14-ին ԽՍՀՄ դեսպան Յակով Սուրիցի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թեֆիկ Ռուշթու Արասը վտարանդիների հակախորհրդային գործունեության կասեցման վերաբերյալ իրենց տված խոստումները չկատարելը հիմնավորում էր այն դժվարություններով, որոնց ամեն անգամ բախվում է թուրքական կառավարությունը, երբ փորձում է վտարանդիների դեմ միջոցներ ձեռնարկել, քանի որ «Անկարային մեղադրում են բարբարոսության մեջ», ինչպես նաև բազմաթիվ բարեգործական, հատկապես՝ ամերիկյան, կազմակերպություններ սկսում են կառավարության վրա ճնշում գործադրել²⁹⁶: Սակայն որպես հիմնական խոչընդոտ Արասը ներկայացրեց վտարանդիներին ընդունումն ու մուտքի արտոնության տրամադրումը մերժելու նկատմամբ այլ պետությունների բացասական վերաբերմունքը²⁹⁷:

²⁹⁵ Տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 265, л. 13:

²⁹⁶ Տես նույն տեղում, թ. 15:

²⁹⁷ Տես նույն տեղում:

Կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում տեղի ունեցող զարգացումների և թուրքական իշխանությունների հետ կապի մշտական վերահսկման վկայությունն են նաև ԽՍՀՄ Արտաքին գործերի ժողկոմատի փաստաթղթերը, նրա և Անկարայում դեսպանության միջև պահպանված նամակագրությունը: Սկսած 1926 թվականից խորհրդային դիվանագետները Թուրքիայի արտաքին գործերի նախարարի և այլ բարձրաստիճան գործընկերների հետ հանդիպումների ժամանակ, հիմնավորելով փաստերով, միշտ բարձրացրել են Թուրքիայի կողմից կովկասյան քաղաքական վտարանդիությանը ցուցաբերվող աջակցության հարցը՝ դա մեկնաբանելով որպես կնքված պայմանագրերի խախտում:

Թուրքական իշխանությունների կողմից մահմեդական կովկասյան վտարանդիության օգտագործման խնդիրը քննարկվեց 1926 թ. նոյեմբերի 18-ին Չիչերինի և Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թևֆիկ Ռուշթու Արասի միջև Օդեսայում կայացած հանդիպման ժամանակ: Մինչ հանդիպումը՝ 1926 թ. հոկտեմբերի 14-ին, արտաքին գործերի ժողկոմատի կոլեգիայի անդամներին Չիչերինը ներկայացրեց հանդիպման ժամանակ քննարկման նախատեսված հարցերի նախագիծը, որի վեցերորդ կետում նշված էր. «անհրաժեշտ է թվարկել մի շարք փաստեր, որոնք բացահայտում են թուրքական կառավարության հովանավորչությունը հակահեղափոխական վտարանդիներին, մանավանդ՝ մուսավաթականներին և տարբեր տեսակի կովկասցի մահմեդական հակահեղափոխականներին»²⁹⁸: Ժողկոմատի կոլեգիայի հավանությունն ստանալուց հետո նա 1926 թ. հոկտեմբերի 18-ին Քաղբյուրո ներկայացված՝ հանդիպման օրակարգի նախագծի յոթերորդ կետում կրկնեց այդ առաջարկությունը հետևյալ հավելմամբ. «թուրքական կառավարությունից պահանջել դադարեցնել նման գործողությունները»²⁹⁹:

²⁹⁸ Տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 8, папка 13, д. 39, л. 2:

²⁹⁹ Տես նույն տեղում, թ. 5:

Խորհրդային սյաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ 1926 թ. նոյեմբերի 12–14-ը կայացած երկու պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ, Վ. Չիչերինը թուրք գործընկերոջ «ուշադրությունը հրավիրեց Թուրքիայի իշխանությունների կամ ղեկավար անձանց կողմից սպիտակգվարդիականներին աջակցելու դեպքերի վրա, իսկ թուրք նախարարը խոստացավ բոլոր միջոցները ձեռնարկել նման գործունեության կասեցման համար»³⁰⁰: Ի հակակշիռ դրան՝ Թևֆիկ Ռուշթու Արասը նշեց, որ «տեղեկություններ ունի, թե ԽՍՀՄ-ի քաղաքացիություն ունեցող մի շարք անձանց կողմից քրդերի շրջանում կազմակերպական գործունեություն է վարվում», սակայն Վ. Չիչերինը նման պնդումներն անհիմն համարեց³⁰¹: 1926 թ. նոյեմբերի 14-ին բանակցությունների արդյունքներով հրապարակված համատեղ կոմյունիկեում նշված էր, որ «երկու նախարարները, համատեղ քննարկելով երկու կառավարություններին հետաքրքրող պրոբլեմները, նկատեցին համաձայնության, որ գոյություն ունեցող հարցերից որևէ մեկը չի կարող շեղել երկու պետությունների քաղաքական գիծը, հետևաբար՝ խափանել նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները»³⁰²:

Այսպիսով՝ 1926 թ. նոյեմբերին տեղի ունեցած երկու պետությունների արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ առաջին անգամ պետական մակարդակով քաղաքական օրակարգում ձևակերպվեց «հակախորհրդային քաղաքական վտարանդիություն – քրդական հարց» կապը:

Կովկասյան մահմեդական վտարանդիության հակախորհրդային գործունեության և Ստամբուլի իշխանությունների կողմից այդ գործունեությանը սատարելու հարցը քննարկվեց նաև 1927 թ. հունվարի 14-ին Ռուշթու Արասի և դեսպան Յակով Մուրիցի հանդիպման

³⁰⁰ Տես «СССР и Турция», с. 69:

³⁰¹ Там же.

³⁰² Там же.

ժամանակ³⁰³: Այդ քննարկման համար առիթ դարձավ մուսավաթականների մասնակցությունը Խորհրդային Միությունից գաղթած և Ստամբուլում կրթություն ստացող մահմեդական ուսանողների հանդիպմանը, ինչի կապակցությամբ խորհրդային ղեկավարությունը բողոքի նոտա պատրաստեց³⁰⁴: Զրույցի ժամանակ Ռուշթուն մեղքը բարդեց ուսանողների վրա, որոնք, իբր, հավաքին հրավիրելով մահմեդական քաղաքական վտարանդիության ներկայացուցիչների, մեծ սխալ էին գործել, և հավելեց, թե բացառությամբ Ռասուլզադեի, մյուս բոլոր ներկայացուցիչների ելույթները հավասարակշռված էին³⁰⁵: Ռուշթուն տեղեկացրեց ղեկավարին, որ Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը 1927 թ. հունվարի 12-ին Ստամբուլի ոստիկանությանն ուղարկել է հրահանգ թերթերում հակախորհրդային ժողովների հաշվետվություններ և ԽՍՀՄ-ի դեմ ուղղված հոդվածներ չհրատարակելու մասին:

Սակայն Մուրիցին նման պատասխանը չբավարարեց: Նա պահանջեց ոչ թե սահմանափակվել արդեն տեղի ունեցած հանդիպումների մասին հաղորդագրությունների հրատարակումների արգելմամբ, այլ ընդհանրապես վտարանդիներին արգելել զբաղվել քաղաքական գործունեությամբ: Ռուշապրավ է Մուրիցի հաշվետվության՝ հետևյալ հատվածը, որը լույս է սփռում երեք կարևոր հանգամանքների վրա: Ներկայացնելով վերը նշված հարցում խորհրդային կառավարության դիրքորոշումը՝ Մուրիցը շեշտել էր, որ «մեր ստացած հստակ պատկերացմամբ՝ Խորհրդային Միությունից փախած մահմեդականների քաղաքական գործունեությունը հովանավորում են Կոստանդնուպոլսի ոստիկանությունն ու «Թուրքական օջախում» աշխատող աչքի ընկնող գործիչները, և, ինչպես

³⁰³ Տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, л. 265, л. 13-16:

³⁰⁴ Տես նույն տեղում, թ. 13:

³⁰⁵ Տես նույն տեղում:

* Հաշվետվության վրա դրված է «հույժ գաղտնի» գրիֆ (տես նույն տեղում):

վկայում են իմ ունեցած ստույգ տեղեկությունները, վտարանդիների գործունեությունն ուղեկցվում է լեհական ներկայացուցչության և այլ արտասահմանյան հակահետախուզական ծառայությունների հետ լիարժեք շփումներով: Ամփոփելով՝ ես նշեցի, որ հաճախ ի հայտ են գալիս վտարանդիների բնասարքություններ ու մեքենայություններ, և ամենացավալին այն է, որ՝ թուրքական Գլխավոր շտաբի ուղղակի աջակցությամբ: Ձեռքի հետ ես Ռուշթունին հիշեցրի, որ դեռ երեք ամիս առաջ նրան ներկայացրել էի Թուրքիայում ամենակատարի հակախորհրդային գործունեություն վարող վտարանդիների ցուցակը, և, չնայած իր բոլոր խոստումներին, մինչ օրս այդ անձանց նկատմամբ թուրքական կառավարությունը ոչ մի միջոց չի ձեռնարկել: Միայն մի քանի աննշան անձանց նկատմամբ պատժամիջոցներ են կիրառվել, մինչդեռ նրանց առաջնորդները նախկինի պես օգտվում են թողտվությամբ:

Ռուշթուն փորձում էր արդարանալ՝ մասնավորապես, հղում կատարելով Մուլթանովին, Վաչաձեին և մյուսների վերադարձը թույլ չտալու համար ձեռնարկված միջոցներին: Ռուշթուն փորձում էր արդարացնել և Գլխավոր շտաբը՝ մշտապես շեշտելով Ֆեզիի «խորհրդամիտությունը»: Սակայն իմ փաստարկներից նեղն ընկնելով՝ խոստովանեց, որ Գլխավոր շտաբի որոշ «փոքր պաշտոնյաներ», տեղեկություններ ձեռք բերելու ցանկությունից ելնելով, կարող են առանց ղեկավարների իմացության շփվել որոշ վտարանդիների հետ: Այնուհետև Ռուշթուն ստիպված էր խոստովանել, թե չի բացառում այն, որ Կոստանդնուպոլսում գաղտնի ոստիկանության բաժանումքը «հովանավորում է» որոշ ապիտակզվարդիականների, որոնց ծառայություններից նա օգտվում է, և մոլորության մեջ է զցում ներքին գործերի նախարարությանը: Դրանից հետո Ռուշթուն խնդրեց ինձ նոր հուշագիր ներկայացնել, որտեղ թվարկված լինեն բոլոր փաստերը,

խոստանալով խոսել Գագիի, Իսմեթի և Ֆեզլիի* հետ: Իր խոսքով՝ Ռուշթյուն բոլոր միջոցները կձեռնարկի, որպեսզի քաղաքական գործունեությամբ զբաղվող, հատկապես՝ արտասահմանյան ներկայացուցչությունների հետ կապերի մեջ բռնված անձինք արտոբվեն Կոստանդնուպոլսից (թուրքահպատակները՝ երկրի խորքերը, իսկ վտարանդիները՝ արտասահման): Հակախորհրդային թերթերը Ստամբուլում կփակվեն: Եթե արտասահմանյան ներկայացուցչություններն սպիտակների գործունեության հետ կապ ունենան, Ռուշթյուն այդ փաստի վրա կհրավիրի նրանց ղեկավարների ուշադրությունը: Եվ, վերջապես, Ռուշթյուն խոստացավ «Հաքիմիյե Միլլիյե» թերթում հատուկ հոդված հրատարակել, որում կպարզաբանվի երկրում խորհրդային վտարանդի մահմեդականների մնալու պայմանների վերաբերյալ Անկարայի պաշտոնական տեսակետը»³⁰⁶:

Այստեղ ուշագրավ է Թուրքիայի արտաքին գործերի նախարարի այն խոստովանությունը, որ կովկասյան մահմեդական քաղաքական վտարանդիությունն օգտագործվում է Ստամբուլի գաղտնի ոստիկանության և, ամենակարևորը, Գլխավոր շտաբի կողմից, և որ վտարանդիները կապ ունեն լեհական դիվանագիտական ներկայացուցչության հետ: Ռուշթյուի խոստովանությունները վկայում են, որ 1927 թ. դրությամբ Թուրքիան կովկասյան քաղաքական վտարանդիության օգտագործման լավ մշակված ու հստակորեն ձևակերպված քաղաքականություն էր վարում: Խոսակցության ընթացքում Սուրիցը նշեց ուսանողների ժողովին* ներկա գտնված երկու բարձրաստիճան պաշտոնյաների՝ Ստամբուլի գաղտնի ոստիկանության պետ Էքրեմի և «Թուրքական օջախ»

* Համապատասխանաբար՝ պետության Նախագահ Գագի Մուստաֆա Քեմալը (1934 թվականից՝ Աթաթյուրք), վարչապետ՝ Իսմեթ Բեյնյուն, Գլխավոր շտաբի պետ Ֆեզլի Չաքմալը:

³⁰⁶ Ств АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 265, лл. 13 - 16:

* Ժողովը տեղի էր ունեցել Ստամբուլի «Թուրքական օջախի» շենքում, ինչն ինքնին ուշագրավ է և թուրքականների ու վտարանդիների միջև համագործակցության ևս մեկ ապացույց է (տես նույն տեղում, թ. 15):

կազմակերպության ստամբուլյան մասնաճյուղի ղեկավար Համդուլլահ Սուրիսիի անունները, ընդ որում, «Թուրքական օջախի» մասին խոսելիս Համդուլլահ Սուրիսիի անունը տալիս է հենց Ռուշթյուն՝ ավելացնելով, որ բազմաթիվ անգամ զգուշացրել է նրան «չվստահել խորհրդային մահմեդականներին», իսկ Էքրեմի հարցում փորձել է համոզել, որ խոսքը ոչ թե գաղտնի ոստիկանության պետի, այլ ինչ-որ այլ Էքրեմի մասին է³⁰⁷:

Կովկասյան քաղաքական վտարանդիության հարցով Ռուշթյուի հետ հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ 1927 թ. հունվարի 18-ին: Այդ ժամանակ Սուրիցը բացահայտ մեղադրանք ներկայացրեց կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում Լեհաստանի ծավալած գործունեության կապակցությամբ: Հիմնվելով խորհրդային հետախուզության ստացած հավաստի տեղեկությունների վրա՝ նա նշեց, որ «թուրքականության կողմնակից ուսանողների հավաքը ոչ թե պատահական բնույթ էր կրում, այլ օտար պետություններից մեկի ղեկավարության կողմից մշակված՝ Թուրքիայում հակախորհրդային մահմեդական ուժերի միավորման ծրագրի բաղկացուցիչ մաս էր: Նախկինում այդ պետությունը հիմնվում էր միայն լեռնականների և աղբրեջանցիների վրա: Այժմ փորձեր են արվում կազմակերպելու նաև մեր այլ մահմեդական շրջաններից եկածներին, այդ թվում նաև թուրքեստանցիներին»³⁰⁸: Հանդիպման վերջում Սուրիցը Ռուշթյուին հանձնեց հակախորհրդային գործունեությամբ զբաղվող կովկասցիների մի նոր ցուցակ³⁰⁹:

Թուրքիայի կառավարությունը չէր ծրագրում կովկասյան մահմեդականության պատճառով սրել ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները, ուստի և որոշակիորեն սահմանափակեց կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեությունը, ինչպես

³⁰⁷ Ств նույն տեղում:

³⁰⁸ Ств նույն տեղում, թ. 18:

³⁰⁹ Ств նույն տեղում:

նան ստիպված եղավ էլ ավելի քողարկել իր կապերը վտարանդիության առաջնորդների հետ: Թուրքական իշխանությունների ճնշման տակ 1926 թ. Կովկասի անկախության կոմիտեի կենտրոնակայանը տեղափոխվեց Փարիզ, որտեղ էլ 1929 թ. լույս տեսավ ԿԱԿ-ի պաշտոնական օրգան «Անկախ Կովկաս (Независимый Кавказ)» հանդեսի առաջին համարը:

1927 թ. հունվարի 18-ին կայացած հանդիպման ժամանակ Ռուշթու Արասը Սուրիցին տեղեկացրեց, որ նախորդ հանդիպումից հետո նա խորհրդակցել էր վարչապետ Իսմեթ Ինյունյուի հետ, և «նրանք որոշել են վտարանդիների նկատմամբ ձեռնարկել ամենավճռական միջոցները»³¹⁰: Արտաքին գործերի նախարարության պատվերով՝ կառավարության «Հաքիմիե Միլիյե» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Մահմուդը առաջին էջում հրապարակեց մի հոդված, որում ասված էր, որ ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքերից մեկն են, և Թուրքիան թույլ չի տա իր տարածքում ծավալել որևէ քաղաքական գործունեություն, որը կարող է ազդել այդ հարաբերությունների վրա³¹¹:

1927 թ. հունվարի 27-ին Սուրիցի հետ երրորդ հանդիպման ժամանակ Ռուշթուն, փորձելով ներկայացնել թուրքական իշխանությունների մտադրությունների անկեղծությունը, տեղեկացրեց, որ օրերս Կարսում ձերբակալվել են սահմանը գաղտնի անցած երեք վրացի, որոնց մոտ հայտնաբերել են Կովկասի անկախության կոմիտեի վկայականներ: Այդ վկայականներն ապացուցում են, որ տվյալ անձինք մասնակցել են Վրաստանում տեղի ունեցած վերջին հակախորհրդային ապստամբությանը: Վրացիներն ուղևորվելիս են եղել Փարիզ: Հարցաքննության ժամանակ նրանք հայտնել են, որ Վրաստանում 1928 թ. գարնանը ծրագրվում է նոր ապստամբություն, որը ղեկավարելու է

Փարիզի կենտրոնը, իսկ ապստամբության ծրագիրն ու նախագիծը մշակվել են Ամստերդամում կայացած ժողովի ժամանակ: Վրացիները խոստովանել են նաև, որ Վրաստանում ճնշված ապստամբության բազմաթիվ անդամներ թաքնվում են, և փորձեր են արվում նրանց գաղտնի տեղափոխելու Թուրքիա, նույնիսկ գոյություն ունի հատուկ հիմնադրամ, որտեղից սահմանն անցնելուն պես յուրաքանչյուրին կտրվի 100 թուրքական լիրա³¹²:

Ռուշթուի հայտնած տեղեկությունները Սուրիցին հնարավորություն տվեցին հերթական անգամ բարձրացնելու Թուրքիայում կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեությունը կասեցնելու, հատկապես՝ վտարանդիական խմբերի անցման համար խորհրդա-թուրքական սահմանին նախապատրաստված ծածուկ անցակետերը՝ վերացնելու խնդիրը³¹³: Սուրիցը ավելացրեց, որ այդ անցակետերն աշխատում են բացեփրաց, ինչը հնարավոր չէ առանց թուրքական իշխանությունների թույլտվության³¹⁴:

Անկարայում ԽՍՀՄ դեսպանության և արտաքին գործերի ժողկոմատի միջև նամակագրությունից ակնհայտ է դառնում, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին կովկասյան մահմեդական վտարանդիության քաղաքական գործունեության վերաբերյալ հարցադրման նախաձեռնողը ոչ այնքան արտաքին գործերի ժողկոմատն էր, որքան ՄԳՔՎ-ն, որին անհանգստացնում էր Հյուսիսային Կովկասում և Միջին Ասիայի թուրքական բնակչության շրջանում վտարանդիության ունեցած ազդեցությունը: Արտաքին գործերի ժողկոմատն ավելի մեղմ դիրքորոշման կողմնակից էր՝ խուսափելով վտարանդիության պատճառով Թուրքիայի հետ

³¹⁰ Տես նույն տեղում:

³¹¹ Տես նույն տեղում:

* Փաստաթղթի տեքստում գրված է «удостоверения "Революционного Кавказского комитета"» (տես նույն տեղում, թ. 34):

³¹² Տես նույն տեղում:

** Դրանցից մեկը գտնվում էր Հոպայում (տես նույն տեղում):

³¹³ Տես նույն տեղում:

³¹⁴ Տես նույն տեղում:

հարաբերությունների սրումից, քանի որ միջազգային ասպարեզում տեղի էին ունենում խորհրդա-թուրքական հարաբերություններում լարվածության մեծացմանը հանգեցնող ավելի լուրջ իրադարձություններ: ՄԳԲՎ-ի կողմից ճնշման մասին բացահայտորեն ասվում է Լև Կարախանի՝ 1927 թ. հոկտեմբերի 25-ին Յակով Սուրիցին ուղղված նամակում: «Հարևան գերատեսչությունը բարձրացնում է Կոստանդնուպոլսում «Ենի Քաֆկասյա» և «Ենի Թուրքեստան» սպիտակզվարդիական մահմեդական հանդեսների հրատարակումը շարունակվելու կապակցությամբ թուրքերին նոտա ներկայացնելու հարցը: Այդ հանդեսները, մեր դեմ անթաքույց և չարանենց քարոզչություն վարելով, ոչ միայն թունավորում են հասարակական կարծիքը, այլև նախատեսված են այդ գրպարտչական գրականությունը բարեկամ Թուրքիայի տարածքից ԽՍՀՄ թուրքական բնակչության շրջանում տարածելու համար: Ներկայիս միջազգային իրավիճակի հաշվառմամբ Կոստանդնուպոլսում նման հանդեսների հրատարակությունը և մեր երկրում տարածումը դառնում են խիստ անցանկալի: Դա հարևան գերատեսչությանն ստիպում է հարց դնել, որ մենք թուրքերից պահանջենք արգելել այդ հանդեսների հրատարակությունը: Մենք հաշվի ենք առնում, որ ներկայիս իրավիճակում (մամուլում Կիտայգորոդսկու հոդվածների հրապարակումը և Ասլանյանի գործը) այդ կարևոր նախաձեռնության իրականացման համար կան զգալի դժվարություններ: Մյուս կողմից՝ հնարավոր չէ շարունակել այք փակել այդ անպիտո իրավիճակի վրա: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք այս հարցին, պարզեք լուրջ և արդյունավետ ճնշում գործադրելու բոլոր հնարավորությունները և հեռագրեք մեզ»³¹⁵:

Վերլուծելով այդ հարցում թուրք իշխանությունների հավանական պատասխանը և խիստ ճնշում գործադրելու անցանկալի հետևանքները՝ Կարախանը խորհուրդ տվեց խնդիրը կապել

³¹⁵ Ств АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 262, л. 3:

թուրքական հակաքեմալական վտարանդիության հետ, որում մեծ տոկոս էին կազմում Աթաթուրքի նախկին զինակիցները, ազգայնական պայքարում կարևոր դեր խաղացած առաջնորդները՝ ազգությամբ չերքեզներ Ռաուֆ Օրբայը, Բեքիր Սամին, Էշրեֆ Քուշուրբաշին, նրա եղբայր Հաջի Սամին և ուրիշներ^{*}: Ըստ Կարախանի՝ հյուսիսկովկասյան վտարանդիության ղեկավարների հետ նրանց կապը պետք է լիներ այն հիմնավորումը, որը քեմալական կառավարությանը կորդեր Ստամբուլում ապաստանած կովկասյան վտարանդիության նկատմամբ պատժամիջոցների կիրառմանը: Այդ կապակցությամբ Կարախանը մտորում է. թե՛ «Կարելի՞ է արդյոք այդ հարցը կապել թուրքական հակահեղափոխական այն վտարանդիության գործունեության հետ, որը մեր եվրոպացի ախոյանների կողմից օգտագործվում է միաժամանակ և՛ թուրքերի, և՛ մեր դեմ մղվող պայքարում (անզլիացիներ և Աբդուլ Մեջիդ): Թուրքիան ներկայումս ապրում է թուրքական հակահեղափոխական վտարանդիության հակաքեմալական քաղաքական ու դիվերսիոն ակտիվության շրջան: Այդ վտարանդիության ամենաբազմաթիվ և ակտիվ տարրը չերքեզներն են: Բնորոշ օրինակ է Հաջի Սամինի հրոսակախմբի գործը: Կարելի է հարևան գերատեսչության առաջ հարց բարձրացնել, որ թուրքական հակահեղափոխության՝ Թուրքիայի համար վնասակար այս կամ այն մտադրությունների մասին տարբեր աղբյուրներից մեր ստացած տեղեկությոջը տրամադրվի թուրքերին: Այդ հարցի վերաբերյալ մեր հատուկ կառույցների ուշադրության ակտիվացումը և համապատասխան տեղեկատվության ավելի հստակ հաշվառումը մեզ հնարավորություն կտան թուրքական հակահեղափոխության տարբեր ձեռնարկումների մասին թուրքերին համապատասխան

* Քեմալական կառավարության համար անցանկալի 150 անձանց ցուցակում 86 հոգի ազգությամբ չերքեզ էին: 1927 թ. մայիսի 28-ին ընդունված օրենքի համաձայն՝ նրանք զրկվեցին Թուրքիայի քաղաքացիությունից: 1938 թ. հունիսի 29-ին ընդունված մեկ այլ օրենքով «150-ականներին» ներում շնորհվեց (տես «Cumhuriyetin İlanı ve Azımlıklara Yönelik Politikalar» (www.kafkasevi.com)):

ներկայացումների և նախագրուշացումների միջոցով ծավալելու համագործակցություն: Մինչ այժմ դա մենք շատ վատ էինք անում: Իսկ դա կարող է ուժեղացնել մեր դիրքերը Թուրքիայում սպիտակների դեմ պայքարում: Եթե մեր հատուկ կառույցներին հաջողվեր ձեռք բերել տեղեկություններ եվրոպական ինպերիալիստների կողմից Թուրքիայում մեր դեմ գործող մուսավաթականներին և այլ սպիտակ վտարանդիների ցուցաբերվող օգնության մասին, դա մեզ կօգներ թուրքերի աչքում վարկաբեկել մուսավաթականներին և հասնել նրանց նկատմամբ թուրքական կառավարության դիրքորոշման փոփոխությանը: Հնարավոր է, որ մեզ հաջողվի տեղեկություններ ստանալ և մյուս գծով՝ թուրքական հակահեղափոխականության և Թուրքիայում ապաստանած կովկասյան վտարանդիների միջև կապի մասին: Այս ամենը կարելի է օգտագործել Թուրքիայում սպիտակների դեմ պայքարում մեր դիրքերն ամրապնդելու համար: Հայտնեք՝ վերջին հարցի վերաբերյալ Ձեր նկատառումները»³¹⁶:

Խորհրդային դիվանագիտության մտադրությունը՝ կապակցելու տոկոսային առումով «կիսաչեքեզական» հակաքեմալական ու հյուսիսկովկասյան վտարանդիության քաղաքական գործունեությունները թվում էր հեռանկարային և արդյունավետ քայլ: Սակայն մի շարք խոչընդոտների պատճառով այն չիրականացավ: Դրանցից հիմնականն այն էր, որ թուրքական վտարանդիության կազմում եղած չեքեզների և հյուսիսկովկասյան վտարանդիների շահերի չհամընկնելու հետևանքով այդ կապը կանոնավոր չէր: Թուրքիայում ապրող չեքեզները այնքան էլ չէին հետաքրքրվում իրենց պապերի պատմական հայրենիքը բոլշևիկների լծից ազատագրելու խնդրով, իսկ հյուսիսկովկասյան վտարանդիությունը շահագրգռված էր քեմալական կառավարության աջակցության մեջ և խուսափում էր շփվելուց վտարանդիության կազմում եղած չեքեզների հետ, որոնք

չունեին իրեն օգնելու հնարավորություն: Կարևոր հանգամանք էր նաև ինքնության խնդիրը. թուրքական հասարակության համար Ստամբուլում գտնվող հյուսիսկովկասցի վտարանդիները դեռ օտար էին և ներգրավված չէին ներքին քաղաքական պայքարում՝ փայփայելով Կովկասում խորհրդային կարգերի տապալման և իրենց վերադարձի հույսեր: Մյուս կողմից՝ Կարախանի հաշվարկումներում կարևոր դեր էր վերապահվում հակաքեմալական վտարանդիությանը, սակայն նրա միակ իրական գործողության փորձ եղավ Էշրեֆ Քուշուրբաշիի եղբայր Հաջի Սամիի գլխավորած զինված ջոկատի՝ գաղտնի կերպով Թուրքիա անցնելու օպերացիան, այն էլ՝ անհաջող, քանի որ Իզմիրի վիլայեթի Քուշադասը կղզում ավիանման ժամանակ ամբողջ խումբը ծուղակի մեջ ընկավ և ոչնչացվեց: Դրանից հետո հակաքեմալական վտարանդիությունը որևէ քաղաքական գործունեությամբ աչքի չընկավ, ուստի և կովկասյան վտարանդիության հարցում քաղաքական առուծախի համար հակաքեմալական ուժերի գործունեության վերաբերյալ տեղեկություններ հավաքելու անհրաժեշտություն չեղավ,

* Արխիվ գիտնական Վյաչեսլավ Չիրիքբան գրում է. «ինչպես պարզել են արխիվ պատմաբանները, 1917 թ. Ռուսական բոլշևիկյան հեղափոխությունից հետո Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման գործում զգալի դեր են խաղացել արխիվ բոլշևիկներ Լակոբան և Էշրան, որոնք գործում էին արխիվական համայնքի միջնորդությամբ: Սակայն հետագայում նոր թուրքական պետության կայացում Աթաթյուրքի հետ եղած տարաձայնությունները հանգեցրին այն բանին, որ Թուրքերի Հոր հետ հյուսիսկովկասցիների հարաբերությունները խզվեցին, և նա հյուսիսկովկասցիների նկատմամբ կիրառեց զգալի պատժամիջոցներ» (տես *Вячеслав Чирикба. Абхазская диаспора во внутренней и внешней политике Абхазии. Сухуми, 2006* (www.abiblioteka.info/rus/politics/section_7/162.html): Պատմական փաստ է, որ Աբխազիայում 1921 թ. մարտի 4-ին խորհրդային կարգերի հաստատումից հետո արխիվ հեղափոխականները՝ Ե. Էշբայի ու Ն. Լակոբայի գլխավորությամբ, 1921 թ. մարտի 6-ին Աբխազիա ժամանեցին Թուրքիայից (տես *С. М. Червоная. Абхазия – 1992: Посткоммунистическая Вандея. М., «Мосгорпечать», 1993, с. 44*):

³¹⁶ Ств АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 262, л. 4:

քանի որ առաջ եկավ քաղաքական առումով ավելի կարևոր խնդիր՝ քրդական հարցը*:

Ուշագրավ է, որ Կարախանը, իր առաջարկած միջոցը դիտելով որպես հավանական տարբերակներից մեկը, ամենևին էլ համոզված չէր դրա իրական ազդեցության մեջ, ուստի և խնդրեց Սուրիցին ներկայացնել իր նկատառումները՝ նամակն ամփոփելով հետևյալ եզրակացությամբ. «Քանի որ Թուրքիայում սպիտակ վտարանդիության հետ պայքարն ըստ բոլոր տվյալների երկարատև բնույթ է ընդունում, անհրաժեշտ է փնտրել և քննության ենթարկել բոլոր միջոցները, որոնք մենք կարող ենք կիրառել այդ գործում»³¹⁷:

Հետախուզական տեղեկությունների փոխանակման մասին Կարախանի առաջարկությունը երկուստեք ցանկություն էր: Խորհրդային հետախուզության կողմից թուրքական իշխանություններին փոխանցված տեղեկությունները, հասկապես՝ քրդերի վերաբերյալ**, այնպիսի նշանակություն ունեին, որ թուրքական հետախուզությունն ու ոստիկանությունը մի քանի անգամ դիմեցին խորհրդային ներկայացուցիչներին՝ համատեղ աշխատանք ծավալելու առաջարկությամբ: Վերջին անգամ նման առաջարկություն արվեց 1929 թ., սակայն ՄԳԲՎ նախագահ Մենժինսկին մերժեց այն պատճառաբանությամբ, որ դժվար թե թուրքերը կարևոր տեղեկություններ ունենան, իսկ ունենալու դեպքում էլ դրանք չեն հայտնի, այլ կսահմանափակվեն երկրորդական նշանակություն ունեցող տեղեկությոթի տրամադրմամբ, ուստի չարժե նրանց առջև բացել խորհրդային հետախուզության աշխատանքի մեթոդները³¹⁸:

* Տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի արևելյան շրջաններում բռնկվեցին մի քանի քրդական ապստամբություններ:

³¹⁷ Ств АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 262, л. 4:

** ԱՄԾ-ի ստեղծման պահից ի վեր նրա ուշադրության կենտրոնում էին «քրդերի և հայերի համատեղ Հոյուն և Քրդական զարգացման կազմակերպությունների գործողությունները» (տես *Mehmet Eyübir*, a.g.e., s. 33):

³¹⁸ Ств А. Г. Арабеков, указ. раб., сс. 218 – 219:

Խորհրդային դիվանագիտության ակտիվության շնորհիվ Թուրքիայի կառավարությունը Ստամբուլի ոստիկանությանն ու հետախուզական ծառայություններին հրահանգեց կովկասյան վտարանդիության հետ շփումներն ու կապն իրականացնել ավելի քողարկված ձևով: Դա երևում է ԱՄԾ-ի կենտրոնակայանից 1929 թ. դեկտեմբերի 29-ին Ստամբուլի ամիրլիկի ղեկավարին ուղարկված հրահանգներից: Հրահանգների համար հիմք եղավ կովկասյան մահմեդական վտարանդիության և Կովկասյան կոմիտեի քաղաքական գործունեության մասին Մ. Ռասուլզադեի ներկայացրած հաշվետվությունը: Նամակում, որն ստորագրել էր ԱՄԾ-ի ղեկավար Ալի Շուքրյուն*, նշված էր, որ «կառավարությունը չի կարող թույլ տալ Թուրքիայում նման կարգի բացահայտ գործունեություն ծավալել: Արդեն Ներքին գործերի նախարարությունից Ստամբուլի վիլայեթ ուղարկվել է մի նամակ, որում նշված է, որ Կոմիտեի նման գործունեությունը չի կարող արտոնվել, և եթե Կոմիտեի անդամները շարունակելու են այն, նրանք կարտաքսվեն Թուրքիայից: Դա է գործի արտաքին կողմը:...

Մեր ծառայությունը կշարունակի պահպանել կապը նրանց հետ, սակայն հետևյալ պայմանների պահպանմամբ:

ա/ Ներկայացնելով որպես ձեր անձնական կարծիք և անձնական պարտավորություն՝ հիմնավոր կերպով բացատրեք, որ ոստիկանությունը հետևելու է նրանց գործունեությանը, որ կառավարությունն ստիպված գնալու է այդ քայլին, որպեսզի պահպանի ռուսների հետ բարեկամությունը, և եթե նրանք գաղտնի գործեն, դուք անհրաժեշտ դեպքերում կշարունակեք օժանդակել նրանց: Ձեր կապի մասին ոչ ոք չպետք է իմանա, հակառակ դեպքում դուք նրանցից երես կթեքեք:

* Ալի Շուքրյու Օզեյլը 1926–1941 թթ. ղեկավարել է Ազգային անվտանգության ծառայությունը: Տիրապետում էր ֆրանսերենին և ռուսերենին (տես *Tuncay Özkan*, a.g.e., s. 589):

բ/ Ձեր հանդիպումները Ռասուլզադեի հետ պետք է տեղի ունենան խիստ զաղտնիության պայմաններում: Ռուսները ոչ մի դեպքում չպետք է բացահայտեն մեր կառավարության հետ Ռասուլզադեի կապը: Կենտրոնում, բացի ձեզնից, այդ մասին ոչ ոք չպետք է իմանա: Ավելին, բացառված չէ, որ անգամ նահանգապետն էլ տեղյակ չի լինելու:

գ/ Նրանք ամենուրեք խոսում և գովազդում են իրենց կազմակերպության կապը ինչպես ձեր, այնպես էլ մեր կառավարության հետ՝ դրանով իսկ ցանկանալով ամրապնդել իրենց դիրքերը: Դա ակնհայտորեն երևում է նաև նրանց հաշվետվությունից: Սակայն այդ հանգամանքը նրանց կուսակցական շահերի տեսակետից կարող է որքան դրական ազդեցություն ունենալ, նույնքան էլ նրանց վնասել: Թույլ մի՛ տվեք նրանց անել դա:

դ/ Նրանք չպետք է փորձեն կապ հաստատել ձեզնից բացի կառավարության այլ ներկայացուցիչների հետ: Այդ հանգամանքը նույնպես հարկավոր է բացատրել նրանց»³¹⁹:

Ստամբուլյան ոստիկանության կողմից վտարանդիների գործունեության վերահսկման մասին ԱԱՕ-ի ղեկավար Ալի Շուքրյուի հիշատակումն ավելի շատ ձևական բնույթ ուներ, քանի որ ԽՍՀՄ ղեկավարության տվյալներով՝ Ստամբուլի ոստիկանությունում, հատկապես նրա զաղտնի ստորաբաժանումներում, մեծ թվով լեռնական և ադրբեջանցի վտարանդիներ էին աշխատում³²⁰: Ուստի միակ իրական հետևանքը եղավ այն, որ ոստիկանության զաղտնի բաժանմունքը վտարանդիության ղեկավարներին հրահանգեց խուսափել ցուցադրական քայլերից*:

³¹⁹ Տես *Лев Соцков*, указ. раб., с. 1:

³²⁰ Տես АВП РФ, ф. 08, Секретариат Карахана, оп. 10, папка 38, д. 263, л. 79:

* Այսպես, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Նիկոլայ Կուզնեցովն իր հուշերում նշում է, որ երբ Սևծովյան նավատորմի՝ մեկ հաճանավից և երկու էսկադրային ակնակրից կազմված խումբը 1933 թ. պաշտոնական այցով ժամանել էր Ստամբուլ, վտարանդիությունը որևէ բողոքի ցույց կամ թշնամական քայլ չէր ձեռնարկել:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում
հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը
«Պրոմեթևս» շարժումից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի
ավարտը

«Պրոմեթևս» շարժումը և եվրոպական պետություններում
հյուսիսկովկասյան վտարանդիության գործունեությունը 1928–1934 թթ.

Ռուսաստանյան քաղաքական վտարանդիության պատմության մեջ առանձնահատուկ դեր ունեցած «Պրոմեթևս» շարժումն իր ձևավորումից մինչև տրամաբանական ավարտը անցել է զարգացման մի շարք փուլեր և վերաձևավորումներ³²¹: Լեհաստանի քաղաքական շրջանների առաջ քաշած զաղափարի հիման վրա Գլխավոր շտաբի կողմից ձևավորված այդ շարժումը դուրս եկավ նրա վերահսկողությունից, և երկար տարիներ լեհական ֆինանսական ու քաղաքական աջակցությունից օգտված վտարանդիության ստաջնորդներից շատերը վերակողմնորոշվեցին՝ դեպի այլ պետություններ, առաջին հերթին՝ ֆաշիստական Գերմանիա, և նույնիսկ սատարեցին Լեհաստանի վրա նրա հարձակմանը:

«Պատմում էին, որ Թուրքիայում Քեմալը մեր ժամանումից առաջ զգուշացրել էր սպիտակ վտարանդիներին, որ անախորժությունների դեպքում նրանք բոլորը կարտաքսվեն», գրել է Ն. Կուզնեցովը (տես *Н. Г. Кузнецов*. Накануне (Мемуары) (<http://militera.lib.ru/memo/russian/kuznetsov-1/10.html>):

³²¹ «Փրոմեթևս» շարժման մասին ավելի հանգամանորեն տես *Т. М. Симонова*. "Прометейзм" во внешней политике Польши. 1919-1924 гг. «Новая и новейшая история», №4, 2002, сс. 47-63; նաև *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев*. Организация "Прометей" и "прометейское" движение в планах польской разведки по развалу России/СССР, сс. 318-414: Մույն աշխատությունում մենք ուսումնասիրում ենք շարժման միայն այն հատվածը, որն առնչվում է հյուսիսկովկասյան վտարանդիության հետ և լուսարևում նրա դերն այդ շարժումում:

Բնութագրելով «Պրոմեթևս» շարժումը՝ ուս պատմաբան Տ. Միմոնովան նշում է, որ «լեհական պատմագրությունում պրոմեթևսություն կոչվում է արտաքին քաղաքականության մեջ ձևավորված այն ուղղությունը, որը կապված էր. Յուզեֆ Պիլսուդսկու, նրա կողմնակիցների ու համախոհների հետ: Այդ անունը ծագում է լեհական Գլխավոր շտաբի երկրորդ բաժնի ակտիվ մասնակցությամբ ու ֆինանսական աջակցությամբ 1928 թ. ստեղծված «Պրոմեթևս» ակումբի և նույն անունը կրող հանդեսի անվանումներից, սակայն պրոմեթևսության գաղափարախոսությունն ու հիմնական ուղղությունները ձևավորվել էին դրանից դեռ շատ ավելի վաղ»³²²:

«Պրոմեթևս» շարժման հիմքում դրված էր մարշալ Յուզեֆ Պիլսուդսկու այն մոտեցումը, որ Լեհաստանի անկախության երաշխիք կարող է լինել Ռուսաստանի տրոհումը մի շարք անկախ ազգային պետությունների, որոնք պետք է գտնվեն Լեհաստանի ազդեցության տակ: Այդ ճանապարհով Լեհաստանը ձգտում էր Եվրոպայում խաղալ այն դերը, որը ժամանակին խաղացել էր Ռուսաստանը³²³:

Պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, որ շարժման անվանումն առաջարկել են վրացական վտարանդիության առաջնորդները, որոնք Լեհաստանը դիտում էին որպես մի Հերակլեսի, որը պետք է ազատի Կովկասի լեռներին շղթայված Պրոմեթևսին³²⁴: Սակայն վրացի պատմաբան Գեորգի Մամուլիան պնդում է, թե շարժման անունը առաջարկել է Հայդար Բամատը, որի փարիզյան բնակարանում տպագրման էր պատրաստվել նախկինում «Անկախ Կովկաս» կոչվող հանդեսի «Պրոմեթևս» վերանվանված առաջին

համարը³²⁵: Ընդհանրապես, Հայդար Բամատը կարևոր դեր խաղաց «պրոմեթևսական» շարժման նախապատրաստական փուլում: Ինչպես արդեն նշել ենք, Ռուսան Կնուլի օժանդակությամբ 1925 թ. Ստամբուլում նա ստեղծեց Կովկասյան համադաշնայնականների կոմիտե, որը 1927 թ. միացավ Կովկասի անկախության կոմիտեին³²⁶:

1920 թվականից սկսած՝ դեռ մինչև «Պրոմեթևս» շարժման ձևավորումը, լեհական իշխանությունները կապեր ունեին հյուսիսկովկասցիների, վրացիների և Դրիմի թաթարների առաջնորդների հետ: Այսպես, լեհական կառավարության հետ Դրիմի թաթարների առաջնորդներից մեկը՝ Ջաֆեր Սեյդախմեթ Քըրբեմերը կապ հաստատեց 1920 թ. ապրիլին՝ Բեռնում լեհական դեսպանության միջոցով³²⁷: 1920 թ. հոկտեմբերի 28-ին նա ժամանեց Վարշավա, որտեղ հանդիպումներ ունեցավ արտաքին գործերի նախարարի, խորհրդարանի նախագահի, վարչապետի, ապա՝ պետության նախագահ մարշալ Յուզեֆ Պիլսուդսկու հետ: Հանդիպման ժամանակ Պիլսուդսկին թեև դեռ շատ աղոտ ու չհստակեցված ձևով հնչեցրեց «Պրոմեթևսի» ստեղծման գաղափարը՝ ասելով, որ Լեհաստանը չի կարող կայուն ապագա ունենալ, քանի դեռ Ռուսաստանը մասնատված չէ, իսկ նրա կազմում եղած բոլոր ժողովուրդները՝ անկախ³²⁸:

1920 թ. սկզբնավորվեցին նաև լեհական իշխանությունների հետ լեռնական վտարանդիության առնչությունները: Լեռնականների հանրապետության բանակի զենեքալ Բահաեդդին Խուրշը Դադստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո

³²² Տե՛ս. *Т. М. Симонова*. "Прометеизм" во внешней политике Польши. 1919-1924 гг.:

³²³ Տե՛ս *В. К. Былинши, А. А. Зданович, В. И. Коротаев*, указ. раб., сс. 318-414:
³²⁴ Там же, с. 321: Կովկասյան քաղաքական վտարանդիությունից առաջինը, որի հետ լեհական իշխանությունները հաստատեցին գործնական շփումներ, վրացիներն էին: 1920-1922 թթ. մարշալ Պիլսուդսկու հրամանով՝ լեհական բանակ պայմանագրային հիմունքներով ընդունվեցին մի շարք վրացի և ադրբեջանցի զենեքալներ ու սպաներ (տե՛ս. *Т. М. Симонова*, указ. раб., с. 57):

³²⁷ Տե՛ս *Cafer Seydahmet Kirimer*. Bazı Hatıralar. İstanbul, EMEL Türk Kültürünü Araştırma ve Tanıtma Vakfı, 1993, s. 318:

³²⁸ A.g.e., ss. 324-325: Պիլսուդսկին նաև վստահ հայտարարեց, որ «թուրքերը չեն կարող բուլշևիկ դառնալ»:

արտագաղթեց Թուրքիա, որտեղ իր համակուրսեցի լեհ գեներալ Վիշնևսկու խնդրանքով 1920 թ. գրադվեց գաղթական լեռնականների շրջանում քարոզչությամբ և կամավոր խմբերի ձևավորմամբ՝ դրանք Լեհաստան տեղափոխելու և 1920 թ. ռուս-լեհական պատերազմում լեհական բանակի կազմում օգտագործելու համար³²⁹։

«Պրոմեթևս» շարժման ձևավորման գործում աշխատանքները դադարեցվեցին 1924–1926 թթ. Ս. Գրաբովսկու կառավարության օրոք, քանի որ այն մտադիր էր հավատարիմ մնալ 1921 թ. Ռիգայի ռուս-լեհական պայմանագրին³³⁰։ Շարժումն ակտիվ կերպով վերսկսվեց 1926 թ. մայիսին՝ հեղաշրջման միջոցով մարշալ Պիլսուդսկու իշխանության գալով։

«Պրոմեթևսական շարժման» գաղափարախոսության մշակման համար 1926 թ. Վարշավայում հիմնվեց Արևելյան ինստիտուտ, որը եռամսայակը մեկ հրատարակում էր «Արևելք» կոչվող հանդես։ Շարժման նկատմամբ վերահսկողությունը Լեհաստանի արտաքին գործերի նախարարության մասով իրականացրեց Արևելյան դեպարտամենտը, որը ղեկավարում էր Ռ. Կնուլը։ «Պրոմեթևսական շարժումը» ֆինանսավորեց «Ն» կոչվող հատուկ հիմնադրամը, որտեղ գումարներ էին փոխանցվում Լեհաստանի Գլխավոր շտաբից, արտաքին և ներքին գործերի նախարարություններից։

1926 թ. սեպտեմբերին Փարիզում սկսեց լույս տեսնել Կովկասի անկախության կոմիտեի պաշտոնական օրգան «Պրոմեթևս» («Promethe») հանդեսը, որի խմբագրական կազմում ընդգրկված էին նաև ուկրաինական ու թուրքեստանյան վտարանդիության

³²⁹ Տես *А. М. Муртазалиев*, указ. раб., с. 34: Հետագայում Բահաեդդին Խուրշի Թուրքիայից տեղափոխվեց Լեհաստան, որտեղ ծառայության անցավ Գլխավոր շտաբում և ակտիվորեն մասնակցեց Վարշավայում հյուսիսկովկասյան վտարանդիական կենտրոնի գործունեությանը։

³³⁰ Տես *Т. М. Симонова*, указ. раб., с. 61:

* 1936 թ. դրությամբ «Պրոմեթևսի» գործունեության ամենամյա ծախսը կազմում էր 7 091 228 լեհական զլոտի։ (տես *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев*, указ. раб., с. 346):

ներկայացուցիչներ** , ընդամին յուրաքանչյուր ազգային վտարանդիություն ներկայացված էր մեկ անդամով* : Դաշնակցությանը ևս առաջարկություն արվեց միանալու շարժմանը և ընդգրկվելու խմբագրության կազմում, սակայն այն մերժվեց³³¹։

Հանդեսը լույս էր տեսնում ֆրանսերեն լեզվով և նպատակ էր հետապնդում «ցուցադրել Եվրոպային, որ կազմավորման գործընթացի և բնակչության կազմի տեսակետից ԽՍՀՄ-ը դատապարտված է կործանման»³³²։ Այդ նպատակով հանդեսի խմբագրությունը կազմակերպում էր նաև գիտական զեկուցումներ ու գիտաժողովներ։ Չնայած այն բանին, որ հանդեսի գործունեությունը ղեկավարում ու ֆինանսավորում էր Լեհաստանի Գլխավոր շտաբի երկրորդ բաժինը («Էքսպոզիտուրա – 2»), հանդեսի խմբագրությունում մշտապես տեղի էին ունենում զգվրտոց և գժտություններ, որովհետև դրա պաշտոնական սեփականատեր Կովկասի անկախության կոմիտեն չէր ցանկանում այն կիսել այլ ազգերի քաղաքական վտարանդիության հետ։ Իրավիճակը կարգավորելու նպատակով 1938 թ. լեհական «Էքսպոզիտուրա-2»-ն իրականացրեց խմբագրության վերակազմավորում, որի արդյունքը եղավ այն, որ հանդեսը հանվեց ԿԱԿ-ի վերահսկողությունից և դարձավ «համապրոմեթևսական շարժման» օրգան, իսկ գլխավոր խմբագրի պաշտոնում Գեորգի Գվազալային փոխարինեց պրոֆեսոր Ալեքսանդր Շուլցինը³³³։

** Հանդեսի տիտղոսաթերթին նշված էր «Կովկասի ժողովուրդների, Ուկրաինայի և Թուրքեստանի ազգային պաշտպանության օրգան» (там же, с. 387):

* Հյուսիսկովկասյան վտարանդիությունը ներկայացնում էր Իբրահիմ Չուլիք Սուլեյմանը։

³³¹ Տես «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», էջ 322:

³³² Տես *В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев*, указ. раб., с. 387:

³³³ Там же, сс. 388–389:

Ռուսաստանյան վտարանդիությունը միավորելու նպատակով ծրագրվեց Փարիզում հիմնադրել «Պրոմեթևս» կոչվող ակումբ^{**}, սակայն դա չհաջողվեց, ուստի և նրա գործառույթները կատարեց համանուն հանդեսը: «Պրոմեթևս» անունով առաջին ակումբն ստեղծվեց 1928 թ. Վարշավայում: Պաշտոնապես այն կոչվում էր «Պրոմեթևս՝ Ռուսաստանի կողմից հալածվող ժողովուրդների լիգա, որը միավորում է վրացի, ադրբեջանցի, լեռնական, կազակ, իդել-ուրալյան, կարելաֆինական և թաթար ժողովուրդներին»³³⁴: Որպես մտակա նպատակ հռչակվեց ազգայնական վտարանդիության միավորումը, ինչպես նաև լեհական հասարակությունում քարոզչությունը՝ ուղղված «պրոմեթևսական շարժման» նկատմամբ համակրանքի սերմանմանը:

Ընդհանուր առմամբ «պրոմեթևսական շարժումը» վարում էր կազմակերպական-միավորիչ գործունեություն, քարոզչական ու գաղափարախոսական պայքար, մասնավորապես՝ աշխատում էր համայն Եվրոպայում ձևավորել հակախորհրդային հասարակական կարծիք, ԽՍՀՄ-ում տարբեր ազգությունների հալածանքների վերաբերյալ բողոքի նոտաներ էր հղում զանազան միջազգային ատյաններ, այդ թվում՝ Ազգերի լիգա: Խորհրդային և ռուսաստանյան պատմագրությունում շեշտվում է, որ այդ շարժումը՝ սկսած դրա գաղափարից, մշակվել, իրագործվել ու գոյատևել է շնորհիվ լեհական հետախուզության: Այսպես, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առգրավված և Ռուսաստանի պետական ռազմական արխիվի ֆոնդերում պահվող՝ լեհական Գլխավոր շտաբի նյութերի հիման վրա «Պրոմեթևս» շարժման բազմակողմանի ու մանրակրկիտ ուսումնասիրության հեղինակներն իրենց եզրակացություններում նշում են, որ «ոչ՝ կադրային կազմով (թվաքանակի և ազգային առումով), ոչ՝ ԽՍՀՄ-ի դեմ ուղղված լրտեսադիվերսիոն գործունեության թափի

տեսակետից այդ կազմակերպությունը 20-րդ դարի 1920-1930-ական թվականներին չի ունեցել իր նմանը: Նույնիսկ երբ լեհական հետախուզությունը հանդիպում էր օբյեկտիվ ֆինանսական ու նյութական դժվարությունների և ստիպված էր լինում օգնության խնդրանքով դիմել այլ պետությունների ու «գաղտնի հակախորհրդային ճակատում» իր գործընկերներին, նա ձգտում էր իր ձեռքից բաց չթողնելու «Պրոմեթևսի» ղեկավարության սանձերը ու նրա լրտեսական ցանցի բազմաթիվ թելերը»³³⁵:

Սակայն, չնայած գործադրված ջանքերին ու ներդրված գումարներին, լեհական իշխանությունների՝ «Պրոմեթևսական շարժման» հետ կապված հույսերը չարդարացան: Հիմնական խոչընդոտն այն էր, որ անգամ հակախորհրդային պայքարում շահերի համընկնման պարագայում լեհական իշխանություններին չհաջողվեց կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում ապահովել միասնականություն, քանի որ գնալով խորացող հակասությունների պատճառով այն տրոհվում էր տարբեր գաղափարական կողմնորոշում ունեցող խմբավորումների: Այդ ամենը հանգեցրեց այն բանին, որ լեհական հետախուզությունը, ղեկավարի և ուղղորդողի դեր ստանձնելու փոխարեն, ստիպված եղավ զբաղվել տարբեր վտարանդիական կառույցների միջև հակասությունների հարթեցմամբ, այս կամ այն խմբավորմանը պաշտպանելու և նրան աջակցելու անարդյունավետ գործով: Այս պատակավածությանը գումարվեց նաև այն դիրքորոշումը, որը որդեգրել էր հայ քաղաքական վտարանդիությունը՝ իրեն առանձնացնելով համակովկասյանից և ըստ այդմ 1923 թվականից մինչև 1930-ական թվականների վերջը հրաժարվելով կովկասյան վտարանդիության քաղաքական գործունեությանը մասնակցելուց: Կովկասյան վտարանդիության այդ վիճակը հակասում էր մեծ տերությունների հաշվարկներին, քանի որ նրանք ցանկանում էին Կովկասը դիտել որպես մեկ միասնական

^{**} 1934 թ. Փարիզում հիմնադրվեց «Բարեկամության կոմիտե», որը «Պրոմեթևսական շարժման» քարոզչական կառույցներից մեկն էր:

³³⁴ Там же, с. 330:

³³⁵ Там же, с. 392:

ամբողջություն և համապատասխանաբար վարել այդ վտարանդիության օգտագործման ընդհանուր, չտարբերակված քաղաքականություն:

Լեհական իշխանությունների մյուս ձախողումն այն էր, որ Ստամբուլը հակախորհրդային գործունեության կենտրոնակայան դարձնելու հաշվարկներում լեհական իշխանությունները չկարողացան ճիշտ կռահել ու հաշվի առնել Թուրքիայի իրական դիրքորոշումը: Մի կողմից՝ Թուրքիան չէր ցանկանում կորցնել կովկասյան մահմեդական վտարանդիության նկատմամբ վերահսկողությունը, իսկ մյուս կողմից՝ խուսափում էր ԽՍՀՄ-ի հետ իր հարաբերությունների վատթարացումից հանուն որևէ պետության քաղաքական շահերի:

Այստեղ հարկ է ներկայացնել այն դերը, որը «Պրոմեթևսական շարժման» շրջանակներում հատկացվում էր Թուրքիային՝ որպես կովկասյան վտարանդիության քաղաքական կենտրոնի ու ԽՍՀՄ-ին սահմանակից երկրի, և առանց որի քաղաքական աջակցության ու տարածքի օգտագործման հնարավոր չէր մտածել անգամ Կովկասում արդյունավետ քաղաքականություն վարելու մասին: «Պրոմեթևսական շարժման» սկզբից նեթ ծագեց Թուրքիայի նկատմամբ ընդունվելիք դիրքորոշման խնդիրը, քանի որ Կովկասի և Գրիմի մահմեդականները իրենց փրկիչ էին տեսնում ոչ թե Լեհաստանը, այլ առաջին հերթին Թուրքիան, որին լիովին վստահում էին: Լեհաստանի իշխանությունները կամա թե ակամա ստիպված եղան համագործակցել վտարանդիության հարցերով զբաղվող թուրքական հատուկ ծառայությունների հետ, մանավանդ որ հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության հանգրվանը Թուրքիան էր, և միայն հետագայում՝ ստեղծված բարենպաստ հանգամանքների բերումով, նրա

մի որոշ հատված տեղափոխվեց Վարշավա՝ չխզելով իր կապերը Թուրքիայի հետ³³⁶:

Նախաձեռնությունը եկավ վրացական վտարանդիության կողմից, որը 1929 թ. հուլիսին լեհական «Էքսպոզիտուրա 2»-ի ներկայացուցիչ Գավրոնսկուն ուղղված նամակում բարձրացրեց Թուրքիայի հետ հարաբերություններն անհրաժեշտաբար հստակեցնելու հարցը: Վրացական վտարանդիության անունից Ռամիշվիլին ներկայացրեց Կովկասի անկախության կոմիտեի կենտրոնակայանը Ստամբուլից Փարիզ տեղափոխելու առաջարկություն՝ դա պատճառաբանելով հետևյալ երեք հանգամանքներով: Առաջին. Թուրքիան վարում է խորհրդամետ քաղաքականություն, ինչը դժվարացնում է այդ պետությունում կովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությունը: Երկրորդ. հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները հրաժարվում են Թուրքիայի տարածքում գործելուց: Երրորդ. լեհական իշխանությունները Թուրքիայում գործելու դեպքում Արևմուտքում «ստեղծում են թուրքական գործակալի և թուրքական քաղաքականության գործիք լինելու տպավորություն»³³⁷: Ռամիշվիլու նամակն ավարտվում էր վերջնագրով՝ մինչև 1929 թ. օգոստոսի 15-ը տալ պատասխան, հակառակ դեպքում դա կմեկնաբանվի որպես հրաժարում վրացական վտարանդիության հետ համագործակցությունից:

Թուրքիայի հարցում իրենց դիրքորոշումը հստակեցնելու կապակցությամբ Գավրոնսկին 1929 թ. օգոստոսի 6-ի նամակով իր տեսակետը հայտնեց Տադեոշ Գոլուվկոյին: Հեղինակը պնդում էր, թե «հույժ կարևոր է, որ ԿԱԿ-ը նախկինի պես գործի Թուրքիայում, այլ ոչ

³³⁶ Там же, с. 344: Պաշտոնական կապուղիներով դրանք իրականացվում էին Ստամբուլում 1932-1937 թթ. լեհական ռեզիդենտ մայոր Կարոլ Ղուբիչ-Պենտերի միջոցով, որը հետագայում դարձավ Լիսաբոնում Լեհաստանի դեսպան:

³³⁷ Там же, с. 370:

թե ինչ-որ այլ տեղում: Կովկասի անկախության ամբողջ հայեցակարգը և մեզ համար դրա կարևորությունը հիմնվում են այն ենթադրության վրա, որ նրա պայքարի ճակատն ուղղված կլինի դեպի հյուսիս, ինչի համար անհրաժեշտ է բարյացակամ հիմք ունենալ հարավում: Եվ այսպես. եթե մենք չկարողանանք անկախ Կովկասի համար բարյացակամ հիմք գտնել Թուրքիայում, ամբողջ հայեցակարգը հարցականի տակ կդրվի: Թերևս սա sine qua non պայման է, իսկ այդ պայմանը կարող է իրականանալ միայն այստեղ գործելու դեպքում. որևէ այլ վայրում ԿԱԿ-ի գործելը կարող է միայն հետաձգել այդ պայմանի իրականացումը»³³⁸: Մերժելով վրացիների առաջարկությունը՝ Գավրոնսկին շեշտեց, որ հարկավոր է Թուրքիային նախապատրաստել Կովկասի և Հարավային Ռուսաստանի հարցերում թուրք-լեհական համագործակցության մտքին, սակայն ավելացրեց, որ այդ աշխատանքը մեծ դժվարությամբ է առաջ գնում, քանի որ «թուրքերը դրանում որևէ բան չեն հասկանում» և միայն ազգայնամոլներն ու պանթուրքականներն են դրականորեն վերաբերվում այդ գաղափարին³³⁹: Ուշագրավ է, որ Գավրոնսկու նամակում որպես Կովկասի հարցում թուրք-լեհական համագործակցության ամենամեծ ջատագով հիշատակվում է «Թուրքական օչուխ» կազմակերպության Ստամբուլի մասնաճյուղի ղեկավար Համդուլլահ Մուբխին, որը կովկասյան մահմեդական վտարանդիության հետ համագործակցության տեսակետից առաջին պլան մղվեց դեռ 1920-ական թթ. սկզբներին³⁴⁰:

Հետագա զարգացումները ապացուցեցին Թուրքիայի հարցում Գավրոնսկու դիրքորոշման հիմնավորությունը, քանի որ լեհական իշխանությունների կողմից թուրքական գործոնի թերագնահատումը հանգեցրեց «Մուսավաթի» պատակումանը: Այդ կուսակցության

³³⁸ Там же, с. 371:

³³⁹ Там же.

³⁴⁰ Там же.

գործունեությունը ֆինանսավորող լեհական Գլխավոր շտաբի պահանջով Մ. Ռասուլզադեն կուսակցության արտասահմանյան բյուրոն տեղափոխեց Վարշավա, ինչը 1934 թ. հանգեցրեց կուսակցության երկձեղկմանը վարշավյան և ստամբուլյան թևերի: «Մուսավաթի» ստամբուլյան թևի ղեկավարներ Վեքիլովն ու Խասամամեդովը այն կարծիքին էին, թե որպես ԽՍՀՄ-ի դեմ պայքարի հենադաշտ Թուրքիան ավելի հարմար է, քան Լեհաստանը:

«Պրոմեթեոսական շարժման» մեջ Թուրքիայի ունեցած դերակատարությունը վերլուծելիս հարկ է հիշատակել մեկ ուշագրավ հանգամանք ևս: Եվրոպական և խորհրդային պատմագրությունում առավել ուսումնասիրված են 1920–1930-ական թթ. կովկասյան վտարանդիության կազմավորման և ուղղորդման գործում Լեհաստանի ցուցաբերած նախաձեռնությունը և դերը: Թուրքիայի դերը որոշ չափով մնացել է ստվերում, թեև նվազ կարևոր չի եղել: Մասնավորապես՝ 1926 թ. թուրքական իշխանությունները Մաիդ Շամիլի միջոցով աջակցեցին, այդ թվում՝ ֆինանսապես, Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության (Народная партия горцев Кавказа) հիմնադրմանը: Կուսակցության ղեկավարությունում ընդգրկվեցին լեռնական վտարանդիության՝ Թուրքիայում ապրող առաջնորդները, օրինակ՝ Ալիխան Կանտեմիրը և Բարասի Բայթուգանը³⁴¹:

Ավարտելով այս ակնարկը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ կովկասյան վտարանդիության օգտագործման հարցում քաղաքական շահերի չհամընկնման պատճառով Թուրքիայի հետ համատեղ գործունեության արդյունավետ մեխանիզմ ձևավորելու լեհական հետախուզության և դիվանագիտության բոլոր ջանքերը լուրջ արգասիքներ չունեցան³⁴²:

Թեև «Պրոմեթեոսի» գործունեության ընթացքում ի հայտ եկան մի շարք դժվար հաղթահարելի խաչընդոտներ, սակայն լեհական

³⁴¹ Shtu Izzet Aydemir, a.g.e., ss. 151 – 152:

³⁴² Shtu B. K. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев, указ. раб., с. 343:

իշխանությունները պահպանեցին վերակազմավորման միջոցով այդ շարժման արդյունավետությունը մեծացնելու հույսերը*:

«Պրումթեսական շարժման» ձևավորումից հետո հիմնական խոչընդոտը, որին, բախվեց հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը, այն ազգային կենտրոնի վերածելու խնդիրն էր: 1920-ական թթ. վերջերից վրացական և ադրբեջանական վտարանդիությունում տեղի ունեցող զարգացումները հանգեցրին ազգային կենտրոնների ստեղծմանը, որոնք դարձան վտարանդիության շրջանում գործող բոլոր ուժերի ղեկավար մարմինը: Ազգային կենտրոնների՝ որպես հիմնական օղակի հետ համագործակցություն հաստատելու դիրքորոշումը բնորոշ էր նաև այդ շրջանում ռուսաստանյան քաղաքական վտարանդիության հիմնական հովանավոր լեհական իշխանություններին: Իսկ ահա հյուսիսկովկասյան հասարակության համար լուրջ պրոբլեմ էր այն, որ բազմազգության պայմաններում չկար միասնականություն*։ Եթե հայկական վտարանդիության ղեկավար ուժը Դաշնակցությունն էր, ադրբեջանական վտարանդիությանը՝ «Մուսավաթը», իսկ վրացականինը՝ վրաց մենշևիկները, ապա լեռնական վտարանդիությունում առկա էին բազմաթիվ փոքր կուսակցական միավորումներ, խմբավորումներ, անհատների շուրջը միավորված խմբեր: Կովկասի անկախության կոմիտեում հյուսիսկովկասյան հատվածը ներկայացված էր Կովկասի լեռնականների ժողովրդական

* Նման փորձ 1937 թ. կատարվել է «Փրումթեսի» համակարգող Վլադիսլավ Պելցի նախագծով:

* 1939 թ. Թուրքիայում հրատարակված «Մյուրիդականությունը Կովկասում. Գազավաթի պատմություն» գրքում Այթեք Քունդուխը նշում էր, որ հյուսիսկովկասցիների հիմնական թույլ կողմն այն էր, որ չկար միասնություն. անհատական խիզախության և ինքնազոհողության բարձր հատկանիշների հետ մեկտեղ «մենք դեռևս չենք կարողացել հասարակություն դառնալ» (տես *Aytek Kundukh. Kafkasya Müridizmi (Gazavat Tarihi). Sadeleştirilen ve Hazırlayan Tarık Cemal Kutlu. İstanbul, Gözde Kitaplar Yayınevi, 1987, s. 12):*

կուսակցությամբ**, որին չէր հաջողվում համագործակցություն հաստատել այլ լեռնական խմբավորումների հետ և այդ ճանապարհով ԿԱԿ-ի հյուսիսկովկասյան հատվածը վերածել Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի:

Նախ Հայդար Բամատի շուրջը միավորված աջակողմյան լեռնական վտարանդիությունը 1928–1929 թթ. հանդես եկավ ադրբեջանական-լեռնական քաղաքական վտարանդիության առաջնորդի դերին հավակնող Սաիդ Շամիլի դեմ: Բացի ԿԼԺԿ-ն և թուրքական իշխանությունների հետ ունեցած կապերը որպես խաղաքարտ օգտագործելուց, Սաիդ Շամիլը կարողացավ իր կողմը գրավել լեռնական գիևկորական վտարանդիներին, որոնցից նրա հիմնական աջակիցն էր գեներալ Լազար Բիչերախովը*։ Այդ հանգամանքը պատճառ դարձավ, որպեսզի Սաիդ Շամիլին հակադիր լեռնական խմբավորմանը սատարի «Մուսավաթ» կուսակցության՝ Մ. Ռասուլզադեի ղեկավարած թևը, քանի որ նրան դուր չէր գալիս Շամիլի և Բիչերախովի մտերմությունը³⁴³: Խնդիրն այն էր, որ կովկասյան վտարանդիությունը միանշանակ կերպով չէր ընդունում Լ. Բիչերախովին՝ հաշվի առնելով 1918 թ. նրա համագործակցությունը անգլիական զորքերի հետ: Վտարանդիության մի շարք գործիչներ, օրինակ, Ջաբաղին, նրան պարզապես դավաճան էին համարում³⁴⁴:

Նույն թվականներին աջակողմյան լեռնականների առաջնորդ և «Պրումթեսա շարժման» աչքի ընկնող առաջնորդներից մեկը՝ Հայդար

** Այդ կուսակցությունը 1934 - 1939 թթ. Փարիզում հրատարակում էր «Հյուսիսային Կովկաս» հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր ազգությամբ օս Մ. Կանտեմիրը:

* Գեներալ Լազար Բիչերախովը ազգությամբ օս էր, բայց, հիմնվելով այն փաստի վրա, որ 1918 թ. Բաքվի Կոմունայի անկումից հետո անգլիական զորքերի հետ քաղաք էին մտել նաև Բիչերախովի հրամանատարության տակ գտնվող կազակներից և որոշ թվով հայերից կազմված զորաջոկատները, թուրքական մի շարք պատմաբաններ Բիչերախովին վերագրում են հայկական ծագում (տես, օրինակ, *Feridun Kandemir. Enver Paşa'nın Kafkas Türklüğü'nü kurtarma hareketi ve çetin mücadelesi. «Tarih Konuşuyor», Cilt 3, sayı 15, Nisan 1965. İstanbul, s. 1239):*

³⁴³ Տես ԲԴԲԱ, փ. 461 և., օր. 1, Դ. 236, և. 33:

³⁴⁴ Տես *Wassan-Giray Cabağı, a.g.e., s. 90:*

Բամասը, հակադրվեց շարժման մասնակից այն լեռնականներին, որոնք Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության ղեկավարներն էին: Պատճառն այն էր, որ Բամասը համարում էր, թե Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության շարքերում միավորվածները էական դեր չեն խաղացել Հյուսիսային Կովկասում 1918–1920 թթ. տեղի ունեցած իրադարձություններում^{**}: Որպես արդյունք՝ Բամասն ու նրա խմբավորումը անջատվեցին և 1929 թ. Փարիզում հիմնադրեցին ռուսերեն լեզվով հրատարակվող «Անկախ Կովկաս» հանդեսը, որը քարոզում էր Կովկասյան համադաշնության ստեղծման գաղափարը:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն ադրբեջանական ու վրացական քաղաքական վտարանդիության ղեկավարներից, լեռնականներից քչերը մշտական բնակություն հաստատեցին Վարչավայում, նրանք հիմնականում գերադասում էին գործել Ստամբուլում և Փարիզում: 1920–1930-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության երրորդ հավաքատեղին էր Պրահան, որը, քաղաքականից բացի, ուներ նաև մտավոր, գիտամշակութային կենտրոնին բնորոշ հատկանիշներ, ինչը պայմանավորված էր այն փաստով, որ Չեխոսլովակիայի կառավարությունը ռուսաստանյան վտարանդիության առջև բացել էր այնտեղ գործող համալսարանների և գիտամանկավարժական այլ հաստատությունների դռները, նույնիսկ

հատուկ կրթաթոշակներ էր սահմանել^{*}: 1920 թ. սկզբներից բազմաթիվ հյուսիսկովկասցի ուսանողներ կրթություն էին ստանում Պրահայում գործող Ռուսական համալսարանում և այլ կրթական հաստատություններում: 1923 թ. ապրիլի 29-ին Չեխոսլովակիայում կրթություն ստացող հյուսիսկովկասցի ուսանողները հիմնադրեցին «Չեխոսլովակիայում Կովկասի լեռնականների միություն» և ընտրեցին ղեկավար մարմին՝ Ահմեդ Ցալիկովի նախագահությամբ³⁴⁵: Չեխոսլովակիայի իշխանությունները ՉԿԼՄ-ին հատկացրեցին 10 կրթաթոշակ:

1924 թ. օգոստոսին տեղի ունեցած ՉԿԼՄ տարեկան ժողովում Ա. Ցալիկովն ու քարտուղար Վ. Վազագովը հրաժարական տվեցին, և ընտրվեց նոր ղեկավար կազմ՝ Մ. Խատզոգի նախագահությամբ^{*}: Նախկին ղեկավարության համեմատությամբ նորը հակախորհրդային պայքարում գտնվում էր ավելի արմատական դիրքերի վրա: Մ. Խատզոգը կապեր հաստատեց Սաիդ Շամիլի հետ, որը մի քանի անգամ այցելեց Պրահա:

Նույն թվականին Պրահայում հիմնադրվեց նաև «Կովկասի լեռնական (Кавказский союз)» հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր Ահմեդ Ցալիկովը: Հյուսիսկովկասյան վտարանդիության պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցան այդ հանդեսն ու նրա խմբագիր

^{*} Այդ կրթաթոշակներից օգտվում էր նաև հայ վտարանդիությունը: Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչին 1923 թ. սեպտեմբերի 18-ին ուղղված գրության մեջ նշված էր, որ Թավրիզի դաշնակցականների մեծ մասը մեկնում է Պրահա, որի համալսարանը նրանց 50 տեղ է տրամադրել: (տես «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 291–292): Մեկ այլ փաստաթղթում նշվում է 25 տեղ (տես նույն տեղում, էջ 293): Պրահայի համալսարանում Նախագահ Մասարիկի կողմից տրամադրված քվոտայով կրթություն ստացած դաշնակցականների թվում էր, օրինակ, Հակոբ Ազիզյանը, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Դրոյի մտերիմներից էր և Բեռլինում գործող «Հայկական ազգային Կոմիտեի անդամ» (տես *Միսաք Թորլաբեան*, Օրերուս հետ: էջ 531):

³⁴⁵ Տես *Ե. Байтуган*. Этапы развития национально-освободительного движения на Северном Кавказе. «Вопросы истории», М., 2001, N 5, с. 20:

^{*} Այդ ժողովը նաև որոշում ընդունեց Բոնո քաղաքում բացել ՉԿԼՄ մասնաճյուղ, որի ղեկավար նշանակվեց Բարասի Բայթուգանը:

^{**} 1930 թ. հուլիսի 8-ին Հ. Բամասի և Ա. Չերմոնի ստորագրությամբ Ա. Չխենկելիին հասցեագրված նամակում մեղադրանք էր ներկայացվում, թե «դուք շատ լավ գիտեիք, որ ԿԱԿ-ի Հյուսիսկովկասյան բաժանմունքը հիմնականում կազմված է մեզ համար թշնամական ճակատում եղած մարդկանցից, որոնք նույնիսկ զենքը ձեռքին կովել են Հյուսիսկովկասյան հանրապետության դեմ, կամ այն վտարանդիներից, որոնք որևէ մասնակցություն չեն ունեցել մեր ազգային շարժմանը ո՛չ Կովկասում եղած ժամանակ, ո՛չ էլ վտարանդիության մեջ գտնվելու տարիներին, մինչև չպարզեցին, որ ԿԱԿ-ին մասնակցությունը կարող է շահավետ գործարք լինել» (տես *Гайдар Баммат*. О прекращении сотрудничества Национальной делегации Республики Северного Кавказа с Грузинскими официальными учреждениями в Париже.):

Ահմեդ Ցալիկովի ստեղծագործական, հրապարախոսական, հրատարակչական գործունեությունը³⁴⁶: Հանդեսում հրապարակվում էին նաև ուշագրավ հոդվածներ չերքեզների մշակույթի, պատմության, գրականության մասին:

Չեխոսլովակիայում 1920–1940 թթ. գործում էր նաև մեկ այլ լեռնական կառույց, որը միավորեց Հյուսիսային Կովկասի վտարանդիության զինվորական թևը՝ գնդապետ Ն. Բիզանի ղեկավարած «Կովկասյան կուսակություն (Кавказское куначество)» կազմակերպությունը: Սակայն այն չմասնակցեց հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությանը³⁴⁶: Ռուս պատմաբան Վ. Կազակովն այն կարծիքին է, որ «Կովկասյան կուսակություն» կազմակերպությունն ստեղծված էր բարեգործական նպատակներով³⁴⁷:

Եվ պատահական չէր, որ Սաիդ Շամիրը, հաշվի առնելով ռուսաստանյան վտարանդիության գործունեության համար Չեխոսլովակիայի իշխանությունների ստեղծած բարենպաստ պայմանները, 1926 թ. հյուսիսկովկասյան վտարանդիության համաժողովը, որի մասնակիցների մեծ մասը երիտասարդներ էին, գումարեց Պրահայում³⁴⁸: Հենց այդ համաժողովում էր, որ հիմնադրվեց Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակությունը, որը

³⁴⁶ Թուրքիայում Ցալիկովը հայտնի էր որպես Ահմեթ Չալքաթը (Ahmet Çalikatı), ինչը գալիս է նրա իսկական անուն-ազգանվան թուրքերեն տառադարձությունից՝ Цалыкаты (Цаликов) Ахмет Тембулатович (1882-1928 гг.) (տես *Izzet Aydemir*, a.g.e., s. 145): Հյուսիսկովկասյան գրականության մեջ Ա. Ցալիկովն առաջինը ձեռնամուխ եղավ ուլալիսների ճակատագրի գեղարվեստական լուսաբանմանը՝ գրելով «Վերջին ուլալիսը» պատմվածքը (a.g.e., ss. 146 – 149): Մի քանի տասնամյակ անց ուլալիսների ճակատագրին անդրադարձավ Բագրատ Շինկուբան իր «Գնացածներից վերջինը» հանրահայտ վեպում (տես *Баграт Шинкуба. Последний из ушедших*. М., «Советский писатель», 1978): Համաշխարհային հյուսիսկովկասյան սփյուռքում ուլալիսները դիտվում են որպես ազգային ինքնության կորսման և ձուլման խորհրդանիշ:

³⁴⁶ Տես *С. В. Волков*. Белое движение. Энциклопедия Гражданской войны. М., «ОЛМА-Пресс», 2003, с. 48:

³⁴⁷ Տես *А. В. Казаков*. Возникновение северокавказской политической эмиграции после Гражданской войны в России (www.gazavat.ru/history.3.php?rub=177art=128):

³⁴⁸ Տես *Kadircan Kaftı*, a.g.e., s. 155:

մասնաճյուղեր բացեց Լեհաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Իտալիայում, ինչպես նաև բյուրոներ՝ չերքեզական համայնքներ ունեցող Միքիայում, Եգիպտոսում և Պաղեստինում³⁴⁹:

ԿԼԺԿ հիմնադիր համաժողովը Պրահայում անցկացնելով Սաիդ Շամիրը ևս մեկ նպատակ էր հետապնդում՝ դրանով իսկ փորձելով կորաստեղծ կուսակցության համար ապահովել չերքեզության շղարշ և այն գերծ պահել թուրքամիտության կամ թուրքական ծառայությունների հետ համագործակցության մեջ մեղադրանքից:

Կովկասյան վտարանդիության շրջանում տեղի ունեցող զարգացումները հանգեցրին այն բանին, որ 1920-ական թթ. կեսերից Եվրոպայում գործող հյուսիսկովկասյան վտարանդիության հասարակական-քաղաքական ակտիվության մղիչ ուժ դարձան հանդեսները, որոնցից շատերը, ինչպես, օրինակ, «Անկախ Կովկաս», «Զարյա Կավկազ», երկար կյանք չունեցան: 1920 – 1930-ական թթ. Եվրոպայում հրատարակվող հյուսիսկովկասյան հանդեսներից, «Կովկասի լեռնականի» կողքին, հարկ է հիշատակել երկուսը՝ «Կովկասի լեռնականները (Горцы Кавказа)» և «Հյուսիսային Կովկասը (Северный Кавказ)»:

«Կովկասի լեռնականները» հանդեսը Հյուսիսային Կովկասի ժողովրդական կուսակցության պաշտոնական օրգանն էր և լույս տեսավ Փարիզում 1929 թվականից մինչև 1934 թ. ապրիլը: Նրա զլխավոր խմբագիրն էր իշխան Էլմուրգա Բեկովիչ-Չերկասկին, պատասխանատու խմբագիրը 1922 թվականից Պրահայում, իսկ 1929-ից Փարիզում ապրող Բարասրի Բայթուզանը: Հանդեսում հոդվածներով հանդես եկան Վարշավայի, Լիոնի, Լոզանի, Նյու-Յորքի, Փարիզի և Պրահայի հյուսիսկովկասյան համայնքների ներկայացուցիչները³⁵⁰: Յուրաքանչյուր համարում «Խորհրդային մամուլի տեսություն» և

³⁴⁹ A.g.e.

³⁵⁰ Տես «Материалы для библиографии Кабардино-Балкарии, Карачаево-Черкессии и Адыгеи (1918-1940)» (<http://adiga.narod.ru/history/401.htm>):

«Լուրեր Հայրենիքից» բաժիններում տեղեկություններ հրատարակվեցին Հյուսիսային Կովկասում տիրող քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավիճակի մասին³⁵¹: «Լեոնականների շարքերում զգալի թուրքական տարրի առկայության» պատճառաբանությամբ հանդեսում 1933 թվականից սկսեցին հոդվածներ տպագրվել նաև թուրքերեն լեզվով³⁵²:

1934 թ. լեոնական քաղաքական վտարանդիության շրջանում հակասությունների ուժեղացման և ԿԱԿ-ի վերածնունդի պատճառով խմբագրական կազմում գծություններ ծագեցին, և հանդեսը դադարեցրեց իր գոյությունը: Խմբագրական կազմի աշխատողների մեծ մասը՝ Բ. Բայթուզանի գլխավորությամբ, տեղափոխվեց Վարշավա, որտեղ 1934 թ. մայիսից մինչև 1939 թ. հրատարակեց «Հյուսիսային Կովկաս» հանդեսը, որը նույնպես ԿԼԺԿ պաշտոնական օրգանն էր³⁵³: Այնտեղ պահպանվեց տեղեկությի մատուցման այն ձևը, որը բնորոշ էր «Կովկասի լեոնականներին», միայն թե մի տարբերությամբ՝ Ա. Ցալիկովի գրական ազդեցության հետևանքով մեծացվեց «Հյուսիսկովկասյան ֆոլկլորից» բաժինը, որում գետեղվեցին հյուսիսկովկասյան հեքիաթների, առասպելների ու երգերի արտատպությունները ԽՍՀՄ-ում լույս տեսնող ամսագրերից ու ժողովածուներից³⁵⁴:

Վերլուծելով վտարանդիության քաղաքական ու մշակութային մտքի, հյուսիսկովկասյան վտարանդիության և թուրքիայի չերքեզական համայնքի պատմության համար «Կովկասի լեոնականներ» և «Հյուսիսային Կովկաս» հանդեսների նշանակությունը՝ Իզեթ Այդեմիրը գրում է. «թե՛ «Կովկասի լեոնականներ», թե՛ «Հյուսիսային Կովկաս»

³⁵¹ Там же.

³⁵² Там же.

* Ընդհանուր առմամբ լույս են տեսել հանդեսի 50 համար (տես *İzzet Aydemir*, a.g.e., s. 138):

³⁵³ Տես *İzzet Aydemir*, a.g.e., s. 138:

³⁵⁴ A.g.e., s. 152:

հանդեսները այսօր էլ ուղեցույց են Կովկասի գաղափարով ապրող և այն պաշտպանող մեր բոլոր մտավորականների համար: Եվ դա այն աստիճանի, որ անցյալում հրատարակված գիտական ու քաղաքական հոդվածներն այսօր ևս կազմում են մեր աշխատանքների հիմքն ու բովանդակությունը: Տվյալ հրատարակություններն ունեն այն առանձինատկությունը, որ տպագայում ևս պայծառ լույս են սփռելու բոլոր հյուսիսկովկասցիների պատմության վրա»³⁵⁵:

Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունում թուրքական ուղղության կարևորության վկայությունն է այն փաստը, որ 1936–1937 թթ. Վարշավայում հրատարակվող ութ հանդես երկլեզու էին՝ ռուսերեն և թուրքերեն: Դրանք էին՝ «Ազատության ճանապարհ (Путь свободы – Hürriyet Yolu)», «Պայքար (Борьба – Savaş)», «Մեր նպատակը (Наша цель – Bizim Dilek)», «Ազգային միտք (Национальная Мысль – Milli Fikir)», «Ապագա (Будущее – Gelecek)», «Հառաջ (Вперед – İleri)», «Մեր երկիրը (Наш край – Ülkemiz)», «Կանչ (Призыв – Çağırış)»³⁵⁶: Բոլոր այդ հանդեսների գլխավոր խմբագիրն էր Բ. Բայթուզանի գաղափարակից և զինակից Ահմեթ Ջանբեք Հավժոկուն³⁵⁷, իսկ հրատարակիչը՝ ԿԼԺԿ-ն³⁵⁸:

1930-ական թթ. սկզբներից Եվրոպայում գործող տարբեր հյուսիսկովկասյան խմբավորումների միջև հակասությունները այն աստիճանի սրվեցին, որ վտանգի տակ դրվեց հետագա համագործակցության հնարավորությունը: Ստեղծված իրավիճակի շտկումն իր վրա վերցրեց Լեհաստանի Գլխավոր շտաբում «Պրոմեթևս» շարժումը վերահսկող «Էքսպոզիտորա-2» բաժնի ղեկավար գնդապետ Էդմունդ Խարաշկնիչը³⁵⁹: Ի վերջո, միայն Սաիդ Շամիլի ղեկավարած Կովկասի լեոնականների ժողովրդական կուսակցության ջանքերով 1933 թ. հաջողվեց ԿԱԿ-ում ստեղծել Հյուսիսկովկասյան ազգային

³⁵⁵ A.g.e., s. 138:

³⁵⁶ A.g.e., s. 140:

³⁵⁷ A.g.e., ss. 159-160:

³⁵⁸ Տես *Kadircan Kafli*, a.g.e., s. 155:

³⁵⁹ Տես *Лев Соцков*, указ. раб., с. 4:

կենտրոն (ՀԱԿ), ինչից հետո՝ 1934 թ., ադրբեջանական, վրացական և հյուսիսկովկասյան վտարանդիությունների ներկայացուցիչները Բրյուսելում ստորագրեցին ԿԱԿ-ի վերակազմավորման մասին պայմանագիր: ՀԱԿ-ի կենտրոնատեղի դարձավ Փարիզը, իսկ ռազմական բաժանմունքի տեղակայման վայր՝ Վարշավան³⁶⁰: Բրյուսելյան որոշումները հաստատվեցին 1934 թ. սեպտեմբերի 15-ին Վարշավայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որտեղ հյուսիսկովկասյան խմբակցությունը ներկայացնում էր Մամեդ Սունշ Գիրեյը³⁶¹:

Այս ամենը հանգեցրեց այն բանին, որ լեռնական վտարանդիության աջամետ զանգվածը, առանձնանալով ԿԼԺԿ-ից և այլ խմբավորումներից, միավորվեց Հ. Բամատի շուրջը, որը Փարիզում հիմնադրեց «Կովկաս» հանդեսը: Դրա անվանումը դարձավ նաև խմբի պաշտոնական անվանումը: «Կովկաս» խումբը միավորեց լեռնական, վրացական ու ադրբեջանական վտարանդիության ծայրահեղ ազգայնական տարբերը և գործեց չորս տարի (1934–1939 թթ.): Հայտարարված նպատակներից էր կովկասյան վտարանդիության բոլոր աջամետ խմբավորումների միավորումը Կովկասի համադաշնության գաղափարի շուրջ: «Կովկաս» խմբին միացան նաև «Մուսավաթի» առաջնորդ Մ. Ռասուլզադեին ընդդիմադիր Խալիլ-բեկ Խասամեդովը և Խոսրով-բեկ Սուլթանովը: Հ. Բամատի խմբին նրանց միացումը կարելի է դիտել որպես 1920–1922 թթ. ադրբեջանական ու լեռնական ուժերի համատեղ գործունեության ավանդույթների շարունակություն: Վրացական վտարանդիությունից «Կովկաս» խմբի անդամներ էին ծայրահեղական հայացքներ ունեցող Ավալաշվիլին, Ամիրաջիբին, Քվինիթաձեն:

³⁶⁰ Ств В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев, указ. раб., с. 330: Հյուսիսկովկասյան վտարանդիության անունից պայմանագիրն ստորագրեցին ԿԼԺԿ ներկայացուցիչներ Շակմանովն ու Սունժեր՝ Մամեդ Սունշ Գիրեյը (там же): Շակմանովը նաև «Պրոմեթևս» ակումբի առաջին նախագահն էր:

³⁶¹ Там же, с. 331:

Թուրքիայում Հ. Բամատի գաղափարակից Ալիխան Կանտեմիրին հաջողվեց միավորել մի խումբ հյուսիսկովկասցի վտարանադիների, որոնք աջակցեցին Բամատին: Ա. Կանտեմիրն ինքը «Կովկաս» հանդեսում հրապարակում էր Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականությանը, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Կովկասի տարբեր ժողովուրդների հետ Թուրքիայի հարաբերություններին նվիրված հոդվածներ³⁶²: «Կովկաս» խումբը, ի հակադրումն «Պրոմեթևսական շարժանը», հյուսիսկովկասցիներին աջակցողների դերում տեսնում էր Թուրքիային, Գերմանիային և Ճապոնիային:

1920–1930-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիական կազմակերպությունների գործունեության վերլուծության ժամանակ աչքի է զառնում, որ նրանց միջև համաձայնության ձեռքբերման, համագործակցության հաստատման և միավորման հիմնական հանգուցակետը Կովկասի համադաշնության գաղափարն էր, որը, սակայն, տարբեր զանգվածներ գործնականում տարբեր կերպ էին ընկալում՝ յուրաքանչյուրը յուրովի պատկերացնելով համադաշնության էությունն ու ապագան:

³⁶² Ств Георгий Мамулия, указ. раб.:

*Հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում
Կովկասյան համադաշնության գաղափարի զարգացումը
Թուրքիայի դիրքորոշման փոփոխության համատեքստում*

Հետևելով Կովկասյան համադաշնության գաղափարի զարգացման պատմությանը՝ հստակորեն տեսնում ենք, որ թե՛ 1918–1921 թթ.՝ Կովկասում անկախ պետությունների գոյության տարիներին, թե՛ հետագայում՝ օտարության մեջ գործելու շրջանում, ազգային միասնություն չլինելու, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական թուլության պատճառով այդ գաղափարի հիմնական ջատագովները հյուսիսկովկասյան քաղաքական ուժերն էին: Բավական է նշել, որ 1918–1921 թթ. Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետությունը մի քանի անգամ պաշտոնապես դիմել էր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին՝ համադաշնության մեջ միավորվելու առաջարկությամբ, ինչպես նաև այդ հարցը բարձրացրել 1918 թ. Տրապիզոնի ու Բաթումի խորհրդածոդովներում³⁶³: 1919 թ. զարնանը Թբիլիսիում Լեռնականների հանրապետության նախաձեռնությամբ հրավիրվեց այդ խնդրի քննարկմանը նվիրված հատուկ համաժողով, որի աշխատանքներն ընդհատվեցին Հյուսիսային Կովկասի ուղղությամբ Դենիկինի բանակի առաջխաղացման պատճառով³⁶⁴:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կովկասի համադաշնության պրոբլեմը պատմագրության մեջ բավական լավ է

³⁶³ *Stu Gaydar Bammat, ukaz. rab.:*

³⁶⁴ *Там же.* Մեկ տարի անց՝ 1920 թ. ապրիլի 9-ին, Թբիլիսիում կայացած խորհրդածոդովում արդեն քննարկվեց Ադրկովկասի համադաշնության ստեղծման հարցը, ինչը որևէ հետևանք չունեցավ (տես. *Դավիթ Կոյազյան*, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918 – 1920 թթ.: Ե., Հեղինակային հրատարակություն, 2008, էջ 172–173):

լուսաբանված³⁶⁵, մենք միայն համառոտակի կներկայացնենք տվյալ հարցում Թուրքիայի դիրքորոշումը և հյուսիսկովկասյան վտարանդիությունում եղած տեսակետները:

Կովկասի համադաշնության հարցում Թուրքիայի դիրքորոշումն այն էր, որ նա դեմ է եղել այդ գաղափարին, եթե նման նախաձեռնությամբ հանդես է եկել որևէ այլ ուժ և այդ կազմավորման վրա ազդեցությունն ու վերահսկողությունը պետք է գտնվեին ոչ իր ձեռքում: Դրան զումարած՝ նման պետական միավորման ստեղծումը կնշանակեր կովկասյան ազգերի ուժեղացում, ինչը նույնպես հակասում էր Թուրքիայի շահերին: 1918 թ. Թուրքիային ձեռնառու էր Կովկասի տրոհումը մի քանի անկախ պետությունների, և Տրապիզոնի համաժողովում Օսմանյան կայսրության ներկայացրած վերջնագրից հետո Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը հռչակեցին իրենց անկախությունը, իսկ համադաշնության մասին Լեռնականների պատվիրակության առաջարկությունը թուրքական պատվիրակության կողմից մերժվեց³⁶⁶: Ավելին. երբ 1921 թ. Թբիլիսիում նախագահ Նոյ ժորդանիան Վրաստանի կառավարության անունից Յուսուֆ Քեմալին առաջարկեց Թուրքիայի հետ դաշնադրություն կազմել և հյուսիսի դեմ ուղղված Կովկասյան համադաշնությունն ստեղծել, Յուսուֆ Քեմալը Անկարա հղված նամակում վրացիների առաջարկությունը բնութագրեց որպես Անտանտի բանասարքությունների արգասիք³⁶⁷:

Կովկասի խորհրդայնացումից հետո Հարավային Կովկասում համադաշնային միավորումներ ստեղծելու բոլշևիկների ծրագրերը կսարժանացան Թուրքիայի կառավարող շրջանների բացասական վերաբերմունքի: 1921 թ. սեպտեմբերին Նարիման Նարիմանովը

³⁶⁵ *Stu, opibnal, Grant Avetisyan.* К вопросу о “Кавказском доме” и пантюркистских устремлениях. «Этнические региональные конфликты, Книга 1, Центральная Азия и Кавказ», М., 1997; *Станислав Лакоба.* К вопросу о Кавказской конфедерации (<http://fatih.ru/fatih/konfederac.htm>):

³⁶⁶ *Stu Wassan-Giray Cabađi, a.g.e., s. 88:*

³⁶⁷ *Stu Yusuf Kemal Tengirsenk. a.g.e., s. 211:*

Բարվում կայացած հանդիպման ժամանակ թուրքական պատվիրակությանը տեղեկացրեց, որ երեք հարավկովկասյան հանրապետությունները և, հավանաբար, Դաղստանը համադաշնություն կստեղծեն ու մտադիր են այդ համադաշնության և Թուրքիայի միջև համագործակցության պայմանագիր կնքել³⁶⁸: 1921 թ. սեպտեմբերի 17-ին թուրքական պատվիրակությունը ԹԱՄԾ-ի փակ նիստում ներկայացրեց Բաքվի հանդիպումների մասին հաշվետվություն, ինչից հետո ծավալված քննարկումները ցույց տվեցին, որ պատգամավորների մեծ մասը այն կարծիքին է, որ Կովկասյան համադաշնության ստեղծումը Թուրքիայի շահերի տեսակետից վտանգավոր զարգացում է³⁶⁹: Հետագայում, երբ ստեղծվեց Անդրկովկասյան Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը, Վրաստանում Թուրքիայի դեսպան Ահմեթ Մուխթարը շփոթված հարցնում էր Անկարայից, թե այդ կառույցի նկատմամբ ինչ դիրք պետք է բռնել³⁷⁰:

Մակայն 1920-ական թթ. Կովկասյան համադաշնության ձևավորելու հարցում Թուրքիայի դիրքորոշումը փոխվեց. այժմ այն դրական էր, քանի որ խոսքը վերաբերում էր ոչ թե լուրջ իրական քաղաքական միավորի, այլ միայն տարբեր վտարանդիական քաղաքական կառույցների ու հոսանքների ուժերի և ջանքերի միավորմանն ուղղված մի զաղափարի, որին կոչվում էր մեծամասնությունը: Համադաշնության զաղափարը հնարավորություն էր տալիս մեծացնելու վտարանդիության գործունեության արդյունավետությունը և ավելի վերահսկելի դարձնելու այն, քանի որ մեկ կառույցում միավորված լինելու հանգամանքը ավելի հստակ էր դարձնում նրա կողմնորոշումը: Հասկապես, որ Համադաշնության

³⁶⁸ Տե՛ս «TBMM Gizli Celse Zabıtları», Cilt 2, 17 Mart 1337 (1921) – 21 Şubat 1337 (1922). Ankara, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s. 227:

³⁶⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 226 – 236:

³⁷⁰ Տե՛ս *Kazım Karabekir*. Günlükler (1906-1948). Cilt 2. İstanbul, Yapı Kredi Yayınları, 2009, s. 784:

զլիսավոր շարժիչ ուժը լեռնական և աղբրեջանական վտարանդիություններն էին, որոնք գտնվում էին Թուրքիայի լիակատար ազդեցության ոլորտում: Թուրքիայի հարցում փարբեր լեռնական և աղբրեջանական քաղաքական խմբավորումների դիրքորոշումը տատանվում էր թուրքամետից մինչև ծայրահեղ թուրքամետի տիրույթում:

Կովկասյան համադաշնության զաղափարին կովկասյան ժողովրդների քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների վերաբերմունքը վտարանդի դատնալու պահից ձեռք բերեց նոր երանգներ: Անցյալում մի շարք վիճահարույց հարցեր, ինչպիսիք էին, օրինակ, Համադաշնության հստակ սահմանների որոշումը, հարևան պետությունների հետ հարաբերությունները, կորցրեցին իրենց հրատապությունը: Դրա հետ մեկտեղ, շարունակվեցին համադաշնության հարցում կովկասյան ազգերի ներկայացուցիչների միջև եղած հակասությունները և տեսակետների բախումը: Մյսպետ. թուրքական գործոնն անհնար դարձրեց հայ քաղաքական կուսակցությունների մասնակցությունը Համադաշնության ստեղծման վերաբերյալ բանակցություններին և պայմանագրի ստորագրմանը: Մյուս կողմից՝ Թուրքիայի դերակատարության հարցում վրացական և լեռնաաղբրեջանական վտարանդիությունների միջև հակասություններ կային: Վերջինս ուներ միանգամայն թուրքամետ դիրքորոշում՝ Կովկասի գործերին Թուրքիայի միջամտությունը գնահատելով միայն որպես դրական և նրան ավելի ակտիվ դեր խաղալու կոչ անելով: Հայկական կուսակցությունների հետ համաձայնության հնարավորությունները պահպանելու նպատակով, ինչպես նաև նախկինում Թուրքիայի խաղացած բացասական դերը հաշվի առնելով՝ վրաց մենշևիկները փորձում էին այդ հարցում խուսանավել: Նման դիրքորոշման օրինակ է 1929 թ. Վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատվիրակության կողմից Երկրորդ ինտերնացիոնալին ներկայացված հուշագիրը, որում ասված էր. «Մեր

միակ հարևանը Թուրքիան է, որը մեր գործերին միջամտելիս միշտ գործում է ի վնաս մեզ: Մեր նպատակն է մեզ պահպանել այդ միջամտությունից»³⁷¹: Հուշագրի այս տողերը դարձան թուրքամետ հյուսիսկովկասյան վտարանդիական կառույցների և վրաց մենշևիկների միջև համագործակցության դադարեցման պատճառներից մեկը³⁷²: «Կովկաս» իմբավորման առաջնորդ Հայդար Բամատը վրացական կուսակցություններին մեղադրեց այն բանում, որ նրանց համար «Կովկասյան համադաշնությունը պրակտիկ նշանակությունից զուրկ, սին բանաձև է, որը պիտանի է միայն Կովկասի մահմեդական հանրապետությունների համակրանքը շահելու համար, քանի որ վերջիններս անկեղծ նվիրված են Կովկասյան համադաշնության գաղափարին»³⁷³:

Կովկասյան համադաշնության հարցում վրացական և ադրբեջանալեռնական վտարանդիությունների հակադրման մեկ այլ պատճառ էր այն, որ վրացիներն առաջարկեցին համադաշնության ստեղծման մասին հռչակագրի ստորագրումը հետաձգել մինչև բուլշևիկյան լծից Կովկասի ազատագրումը, քանի որ նման կարևոր հռչակագրի հրապարակումը վտարանդիության շրջանում կարժեգրկի բուն գաղափարը: Այդ իսկ պատճառով վրացական քաղաքական վտարանդիության ղեկավարներն առաջարկեցին սահմանափակվել Կովկասյան համադաշնություն ստեղծելու մտադրության մասին հռչակագրով, որն առաջին հերթին ուղղված կլինի միջազգային հանրության ուշադրությունը գրավելուն³⁷⁴:

Հատկանշական է Կովկասյան համադաշնության ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ հյուսիսկովկասյան վտարանդիության առաջնորդներից մեկի՝ Վասան-Գիրեյ Ջաբաղիի փաստարկը: Առաջ

քաշելով կովկասյան ժողովուրդների շահերի համընկման և անկախությունն առանց Կովկասյան համադաշնության պաշտպանելու անհնարինության վարկածը՝ նա, մինևույն ժամանակ, շեշտեց, որ կովկասա-ռուսական պայքարում դիմադրություն միշտ ցույց է տվել ոչ թե Հարավային, այլ Հյուսիսային Կովկասը³⁷⁵:

1933 թ. Եվրոպայում միջազգային իրավիճակի փոփոխությունը, որը պայմանավորված էր Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալով, կովկասյան վտարանդիությանն ստիպեց ակտիվացնել Կովկասյան համադաշնության նախագծի մշակումը: Կովկասյան համադաշնության պայմանագրի նախագիծը հրապարակվեց 1933 թ. մայիսին և դարձավ վտարանդիության մամուլում բուռն քննարկումների ու մտքերի փոխանակման առարկա: Որոշ հոդվածներում ցանկալին ներկայացվում էր որպես իրականություն: Այսպես. «Հյուսիսային Կովկաս» հանդեսում «Կովկասի համադաշնությունը» վերնագրով հոդվածում հյուսիսկովկասցի վտարանդի գործիչ Էմիր Հասանը գրեց. «Տեղերում կովկասյան ժողովուրդների միջև ազգային անտագոնիզմ արդեն գոյություն չունի: Այժմ այնտեղ երկու ուժեր են պայքարում՝ «մեծապետական շովինիզմը» և «տեղական ազգայնականությունը»: Ներսում Կովկասն արդեն հասունացել է ակտիվ և համախմբված գործունեության համար: ...Դրա նշանակությունն ավելի է մեծանում այն պատճառով, որ Համադաշնության պայմանագիրը ոչ թե վտարանդիության մտահաղացումն է, այլ բնակչության լայն զանգվածների տրամադրության արտահայտությունը: Ղեկավար կովկասյան կազմակերպությունները միայն արձանագրելու են այն, ինչը տեղերում արդեն վաղուց իրականացվել է գավթողների իշխանության դեմ արդյունավետ պայքարի ընթացքում»³⁷⁶: Հողվածի հետևյալ պարբերությունը ավելի շատ արտահայտում է ոչ թե իրականը

³⁷¹ Տե՛ս *Гайдар Баммат*, указ. раб.:

³⁷² Там же.

³⁷³ Там же.

³⁷⁴ Տե՛ս *Георгий Мамулия*. Идея кавказской конфедерации в рамках движения “Прометей” (к истории пакта Кавказской конфедерации) (www.chechen.org/page.5.348-zhurnal-chast.html):

³⁷⁵ Տե՛ս *Wassan-Giray Cabaği*, a.g.e., s. 105:

³⁷⁶ Տե՛ս *Эмир-Хассан*. Конфедерация Кавказа. «Северный Кавказ», N 2, 1934, Париж:

ցանկալիով փոխարինելու միտում, որքան քաղաքական կողմնորոշում, «Մեր հարավային հարևանները՝ Թուրքիան և Պարսկաստանը, բազում անգամներ պատերազմներով ավերել են Կովկասը, սակայն նրանք միշտ էլ ճանաչել են կովկասյան ժողովուրդների ինքնիշխանությունը»³⁷⁷:

Հետաքրքրական է, որ հյուսիսկովկասյան վտարանդիական մամուլում որպես կովկասյան ժողովուրդների միասնության գաղափարի հասունացման ապացույց մեջբերվում էին նաև խորհրդային ղեկավարների ելույթներում հնչած մտքերը: Այսպես, 1934 թ. հուլիսի 14-ին «Հյուսիսային Կովկաս» հանդեսում հրատարակված հաստուկ խմբագրական հոդվածում, որը նվիրված էր Կովկասի համադաշնության պայմանագրի ստորագրմանը, գրված էր. «Կովկասյան միության գաղափարը ներքևից՝ ժողովրդի լայն գանգվածներից, բխած կարևոր գաղափար է: Կովկասյան միությունը բնական կերպով ստեղծագործաբար ծագել է Կովկասի իրավական կարգավիճակից: Այդ հանգամանքը նույնիսկ մեր թշնամիները շատ անգամ են խոստովանել: Մասնավորապես՝ 1931 թ. Թբիլիսիում կոմունիստական կուսակցության խորհրդաժողովում դա խոստովանել է կոմիսար Էլիավան: Խոսելով Կովկասում տեղի ունեցող ապստամբությունների մասին՝ Էլիավան ասել է. «Նրանք (այսինքն՝ կովկասցի ապստամբները) հայտարարում են, որ չկա տարբերություն Ղուրանի և Աստվածաշնչի միջև, ուղղափառների և առաքելականների միջև: Գործն այնտեղ է հասել, որ թուրք ապստամբներին առաջնորդում է հայ տերտերը, իսկ Դարալագյազում հայերը թուրքերի հրամանատարությամբ են կռվում»³⁷⁸: Շամխորի շրջանում շիա իմամը երդման է բերել շիաներին, սուննիներին, առաքելականներին և ուղղափառներին»: Ահա Կովկասի իրականությունը սա է և այդ իրական

³⁷⁷ Там же.

³⁷⁸ Դարալագյազի ապստամբության մասին ավելի հանգամանորեն տես «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 240 – 245:

միասնականության արտահայտություն եղավ հուլիսի 14-ին ստորագրված Ուխտը»³⁷⁹:

Կովկասյան համադաշնության պայմանագիրը 1934 թ. հուլիսի 14-ին Բրյուսելում տեղի ունեցած խորհրդաժողովի ժամանակ ստորագրեցին Ադրբեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի պատվիրակությունները^{*}: Հայկական պատվիրակությունը ներկա չէր արարողությանը, քանի որ դեռ պայմանագրի մշակման վերաբերյալ բանակցությունների ժամանակ հրաժարվել էր մասնակցությունից՝ պատճառաբանելով, որ այդ նախագիծը մշակած «Պրոմեթևս» կազմակերպության թիկունքում կանգնած է Թուրքիան, իսկ հայկական կուսակցությունները չեն կարող գործակցել այնպիսի խմբի հետ, որը «Թուրքիայի ձեռքում մի պարզ գործիք է և նպատակ է հետապնդում բոլշևիկների իշխանությունը փոխարինել ամբողջ Կովկասի վրա Թուրքիայի իշխանությամբ»³⁸⁰: Այնուամենայնիվ, Կովկասյան համադաշնության պայմանագրի վերջին՝ վեցերորդ, կետում գրված էր, որ «տեղ է թողնված Հայաստանի Հանրապետության համար»³⁸¹:

Պայմանագրում նշված էր, որ Համադաշնությունը, պահպանելով իր կազմի մեջ մտնող յուրաքանչյուր հանրապետության ազգային բնույթն ու ինքնիշխանությունը, արտաքին քաղաքականության ոլորտում գործելու է բոլոր հանրապետությունների անունից՝ որպես նրանց զերագույն մարմին: Համադաշնությունն ունենալու է ընդհանուր սահմաններ և մաքսային ծառայություն: Նրա բանակը պետք է բաղկացած լինի Համադաշնության կազմի մեջ մտնող

³⁷⁹ Տես «Şimalı Kafkasya Milli Kurtuluş hareketinin organı “Şimalı Kafkasya”dan», Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar, Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, ss. 17-18:

^{*} Հյուսիսային Կովկասի պատվիրակության անունից Կովկասյան համադաշնության պայմանագիրն ստորագրեցին Սեհմեթ Գիրեյ Սունչը, Իբրահիմ Չուլիքը, Թաուսուլթան Շահմանը (a.g.e., s. 7):

³⁸⁰ Տես *Грант Аветисян*, указ. раб., с. 22:

³⁸¹ Տես Kafkasya Konfederasyon Misakı. «Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar», Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, s. 7:

հանրապետությունների բանակներից և ունենա ընդհանուր հրամանատարություն: Բոլոր անհամաձայնությունները, որոնք չհաջողվի լուծել անմիջական բանակցությունների միջոցով, պետք է հանձնվեն Համադաշնության բարձրագույն խորհրդի արբիտրաժին, որի որոշումները պարտադիր են: Պայմանագրի հինգերորդ կետով նախատեսվում էր ստեղծել նաև փորձագետների հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Համադաշնության սահմանադրության նախագծի մշակմամբ³⁸²:

Ուշագրավ է, որ Համադաշնության պայմանագրի կնքման օրը հյուսիսկովկասյան պատվիրակությունը ստորագրման կապակցությամբ արված իր հայտարարության մեջ դարձյալ անդրադարձավ դրա սահմանների հարցին: Մասնավորապես՝ այնտեղ ասված է. «Մենք արդեն ունենք միասնական սահմաններ, և Հյուսիսային Կովկասի սահմանը ընդհանուր Կովկասի սահմանն է: Վստահ եղեք, որ թշնամու հարձակմանը առաջինը կդիմակայի Հյուսիսային Կովկասը և կովկասյան ուժերի հետ համատեղ հետ կմղի այդ հարձակումները»³⁸³:

Կովկասյան համադաշնության պայմանագրի ստորագրումը հնարավորություն տվեց ակտիվացնելու կովկասյան վտարանդիության միասնական կառույցների ստեղծման աշխատանքը: Այդ նպատակով 1935 թ. հունվար - փետրվար ամիսներին Փարիզում գումարվեց «Պրոմեթևս» շարժման մեջ մտնող կովկասյան կազմակերպությունների համաժողով, որտեղ որոշում կայացվեց խորհրդակցական մարմին հանդիսացող Կովկասի անկախության կոմիտեն լուծարելու և դրա փոխարեն Կովկասի համադաշնության խորհուրդ ստեղծելու մասին³⁸⁴: Նորաստեղծ մարմինն օժտված էր վտարանդի համակովկասյան կառավարության գործառույթներով, և դրա որոշումները պարտադիր

էին անդամ կազմակերպությունների համար³⁸⁵: Կովկասի համադաշնության խորհուրդն ուներ նախագահություն, որում Հյուսիսային Կովկասը ներկայացնում էր Գիրեյ Սունշը³⁸⁶:

Նորաստեղծ Համադաշնությունում գերակշռող էր մահմեդական տարրը, ուստի իրադրությունը շտկելու և հավասարակշռություն ապահովելու նպատակով վրաց նացիոնալ-դեմոկրատները՝ Դավիթ Վաչաձեի զլխավորությամբ, բանակցություններ վարեցին հայկական վտարանդիության հետ*: Դրանց արդյունքներով 1936 թ. մայիսին Փարիզում առանց վերնագրի հրապարակվեց հայկական և վրացական կազմակերպությունների միջև համագործակցության մասին համաձայնագիրը³⁸⁷:

Հայերի և վրացիների համաձայնության գալու և նրանց միջև համագործակցություն հաստատելու հավանականությունը, ինչը հնարավորություն կտար Համադաշնության մարմիններում մահմեդական ազդեցությունը հավասարակշռելու, ոտքի հանեց ամբողջ ադրբեջանական ու լեռնական մամուլը, որն շտապեց հանդես գալ համաձայնագրի քննադատությամբ՝ այն որակելով որպես միասնությունը խարխլող և Կովկասը երկու՝ քրիստոնեական ու մահմեդական մասերի բաժանող: 1936 թ. մայիսին «Հյուսիսային Կովկաս» հանդեսում հրապարակվեց «Հայ-վրացական միասնությունը» վերնագրով հոդված, որում դրա՝ որպես կովկասյան միության դեմ ուղղված քայլի քննադատության հետ մեկտեղ, նշված էր. «հայտարարությունը ակնբխորեն ցույց է տալիս, որ վրացիներն ու հայերը այլ կովկասյան ժողովուրդներից առանձնացած են, ընդամին այդ երկու ժողովուրդների ազգային կամքն ուղղված է ոչ թե հյուսիսի, այլ

³⁸² A. g. e., ss. 5-7:

³⁸³ Տե՛ս Kafkasya Konfransı. Resmi Tebliğ, «Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar», Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, s. 28:

³⁸⁴ Տե՛ս *Георгий Мамутия. Идея кавказской конфедерации в рамках движения "Прометей"* (в истории пакта Кавказской конфедерации):

³⁸⁵ Там же.

³⁸⁶ Там же.

* Հայկական կողմը ներկայացնում էր Վրաստանում նախկին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Արշակ Զամախյանը:

³⁸⁷ Տե՛ս К. К. Ş. sınıt bir kararı, «Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar», Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, ss. 45-46:

Թուրքիայի դեմ: Մինչդեռ Թուրքիայի դեմ պայքարը Կովկասի ազատագրական շարժման համար կունենա ողբերգական հետևանքներ: Կովկասյան ազգությունները պայքարում են ամեն օր, և նրանց ձեռնարկած ամեն քայլին սպառնացող վտանգը, իրական վտանգը, բխում է հյուսիսից»³⁸⁸:

Այնուհետև Ստամբուլում լույս տեսնող «Կովկասի ավանախ» հանդեսում լույս տեսավ նույն խնդրին նվիրված մեկ այլ հոդված, որը 1936 թ. իր սեպտեմբերյան համարում արտատպել էր «Մուսավաթ» կուսակցության պաշտոնական օրգան «Քուրթուլուշ (Ազատագրում)» հանդեսը: Հոդվածում հիմնավորվում էր այն միտքը, թե Կովկասի հարցում կովկասցի մտավորականները բաժանվել են երկու մասի. մեկը՝ վրաց մենչևիկների ազդեցության տակ գտնվող «Պրոմեթևս» շարժումն է, մյուսը՝ Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի միությունը: Հոդվածում, որի հեղինակն էր Ֆ. Դարյալը*, արվում էր այն պնդումը, թե Կովկասյան համադաշնությունն ստեղծել են եղբայրական երկու՝ ադրբեջանական ու լեռնական, ժողովուրդները, իսկ դրան մասնակցելու հրավեր է ստացել Կրաստանը, հետևաբար հայ-վրացական միասնության մասին հայտարարագիրը Համադաշնությունը պատակտում է երկու բոլորի՝ Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի միության և հայ-վրացական միության³⁸⁹:

Կովկասյան վտարանդիության մամուլում լույս տեսած հոդվածները հստակ պատկերացում են տալիս վտարանդիության ներսում տեղի ունեցող խմորումների մասին, որոնք զարգանում էին միմյանց հակադրվելու ճանապարհով: Մահմեդական (լեռնաադրբեջանական) և քրիստոնյա (վրաց-հայկական) գանգվածների

³⁸⁸ Տե՛ս Ermeni – Gürcü Birliği, «Şimalı Kafkasya», Mayıs, 1936, N 25, «Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar», Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, ss. 47–48:

* Այդ կեղծանվամբ հոդվածներ էր գրում Ֆուադ Էմիրջանը, որը «Կովկասի ավանախ» հանդեսի գլխավոր խմբագիրն ու արտոնատերն էր (տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 143):

³⁸⁹ Տե՛ս K. K. Ş. sının bir kararı, ss. 48–51:

միջև գոյություն ունեցող տարաձայնությունների պատկերը Մաիդ Շամիլը ներկայացրեց 1935 թ. գերմանական հետախուզության ռեզիդենտի հետ հանդիպման ժամանակ: Նա լեհերին մեղադրեց այն բանում, որ նրանք մեծ նշանակություն են տալիս վրացական կուսակցությանը, այդ իսկ պատճառով «Պրոմեթևս» կազմակերպությունում «գոյություն ունի վրացիների անարդարացի և անհիմն գերիշխանություն»³⁹⁰: Ըստ Շամիլի՝ վրացական վտարանդիության վրա հենվելու սխալ են գործում նաև գերմանացիները: Մինչդեռ վրացիները կովկասյան մահմեդականների այնպիսի թշնամիներ են, ինչպիսին են հայերը, և նրանց միջև տարբերությունը գուտ այն է, որ եթե հայերը բացեիքաց արտահայտում են մահմեդականների նկատմամբ իրենց ունեցած թշնամական վերաբերմունքը, ապա վրացիները միշտ քողարկում են այն³⁹¹:

Լեռնական և ադրբեջանական վտարանդիական մամուլի էջերում ծավալված պայքարից հետո 1936 թ. հունիսի 16-ին ադրբեջանական ու լեռնական կազմակերպությունների ճնշման տակ Կովկասի համադաշնության խորհուրդը հանդես եկավ մի հայտարարությամբ, որում հայ-վրացական հայտարարության վերաբերյալ ասված էր, թե «ոչ՝ Կովկասի համադաշնության խորհուրդը, ոչ՝ նրա կազմում ընդգրկված ազգային կենտրոնները այս հայտարարության մասին տեղյակ չեն: Դեռ հայտնի էլ չէ, թե ովքեր են եղել այս հայտարարությունը հրապարակած պատվիրակությունների անդամներ: Ողջունելի են կովկասյան ազգությունների միջև ամեն տեսակի մտերմությունն ու բարեկամությունը, և Կովկասյան համադաշնության խորհուրդը ծայրահեղ անհրաժեշտ է համարում այդ ազգությունների միավորումը մեկ միասնական կառույցի մեջ: Նման կառույց գոյություն ունի. դա Կովկասի համադաշնության խորհուրդն է, որում տեղ է պահված նաև Հայաստանի համար: Կովկասի

³⁹⁰ Տե՛ս Лев Соцков, указ. раб., с. 13:

³⁹¹ Там же.

համադաշնության խորհուրդն անթույլատրելի և վնասակար նախաձեռնություն է համարում կովկասյան ազգությունների մի մասի համար առանձին քաղաքական միավորում ստեղծելը: Նման նախաձեռնությունը կկործանի կովկասյան միությունը, խժոժությունների և թշնամանքի պատճառ կդառնա»³⁹²:

Իրականում, շ. Յ. Դաշնակցության մեջ 1930-ական թթ. սկզբներին ձևավորվեց ֆաշիստական գաղափարախոսության նկատմամբ համակրանքով վերաբերվող խումբ, որը 1934 թ. Փարիզում հիմնադրեց «Երիտասարդ հայերի ակումբ» կոչվող կազմակերպություն, իսկ դրա արմատական թևը հետագայում ստեղծեց «Հայ ազգային միություն» կազմակերպությունը³⁹³: Վերջինս մինչև 1938 թ. հրատարակեց «Ազգ» թերթը, որի խմբագիրն էր Լևոն Շանթի որդին՝ Վիգեն Շանթը (Սեղբոսյան)³⁹⁴: Այս խմբավորումը, ելնելով իր գաղափարական կողմնորոշումից և ստեղծված պայմաններից, ավելի դրական վերաբերմունք ուներ կովկասյան վտարանդիության հետ շփումների հաստատման նկատմամբ: Կովկասյան վտարանդիության առավել ծայրահեղական զանգվածն այն ժամանակ արդեն կապերի մեջ էր նացիոնալ-սոցիալիստական կուսակցության հետ: Վիգեն Շանթի ղեկավարած այս խմբավորումն էր, որ համաձայնության եկավ վրացական վտարանդիության հետ և ստորագրեց համագործակցության հուշագիրը, որն էլ դարձավ ադրբեջանալեռնական հատվածի քննադատության թիրախ:

Սակայն մինչև 1940 թվականը հայ քաղաքական ուժերին՝ հանձինս Դաշնակցության, ՌԱԿ-ի ու Հնչակյան կուսակցության

³⁹² Տես Կ. Կ. Տ., *simon bir kararı*, ss. 48-51:

³⁹³ Տես Դաշնակցության իսկական դեմքը. Ե., «Հայաստան», 1988, էջ 35:

³⁹⁴ Տես նույն տեղում, էջ 36:

չհաջողվեց փոխհամաձայնության գալ և մյուս կովկասյան ժողովուրդների օրինակով ձևավորել Ազգային կենտրոն³⁹⁵:

Հայկական կազմակերպությունները Կովկասյան համադաշնության պայմանագրին միացան միայն 1940 թ. մայիսի 28-ին, այն էլ արտաքին վտանգի սպառնալիքի հաշվառմամբ՝ մեկուսացման մտավախությամբ:

³⁹⁵ Տես *Ջալեն Մարրլեան*. Համաշխարհային Բ. Պատերազմի սկզբնաւորութեան (1939 – 1940 թթ.) սփիւոքահայ դիրքորոշումներ: «Հայկազեան հայագիտական հանդէս», Ը հատոր, Պէյրուք, 1980, էջ 132–136:

*Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արտաքին
քաղաքականության ոլորտում 1930 - 1938 թթ.:*
Վտարանդիության Բեռլինյան կենտրոնի ձևավորումը

1930-ական թթ. սկզբին կովկասյան վտարանդիությունը քաղաքական զարգացումների հետևանքով փաստորեն բաժանված էր երեք հատվածի՝ լեռնական և աղբյուրեջանական վտարանդիության, որը թուրքամետ կողմնորոշում ուներ, Կովկասյան համադաշնության շրջանակներում կովկասյան մահմեդական վտարանդիության հետ միավորված ու համագործակցող վրացական քաղաքական կուսակցությունների, որոնք, սակայն, եվրոպամետ կողմնորոշում ունեին և փորձում էին թուլացնել թուրքական ազդեցությունը, և առանձին գործող հայկական քաղաքական վտարանդիության, որը համախմբված էր իր քաղաքական կուսակցությունների շուրջ: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի նախապատրաստման շրջանում կովկասյան քաղաքական վտարանդիության միջազգային կարևորությունը նախորդ տասնամյակի համեմատությամբ մեծացավ, ինչը պայմանավորեց նաև հովանավոր պետությունների թվի աճումը և ըստ այդմ՝ կովկասյան քաղաքական կազմակերպությունների ու կուսակցությունների համար տարաշարժի ավելի մեծ դաշտի ու հնարավորությունների ստեղծումը: Այս պայմաններում փոփոխություններ տեղի ունեցան նաև Թուրքիայի կովկասյան քաղաքականության ռազմավարությունում, և թուրքական իշխանությունները ջանացին թուրքամետ հյուսիսկովկասյան ու աղբյուրեջանական զանգվածի միջոցով վերահսկել նաև վրացական ու հայկական քաղաքական վտարանդիություններին:

Հյուսիսկովկասյան վտարանդիությունը, ելնելով իր ավանդական թուրքամետ կողմնորոշումից, ջանքեր գործադրեց, որպեսզի կովկասյան վտարանդիության այլ հատվածների, առաջին հերթին՝ հայերին ու վրացիներին, համոզի համակերպվել իրողության հետ, հրաժարվել տարածքային պահանջներից և ճանաչել Թուրքիայի՝ 1921 թ.

պայմանագրերով զծված նոր սահմանները: Այդ նպատակով Հայդար Բամատի ղեկավարած «Կովկաս» աջամետ խմբավորումը նույնանուն հանդեսի էջերում նախաձեռնեց Կովկասյան համադաշնության սահմանների հարցով բանավեճ³⁹⁶:

Հյուսիսկովկասյան խմբավորումների համար կովկասյան քաղաքական վտարանդիության այլ հատվածների համեմատությամբ ավելի դյուրին էր քննարկել տարածքների կորստի և այդ փաստի հետ համակերպվելու խնդիրները, քանի որ Հյուսիսային Կովկասը Թուրքիայի և Պարսկաստանի հետ սահման չունի: Հյուսիսկովկասյան վտարանդիական քաղաքական կուսակցությունների կողմից առաջ քաշվեց այն թեզը, թե հետագա հակախորհրդային պայքարի համար Թուրքիայի աջակցությունն ունի կենսական նշանակություն, և հարավկովկասյան հանրապետությունները պետք է ճանաչեն Թուրքիայի ու Իրանի հետ խորհրդայնացումից հետո որոշված սահմանները՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, թե որքանով են դրանք արդարացի³⁹⁷: Հայդար Բամատը «Կովկաս» հանդեսի առաջին համարում հրատարակված հոդվածում փորձեց հիմնավորել այն միտքը, որ Կովկասի գոյությունը Թուրքիայի համար ևս բախարգելիչ երաշխիք է հյուսիսից եկող վտանգի դեմ³⁹⁸:

Նման մոտեցում որդեգրեց նաև ԿԼԺԿ-ն, որը, չբացասելով վրացիների տարածքային կորուստների և հայերի հայրենազրկության ու «ողբերգության» հանգամանքները, այնուամենայնիվ, համարում էր, որ կովկասյան հանրապետությունները ներկայումս պետք է ապավինեն Թուրքիայի բարյացակամությանը, իսկ «ամեն տեսակի սահմանային հարցերի լուծումը թողնեն հետագային»³⁹⁹:

³⁹⁶ Տե՛ս *Георгий Мамулия. Его высшим политическим идеалом.....*

³⁹⁷ Там же.

³⁹⁸ Там же.

³⁹⁹ Տե՛ս *Ermeni – Gürcü Birliği. «Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar», Kafkasya Konfeder. Şurası Neşriyatından: N 2, Paris, 1937, s. 52:*

Փաստորեն, հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության դիրքորոշումը, որին հարում էր նաև ադրբեջանական «Մուսավաթ» կուսակցությունը, այն էր, որ վրացիների ու հայերի հետ համագործակցությունը Թուրքիայի հետ հարաբերություններից նախապատվելի չէ, և յուրաքանչյուր համագործակցության հիմքում պետք է դրված լինեն Թուրքիայի ներկայիս սահմանների ճանաչումն ու թուրքական գործոնի կարևորումը: Նման դիրքորոշման հետևանքով հայ քաղաքական կուսակցությունները, մասնակցելով կովկասյան վտարանդիական կազմակերպությունների առաջին խորհրդակցությանը, որը կայացավ 1921 թ. մայիսի 8-ին Փարիզում, և համագործակցության հարցում համաձայնության գալով, 1923 թ. հրաժարվեցին կովկասյան վտարանդիության հետ համատեղ գործելուց, քանի որ վերջինս 1923 թ. Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո առաջ քաշեց Թուրքիայի նոր սահմանները ճանաչելու և նոր քաղաքական իրողության հետ համակերպվելու պահանջ և չպաշտպանեց հայ քաղաքական կուսակցությունների հակաթուրքական դիրքորոշումը*:

Այս ամենը բնավ չի նշանակում, թե հյուսիսկովկասյան ու ադրբեջանական վտարանդիական քաղաքական կազմակերպությունների միջև Կովկասի պետությունների սահմանների հարցում տարաձայնություններ չկային: Հյուսիսկովկասյան կազմակերպությունները պնդեցին նաև, թե պետք է ճանաչել Իրանի հետ գոյություն ունեցող սահմանը, ինչն անընդունելի էր «Մուսավաթի» և նրանից անջատված քաղաքական խմբավորումների համար, քանի որ

* Զ. Յ. Դաշնակցության՝ 1938 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Կահիրեում կայացած 13-րդ Շնդհանուր ժողովում քննարկվեցին վերջին տասնամյակում Թուրքիայի նկատմամբ կուսակցության ունեցած դիրքորոշման ու գործունեության հարցը, ինչպես նաև այդ ոլորտում այլ քաղաքական ուժերի հետ համատեղ գործելու փորձերը (տես «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (Քառասատոր շարք)», Դ հատոր, Աթենք, 1995, էջ 365):

ադրբեջանական վտարանդիական կազմակերպությունները հանդես էին գալիս Հարավային Ադրբեջանի հետ միավորման պահանջով:

Հյուսիսկովկասյան քաղաքական խմբավորումների նման դիրքորոշումը պատճառ դարձավ, որպեսզի նրանք մեղադրվեն թուրքամիտության և հայերին, վրացիներին ու ադրբեջանցիներին անարդար կերպով որոշված սահմանների ճանաչումը պարտադրելու մեջ⁴⁰⁰: Դրա հետ մեկտեղ, հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը համախոհներ էր գտել վրացական վտարանդիների շրջանում, քանի որ նրանք ավելի հեշտ, քան հայերը, համակերպվեցին անկախության կորուստից հետո ստեղծված իրավիճակի հետ: Այս դեպքում լեռնականների աջամետ ծայրահեղական զանգվածի և նրա հետ համագործակցող վրացական վտարանդիության մի մասի համար թիրախ դարձան հայ քաղաքական կուսակցությունները, առաջին հերթին՝ Դաշնակցությունը: Վրացի պատմաբան Գ. Մամուլիայի վկայությամբ՝ այդ հարցում Զ. Բամատը համախոհ գտավ վրացի գիտնական Ջ. Ավալիշվիլուն, որը հրապարակեց Անկարայի և Թեհրանի նկատմամբ պահանջներից հրաժարվելու մասին մի շարք հոդվածներ: Դրանցում Ավալիշվիլին փորձեց հայ քաղաքական կուսակցություններին ներշնչել այն գաղափարը, թե Թուրքահայաստանի կորստով ու Հայոց սփյուռքի փտեղծմամբ Հայաստանը վերջնականապես դարձավ կովկասյան երկիր, և որ «դա նրա, նախ, Բյուզանդիայի, ապա՝ այն նվաճած թուրքերի հետ դարավոր բախումների վերջաբանն է»⁴⁰¹:

Վերլուծելով տվյալ ժամանակաշրջանում տարբեր հյուսիսկովկասյան խմբավորումների նկատմամբ Թուրքիայի ունեցած դիրքորոշումը, կարող ենք նկատել, որ թուրքական իշխանությունները փորձում էին վարել հաշվեկշռված քաղաքականություն՝

⁴⁰⁰ Տես *Георгий Мамулия. Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация...*

⁴⁰¹ Там же.

հավասարապես համագործակցելով Սաիդ Շամիլի ղեկավարած ԿԼԺԿ-ի և Հ. Բամատի ղեկավարած «Կովկաս» խմբավորման շուրջը միավորված լեռնական վտարանդիության աջամետ զանգվածի հետ:

Հյուսիսային Կովկասում (Չեչնիա և Կարաչայ-Բալկարիա) կոլտնտեսությունների ստեղծման պատճառով 1932 թ. բռնկվեց ապստամբություն, որի ղեկավարներից էր Պշիմախո Կոստքի զարմիկ Իսլամ Կոստքը⁴⁰²: Նախկին սպիտակզվարդիական սպա Վիսա Խարաչուխի միջոցով ապստամբության կազմակերպիչների՝ Մացիևի, Կուրբանովի, Բեյմուրզակի և ուրիշների հետ արտասահմանից նամակագրական կապ ուներ Տապա Չերմուռը, որը Ստամբուլից, Փարիզից ու Լոնդոնից մի շարք նամակներ էր ուղարկել: Այդ նամակների մի զգալի մասը հայտնվել էր ԽՍՀՄ ԳՀՎ-ում⁴⁰³:

Ապստամբները հանդես եկան երեք՝ ռուսերեն, թուրքերեն և արաբերեն, լեզվով մի հայտարարությամբ, որը հրատարակվեց մի շարք էվրոպական թերթերում, իսկ վտարանդիական մամուլը ցնծությամբ հրատարակեց ու մեկնաբանեց Կովկասից ստացվող յուրաքանչյուր լուր:

Ապստամբությունը դժվար կացության մեջ դրեց թուրքական իշխանություններին, քանի որ Թուրքիայում գործող քաղաքական վտարանդիության հետ ապստամբների կապը ակնհայտ էր, իսկ խորհրդա-թուրքական հարաբերություններն այդ շրջանում վերելք էին ապրում: Մյուս կողմից՝ կովկասյան քաղաքական վտարանդիության

⁴⁰² Տե՛ս *Kadircan Kaflı*, a.g.e., s. 164:

⁴⁰³ Տե՛ս *А. Авторханов*, указ. раб., с. 27:

* 1929 թ. երկու պետությունների միջև ստորագրվեց 1925 թ. բարեկամության և չհարձակման մասին պայմանագրի երկարաձգման մասին արձանագրություն, որը լրացվել էր առանց միմյանց տեղեկացնելու հարևան պետությունների հետ բանակցություններ չվարելու և պայմանագրեր չկնքելու մասին երկու գաղտնի կետով: 1930 թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թևֆիկ Ռուշդյու Սրասը, իսկ 1932 թ.՝ Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինյունյուն այցելեցին ԽՍՀՄ: Վերջին այցելության ժամանակ ստորագրվեց պայմանագիր՝ ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային 8 000 000 ԱՄՆ-ի դոլարի վարկ տրամադրելու վերաբերյալ: 1933 թ. պատասխան այցով Անկարա

օգտագործման քաղաքականության տեսակետից ապստամբներին սատարելու գոնե ցուցադրական կամ հայտարարական բնույթի որևէ քայլ չանելը կյուլացներ հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում Թուրքիայի նկատմամբ եղած վստահությունը:

1932 թ. ամռանը Սաիդ Շամիլը մի քանի հանդիպում ունեցավ Թուրքիայի ռազմական հետախուզության պետ Նեջմիի հետ: Դրանց ընթացքում քննարկվեց խորհրդա-թուրքական սահմանի երկայնքով մի շարք ռազմահետախուզական կետերի կազմակերպման հարցը⁴⁰⁴: Այդ կետերով խորհրդային տարածք պետք է անցնեին և վերադառնային Սաիդ Շամիլի պատրաստած լրտեսները: Սաիդ Շամիլը պարտավորվեց Կովկասում լրտեսական լայն ցանց ստեղծել, իսկ Թուրքիայի ռազմական հետախուզությունը՝ ֆինանսավորել այդ աշխատանքները, ինչպես նաև կապը հեշտացնելու համար Սաիդ Շամիլին տրամադրել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ⁴⁰⁵:

Թուրքական ռազմական հետախուզության հետաքրքրության ակտիվացմանը նպաստեց այն հանգամանքը, որ Կովկասում բռնկված ապստամբության հետևանքով ռուսական քաղաքական վտարանդիությունը դիմեց իր լեռնական գործընկերներին՝ համատեղ գործելու առաջարկությամբ: Մասնավորապես՝ Հյուսիսային Կովկասում համատեղ պարտիզանական պայքար սկսելու առաջարկությամբ Լեռնականների միությանը Փարիզում դիմեց

այցելեց խորհրդային պատվիրակությունը՝ Կ. Վորոշիլովի գլխավորությամբ (տես «Türk Diş Politikası», ss. 318 - 319; «Новейшая история Турции», сс. 130 - 133): Թուրք դիվանագետ Այիան Քամելը 1918-1945 թթ. խորհրդա-թուրքական հարաբերությունները բնութագրում է որպես «Period of "Marriage de Raison (հաշվարկով ամուսնություն)» (տես *Ayhan Kamel. Turkish-Russian Relations During The Republican Era. «Foreign Policy», The Quarterly of the Foreign Policy Institute, vol. XXII, 1998, N 1-2, pp. 45-46):*

⁴⁰⁴ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 1:

⁴⁰⁵ Там же.

կազակական զեներալ Շկուրոն, որը այդ նպատակով Մարսելում հանդիպեց իր զինակից չերքեզ զեներալ Ռիլուզայի հետ⁴⁰⁶:

Սակայն Թուրքիայի համար հյուսիսկովկասյան վտարանդիության միջոցով նման վտանգավոր, անհայտ, արդյունքով խաղ վարելու ռիսկը շատ մեծ էր, ուստի և արտաքին գործերի նախարարության ճնշման տակ Գլխավոր շտաբի ռազմական հետախուզությունը ապստամբներին որևէ իրական օգնություն չցուցաբերեց⁴⁰⁷: Հակառակը, այդ շրջանը համարվում է թուրք-խորհրդային ամենաջերմ հարաբերությունների շրջաններից մեկը, ինչի ապացույց է այն, որ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ 1933 թ. հոկտեմբերի 29-ին հանրապետության օրվա հայտարարման առթիվ կազմակերպված գորահավաքի ժամանակ նախագահ Զ. Աթաթուրքի, վարչապետ Բ. Ինյոնյուի և Գլխավոր շտաբի պետ Ֆ. Չաքմաքի հետ թուրքական զորքերի շարքերի առջևով անցնում և գորահանդեսն ընդունում էր խորհրդային պատվիրակության ղեկավար մարշալ Կ. Վորոշիլովը⁴⁰⁷: Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Սուրիցը իր զեկուցագրում շեշտում էր, որ «Կ. Վորոշիլովի այցն զգալիորեն դժվարացրեց մեր թշնամիների գործունեությունը ինչպես Թուրքիայի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Մասնավորապես՝ այն ուժեղ ազդեցություն թողեց Ստամբուլում գտնվող սպիտակգվարդիական վտարանդիության մնացորդների վրա և զգալի շփոթություն հարուցեց այն դիվանագետների շրջանում, որոնք այնտեղ աշխատում են ԽՍՀՄ-ի դեմ»⁴⁰⁸:

Վերլուծելով տվյալ ժամանակամիջոցում կովկասյան քաղաքական վտարանդիության հարցում Թուրքիայի կառավարության դիրքորոշումը՝ դ-ր Ալեքսանդր Տումարկինը հանգում է հետևյալ

⁴⁰⁶ Там же, с. 2:

* Խորհրդային իշխանություններին հաջողվեց ապստամբությունը վերջնականապես ճնշել երկու տարի անց՝ 1934 թ.:

⁴⁰⁷ Տե՛ս «СССР – Турция», с. 102:

⁴⁰⁸ Там же, с. 104:

եզրակացության. «մասնավորապես՝ քսանական և երեսունական թվականներին ցանկացած իրավիճակում հարևան Բալկանյան երկրների և Ռուսաստանի հետ խաղաղ հարաբերությունների պահպանմանը ձգտող Թուրքիայի՝ Աթաթուրքի ղեկավարած արտաքին քաղաքականության իմաստը կայանում էր նրանում, որ, անելով ամեն անհրաժեշտը, կանխի իրենց հայրենիքների վրա վտարանդիների ամեն տեսակի ազդեցությունը: Նա կտրեց կապերը անկախության համար անմիջական պայքար մղող կովկասյան ազգայնական քաղաքական վտարանդիական կազմակերպությունների հետ, որոնք գտնվում էին Վարշավայում, Պրահայում, Փարիզում կամ Բեռլինում»⁴⁰⁹: Սակայն իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Թուրքիայի իշխանությունները, ցուցադրաբար արգելելով վտարանդիության քաղաքական գործունեությունը երկրում կամ, ավելի ստույգ ասած, ստեղծելով նման տպավորություն, իրականում քողարկված ձևով՝ տարբեր կառույցների, առաջին հերթին՝ հետախուզության միջոցով, խրախուսում էին կովկասյան մահմեդական վտարանդիության հակախորհրդային քաղաքական ձեռնարկումները և նույնիսկ բարենպաստ պայմաններ ստեղծում արտասահմանում գործող վտարանդիական կուրիտների հետ կապի պահպանման ու զարգացման համար: Մի շարք դեպքերում վտարանդիության քաղաքական գործունեության կասեցումը, կազմակերպությունների փակումն ու Թուրքիայից մի շարք գործիչների արտաքսումը պայմանավորված էին զուտ արտաքին ճնշմամբ կամ քաղաքական իրադարձությունների զարգացման հետևանքով նման ճնշումը կանխելու ցանկությամբ:

⁴⁰⁹ Տե՛ս *Alexandre Toumarkine. Türk Kökenli Olmayan Balkan ve Kafkas Göçmenlerinde Milliyetçilik: «İthal Milliyetçilik ile Etki Altındaki Milliyetçilik Arasında»*. «Modern Türkiye'de Siyasi Düşünce». Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 934:

Տվյալ պարագայում այն, ինչ հնարավոր չէր կատարել արտաքին գերատեսչության ուժերով, իրականացվում էր այլ պետական օղակների միջոցով՝ Ստամբուլի ոստիկանության և հատուկ ծառայությունների օգտագործմամբ: Հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել այս վերջին հանգամանքի վրա:

Թուրքիայի հարմար աշխարհաքաղաքական դիրքը, միջազգային հարաբերություններում խաղացած կարևոր դերը, Ստամբուլում կովկասյան վտարանդիության կենտրոնացումը պատճառ դարձան, որ 1930-ական թվականներից սկսած օտար հետախուզական ծառայություններն այդ պետությունում ակտիվացնեն իրենց գործունեությունը, ընդ որում՝ շատերի համար Անկարան կամ Ստամբուլը դարձան ամբողջ Արևելքի մասշտաբով գործող ռեզիդենտուրայի կենտրոն: Օրինակ՝ խորհրդային հետախուզությունը մինչև 1929 թ. Թուրքիայում ուներ միայն պաշտոնական ռեզիդենտուրա, որը գտնվում էր Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսությունում, իսկ մինչև 1928 թ. ԳՀՎ-ն Անկարայում ներկայացուցիչ ընդհանրապես չուներ⁴¹⁰: Բացի քաղաքական պատճառներից, դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԽՍՀՄ-ը ցանկանում էր Ստամբուլում ստեղծել ամբողջ Արևելքում հետախուզական աշխատանքի կենտրոնակայան, ինչի համար անհրաժեշտ էր թուրքական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը: Դրանով էր պայմանավորված նաև այն, որ Ստամբուլում գտնվող խորհրդային ռեզիդենտներին մինչև 1930 թ. հրահանգված էր թուրքական պետության դեմ չգործել⁴¹¹: Ասկայն «Պրոմեթևս» շարժման շրջանակներում կովկասյան վտարանդիության ցուցաբերած ակտիվությունը խորհրդային հետախուզությանը ստիպեց նույնպես ակտիվացնել իր աշխատանքը Թուրքիայում և Ստամբուլը

վերածել ամենախոշոր ռեզիդենտային կենտրոնի⁴¹²: Այդ շրջանում խորհրդային հետախուզությունը կովկասյան վտարանդիությանը բնութագրում էր որպես ամբողջ հակախորհրդային վտարանդիության՝ «իր կազմակերպվածքով և մեր սահմանին մոտիկությամբ ամենավտանգավոր հատված»⁴¹³: Նա կովկասյան վտարանդիության դեմ պայքարում կիրառում էր նոր մարտավարություն՝ ձգտելով վտարանդիության քաղաքական ղեկավարության մեջ իր գործակալների ներդրմամբ այն քայքայել ներսից⁴¹⁴:

Ստամբուլը, բացի խորհրդայինից, նաև լեհական, ֆրանսիական, անգլիական ու գերմանական հետախուզությունների ռեզիդենտուրաների կենտրոն էր: Դրանցից առավել տարածված լրտեսական ցանց ստեղծած և արդյունավետ գործող հետախուզություններից էին անգլիականն ու գերմանականը⁴¹⁵: Քանի որ 1939–1944 թթ. կովկասյան վտարանդիության ճակատագրում վճռորոշ դեր է խաղացել Գերմանիան, նպատակահարմար ենք համարում ընդհանուր գծերով պատկերացում տալ Թուրքիայում գերմանական հետախուզության ու դիվանագիտական ներկայացուցչության գործունեության հիմնական ուղղությունների մասին: Որպես կարևոր առանձնահատկություն հարկ է նշել, որ Գերմանիան, հաշվի առնելով Թուրքիայի կարևորությունը, այնտեղ թե՛ հետախուզական, թե՛ դիվանագիտական աշխատանքի էր ուղարկում այդ երկրին քաջածանոթ անցանց, որոնք առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կա՛մ մարտնչել էին թուրքական բանակի կազմում, կա՛մ այդ երկրում աշխատել էին տարբեր առաքելություններով: Գերմանական հետախուզության աշխատանքին

⁴¹⁰ Տե՛ս Գ. Ս. Ագաբեկով. Գ. Ս. Ս. (Записки чекиста), сс. 217 – 218:

⁴¹¹ Там же, с. 218, ինչպես նաև Сергей Владимиров. Генерал-разведчик особого назначения, «Независимая газета», 11.12.2009:

⁴¹² Տե՛ս Գ. Ս. Ագաբեկով. Ч. К. за работой. Берлин, Издательство “Стрела”, 1931, с. 224:

⁴¹³ Там же, с. 225:

⁴¹⁴ Տե՛ս В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев, указ. раб., с. 344:

⁴¹⁵ Տե՛ս Tuncay Özkan, a.g.e., s. 161:

նպաստում էր թուրք կառավարող շրջաններում գերմանական տրամադրությունների տիրապետումը:

Գերմանական հետախուզական կառույցներից Թուրքիայում գործում էին ռազմական հետախուզությունը՝ Աբվերը, և անվտանգության նախարարության ՄԴ հետախուզությունը⁴¹⁶։ Ստամբուլում գտնվում էր ֆաշիստամետ տարրերի ստեղծած «Տոտոն» ակումբը, որը գերմանական ռեզիդենտուրայի կենտրոնն էր, իսկ Ստամբուլում գերմանական հետախուզության ռեզիդենտն էր ճանաչված հնագետ Հանս Հենինգ Օստենը⁴¹⁷։

1934 թ. Թուրքիայում Աբվերի գծով ռեզիդենտ նշանակվեց կապիտան Պաուլ Լևերկյունը։ Օգտագործելով իր նախկին կապերը՝ նա կարողացավ ստեղծել տարածված լրտեսական ցանց, այդ թվում՝ հավաքագրելով մի շարք լեռնական վտարանդիների*։

Կովկասյան քաղաքական վտարանդիությունը գերմանական հետախուզության ուշադրությանն էր արժանացել դեռ 1920-ական թվականների վերջերին։ Հետաքրքրության առաջին պատճառը այն տեղեկություններն էին, որ անգլիացիները կապեր են հաստատել հակախորհրդային կովկասյան շրջանների հետ։ 1927 թ. հուլիսի 7-ին Գերմանիայի Գլխավոր շտաբի հետախուզությունը կազմել էր Կովկասյան ինքնավարության համար շարժման վերաբերյալ գաղտնի զեկուցագիր, որտեղ նշված էր, որ արդեն մի քանի տարի է, ինչ Փարիզում գործում է Կովկասի անկախության կոմիտե, որը «Թուրքիայում ունի հուսալի կապեր թուրքական շրջանների հետ»⁴¹⁸։

⁴¹⁶ A.g.e., s. 171:

⁴¹⁷ A.g.e.

* Առաջին աշխարհամարտի տարիներին Պաուլ Լևերկյունը կոլել էր թուրքական բանակում և կովկասյան ուղղությամբ մի շարք կարևոր նախաձեռնությունների մասնակից էր։ Օսմանյան կայսրությունում իր գործունեությունը նա նկարագրել է 1938 թ. Էսսենում լույս տեսած հուշերում՝ *Paul Leverkuehn. Posten auf ewiger Wache. Essen, 1938*: Գրքի թուրքերեն թարգմանությունը լույս է տեսել 1998 թ. Ստամբուլում՝ *Paul Leverkuehn. Sonsuz Nöbette Görev. İstanbul, ARBA Yayınları, 1998*:

⁴¹⁸ Ств ПГВА, ф. 772к, оп. 1, д. 91, лл. 18-19:

«Կոստանդնուպոլսում գործում է Ռուսաստանի մահմեդականներից կազմված Կոմիտե, որում, կովկասցիներից բացի, ընդգրկված են նաև ներկայացուցիչներ Թուրքեստանից, Ղրիմից և այլ թաթարական շրջաններից։ Փարիզյան կոմիտեն վերը նշված Կոմիտեի միջոցով թուրքական կառավարությունում ունի ուժեղ ազդեցություն։ Այդ ազդեցությունն այնքան մեծ է, որ Թուրքիայի կառավարությունը Կոմիտեին տեղեկացրել է իր պաշտոնական որոշման մասին՝ երկրից արտաքսել Կոմիտեի կովկասցի հակառակորդներին», նշված է գաղտնի զեկուցագրում⁴¹⁹։

Ըստ ամենայնի, այստեղ կա որոշ անճշտություն, քանի որ, ինչպես նախորդ գլխում նշել էինք, թուրքական կառավարությունն արտաքսել էր այն անձանց, որոնց անունները նշված էին խորհրդային դեսպանության կողմից ներկայացված ցուցակում, որոնցից Կոմիտեին ընդդիմադիր էին Մ. Ռասուլզադեն, Վեբիլովն ու Վաչաձեն։ Փաստաթղթի տեքստից ակնհայտ է դառնում, որ անգլիացիների հետ կապեր էին պահպանում Փարիզյան կոմիտեի վրացի անդամները, մասնավորապես՝ այդ կապն իրականացվում էր Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Քարումիձեի միջոցով, որի միջնորդությամբ անգլիական հետախուզության ներկայացուցիչը մեկնել էր Թուրքիա՝ հանդիպելու կովկասյան վտարանդիության գործիչների հետ⁴²⁰։ Գերմանական հետախուզությանը հաջողվեց կայուն հարաբերություններ հաստատել Քարումիձեի հետ և նրա միջոցով տեղեկանալ անգլիական հետախուզության կապերի մասին⁴²¹։

Միևնույն ժամանակ, թուրքական հատուկ ծառայությունները մշտապես վերահսկողության տակ էին պահում կովկասյան քաղաքական վտարանդիության ներկայացուցիչների հետ գերմանական հետախուզության կապերը և շատ դեպքերում աննկատ

⁴¹⁹ Ств նույն տեղում:

⁴²⁰ Ств նույն տեղում:

⁴²¹ Ств նույն տեղում:

ուղորդում դրանք: Այսպես, գերմանական ռեզիդենտուրայի ուշադրության կենտրոնում հայտնվեց Սաիդ Շամիլը, քանի որ եվրոպական կովկասյան վտարանդիության շրջանում նրա խաղացած դերը, Հյուսիսային Կովկասում և թուրք քաղաքական վերնախավի հետ ունեցած կապերը արդեն վաղուց առաջացրել էին նրա նկատմամբ գերմանական հետախուզության որոշակի հետաքրքրությունը: Հատկանշական է, որ Սաիդ Շամիլը գերմանացի ռեզիդենտի հետ առաջին՝ ճանաչողական բնույթի հանդիպումից հետո, նախապատրաստեց այն ժամանակ իր ղեկավարած ԿԼԺԿ գործընկերներին՝ ձգտելով փարատել նրանց այն կասկածները, թե գերմանական կառույցների հետ շփումները կարող են նշանակել Թուրքիայի դերի նվազեցում կամ նրա փոխարինում Գերմանիայով⁴²²: Սաիդ Շամիլը նաև հաշվի առավ այն հանգամանքը, որ մի շարք լեռնական գործիչներ, իրենց նախորդների պես, Թուրքիան արդեն համարում էին իրենց երկրորդ հայրենիքը: Սաիդ Շամիլը նույնիսկ առաջարկեց, որ զենքի և զինամթերքի տեսքով գերմանական օգնությունը լեռնականներն ստանան Թուրքիայի միջոցով⁴²³: Երկրորդ խաղաքարտն այն էր, որ Սաիդ Շամիլը գերմանական հետախուզությանը ներկյացրեց իր և իր կազմակերպության հետ կապ ունեցող թուրք պաշտոնյաների ցուցակը, որում էին մի շարք չերթեզական ծագում ունեցող բարձրաստիճան գործիչներ, ինչպիսիք էին ազգայնական շարժման հերոս, Անկարայի Անկախության դատարանի անդամ Քլըչ Ալին, պատգամավորներ Թահսինը, Ռահմին⁴²⁴: Այս հանգամանքը նոր ու հին չերթեզական համայնքների փոխկապվածության վկայությունն է, ինչպես նաև հաստատում է այն փաստը, որ թուրքական իշխանությունների հետ կովկասյան

⁴²² Сгн Лев Соцков, указ. раб., с. 1:

⁴²³ Там же.

⁴²⁴ Там же.

վտարանդիությանը կապող օղակի և միջնորդի դերում շատ դեպքերում հանդես էր գալիս չերթեզական համայնքը:

Խորհրդային հետախուզության ձեռքում հայտնված՝ լեռնականների հանդիպման սղագրությունից երևում է, որ Սաիդ Շամիլը հիմնական շեշտը դրեց մահմեդական զանգվածի վրա՝ ասելով, թե Կովկասի բնակչության 70 %-ը աղրբեջանցիներ ու լեռնականներ են, և Կովկասով շահագրգռված պետությունները պետք է հասկանան, որ ամենակարևոր օղակը աղրբեջանալեռնական միավորումն է⁴²⁵: Այսպիսով՝ Շամիլը, տեսնելով իրենց նկատմամբ Գերմանիայի նման հզոր պետության հետաքրքրությունը, փորձեց այդ եղանակով վերականգնել աղրբեջանալեռնական միացյալ վտարանդիության առաջնորդ լինելու իր վաղեմի ծրագրերը:

1935 թ. մարտի սկզբին նա հանդիպում ունեցավ Ստամբուլում գերմանացի ռեզիդենտ Հեկեսի հետ, որը նրան վստահեցրեց, որ Գերմանիան մտադիր է լուրջ գործունեություն վարելու Կովկասում, սակայն հրաժարվեց Շամիլի կուսակիցների հետ հանդիպելուց և պնդեց, որ կապն իրականացվի միայն նրա միջոցով⁴²⁶: Շամիլը գրավոր ներկայացրեց Կովկասում հետախուզական գործունեություն ծավալելու վերաբերյալ իր նկատառումները: Այդ փաստաթուղթը կազմելիս Սաիդ Շամիլը հատուկ ուշադրություն դարձրեց այն բանի վրա, որ բացառվի Կովկասում թուրքական հետախուզության աշխատանքի մեթոդներին որևէ նմանություն:

Որոշ ժամանակ անց Շամիլը հուսահատություն ապրեց, քանի որ տեղեկացավ, որ ինքը կովկասյան վտարանդիության հետ գերմանացիների առնչվելու միակ օղակը չէ, այլ նրանք գուցահեռաբար կապեր են հաստատել նաև վրացի, աղրբեջանցի ու լեռնցի մի շարք գործիչների հետ: ՈՒստի Սաիդ Շամիլը, ձգտելով մեծացնելու իր անձի

⁴²⁵ Там же, с. 2:

⁴²⁶ Там же.

քաղաքական կշիռը, փորձեց գործի դնել իր հետևալ խաղաքարտը՝ Թուրքիայի իշխանությունների հետ իր ավելի սերտ կապերը:

Սայիդ Շամիլի և թուրքական հետախուզության հաշվարկն արդարացվեց: Իր ղեկավարությանը ներկայացրած զեկուցագրում շեկեսը նշեց. «Պետք է նաև ավելացնել, որ հյուսիսկովկասցիներն ու ադրբեջանցիները լավ կապեր ունեն Թուրքիայի բարձրագույն կառավարական մարմիններում, այդ թվում նաև Գլխավոր շտաբում: Բնական է, որ մենք չենք կարող չօգտագործել դրանով ընձեռվող հնարավորությունները, մանավանդ, որ նացիոնալ-սոցիալիստների հաղթանակից հետո վտարանդիության այդ շրջաններում աճում է հստակ արտահայտվող համակրանքը դեպի նոր Գերմանիան»⁴²⁷:

Գերմանիայում Հիտլերի իշխանության գալը և դրա հետևանքով գերմանական քաղաքականության մեջ տեղի ունեցած կտրուկ փոփոխությունը կովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում ստաջացրին հույսեր, որ ֆաշիստական Գերմանիան հենց այն պետությունն է, որը անխուսափելիորեն կբախվի ԽՍՀՄ-ի հետ: Այսպիսով՝ թե՛ գերմանական իշխանությունները, թե՛ կովկասյան վտարանդիությունը ձգտեցին միմյանց հետ համագործակցելու: Երրորդ աշխի արտաքին գերատեսչության հրավերով 1934–1935 թթ. Բեռլին ժամանեցին կովկասյան վտարանդիության մի շարք գործիչներ, որոնք հանդիպումներ ունեցան արտաքին գործերի նախարարությունում ու դոկտոր Գեբելսի ղեկավարած լուսավորության և քարոզչության նախարարությունում: Այսպես, 1935 թ. ամռանը Բեռլին այցելեց ԿԼԺԿ-ի առաջնորդներից Մահոմեդ Սունշ Գիրեյը, որը հանդիպումներ ունեցավ Բեռլինում ստեղծված այսպես կոչված «Հակակոմիստներում» և Գեբելսի նախարարության ռեֆերենտ Մայեր Հայդենհագերի հետ⁴²⁸: Հանդիպումների ժամանակ վերը նշված գերատեսչությունների ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին լեոնական քաղաքական

վտարանդիության հետ հաստատել ավելի սերտ կապեր և հաճախակի շփումներ⁴²⁹:

Այսպիսով՝ 1935 թվականից նկատվում է Բեռլինը լեոնական վտարանդիության երկրորդ կարևոր կենտրոնի վերածելու միտում: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1935 թ. Յ. Պիլսուդսկու մահով դադարեց գործելուց «Պրոմեթևս» շարժման մղիչ ուժը, և լեհական իշխանություններն սկսեցին այդ շարժմանը վերաբերվել ավելի մեծ պահանջկոտությամբ, ինչպես նաև կասկածի տակ առնել դրա արդյունավետությունը: Նման պայմաններում կովկասյան վտարանդիության որոշ աչքի ընկնող գործիչներ, ինչպիսիք էին Ս. Ռասուլզադեն, Բ. Բայսուզանը, Վարշավայից տեղափոխվեցին Բեռլին:

Խոսելով կովկասյան վտարանդիության նկատմամբ հետաքրքրության աճման մասին՝ հարկ ենք համարում նշել այն կարևոր փաստը, որ Գերմանիայի շահագրգիռ կառույցները, նախապատրաստվելով ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի, ձեռնարկեցին խորհրդային հասարակության բազմակողմանի և խոր ուսումնասիրություններ՝ փորձելով ի հայտ բերել սոցիալիստական պետության թույլ կողմերը: Տարածված էր այն համոզմունքը, թե այդպիսի թույլ կողմ է ազգայնականությունը, հատկապես՝ Հյուսիսային Կովկասի նման անհանգիստ ու պայթյունավտանգ տարածաշրջանում, որտեղ չէին դադարում հակախորհրդային ապստամբությունները: 1932 թ. Ֆրանկֆուրտում լույս տեսավ ԽՍՀՄ-ի գծով մասնագետ, երկար տարիներ այնտեղ ապրած Հանս Բոնի «Ազգայնականությունը խորհրդային Միությունում» գիրքը⁴³⁰, որի հեղինակն ապացուցում էր, որ կոմունիզմն անխուսափելիորեն կրկին ու կրկին բախվում է ազգայնականության ու նրա ուժերի հետ և ստիպված է դրանց հետ

⁴²⁹ Там же.

⁴³⁰ См. Hans Kohn. Die Nationalismus in der Sowjetunion. Frankfurt am Main, Societats-Verlag, 1932: Սույն աշխատության մեջ մենք օգտագործել ենք գրքի անգլերեն թարգմանությունը՝ Hans Kohn. Nationalism in the Soviet Union. London, George Routledge & Sons, 1933:

⁴²⁷ Там же.

⁴²⁸ См. В. К. Былинин, А. А. Зданович, В. И. Коротаев, указ. раб., с. 346:

գտնել *modus vivendi*՝ վարվելու եղանակ⁴³¹: Հեղինակը մի քանի շատ կարևոր դիտարկումներ էր անում, որ ոչ ռուսներին դեռ հատուկ են այն տրամադրությունները, թե ռուսներից կարելի է միայն չարիք սպասել, և որ ԽՍՀՄ-ում ստեղծվել է մի տարիմաստ իրավիճակ, երբ մշակույթի զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է ազգայնականության և խորհրդային մարդկանց ազգային հավակնությունների ուժգնացմանը⁴³²:

Հ. Քոնն արեց նաև մի դիտողություն, որը դարձավ Երրորդ ռայխում պանթուրքական քաղաքականությանն աջակցման հիմնավորում: Նա ապացույցներով ներկայացրեց, որ ԽՍՀՄ թուրքաթարական ազգերում աստիճանաբար ավելի մեծ թափ է ստանում պանթուրքական ու պանիսլամական շարժումը, և նրանց անկախանալու ձգտումը մյուս խորհրդային ազգերի համեմատությամբ ավելի ուժեղ է⁴³³:

Քանի որ դեռ 1920-ական թթ. պանթուրքականների ու կովկասյան մահմեդական վտարանդիների միջև ձևավորվել էր համագործակցություն, որն իր զագաթնակետին հասավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, անհրաժեշտ է նշել, որ 1930-ական թթ. վերջից Գերմանիայում պանթուրքականության նկատմամբ ուշադրությունն ուժեղացավ, և քայլեր ձեռնարկվեցին ծայրահեղ պանթուրքական գործիչներին Գերմանիա հրավիրելու ու նրանց գործունեության ծավալման համար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ⁴³⁴: Թեև Թուրքիայում 1930-ական թթ. սկսվեց պանթուրքականության վերելք⁴³⁵, սակայն այն սահմանափակվեց Անատոլիայի տարածքով, մինչդեռ թուրքական կառավարող շրջանները

դեռ խուսափում էին «արտաքին թուրքերի փրկության» մասին բարձրաձայնելուց⁴³⁶:

Հիմնվելով գիտական ուսումնասիրությունների վրա՝ Գերմանիայի համապատասխան կառույցներն սկսեցին մշակել ԽՍՀՄ-ում ազգայնական շարժումների օգտագործման կոնկրետ քաղաքականություն, որի արդյունավետության մեծացմանն էր ուղղված 1937 թ. Բեռլինում Կովկասի փախստականների հարցերով վարչության (Kaukasische Vertrauensstelle) ստեղծումը: Այն պետք է միջնորդի դեր խաղար կովկասյան քաղաքական վտարանդիության և Երրորդ ռայխի պաշտոնական կառույցների միջև: Ավելի ուշ՝ 1941 թ. ապրիլ-մայիս ամիսներին, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունում նշանակվեցին պաշտոնյաներ, որոնք պատասխանատու էին ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների հետ աշխատանք վարելու համար⁴³⁷:

Նույն տարիներին կովկասյան քաղաքական վտարանդիության նկատմամբ Գերմանիայի հետ մեկտեղ հետաքրքրություն ցուցաբերեց նաև Ճապոնիան: Մակայն այդ հետաքրքրությունը երկրորդական էր, քանի որ ճապոնա-խորհրդային բախման հավանական ճակատի հաշվառմամբ նախապատվությունը տրվում էր միջինասիական քաղաքական վտարանդիության հետ կապերի հաստատմանը: Ճապոնական հետախուզությունը գերադասեց կովկասյան վտարանդիությունից համագործակցել Հ. Բամատի «Կովկաս» խմբի հետ և 1935 թվականից ֆինանսավորեց դրա հրատարակությունները: Այդ կապն իրականացվեց Ստամբուլում Ճապոնիայի ռազմական կցորդի և Բեռլինում Ճապոնիայի դեսպանության միջոցով⁴³⁸: Հ. Բամատը Բեռլինում Ճապոնիայի դեսպանության ներկայացուցչին հանձնեց համագործակցության համաձայնագրի տեքստը: Հանդիպման ժամանակ Ճապոնիայի ներկայացուցիչը Բամատին վստահեցրեց, որ

⁴³¹ Ibid, p. 36:

⁴³² Ibid, pp. 71, 90:

⁴³³ Ibid, p. 106:

⁴³⁴ Տե՛ս *Искандер Гилязов*. Туркизм: становление и развитие (характеристика основных этапов). Казань, Издательство Казанского государственного университета, 2002, с. 53:

⁴³⁵ Տե՛ս *Н. М. Лавров*. Турция в 1918–1956 годах. М., 1956, с. 23:

⁴³⁶ Տե՛ս *Ibrahim Bahadır*, a.g.e., s. 128:

⁴³⁷ A.g.e., s. 54:

⁴³⁸ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 4:

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմն սկսվելուն պես Ճապոնիան «Կովկաս» կազմակերպությունը պաշտոնապես կճանաչի որպես պատերազմող կողմ ու Ճապոնիայի դաշնակից և կտրամադրի Կովկասի ազատագրման համար անհրաժեշտ միջոցներ⁴³⁹:

Հետաքրքրական է, որ երբ Հ. Բամատը «Կովկաս» խմբին ներկայացրեց Ճապոնիայի ու Գերմանիայի պաշտոնյանների հետ իր ունեցած հանդիպումների մասին հաշվետվությունը, խմբակիցներին անհանգստացրեց այն հարցը, թե Թուրքիան արդյոք տեղյակ է բանակցություններից, և խոսքը այդ պետության մեկուսացման մասին չէ: Բամատը վստահեցրեց, որ գերմանացիների և որոշ թուրքական շրջանների միջև տեղի են ունենում կովկասյան հարցերով շփումներ⁴⁴⁰: Ըստ Բամատի՝ գերմանացիներն ու թուրքերը տեղեկացնում են իրենց այն շփումների մասին, որոնց ժամանակ քննարկվում է Կովկասի ապագա ազատագրման գործում Թուրքիայի դերակատարության հարցը⁴⁴¹: Այս հայտարարությունից հետո կազմակերպության վրացի անդամները հարց բարձրացրեցին, թե դրա դիմաց Թուրքիան արդյոք չի պահանջում նոր տարածքային զիջումներ: Բամատը վստահեցրեց, որ նման հարց թուրքերը չեն բարձրացրել և կովկասցիներից միայն պահանջում են ներկայիս սահմանները ճանաչել որպես վերջնական⁴⁴²:

1936 թ. սեպտեմբերին Հ. Բամատի ղեկավարած «Կովկաս» խմբի պատվիրակությունը Գերմանիայի իշխանությունների հրավերով որպես պատվավոր հյուր մասնակցեց Նյուտոնբերգում տեղի ունեցած նացիոնալ-սոցիալիստական կուսակցության չորրորդ համագումարին^{*},

⁴³⁹ Там же.

⁴⁴⁰ Там же.

⁴⁴¹ Там же.

⁴⁴² Там же.

* Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության այդ համագումարին հայ քաղաքական գործիչներից մասնակցում էր Արշակ Ջամայանը, իսկ Դաշնակցությունից Ալֆրեդ Ռոզենբերգի հետ կապեր էր պաշտպանում Ալեքսանդր Խատիայանը (տես «Դաշնակցության իսկական դեմքը», էջ 38):

այնուհետև տևական հանդիպում ունեցավ կուսակցության՝ արտաքին հարցերի համար պատասխանատու Ալֆրեդ Ռոզենբերգի հետ⁴⁴³: 1936 թ. նոյեմբերի 25-ին Գերմանիան և Ճապոնիան ստորագրեցին «Հակակոմիներնյան պակտ»: Դրանից հետո երկու երկրների հատուկ ծառայությունները մշակեցին 1937–1941 թթ. համագործակցության հնգամյա ծրագիր, որի առանձին կետը նվիրված էր խորհրդային վտարանդիության հետ աշխատանքին: Երկու պետությունները կովկասյան վտարանդիությունում առավել վստահելի, արմատական և արդյունավետ էին համարել «Կովկաս» խումբը: Երկու երկրների՝ 1937 թ. ընդունված համագործակցության ծրագրում կովկասյան վտարանդիության մասով նշված էր. «քարոզչությունն ընդլայնելու և Բամատի ղեկավարությամբ գործող կովկասյան խմբերին աջակցելու նպատակով. ա) մեծացնել «Կովկաս» հանդեսի տպաքանակը, բ) հրատարակել տարբեր լեզուներով հանդեսներ, գ) Կովկասում և այլ երկրներում ձեռնարկել քարոզչություն»⁴⁴⁴:

Այդ ծրագրի իրականացման շրջանակներում ստացված միջոցներով Հ. Բամատը Ստամբուլում հիմնադրեց երկու հանդես՝ «Կովկասի ալմանախ (Kafkas Almanaxi)» և «Կաֆդաղը (Kafdağ)»⁴⁴⁵: Առաջինը հրատարակվեց 1937 թ., դրա խմբագիրն էր Ֆուադ Էմիրջանը, այնտեղ հաճախ «Կովկաս» հանդեսից արտատպվում էին Հ. Բամատի հոդվածները: «Կովկասի ալմանախն» ընդհանուր առմամբ մոտ էր կանգնած հակախորհրդային, գերմանամետ և պանթուրքական շրջաններին⁴⁴⁶:

⁴⁴³ Տես *Георгий Мамулия*, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация...

⁴⁴⁴ Там же.

⁴⁴⁵ Տես Lowell Bezanis, *ibid*, p. 143:

⁴⁴⁶ *Ibid*.

Երկրորդ հանդեսը՝ «Կաֆդադը», լույս ընծայվեց 1937–1938 թթ., դարձյալ Ֆուադ Էմիրջանի խմբագրությամբ: 1938 թ. այն արգելվեց, խմբագիրը արտաքսվեց Թուրքիայից⁴⁴⁷:

1937 թ. արտասահմանում սկսվեց «Կովկաս» հանդեսի հրատարակությունը վրացերեն լեզվով, նույն թվականի հունիսին՝ ֆրանսերեն («Le Caucase»), 1938 թ.՝ անգլերեն («Caucasian Quarterly») և գերմաներեն («Der Kaukasus»): Ուշագրավ է, որ յուրաքանչյուր պետությունում հանդեսի լույս տեսնող տարբերակը համապատասխանեցված էր այդ երկրի իրողություններին: Այսպես՝ ֆրանսիական ու անգլիական տարբերակներում չէին արտատպում գերմաներեն տարբերակում գետեղված այն հոդվածները, որոնցում զովերգվում էին ֆաշիստական գաղափարախոսությունն ու կուսակցությունը:

1938 թ. հրատարակությունը դադարեցրած «Ազգ» հայկական թերթի խմբագրությունը՝ Վիգեն Շանթի գլխավորությամբ, միացավ «Կովկաս» խմբին, և «Կովկաս» հանդեսն սկսեց լույս տեսնել նաև հայերեն: Այդ տարբերակի խմբագրական կազմում, բացի Վիգեն Շանթից, ընդգրկված էին ծայրահեղական, ֆաշիստական գաղափարոխոսությանը հարող դաշնակցականներ, ինչպիսիք էին Գ. Դաշտոյանը, Հ. Արիստակեսյանը, Ս. Լոռյանը⁴⁴⁸:

«Կովկաս» խմբին միանալու ուղերձում «Ազգի» շուրջ համախմբված դաշնակցականները նշեցին. «Մենք՝ հայ ազգայնականների օրգանը, ամբողջովին համաձայն ենք ձեր քաղաքական նպատակների հետ: Թեև թվական առումով մեր կազմակերպությունը փոքր է, բայց այն ներկայացնում է իսկական

⁴⁴⁷ Ibid.

⁴⁴⁸ Տե՛ս «Դաշնակցության իսկական դեմքը», էջ 36: Այդ տարիներին Դաշնակցության անդամներից շատերն էին համակրում ֆաշիստական Գերմանիային: Այսպես, դաշնակցական «Առավոտ» թերթն իր համարներից մեկում գրեց, թե «Հայ ժողովրդի համար ֆաշիզմի պարտությունը մեծ ողբերգություն կլինի» (տե՛ս «Առավոտ», 1939 թ., 17 մայիսի):

հայերին: Մենք մեր բոլոր ուժերն ու կարողությունները կուղղենք հասարակաց իդեալի՝ Կովկասի ազատագրությանը»⁴⁴⁹:

Սակայն նշված ժամանակաշրջանում հայ քաղաքական գործիչները «Կովկաս» խմբին միանալով հանդերձ, դեռ պատրաստ չէին ստորագրելու Կովկասյան համադաշնության համաձայնագիրը: Այդ կապակցությամբ Հ. Բամատը «Կովկաս» հանդեսում մեծ հոդված հրապարակեց, որտեղ նշեց, որ միասնական կովկասյան պետությունն առանց Հայաստանի ամբողջական չի կարող լինել, և իրենք շատ ջանք են գործադրել, որպեսզի հայկական քաղաքական կուսակցություններին համոզեն միանալ այդ պայմանագրին: Դժբախտաբար Դաշնակցությունը հրաժարվեց միանալու գաղափարից, և, բացի «Կովկաս» խմբի հետ Արծրունու ժամանակավոր կապից, որևէ կանոնավոր շփումներ չեն եղել⁴⁵⁰: Այնուհետև Հ. Բամատը մեղադրեց Դաշնակցությանը նեղ մտածելու մեջ, քանի որ նա չի ուզում հաշտվել գոյություն ունեցող status quo-ի հետ, ինչը «Կովկաս» խմբի գործունեության ելակետն է: Նա նաև տարակուսանք հայտնեց, որ «այժմ Սևրի պայմանագրով նախատեսված Հայաստանի սահմանների հարցում համառ և անզիջում դիրքորոշում ունեն հենց այն անձինք, որոնք ստորագրել են Ալեքսանդրապոլի պայմանագիրը»⁴⁵¹: «Մինչ այժմ Դաշնակցությունը հրաժարվում էր մասնակցելու գոյություն ունեցող կովկասյան կազմակերպություններին: Ներկայիս ժամանակները շատ տարբեր են անցյալից: Ղեկավարները պետք է քաջություն և հաստատակամություն դրսևորեն: Նրանք պետք է հրաժարվեն իրենց երազանքներից ու տեսիլքներից և ընդունեն իրականությունը: Հարկավոր է ձեռնպահ մնալ ավելորդ պահանջներից: Ահագին գործ կա անելու: Ոչ մի համաձայնություն բոլշևիկների հետ: Հաշտություն Թուրքիայի և այն բոլոր ժողովուրդների հետ, որոնք հասկանում են

⁴⁴⁹ Տե՛ս «Der Kaukasus», Berlin, 1940, S. 86:

⁴⁵⁰ Ibid, S. 85:

⁴⁵¹ Ibid.

Կովկասի խնդիրը և կարող են օգնել նրա ազգային անկախության պայքարում», գրել է Հ. Բամատը⁴⁵²:

Հետաքրքրական է այն փաստը, որ կովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունների հետ բանակցություններում Սևրի պայմանագրով Հայաստանի նշված սահմանների ճանաչման վրա համաձայնեցնելու նպատակով Ռուսական «Հոյբուն», կազմակերպության հետ 1927 թ. հոկտեմբերի 29-ին Բեյրութում ստորագրված համագործակցության վերաբերյալ դաշնագրով արդեն հրաժարվել էր Սևրի պայմանագրով նախանշված Հայաստանի սահմաններից: Դաշնակցության և «Հոյբունի» միջև ստորագրված դաշնագրի երկրորդ հոդվածում գրված է. «նկատի ունենալով հանդերձ Սևրի դաշնագրի ընդունած ազգացեղային ու իրաական սկզբունքները, կողմերը անվաեր կը յայտարարեն Վանի, Պիթիսի ու Էրզրումի վիլայեթները Հայաստանին ձգող 89րդ յօդուածը, այսուհանդերձ, երկու կողմերը կը ճանչնան իրենց փոխադարձ իրաւունքները յիշեալ վիլայեթներուն վրայ»⁴⁵³:

Հայտնվելով գերմանական և ճապոնական հետախուզությունների ուշադրության կիզակետում՝ Հ. Բամատն սկսեց թուրքական իշխանություններին կանոնավոր կերպով տեղեկացնել իր բոլոր հանդիպումների և տեղի ունեցող իրադարձությունների մասին: 1937 թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Նուման Մենեմենջիօղլուի՝ հետ հանդիպման ժամանակ նա մանրամասնորեն ու համակողմանի ներկայացրեց կովկասյան վտարանդիությունում տիրող իրավիճակը, տեղի ունեցող զարգացումները և ճապոնական իշխանությունների ներկայացուցիչների հետ իր կապերը⁴⁵⁴: Բամատը

Մենեմենջիօղլուին խնդրեց աջակցել իր ղեկավարած կազմակերպության աշխատանքներին: Նախարարի տեղակալը պատասխանեց, որ եթե խոսքը Թուրքիայի տարածքում գործունեության մասին է, ապա արտաքին գերատեսչությունը և Գլխավոր շտաբը չեն առարկի, բայց՝ աշխատանքի գաղտնիության պայմանով: Իսկ եթե ճապոնացիների հետ Բամատի հարաբերությունների մասին տեղեկանա խորհրդային կողմը, ապա թուրքական իշխանություններն ստիպված կլինեն ցուցադրաբար ձեռնարկել արգելիչ միջոցներ⁴⁵⁵: Ինչ վերաբերում է իրենց պաշտոնական դիրքորոշմանը, ապա Թուրքիան, հաշվի առնելով ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների գործոնը, չի կարող պաշտոնապես դրսևորել իր հետաքրքրվածությունը Կովկասի հարցերում⁴⁵⁶:

Հատկանշական է, որ թուրքական իշխանությունների հետ շփումներում՝ արտաքին գործերի նախարարությունում և Գլխավոր շտաբում տեղի ունեցող հանդիպումների ժամանակ, Հ. Բամատը փորձեց նրանց համոզել, թե ԽՍՀՄ-ի դեմ պատերազմին մասնակցելու դեպքում ամբողջ Կովկասը կանցնի Թուրքիային⁴⁵⁷, մինչդեռ վրացի գործընկերներին նա վստահեցնում էր, թե թուրքական իշխանությունները սահմանափակվում են միայն գոյություն ունեցող սահմանների վերջնական ճանաչմամբ:

Գերմանական իշխանությունները «Կովկաս» խմբի հետ մեկտեղ աշխատանք էին տանում նաև հյուսիսկովկասյան վտարանդիության այլ հատվածների հետ, մասնավորապես՝ ԿԼԺԿ-ի հետ: 1936 թ. ամռանը Բեռլինում ԿԼԺԿ ներկայացուցիչ Մունժեր հանդիպումներ ունեցավ Գերբլիսի և Ռոզենբերգի հետ: Սակայն ԿԼԺԿ-ում տիրող իրավիճակը տարբերվում էր «Կովկաս» խմբում եղածից, քանի որ ԿԼԺԿ-ն չուներ հեղինակավոր առաջնորդ: Մաիդ Շամիլը 1934 թ. ժամանակավորապես

⁴⁵² Ibid., p. 86:

⁴⁵³ Տես Կ. Սասունի. 20-30-ականներու քրտական շարժումը եւ Հ. Յ. Դ. դերակատարութիւնը: «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառասնամեակի շարք)», հ. Դ (1918 – 1922): Աթենք. 1995, էջ 240:

⁴⁵⁴ 1942-1944 թթ. եղել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար:

⁴⁵⁵ Տես Лев Соцков, указ. раб., с. 6:

⁴⁵⁵ Там же.

⁴⁵⁶ Там же.

⁴⁵⁷ Там же.

հեռացել էր ակտիվ կուսակցական աշխատանքից, իսկ Կանտեմիրը, Սունժըր և մյուսները չունեին բավարար ճանաչում: Բեռլինում Սունժի հանդիպումները հարուցեցին կուսակցության կասկածը, թե նա հավակնում է դեկավարի դերին: Նա մեղադրվեց Կովկասյան համադաշնության միասնականությանը վնասող մի քանի ձեռնարկումներին, մասնավորապես՝ առանց ԿԼԾԿ որոշման թուրքաթար մահմեդականների համագումարին մասնակցելու մեջ⁴⁵⁸:

Հ. Բամատի գործունեությունը, այդ թվում՝ գերմանական ու ճապոնական հետախուզությունների հետ կապերը, նրա վրա գամեցին խորհրդային հետախուզության ուշադրությունը: ԽՍՀՄ ճնշմամբ 1937 թ. մայիսի 9-ին Ստամբուլում արգելվեց «Կովկասի ալմանախ» հանդեսի հրատարակությունը: Այդ կապակցությամբ Անատոլիական գործակալության հայտարարության մեջ նշված էր. «Թուրքիայի տարածքում արգելվել է «Կովկասի ալմանախը», որը հրատարակվում էր ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող բարիդրացիական հարաբերություններին վնասելու նպատակով»⁴⁵⁹: Արգելված հանդեսին փոխարինեց «Քաֆդաղը» հանդեսը, որը կարճ ժամանակ անց նույնպես արգելվեց⁴⁶⁰:

Թուրքական իշխանությունների հետ ծագած լարվածությունը հարթելու ակնկալիքով Բամատը դիմեց ճապոնական հետախուզության

⁴⁵⁸ Там же.

⁴⁵⁹ Տե՛ս *Георгий Мамулия*. Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация...

⁴⁶⁰ Տե՛ս Lowell Bezanis, *ibid*, pp. 122 – 125: Ընդհանուր առմամբ, 1920 – 1930 թթ. Ստամբուլում լույս են տեսել ադրբեջանական վտարանդիական 7 հանդես՝ «Yeni Kafkasya» («Նոր Կովկաս», 1923–1927 թթ.), «Azeri Türk» («Ազերի թուրք», 1928–1931 թթ.), «Yeşil Yaprak» («Կանաչ թերթ», 1928 թ.), «Odlu Yurt» («Կրակների երկիր», 1929–1931 թթ.), «Odlu Yurt Mecmua Bülteni» («Կրակների երկիր ամսագրի բուլետեն» 1929–1930 թթ.), «Bildiriş» («Տեղեկատվություն», 1930–1931 թթ.), «Azerbaycan Yurt Bilgisi» («Ադրբեջան երկրի մասին տեղեկություններ», 1932–1934 թթ.): Վրացական վտարանդիական պարբերականներից Ստամբուլում 1921 թ. մայիսի 15-ից մինչև 1922 թ. հոկտեմբերի 15-ը հրատարակվեց «Թավիսափալի Սաքարթվեթ» («Անկախ Վրաստան») թերթը: Լույս է տեսել 27 համար (տե՛ս *Metin Sever*, a.g.e., s. 148):

ներկայացուցիչներին, սակայն նրանք խորհուրդ տվեցին թուրքերի հետ խնդիրները լուծել ինքնուրույն կերպով՝ հավելելով, որ Բամատի խումբը առանց Թուրքիայի աջակցության ունի չնչին հնարավորություններ Կովկասում արդյունավետ գործունեությունը ծավալելու համար: Ճապոնական հետախուզությունը քաջատեղյակ էր, որ բոլոր քիչ թե շատ կարևոր զարգացումների ու ծրագրվող գործողությունների մասին «Կովկաս» խմբի անդամները տեղեկացնում են թուրքական հետախուզությանը⁴⁶¹:

Սակայն Բամատի խմբի բացասական կերպարը, «Կովկասի» եվրոպական հրատարակություններում Գերմանիայի ու Ճապոնիայի գովերգումը, կոշտ հակախորհրդային դիրքորոշումը թուրքական իշխանություններին զրկել էին տարաշարժի որևէ հնարավորությունից՝ չնայած արտաքին գործերի նախարարության, հետախուզության ու Գլխավոր շտաբի հետ Բամատի ունեցած սերտ կապերին: Անտեսելով Մենեմենջիօղլուի նախագուշացումը՝ Հ. Բամատը և «Կովկաս» խմբի մի քանի անդամ մասնակցեցին ԽՍՀՄ-ում, Թուրքիայում, Ռումինիայում, Աֆղանստանում, Եգիպտոսում և Սիրիայում հավատարմագրված ճապոնացի դիվանագետների համաժողովին, որը տեղի ունեցավ Ստամբուլում 1938 թ. օգոստոսի 6–10-ը: Այդտեղ քննարկվեց Կովկասում և Կենտրոնական Ասիայում հետախուզական գործողություններ ձեռնարկելու հարցը⁴⁶²: Այդ փաստը հայտնի դարձավ ԽՍՀՄ իշխանություններին*, խորհրդային մամուլում բարձրացավ դժգոհության ալիք, և արտաքին գործերի ժողովատը բողոքի նոտա ներկայացրեց Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը: Մինևս ժամանակ, Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Ա. Տերևնտը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թեֆիկ Արասի

⁴⁶¹ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 6:

⁴⁶² Տե՛ս *Георгий Мамулия*. Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация...

* Ա. Կանտեմիրի մտերիներից մեկը ՆԳԾԿ գործակալ էր (տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 7):

հետ հանդիպման ժամանակ նրա ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ «Հեռավոր Արևելքում տիրող ծայրահեղ լարվածության պայմաններում Մտամբուլում անցկացվող ճապոնական համագումարը ԽՍՀՄ-ը դիտում է որպես թողտվություն ագրեսորին, և դա ծանր փորձության է ենթարկում թուրք-խորհրդային հարաբերությունները»⁴⁶³:

Թուրքիայի կառավարությունը, խուսափելով նման ակնհայտորեն անախորժ փաստի կապակցությամբ ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների վատացումից, իր հերթին ճապոնացի դիվանագետների համաժողովի առիթով բողոքի նոտա ներկայացրեց Անկարայում ճապոնիայի դեսպանին և որոշում կայացրեց Թուրքիայում գտնվող «Կովկաս» խմբավորման անդամներին ու համակիրներին՝ Ալիխան Կանսեմիի գլխավորությամբ, զրկել թուրքական քաղաքացիությունից և վտարել երկրից⁴⁶⁴: Հյուսիսկովկասցի աջամետ վտարանդիներին թուրքական քաղաքացիությունից զրկելու մասին կառավարության որոշման մեջ նշված էր, որ «Կովկաս» խմբավորման անդամների նկատմամբ այդ պատժամիջոցը պայմանավորված է հեղափոխական և հետախուզական կազմակերպությանը նրանց պատկանելությամբ, մի կազմակերպության, որի գործունեությունն ուղղված է Թուրքիայի դաշնակից պետության դեմ⁴⁶⁵:

«Կովկաս» խմբավորման՝ Թուրքիայից վտարված անդամները բնակություն հաստատեցին Բեռլինում, ուր 1939 թ. տեղափոխվեցին նաև Փարիզում գործող կազմակերպության անդամները: Այսպիսով՝ Բեռլինում Մ. Ռասուլզադեի գլխավորությամբ «Մուսավար» կուսակցության անդամների, վրաց մենշևիկների մի զգալի մասի և այժմ հյուսիսկովկասյան վտարանդիության ամբողջ աջամետ հատվածի,

⁴⁶³ Տե՛ս «СССР и Турция», с. 147:

⁴⁶⁴ Տե՛ս Գ. Բամատ. «Репрессии против кавказских патриотов в Турции». «Кавказ», 1938, N 11(59), сс. 1-4:

⁴⁶⁵ Տե՛ս «Репрессии в Турции. Административные высылки». «Кавказ», 1938, N 10(58), с.

ինչպես նաև մի շարք այլ ուղղությունների ներկայացուցիչների հաստատվելու շնորհիվ այն դարձավ կովկասյան վտարանդիության քաղաքական կենտրոն:

Թուրքիայում «Կովկաս» խմբավորման գործունեության արգելումից հետո Հ. Բամատը 1939 թ. գարնանը թուրքական իշխանություններին հանձնեց մի հուշագիր, որում փորձեց նրանց համոզել, որ չեղյալ հայտարարեն իրենց որոշումը, ինչպես նաև ներկայացրեց «Պրոմեթևս» շարժման մեջ մտնող մյուս հյուսիսկովկասյան կուսակցությունների ու խմբավորումների համեմատությամբ իր խմբի ունեցած առավելությունը⁴⁶⁶: Հ. Բամատի ակնարկն այն էր, որ ի տարբերություն «Պրոմեթևս» շարժմանը մասնակցող վտարանդիական կուսակցություններից ու խմբավորումներից, նրան հաջողվեց համաձայնության գալ ամենահեղինակավոր հայկական քաղաքական կուսակցությունը ներկայացնող թեքուզ և փոքր, ծայրահեղ տեսակետներ դավանող հատվածի հետ, ինչը չէր հաջողվել այլ կազմակերպությունների, այդ թվում նաև ԿԼԺԿ-ին: Սակայն թուրքական իշխանությունները, շարունակելով հետախուզության մակարդակով կապ պահպանել և օգտագործել «Կովկաս» խումբը, այնուամենայնիվ, չվերանայեցին Թուրքիայում նրա գործունեությունն արգելող որոշումը:

Թուրքիայի տարածքում «Կովկաս» խմբի գործունեության արգելումը անշուշտ պայմանավորված էր միջազգային իրավիճակով թելադրված քաղաքական պատճառներով: Այդ շրջանում Թուրքիան Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ ակտիվ բանակցություններ էր վարում «Բալկանյան Անտանտի» ստեղծման հարցով: Այդ երկու պետությունների հետ համաձայնության ձեռքբերումից հետո Միջերկրական ծովի ավազանում Թուրքիայի համար հիմնականում վտանգ էին ներկայացնում Իտալիայի նվաճողական ձգտումները, որի

⁴⁶⁶ Տե՛ս Գեորգիյ Թամուլյա, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация:

դաշնակիցն էր Գերմանիան: Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ դաշնակցության վերաբերյալ բանակցությունների ժամանակ՝ 1939 թ. ապրիլի 28-ից մայիսի 5-ը, Անկարա այցելեց ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովուրդների տեղակալ Պոտեմկինը⁴⁶⁷: Միննույն ժամանակ Թուրքիան հետևում էր ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև շփումներին ու բանակցություններին, որոնք ավարտվեցին 1939 թ. Ռիբենտրոպ-Մոլոտովի պակտի կնքմամբ:

Նման պայմաններում Թուրքիայի տարածքում գերմանամետ ու ծայրահեղական «Կովկաս» խմբի գործունեությունը կարող էր դառնալ ավելորդ լարվածության աղբյուր:

Քաղաքական պատճառների հետ մեկտեղ կար ևս մեկ հանգամանք, որը հանգեցրեց Թուրքիայի կողմից հյուսիսկովկասյան վտարանդիության օգտագործման քաղաքականության ձևափոխմանը, և դրանում զգալի դեր խաղաց Հ. Բամատը:

Թուրքիայի անմիջական աջակցությամբ և մասնակցությամբ Կովկասի լեռնականների ժողովրդական կուսակցության ստեղծումից հետո թուրքական իշխանություններն իրենց հաշվարկներում հույս դրեցին Սաիդ Շամիլի վրա, որին ձգտեցին դարձնել կովկասյան մահմեդական վտարանդիության առաջնորդ: Թուրքիայի այդ ծրագրին աջակցում էր Լեհաստանը՝ «Պրոմեթևս» շարժման միջոցով: Սաիդ Շամիլի ղեկավարությամբ Ստամբուլում ստեղծվեց Հյուսիսկովկասյան ազգային կենտրոն: Սակայն թուրքական հետախուզությանը չհաջողվեց հասնել ավելիին, քանի որ նա հանդիպեց հյուսիսկովկասյան վտարանդիության ընդդիմադրության, որի աղբյուրը Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության նախկին ղեկավարներն էին: Նրանք շեշտում էին Հյուսիսային Կովկասի անկախության գործում Սաիդ Շամիլի ունեցած աննշան դերը և նրան դիտում էին զերազանցապես որպես Թուրքիայի իշխանությունների դրածոյի: Կրքերն այնքան բորբոքվեցին, որ Սաիդ Շամիլն ստիպված եղավ

⁴⁶⁷ Տե՛ս Ismail Soysal, a.g.e., s. 52:

ժամանակավորապես հրաժարվել ակտիվ քաղաքականությամբ զբաղվելուց, հեռանալ Փարիզից ու ԿԼԺԿ առաջնորդի պաշտոնից:

Եթե Պշիմախո Կոսոքի, Վասան-Գիրեյ Ջաֆաղիի, Աբդուլմեջիթ Չերմոնի նման առաջնորդները Սաիդ Շամիլի դեմ պայքարում գործում էին քողարկված ձևով, ապա Հ. Բամատը դա անում էր բացեփակ՝ չխուսափելով նույնիսկ «Պրոմեթևս» շարժման հետ կապերը խզելուց, դրանով իսկ թուլացնելով այդ շարժումը և խափանելով Սաիդ Շամիլի միջոցով ամբողջ հյուսիսկովկասյան վտարանդիությանը վերահսկելու Թուրքիայի ծրագրերը: Պատահական չէր, որ Թուրքիայում «Կովկաս» խմբի գործունեության արգելումը համընկավ թուրքական իշխանությունների օգնությամբ Սաիդ Շամիլի քաղաքական ակտիվացման հետ՝

Այնուամենայնիվ, Սաիդ Շամիլի քաղաքական «վերակենդանացումը» չնպաստեց կովկասյան վտարանդիության նկատմամբ վերահսկողություն հաստատելու թուրքական իշխանությունների ջանքերի հաջողությանը, քանի որ քաղաքական հանգամանքները հանգեցրին կովկասյան քաղաքական վտարանդիության վրա թուրքական ազդեցության թուլացմանը: 1936–1937 թթ. վտարանդիության քաղաքական ակտիվության հիմնական կենտրոնը տեղափոխվեց Բեռլին, որտեղ իշխանությունները վտարանդիության գործունեության համար ստեղծեցին շատ ավելի բարենպաստ պայմաններ, քան եղել էին Թուրքիայում: Նման պայմաններ ստեղծվեցին նաև թուրքական ծայրահեղական պանթուրքական ընդդիմության համար: Այսպես. պանթուրքականության մի շարք գաղափարախոսներ, ընդ որում՝

* Ակտիվ քաղաքականություն վերադարձած Սաիդ Շամիլին թուրքական հետախուզությունը հաձնարարեց համոզել հայ քաղաքական կուսակցություններին միանալ կովկասյան վտարանդիության ընդհանուր քաղաքականությանը (տե՛ս Лев Соцков, указ. раб., с. 7): Հայ քաղաքական ուժերի հետ կապերի համար թուրքական հետախուզությունը օգտագործում էր նաև վրացական քաղաքական վտարանդիության ղեկավարներին և թուրքահայ համայնքի ներկայացուցիչներին:

նրանք, ովքեր աչքի էին ընկնում իրենց ռասիստական և օտարատյաց հայացքներով, ինչպես, օրինակ, Նիհալ Աթսըզը, գործում էին Բեռլինում: Այդ շրջանում Թուրքիայի միակուսակցական կառավարությունը, չնայած իրականացվող թուրքականության քարոզչությանն ու քաղաքականությանը, դեռևս սահմանափակվում էր Անատոլիայի սահմաններով՝ չցանկանալով հանդիպել ԽՍՀՄ դիմադրությանը⁴⁶⁸:

Այդ խնդրի վերաբերյալ խորհրդային հետախուզությունը, որը ուշադրությամբ հետևում էր Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հետևանքով կովկասյան վտարանդիության շրջանում տեղի ունեցող զարգացումներին, 1941 թ. հուլիսին Թուրքիայում խորհրդային ռեզիդենտից ստացավ բազմակողմանի վերլուծությունների հիման վրա գրված տեղեկանք, որում պնդվում էր, թե «թուրքական կառավարությունը, ձգտելով ներկայումս չբացահայտել իր ծրագրերը և «կովկասյան հարցում» հետաքրքրվածությունը, Անվտանգության ծառայության և ռստիկանության քաղաքական բաժիններին հրահանգ է տվել արգելել վտարանդիության գործունեության օրինական ձևերը և որևէ ձեռնարկում, որը կարող է մեկնաբանվել որպես ԽՍՀՄ-ի նկատմամբ թշնամական: Մինևույն ժամանակ, թուրքական իշխանություններն իրենց հետախուզական ծառայությունների միջոցով անհրաժեշտ պատրաստություններ են տեսնում և իրենց վերահսկողության տակ են պահում վտարանդիության առաջնորդների ամբողջ գործունեությունը՝ ընդհուպ մինչև նրանց կապերը գերմանացիների ու ճապոնացիների հետ: Այդ գիծը կարելի է բացատրել այն բանով, որ թուրքերը չեն ցանկանում ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները սրել՝ դա համարելով վաղաժամ, բայց չեն ցանկանում նաև ձեռքից բաց թողնել նախաձեռնությունն ու

⁴⁶⁸Stu P. Ф. Мухаммеддинов. Зарождение и эволюция тюркизма (Из истории политической мысли и идеологии тюркских народов; Османская и Российская империи, Турция, СССР, СНГ 70-е гг. XIX в. – 90-е гг. XX в.). Казань, Изд-во «Заман», 1996, с. 166:

վտարանդիության «գնդափարական» հովանավորությունը, քանի որ իրենց կարծիքով՝ պատերազմի ժամանակ կարող է հնարավորություն ստեղծվել և հարմար պահ գալ, երբ նրանք կկարողանան ներկայացնել իրենց իրավունքներն Անդրկովկասի նկատմամբ, որտեղ, իհարկե, գերմանացիներին տեսնել չեն ուզում»⁴⁶⁹:

Երկրորդ համաշխարհային պատերազմը կովկասյան վտարանդիության համար դարձավ ակտիվ ռազմաքաղաքական գործունեության, Կովկասի ազատագրման ծրագրերի իրականացման փորձերի և հուսահատության շրջան:

⁴⁶⁹Stu Лев Соцков, указ раб., с. 1:

Կովկասյան մահմեդական վտարանդիության՝ թուրք-գերմանական համատեղ օգտագործման շրջան. 1939 - 1944 թթ.

Թուրքիայի աշխարհագրական դիրքը, հատկապես՝ նեղուցների վերահսկումը, պատերազմող կողմերի համար այդ երկիրը դարձրին հույժ կարևոր, ընդամին նրանցից յուրաքանչյուրը ջանաց Թուրքիային իր կողմը գրավել: Այդ հարցում ավելի հաջողակ գտնվեց ֆաշիստական Գերմանիան: Հիտլերի իշխանության գալուց հետո ակտիվացավ գերմանական կապիտալի ներհոսքը Թուրքիա, և 1939 թ. արտաքին առևտրի բնագավառում Գերմանիան զբաղեցրեց առաջին տեղը⁴⁷⁰: Թուրքական հասարակությունը, հատկապես՝ երիտասարդությունը, Գերմանիային վերաբերվում էր մեծ համակրանքով⁴⁷¹:

Թուրքիայի կարևորության հաշվառմամբ 1939 թ. ապրիլին Անկարայում Գերմանիայի դեսպան նշանակվեց նախկին ռայխսկանցլեր, նացիոնալ-սոցիալիստական կուսակցությանը իշխանության բերելու գործում նշանակալի դեր խաղացած Ֆրանց ֆոն Պապենը: 1941 թ. մարտի 4-ին Հիտլերը Թուրքիայի նախագահ Իսմեր Ինյունյուին պաշտոնապես տեղեկացրեց, որ Գերմանիան ամեննին էլ նպատակ չունի հարձակվելու Թուրքիայի վրա, իսկ 1941 թ. հունիսի 18-ին Անկարայում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Շուքրու Սարաջիօղլուն ու Գերմանիայի դեսպան ֆոն Պապենն ստորագրեցին չհարձակման մասին պակտ, ինչին նույն թվականի հոկտեմբերի 9-ին հաջորդեցին թուրք-գերմանական տնտեսական համաձայնագիրը և

⁴⁷⁰ Տե՛ս *H. M. Лавров*, указ. раб., с. 24:

⁴⁷¹ Տե՛ս *Yüksel Taşkın*. Anti-Komünizm ve Türk Milliyetçiliği: Endişe ve Pragmatizm. «Modern Türkiye’de Siyasi Düşünce», Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 620:

* Ֆոն Պապենն նշանակումը գերմանական ավանդույթի սահմաններում էր՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆոն Պապենը թուրքական բանակի կազմում մասնակցել էր մարտերին, պարգևատրվել էր կուր թուրքական բարձր շքանշաններով, քաջաձանդ էր երկրին և հասարակությանը (տե՛ս *Tuncay Özkan*, a.g.e., s. 175):

մինչև 1944 թ. Գերմանիային խրոմ վաճառելու մասին պայմանագիրը⁴⁷²: Գերմանիայի հետ ստորագրված մեկ այլ գաղտնի պայմանագրով Թուրքիան նրան թույլատրեց իր տարածքով զենք ու ռազմական ապրանքներ տեղափոխել⁴⁷³:

Եվ այսպես. Թուրքիան, չիզելով հարաբերությունները անգլո-ֆրանսիական բլոկի հետ և ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից հետո հայտարարելով իր չեզոքության մասին, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ մինչև 1944 թ., գործնականում Գերմանիայի դաշնակիցն էր⁴⁷⁴: Թուրքիան գերմանական նավերի համար բացեց նեղուցները, իսկ որոշ կառավարող շրջաններ բացեիբաց քննարկեցին ԽՍՀՄ-ի վրա հարձակման ծրագրերը: Սակայն պրագմատիկ և համակողմանի հաշվարկը Թուրքիային հետ պահեց նման քայլից:

Թուրքիայի տատանողական դիրքորոշման ցայտուն դրսևորումներից է վարչապետ Շուքրու Սարաջիօղլուի և Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի 1942 թ. օգոստոսի 27-ի հանդիպումը, որի ժամանակ Սարաջիօղլուն հայտարարեց, թե «որպես վարչապետ ստիպված է չեզոքության կողմնակից լինել, սակայն որպես թուրք շատ է ցանկանում Ռուսաստանի կործանումը, իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի մարդկային ներուժի զգալի ոչնչացմանը, սպա Գերմանիան և նրա դաշնակիցները ճիշտ ուղով են շարժվում»⁴⁷⁵:

Թուրքիայի իշխանական համակարգում հիմնական գերմանամետ օղակը Գլխավոր շտաբն էր, որի պետ մարշալ ֆեդի Չաքմաքը մի քանի անգամ փորձ կատարեց նախագահ Ինյունյուին համոզելու պատերազմին մասնակցել Գերմանիայի կողմում: 1942 թ. մայիսին Չաքմաքը ֆոն Պապենի հետ զրույցի ժամանակ կարծիք

⁴⁷² Տե՛ս *İsmail Soysal*, a.g.e., ss. 56 – 57:

⁴⁷³ Տե՛ս *H. M. Лавров*, указ. раб., с. 27:

⁴⁷⁴ Там же, с. 26, նաև՝ *Б. М. Поцхверия*. Внешняя политика Турции после второй мировой войны. М., Издательство «Наука», 1976, сс. 11 – 12:

⁴⁷⁵ Տե՛ս *H. M. Лавров*, указ. раб., с. 30:

հայտնեց, որ «ինքը անխուսափելի է համարում Թուրքիայի մասնակցությունը պատերազմին», ընդ որում, թուրքական բանակների հարձակումը կծավալվի Բաքվի ուղղությամբ⁴⁷⁶: Թուրքիայի Գլխավոր շտաբի պաշտոնյանները նախագահ Իսմեթ Բնյոնյուի իմացությամբ իրենց գերմանացի գործընկերների հետ քննարկեցին այն հարցը, որ ԽՍՀՄ-ի դեմ պատերազմին Թուրքիայի մասնակցելու գինը պետք է լինեն դաշնային պետության կազմում Ադրբեջանի հետ միավորումը և Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետությունների հետ համադաշնության կազմավորումը⁴⁷⁷:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց Թուրքիայի հնարավոր չէր Բալկաններում երկրորդ ճակատ բացել, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի թուրքական կառավարությանը համոզեն խզել Գերմանիայի հետ կապերը և անցնել դաշնակիցների կողմը: Թուրքիայի դիրքորոշումը հատկապես կարևոր էր 1942 թ., երբ մարտեր էին մղվում Հյուսիսային Կովկասում, և ՌԻ. Չերչիլի առաջարկությամբ Մտալինը պատրաստ գտնվեց Թուրքիային երաշխավորելու նրա տարածքային ամբողջականությունը⁴⁷⁸:

Պետական մակարդակով հայտարարված «չեզոքությունը» չէր խանգարում, որպեսզի Թուրքիան ու Գերմանիան մշակեին ԽՍՀՄ-ի դեմ

ուղղված համատեղ քայլեր և ծավալեին ակտիվ համագործակցություն, որում իր դերն ուներ կովկասյան քաղաքական վտարանդիությունը: Ընդհանուր առմամբ, կովկասյան վտարանդիության համատեղ օգտագործման շրջանը բնութագրելիս անհրաժեշտ է շեշտել, որ Թուրքիան ու Գերմանիան հավասարակից չէին. Թուրքիան հանդես էր գալիս ոչ թե որպես նախաձեռնող կողմ, այլ կրտսեր գործընկեր՝ շատ դեպքերում ստիպված լինելով իր շահերին հակառակ մասնակցել գերմանական ծրագրերի իրականացմանը: Այսպես, «Ձեպելին» օպերացիայի իրագործման ժամանակ ստեղծվեց մի պահ, երբ վտանգվեց Թուրքիայի ազգային անվտանգությունը, և ԽՍՀՄ-ը կոշտ հակազդեցություն ցուցաբերեց:

Հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում Թուրքիայի խուսափողական և հաճախ հակասական քայլերը հանգեցրին Թուրքիայի նկատմամբ աջամետների և ծայրահեղականների տածած վստահության սասանմանը: 1938–1939 թթ. Բեռլինում բնակություն էին հաստատել և Հյուսիսային Կովկասի ուղղությամբ իրականացվող գերմանական ծրագրերին ակտիվորեն մասնակցում էին հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության այնպիսի ճանաչված առաջնորդներ, ինչպիսիք էին Լեոնականների հանրապետության խորհրդարանի նախկին նախագահ Վասան-Գիրեյ Ջաբաղին, պրոֆեսոր Այթեք Նամիթթը, Իբրահիմ Չուլիկովը, գեներալ Լազար Բիչերախովը և ուրիշներ⁴⁷⁹:

1939 թ. կովկասյան քաղաքական վտարանդիության այլ ազգային հատվածների աչքում ևս Թուրքիայի հեղինակության ու դերակատարության նվազման վկայությունն է հետևյալ փաստը: Տվյալ շրջանում գերմանամետ վրացական քաղաքական վտարանդիությունը Թուրքիան դիտում էր ոչ թե որպես քաղաքական աջակցի ու դաշնակցի, այլ որպես ԽՍՀՄ-ի վրա հարձակման և նրա տարածքից Կովկաս

⁴⁷⁶ Там же, сс. 28 – 29:

⁴⁷⁷ Şku Ümit Özdağ. Türk Milliyetçiliği ve Jeopolitik. «Modern Türkiye’de Siyasi Düşüncüler», Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim Yayınları, 2002, s.175:

* Թուրքիային տրվող մեծ նշանակությունը ակնհայտ է դառնում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Բ. Մտալինի, Մեծ Բրիտանիայի վարչապետ ՌԻ. Չերչիլի և ԱՄՆ-ի նախագահ Թ. Ռուզվելտի նամակագրությունից (տես «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941 – 1945 гг.», тт. 1, 2. М., Госполитиздат, 1957):

⁴⁷⁸ Şku «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941–1945 гг.», т. 1, сс. 76–79.

⁴⁷⁹ Şku М. Д. Яндиева. Ингуши и Ингушетия в трудах и днях Абдурахмана Авторханова (К столетию со дня рождения) (<http://as-alan.com/index/index.php?view=article&catid>):

ներթափանցելու հարմար հենադաշտի: Նման մոտեցում ձևավորվելու ան ադրբեջանական ծայրահեղական վտարանդիության շրջանում, երբ «Մուսավաթ» կուսակցության եվրոպական հատվածի նոր կենտրոն դարձավ Բեռլինը: Ինչ վերաբերում է հայկական քաղաքական վտարանդիությանը, ապա այն մշտապես հայտնի էր իր հակաթուրքական կողմնորոշմամբ և միայն մի փոքր մասը՝ Դրոյի գլխավորությամբ, հայ ռազմագերիների կյանքը փրկելու և գերմանացիների հակահայկական տրամադրությունները վերահսկելու նպատակով կապեր հաստատեց ֆաշիստական Գերմանիայի ղեկավարության հետ⁴⁸⁰: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այդ խումբն ունեցավ թուրքական հատուկ ծառայության՝ Ստամբուլում և Արիմում գտնվող ներկայացուցիչների հետ մի շարք հանդիպումներ, որոնց նպատակն էր ի չիք դարձնել թուրքերի ու Արիմի թաթարների փորձերը գերմանական հրամանատարությանը տրամադրելու հայերի դեմ և հնարավորության սահմաններում կանխել հայերի հնարավոր տեղահանումն ու հրեաների հետ զանգվածային ոչնչացումը⁴⁸¹: Իսկ ընդհանուր առմամբ, հայ քաղաքական կուսակցությունները որդեգրեցին հակաֆաշիստական դիրքորոշում և ակտիվորեն մասնակցեցին Եվրոպայում դիմադրության շարժմանը, ինչպես նաև նյութապես ու բարոյապես օգնեցին Խորհրդային Հայաստանում ազգային գորամիավորումների կազմավորմանը⁴⁸²:

⁴⁸⁰Տես Միսաք Թորլաքեան, Օրերուս հետ: էջ 513 - 514:

⁴⁸¹Տես նույն տեղում, էջ 526:

⁴⁸² Այդ մասին տես, օրինակ, Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ հատոր: Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1967, էջ 170, նաև՝ ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2005 թ. 2-4-րդ միացյալ համարը: Միյուրքահայ համայնքների դիրքորոշման ցայտուն օրինակն է Ֆրանսիայի հայ համայնքը, որը, անտեսելով Ֆրանսիան գրաված գերմանական բանակի հրամանատարության կոչերը, ակտիվ կերպով մասնակցեց ֆրանսիական Դիմադրության շարժմանը: Կովկասյան քաղաքական վտարանդիության պատմությանը նվիրված հոդվածում օս գրող և պատմաբան Գ. Ա. Խետագորովը նշել է, որ «ի տարբերություն վրացականից, Ֆրանսիայում ապրող հայկական համայնքը մեծ մասամբ տոգորված էր հակագերմանական տրամադրություններով:

1940 թ. Ֆրանսիայի գրավումից հետո գերմանական յոշխանությունները հնարավորություն ստացան անմիջական շփման մեջ մտնելու Փարիզում գործող կովկասյան վտարանդիական կառույցների հետ:

Այն, որ Հյուսիսային Կովկասի և հյուսիսկովկասյան վտարանդիության ներուժը քաղաքական նպատակներով օգտագործելու տեսակետից առաջնությունն ու վճռորոշ դերն անցան Գերմանիային, զգալի չափով պայմանավորված է ֆաշիստական կառավարության հետևյալ երեք նախաձեռնություններով.

1. Գերմանիայում Հայկական, Վրացական, Ադրբեջանական և Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեների ստեղծում, ինչին հաջորդեցին վերմախտի կազմում ԽՍՀՄ ժողովուրդներից կազմված գորամիավորումների՝ այսպես կոչված «ազգային լեգեոնների» ձևավորումը և 1943 թ. կապի շտաբների կազմավորումը,
2. Թուրք դրածոների՝ Սաիդ Շամիլի և Նուրի փաշայի թեկնածությունների մերժումը և հրաժարումը նրանց ծառայություններից,
3. Կովկասյան վտարանդիության տարբեր զանգվածների հետ անմիջական համագործակցության մեխանիզմների ստեղծումը և ընդհանուր ռուսաստանյան քաղաքական վտարանդիության շրջանում տարածված «թեկուզ սատանայի»

Այնուամենայնիվ, գերմանացիների թուրքահայերի օգնությամբ հաջողվեց համայնքի առաջնորդ ընտրել իրենց մարդուն: Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող իրենց պատմական հայրենիքից Ֆրանսիա տեղափոխված հայերը նենգադուլի էին ենթարկում իրենց ղեկավարի, իսկ սվեյլի ստոյգ՝ գերմանական հրահանգները: Եվ երբ հայտարարվեց գերմանական բանակ վտարանդիների զորակոչը, վրացիների ճնշող մեծամասնությունն արձագանքեց դրան: Հայերը դարձյալ հիմնականում խուսափեցին: Միայն չեչին փոքրամասնությունն անցավ գերմանական բանակում ծառայության: Մինևույն ժամանակ, հայ համայնքի որոշ ներկայացուցիչներ ակտիվորեն մասնակցեցին ֆրանսիական դիմադրությանը, նրանց անուններով կոչվեցին ֆրանսիական քաղաքների փողոցներ» (տես Գ. Ա. Хетагуров. «...He говорит красиво» (www.darial-online.ru/2009_5/hetagurov1.shtml)):

հետ, բայց Ստալինի դեմ» սկզբունքի իրականացման համար հնարավորության ստեղծումը:

1942 թ. մարտ-ապրիլ ամիսներին Բեռլինում գումարվել կովկասյան վտարանդիության հատուկ համաժողով, որտեղ քննարկվել էր Կովկասի նկատմամբ Երրորդ ռայխի ապագա քաղաքականության հարցը: Կովկասյան վտարանդիության համաժողովին մասնակցելու նպատակով եվրոպական տարբեր պետություններից Բեռլին ժամանեցին նաև Հ. Յ. Դաշնակցությունը ներկայացնող մի շարք հայ քաղաքական գործիչներ. Դրաստամատ Կանայանը՝ Ռումինիայից, Գարեգին Նժդեհը՝ Բուլղարիայից, Ալեքսանդր Խատիսյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Վահան Փափազյանը, Արշակ Ջամալյանը, Արմեն Բուդաղյանը և Վիգեն Շանթը՝ Ֆրանսիայից⁴⁸³:

Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության աջ թևը՝ Հ. Բամատի գլխավորությամբ, առաջ քաշեց այն նախապայմանը, որ Ադոլֆ Հիտլերի կառավարությունը պաշտոնապես ճանաչի Հյուսիսային Կովկասի անկախությունը, ինչը կտրականապես մերժվեց գերմանացիների կողմից⁴⁸⁴:

1942 թ. ապրիլի 15-ին Գերմանիայում, ինչպես վերը նշվեց, կազմավորվեցին Հայկական, Վրացական, Ադրբեջանական և Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեները, կամ խորհուրդները, որոնց Հիտլերի կառավարությունը ճանաչեց որպես «իրավահավասար դաշնակիցներ»⁴⁸⁵: 1945 թ. մարտի 24-ին Գերմանիայի

կառավարությունը Բեռլինում գործող վտարանդիական կառույցները պաշտոնապես ճանաչեց որպես անկախ պետությունների կառավարություններ, սակայն այդ քայլն արդեն որևէ նշանակություն չէր կարող ունենալ: Ուշագրավ է, որ հաղթանակների շրջանում ֆաշիստական կառավարությունը խուսափում էր ԽՍՀՄ որևէ ազգության անկախությունը ճանաչելուց: Դրա վաղ ապացույցն է 1941 թ. դեկտեմբերին Ղրիմի թաթարների պատվիրակության այցը Թուրքիայից Բեռլին, որտեղ նա հանդիպումներ ունեցավ արտաքին գործերի նախարարությունում և արժանացավ Ադոլֆ Հիտլերի ընդունելությանը⁴⁸⁶: Երբ հանդիպման ժամանակ պատվիրակությունը բարձրացրեց Ղրիմի թերակղզու անկախության հարցը, Հիտլերը պատասխանեց, որ դրա մասին վաղ է խոսել, իսկ նման խնդիրները քննարկելու և որոշում կայացնելու հնարավորություն կլինի միայն Գերմանիայի վերջնական հաղթանակից հետո⁴⁸⁷:

Բեռլինում գործող Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեի անդամներ էին 1938 թ. Թուրքիայից վտարված Ալիսան Կանտեմիրը, Ահմեդ Նաբի Մագոման*, գեներալներ Մուլթան-Քլըջ Գիրեյը և Ռիլուգայը, Դայդաշ Թուքանը, Ջեմալդին Ալթոգաչը, Բարասի Բայթուգանը և Մուրատխանովը: Ինչպես երևում է, այդ գործիչների մեծ մասը Բեռլին տեղափոխվեց Թուրքիայից, ոմանք, ինչպես Նաբի Մագոման և Բարասի Բայթուգանը, Ստամբուլից տեղափոխվեցին Պրահա, ապա նոր բնակություն հաստատեցին Գերմանիայում: 1943 թ.

⁴⁸³ Տես «Դաշնակցության իսկական դեմքը», էջ 39:

⁴⁸⁴ Տես *Георгий Мамуля*, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация:

⁴⁸⁵ Տես *Միսաք Թորլարեան*, նշ. աշխ., էջ 569 - 570: Այդ ժամանակ Հայկական Ազգային խորհրդի նախագահ էր Արտաշես Աբեղյանը, իսկ անդամներ՝ Արտաշես Ջամալյանը, Դավիթ Դավիթխանյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Վահան Փափազյանը, Գարեգին Նժդեհը և ուրիշներ: Խորհրդի ջանքերով գերմանական համակենտրոնացման ճամբարներից «Հայկական ազգային լեգեոնի» համար հավաքագրվեց մոտ 8000 հայ ռազմագերի, ինչպես նաև գերմանական

իշխանությունները հայերին ճանաչեցին որպես արիական ազգ: Հայկական Ազգային Կոմիտեն հրատարակում էր «Հայաստան» թերթը (տես նույն տեղում):

⁴⁸⁶ Տես *Dr. Necip Hablmitoğlu*. Kırım'da Türk Soykırımı. İstanbul, İQ Kültür Sanat Yayıncılık, 2003, s. 49:

⁴⁸⁷ A.g.e.

* Ահմեդ Նաբի Մագոման Պրահայից Բեռլին տեղափոխվեց 1942 թ. և ակտիվորեն մասնակցեց հյուսիսկովկասյան վտարանդիական կազմակերպությունների գործունեությանը: Նույն թվականին ընտրվեց Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի նախագահ (տես *A. M. Муртазалиев*, указ. раб., с. 37):

հունվարին Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի անդամ ընտրվեց նաև Աբդուրահման Ավտորխանովը:

1941 թ. աշնանից վերնախտում սկսվեց ազգային գործադիր մարմինների ստեղծումը: Թեև գերմանական հրամանատարության նախաձեռնությամբ ռազմագերիներից փոքր զինված խմբեր ստեղծվում էին դեռ 1941-1945 թթ. Հայրենական պատերազմի առաջին ամիսներին, սակայն որոշ աղբյուրներում նշվում է, որ գերմանական բանակում օտարազգի զինվորական ստորաբաժանումներ ստեղծելու առաջարկությամբ հանդես եկան Արևելյան ռազմաճակատի մի շարք հատվածներ այցելելուց հետո 1941 թ. հոկտեմբերին Գերմանիա ժամանած և Հիտլերի հետ հանդիպում ունեցած թուրք գեներալներ Հուսեյն Հյուսնի Էրքիլեթն ու Ֆուսթ Էրդեները⁴⁸⁸: Այն, որ վերնախտում ազգային լեզուների ստեղծման գաղափարը պատկանում է թուրք գեներալներին, երկու պետությունների համագործակցության կարևոր վկայությունն է:

Սակայն դրան նախորդել էր մի այլ թուրք գեներալի՝ Էնվեր փաշայի եղբայր Նուրի Քիլիզիլի՝ առաջարկությունը: Գերմանական հրամանատարությունը 1941 թ. սեպտեմբերին Բեռլին էր հրավիրել Նուրի փաշային՝ նրա հետ խորհրդակցելու համար, և այդ ժամանակ էլ Նուրին առաջարկել էր ռազմագերի թուրքերից ու կովկասցիներից ստեղծել բանակ և դրա հրամանատար նշանակել իրեն: Դա, փաստորեն, գերմանացիների հովանու ներքո 1918 թ. «Իսլամական բանակի» գաղափարի վերակենդանացումն էր, ինչը դուր չեկավ վերնախտի

⁴⁸⁸ Steu Patrick von der Mühlen. Zwischen Hakenkreuz und Sowjetstern. Düsseldorf, 1971 (մեջբերվում է ըստ՝ Aydın O. Erkan. Tarih Boyunca Kafkasya. İstanbul, Çivi yazıları, 1999, ss. 139-141).

* Ինչպես և մյուս պանթուրանականները, Նուրի փաշան մեծ համակրանքով էր վերաբերվում ֆաշիստական Գերմանիային և Աթաթյուրքի վարած արտաքին քաղաքականությունը քննադատում որպես պարսկական (տես İbrahim Bahadır, a.g.e., s. 128):

հրամանատարությանը, և նա հրաժարվեց Նուրիի ծառայություններից⁴⁸⁹:

1941 թ. սեպտեմբերին Գերմանիայի Արևելյան նախարարության կազմում ստեղծվեց հյուսիսկովկասցի ռազմագերիների գծով հանձնաժողով, որը համակենտրոնացման ճամբարներում հավաքագրում էր ծրագրվող Հյուսիսկովկասյան լեզուներում ծառայել ցանկացողներին: Ազգային կոմիտեների անդամներից բացի, այդ գործում ներգրավված էին նաև լեռնական վտարանդիության այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք էին Վասան-Գիրեյ Ջաբաղին, Բեքսուլթան Բասիրխանը, գեներալ Սաֆալբեկ Մալսազովը, Սոզերքո Մալսազովը և ուրիշներ⁴⁹⁰: 1941 թ. հոկտեմբերին Պոլտավայում ընտրվեցին առաջին 700 հյուսիսկովկասցի և աղբյուրներից ռազմագերիները, որոնք ռազմական պատրաստման ուղարկվեցին Սիլեզիա: Նրանք դարձան արևելագիտության պրոֆեսոր, կապիտան Թեոդոր Օբեռլենդերի հրամանատարությամբ կազմավորված «Բերգման» (Լեռնական) դիվիզիայի հիմքը⁴⁹¹:

Նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո Ադոլֆ Հիտլերի 1941 թ. դեկտեմբերի 9-ի և 22-ի հատուկ հրամանների հիման վրա Ալֆրեդ Ռոզենբերգի ընդհանուր ղեկավարությամբ ստեղծվեցին թուրքեստանյան, հայկական, վրացական և կովկասցի մահմեդականների լեզուներ⁴⁹²: Վերջինս 1942 թ. փետրվարի 22-ին բաժանվեց երկու՝ հյուսիսկովկասյան և աղբյուրներից հայկական, լեզուների⁴⁹³: Այդ զինվորական ստորաբաժանումները վերահսկելու համար 1942 թ.

⁴⁸⁹ Steu Лев Соцков, указ. раб., с. 8:

⁴⁹⁰ Steu М. Д. Андиева, указ. раб.:

⁴⁹¹ Steu Aydın O. Erkan. a.g.e., s. 140:

⁴⁹² A.g.e.

⁴⁹³ Steu P. Трахо, указ. раб., с. 123: Ստեղծման պահին այն կոչվում էր «Bergkaukasien Legion» (Լեռնական կովկասյան լեզուներ):

դեկտեմբերի 15-ին ստեղծվեց Արևելյան զորքերի տեսչություն (General der Osttruppen), որի պետ նշանակվեց գեներալ Հելմիսը⁴⁹⁴:

Հյուսիսկովկասյան լեգեոնը, որում ընդգրկված էին Հյուսիսային Կովկասի 30 ազգությունների ներկայացուցիչներ, կազմավորվեց Լեհաստանում՝ Վեսոլ բնակավայրում: 1943 թ. վերջին ձևավորված էր 7 գումարտակ: Դրանց կազմի ու մարտական ուղու մասին պատկերացում է տալիս Բեռլինում Վրացական կապի շտաբի՝ ռազմական բաժնի պետ կապիտան Գիվի Գաբլիանու 1945 թ. մարտի 26-ին կազմած «Գերմանական վերմախտում կովկասյան կամավորական զորամիավորումների մասին հաշվետվությունը»⁴⁹⁵: Նա գրում է, որ կովկասյան լեգեոններն ստեղծվեցին 1942 թ. փետրվարի 22-ին, իսկ հետագայում դրանց հիման վրա կազմավորվեցին կովկասյան դաշտային գումարտակները⁴⁹⁶: Ընդհանուր առմամբ, ստեղծվեցին հյուսիսկովկասյան ութ գումարտակ՝ 800-րդ, 801-րդ, 802-րդ, 803-րդ, 835-րդ, 836-րդ, 842-րդ և 843-րդ, ինչպես նաև «Բերգման-III» գումարտակը⁴⁹⁷: Գերմանական զորքերում հյուսիսկովկասցիների թվաքանակը, ըստ Գաբլիանու, կազմում էր 13 100 հոգի⁴⁹⁸: Ըստ Հյուսիսկովկասյան լեգեոնի կազմում կրված պատմաբան Ռ. Տրախոյի՝

⁴⁹⁴ Տես Օ. Բ. Բոմանյո. Мусульманские легионы Третьего рейха. Мусульманские добровольческие формирования в германских вооруженных силах (1941-1945). Симферополь, 2002, с. 128:

⁴⁹⁵ 1943 թ. Ազգային խորհուրդներն սկսեցին ցրվել, և դրանց փոխարեն ստեղծվեցին Կապի շտաբներ (Штабы связи) (տես Միսիթ Թորլարեան, նշ. աշխ., էջ 571):

⁴⁹⁶ Տես Գիվի Գաբլիանու. О кавказских добровольческих соединениях в Германском Вермахте. (материал подготовлен Г. Мамулия, доктор истории, Париж). Историко-культурный журнал «PROMETHEUS», N2 (www.chechen.org/page.4.355-zhurnal-chast.html): Գիվի Գաբլիանիի պատրաստած հաշվետվությունը թարգմանել և մեկնաբանել է պատմագրության դոկտոր Գ. Մամուլյան:

⁴⁹⁶ Там же.

⁴⁹⁷ Там же.

⁴⁹⁸ Там же.

գերմանական բանակում ծառայող բոլոր հյուսիսկովկասցիների թիվը կազմել է 28 000, որոնցից սպաներ և ենթասպաներ՝ 670 հոգի⁴⁹⁹:

Հյուսիսկովկասյան զորամիավորումները մասնակցեցին Հյուսիսային Կովկասի համար մղված մարտերին՝ Կարաբաղայում, Գրոզնու և Մալգոբեկի մոտ⁵⁰⁰, իսկ գերմանական բանակի պարտությանը հետևած նահանջի ժամանակ նրանց միացան մոտ 7000 փախստական, որոնց մեծ մասը որպես կամավոր ծառայության անցավ այդ գումարտակներում: Հետագայում հյուսիսկովկասյան գումարտակները տեղափոխվեցին Ֆրանսիա, մի քանիսը՝ Հարավսլավիա՝

Վերմախտը բարձր գնահատեց հյուսիսկովկասյան լեգեոնի մարտունակությունը. այստեղ դասալրության դեպքերը հայկական և վրացական լեգեոնների համեմատությամբ սակավ էին: Հայտնի է ազգային ռազմական զորամիավորումների վերաբերյալ Հիտլերի այն խոսքը, որ ինքը կարող է վստահել միայն մահմեդականներին⁵⁰¹: Մարտական ոգու բարձրացման և տոկոսության քարոզման նպատակով Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեն սկսեց Բեռլինում հրատարակել «Ազդանշան (Сигнал)» հանդեսը և «Նոր ուղի (Новый путь)», «Նոր խոսք (Новое слово)», «Կամավորական (Доброволец)», «Կովկաս (Кавказ)», «Գազավաթ (Газават)» թերթերը, որոնք տարածվում էին լեգեոնի զինվորների շրջանում⁵⁰²:

Հյուսիսկովկասյան և թյուրքական լեգեոնների ստեղծմանը Թուրքիայի մասնակցությունը չի սահմանափակվում միայն «Հատուկ

⁴⁹⁹ Տես Ք. Թրախո, указ. раб., с. 123:

⁵⁰⁰ Там же.

⁵⁰¹ Ուշագրավ է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ոչ միայն գերմանական բանակում ստեղծվել էին հյուսիսկովկասյան զորամիավորումներ: Նույն տարիներին Սիրիայում տեղակայված ֆրանսիական զորքերի կազմում նույնպես չէրթեգական դիվիզիա էր ստեղծվել, որի հրամանատարն էր գնդապետ Կոլեն (տես Ք. Թրախո, указ. раб., 118):

⁵⁰¹ Տես Айдін Օ. Էրկան. а.г.е., с. 141:

⁵⁰² Տես Մ. Դ. Կուլիչևա, указ. раб.:

կազմակերպության» փորձի հիման վրա գերմանական վերնախավին այդ գաղափարի հուշումով: Թուրքական կառավարության խրախուսմամբ և ուղղորդմամբ տարբեր աստիճանի զինվորական ու քաղաքական գործիչներ, միանալով իրենց երկրում ապաստան գտած լեռնական վտարանդիության առաջնորդներին, հատուկ քարոզչական նպատակներով այցելում էին գերմանական համակենտրոնացման ճամբարներ, ռազմագերիներից զինվորների ընտրելու, ինչպես նաև գումարտակների մարտական ոգին բարձրացնելու համար հանդես գալիս հատուկ ելույթներով, որոնցում շեշտում էին Թուրքիայի լիակատար աջակցությունը Գերմանիայի վարած քաղաքականությանը: Հիտլերի համոզմամբ՝ պաշտոնապես չեզոքություն հռչակած, իրականում Գերմանիային դաշնակցող Թուրքիան գերմանական զորքի կողմից Կովկասը գրավելուց հետո ԽՍՀՄ-ին պատերազմ էր հայտարարելու⁵⁰³:

Հյուսիսային Կովկասին գերմանական բանակների մոտենալուն զուգահեռաբար գերմանական դիվանագիտությունն ակտիվացրեց իր ջանքերը՝ նպատակաուղղված Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելուն կամ վերնախտի անհաջողության դեպքում Թուրքիային ներգրավելուն Հյուսիսային Կովկասում՝ իտրիդային բանակի թիկունքում, հյուսիսկովկասյան վտարանդիության օգտագործմամբ լայնածավալ ապստամբության նախապատրաստական աշխատանքներում: 1941 թ. նոյեմբերին Անկարա ժամանեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարության մամուլի վարչության պետ Շմիդտը, որի հետ զրույցի ժամանակ ֆոն Պապենը ներկայացրեց իր ծրագրերը՝ ասելով, որ «եթե մինչև Կովկասի վրա գերմանական զորքերի հարձակումը ես այնտեղ ապստամբություն կամ թեկուզ խռովություն չկազմակերպեմ, ուրեմն այնտեղից եկող բոլոր

⁵⁰³ Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945», т. 3 «Коренной перелом в ходе Великой Отечественной войны (ноябрь 1942 – декабрь 1943)». М., Военное издательство, 1961, с. 87:

լրտեսները ստում են: Ինձ պետք են հավատարիմ մարդիկ, որքան էլ որ դա արժենա, ինձ անհրաժեշտ են թյուրքերի և մահմեդական կովկասցիների հետ կապեր: Այդ հարցում յուրաքանչյուր, թեկուզ և փոքր օգնությունն արժանիորեն կվարձատրվի»⁵⁰⁴:

Հյուսիսային Կովկասում կապեր հաստատելու և ապստամբություն հրահրելու Ֆրանց ֆոն Պապենի հույսերը հիմնված էին այն փաստի վրա, որ 1940 թ. ձմռանը Չեչնիայում բռնկվել էր Հուսեյն և Հասան Իսրայիլովների ապստամբությունը⁵⁰⁵: Այն տարածվել էր Չեչնիայի և Ինգուշեթիայի մի շարք շրջաններում, և Հասան Իսրայիլովը 1942 թ. հունվարի 28-ին Վլադիկավկազում հիմնադրել էր «Կովկասյան եղբայրների հատուկ կուսակցությունը (Особая партия кавказских братьев - ОПКБ)», որի կանոնադրությունում որպես կուսակցության նպատակ նշվում էր. «Գերմանական կայսրության մանդատով Կովկասում ստեղծել ազատ եղբայրական Դաշնային հանրապետություն, որում միավորմամբ կլինեն Կովկասի եղբայրական ժողովուրդների պետությունները»⁵⁰⁶: Հետագայում Գերմանիային ավելի հաճոյանալու համար Իսրայիլովն իր կուսակցությունը վերանվանեց «Կովկասյան եղբայրների նացիոնալ-սոցիալիստական կուսակցություն» և անդամների թիվը հասցրեց 5000-ի⁵⁰⁷:

1941 թ. նոյեմբերին Չեչենա-Ինգուշեթիայում Մայրբեք Շարիպովը հիմնադրեց «Չեչենալեռնական նացիոնալ-սոցիալիստական ընդհատակյա կազմակերպություն»⁵⁰⁸: Կովկասին գերմանական զորքերի մոտենալու ժամանակ՝ 1942 թ. օգոստոսին, Շարիպովին հաջողվեց ապստամբություն բարձրացնել Չեչնիայի Ուտում-Կալինսկի և Շատոյի շրջաններում⁵⁰⁹:

⁵⁰⁴ Там же.

⁵⁰⁵ Տե՛ս А. Авторханов, указ. раб., сс. 59-60:

⁵⁰⁶ Տե՛ս Игорь Пыхалов, указ. раб., с. 277:

⁵⁰⁷ Там же, с. 278:

⁵⁰⁸ Там же, с. 279:

⁵⁰⁹ Там же, с. 280:

Հյուսիսային Կովկասում ստեղծված հակախորհրդային կազմակերպություններին և ապստամբություններին բնորոշ էր այն ընդհանուր գիծը, որ դրանք ղեկավարում էին ոչ թե վտարանդիության ներկայացուցիչները կամ նրանց հետ կապ ունեցող անձինք, այլ կոմունիստական կուսակցության նախկին գործիչները, որոնք Կովկասի շրջանում զբաղեցրել էին ղեկավար պաշտոններ: Նրանք փորձում էին անմիջական կապ հաստատել գերմանական զորքերի հրամանատարության հետ և կովկասյան վտարանդիության միջնորդության կարիք չէին զգում: Մյուս կողմից՝ հայրենիքի հետ 1920-ական թթ. կովկասյան քաղաքական վտարանդիության կապերն արդեն թուլացել էին, շատ գործակալներ նախորդ տարիներին ձեռքակալվել, դատվել և աքսորվել էին: Նոր՝ խորհրդային, շրջանի վտարանդիությունը, օրինակ՝ Ա. Ավտորխանովը, հեռացել էին անձնական պատճառներով և կարող էին արդյունավետ կերպով օգտագործվել գաղափարական պատերազմում:

Հյուսիսային Կովկասում իրավիճակին չտիրապետելու և ցանկալին որպես իրողություն ներկայացնելու միտումը ակնհայտ կերպով դրսևորվեց 1942 թ. հունվարին ամբողջ կովկասյան վտարանդիության առաջնորդ դառնալու հավակնող Սաիդ Շամիլի և ֆաշիստական Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յուսիմ ֆոն Ռիբենտրոպի հանդիպման ժամանակ: Լսելով Սաիդ Շամիլի այն պնդումները, թե Հյուսիսային Կովկասը տոգորված է հակախորհրդային ընդլվզման տրամադրություններով, որ տարբեր վայրերում ապստամբություններ են ծագում, և գերմանական վերմախտի անգամ նվազ աջակցության դեպքում հյուսիսկովկասյան վտարանդիության ջանքերով հնարավոր է խորհրդային բանակի թիկունքում բարձրացնել համընդհանուր ապստամբություն, Ռիբենտրոպը նրան մոտ բերեց քարտեզին և խնդրեց ցույց տալ ապստամբության կոնկրետ շրջան,

որտեղ հնարավոր կլինի գերմանական դեսանտ իջեցնել: Սակայն Սաիդ Շամիլը նման վայր մատնանշել չկարողացավ⁵¹⁰:

Հետաքրքրական է, որ Բեռլինում Սաիդ Շամիլի ունեցած հանդիպումների* մասին տեղեկություններ խորհրդային հետախուզությանը հայտնեց նաև դաշնակից անգլիացիների ՄԻ-6 ծառայությունը՝ նշելով, որ գերմանացիների հրահանգով Շամիլն ակտիվացնում է լեռնական և ադրբեջանական քաղաքական վտարանդիության գործունեությունը⁵¹¹: Բրիտանական հետախուզությունը տեղեկացրեց նաև, որ այդ նույն նպատակով 1942 թ. սեպտեմբերին գերմանական իշխանությունները կազմակերպել էին կովկասյան վտարանդիության հավաք, որին հրավիրել էին Թուրքիայում բնակվող առաջնորդներին⁵¹²:

Ռիբենտրոպի հետ Սաիդ Շամիլի հանդիպումից հետո գերմանական իշխանությունները հրաժարվեցին նրա ծառայություններից և կովկասյան վտարանդիության տարբեր խմբավորումների հետ աշխատանքը շարունակեցին անմիջական շփումների միջոցով: Սաիդ Շամիլի հետ համագործակցությունից հրաժարման փաստը մեկ անգամ ևս ապացուցում է, որ Կովկասի մահմեդական քաղաքական վտարանդիության համատեղ օգտագործման քաղաքականությունում Թուրքիան էսպես զիջեց իր դիրքերը, քանի որ ԽՍՀՄ-ի վրա հարձակման վեցերորդ օրը Շամիլը թուրքական իշխանությունների հրահանգով Անկարայում հանդիպեց ֆոն Պապենի հետ, որն ինքը հարց բարձրացրեց, թե Կովկասի վրա

⁵¹⁰ Ств Лев Соцков, указ. раб., с. 9; Г. А. Хетагуров, указ. раб.:

* Բեռլինում Նուրի փաշայի՝ և Սաիդ Շամիլի, ինչպես նաև վրացիների, ադրբեջանցիների և լեռնականների պատվիրակությունների հանդիպումները հարուցել էին Հայկական Ազգային խորհրդի անդամների անհանգստությունը, քանի որ նրանք կասկածներ ունեին, որ դրանց ժամանակ այդ պատվիրակությունները գերմանական իշխանություններին տրամադրում են հայերի դեմ (տես «Պատմություն Հայ Յեղափոխական Դաշնակցության», էջ 343-344):

⁵¹¹ Ств Лев Соцков, указ. раб., с. 9:

⁵¹² Там же.

հարձակման ժամանակ գերմանական բանակին ի՞նչ օգնություն կարող է ցույց տալ կովկասյան մահմեդական վտարանդիությունը:

Խորհրդային հետախուզության հայթայթած տեղեկությունների համաձայն՝ Կովկասի ուղղությամբ գերմանական զորքերի հարձակման ժամանակ ֆոն Պապենը Թուրքիայի կառավարությանը առաջարկեց պատերազմի մեջ ներգրավվելու հետևյալ ծրագիրը: Կովկասի թյուրքական փոքրամասնությունը հռչակում է իր անկախությունը և պաշտոնապես դիմում Անկարային՝ նրանից օգնություն խնդրելով: Ի պատասխան այդ դիմումի՝ Թուրքիայի կառավարությունը հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ, որում շեշտում է, որ թուրք բնակչության պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով ստիպված է զորք մտցնել Ադրբեջան: Գերմանիան և նրա դաշնակիցները Թուրքիային ցույց են տալիս վճռական օգնություն, մինչդեռ Թուրքիան Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին վստահեցնում է, որ խոսքը ոչ թե նվաճման, այլ Կովկասի թյուրքալեզու բնակչության ժամանակավոր պաշտպանության մասին է⁵¹³: Սակայն թուրքական կառավարությունը մերժեց այդ առաջարկությունը, ինչն էլ դարձավ Գերմանիայի կողմից Թուրքիայի անպագա դերակատարության վերանայման պատճառներից մեկը: Համոզվելով, որ հակառակ տարբեր մակարդակներով տեղի ունեցող մասնավոր զրույցներում արտահայտված հավաստումներին՝ Թուրքիայի կառավարությունը բնավ նպատակ չունի ուղղակիորեն ներքաշվելու պատերազմի մեջ, իսկ Մտալինգրադում գերմանական բանակի պարտությունից հետո ավելի է ակտիվացնում շփումները հակադիր բլոկի հետ, Գերմանիան կովկասյան գործոնի օգտագործման ծրագրերում Թուրքիային հատկացրեց զուտ գործնական՝ կոնկրետ ծրագրերին և միջոցառումներին աջակցման դեր:

Փաստորեն 1939–1945 թթ. կովկասյան քաղաքական վտարանդիության թուրք-գերմանական համատեղ օգտագործման

⁵¹³ Там же.

քաղաքականությունը ծավալվեց հետևյալ երկու հիմնական ուղղություններով.

1. Թուրքիայի ակտիվ աջակցություն պանթուրքական տրամադրությունների և շարժումների օգտագործման հարցում,
2. լեռնականներից լրտեսների, քարոզիչների ու դիվերսանտների պատրաստում և ուղարկում տարածաշրջան:

Պանթուրքական տրամադրությունների գործնական օգտագործման նպատակով Գերմանիայի արտաքին գործերի նախարարության աշխատող Ալիմջան Իդրիսին 1941 թ. հունիսին ներկայացրեց պանթուրքականության վերաբերյալ մի գեկուցագիր, որում շեշտում էր ԽՍՀՄ թյուրքալեզու ժողովուրդների ձգտումը միավորվելու, անկախանալու և ստեղծելու «Մեծ Թուրան»⁵¹⁴: Արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյա ֆոն Հենդիզը պատերազմի առաջին օրերին հանդիպումներ ունեցավ թյուրքալեզու վտարանդիության մի շարք առաջնորդների հետ և այն սպավորությունն ստացավ, թե ԽՍՀՄ թյուրքալեզու ժողովուրդները պահպանել են իրենց կառույցները և Թուրքիայում ու Ռուսաստանում ունեն հավատարիմ մարդիկ⁵¹⁵:

⁵¹⁴ Ств Искандер Гилязов. Тюркизм: становление и развитие (характеристика основных этапов). Казань, 2002, сс. 54-55: Իր հայացքներով Ալիմջան Իդրիսին մոտ էր Բամայիլ Գասպրինսկուն, որը Ռուսական կայսրությանը մեղադրում էր այն բանում, որ նա, սատարելով «թյուրքական նեղ ազգայնական ինքնությանը», տարբերակելով նողայ թաթարներին, Վուզայի թաթարներին և այլ թյուրքական ազգությունների, ոչնչացնում է «միասնական թյուրքական ինքնությունը» (տես Dr. Necip Hablmitoğlu, a.g.e., s. 332): Իդրիսին թյուրքական վտարանդիության առաջնորդներին, այդ թվում՝ Մ. Ռասուլգադեին, Մուստաֆա Չոքային, Ջաֆեր Սելիդահմետին, որոնք պաշտպանում էին ոչ թե միասնական «Մեծ Թուրանի», այլ անկախ թյուրքական պետությունների ստեղծման գաղափարը, անվանում էր «անջատողականներ» և քննադատում նրանց (տես Искандер Гилязов, указ. раб., с. 55):

⁵¹⁵ Ств Искандер Гилязов, указ. раб., с. 55:

Գերմանիայի իշխանական շրջաններում գոյություն ունեցող պատկերացումները ամրապնդվում էին ֆոն Պապենի զեկույցներով, որը համոզմունք էր հայտնում, թե պատերազմում գերմանական զորքերի հաջողություններին զուգահեռաբար ԽՍՀՄ-ում թափ է առնելու պանթուրանական շարժումը: 1941 թ. օգոստոսի 5-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կարգադրությամբ ֆոն Պապենը Թուրքիայում պատրաստեց պանթուրանական շարժման մասին տեղեկանք: Դրանում նա նշեց, որ Թուրքիայում այս խնդրի նկատմամբ հետաքրքրությունն աճել է, իսկ պանթուրանականության առաջնորդները, օրինակ՝ Նուրի փաշան, Մեմդուխ Շեքերը, գեներալ Հուսնու Էմիր Էրքիլեթը, հանդես են գալիս հոգուտ խորհրդային թյուրքերին ռազմական օգնություն ցույց տալու և Թուրքիայի սահմանները փոփոխելու գաղափարի⁵¹⁶:

Ներկայացված տեղեկանքների և հանդիպումների արդյունքը եղավ այն, որ 1941 թ. հոկտեմբերին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունում ստեղծվեց պանթուրքական շարժման համար հատուկ պատասխանատուի պաշտոն, որում նշանակվեց ֆոն Հետինգը⁵¹⁷: Նրա պատրաստած հերթական տեղեկանքում ներկայացված էին առաջարկություններ, թե ինչպես կարող է Գերմանիան այդ շարժումն օգտագործել հոգուտ իր շահերի: Դրանցում ներառված էր քարոզչությունը՝ ռադիոհաղորդումների, թռուցիկների, մահմեդական ռազմագերիների համար հրատարակվող հանդեսի, լրտեսների պատրաստման և թյուրքալեզու շրջաններ ուղարկման միջոցով⁵¹⁸:

Պանթուրքական քարոզչության հաջողության համար, հատկապես՝ կովկասյան և թաթարական վտարանդիության օգտագործման դեպքում, մեծ կարևորություն կունենար Թուրքիայի

աջակցությունը: Թուրքական իշխանությունների համար այդ գործում ներգրավվելը հարմար և դյուրին տարբերակ էր, քանի որ դա հնարավոր էր անել ոչ պաշտոնական մակարդակով՝ պահպանելով տարաշարժի հնարավորություններ: 1942 թ. ապրիլին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Շյուքրու Մարաջիօղլուն հայտարարեց, որ Թուրքիան պանթուրանական ծրագրում չի կարող պաշտոնապես աջակցել Գերմանիային, սակայն մի շարք անձանց թույլ տվեց այդ հարցով կապեր հաստատել Գերմանիայի հետ⁵¹⁹: Թուրքիայում պանթուրքական շարժման և պանթուրքականների ազդեցության մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար Նուրի փաշան դեռ 1941 թ. հրավիրվեց Բեռլին, իսկ 1941 թ. հոկտեմբերին Հիտլերի ռազմակայան այցելեց թուրք պանթուրքականների պատվիրակությունը՝ գեներալ Էրքիլեթի զլխավորությամբ⁵²⁰:

ՌԻ-շագրավ է, որ Նուրի փաշայի և 1941 թ. օգոստոսի 5-ին Ռիբենտրոպի հետ հանդիպում ունեցած Գերմանիայում Թուրքիայի դեսպան Գերեդեի կարծիքները համընկնում էին այն բանում, որ Թուրքիան կարող է աջակցել պանթուրքական շարժմանը, պատրաստ լինել ակտիվ քարոզչություն վարելու, բայց՝ ոչ պաշտոնական մակարդակով⁵²¹:

1942 թ. պանթուրքական քարոզչության նպատակով Ղրիմ մեկնեցին մի խումբ թուրք լրագրողներ, այդ թվում՝ այնպիսի ճանաչված անձինք, ինչպիսիք էին Նեջմեթին Մադաքը, Սելիմ Մարփերը, Նադիր Նադին, Հիքմեթ Թունան, Ասիմ Ռիսը⁵²²: Թուրքական պատվիրակությունները պարբերաբար այցելում էին ԽՍՀՄ գրավված հարավային շրջաններ, ապա մեկնում Բեռլին, որտեղ Հիտլերի և Գերբլաի հետ քննարկում էին «Մեծ Թուրանի» ստեղծման ծրագրերը⁵²³:

⁵¹⁹ Там же, с. 60:

⁵²⁰ Տե՛ս *Н. М. Лавров*, указ. раб., с. 28:

⁵²¹ Տե՛ս *Искандер Гилязов*, указ. раб., сс. 56 – 57:

⁵²² Տե՛ս *Dr. Necip Hablmitoğlu*, a.g.e., s. 52:

⁵²³ Տե՛ս *Н. Г. Киреев*, указ. раб., с. 28:

⁵¹⁶ Там же.

⁵¹⁷ Там же, с. 58:

⁵¹⁸ Там же.

Թուրքական հասարակությունում պանթուրքական շարժման ակտիվության անմիջական հետևանք եղավ նման տրամադրությունների տարածումը նաև չերքեզական փոքրամասնության շրջանում: Թուրքիայի չերքեզական համայնքի մտավորականությունն առաջ քաշեց պանթուրքականության ու Կովկասի ազատագրման ծրագրերի փոխկապվածության գաղափարը և հյուսիսկովկասցիների թյուրքական ծագման մասին վարկածը: Նման «գիտական» հիմնավորումներում առաջնությունը պատկանում էր վտարանդիության ներկայացուցիչներին, մասնավորապես՝ Քաղըրջան Քաֆլուն, որը ծնողների հետ Թուրքիա էր գաղթել 1907 թ.⁵²⁴: 1942 թ. Ստամբուլում լույս տեսավ նրա «Հյուսիսային Կովկաս. Ընդհանուր տեղեկություններ – Պատմություն – Գեղեցիկ արհեստներ ու մշակույթ» գիրքը, որում նա ապացուցում էր չերքեզների թյուրքական ծագումը՝ հիմնվելով այնպիսի «գիտական» փաստարկների վրա, ինչպիսին է, օրինակ, «չերքեզ» և «ղրղըզ» ցեղանունների հնչյունային նմանությունը, իսկ Դաղստանի ավարներին համարում էր ուրալ-ալթայան թյուրքական ցեղ⁵²⁵: Հեղինակը, Հյուսիսային Կովկասի ազատագրումը կապելով պանթուրքական ծրագրերի հետ՝ գրում է, որ այն «պետք է դառնա թուրքական միության հիմնասյունը»⁵²⁶: Հետաքրքրական է նաև

⁵²⁴ Տե՛ս *A. M. Муртазалиев*, указ. раб., с. 47:

⁵²⁵ Տե՛ս *Kadircan Kafli*, a.g.e., ss. 26, 32–33: Հարկ է նշել, որ հանրապետական Թուրքիայում հյուսիսկովկասյան ազգերին թյուրքական ծագում վերագրելու միտումը պահպանվեց մինչև 1990-ական թվականների վերջը: Այսպես, 1994 թ. թուրքական «Մաբահ» օրաթերթը ծաղրեց ռուսներին, թե նրանք չեչեններին թյուրք չեն համարում, գրելով, որ «ռուսները չեչենների մասին այնպես են խոսում, կարծես նրանք թյուրքեր չլինեն: Անհետողականությունն ակնհայտ է» (տես «*Sabah*», 31 Aralık 1994): Հյուսիսկովկասյան ժողովուրդների թյուրքական ծագման՝ Քաֆլու «գիտական» հիմնավորման ավանդույթը ևս շարունակվեց հետագա տարիներին: Օրինակ՝ 1993 թ. լույս տեսած և 1995 թ. վերահրատարակված «Չեչեններ» գրքում Շամիլ Մանսուրը չեչեններին համարում է «ավար թյուրքերի մի ճյուղ» և որպես չեչենների թյուրքական ծագման ապացույց բերում է Չեչնիայի դրոշին գայլի պատկերումը (տես *Şamil Mansur*, Çeçenler. Ankara, Sam Yayınları, 1995, s. 173):

⁵²⁶ Տե՛ս *Şamil Mansur*, a.g.e., s. 9:

հեղինակի այն միտքը, որ նա, որպես օրինակ բերելով Չեխոսլովակիայում մահացած Ահմեթ Յալիկովին (Չալիքաթը), պնդում է, թե «հյուսիսկովկասցիները, կտրվելով իրենց հայրենիքից, չեն կարող ապրել Թուրքիայից բացի որևէ այլ վայրում, նույնիսկ՝ Եվրոպայում»⁵²⁷:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին թուրքական հասարակությունում պանթուրքական տրամադրությունների նվազման հետ մեկտեղ, Քաղիբջան Քաֆլըն որոշ փոփոխություններ կատարեց հյուսիսկովկասյան ժողովուրդների թյուրքական ծագման իր թեզում՝ ազգագրական առումից անցում կատարելով դեպի քաղաքական: Այսպես, Պշիմախո Կոսոքի հուշերի առաջաբանում նա գրեց. «Թեև Հյուսիսային Կովկասում խոսում են բազմաթիվ լեզուներով, այդուհանդերձ տիրապետող լեզուն թուրքերենն է: Վերջապես, այդ հարցին նվիրված մի քանի համաժողովներում թյուրքերենը հռչակվել է որպես պետական լեզու: Հյուսիսային Կովկասի բնակչության առնվազն 90 %-ը թյուրք է և մահմեդական»⁵²⁸:

Չնայած որոշ չերքեզ գրողներ Քաղիբջան Քաֆլուն քննադատեցին որպես չափազանց թուրքամետի և իսլամամետի⁵²⁹, սակայն նրա աշխատությունը որոշակիորեն արտացոլեց Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքում այն ժամանակ տիրած իրավիճակը: Ստամբուլի հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության որոշ հատվածը՝ Պշիմախո Կոսոքի գլխավորությամբ, ոգևորված Թուրանի ստեղծման ծրագրերով, կազմակերպեց խորհրդակցություններ, որտեղ քննարկվեցին անկախ «Չերքեզստանի» ստեղծման ծրագրերը⁵³⁰: Այդ խորհրդակցությունների ժամանակ առաջին անգամ հնչեցվեց չերքեզների անկախության գաղափարը տարածելու և դրան միջազգային հանրության աջակցությունն ապահովելու նպատակով

⁵²⁷ A.g.e., s. 180:

⁵²⁸ Տե՛ս *Pşimaho Kosok*, a.g.e., s. 6:

⁵²⁹ Տե՛ս *İzzet Aydemir*, a.g.e., s. 71:

⁵³⁰ Տե՛ս *Лев Соцков*, указ. раб., с. 10:

համաչերքեզական ցանց ստեղծելու միտքը. այդ ցանցը պետք է գործնական կապ ապահովեր տարբեր երկրներում բնակվող չերքեզական համայնքների միջև⁵³¹: Քանի որ գործը դուրս էր եկել զուտ հյուսիսկովկասյան վտարանդիության սահմաններից և ներառում էր բոլոր չերքեզական համայնքները, ապա այդ գաղափարը լուրջ կերպով անհանգստացրեց թուրքական հետախուզությանը: Ազգայնամոլական տրամադրությունների ակտիվացումը և չերքեզական ինքնության զարթոնքը չէին համապատասխանում Թուրքիայի շահերին, քանի որ կարող էին ձախողել թուրքերի հետ չերքեզների ձուլման քաղաքականությունը: 1942 թ. հունիսի 6-ին ԱԱՕ-ի ղեկավար Մեհմետ Նաջի Փերքելը Ստամբուլի մասնաճյուղի տնօրենին ուղարկեց հետևյալ բովանդակությամբ հրահանգ. «Թուրքական ժողովուրդների ակտիվության հետևանքը եղավ այն, որ նման ակտիվություն ցուցաբերում են նաև չերքեզները: Մենք չենք կասկածում, որ դա գերմանացիների գործն է, ինչպես արդեն տեսել ենք մեր երկրում ապրող ադրբեջանցիների օրինակով: Դա կարող է հակակառավարական ցույցերի պատճառ դառնալ: Չերքեզները բնակվում են մեր տարբեր շրջաններում, բայց՝ հոծ խմբերով: Այդ պատճառով օգտակար է գտնել այս շարժմանը հակազդեցության միջոցներ, և այն ոչնչացնել դեռ սաղմնային վիճակում: Կարծում ենք, որ հարկավոր է հրավիրել Պշենախոյին և հարցնել նրան, թե ինչ է մտադիր անելու, և զգուշացնել նրան ու մյուսներին, որ եթե շարունակեն այդ ուղղությամբ գործել, ապա անմիջապես կվտարվեն մեր պետության սահմաններից: Եթե դուք նույն կարծիքին եք, կխնդրեի ձեռնարկել համապատասխան միջոցներ»⁵³²:

Այս մեջբերումը ապացուցում է, որ թուրքական իշխանությունները անհանգստանում էին, որ իր էթնիկական ինքնագիտակցությունը դեռ չկորցրած և այն հայրենիք վերադառնալու

⁵³¹ Там же.

⁵³² Там же.

հույսերով սնուցող հյուսիսկովկասյան վտարանդիությունը կարող է նման ձգտումներ զարթնեցնել նաև Թուրքիայի չերքեզական համայնքի շրջանում, թեև նա համարվում էր թուրքական ազգային ինքնության մեջ տարալուծվող մահմեդական տարր:

Հարկ է նշել, որ պակությունության ոչ բոլոր գաղափարախոսներն էին հյուսիսկովկասցիներին դիտում որպես ԽՍՀՄ-ի դեմ պայքարում դաշնակիցների և արդարացված համարում այդ ուղղությամբ նրանց հետ տարվող աշխատանքները: Ծայրահեղական գաղափարախոսները, ինչպիսին էր, օրինակ Նիհալ Աթսըզը, առաջնորդվելով «թուրքին ընկեր կարող է լինել միայն թուրքը» հայտնի կարգախոսով, Թուրքիայում ապրող ոչ թուրք ազգային փոքրամասնություններին համարում էին թշնամի ու վտանգավոր տարր^{*}:

1943 թ. արևելյան ռազմաճակատում գերմանական զորքերի կրած պարտությունների հետևանքով և անգլո-ամերիկյան Բլոկին Թուրքիայի հարելու հետ մեկտեղ պակությունության նկատմամբ նրա կառավարող շրջանների վերաբերմունքն սկսեց փոխվել: 1943 թ. Ազգային մեծ ժողովում պատգամավորներն արդեն հանդես էին գալիս պանթուրքականության քննադատությամբ, իսկ 1944 թ. Իսմեթ Ինյոնյուն, ջանալով կանխել Մոսկվայի կողմից Անկարային՝

* Այսպես. 1941 թ. մայիսին իր որդուն գրված նամակ-կտակում Ն. Աթսըզը, թվարկելով թուրքերին թշնամի ժողովուրդներին, գրել է. «Զբեաները բոլոր ժողովուրդների գաղտնի թշնամիներն են: Ռուսները, չինացիները, իրանցիները, իսպանացիները, թշնամիներն են դեռ վաղ ժամանակներից: Բուլղարները, գերմանացիները, իտալացիները, իսպանացիները, պորտուգալացիները, ռումինները՝ մեր նոր թշնամիներն են, իսկ ճապոնացիները, աֆղանները, ամերիկացիները՝ մեր ապագա թշնամիներն են: Հայերը, քրդերը, լազերը, չերքեզները, արևազները, բոսնիացիները, արբանացիները, վրացիները, չեչենները, գնչուները՝ մեր ներքին թշնամիներն են: Տեսնում ես, թե որքան շատ թշնամի ունենք մենք» (տես. «Yönl», 1962, № 13, մեջբերվում է ըստ Յ. Յու. Դասնովա. *Идеология буржуазного национализма в Турции в период правления младотурок (1908-1914 гг.)*. Баку, Издательство Академии наук Азербайджанской ССР, 1966, сс. 149-150):

պանթուրքական շարժմանը սատարելու մեջ մեղադրանքների ներկայացումը, մայիս ամսին կազմակերպեց պանթուրքական գործիչների դաստավարություն⁵³³:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հյուսիսկովկասյան վտարանդիության համատեղ թուրք-գերմանական օգտագործման իրական և ամենաարդյունավետ ոլորտը լեռնականներից լրտեսների, դիվերսանտների, Հյուսիսային Կովկասում հուզումների ու ապստամբությունների հրահրիչների պատրաստումն ու տարածաշրջան ուղարկումն էր: Նման համագործակցության համար հիմք դարձավ 1941 թ. հունիսի 18-ին կնքված երկկողմ պայմանագիրը, որը գերմանական գաղտնի ծառայությանը հնարավորություն տվեց Թուրքիայի տարածքն օգտագործելու իր նպատակներով⁵³⁴:

1942 թ. օգոստոսին Ստամբուլ երկօրյա գաղտնի այցով ժամանեց Աբվերի ղեկավար ծովակալ Կանարիսը⁵³⁵: Ըստ այդ այցի ժամանակ ձեռք բերված համաձայնությունների՝ 1942 թ. Աբվերը Թուրքիայում լեռնականներից և աղբրեջանցիներից կազմավորեց «Ջեպելին (Zepelin)» գործակալական խումբը, որը նախատեսվում էր փոխադրել Բաքու և Գրոզնու շրջան՝ կանխելու նահանջող խորհրդային զորքերի կողմից նավթագործարանների պայթեցումը: Այդ գործակալական խմբի պատրաստման ու տեղափոխման գործում գերմանացիներին ակտիվ կերպով աջակցեցին թուրքական հատուկ ծառայությունները՝ ընտրելով իրենց տարածքում գտնվող հավատարիմ ու վստահելի լեռնականներին և նրանց վարժեցումը կազմակերպելով արևելյան վիլայեթներում տեղաբաշխված գորակայաններում: Սակայն խորհրդա-թուրքական սանհանն անցած «Ջեպելինի» գործակալների մի մասը խորհրդային հակահետախուզության կողմից ձեռքակալվեց, ինչը Անկարային բողոքի

⁵³³ Տես *Umit Özdağ*, a.g.e., s. 175: Նրանց թվում էին գեներալ Էրքիլետը և հետագայում «Ազգայնական շարժում» կուսակցության հիմնադիր գնդապետ Ալիարսլան Թյուրքեշը:

⁵³⁴ Տես *Tuncay Özkan*, a.g.e., s. 172:

⁵³⁵ Տես *Лев Соцков*, указ. раб., с. 11:

խորհրդային նոտա ներկայացնելու պատճառ եղավ⁵³⁶: Թուրքական գաղտնի ծառայությունների պատմության մասնագետ Թունջայ Օզքանի պնդմամբ՝ այդ բողոքի նոտան «Ջեպելին» օպերացիան դադարեցնելու պատճառ դարձավ, թեև Թուրքիայի և Գերմանիայի գաղտնի ծառայությունների համագործակցությունը շարունակվեց նաև հետագայում⁵³⁷: Իրականում «Ջեպելին» օպերացիան դադարեցվեց, քանի որ Կովկասի մատույցներում գերմանական բանակի կրած անհաջողությունների հետևանքով կորցրեց իր իմաստը:

Այրուհանպերձ, հյուսիսկովկասյան վտարանդիությունից ընտրված մարդկանց միջոցով Հյուսիսային Կովկասում ձեռնարկված դիվերսիոն և խորհրդային բանակի թիկունքում՝ ապստամբական գործողություններից կարելի է նշել երկուսը: Առաջինը գերմանական բանակի սպա Ռեկերտի դիվերսիոն խմբի կողմից Չեչնիայի Վեդենոյի և Չեբեռոյի շրջաններում կազմակերպված ապստամբությունն է, որը, սակայն, կարճ ժամանակում ճնշվեց⁵³⁸: Երկրորդը 1942 թ. օգոստոսի 25-ին Չեչնիայի Գալանջոյի շրջանում պարաշուտներով իջեցված Օսման Մայդնուրովի խմբի գործողությունն է⁵³⁹:

Որպեսզի պարզենք, թե լեռնական վտարանդիության միջոցով ինչ ծրագրեր էր նախատեսվում իրականացնել Հյուսիսային Կովկասում՝ այն զավթելուց հետո, նպատակահարմար է ուսումնասիրել Ղրիմի օրինակը՝ գերմանական զորքերի կողմից այն գրավվելուց հետո: Խոսքը վերաբերում է ազգային կոմիտեների ստեղծմանը, որոնք կոչված էին հայրենակիցների շրջանում քարոզչություն վարելու և աջակցելու բռնազավթական իշխանությունների հրահանգների կատարմանը: ԽՍՀՄ ներքին

⁵³⁶ Տես *Tuncay Özkan*, a.g.e., s. 173:

⁵³⁷ A.g.e.

⁵³⁸ Տես *Игорь Пыхалов*, указ. раб., с. 281:

⁵³⁹ Там же, с. 286: Օսման Մայդնուրովը 1921 թ. արտագաղթել էր Թուրքիա, որտեղ ընդունել էր Գուբե ազգանունը, իսկ 1938 թ. հակախորհրդային գործունեություն վարելու համար ի թիվս «Կովկաս» խմբի այլ անդամների արտաքսվել էր Թուրքիայից:

գործերի ժողկոմ Լ. Բերիան 1944 թ. մայիսի 10-ին Բ. Ստալինին գրված զեկուցագրում նշեց, որ Ղրիմում «գերմանաֆաշիստական զավթիչները Գերմանիայից և Թուրքիայից ժամանած սպիտակզավարդիական մահմեդական վտարանդիների օգնությամբ ստեղծեցին այսպես կոչված «թաթարական ազգային կոմիտեներ» լայնատարած ցանց, որը գոյություն ուներ Ղրիմի բոլոր թաթարական շրջաններում»⁵⁴⁰:

1944 թ. ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն ընդունեց «Ղրիմի թաթարների մասին որոշում», որում նշված էր, որ «Ղրիմի թաթարներն ակտիվորեն համագործակցում էին գերմանական բռնազավթիչական իշխանությունների հետ՝ մասնակցելով գերմանական հետախուզության կողմից կազմավորված այսպես կոչված «թաթարական ազգային կոմիտեների» գործունեությանը և լայնորեն օգտագործվում էին գերմանացիների կողմից՝ Կարմիր բանակի թիկունք լրտեսներ և դիվերսանտներ ուղարկելու համար: «Թաթարական ազգային կոմիտեները», որոնցում զլխավոր դերը պատկանում էր սպիտակզավարդիական թաթար վտարանդիներին, Ղրիմի թաթարների աջակցությամբ իրենց գործունեությունն ուղղել էին ոչ թաթար բնակչության ճնշմանն ու հետապնդմանը և աշխատանք էին տանում, որպեսզի գերմանական զինված ուժերի օգնությամբ բռնի կերպով Ղրիմն անջատեն Խորհրդային Միությունից»⁵⁴¹:

Նման սցենար նախատեսված էր նաև Հյուսիսային Կովկասի բռնազավթված տարածքների համար: Մոսկվայում Գերմանիայի նախկին ռազմական կցորդ գեներալ Կեստրինգը նշանակվեց «կովկասյան ժողովուրդների և կազակների հարցերով խորհրդական» և իր հետ Ռոստով բերեց կովկասյան մահմեդական վտարանդիության մի քանի դեկավարների, իսկ կազակների հետ համագործակցություն հաստատելու նպատակով՝ գեներալներ Շկուրոյին և Կրասնովին⁵⁴²:

Համատեղ գործողություններից բացի, Թուրքիայի հետախուզական ծառայությունը պատերազմի ընթացքում Կովկասում ստեղծեց նաև լեռնականների առանձին գործակալական ցանց, քանի որ այդ ժամանակ ուշադրությունը հիմնականում կենտրոնացած էր երկու տարածաշրջանի՝ Բալկանների և Կովկասի վրա⁵⁴³: Կովկասյան ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգման համար ստեղծվեց Արևելյան նահանգների անվտանգության կենտրոնակայան: Ընդամին հետախուզական ծառայության մի քանի դեկավար պաշտոններ վստահվեցին լեռնական վտարանդիներին: Թուրքիայում ապրող աղբբեջանցիներից և լեռնականներից ընտրված գործակալներն ուղարկվում էին Անկարայի Քեչիորեն թաղամասում գտնվող հետախուզության կենտրոնակայան, որտեղ ստանում էին դիվերսիոն և պարտիզանական պայքար վարելու պատրաստություն, ապա Արևելյան նահանգների անվտանգության՝ Էրզրումի և Կարսի մասնաճյուղերի միջոցով երկու և երեք հոգուց կազմված խմբերով տեղափոխվում Խորհրդային Միություն⁵⁴⁴: Խորհրդային Միությունում զոհվածների ընտանիքները «հայրենիքին ծառայության ցուցակի» համաձայն ամսական ռոճիկ էին ստանում⁵⁴⁵: Թուրքական զինվորական հետախուզությունը շարունակեց լավ հարաբերություններ պահպանել և օգտագործել նաև կովկասյան մահմեդականության այն հատվածը, որը հրաժարվել էր գերմանացիների հետ համագործակցությունից, ինչպես, օրինակ, Հ. Բամատը:

1943 թ. փետրվարին Ստալինգրադի ճակատամարտը նշանավորեց երկրորդ համաշխարհային պատերազմում արևմտական բեկումը⁵⁴⁶: Գերմանական զորքերի կրած պարտությունների պայմաններում էական փոփոխություններ կատարվեցին նաև

⁵⁴⁰ Տե՛ս ԳԱՐՓ, փ. P-9401, օր. 2, ժ. 65, լժ. 41-43:

⁵⁴¹ Տե՛ս նույն տեղում, թթ. 44-48:

⁵⁴² Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945», т. 3, с. 88:

⁵⁴³ Տե՛ս Tuncay Özkan, a.g.e., s. 185:

⁵⁴⁴ A.g.e.

⁵⁴⁵ A.g.e.

⁵⁴⁶ Տե՛ս «История Великой Отечественной войны», т. 3, сс. 64-80:

կովկասյան վտարանդիության օգտագործման ռազմավարությունում: Այսուհետև կովկասյան վտարանդիությունը գերմանական հրամանատարությանը հետաքրքրում էր զուտ որպես ռազմական ռեսուրս: 1943 թ. սեպտեմբերին Բեռլինում կազմակերպվեց կովկասյան քաղաքական վտարանդիության ևս մեկ հավաք, որի օրակարգում էր այն հարցը, թե ինչպես կարելի է մեծացնել կովկասյան լեզեռնների թվաքանակը:

1943 թ. կովկասյան վտարանդիության շարքերում նկատվեց հուսահատություն, գործիչների մեծ մասը լքեց Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնը: Այսպես. Հ. Բամատը 1943 թ. հուլիսին Ժորժ Ռիվուար մականվամբ հրապարակեց իր վերջին քաղաքական հոդվածը, որում քննադատեց Գերմանիայի վարած անհետառեսական քաղաքականությունը: 1943 թ. նա ընդունեց Աֆղանստանի կառավարության առաջարկությունը և դարձավ Ժնևում նրա դիվանագիտական ներկայացուցիչը, ապա ընդհանրապես հեռացավ քաղաքական գործունեությունից և իրեն նվիրեց իսլամի գիտական ուսումնասիրությանը՝ այն համարելով միակ ուժը, որը հետագայում կարող է ապահովել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների միասնությունը:

Այդ զարգացումների հաշվառմամբ, ինչպես նաև Կովկասի ժողովուրդների և Գերմանիայի միջև քաղաքական համագործակցության ու վստահության աստիճանը բարձրացնելու նպատակով 1943 թ. հոկտեմբերին ազգային կենտրոններին գուգահեռաբար ստեղծվեցին կապի շտաբներ, որոնք դիտվում էին որպես միասնական Կովկասյան գնդի, այնուհետև՝ Կովկասյան ազատագրական բանակի ստեղծմանը նպաստող կառույցներ⁵⁴⁷: 1945 թ. մարտի 19-ին Կովկասյան ազգային կենտրոնները լուծարվեցին, իսկ

⁵⁴⁷ Տե՛ս *Гиви Габлиани*, указ. раб.:

Կովկասյան կապի շտաբները ճանաչվեցին որպես կովկասյան անկախ պետությունների կառավարություններ⁵⁴⁸:

Հյուսիսային Կովկասի և քաղաքական վտարանդիության օգտագործման հարցում գերմանա-թուրքական համագործակցության արդյունք եղավ այն, որ Խորհրդային կառավարության կողմից Հյուսիսային Կովկասի մի քանի ժողովուրդների ներկայացվեց կոլլաբորացիոնիզմի մեջ մեղադրանք, և 1944 թ. փետրվարին նրանք արտաքսվեցին Միջին Ասիա: Մասնավորապես՝ չեչենների և ինգուշների տեղահանության օպերացիան ստացավ «Չեչնիցա» անվանումը և իրականացվեց մեկ շաբաթվա ընթացքում, ընդ որում՝ առանց բնակչության կողմից որևէ լուրջ դիմադրության⁵⁴⁹:

⁵⁴⁸ Там же.

⁵⁴⁹ Տե՛ս *Игорь Пыхалов*, указ. раб., сс. 297–308: Նույն ճակատագրին արժանացան նաև Արիմի թաթարները, որոնց հետ մեկտեղ Բեռլինին ու Ստամբուլին գործակցելու մեղադրանքով տարահանվեց թերակզու նաև հայ, հույն և բուլղար բնակչությունը (там же, сс. 126–128): Համաշխարհային և թուրքական մամուլում հյուսիսկովկասյան ժողովուրդների ու Արիմի թաթարների տեղահանման մասին լուրը հրապարակվեց միայն տեղահանությունից երկու տարի անց՝ 1947 թ., ընդ որում, թուրքական մամուլում դրան առաջինը անդրադարձավ «Ջուհուրիյեթ» օրաթերթի սյունակագիրներից Աբիդին Դավերը՝ հղում կատարելով «Աստշիլեթեդ Փրես» գործակալությանը (տե՛ս *Şamil Mansur*, a.g.e., s. 95; *Dr. Necip Hablmitoğlu*, a.g.e., s. 74):

Գլուխ III

Քաղաքական թատերաբեմից հյուսիսկովկասյան վտարանդիության՝
որպես գործոնի հետազոտումը և Թուրքիայի չերքեզական համայնքին նրա
ինտեգրման շրջանը.

1945 - 1971 թթ.

Լեզեոնականների հավաքագրումն ու տեղափոխումը Թուրքիա

1945 - 1952 թթ.

Խորհրդային կառավարության ունեցած տեղեկությունների ու
հաշվարկների համաձայն՝ 1944 թ. դրությամբ հայրենիքից դուրս
գտնվում էր մոտ 5 մլն ԽՍՀՄ քաղաքացի, որոնցից մոտ 2 մլ-ը՝ Կարմիր
բանակի գործողությունների շրջանում, իսկ 3 մլ-ը՝ հայտնվել էր
դաշնակիցներին բաժին հասած բռնազավթված գոտիներում⁵⁵⁰: 1944 թ.
հոկտեմբերին խորհրդային քաղաքացիներին հայրենիք վերադարձնելու
համար ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց
հայրենադարձման հարցերով վարչություն, որը ղեկավարեց ռազմական
հետախուզության նախկին պետ գեներալ-գնդապետ Ֆ. Ի. Գոլիկովը⁵⁵¹:

1945 թ. փետրվարի 10-ին և 11-ին Յալթայի խորհրդաժողովում
դաշնակից պետությունների ղեկավարները կայացրեցին տեղափոխված
անձանց (D.P. - displaced person) փոխադարձ պարտադիր
հայրենադարձման վերաբերյալ որոշում: 1945 թ. մարտի 13-ին և
հունիսի 26-ին ԽՍՀՄ-ը հայրենադարձման վերաբերյալ պայմանագրեր
կնքեց նաև Ֆրանսիայի և Բելգիայի հետ⁵⁵²:

⁵⁵⁰ Стен Витор Земсков. Репатриация перемещенных советских граждан
(http://scepsis.ru/library/id_1234.html):

⁵⁵¹ Там же.

⁵⁵² Там же.

Ըստ ձեռք բերված պայմանավորվածությունների՝ դաշնակից
պետություններն առանց որևէ խոչընդոտի և կարճ ժամկետում պետք է
իրար փոխանցեին իրենց բռնազավթված գոտում հայտնված այլ
պետության քաղաքացիներին: ԽՍՀՄ քաղաքացիների դեպքում այդ
զանգվածը բաղկացած էր երեք մասից: Առաջին՝ ամենասովոր,
հատվածը կազմում էր Գերմանիայի տարածք զանգվածաբար քշված
բնակչությունը, որն օգտագործվում էր որպես էժան աշխատուժ և
կոչվում էր «օստարբայտեր», այսինքն՝ արևելյան աշխատավոր:
Երկրորդ խումբը խորհրդային ռազմագերիներն էին: Եվ երրորդ՝
վերջին, խումբը կազմում էին գերմանական բանակի շարքերում կռված
լեզեոնականներն ու այլ կամավորներ: Դրանց հետ մեկտեղ
դաշնակիցները խորհրդային հրամանատարության
ներկայացուցիչներին փոխանցեցին նաև սպիտակզվարդիական
վտարանդիության ներկայացուցիչներից կազմված
գորամիավորումների մարտիկներին: Վերջիններիս հանձնումը
հակասում էր ստորագրված փաստաթղթերին, որոնցում նշված էր, որ
վերադարձման ենթակա են այն անձինք, որոնք ԽՍՀՄ քաղաքացի էին
եղել 1939 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գոյություն ունեցած
սահմաններում:

Այս երեք խմբերից առավել ծանր բախտ էր վիճակված
լեզեոնականներին և սպիտակզվարդիական վտարանդի
կամավորականներին, ոչոնք ԽՍՀՄ-ում դատապարտվելու էին
մահապատժի կամ 25 տարվա տաժանակիր աշխատանքների: Մինևույն
ժամանակ, ազգային լեզեոնների անդամները ենթակա էին հանձման
առաջին հերթին, քանի որ գերի էին վերցվում գերմանական
զինվորական համազգեստով և ընկալվում որպես «դավաճան»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ
հայրենադարձման գործընթացը տեղի ունեցավ մի քանի փուլով, որոնք
պատմաբան Օ. Ռոմանկոն բնորոշում է որպես 1944-1947 թթ.

ժամանակամիջոցում ընթացած «ալիքներ»⁵⁵³: Հենվելով գերմանացի պատմաբան Ի. Շոֆմանի ուսումնասիրության վրա՝ Օ. Ռոմանկոն նշում է, որ 1944–1946 թթ. ԽՍՀՄ-ին հանձնվել է վերմախտի կամավոր ազգային ստորաբաժանումների կազմում մարտնչած 32529 մարդ⁵⁵⁴: Այսպես, Դանիայում տեղաբաշխված 836-րդ հյուսիսկովկասյան գումարտակն ամբողջ կազմով հանձնվեց անգլիական զորքերին, որոնք էլ բոլորին փոխանցեցին խորհրդային զորքերին⁵⁵⁵:

Լեզեոնականների և կամավորների հայրենադարձման գործընթացը աչքի ընկավ մի քանի ողբերգական դեպքերով: Հասկանալով, թե ԽՍՀՄ վերադառնալուց հետո ինչ ճակատագիր է իրենց սպասում, բռնի հայրենադարձվողները, որոնք հիմնականում խորհրդային զորքերի դեմ կռված կամավորներ էին, զանգվածային ինքնասպանություն էին գործում: Հյուսիսկովկասյան վտարանդիության պատմության մեջ հայրենադարձման հետ կապված ամենատրֆալի դեպքը պատահեց 1945 թ. մայիսին Ավստրիայի Օբերդորֆուրգ քաղաքի մերձակայքում, որտեղ հավաքել էին Կովկասյան լեզեոնի 4800 զինվորի՝ գեներալ Սուլթան Քլըչ Գիրեյի հրամանատարությամբ: 1945 թ. մայիսի 28-ին անգլիական հրամանատարության հետ խորհրդակցության պատրվակով գեներալ Գիրեյը և 125 հյուսիսկովկասցի սպա առանձնացվեցին զինվորներից և իրենց ընտանիքներից ու տեղափոխվեցին Շպիտալ քաղաքի մոտակայքում

⁵⁵³ Стю О. В. Романько. Забытый урок Ялтинской конференции. К вопросу о насильственной репатриации членов “восточных” добровольческих формирований западными союзниками в СССР (1945-1947). «Историческое наследие Крыма», N 9, 2005 (<http://a-pesni.golosa.info/ww2/oficial/krym/a-zaburok.htm>):

⁵⁵⁴ Там же. ԽՍՀՄ-ին հանձնված հայ լեզեոնականներն իրենց ընտանիքներով արտաքսվեցին Ալթայի երկրամաս: Հայկական ԽՍՀ-ից արտաքսվածների ընդհանուր քվաքանակը 1956 թ. դրությամբ կազմում էր 2698 ընթանիք, որոնց թվում նաև «գերմանական զորամասերում (լեզեոն) ծառայության համար արտաքսվածները», բայց նրանց ստույգ թիվը նշված չէ (տես «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 332):

⁵⁵⁵ Стю П. Трахо, указ. раб., с. 123:

գտնվող ու խիստ վերահսկվող ճամբար⁵⁵⁶: 1945 թ. հունիսի 1-ին անգլիական զորքերը շրջապատեցին առանց հրամանատարության մնացած հյուսիսկովկասցիներին ու վերմախտում գեներալ-մայոր Դոմանովի հրամանատարությամբ կազմված կազակական կորպուսի կազակներին և տեղափոխեցին Պեզեց ճամբար՝ խորհրդային հրամանատարությանը հանձնելու նպատակով: Հյուսիսկովկասցիներն ու կազակները, լավ պատկերացնելով սպասվելիքը, փորձեցին փախուստի դիմել, բայց անգլիացի զինվորները կրակ բացեցին, և տեղում զոհվեց մոտ 700 հոգի⁵⁵⁷: Մնացածներին մայիսի 29-ին տեղափոխեցին Յուդենբուրգ և հանձնեցին խորհրդային հրամանատարությանը: ԽՍՀՄ-ում Սուլթան Գիրեյը գեներալներ Վլասովի և Շկուրոյի հետ մահապատժի ենթարկվեց: Ազգային գումարտակների զինվորների 20 %-ը ԽՍՀՄ-ում կա՛մ գնդակահարվեց, կա՛մ դատապարտվեց 20 տարվա տաժանակիր աշխատանքների, ինչը հավասարազոր էր մահապատժի⁵⁵⁸:

Հարկ է նշել, որ նախկին լեզեոնական, պատմաբան Ռ. Տրախտն փոքր-ինչ այլ տվյալներ է հաղորդում Դրինա գետի հովտում խորհրդային հրամանատարությանը հանձնված հյուսիսկովկասցի լեզեոնականների մասին: Ըստ նրա՝ անգլիացիները խորհրդային հրամանատարությանը որպես «ռազմական հանցագործների» հանձնեցին 170 սպայի և 5 000 զինվորի ու քաղաքական փախստականի, որոնք հավաքվել էին Օբերդորֆուրգի և Դելաիի շրջանում⁵⁵⁹:

1945 թ. ամռանը անգլիացիները Հաննովեր քաղաքի մոտակայքում խորհրդային զորքերին հանձնեցին Հյուսիսկովկասյան լեզեոնի՝ չեչեններից և ինգուշներից կազմված ջոկատը⁵⁶⁰, ինչպես նաև

⁵⁵⁶ Стю О. В. Романько, указ. раб.:

⁵⁵⁷ Там же.

⁵⁵⁸ Там же.

⁵⁵⁹ Стю П. Трахо, указ. раб., с. 123:

⁵⁶⁰ Стю А. Авторханов, указ. раб., с. 5:

Իտալիայի հյուսիսում գերևարված 162-րդ «Թյուրքական հետևակային գունդը»⁵⁶¹:

Այս պայմաններում հյուսիսկովկասցի ու թյուրք լեզոնականներն ապաստան գտան Թուրքիայում, որը թե՛ պաշտոնական մակարդակով, թե՛ հատուկ ստեղծված համայնքային փախստական կոմիտեի միջոցով կազմակերպեց ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական գործերի վերահսկողության տակ գտնվող գոտիներում եղած համակենտրոնացման ճամբարներում նրանց հավաքագրումն ու տեղափոխումը Թուրքիա, ընդ որում՝ հարկ եղած դեպքում անմիջապես թուրքական քաղաքացիություն տրամադրելով⁵⁶²: Այս գործում զգալի դերակատարություն ունեցան 1920-ական թվականների հյուսիսկովկասյան վտարանդիության առաջնորդները և նրանց կողմից այդ նպատակով Թուրքիայում ստեղծված առաջին հյուսիսկովկասյան բարեգործական կազմակերպությունը: Այսպես, Փարիզում լույս տեսնող «Ռուսկայա միսլ (Русская мысль)» հանդեսը, 1972 թ. հրատարակելով Թուրքիայում հյուսիսկովկասյան համայնքի ակտիվ հասարակական գործիչներից մեկի՝ Բեքսուլթան Բատիրխանի՝ մահախոսականը, գրեց. «Բեքսուլթանն իր հայրենակիցների համար պատերազմից հետո շատ բարի գործեր կատարեց, երբ բազմաթիվ հյուսիսկովկասցի փախստականներ Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի ճամբարներում հայտնվեցին ծանր դրության մեջ: Երբ այդ խեղճ մարդկանց սպառնում էր հանձման վտանգը, Բեքսուլթանը,

⁵⁶¹ Տե՛ս *O. B. Ромашко*, указ. раб.:

⁵⁶² Տե՛ս «*Рамазан Трахо и Эльбрус Хадарцев*», Историко-культурный журнал «PROMETHEUS», № 2, (www.chechen.org/page_6,355-zhurnal-chast.html): Նրանց թվում էր Ռամազան Տրախոն, որը, կոմիտեի հյուսիսկովկասյան գումարտակներից մեկի շարքերում, ենթակա էր ԽՍՀՄ վերադարձման, բայց հյուսիսկովկասյան բարեգործական կազմակերպության ջանքերով 1949 թ. փետրվարին հայտնվեց Թուրքիայում, ստացավ քաղաքացիություն, ընդունվեց Անկարայի համալսարան, իսկ 1951 թ. վերադարձավ Գերմանիա և բնակություն հաստատեց Սյուրխեունում (там же):

* Իսկական անունն էր Բեքսուլթան Բամայիլի Կոտին (1888-1972): Նա Թուրքիա էր տեղափոխվել 1920 թ. Վրանգելի բանակի հետ (տե՛ս *М. Д. Яндиева*, указ. раб.):

օգտագործելով Թուրքիայի կառավարող շրջանների հետ իր կապերը, հասավ այն բանին, որ նրանց թույլ տրվեց տեղափոխվել Թուրքիա: Նա շոայլաբար իր քսակն էր տրամադրում ճամբարներում գտնվող հայրենակիցներին օգնելու համար»⁵⁶³:

1945–1947 թթ. Թուրքիայում հյուսիսկովկասյան վտարանդիությանն ապաստան տալու գործում մեծ համբավի արժանացավ հյուսիսկովկասյան համայնքի անվանի գործիչ, 1918 թ. դեպի Կովկաս կատարված արշավանքի մասնակից, «Կովկասը պատմության մեջ» գրքի հեղինակ, զեներալ Իսմայիլ Բերքոբի հետևյալ արարքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին մի խումբ լեռնականների ու թյուրքերի հաջողվեց Կովկասից փախչել Թուրքիա, որտեղ նրանք Սինոպ քաղաքում ձերբակալվեցին: Քաղաքում տեղակայված զնդի հրամանատար Իսմայիլ Բերքոբը թեև ստացել էր փախստականներին խորհրդային իշխանության ներկայացուցիչներին հանձնելու հրահանգ, սակայն հայտարարեց, թե՛ «ես ինձ վրա նման մեղք չեմ վերցնի», և հրաժարվեց հրամանը կատարելուց, ինչի համար պաշտոնանկ արվեց, սակայն փախստականները փրկվեցին ԽՍՀՄ վերադառնալուց⁵⁶⁴:

Բերքոբի օրինակն առանձնահատուկ էր, քանի որ թուրքական իշխանությունները, Եվրոպայում լեզոնականներին հավաքելու և Թուրքիա տեղափոխելու հետ մեկտեղ, իրենց տարածքում հայտնված մի խումբ խորհրդային քաղաքացիների, ընդ որում՝ թյուրքական ծագում ունեցողների, ստիպված եղան հանձնել ԽՍՀՄ-ին⁵⁶⁵: Թուրք դիվանագետ Ֆերիդուն Ջեմալ Էրքինի գնահատմամբ՝ այս քայլը Թուրքիայի համար ունեցավ բացասական հետևանքներ, քանի որ

⁵⁶³ Там же.

⁵⁶⁴ Տե՛ս *İzzet Aydemir*, a.g.e., s. 28:

⁵⁶⁵ Տե՛ս *Yrd. Doç. Dr. Sebahattin Şimşir*. *Azerbaycan'ın İstiklal Mücadelesi*. İstanbul, İQ Kültürsanat Yayıncılık, 2002, s. 135:

խորհրդային իշխանություններին առիթ տվեց այն մեկնաբանելու որպես Թուրքիայի թուլության ապացույց⁵⁶⁶:

Վերամխտում ծառայած լեզեռնականների հավաքման և Թուրքիա տեղափոխման գործընթացն ուշադրավ է այն առումով, որ Թուրքիայի Հանրապետության իշխանությունները 1923 թ. չերքեզական կազմակերպությունները փակելուց հետո 1946 թ. առաջին անգամ թույլատրեցին հիմնադրել բարեգործական բնույթի չերքեզական կազմակերպություն: Քաղաքական ենթատեքստով այն կոչվեց «Բարեկամի ձեռք փոխօգնության միություն»⁵⁶⁷: Միությունը նպատակ հռչակեց ռազմագերիներին օգնություն ցույց տալը, իսկ զուտ չերքեզական կազմակերպություն լինելու քննադատություններից զերծ մնալու ու նորաստեղծ կառույցին համաթուրքական բնույթ հաղորդելու նպատակով անդամագրեց մի քանի ադրբեջանցիների՝ որպես իրեն նախաստիպ վերցնելով 1920-ական թթ. գոյություն ունեցած Ադրբեջանալեռնական կոմիտեն⁵⁶⁸: Հետագայում՝ 1953 թվականին, ադրբեջանական զանգվածը կազմակերպությունից դուրս եկավ, և «Բարեկամի ձեռք փոխօգնության միությունը» վերածվեց «Կովկասյան միության (Kafkas Derneği)»⁵⁶⁹:

«Բարեկամի ձեռք փոխօգնության միություն» կազմակերպության ստեղծման նպատկները պարզաբանող և գործունեության ոլորտը նկարագրող գրքույկում նշված էր, որ այն «որևէ քաղաքական նպատակ չի հետապնդում և զուտ բարեգործական կառույց է»⁵⁷⁰: Այնուհետև պարզաբանված էր, որ «մեր նպատակը անդամների միջև ծանոթության,

⁵⁶⁶ Stü Cemal Erkin Feridun. Türk-Sovyet İlişkileri ve Boğazlar Meselesi. Ankara, 1968, s. 253:

⁵⁶⁷ Stü Alexandre Toumarkine. Kafkas ve Balkan Göçmen Dernekleri: Sivil Toplum ve Milliyetçilik. «Türkiyede Sivil Toplum ve Milliyetçilik», İstanbul, İletişim, 2001, s. 426:

⁵⁶⁸ Stü Alexandre Toumarkine, a.g.e., s. 426:

⁵⁶⁹ A.g.e.

⁵⁷⁰ Stü Erol Taymaz. Kuzey Kafkas Dernekleri. «Türkiye'de Sivil Toplum ve Milliyetçilik», İstanbul, İletişim, 2001, s. 453:

միավորման, փոխօգնության ապահովումն է, մշակույթի մակարդակի բարձրացումը, երիտասարդ սերնդին զարգանալու հնարավորություն տալը: Փախստական հայրենակիցներին և աղքատներին նյութական ու հոգևոր օգնության ցուցաբերումը, չքավոր ուսանողներին գրքերով ապահովումը, հնարավորության դեպքում հանդեսի հրապարակումը, հիվանդ անդամների մասին հոգածությունը, նրանց բուժման ապահովումը, անհրաժեշտության դեպքում՝ հիվանդանոցային ծախսերի կարգի սոցիալական ծառայությունների մատուցումը»⁵⁷¹: Մակայն Թուրքիայում ապաստան տալու միջոցով նախկին լեզեռնականներին հետապնդումից փրկելը ինքնին ոչ թե բարեգործական, այլ քաղաքական ձեռնարկում էր:

«Բարեկամի ձեռք փոխօգնության միության» ստեղծումը կարելի է համարել Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնության պատմության համար շրջադարձային քայլ, քանի որ, բացի այն հանգամանքից, որ երկար դադարից հետո՝ թերուզ և սահմանափակ իրավունքներով, վերականգնվեց չերքեզական կազմակերպություններից մեկը, առաջին անգամ մի կազմակերպության շրջանակներում միավորվեցին և իրենց ջանքերը համատեղեցին քաղաքական վտարանդիության և Օսմանյան կայսրության օրոք երկրում ձևավորված չերքեզական համայնքի գործիչները: 1920 – 1930-ական թթ. Թուրքիայում գոյություն ունեին զուտ վտարանդիական կազմակերպություններ ու խմբավորումներ, որոնցում չերքեզական համայնքն ընդգրկված չէր, իսկ 1946 թ. ստեղծված այս կազմակերպությունը, փաստորեն, նշանավորեց մեկ հյուսիսկովկասյան հանրության մեջ երկու զանգվածների միաձուլման գործընթացի սկիզբը: ԽՍՀՄ-ի կողմից ներկայացված պահանջների պարագայում⁵⁷² Թուրքիայի արտաքին քաղաքականության

⁵⁷¹ A.g.e.

⁵⁷² 1945 թ. նեղուցների կարգավիճակը փոխելու, այնտեղ ԽՍՀՄ-ին զորակայան հիմնելու իրավունք տալու և 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով զիջաց

տեսակետից՝ նման համայնքային կազմակերպության միջոցով գործելու եղանակը լիովին համապատասխանում էր թուրքական ավանդական քաղաքականության տրամաբանությանը, ըստ որի՝ պետական մակարդակով կատարվող գործողությունները քողարկվում էին՝ ներկայացվելով որպես որևէ ազգային փոքրամասնության կամ էթնիկական համայնքի կողմից ձեռնարկված քայլեր:

«Բարեկամի ձեռք փոխօգնության միությունը» սերտորեն համագործակցեց Թուրքիայում և տարբեր եվրոպական պետություններում գտնվող կովկասյան մահմեդական վտարանդիական կազմակերպությունների հետ՝ նրանցից ստանալով ռազմագերիների ցուցակներ ու գտնվելու վայրերի (համակենտրոնացման ճամբարների) մասին տեղեկություններ: Այսպես. Գերմանիայում այդ հարցով կազմակերպության հետ ակտիվ կերպով համագործակցում էր Ահմեթ Նաբի Մագոման⁵⁷³:

Կովկասյան և թուրքական լեզեռնականներին պետական մակարդակով հավաքելու և Թուրքիա տեղափոխելու համար համայնքային բարեգործական կազմակերպությունից զատ ստեղծվեց «Թյուրք վտարանդիների տեղափոխման կոմիտե», որի Գերմանիայի կենտրոնակայանը գտնվում էր Մյունխեն քաղաքում: Կոմիտեի գործունեությունն իր հուշերում լուսաբանեց թուրքեստանյան գումարտակներից մեկի զինվոր, այդ կառույցի կողմից Թուրքիա տեղափոխված Մուրատ Թաչմիրատը. «Այդ ժամանակ մենք լսեցինք, որ թյուրքական ազգությունների վտարանդիներին՝ թուրքմենների, ուզբեկների, դազախների, դրդգների, թաթարների Թուրքիա տեղափոխելու համար Մյունխեն քաղաքում Կոմիտե է ստեղծվել: Այդ կոմիտեն նշված ազգությունների վտարանդիներին, թուրք ճանաչելով,

տարածքները վերադարձնելու ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված պահանջների մասին ավելի հանգամանորեն տես «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.», Под редакцией Армана Киракосяна. Ереван, 2010:

⁵⁷³ Տես *А. М. Муртазалиев*, указ. раб., с. 37:

համապատասխան վկայականներ է տալիս և պաշտպանում զինվորական իշխանությունների առաջ: Այսպիսով՝ մենք թողեցինք Տյուրքինզենը և տեղափոխվեցինք Մյունխեն: Այնտեղ մենք տեսանք, որ իրոք այդ Թուրքական կոմիտեն իր պաշտպանության տակ է վերցրել թյուրքական ծագում ունեցող բոլոր փախստականներին, նրանց տեղափոխել մեծ ճամբար և ապահովել սննդով, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում նրանց Թուրքիա տեղափոխելու ուղղությամբ: ...Նույն 1946 թ. մեր ճամբարը տեղափոխեցին Վերին Բավարիայի Մուլթեվալդ քաղաքում գտնվող գերմանական լեռնային հրաձիգների նախկին զորանոցներ: Բավարիայում տեղաբաշխվող ամերիկյան բանակում Թուրքիայի ներկայացուցիչ կապիտան Իսսան ՈՒՆԵԱՐ Մյունխենի Թուրքական կոմիտեի նախաձեռնությամբ, գուցե և թուրքական կառավարության աջակցությամբ այցելեց մեր ճամբարը և գրանցեց նրանց, ովքեր տեղափոխվելու էին Թուրքիա: ...Մինչդեռ պարզվեց, որ Թուրքիա այդ թյուրքերի արտագաղթը հեշտ բան չէ, քանի որ, առաջինը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովը անհանգստանում էր, թե նրանց շրջանում կարող են լինել մեծ թվով լրտեսներ, երկրորդ, ուժեղանում էր Խորհրդային Միության ճնշումը իր դաշնակիցների, ինչպես նաև Թուրքիայի վրա՝ այդ մարդկանց իրեն հանձնելու պահանջով»⁵⁷⁴:

1946 – 1948 թթ. Թուրքիա տեղափոխված հյուսիսկովկասցիների թիվը դժվար է ճշգրիտ որոշել: Այսպես. Ռ. Տրախոն գրում է, որ 1941–1945 թթ. և երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զուտ չերբեզական (ադրդեական) վտարանդիության թիվը 3 000 էր: Նա նաև նշում է, որ «1941–1945 թթ. վտարանդիությունը բաղկացած էր «կոմունիստական դրախտի հաճույքները վայելած» չերբեզներից: Այդ վտարանդիությունում ներկայացված էին մտավորականությունը, կոլտնտեսականները և բանվորները: Նրանք բոլորն էլ արտասահմանում հայտնվել էին կա՛մ որպես Կարմիր բանակի

⁵⁷⁴ Տես *Мырат Тагмырат*. Воспоминания (<http://turkmeny.h1.ru/memuar/m2.html>):

զինվորներ (ռազմագերիներ), կա՛մ որպես «արևելյան աշխատողներ», կա՛մ կամավոր մեկնած ու վերադառնալ չցանկացողներ»⁵⁷⁵:

Մ. Թաչմըրատի տվյալներով՝ «1946–1948 թթ. Թուրքիան ապաստան է տվել մոտ 4-5 հազար թյուրք մահմեդականների: Նրանցից մոտ 500-ը թուրքեստանցիներ էին: Սակայն այդ հարցի վերաբերյալ ստույգ տվյալներ չկան»⁵⁷⁶: Հայտնի է, որ 1949 թ. Գերմանիայից Թուրքիա տեղափոխվեց նաև Ղրիմի թաթար ռազմագերիների մի ստվար զանգված⁵⁷⁷:

Մյուս կողմից՝ 1946–1948 թթ. Թուրքիա տեղափոխվեցին (մեծ մասը՝ ժամանակավորապես) նախկինում Գերմանիայում բնակություն հաստատած հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության ղեկավարները, ինչպես, օրինակ, պրոֆեսոր Այթեք Նամիթոքը, որը Մյունխենում ԽՍՀՄ ուսումնասիրության ինստիտուտի ստեղծումից հետո վերադարձավ Գերմանիա⁵⁷⁸:

Հարկ է նշել, որ իրենց վերահսկողության գոտիներում հայտնված խորհրդային քաղաքակացիների նկատմամբ դաշնակիցների մոտեցումը միանշանակ չէր: Եթե լեզեռնականներին, որոնք հիմնականում տարրական կրթություն ստացած անձինք էին և մտավոր կարողությունների տեսակետից հետաքրքրություն չէին ներկայացնում, անմիջապես հանձնում էին խորհրդային իշխանություններին, ապա պրոֆեսորներին, դոցենտներին, գիտությունների դոկտորներին ու թեկնածուներին համոզում էին մնալ և չվերադառնալ ԽՍՀՄ⁵⁷⁹: Դաշնակիցները նաև տարբեր կերպ էին վերաբերվում տեղափոխված անձանց. ամերիկյան հրամանատարությունը, ի տարբերություն բրիտանականից և ֆրանսիականից, ավելի մեծ դժկամությամբ էր ԽՍՀՄ-ին հանձնում ռազմագերիներին, իսկ շատ դեպքերում անգամ

⁵⁷⁵ Տե՛ս *P. Трахо*, указ. раб., сс. 118, 120:

⁵⁷⁶ Там же.

⁵⁷⁷ Տե՛ս *Dr. Necip Hablmitoğlu*, a.g.e., ss. 61–63:

⁵⁷⁸ Տե՛ս *İzzet Aydemir*, a.g.e., s. 187:

⁵⁷⁹ Տե՛ս *Виктор Земсков*, указ. раб.:

հրաժարվում էր հանձնելուց և տալիս էր ԱՄՆ տեղափոխվելու հնարավորություն⁵⁸⁰:

Տեղափոխվածների մտավորական զանգվածին և ռազմագերիների որոշ հատվածին պաշտպանության տակ առնելու հետևանքով ստեղծվեց նոր հակախորհրդային վտարանդիություն, որում ղեկավար դիրքեր զբաղեցրին Ա. Ավտորխանովի կարգի մտավորականները: Դրա հետ մեկտեղ, եթե 1920-ական թթ. վտարանդիության մի որոշ մասը իր նախնիների օրինակով Թուրքիան համարում էր «երկրորդ հայրենիք», ապա նոր՝ խորհրդային հասարակությունից սերվող, վտարանդիությունը հնարավորության դեպքում աշխատում էր մնալ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում կամ մեկնել ԱՄՆ: Մերձավորարևելյան երկրներում նախապատվություն էր տրվում Հորդանանին, որտեղ չերբեզներն օգտվում են արտոնություններից: Այսպես, պատերազմի ավարտից հետո մի խումբ հյուսիսկովկասցի ռազմագերիներ հայտնվեցին Իտալիայում, որտեղ Հոմի պապը երեք տարի նրանց չհանձնեց ԽՍՀՄ-ին: 1948 թ. նրանց ներկայացուցիչ Արդուլ Քերիմ Շուա-բզոկը մեկնեց Հորդանան, որտեղ հանդիպեց թագավոր Աբդալլահի հետ⁵⁸¹: Վերջինս ոչ միայն հյուսիսկովկասցի ռազմագերիներին քաղաքացիություն տվեց, այլև հոգաց Իտալիայից Հորդանան արտագաղթելու հետ կապված բոլոր ծախսերը⁵⁸²:

Այսպիսով, 1920-ական թվականների վտարանդիության համեմատությամբ Թուրքիա 1945–1948 թթ. արտագաղթած վտարանդիության միայն մի չնչին մասն էր քաղաքականապես ակտիվ, ուներ բարձրագույն կրթություն և մտավոր ներուժի տեսակետից պիտանի էր հակախորհրդային պայքարի համար, քանի որ կարող ուժերին դաշնակիցները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ը, կա՛մ

⁵⁸⁰ Տե՛ս *Միսաթ Թորլաբեան*, նշ. աշխ., էջ 547 – 548:

⁵⁸¹ Տե՛ս *Փ. Бадерхан*, указ. раб., с. 82:

⁵⁸² Там же.

տեղափոխեցին իրենց երկրներ, կա՛մ պահեցին Գերմանիայի իրենց բռնազավթած գոտում՝ հետագա հակախորհրդային պայքարում օգտագործելու նպատակով: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ 1940-ական թվականների երկրորդ կեսին միջազգային ասպարեզում Թուրքիան, ի տարբերություն 1930-ական թվականերից, իր երբեմնի կարևորությունն զգալի չափով կորցրած պետություն էր: Եթե 1920–1930-ական թթ. Թուրքիան արտաքին քաղաքականության հարցերի լուծման համար ուներ հակախորհրդային վտարանդիությունն օգտագործելու մեծ հնարավորություններ, ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դրանք սահմանափակ էին: Թուրքիան ինքր հովանավորի կարիք ուներ, որի դերում հանդես եկավ ԱՄՆ-ը: Վերջինիս ուշադրության կենտրոնում որպես հնարավոր հակախորհրդային ուժ հայտնվեց նաև 1945–1948 թթ. խորհրդային վտարանդիությունը:

1950-ական թթ. ամերիկյան և եվրոպական պատմագրությունում ու քաղաքագիտական հետազոտություններում սկսեց առանձնահատուկ կարևորություն տրվել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Խորհրդային Միությունում տեղ գտած կոլլաբորացիոնիզմի պրոբլեմի ուսումնասիրությանը, ընդ որում, մեծ ուշադրություն դարձվեց «արևելյան կամավորների» հավաքագրման գերմանական մեթոդներին, ինչպես նաև ԽՍՀՄ ժողովուրդների ազատագրական պայքարի խրախուսման ու կազմակերպման հարցում գերմանացիների կատարած սխալների վերլուծությանը⁵⁸³:

Այդ նույն ժամանակ Թուրքիայում գուգահեռաբար տեղի ունեցան երկու քաղաքական գործընթաց: Առաջինը 1920-ական թթ. որոշ վտարանդի գործիչներից ու 1946–1948 թթ. ժամանակավորապես Թուրքիայում ապաստան գտածների առավել ակտիվ ու կրթված զանգվածից կազմված հակախորհրդային վտարանդիության քաղաքականապես ակտիվ հատվածի տեղափոխումն էր Մյունխեն:

Երկրորդը 1920-ական թթ. վտարանդիության Թուրքիայում մնացած ներկայացուցիչների ներգրավումն էր ընդհանուր չերքեզական համայնքի հասարակական գործունեության մեջ: Այդ գործունեության հիմնական նպատակներն էին ազգային ինքնագիտակցության և մշակութային յուրօրինակության պահպանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը: Համընդհանուր հյուսիսկովկասյան խնդիրների լուծման համատեքստում չերքեզ մտավորականները կարևորեցին հետհեղափոխական վտարանդիության գործունեության փորձի ուսումնասիրությունը և համայնքային հիմնահարցերի լուծման համար վտարանդիության ներուժի օգտագործումը: 1960-ական թթ. երկրորդ կեսից վտարանդիության շրջանում հակախորհրդային պայքարն աստիճանաբար իր տեղը զիջեց օտարության մեջ ապրող հյուսիսկովկասյան հանրության ազգային ձուլմանն ու ինքնության կորսմանը հակազդեցության միջոցների մշակմանը:

⁵⁸³ См. О. В. Романько, указ. раб.:

Թուրքիայում հյուսիսկովկասյան միությունների ու մամուլի
վերականգնումը 1950–1960 թթ.

1945 թ. Արևմուտքի, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացումը համընկավ Թուրքիայում միակուսակցական համակարգի քայքայման և ժողովրդավարացման սկզբնավորման հետ: 1946 թ. հիմնադրվեց Դեմոկրատական կուսակցությունը, որը, հաղթանակ տանելով 1950 թ. խորհրդարանական ընտրություններում, վերջ դրեց Ժողովրդահանրապետական կուսակցության միակուսակցական կառավարմանը⁵⁸⁴: Նման քաղաքական մթնոլորտում հնարավոր դարձավ նաև «Բարեկամի ձեռք փոխօգնության միության» կարգի համայնքային կառույցների ձևավորումը: Բազմակուսակցական կառավարման շրջանում վտարանդիական և համայնքային կազմակերպությունների գործունեության համար կային նախորդ վարչակարգի համեմատությամբ ավելի բարենպաստ պայմաններ և ավելի արհեստավարժ ներուժ⁵⁸⁵:

1947 թ. մարտի 12-ին ԱՄՆ-ի նախագահ Թրումենը հայտարարեց կոմունիզմի տարածման և ԽՍՀՄ-ից բխող սպառնալիքների դեմ պայքարում Հունաստանին և Թուրքիային աջակցություն ու ռազմական օգնություն տրամադրելու ծրագրի մասին, որը հայտնի է «Թրումենի դոկտրին» անվամբ⁵⁸⁶: 1947 թ. հունիսի 5-ին հայտարարվեց, որ «Սարչալի պլանով» ԱՄՆ-ը իր եվրոպական դաշնակիցների թվում

⁵⁸⁴ Տե՛ս *Ahmad Feroz*. The Turkish Experiment in Democracy 1950-1975. London, The Royal Institute of International Affairs, 1977, pp. 8-9:

⁵⁸⁵ Տե՛ս *Yrd. Doç. Sebahattin Şimşir*, a.g.e., s. 136:

⁵⁸⁶ Տե՛ս *Ismail Soysal*, a.g.e., s. 64: Ռազմական բնագավառում համագործակցության վերաբերյալ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև առաջին համաձայնագիրը ստորագրվել էր դեռ 1946 թ. փետրվարի 27-ին: Դրանով ԱՄՆ-ը Թուրքիային 10 մլն դոլարի վարկ էր տրամադրել արտասահմանյան զորակայաններում գտնվող ամերիկյան ռազմական ունեցվածքի ավելցուկների գնման համար (տե՛ս *Тюркская Атаев*. США, НАТО и Турция. М., Издательство "Прогресс", 1973, с. 201)

տնտեսական օգնություն է ցույց տալու նաև Թուրքիային⁵⁸⁷: 1948 թ. հուլիսին դրան փոխարինելու եկավ թուրք-ամերիկյան տնտեսական համագործակցության պայմանագիրը, որով Թուրքիայում մի շարք արտոնություններ տրվեցին ամերիկյան կապիտալին ու մասնագետներին⁵⁸⁸: 1950 թ. Թուրքիան Կորեական պատերազմին մասնակցելու համար ուղարկեց 4500 իր զորաց կազմված մի զորամիավորում, իսկ 1952 թ. փետրվարի 18-ին Հունաստանն ու Թուրքիան դարձան ՆԱՏՕ-ի անդամ⁵⁸⁹:

Արևմտյան բլոկին անդամակցությունն ու հակախորհրդային պայքարում ընդգրկումը հանգեցրին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ինչպես գործնական, այնպես էլ գաղափարական փոփոխությունների: Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության շահերի տեսակետից Թուրքիայի արտաքին քաղաքականությունում հակակոմունիստական ուղղվածության ամրապնդումը նպաստավոր պայմաններ ստեղծեց նախորդ շրջանի պայքարը շարունակելու համար⁹: ԽՍՀՄ-ից բխող վտանգի ու վախի ազդեցությամբ նախորդ շրջանում «թուրքը թուրքից բացի բարեկամ չունի» կարգախոսի ջատագով պանթուրքական ծայրահեղական զանգվածն ստիպված վերանայեց իր տեսակետը և համագործակցության եզրեր փնտրեց ԽՍՀՄ-ի այլ «ճնշված» ժողովուրդների վտարանդիության հետ: Այսպես. 1940-ական թթ. իր ծայրահեղ պանթուրքական հայացքներով հայտնի Ֆեթհի Թևեթօղլուն, որն անգամ Նիհալ Աթսըզին մեղադրում էր անվճռականության մեջ,

⁵⁸⁷ Там же.

⁵⁸⁸ Տե՛ս *Н. М. Лавров*, указ. раб., с. 37:

⁵⁸⁹ Տե՛ս *Ismail Soysal*, a.g.e., ss. 66–67:

⁹ Թուրք գիտնական Յուրսել Թաշքենը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայի որդեգրած հակակոմունիզմի և ազգայնամոլության քաղաքականության համար երկու պատճառ է տեսնում՝ ԽՍՀՄ-ից վախը և պրագմատիզմը (տե՛ս *Yüksel Taşkın*. Anti-Komünizm ve Türk Milliyetçiliği: Endişe ve Pragmatizm. «Modern Türkiye’de Siyasi Düşüncüler», Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim Yayınları, 2002, s. 618):

դարձավ «կոմունիզմի՝ համար մեկ թշնամին» և, վերագնահատելով իր գաղափարները, թուրքի թշնամիների ցանկից հանեց Թուրքիայում բնակվող փոքրամասնություններին՝ այնտեղ թողնելով միայն կոմունիստներին ու սիոնիստներին⁵⁹⁰։ Նույն Թեթթոլուն իր «թուրքը թուրքից բացի բարեկամ չունի» մոտեցումը փոխարինեց երկբևեռ աշխարհի՝ կոմունիստական և ժողովրդավարական հատվածների բաժանման գաղափարախոսությամբ⁵⁹¹։ Հակակոմունիստական պայքարի շրջանակներում 1950-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարությունում իր վերջնական ձևավորումն ստացավ երկրի սահմաններից դուրս ապրող «գերի թյուրքերի» փրկության գաղափարը, ընդամին նրանց թվին էին դասվում նաև հյուսիսկովկասյան ազգությունները։ Թուրքական պատմագրությունում նշված է, որ «գերի թյուրքերի փրկության» գաղափարախոսության մշակման գործում առաձևահաստուկ դեր են խաղացել կովկասյան մահմեդական վտարանդիության ներկայացուցիչները, որոնք այդ գաղափարն սկսեցին զարգացնել դեռ 1920-ական թթ. աշխատություններում և վտարանդիական մամուլում⁵⁹²։ 1920-ական թթ. վտարանդիության կարողությանը գումարվեց նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ձևավորված հակախորհրդային վտարանդիության մտավոր ներուժը։

1950–1960-ական թթ. հակակոմունիստական պայքարում թուրք ազգայնամուլների հետ հյուսիսկովկասցի վտարանդիների միավորման ապացույց է «Փախստականների և վտարանդիների թուրքական միությունների դաշնությունը», որում հյուսիսկովկասցիները հանդես

էին գալիս որպես թուրքական ինքնություն ունեցող և թյուրքական աշխարհի մաս կազմող զանգված⁵⁹³։

Արտաքին և ներքին զարգացումների շնորհիվ ժողովրդավարականացող մթնոլորտը, հակակոմունիստական պայքարում հյուսիսկովկասյան վտարանդիության և համայնքի ներուժն օգտագործելու պետական կառույցների ձգտումը, 1950–1960 թթ. Թուրքիայում տնտեսական զարգացման հետևանքով չերթեզական գյուղերից դեպի քաղաքներ տեղի ունեցած գաղթը պայմանավորեցին նախ մեծ քաղաքներում, ապա և շրջանային կենտրոններում մշակութային ուղղվածությամբ հյուսիսկովկասյան կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտությունը։ 1950–1970 թթ. Թուրքիայում հյուսիսկովկասյան համայնքի գոյության և նրա ազգային ինքնության պահպանման համար հիմնական սպառնալիքներից մեկը ուրբանիզացումն էր, քանի որ միաստարք չերթեզական գյուղերից բնակչությունը տեղափոխվեց քաղաքներ, որտեղ գերիշխողը թուրքական տարրն էր։ Այդ պայմաններում քաղաքներում հյուսիսկովկասյան մշակութային կազմակերպությունների ու համայնքային մամուլի ստեղծումը և այդ միջոցով ազգային ուժացման դեմ պայքարը դարձան Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի ու կովկասյան վտարանդիության ջանքերի գործադրման հիմնական ասպարեզը։

Վերը նշվածի համատեքստում նպատակահարմար է հիշատակել հետևյալ իրողությունը։ 1930–1940-ական թթ. բռնի թուրքացման քաղաքականությունը, չնայած իր բոլոր բացասական կողմերին, այդուհանդերձ, վտանգի տակ չէր դնում հյուսիսկովկասյան ինքնությունը, քանի որ դրա պահպանման հիմնական ներուժը չերթեզական գյուղերն էին, որոնք շարունակում էին գոյություն ունենալ որպես փակ մեկուսի համակարգեր։ Չերթեզական գյուղերը միշտ էլ

⁵⁹⁰ Ştu Nizam Önen. Fethi Tevetoglu. «Modern Türkiye’de Siyasi Düşüncüler». Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 622-625:

⁵⁹¹ A. g. e., s. 624:

⁵⁹² Ştu Yüksel Taşkın, a. g. e., s. 631:

⁵⁹³ Ştu Alexandre Toumarkine. Türk Kökenli Olmayan Balkan ve Kafkas Göçmenlerinde Milliyetçilik, s. 935:

այքի են ընկել իրենց հոծ միատարր բնակչությամբ և Կովկասում գոյություն ունեցող ավանդույթները պահպանելու ու շարունակելու երիտասարդ սերնդին լեզուն, մշակույթն ու կացութիւնը փոխանցելու ձգտմամբ: Գյուղերը, պահպանելով ընտանիքի կովկասյան մոդելը, ապրում էին հյուսիսկովկասյան ոճով՝ մեծ ընտանիքով ապրելու, մեծերին պաշտելու և անվերապահորեն ենթարկվելու ավանդույթներով⁵⁹⁴: Ընտանիքի ավանդական մոդելից բացի, ազգային ձուլմանը հակադրության առավել գործուն միջոցներից են երեխաներին մայրենի լեզու սովորեցնելը, գյուղում և ընտանիքում մայրենի լեզվով շփվելը, գյուղի տարածքում թուրքերենով հաղորդակցվելուց հրաժարվելը և թուրքերենն օգտագործելը միայն անհրաժեշտության դեպքում, օրինակ՝ եկած պաշտոնյանների կամ մոտակա քաղաքներ այցելությունների ժամանակ:

Այսպիսով՝ հանրապետական Թուրքիայում հյուսիսկովկասյան ինքնության պահպանման առանցքային օղակը՝ չերքեզական գյուղը, իր փակ համակարգով պայմաններ էր ստեղծում պետության կողմից

⁵⁹⁴ Steu *Taner Duman*. Örenşehirde Aile-Emek Örgütlenmesinin Değişimi. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişime», Ankara, Kaf Der Yayınları, 1999, ss. 148-149:

* Հաշվի առնելով չերքեզական գյուղերում մայրենի լեզվով հաղորդակցվելու հանգամանքը՝ 1920-ական թթ. վերջերին – 1930-ական թթ. սկզբներին «Թուրքական օջախ» կազմակերպության ակտիվիստները հատուկ քարոզարշավներ կազմակերպեցին՝ չերքեզական գյուղերում մայրենի լեզվով հաղորդակցումը դադարեցնելու և թուրքերենը համատարած կերպով գործածելու կոչերով: Թուրքիայում հյուսիսկովկասցիների ամենահոծ զանգված ունեցող Ուրդունյայայի շրջանի չերքեզական գյուղերում 1990-ական թթ. հյուսիսկովկասյան միությունների դաշնության (Kaf-Der) կողմից անցկացրած հարցման համաձայն՝ ընտանիքների 93,7 %-ը երեխաներին մայրենի լեզու էին սովորեցնում, իսկ մայրենի լեզվով շփումը գյուղերում կազմում էր 99,5 %: Այդ հարցման համաձայն՝ գյուղում ապրողների 91,9 %-ը որպես ինքնության պահպանման կարևոր գործոն ցանկանում էր իր երեխաներին ամուսնացնել չերքեզների հետ, ինչպես նաև խստագույնս հետևում էր այն կովկասյան ավանդույթներին և օրենքներին, որոնք հայտնի են որպես «Xhabze»: Գյուղերում նաև պահպանվում էին երիտասարդների հավաքները (Zexes), ինչպես նաև կարևոր հարցերը արտակալների հավաքում լուծելու ավանդույթները (տես *Mehmet Eser*, Uzunyayla Bölgesindeki Çerkes Köylerinde Sosyo-kültürel Değişime. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişime», Ankara, Kaf Der Yayınları, 1999, ss. 73, 123):

իրականացվող ազգային ուժացման քաղաքականությանը դիմակայելու համար⁵⁹⁵: Որոշ գիտնականներ նշում են, որ դրա հետ մեկտեղ չերքեզների գյուղական կյանքը, որոշակի ժամանակահատվածում նպաստելով մշակութային ինքնության պահպանմանը, միևնույն ժամանակ դանդաղեցրեց համայնքի մտավոր ու կազմակերպական զարգացումը⁵⁹⁶:

Չերքեզական գյուղի գործունակ է բացատրվում, թե ինչու 1950–1960-ական թթ. Թուրքիայում հյուսիսկովկասյան հանրության մեջ ստեղծվեց մի տարիմաստ իրավիճակ, երբ չերքեզական ինքնության պահպանման տեսակետից բռնի թուրքացման քաղաքականությունը ավելի քիչ վտանգ էր ներկայացնում, քան ժողովրդավարացումն ու տնտեսական զարգացումը, որոնց հետևանքով տեղի ունեցավ ուրբանիզացում: Եթե պաշտոնական տվյալներով 1945–1950 թթ. Թուրքիայում գյուղերից քաղաքներ տեղափոխվեցին և մշտական բնակություն հաստատեցին 264 000 մարդ⁵⁹⁷, ապա 1950-ական թվականներին այդ թիվը եռապատկվեց ու քառապատկվեց: Տնտեսական բարգավաճման պայմաններում ինքնության պահպանման տարիմաստությունն ի հայտ եկավ 1950-ական թթ. վարչապետ Ադնան Մենդերեսի կառավարության ձեռնարկած հողային բարեփոխումից հետո, երբ պետական հողերը վաճառվեցին կամ բաժանվեցին

⁵⁹⁵ Steu *Mehmet Eser*, a.g.e., s. 92: Դրա հետ մեկտեղ կան նաև այլ տվյալներ: Այսպես, չերքեզների տեղահանման 136-ամյակին նվիրված գիտաժողովի բացման խոսքում Կովկասյան միությունների դաշնության (Kaf-Der) նախագահ Սուհիլթին Ուրնալը նշեց, որ ներկայումս 20 տարեկանից ցածր չերքեզական երիտասարդության 70–80%-ը չի տիրապետում մայրենի լեզվին (տես *Muhittin Ünal*, Kafkas Halklarının Anavatanlarından Sürgünlerinin 136 Yılı Anma Töreni. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», s. 114):

⁵⁹⁶ Steu *Prof. Dr. Erol Taymaz*. Anayurda Dönüş Hareketleri: Yahudiler, Filistinler, Çerkesler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», s. 257:

⁵⁹⁷ Steu *Brian Beeley*. People and Cities. Migration and Urbanization. «Turkish Transformation. New Century New Challenges», edited by Brian Beeley, Huntingdon, England, The Eothen Press, 2002, p. 46:

գյուղացիներին: Հողային բարեփոխումը, մի կողմից, նպաստեց չերքեզական գյուղերի տնտեսական զարգացմանն ու բարգավաճմանը, մյուս կողմից՝ ստեղծեց մի իրավիճակ, երբ զարգացող արդյունաբերությանն ու քաղաքներին պահանջվեց մեծաթիվ աշխատուժ, ինչի հետևանքով չերքեզ երիտասարդները աշխատանք գտնելու կամ կրթություն ստանալու նպատակով գյուղից գաղթեցին քաղաք⁵⁹⁸:

Հայտնվելով քաղաքի ազատական մթնոլորտում՝ չերքեզ երիտասարդները, հատկապես բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացողները, սկսեցին հարել տարաբնույթ քաղաքական հոսանքների, անդամակցել տարբեր կուսակցությունների և ընդհատակյա արմատական կազմակերպությունների: Քաղաքներ տեղափոխված չերքեզական երիտասարդությունը, կորցնելով կապը գյուղերում եղած ավանդական հյուսիսկովկասյան միջավայրի հետ, կանգնեց ազգային ուժացման վտանգի առաջ: Այդ վտանգի ուժգնացմանը նպաստեց նաև այն, որ քաղաք տեղափոխված երիտասարդության շրջանում ազգային ուժացումը հիմնականում կամավոր էր, հատկապես՝ խառը ամուսնությունների դեպքում: Այս ամենի հետևանքով 1950-ական թթ. կեսերից չերքեզական հասարակությանը հարկ եղավ մտածել քաղաքներում հյուսիսկովկասյան մշակութային ավանդույթների պահպանման, չերքեզ երիտասարդներին միավորելու համար ապակուսակցական կառույցների ստեղծման մասին, և այդ գործընթացում տրամախաչվեցին հին ու նոր հյուսիսկովկասյան համայնքների շահերը: Եթե չերքեզական համայնքին սպառնում էր ազգային ուժացման տեմպերի արագացում, և անհրաժեշտ էր դրան դիմակայել, ապա 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի էր ունենում միանգամայն այլ զարգացում, որը կարելի է բնորոշել

որպես հետագա պայքարի իմաստավորման հարցում խոր հիսաթափություն և հռետեսություն:

Հաղթելով պատերազմում՝ ԽՍՀՄ-ը ոչ միայն ապացուցեց իր կենսակայունությունը, այլև իր ազդեցության ոլորտը տարածեց Արևելյան Եվրոպայի պետությունների վրա՝ ստեղծելով սոցիալիստական ճամբար: Խորհրդային կարգերը տապալելու հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության հույսերը հոգս ցնդեցին, իսկ պատերազմից հետո ձևավորված ռուսաստանյան վտարանդիության այսպես կոչված երկրորդ ալիքը իր էությանը արմատապես տարբերվում էր 1920-ական թթ. վտարանդիությունից, քանի որ բաղկացած էր խորհրդային կարգերի օրոք ծնված և կրթություն ստացած անձանցից, որոնց մտածելակերպն ու աշխարհայացքն այլ էին⁵⁹⁹: Այն ավելի համախմբված բնույթ ուներ, նախկինում չէր անդամակցել տարբեր կուսակցությունների և հակադիր հոսանքների, ինչը բնորոշ էր հետհեղափոխական հյուսիսկովկասյան վտարանդիությանը: 1945–1950 թթ. դրությամբ՝ 1920-ական թվականների վտարանդիության ամենասակտիվ մասը, օրինակ՝ վերմախտի շարքերում ծառայածների մեծ մասը, գեներալներ Սուլթան Քլըչ Գիրեյը, Լազար Բիչերախովը և ուրիշներ, կա՛մ գոհվել էր երկրորդ համաշխարհային պատերազմում, կա՛մ ձեռքակալվել ու հանձնվել խորհրդային իշխանություններին, ապա ոչնչացվել խորհրդային բանտերում:

Եվրոպայում և Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում հետագա պայքարի անիմաստության զգացումը հանգեցրեց այն բանին, որ 1944–1945 թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության մի շարք առաջնորդներ, ինչպես Հ. Բամատը, հեռացան քաղաքական սսպարեզից: Իսկ քաղաքական

⁵⁹⁸Տե՛ս *Taner Duman*, a.g.e., s. 144:

⁵⁹⁹ Տե՛ս *А. В. Попов*, указ. раб., cc. 54–70: Հարկ է նշել, որ հյուսիսկովկասյան վտարանդիության կարծիքով, 1941–1945 թթ. արտագաղթը ոչ թե «երկրորդ», այլ «երրորդ» ալիքն էր (տե՛ս *Р. Трахо*, указ. раб., с. 118):

պայքարը շարունակողները, հասկանալով մոտ ապագայում խորհրդային կարգերի տապալման և հայրենիք վերադառնալու անհնարինությունը, սկսեցին ավելի ու ավելի հակվել այն մտքին, որ հետագա պայքարի արդյունավետությունը կապված է օտարության մեջ գտնվող հյուսիսկովկասյան փոքրամասնության ազգային ինքնության պահպանման հետ: Դա ակնհայտորեն արտահայտվեց հյուսիսկովկասյան վտարանադիության առաջնորդների գիտական աշխատություններում ու հուշերում, որոնցում նրանք քաղաքական պայքարի խնդիրներից որոշակի շրջադարձ կատարեցին դեպի համայնքային-հասարակական գործունեություն⁶⁰: Առաջին անգամ վտարանդի առաջնորդներն ավելի մեծ չափով կենտրոնացան ազգային-մշակութային յուրահատկությունների պահպանման, երիտասարդ սերունդի մեջ պատմական հիշողության ու էթնիկական հպարտության զգացումների արթնացման խնդիրների վրա:

Վտարանդիության նման գիտակցումը և այդ ուղղությամբ գործելու պատրաստականությունը համընկան Թուրքիայի չերքեզական համայնքի մտահոգությանը՝ կապված ազգային ուժացման վտանգի ուժգնացման հետ: Ուժացման դեմ պայքարի միջոցներից մեկը եղավ Թուրքիայում հյուսիսկովկասյան մշակութային միությունների ստեղծումը: Քանի որ Թուրքիայում գոյություն ունեին հակախորհրդային պայքար վարելու նպատակով նախկինում հիմնված վտարանդիական կազմակերպություններ, ապա հյուսիսկովկասյան միությունները երկակի բնույթի էին. ստեղծված լինելով հակախորհրդային պայքարի կամ վտարանդիներին օգնելու նպատակով՝ դրանք կատարում էին նաև ազգային-մշակութային յուրահատկությունների պահպանման գործառույթ, ինչով էլ

⁶⁰ 1950-ական թթ. վերջերին Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության ղեկավարներն սկսեցին շարադրել իրենց հուշերը, որոնցում անցյալ պայքարի ոգին վառ պահելու հետ մեկտեղ համոզմունք էին հայտնում, որ ԽՍՀՄ-ը վաղ թե ուշ կփլուզվի, և լեռնականները հնարավորություն կստանան վերադառնալու իրենց պատմական հայրենիքը (տես, օրինակ, *Pşimaho Kosok*, a.g.e., s. 47):

արմատապես տարբերվում էին 1920-1930-ական թթ. վտարանդիական քաղաքական կառույցներից:

Այստեղ հարկ է նշել այն հանգամանքը, որ նման կազմակերպությունների ստեղծումը՝ որքան էլ լինեք համայնքային կամ վտարանդիական նախաձեռնություն կամ որպես այդպիսին ներկայացվեք, սակայն չէր կարող իրականացված լինել առանց պետության համաձայնության, որովհետև, ինչպես իրավագիտորեն նշում է քաղաքագետ Մեթին Հեպերը, Թուրքիայի կառավարման համակարգը ներկայացնում է «բյուրոկրատական անդրանցականություն (տրանսցենդենտալիզմ - bureaucratic transcendentalism)», երբ պետությունը վերահսկում է յուրաքանչյուր զարգացում⁶⁰⁰:

Կա ևս մի ուշագրավ հանգամանք: Դա այն է, որ Թուրքիայում հյուսիսկովկասյան մշակութային միությունների ստեղծմանը զուգահեռաբար Գերմանիայում, մասնավորապես՝ Մյունխենում, 1945-1947 թթ. կազմավորվեցին հյուսիսկովկասյան վտարանդիության հակախորհրդային քաղաքական կառույցներ: 1945 թ. Ավստրիայում Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեի անդամներ Ալբրեգտ Սլոբոզանովը, Բիչերայիտովը և մի քանի այլ գործիչներ որոշում կայացրին այդ կառույցի լուծարման մասին: Սակայն դա ժամանակավոր և ձևական միջոց էր՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նացիստների հետ ակտիվ համագործակցած Կոմիտեի մի շարք անդամներ ամերիկյան հրամանատարության կողմից ձերբակալվեցին և հանձնվեցին խորհրդային իշխանություններին⁶⁰¹: Հետևաբար, հյուսիսկովկասյան վտարանդի գործիչներին անհրաժեշտ էր «թոթափել» ֆաշիստների հետ համագործակցության «բեռը»:

⁶⁰⁰ Տես *Metin Heper*. The State Tradition in Turkey. Huntington, The Eothen Press, 1985, pp. 67-69:

⁶⁰¹ Տես *М. Д. Яндиева*, указ. раб.:

1950-ական թթ. նոր «խորհրդային», ինչպես նաև կենդանի մնացած և ակտիվ քաղաքական գործունեությունը շարունակող հին սերնդի հյուսիսկովկասյան վտարանդիության քաղաքական կենտրոն վերջնականապես դարձավ Սյունիսենը, որտեղ 1950 թ. հուլիսի 8-ին որպես վտարանդիության գիտական մտքի կենտրոն ստեղծվեց «ԽՍՀՄ պատմության և մշակույթի ուսումնասիրման ինստիտուտը»⁶⁰²։ Ինստիտուտում հյուսիսկովկասյան հետազոտությունների և քարոզչության ուղղությունը ղեկավարեցին Ա. Ավտորխանովը և Ռ. Տրախոն, ինստիտուտի հետ համագործակցեցին Թուրքիայում բնակվող այնպիսի գործիչներ, ինչպիսիք են պրոֆեսոր Ա. Նամիթորը, Ա. Կանտեմիրը, Սաիդ Շամիլը, Թամրի Էլեքոթին⁶⁰³։

Այստեղ էր գտնվում դեպի ԽՍՀՄ ուղղորդված «Ազատություն» ռադիոկայանը, միասնական ղեկավարման կենտրոնի ստեղծման նպատակով կազմակերպվում էին ռուսաստանյան վտարանդիության համաժողովները⁶⁰⁴։

⁶⁰² Տե՛ս *А. В. Попов*, указ. раб., сс. 54 - 70:

⁶⁰³ Там же. Ինստիտուտի գործունեությունը ֆինանսավորում էր ԱՄՆ-ը, որի որոշմամբ էլ 1972 թ. այն փակվեց:

⁶⁰⁴ Նման նախաձեռնությունների շարքում կարելի է նշել «Կովկասյան ժողովուրդների միություն» կառույցը, որը ձևավորվել էր հակաբոլշևիկյան պայքարի նպատակով, միավորելով Հյուսիսային և Հարավային Կովկասի բոլոր ժողովուրդները ներկայացնող կազմակերպությունները: Մասնավորապես, հայ ռազմագերիների Շուտագրդում գտնվող ճամբարում «Կովկասյան ժողովուրդների միությունը» ամսեկան մեկ անգամ քաղաքական նպատակներով ժողով էր գումարում, որին սակայն դիտորդի կարգավիճակով մասնակցում էր ՄԱԿ-ի նպաստների տրամադրված հանձնաժողովի անդամը (տե՛ս *Միսաք Թորլաքեան*, նշ. աշխ., էջ 556 - 558): 1952 թ. նոյեմբերի 8-ին Սյունիսենում աղբբեջանական, վրացական, հայկական (Հ.Յ.Դ) և հյուսիսկովկասյան վտարանդիական կազմակերպությունները համաձայնության եկան «Միացյալ կովկասյան պետություն (Кавказское Об'единенное Государство)» ստեղծելու հարցում և առաջ քաշեցին «Կովկասը՝ կովկասյան ժողովուրդների համար» քանաձևը (տե՛ս «Армянская Революционная Партия Дашнакцутюн», с. 34): 1955 թ. Կահիրեյում տեղի ունեցած Հ. Յ. Դ XVI-րդ Պատգամավորական ընդհանուր ժողովը հավանություն տվեց ստորագրած համաձայնությանը (там же): Հետաքրքրական է, որ Հ.Յ.Դ. XVI-րդ Պատգամավորական ընդհանուր ժողովի որոշումները զաղտնի պահվեցին և հրապարակվեցին միայն երկու տարի անց՝ 1957 թ. (տե՛ս *Ս. Տիգրանյան*).

1951 թ. Սյունիսենում ստեղծվեց Հյուսիսկովկասյան հակաբոլշևիկյան ազգային միավորումը (ՀՀԱՄ՝ Северокавказское антибольшевистское национальное об'единение - СКАНО), որի առաջին համագումարը կայացավ 1952 թ. փետրվարի 22-23-ը⁶⁰⁴։ Համագումարին մասնակցեցին 55 պատգամավոր, որոնք, բացի Գերմանիայում ապրող հյուսիսկովկասյան վտարանդիությունից, ներկայացնում էին Թուրքիան, Հորդանանը և Ֆրանսիան: Համագումարը նորաստեղծ կառույցի նախագահ ընտրեց Ա. Ավտորխանովին, իսկ բանաձևում «հատուկ գոհունակությամբ հաստատեց ՀՀԱՄ-ի նախագահության որոշումը, որն ընդունել էր Ամերիկյան կոմիտեի առաջարկությունը՝ մասնակցելու 1951 թ. նոյեմբերին տեղի ունեցած Վիսբադենի համագումարին, որտեղ քննարկվել էր ԽՍՀՄ ժողովուրդների քաղաքական կենտրոն ստեղծելու հարցը, ինչպես նաև ողջունեց նշված համագումարում ՀՀԱՄ-ի նախագահության որդեգրած քաղաքական գիծը»⁶⁰⁵։ Հետաքրքրություն է ներկայացնում համագումարում ընտրված ՀՀԱՄ-ի խորհրդի անդամների կազմը, որը տեղի ունեցած սերնդափոխության վկայությունն է, քանի որ 1920-ական թթ. վտարանդիությունը ներկայացնում էր միայն Ահմեդ Նաբի Մագուման⁶⁰⁶։ Վերջինս 1951 թ. Սյունիսենում տեղի ունեցած հյուսիսկովկասյան վտարանդիների համագումարում վերընտրվեց վերականգնված Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեի նախագահի պաշտոնում⁶⁰⁷։

Հյուսիսկովկասյան ազգային կոմիտեն Սյունիսենում 1951-1954 թթ. հրատարակեց երկու հանդես՝ «Կովկաս (Кавказ)» և «Միավորված Կովկաս (Об'единенный Кавказ)»⁶⁰⁸։

Դաշնակ ինտրիզանների նոր մեքենայությունները. «Սովետական Հայաստան», 04.09.1957թ.):

⁶⁰⁴ Տե՛ս *М. Д. Яндиева*, указ. раб.:

⁶⁰⁵ Տե՛ս «Свободный Кавказ». Мюнхен, 1952, январь-февраль, N 1-2 (4-5), сс. 61 - 62:

⁶⁰⁶ Там же.

⁶⁰⁷ Տե՛ս *А. М. Муртазалиев*, указ. раб., с. 37:

⁶⁰⁸ Տե՛ս *Р. Трахо*, указ. раб., с. 122:

ՀՀԱԿ-ը Մյունխենում նույն ժամանակահատվածում հրատարակեց «Ազատ Կովկաս (Свободный Кавказ)» հանդեսը, որի գլխավոր խմբագիրն էր Ա. Ավտորխանովը:

1953 թ. մայիսի 28-ին այնտեղ ստեղծվեց «Արտասահմանում չերքեզական կոմիտե (Черкесский комитет за границей)» գիտակրթական և մշակութայնասավորական կազմակերպությունը⁶⁰⁹, իսկ 1954 թ. գումարվեց կովկասյան ժողովուրդների համագումար, որին չմասնակցեցին միայն հայկական քաղաքական կուսակցությունները⁶¹⁰:

Թուրքիայում հյուսիսկովկասյան մշակութային միությունների հիմնադրումն սկսվեց 1951 թ., երբ Ստամբուլում հյուսիսկովկասյան վտարանդիության մի շարք առաջնորդներ, այդ թվում՝ Հյուսիսային Կովկասի Լեոնականների հանրապետության նախկին նախագահ Պշիմախո Կոսոբը, խորհրդարանի նախագահ և ֆինանսների նախարար Վասան-Գիրեյ Ջաբաղին, Լեոնականների հանրապետության Կուրանում ներկայացուցիչ, պրոֆեսոր Այթեք Նամիթոբը, Սաիդ Շամիլը*, հիմնադրեցին «Հյուսիսային Կովկասի Թուրքական մշակույթի և օգնության միություն (Kuzey Kafkas Türk Kültür ve Yardım Derneği)»⁶¹¹: Որոշ ժամանակ անց այն մի քանի անգամ անվանափոխվեց՝ կոչվելով «Հյուսիսկովկասյան մշակութային և փոխօգնության միություն (Kuzey Kafkasya Kültür ve Yardımlaşma Derneği)», ապա՝ «Միացյալ Կովկասի միություն (Birleşik Kafkasya Derneği)»⁶¹²: «Հյուսիսկովկասյան մշակութային և փոխօգնության միությունը» հրատարակեց Հյուսիսային Կովկասի պատմությանը, լեզուներին, մշակույթին նվիրված մի շարք հանդեսներ ու զրբեր: Սակայն իր գործունեության առաջին տարիներին, հիմնադիրների

քաղաքական ուղղվածության հետևանքով, այն ավելի նման էր 1920–1930-ական թվականների հակախորհրդային քարոզչությամբ ու պայքարով աչքի ընկած հյուսիսկովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպություններին: Պատահական չէ, որ եվրոպական հյուսիսկովկասյան մամուլը Ստամբուլում ստեղծված այս կազմակերպությունը դիտեց որպես քաղաքական վտարանդիական կազմակերպություն՝ անտեսելով չերքեզական ինքնության պահպանմանն ուղղված նրա ներքին համայնքային բաղադրիչը:

Չուտ քաղաքական հյուսիսկովկասյան կառույցի ստեղծման փորձ կարելի է համարել «Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի» վերաստեղծման հարցով գումարված համաժողովը, որը նոր՝ 1941–1945 թթ. «խորհրդային», վտարանդիության մի շարք ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպեցին հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության գործիչները 1951 թ. նոյեմբերի 3-ին Ստամբուլում: Մյունխենում լույս տեսնող «Ազատ Կովկաս» հանդեսն իր 1951 թ. երկրորդ համարում նշեց, «Մեզ հաղորդում են Թուրքիայից, որ նոյեմբերի 3-ին այնտեղ կայացել է լեոնականների ժողով, որում ընտրվել է Հյուսիսկովկասյան ազգային կոմիտե՝ հետևյալ կազմով Այթեք Նամիթոբ, Պշեմախո Կոցև, Սաիդ Շամիլ, Կազիխան Բետուր, Օմար Հայդարով, Մագոմետ Գիրեյ Մունշ, Մուրթազ Դանգուն, Մուստաֆա Դադլը, Վասան-Գիրեյ Ջաբաղի, Մուրադ Դանգուն, Հայդար Բամատ, Ալիխան Կանտեմիր, Ահմեդ Նաբի Մագոմա, Մուրուզալի Կուրին, Արդուրահման Ավտորխանով»⁶¹³: Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի նախագահ ընտրվեց պրոֆեսոր Այթեք Նամիթոբը, որն այդ պաշտոնը վարեց մինչև իր վախճանը՝ 1963 թ.⁶¹⁴: Կազմակերպության հրատարակությունները, ինչպես նաև Ա. Նամիթոբի գիտական աշխատությունները աչքի ընկնան այնպիսի հակախորհրդային ուղղվածությամբ, որ 1958 թ. Մոսկվայի պետական

⁶⁰⁹ Там же.

⁶¹⁰ Sıkı Yrd. Doç. Sebhattin Şimşir, a.g.e., s. 140:

* Կազմակերպության հիմնադիրների ցուցակում նշված է 17 անուն:

⁶¹¹ Sıkı E. Kuşba. Türkiye Diasporası (www.

kalkasevi.com/index.php/printpage/index/article/44/0):

⁶¹² A.g.e.

⁶¹³ Sıkı «Свободный Кавказ», Мюнхен, 1951, ноябрь-декабрь, N 2 (3), с. 64:

⁶¹⁴ Sıkı İzzet Aydemir, a.g.e., s. 187:

համալսարանում տեղի ունեցած գիտաժողովում Ա. Նամիթորը ներկայացվեց որպես «անգլո-ամերիկյան և թուրքական լրտես»⁶¹⁵։ Փաստորեն, այս կառույցը, ի տարբերություն այդ ժամանակ վերականգնվող կամ նոր ձևավորվող մյուս չերթեզական կազմակերպություններից, չուներ մշակութային ներհամայնքային բաղադրիչ, այլ գուտ հակախորհրդային, հակակոմունիստական քարոզչության միջոցով քաղաքական պայքար վարող վտարանդիական միասնական* հաստատություն էր։

1952 թ. Ստամբուլում հիմնադրվեց ևս մեկ հյուսիսկովկասյան կառույց՝ «Կովկասյան մշակութային միությունը (Kafkas Kültür Derneği)», որի հիմնադիրները Թուրքիայում ծնված չերթեզներն էին, և որն ուներ գուտ մշակութային բնույթ, զբաղվում էր քաղաքում բնակություն հաստատած չերթեզ երիտասարդների միավորմամբ, կովկասյան ավանդույթների, մշակույթի, լեզունների պահպանման խնդիրներով։ Ինչպես նշվում է Թուրքիայի հյուսիսկովկասյան «Կովկասյան տուն (kavkasevi.com)» կայքում, «այս կառույցն ավելի շատ զբաղված էր ժողովրդական պարերով և մշակութային գործունեությամբ»⁶¹⁶։ Թեև «Կովկասյան մշակութային միությունը» հիմնադրել էին Օսմանյան կայսրություն արտագաղթած չերթեզների հետնորդները, դրա նախագահ ընտրվեց վտարանդի գործիչ Մեհմեթ Քեթեն*։ 1952 թ. նա Ստամբուլում կազմակերպեց չեչենների և ինգուշների տեղահանման

⁶¹⁵ A.g.e.

* Եվրոպայում և Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասցի գործիչներին ընդգրկող։

⁶¹⁶ Տես E. Kuşba, a.g.e.:

** Իսկական անունը՝ Մահոմեդ Չորիկիչ Կոտին (1886 - 1973 թթ.), լուսավորիչ-մանկավարժ, մինչեղափոդական Ինգուշերիայում դպրոցների հիմնադիր, հակաբոլշևիկյան պայքարի ակտիվ գործիչ, Հյուսիսային Կովկասում մղված քաղաքացիական պատերազմի տարիներին ջոկատի հրամանատար, մենջևիկյան Կրաստանում լույս տեսնող «Անկախ Կովկաս» թերթի խմբագիր։ 1921 թ. գաղթել է Թուրքիա, մասնակցել ազգայնական պայքարին, պարզևատրվել բարձրագույն՝ «Անկախություն», շքանշանով (İstiklal Madalyası), 1948-1958 թթ. եղել է «Նոր Կովկաս» հանդեսի խմբագիր (տես M. Д. Андиева, указ. раб.):

տարեդարձին նվիրված գիտաժողով, որի արդյունքները ամփոփվեցին «Չեչենների և ինգուշների տեղահանությունը» գրքույկում⁶¹⁷։

«Կովկասյան մշակութային միության» հիմնադրման կապակցությամբ Մ. Քեթենի շնորհավորագրեր ուղարկեցին ՀՀԱԿ-ն ու «Ազատ Կովկաս» հանդեսի խմբագրությունը։ Դրանցում, մասնավորապես, գոհունակությամբ շեշտված էր այն փաստը, որ հիմնադրումից կարճ ժամանակ անց կազմակերպությունն ունեցավ երկու հարյուրից ավելի անդամ⁶¹⁸։

1953 թ. «Բարեկամի ձեռք փոխօգնության միությունը», ազատվելով իր աղբյուրներից անդամներից և միավորվելով «Կովկասյան մշակութային միության» հետ, վերածվեց «Կովկասյան միության (Kafkas Derneği)»։ Հյուսիսկովկասյան մշակութային միության ղեկավարներից մեկի՝ Էրոլ Թայմազի պնդմամբ, այդ վերափոխումը կատարվել էր կազմակերպության անդամ հյուսիսկովկասյան վտարանդիների նախաձեռնությամբ։ «1917 թվականից հետո Կովկասից գաղթած վտարանդիության մի ստվար հատված երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից բնակություն հաստատեց Թուրքիայում։ Ազգայնական-հակախորհրդային ուղղվածությամբ քաղաքական գործունեությունը շարունակելու նպատակով այդ կադրերը՝ թուրքական ծագում ունեցող որոշ կովկասցիների* հետ, Դեմոկրատական կուսակցության իշխանության գալուց հետո դուրս եկան ոչ բավարար չափով «քաղաքականացված» «Բարեկամի ձեռք փոխօգնության միությունից» և ստեղծեցին «Հյուսիսկովկասյան թուրքական մշակութային միությունը»⁶¹⁹։

«Բարեկամի ձեռք փոխօգնության միությունը» «Կովկասյան մշակութային միության» վերածելու գործում կովկասյան

⁶¹⁷ Տես M. Д. Андиева, указ. раб.:

⁶¹⁸ Տես «Свободный Кавказ», Мюнхен, 1952, ноябрь, N 11 (14), с. 32:

* Հեղինակը նկատի ունի Թուրքիայում ծնված հյուսիսկովկասցիներին։

⁶¹⁹ Տես Erol Taymaz. Kuzey Kafkas Dernekleri. «Türkiyede Sivil Toplum ve Milliyetçilik», İstanbul, İletişim, 2001, s. 453:

վտարանդիության ներկայացուցիչների հետ մեկտեղ կարևոր դերակատարություն ունեցավ չերքեզական համայնքի առաջնորդներից մեկը՝ Իսմայիլ Չիյա Բերսիսը⁶²⁰։ Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնության պատմության մասնագետ Ա. Տումարկինի բնութագրմամբ՝ «միությունը, որքան էլ որ հակակոմունիստական և հակախորհրդային ուղղվածություն ուներ, ակտիվ ջանքեր էր գործադրում չերքեզների ավանդույթները, անունները, պատմությունը, գաղթից առաջ եղած՝ Հյուսիսային Կովկասի մշակույթը չմոռանալու և լավ ուսումնասիրելու ուղղությամբ։ Նրանք կողմնորոշվում էին թուրքական մշակույթի, պատմության և թուրքական ինքնության մեջ չկորչող մի մշակույթ ձևավորելուն։ Ի հայտ եկան Կարմիր բանակի դեմ գերմանական բանակի կազմում մարտնչած, նախկին լեգեոնականներից կազմված և ընդդիմադիր հանդիսացող մի խումբ պանթուրքականներ»⁶²¹։

1954 թ. «Հյուսիսային Կովկասի Թուրքական մշակույթի և փոխօգնության միությունը» ի թիվս վեց այլ կազմակերպությունների, որոնք միավորվել էին «Փախստականների և վտարանդիների թուրքական միությունների դաշնության (Türk Göçmen ve Mülteci Dernekleri Federasyonu)» կազմում, թուրքական կառավարության կողմից պաշտոնապես ճանաչվեց որպես «բարեգործական» կազմակերպություն⁶²²։ «Փախստականների և վտարանդիների թուրքական միությունների դաշնության» նախագահ ընտրվեց Քաղըրջան Քաֆլին⁶²³։

Չերքեզական համայնքում քաղաքական վտարանդիության և «թուրքաբնակ» չերքեզների դեռևս երկու անջատ զանգվածի

⁶²⁰ Տե՛ս *Izzet Aydemir*, a.g.e., ss. 42 – 43:

⁶²¹ Տե՛ս *Alexandre Toumarkine*. Kafkas ve Balkan Göçmen Dernekleri: Sivil Toplum ve Milliyetçilik. «Türkiyede Sivil Toplum ve Milliyetçilik», İstanbul, İletişim Yayınları, 2001, ss. 426 – 427:

⁶²² A.g.e., s. 427:

⁶²³ Տե՛ս *A. M. Муртазалиев*, указ. раб., с. 45:

առկայությունը դարձավ պարտականությունների տարաբաշխման վերաբերյալ բանավեճի պատճառ։ Նախ, հարկ է նշել, որ Թուրքիայի հյուսիսկովկասյան մտավորականության հրատարակչական ակտիվությունը տեղի էր ունենում կազմակերպական՝ միությունների ստեղծման գործընթացին զուգահեռ⁶²⁴։ Թուրքերեն լեզվով հրատարակվող համայնքային հանդեսներից ու թերթերից շատերը կարճ կյանք ունեցան։ Համայնքային հրատարակությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեցավ 1953 թ. «Բարեկամի ձեռք փոխօգնության միության» կազմակերպիչներից մեկի՝ Իսմայիլ Չիյա Բերսիսի կողմից հիմնադրած «Կովկաս հանդեսը (Kafkas Dergisi)»⁶²⁵։ Դրա առաջին համարում զետեղված «Կովկասցիներն ու չերքեզները (Kafkasyalılar ve Çerkesler)» հոդվածում, որում պարզաբանվում էին հիմնադրման նպատակները և ապագա գործունեությունը, Բերսիսը վերլուծեց թուրքական հասարակությունում «հյուսիսկովկասցի»՝ որպես 1920-ական թթ. վտարանդիության և «չերքեզ» տերմինների տարբերակումը։ Հաշվի առնելով խնդրի կարևորությունը և այն հանգամանքը, որ տվյալ հարցը ոչ ոք Բերսիսի նման խորը չի ուսումնասիրել⁶²⁶, հարկ ենք համարում այդ հոդվածից մեջբերել մի հատված։ Թուրք ընթերցողներից մեկը հրատարակչություն ուղարկած նամակում տարակուսում էր, թե «նման հանդես հրատարակելու ինչ անհրաժեշտություն կա և առհասարակ ինչպիսի կապ կարող են ունենալ Կովկասի, դրա պատմության, մշակույթի և ավանդույթների հետ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Օսմանյան կայսրությունում բնակություն հաստատած ու «թուրքացած» չերքեզները։ Եթե նման մի բան է հարկավոր անել, ավելի նպատակահարմար կլիներ, որ դա անեն վերջին տարիներին

⁶²⁴ Տե՛ս *Prof., Dr. Erol Taymaz*, a.g.e., ss. 300 – 301:

⁶²⁵ Տե՛ս *Izzet Aydemir*, a.g.e., s. 23:

⁶²⁶ Տե՛ս *Prof., Dr. Erol Taymaz*, a.g.e., s. 301:

բուլղարիայի լծից փրկված կովկասցիները», գրել է նա⁶²⁷: Նամակագիրը, Ռուսաստանից Գերմանիա փախած կովկասցիների կողմից միությունների ստեղծումը և «Կովկաս» անունով թերթերի հրատարակումը մատնանշելով՝ քննադատել է Թուրքիայի չերքեզական համայնքի այդ նախաձեռնությունը⁶²⁸:

Այս մեջբերումը հստակ պատկերացում է տալիս, որ Թուրքիայի մտավորականության մի որոշ հատված, հիմնականում՝ չափավոր հայացքների տեր մարդիկ, Գերմանիայում հաստատված նոր «խորհրդային» վտարանդիության գործունեությունը համարում էր Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի համար վտանգավոր, ինչպես նաև չերքեզներին դիտում էր որպես մի թուրքացած տարրի, որին չպետք է հետաքրքրեն Հյուսիսային Կովկասի խնդիրները:

Զիյա Բերսիսը որպես «Կովկաս հանդեսի» առաջնային նպատակ նշեց. «թուրքին ծանոթացնել չերքեզի հետ, հասարակությանը իրողությունը պատկերելու համար ներկայացնել Չերքեզական հարցի վերաբերյալ պարզաբանումներ»: Ըստ այդմ նա որպես օրինակ բերեց Մեհմեդ Ֆեթեթեյ Շոյեհին, որը 1920-ական թթ. չվախեցավ չերքեզներին որպես դավաճաններ ներկայացնելու՝ պետության կողմից հովանավորվող արշավի դեմ ակտիվ պայքար վարելուց⁶²⁹:

Անհրաժեշտ ենք համարում նաև համառոտակի ներկայացնել 1950–1960 թթ. հյուսիսկովկասյան համայնքի մամուլը, հրատարակվող հանդեսների բնույթն ու դրանցում քննարկվող խնդիրների բովանդակությունը, քանի որ այդպես էին միահյուսվում չերքեզական համայնքին և հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությանը մտահոգող խնդիրները:

«Կովկաս հանդեսը» լույս տեսավ մոտ մեկ տարի՝ 1953 թ., Իսմայիլ Բերսիսի խմբագրությամբ: Այն «Կովկասյան մշակութային

միության» պաշտոնական օրգանն էր, որը «ամսական քաղաքական, մշակութային և գրական հանդես» էր⁶³⁰: Հանդեսի հակախորհրդային ուղղվածությունն արտահայտվեց ԽՍՀՄ-ում հյուսիսկովկասյան ժողովուրդներին Միջին Ասիա արտաքսելուն առնչվող նյութերի, ինչպես նաև լեռնականների և «այլ թյուրքալեզու ժողովուրդների» իրավունքների ոտնահարման վերաբերյալ հոդվածների հրատարակմամբ⁶³¹: Այդ համատեքստում առանձնակի ուշադրություն դարձվեց 1920-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության գործունեությանը և «Պրոմեթևս» շարժմանը⁶³²: Գիտական ու գրական բաժիններում ներկայացվեցին չերքեզական պատմությանն ու լեզվին նվիրված ուսումնասիրություններ, չերքեզ գրողների ստեղծագործություններ: «Կովկաս ամսագրի» բովանդակության ընտրության հարցում առանձնահատուկ դեր ունեցավ նրա հիմնադիր և գլխավոր խմբագիր Իսմայիլ Զիյա Բերսիսը, որն ակտիվ կերպով պայքարեց Թուրքիայում հյուսիսկովկասյան համայնքի իրավունքների պաշտպանության համար՝ այդ պատճառով դատնալով բազմաթիվ քննադատությունների և սպառնալիքների թիրախ⁶³³:

1953 թ. Զիյա Բերսիսի վախճանից հետո հանդեսի գլխավոր խմբագիր դարձավ «Հյուսիսկովկասյան մշակութային և փոխօգնության կոմիտեի» հիմնադիր անդամներից մեկը՝ դոկտոր Վասֆի Գյուսարը, որն այդ հանդեսի հրատարակությունը շարունակեց «Կովկաս հանդես (Kafkas Mecmuası)» վերնագրով՝ պահպանելով նույն ուղղվածությունն ու հրատարակման սկզբունքները: Սակայն նրա օրոք զգալիորեն նվազեց քաղաքական հոդվածների թիվը, փոխարենը՝ ավելի մեծ տեղ հատկացվեց պատմական և մշակութային հրատարակումներին: Հանդեսում ավելի լայնորեն լուսաբանվեցին 19-րդ դարի Կովկասյան

⁶²⁷ Տե՛ս İzzet Aydemir, a.g.e., s. 43:

⁶²⁸ A.g.e.

⁶²⁹ A.g.e.

⁶³⁰ Տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 144:

⁶³¹ Ibid.

⁶³² Ibid.

⁶³³ Տե՛ս İzzet Aydemir, a.g.e., s. 42:

պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները, հրապարակվեցին Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության ղեկավարներին և հանրապետության անկումից հետո բռնկված պատամբությունների առաջնորդներին, օրինակ՝ Ուրգուն Հաջիին, նվիրված հոդվածներ⁶³⁴: ԽՍՀՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանման խորհրդանիշն էր «դուք չպետք է վստահեք Կրեմլին» բանաձևը⁶³⁵: Հանդեսի հրատարակման տարեթվերի վերաբերյալ պատմաբան Լուուել Բեզանիսը գրում է, որ այն լույս է տեսել 1954 թ. ապրիլից մինչև 1956 թ. մայիս, ընդամենը հրատարակվել է ընդհանուր թվով 12 համար⁶³⁶:

1957 թ. հունվարին դրա փոխարեն, դարձյալ դոկտոր Վասրֆ Գյուսարի խմբագրությամբ, հրատարակվեց «Նոր Կովկաս (Yeni Kafkas)» հանդեսը, որը լույս ընծայվեց մինչև 1959 թ. օգոստոս: Այդ ժամանակահատվածում լույս տեսան 33 համար⁶³⁷: «Նոր Կովկաս» հանդեսում հրապարակվեցին Օսմանյան կայսրություն 1866 թ. չեչենների արտագաղթի կազմակերպիչ, ռուսական և օսմանյան բանակների զենեքալ Մուսա Կունլուխովի հուշերը, հատվածներ Ազիզ Մեքերի՝ չերքեզների պատմությանը նվիրված գրքից, Հյուսիսային Կովկասի պատմության առանցքային դիպվածները լուսաբանող նյութեր և սկզբնաղբյուրներ⁶³⁸: Քաղաքական բնույթի թեմաներից տեղ գտան ԽՍՀՄ-ին և նրա վարած քաղաքականությունը, հատկապես՝ հյուսիսկովկասյան հարցում, քննադատող ու դատապարտող հոդվածներ, որոնց մեծ մասը թարգմանվեց և արտատպվեց Մյունխենում լույս տեսնող հյուսիսկովկասյան վտարանդիական պարբերականներում:

⁶³⁴ Տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 144:

⁶³⁵ Ibid.

⁶³⁶ Ibid.

⁶³⁷ Ibid., p. 145: Իզեթ Այդեմիրը նշում է, որ ամսագիրը լույս է տեսել մինչև 1963 թ. դեկտեմբեր (տե՛ս İzzet Aydemir, a.g.e., s. 43):

⁶³⁸ Տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 145:

1950 - 1960 թթ. կարևոր առանձնահատկությունն այն էր, որ հյուսիսկովկասյան միությունները, ինչպես նաև տպագիր մամուլը գտնվում էին դեռ ձևավորման ընթացքում, իսկ քաղաքական մթնոլորտը բարենպաստ չէր դրանց զարգացման համար՝ հատկապես սահմանափակումներ դնելով թե՛ քննարկվող հարցերի, թե՛ տպագրվող նյութերի վրա: Այդ իսկ պատճառով հյուսիսկովկասյան մամուլն ուներ ներքին համայնքային ուղղվածություն, ինչի պատճառով դրանում հաճախ օգտագործվում էին «մենք», «մեր», «ընթերցողները կհասկանան» արտահայտությունները⁶³⁹: Թեմատիկ առումով, բացի ֆոլկլորին վերաբերող հոդվածներից, հիմնականում քննարկվում էին Հյուսիսային Կովկասի պատմությանը, մշակույթին ու ավանդույթներին վերաբերող հարցեր⁶⁴⁰:

Միայն 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումից հետո Թուրքիայում հաստատված համեմատաբար ավելի բարենպաստ ժողովրդավարական մթնոլորտում, երբ 1961 թ. սահմանադրությամբ պաշտոնապես թույլատրվեց երկրում զանազան կազմակերպությունների ստեղծումը, հյուսիսկովկասյան կառույցներն ու մամուլն ստացան ավելի ակտիվ ու բազմակողմանի գործունեություն ծավալելու հնարավորություն: Սակայն այդ շրջանում 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը որպես գործոն վերջնականապես դուրս եկավ ասպարեզից:

Ամփոփելով 1940-ական թթ. կեսերից մինչև 1960 թ. Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնության և նրա մեջ ինտեգրման գործընթացում գտնվող 1920 թ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում տեղի ունեցող զարգացումները՝ հարկ ենք համարում նշել, որ հատկապես վերջին տարիներին թուրքական պատմագրության ուշադրության կենտրոնում են հիմնականում այն զարգացումներն ու փաստերը, որոնք հնարավորություն են տալիս լույս

⁶³⁹ Տե՛ս Prof. Dr. Erol Taymaz, a.g.e., s. 301:

⁶⁴⁰ A.g.e.

սփռելու 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջման կազմակերպման և իրականացման գործում, ինչպես նաև հետագա հուզումներում չերթեզվելի ունեցած դերի, պետության կառավարման համակարգում չերթեզվական ծագում ունեցող գործիչների ներգրավվածության աստիճանի աճման հարցերի վրա: Հատկանշական է, որ նման միտումը նորություն չէ: Դեռ 1950-ական թթ. չերթեզ հեղինակների՝ Գերմանիայում և Թուրքիայում լույս տեսնող աշխատություններում ուշադրություն դարձվեց այն դերի վրա, որն ունեցել են չերթեզները Թուրքիայի պատմությունում և մշակույթում: Այսպես, պատմաբան Ռ. Տրախոն 1956 թ. Մյունխենում հրատարակած «Չերթեզներ» մենագրության մեջ շեշտում է այն «մեծ դերը, որ 1864 թ. չերթեզական վտարանդիությունը խաղացել է ինչպես նախկին Օսմանյան կայսրության կյանքում, այնպես էլ ներկայումս Թուրքիայի Հանրապետությունում», և հպարտությամբ նշում է, որ թուրքական խորհրդարանում մոտ 40 պատգամավոր, ինչպես նաև քազմաթիվ դիվանագետներ ու նախարարներ ունեն չերթեզական ծագում⁶⁴¹:

⁶⁴¹ Տե՛ս P. Трахо, указ. раб., с. 118: 1950–1960 թթ. Դեմոկրատական կուսակցության կառավարության կազմում չերթեզական ծագում ունեցող առանցքային նախարարներից մեկը՝ արտաքին գործերի նախարար Ֆաթիհ Ռուշթու. Ջոռլուն (տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 83):

*Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքում
1960 - 1971 թթ. տեղի ունեցած զարգացումները*

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման հետևանքով իշխանությունն անցավ զինվորականությանը: Այն ցրեց խորհրդարանը և կառավարությունը, իսկ պետության կառավարման համար ստեղծեց Ազգային միասնության կոմիտե, որի ղեկավար դարձավ գեներալ, հետագայում՝ պետության նախագահ Ջեմալ Գյուրսելը:

ՌԻ-շագրավ է այն փաստը, որ 1960 թ. հեղաշրջումը կազմակերպած և իրականացրած զինվորականների խմբում զգալի թիվ էին կազմում չերթեզական ծագում ունեցող սպաները, ներառյալ՝ հեղաշրջման իրական ղեկավար գեներալ Ջեմալ Մադանօղլուն և հեղաշրջման «զաղափարական հայր» գնդապետ Թալեթ Այդեմիրը: Չերթեզ սպաները հետագայում ևս առանձնահատուկ դեր ունեցան 1962–1963 թթ. Թալեթ Այդեմիրի ձեռնարկած երկու հեղաշրջումների փորձերում⁶⁴²: Այդ ամենը հիմք ծառայեց, որպեսզի որոշ հրապարակումներում 1960 թ. հեղաշրջումը որակվի որպես «չերթեզական դավադրություն». շեշտվեց, որ հեղաշրջման զաղափարն առաջ էին քաշել և առաջին դավադրական զաղտնի խմբավորումները ձևավորել էին չերթեզ սպաները⁶⁴³:

Սակայն չկա որևէ հիմնավոր ապացույց, որ 1960 թ. հեղաշրջման հարցում չերթեզ սպաների համար զաղափարական հենարանն ու միավորող հանգամանքն էին «չերթեզական զաղափարները», կամ թե հեղաշրջմանը մասնակցելու նրանց դրդեցին «չերթեզական անջատողականության ու ազգայնականության» հավակնությունները, կամ ընդհանուր բնութագրամամբ՝ «չերթեզականությունը», քանի որ

⁶⁴² Տե՛ս Doç., Dr. Sevda Alankuş, a.g.e., s.317:

⁶⁴³ Տե՛ս Ahmet Kahraman. Darağaçları Gölgesinde Korku Cumhuriyeti. İstanbul, Tümm zamanlar Yayıncılık, 1994, s. 134:

իրականում Թուրքիայում անջատողականության ու ազգայնականության դրսևորումներ չեն դիտվել: 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջման կազմակերպիչներին միավորող գաղափարախոսությունը հիմնված էր առաջին հերթին Աթաթյուրքի ազգայնականության հիմնադրույթների վրա, որոնցից Մենդերեսի կառավարությունը, հեղափոխական սպայության համոզմամբ, աստիճանաբար հրաժարվում էր^{*}: Կազմակերպական առումով, իրոք, իրենց դերը խաղացին չերքեզների շրջանում լայն տարածում ունեցող փոխադարձ կապվածությունը և միմյանց սատար լինելու ավանդույթը, ինչպես դա տեղի էր ունեցել 1919–1922 թթ. ազգայնական շարժման օրոք^{**}: Սակայն գոյություն ունեին «չերքեզականության» նման բազմաթիվ միավորիչ

* 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջման կազմակերպիչների գաղափարական մոտեցումներն իրենց արտացոլումն ստացան 1961 թ. ընդունված սահմանադրության մեջ, որի ներածական մասում նշվում էր «թուրքական ազգայնականությունից թափ ու խրատ առնելու» հանգամանքը, ինչպես նաև հռչակվում էր «լիովին զիտակցված կերպով տեր լինել «հայրենիքում խաղաղություն, աշխարհում խաղաղություն (Yurtta Sulh, Cihanda Sulh)» սկզբունքին, Ազգային-ազատագրական պայքարի ոգուն, ազգի գերիշխանությանը, Աթաթյուրքի սկզբունքներին հավատարմությանը» (տե՛ս «Osmanlı – Türk Anayasaları (sözlüklü)». Araş. Gör. Tuncer Özyayuz, Kocaeli Üniversitesi Hukuk Fakültesi. İstanbul, Alkim Yayınevi, 1997, s. 170): Հանրապետական Թուրքիայում բանակը, իրեն հռչակելով քեմալականության գաղափարախոսության պահապան, այդ սկզբունքների վտանգված լինելու դեպքում զինված ուժերի ներքին կանոնադրության 35 հոդվածով իրավունք է վերստին միջամտելու քաղաքական գործընթացներին (տե՛ս *Ümit Cizre, Egemen İdeoloji ve Türk Silahlı Kuvvetleri. Kavramsal ve ilişkisel bir analiz. «Bir Zümre, Bir Parti. Türkiye’de Ordu», Derleyenler: Ahmet İnsel – Ali Bayramoğlu. İstanbul, Birikim Yayınları, 2004, ss. 135 - 161, ինչպես նաև՝ Tamil Bora. Ordu ve Milliyetçilik, İnanç dönüştürme, 163 - 178):*

** «Չերքեզականությունը» կազմակերպչական առումով որպես ռազմական խունտայի անդամների համար միավորող գործոն օգտագործելու հանգամանքն ամենայն մանրամասնություններով հայտնի է դառնում 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջման կազմակերպիչներից մեկի՝ գնդապետ Թալատ Այդեմիրի հուշերից, որտեղ նա նկարագրում է, թե ինչպես իր շուրջն էր հավաքում դժգոհ սպայությանը և կիսվում պետությունը կործանումից փրկելու համար իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու անհրաժեշտության մասին մտքերով (տե՛ս «Talat Aydemir'in Hatıraları» İstanbul, 1968, ss. 24 - 27, 206 - 208):

գործոններ, որոնցից կարելի է նշել, օրինակ, 1960 թ. հեղաշրջման ղեկավար սպաների ճնշող մեծամասնության մասնակցությունը 1950–1952 թթ. Կորեական պատերազմին՝ թուրքական զումարտակի կազմում⁶⁴⁴:

Հյուսիսկովկասյան համայնքի առնչությամբ թուրք պատմաբաններն ու քաղաքագետները հաճախ շեշտում են ևս մեկ հանգամանք՝ այն, որ չերքեզները, բանակից բացի, ավանդաբար մեծ թիվ են կազմել հետախուզական կառույցներում, ինչը հիմք է տվել տարբեր գրաբարությունների⁶⁴⁵: Ընդ որում, «Հասուն կազմակերպությունից» մինչ օրս չերքեզների գերակշռումը Թուրքիայի հետախուզական կառույցներում, առաջին հերթին՝ Ազգային հետախուզական ծառայությունում, մշտական բնույթ է կրում, և ամենին էլ պայմանավորված չէ հետախուզական կառույցում կատարվող կազմակերպական ու բովանդակային փոփոխություններով^{*}: Թուրքիայի հետախուզության զարգացմանը նվիրված գիտական գրականության մեջ նշվում է այդ կառույցում չերքեզների գերակշռության ավանդույթի պահպանման ու ամրապնդման գործում Թուրքիայի Ազգային հետախուզության ծառայության 1962–1964 թթ. ղեկավար, ազգությամբ չերքեզ Մեհմեթ Ֆուաթ Դոդուի դերը⁶⁴⁶: Սակայն այս, ինչպես և թուրք գեներալների շրջանում չերքեզական ծագում

⁶⁴⁴ Տե՛ս *Doğan Akyaz. Askeri Müdahalelerin Orduya Etkisi. Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine. İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 88 – 105*:

⁶⁴⁵ Տե՛ս *Hüsamettin Arslan: 1923 Müslümanlara ‘Türk’ dedi. «Radikal», 19 Aralık 2005*:

* 1955 թ.՝ ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցելուց հետո, Ազգային հետախուզական ծառայությունը ենթարկվեց վեափոխումների. ընդօրինակվեցին ամերիկյան հետախուզական մարմնի կառուցվածքն ու գործելաոճը (տե՛ս *Mehmet Eymür, a.g.e., s. 34*): 1950–1960 թթ. ստեղծվեց մի իրավիճակ, երբ Թուրքիայի հետախուզական կառույցը ոչ միայն գտնվում էր ԱՄՆ-ի վերահսկողության տակ, այլև, օրինակ, ԱՇՏ Ստամբուլի մասնաճյուղի, ինչպես նաև երկրով մեկ ցրված գաղտնալսման կայանների աշխատողները աշխատավարձ էին ստանում ԱՄՆ-ից (տե՛ս *Tuncay Özkan, a.g.e., ss. 194–195, 205*):

⁶⁴⁶ Տե՛ս *Tuncay Özkan, a.g.e., s. 259*:

ունեցողների համեմատաբար մեծ թիվ կազմելու փաստերը պայմանավորված են առաջին հերթին ընտանեկան ավանդույթներով⁶⁴⁷:

Այն մասին խոսելիս, թե 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջման կազմակերպիչների խմբում, ընդհանուր առմամբ թուրքական բարձրաստիճան սպայության կազմում և հետախուզական ծառայության համակարգում զգալի թիվ էին կազմում չերքեզական ծագում ունեցողները, ինչպես նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովում կային ծագումով չերքեզ պատգամավորներ*, կարևոր է նշել, որ այդ հանգամանքը թեև որոշակի ազդեցություն է գործել 1960–1971 թթ. Թուրքիայի չերքեզական համայնքում տեղի ունեցող զարգացումների վրա, այնուամենայնիվ, վճռորոշ չի եղել, քանի որ դրանք հիմնականում պայմանավորված են եղել հետևյալ երեք հանգամանքներով.

1. 1961 թ. սահմանադրության ընդունումից հետո Թուրքիայում հաստատվեց ավելի ժողովրդավարական և ազատական մթնոլորտ, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ ընդլայնել հյուսիսկովկասյան միությունների ցանցը և հրատարակել նոր՝ ավելի ազատական բնույթի, պարբերականներ: Այդ շրջանում չերքեզ մտավորականները իրենց աշխատություններում ձեռնարկեցին առաջին փորձերը՝ ազգայնական շարժման մեջ չերքեզների դերը վերանայելու, մասնավորապես՝ կասկածի տակ դնելու Չերքեզ Էթեմի «ղավաճանության» փաստը,
2. 1920-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության մնացորդների շրջանում խորացան հոռետեսական տրամադրությունները, և այն՝ որպես գործոն վերջնականապես դուրս եկավ պատմության թատերաբեմից,

⁶⁴⁷ Տե՛ս *Soner Yalçın. Teşkilatın İki Silahşoru. İstanbul, Doğan Kitap, 2001*:

* Թուրքական խորհրդարանի չերքեզական ծագում ունեցող պատգամավորներից քչերն էին ակտիվ մասնակցություն ունենում համայնքային կյանքին: Նրանցից կարելի է հիշատակել 1962–1965 թթ. Կոնիա քաղաքից պատգամավոր ընտրված Քալըբջան Քաֆլուն:

3. Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակայությունները և այդ համատեքստում հյուսիսկովկասյան փոքրամասնության գործոնի շահարկումը համապատասխանեցվեցին ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շահերին:

1961 թ. սահմանադրությունը, ներքաղաքական մթնոլորտը դարձնելով նախկինում եղածի համեմատությամբ ավելի ժողովրդավարական, դրանով իսկ ստեղծեց հասարակության քաղաքականացման, տարբեր արմատապես հակադիր քաղաքական հոսանքների ձևավորման, միությունների ու կազմակերպությունների հիմնադրման հնարավորություններ*:

Ավելի ազատ կերպով տարբեր կարգի կազմակերպություններ ստեղծելու հնարավորությունից, ի թիվս այլ մահմեդականան փոքրամասնությունների, օգտվեց նաև հյուսիսկովկասյան համայնքը: Նահանգներում հյուսիսկովկասյան կառույցների ստեղծմանը, ներքին քաղաքական պայմաններից բացի, նպաստեց նաև այն, որ վարչապետ Ադնան Մենդերեսի կառավարության օրոք անցկացված ազրարային բարեփոխումների հետևանքով չերքեզական գյուղերը տնտեսապես ուժեղացան, իսկ 1960–1970-ական թթ. մերձակա քաղաքները դեռ բավարար էին ստացվող գյուղմթերքի սպառման համար, ինչի շնորհիվ քաղաքներ գաղթելու տեմպերը որոշակիորեն դանդաղեցին⁶⁴⁸:

Օգտվելով ստեղծված հնարավորություններից՝ չերքեզներն իրենց հոծ բնակությամբ բոլոր նահանգներում ու շրջաններում սկսեցին

* 1961 թ. ԹՉ Սահմանադրության 23-րդ հոդվածը իրավունք էր տալիս թերթեր և հանդեսներ հրատարակելու առանց նախապես թույլտվություն ստանալու և գումարային վստահություն ներդրելու, իսկ 29-րդ հոդվածը թույլ էր տալիս առանց նախապես համաձայնություն ստանալու ստեղծել միություններ, որոնք, սակայն, չպետք է ուղղված լինեին օրենքի կամ պետության ամբողջականության, ազգային անվտանգության և հասարակական կարգի դեմ (տե՛ս «Osmanlı – Türk Anayasaları (sözleşmeleri)», ss. 180, 182):

⁶⁴⁸ Տե՛ս *Taner Duman. Örenşehirde Aile-Emek Örgütlenmesinin Değişimi. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişim», Ankara, Kaf Der Yayınları, 1999, s. 147*:

կազմավորել «Հյուսիսկովկասյան մշակութային միություններ»⁶⁴⁹։ Մինևսյն ժամանակ, փոխվեց դրանց բնույթը։ 1950-ական թթ. ստեղծվող Հյուսիսկովկասյան միությունները, մտահոգված լինելով մեծ քաղաքներում չերքեզների երիտասարդ սերնդի . . . ինքնության պահպանման հարցով, երիտասարդներին համախմբելու նպատակով հիմնականում կազմակերպում էին «պարահանդեսներ» և «թեյի հանդիպումներ», իսկ դրանց մշակութային գործունեությունը գերազանցապես սահմանափակվում էր «ժողովրդական պարերի և խաղերի» դասավանդմամբ⁶⁵⁰։ Այսպես, Ստամբուլում հիմնանդրվող միությունները, իրենց առաջնային նպատակ հռչակելով «հայրենակիցներին հավաքելու ու մերձեցնելու» գործը, հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էին «ավանդական մշակույթի պահպանման և վերակենդանացման վրա»⁶⁵¹։

1960-ական թթ. հյուսիսկովկասյան փոքրամասնությունն ընդլայնեց իր գործունեության ոլորտը՝ ավելի ակտիվ կերպով մասնակցելով հասարակական կյանքին. իսկ մշակութային միությունների հրատարակությունների շարքում մեծ տեղ հատկացվեց նախկինում քիչ շոշափվող ինդիաներին, մասնավորապես՝ համայնքի պատմությունն ու Թուրքիայում չերքեզների դերը լուսաբանող գիտահանրամատչելի աշխատություններին, նույնիսկ փորձեր արվեցին կազմակերպելու հյուսիսկովկասյան լեզուների դասընթացներ⁶⁵²։ 1960-ական թթ. սկզբներին երկրում լայն թափ ստացած աջամետ ու ձախամետ կուսակցությունների և ծայրահեղական

⁶⁴⁹ Տե՛ս *Mehmet Eser*, a.g.e., s. 41; *Erol Taymaz*, a.g.e., s. 454:

⁶⁵⁰ Տե՛ս *Erol Taymaz*, a.g.e., s. 454:

⁶⁵¹ A.g.e.

⁶⁵² Տե՛ս *Alexandre Toumarkine*, a.g.e., s. 437: 1960–1980-ական թթ. միություններում լեզվի դասընթացները կազմակերպվում էին որոշ գաղտնիության պայմաններում՝ առանց դրանց վրա ուշադրություն հրավիրելու։ Միայն 1990-ական թթ. ազգային լեզուների դասընթացներն ավելի բաց բնույթ ստացան՝ թերթերում համապատասխան հայտարարություններ հրապարակելու միջոցով։

կազմակերպությունների միջև քաղաքական պայքարի աստիճանական ուժեղացումը հանգեցրեց այն բանին, որ 1970-ական թթ. հյուսիսկովկասյան համայնքի գործունեությունում ի հայտ եկան քաղաքական տարրեր, թեև հյուսիսկովկասյան մշակութային միությունները ջանացին հեռու մնալ քաղաքականացումից և քաղաքական պայքարից՝ նախորդ տասնամյակների նման հիմնական նպատակ հռչակելով «հյուսիսկովկասյան մշակույթի պահպանումն ու զարգացումը»⁶⁵³։

1960-ական թթ. հիմնադրված միությունների շարքում հասարակական գործունեության առումով հատկապես աչքի ընկավ հետագայում իր ակտիվությամբ և կազմակերպական ձիրքով հյուսիսկովկասյան հասարակությունում նշանակալի դեր կատարած Անկարայի «Հյուսիսկովկասյան մշակութային միությունը», որն ստեղծվեց 1961 թվականին։ Այդ միության հիմնադիրներն էին մի շարք անվանի չերքեզական հասարակական գործիչներ ու մտավորականներ, ինչպես, օրինակ, Իզեթ Այդեմիրը, Մ. Զիննի Հիզալօղլուն, Հայրեթին Շենը, Քայա Էրդեմին։ Միության նախագահ ընտրվեց Զիննի Հիզալօղլուն։ Անկարայի «Հյուսիսկովկասյան մշակութային միությունը» հիմնադրման առաջին տարիներին զբաղվեց սոսկ մշակութային գործունեությամբ, իսկ հետագայում անցավ ավելի ակտիվ հասարակական գործունեության, նույնիսկ դարձավ Թուրքիայում առաջին չերքեզական կազմակերպությունը, որը 1960-ական թթ. երկրորդ կեսին ԽՍՀՄ-ում գործող «Ռոդինա (հայրենիք)» կոմիտեի միջոցով կապեր հաստատեց Հյուսիսային Կովկասում ապրող

⁶⁵³ A.g.e.: Ի տարբերություն նախորդ շրջաններից՝ 1970-ական թթ. հյուսիսկովկասյան մշակութային միությունների գործունեության բնույթի վրա ազդեցություն էին գործում այնպիսի նոր հանգամանքներ, ինչպիսիք էին գյուղերից դեպի քաղաք հոսքի ակտիվացումը, չերքեզական գյուղի փակ համակարգի ոչնչացման պատճառով գյուղական բնակավայրերում ավանդական մշակույթի արագ տեմպերով վերացումը և Հյուսիսային Կովկասի հետ առաջին կապերի հաստատումը։

հայրենակիցների հետ, ինչը չերքեզական համայնքի համար աննախադեպ երևույթ էր:

1960-ական թթ. չերքեզական մտավորականության և 1920-ական թթ. կովկասյան վտարանդիության՝ Թուրքիայում մնացած ներկայացուցիչների ջանքերն ուղղվեցին նոր հյուսիսկովկասյան կազմակերպությունների ստեղծմանը և պետության չերքեզաբնակ բոլոր վայրերի ընդգրկմամբ դրանց ցանցի ձևավորմանը: Այդ ռազմավարության հիմքում դրվեցին ոչ միայն ազգային ինքնության պահպանման և ուժացման կանխման անհրաժեշտության գիտակցումը, այլև քաղաքներում բնակվող և արդեն ազգային ուժացման շեմին կանգնած զանգվածի մեջ համընդհանուր «չերքեզական» մշակութային ինքնությունն ձևավորելու ձգտումը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքի համոզմամբ՝ Թուրքիայում, ի տարբերություն Իսրայելից և Հորդանանից, «չերքեզ ոչ թե ծնվում են, այլ՝ դառնում» ըստ մշակութային ինքնության, որի ձևավորման և պահպանման գործում առանցքային դեր ունեն «Հյուսիսկովկասյան մշակութային միությունները»⁶⁵⁴: Ինչպես նշում է չերքեզական սփյուռքի պատմության մասնագետ դոկտոր Սևդա Ալանքուշը, չերքեզները «նոր-նոր սովորում են հասարակական վայրերում ասել, որ իրենք չերքեզ են, սակայն այդ ինքնությամբ քաղաքականություն չեն կարող վարել: Կովկասյան միությունները չերքեզական ինքնությունը վերաստեղծելու գործում գովասանքի արժանի կարևոր գործունեություն են ծավալել, սակայն

⁶⁵⁴ *Stu Doç. Dr. Sevda Alankuş. Ürdün Çerkesleri. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, s. 298: Մշակութային ինքնության հանգամանքը պայմանավորված է այն բանով, որ մի շարք գիտնականների կարծիքով՝ չերքեզները, լինելով եկվոր, չեն կարող ունենալ քաղաքական ինքնություն, քանի որ տվյալ դեպքում քաղաքական ինքնությունը ապաստան տրամադրած կամ երկրորդ հայրենիք դարձած պետության քաղաքականությունն է (տես *Yaşar Bağ, a.g.e., ss. 9–10*):*

քաղաքական կուսակցությունից բացի այլ գործող անձ չճանաչող «ժամանակակից» քաղաքական մթնոլորտը չերքեզների օգտին չէ»⁶⁵⁵:

Հյուսիսկովկասյան ծագում ունեցող և եզրահանման (մարզինալացման) սահմանին հասած զանգվածի մեջ մշակութային ինքնություն ձևավորելու միջոցով ազգային ուժացման կանխմանը միտված քաղաքական ուղեգիծ մշակելու հետ մեկտեղ 1960-ական թթ. չերքեզ մտավորականները հանդես եկան ևս մեկ նախաձեռնությամբ՝ վերանայելու պաշտոնական պատմագրության կողմից ազգայնական շարժման մեջ չերքեզների խաղացած դերի ներկայացումը, մասնավորապես՝ կասկածի տակ դնելու Չերքեզ Էթեմի «դավաճանության» փաստը: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արվեցին չերքեզական պարբերականների էջերում: Հետագայում տվյալ թեման, դուրս գալով հողվածների սահմաններից, դարձավ լուրջ գիտական ուսումնասիրությունների առարկա:

Ազգայնական շարժման մեջ չերքեզների ներդրման վերագնահատման և ազգայնական շարժման իրական պատմության շարադրման գործում առաջավարի դերն ստանձնեց Սաբահաթին Սելեքը, որը, զբաղվելով Թուրքիայի նորագույն պատմության ուսումնասիրությամբ, 1953 թ. հիմնադրեց «Սելեք» հրատարակչությունը⁶⁵⁶: Իր 1963–1964 թթ. երկհատոր «Անատոլիական հեղաշրջումը» աշխատությունում, որը 1965–1966 թթ. արժանացավ Յունուս Նադիի անվան մրցանակի, Սելեքը ձեռնամուխ եղավ ազգայնական շարժման իրական պատմության շարադրմանը և Չերքեզ Էթեմի դերի վերանայմանը⁶⁵⁷: Սաբահաթին Սելեքի աշխատությունը, լինելով պաշտոնական պատմագրության վերանայման առաջին փորձերից մեկը, ազդեցություն գործեց «ձախ քեմալականության»

⁶⁵⁵ *Stu Doç. Dr. Sevda Alankuş, a.g.e., s. 298:*

⁶⁵⁶ *Stu İzzet Aydemir, a.g.e., s. 73:*

⁶⁵⁷ *Stu Sabahattin Selek. Anadolu İhtilali. Cilt 1, 2, İstanbul, Kastaş Yayınları, 2000 (աշխատության իններորդ հրատարակությունը լույս է տեսել 2000 թվականին):*

շարժման դպրոցի պատմաբանների, մասնավորապես՝ Դոդան Ավջրօղլուի վրա՝

Կովկասյան վտարանդիության 1960-1971 թթ. գործունեությունն ու համաչեքեզական խնդիրների լուծման գործում կատարած ներդրումը վերլուծելով Թուրքիայի հյուսիսկովկասյան փոքրամասնության հասարակական-մշակութային գործունեության համատեքստում՝ կարող ենք ջրբաժան գիծ համարել 1967 թվականը: 1920-ական թվականների հյուսիսկովկասյան վտարանդիությունը մինչև 1967 թ. դեռ պահպանում էր իր նշանակությունը որպես քաղաքական ուժ և որոշ չափով գործոն, իսկ 1967 թ. սկսեց վերանայ պատմաքաղաքական ասպարեզից: Ինչպես այդ, այնպես էլ քաղաքական գործունեությունից՝ կենդանի մնացած ներկայացուցիչների հրաժարման հարցում սոսնձնահատուկ դեր խաղաց հիասթափության և հետագա պայքարի անիմաստության զգացումը, որը նկատելի էր ոչ միայն Թուրքիայում, այլև տարբեր եվրոպական երկրներում ապաստանած 1920-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում:

Թուրքիայում վերջին հյուսիսկովկասյան վտարանդիական պարբերականը, որն աչքի ընկավ իր հակախորհրդային ուղղվածությամբ, և որը դեռ ղեկավարեցին նախկին լեզեռնականները, 1964-1967 թթ. հրատարակված «Միացյալ Կովկաս (Birleşik Kafkasya)»

* Առաջին հատորի նախաբանում Ս. Սելեքը, նոր մոտեցում ցուցաբերելով Թուրքիայում ազգայնական պայքարի նկատմամբ, գրում է, որ այն «ինչպես ենթադրվում է, մի քանի տարվա մեջ իրականացված և պատմություն դարձած մի ժամանակաշրջան չէ: Մենք դեռ այդ շրջանում ենք ապրում: Հակառակ պարագայում այսօր ոչ թե նույն խնդիրների լուծման առաջ կկանգնեինք, այլ ուրիշ՝ միանգամայն այլ, հարցեր կլուծեինք» (տես Տես *Sabahattin Selek*, a.g.e., c. 1, s. 5): Նույն մոտեցումը բնորոշ է նաև պատմաբան Դոդան Ավջրօղլուին, որն իր «Ազգային-ազատագրական շարժման պատմություն» քառահատոր հիմնարար աշխատության տարբերվեր նշել է 1838-1995-ը, թեև գիրքը գրվել է 1960-ական թթ. վերջին: «Չախ քեմալականության» շարժման մասին ավելի հանգամանորեն տես *Tevfik Çavdar*. *Türkiye'nin Demokrasi Tarihi* 1950-1995. Ankara, İmge Kitabevi, 2000, ss. 125 - 129:

հանդեսն էր: Այն պաշտոնապես Ստամբուլի Հյուսիսկովկասյան մշակութային միության օրգանն էր, բայց, ի տարբերություն մյուս մշակութային ու ֆոլկլորային ուղղվածությամբ համայնքային հրատարակություններից, ցայտուն կերպով արտահայտում էր հակախորհրդային քաղաքական տրամադրություններ⁶⁵⁸, և գաղափարական առումով 1961 թ. Մյունխենում Ալիխան Կանտեմիրի հիմնադրած հանդեսի ժառանգորդն էր⁶⁵⁹: ԽՍՀՄ մահմեդական վտարանդիության պատմության մասնագետ Լոուել Բեզանիսի բնութագրմամբ՝ «Միացյալ Կովկաս» հանդեսը հետամուտ էր հյուսիսկովկասյան վտարանդիների ավանդական նպատակին, այն է՝ վերականգնել «ազատ ու միացյալ» Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետությունը, որն իր ուրույն տեղը պետք է ունենա կովկասյան հանրապետությունների լայն համադաշնության մեջ⁶⁶⁰:

«Միացյալ Կովկասի» խմբագրությունը դարձավ հյուսիսկովկասյան վտարանդիության և չեքեզ երիտասարդ սերնդի մտավորականների մերձեցման մի յուրահատուկ օջախ: Խմբագրությունում Ահմեթ Ջանբեք Հավժոքոյի, Կոսոքի և Ջաբալիի նման փորձառու առաջնորդների կողքին ձևավորվեց երիտասարդ

⁶⁵⁸ Տես *Lowell Bezanis*, ibid, p. 145:

⁶⁵⁹ Տես *İzzet Aydemir*, a.g.e., s. 224: Ալիխան Կանտեմիրը 1920-ական թթ. հյուսիսկովկասյան վտարանդիության այն գործիչներից էր, որոնք, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շուսահատվելով, նախկին եռանդով ու տոկունությամբ շարունակեցին իրենց հակախորհրդային պայքարը: Ալիխան Կանտեմիրը մի խումբ համախոհների և նախկին «Հյուսիսկովկասյան ազգային կենտրոնի» անդամների հետ 1961 թ. Մյունխենում հիմնադրեց «Կովկասի հեղափոխական կոմիտեն», որը ռուսերեն, անգլերեն և թուրքերեն հրատարակեց «Կովկաս», այնուհետև «Միավորված Կովկաս» հանդեսները: Կանտեմիրը գործակցում էր Ամերիկյան կոմիտեի հետ, ԽՍՀՄ պատմության և մշակույթի ուսումնասիրման ինստիտուտի կողմից արաբերեն լույս ընծայվող «Elmecele» հանդեսի պատասխանատու խմբագիրն էր և Հյուսիսային Կովկասի ազգային կոմիտեի նախագահը:

⁶⁶⁰ Տես *Lowell Bezanis*, ibid, p. 145:

մտավորականներից կազմված մի թիւ: Ի դեպ, նրանցից շատերը միևնույն ժամանակ և՛ աշխատում էին խմբագրությունում, և՛ սովորում էին համալսարաններում: Նրանց թվում էին հետազայում հայտնի չերքեզական հասարակական գործիչներ դարձած Սեֆեր Բերգեզը, Օսման Չելիքը, Մ. Զիհնի Հիզալը և ուրիշներ⁶⁶¹: Քանի որ հանդեսն իր ուղղվածությամբ գործեց ընդհանուր հակախորհրդային պայքարի շրջանակներում, ապա վայելեց Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանության աջակցությունը, ինչով ապահովվեց հյուսիսկովկասյան պրոբլեմներում ավելի լայն և ազատ որոնումներ կատարելու հնարավորություն:

«Միացյալ Կովկաս» հանդեսի խմբագրության օրինակով կարելի է պնդել, որ հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում 1960–1970-ական թթ. գուգահեռաբար տեղի էին ունենում երկու զարգացում: Առաջինը, որն ընդհանուր առմամբ բնորոշ էր Թուրքիային, այն էր, որ պայքարի՝ 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության անցած ուղին ու նրա գործունեությունը օրինակ ծառայեցին երիտասարդ չերքեզական մտավորականությանն ու ձևավորվող հյուսիսկովկասյան միությունների համար: Չերքեզ մտավորական, հասարակական գործիչ, 1970-ական թթ. հյուսիսկովկասյան համայնքում ձևավորված «վերադարձ (dönüş)» շարժման առաջնորդներից մեկը՝ Իզեթ Այդեմիրը, 1964 թ. հիմնադրեց «Կովկաս մշակութային հանդեսը (Kafkasya Kültürel Dergi)»: Հանդեսի հրատարակման շրջանում (1964–1975 թթ.) նա, կապեր հաստատելով Թուրքիայում և տարբեր եվրոպական երկրներում ապրող 1920-ական թթ. վտարանդիության առաջնորդների հետ, դիմեց նրանց՝ խնդրելով ուղարկել իրենց կենսագրությունները՝ հանդեսում հրատարակելու և երիտասարդ սերնդի համար որպես ուղեցույց ծառայեցնելու համար⁶⁶²: Մեծ մասը մերժեց այդ առաջարկությունը, ընդամին շատերի պատասխանը միանման էր. «միայն մահանալուցս հետո կարող եք իմ

⁶⁶¹ Ibid.

⁶⁶² Stü İzzet Aydemir, a.g.e., s. 139:

մասին խոսել»⁶⁶³: Ըստ Այդեմիրի՝ նրանցից շատերը մահացան՝ այդպես էլ չհասցնելով գրի առնել իրենց կենսագրությունը և քաղաքական գործունեության պատմությունը⁶⁶⁴:

Այդեմիրին տրված պատասխանում ակնհայտորեն զգացվում է 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության որոշ հատվածում 1960-ական թթ. լայն տարածում ստացած հոռետեսության և հուսահատության ազդեցությունը: Այդ հուսահատությունն ու հոռետեսությունը, որոնց զարգացման տրամաբանական ելքն էին պանդխտության պայմաններում ինքնությունը պահպանելու անհնարինության և Հյուսիսային Կովկաս վերադառնալու անհրաժեշտության գաղափարները, 1960–1970-ական թթ. վտարանդիությանը բնորոշ հատկանիշներ էին: Թեև նախկին Հյուսիսային Կովկասի Լեոնականների հանրապետության առաջնորդներն իրենց հուշերում հավատք ու համոզմունք էին հայտնում, որ վաղ թե ուշ ԽՍՀՄ-ը փլուզվելու է⁶⁶⁵, սակայն երկարատև ապարդյուն պայքարը հուսահատեց շատերին, և նրանք, օրինակ՝ Հ. Բամատը, հեռացան քաղաքական ասպարեզից: Այն, որ ԽՍՀՄ-ը ոչ միայն հաղթեց պատերազմում, այլև էլ՝ ավելի հզորացավ, 1920-ական թթ. վտարանդիության վրա ծանր ազդեցություն գործեց: Դրան գումարվեցին նաև պատերազմի ավարտին իրենց ընկերների ձերբակալությունն ու ՊԱԿ-ի գործակալների կողմից տարբեր երկրներում վտարանդիության մի շարք ականավոր ղեկավարների, օրինակ՝ Ստեփան Բանդերայի, սպանությունները⁶⁶⁶:

⁶⁶³ A.g.e.

⁶⁶⁴ A.g.e.

⁶⁶⁵ Stü Pşimaho Kosok, a.g.e., s. 47: «Միավորված Կովկաս» հանդեսում հրատարակված հոդվածներից մեկում Վասան-Գիրեյ Ջաֆալին նույնպես կոչ էր անում «համբերությամբ սպասել այն ոչ հեռու օրվան, երբ մեր հայրենիքի և ազգի համար ռուսական սարսափը խորհրդանշող Կրեմլի բարբարոս վարչակարգը կտապալվի» (տես İzzet Aydemir, a.g.e., s. 212):

⁶⁶⁶ Stü John Barron. KGB. The Secret Work of Soviet Secret Agents. NY, A Corgi Book, 1975, p. 298:

Հուսահատությունն ու հոռետեսությունը հին վտարանդիության շրջանում* ձևավորեցին այն համոզմունքը, թե հյուսիսկովկասյան ժողովուրդները օտարության պայմաններում դատապարտված են ձուլման և միակ փրկությունը հայրենիք վերադառնալն է: Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքում «վերադարձի» հոսանքը չերքեզական մտավորականության շրջանում վերջնականապես շարժման վերածվեց 1970-ական թթ. սկզբին⁶⁶⁷: Այդ ժամանակ հյուսիսկովկասյան մշակութային միությունների ղեկավար կազմում «վերադարձի» կողմնակիցներն զբաղեցրին առաջավոր դիրքեր, սակայն շարժումն ինքը մնաց որպես իրականացման որևէ մեխանիզմից զուրկ մի վերացական ցանկություն⁶⁶⁸, թեև հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում ԽՍՀՄ վերադառնալու գաղափարն սկսեց տարածում ստանալ դեռ 1960-ական թթ.: Տվյալ իրողությունը չվրիպեց չերքեզական մամուլի ուշադրությունից: «Հյուսիսային Կովկաս» հանդեսի 43-րդ համարում դոկտոր Վասֆի Գյուսարը «Վերադարձ» վերնագրով հոդվածում բարձրացրեց այդ հարցում ԽՍՀՄ-ի հետ համաձայնության գալու հնարավորության հարցը: «Ինչ վարչակարգ էլ որ լինի, կարելի է մտածել Կովկաս վերադառնալու վերաբերյալ Խորհուրդների հետ համաձայնություն ձեռք բերելու մասին: Գնացած տեղում առնվազն կլինեն մայրենի լեզվով կրթություն տվող դպրոցներ, կգտնվի ազգային դրությունը բարելավելու ճանապարհ և ժամանակի ընթացքում

* Հարկ է նշել, որ 1945 թ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության շրջանում հուսահատական տրամադրություններ չէին նկատվում, հակառակը՝ նրանք սկզբունքորեն դեմ էին ԽՍՀՄ վերադառնալու գաղափարին: Հայտնի է 1951 թ. Ա. Ավտորխանովի արտահայտած այն միտքը, թե «քանի դեռ Ստալինը նստած է Մոսկվայում, մենք չենք կարող գնալ Կովկաս. Թբիլիսի, Վլադիկավկաս, Տաշքենդ, Կիև տանող ճամփաներն անցնում են Մոսկվայով»:

⁶⁶⁷ Տե՛ս *Hasan Şaguj. Çerkesler'de Dönüş Düşüncesinin Dünü Bugünü Yarını Üzerine Düşünceler. «Kafkasya Gerçeği», sayı 9, Temmuz 1992, Samsun, s. 1:*

⁶⁶⁸ A.g.e.

կկանխվի ուժացումը»⁶⁶⁹: Որպես այդպիսի համաձայնության օրինակ հեղինակը նշել է Իսրայելի Պետության ստեղծումը: Հատկանշական է, որ հենց Վասֆի Գյուսարը 1962 թ. Սյունիսենում գումարված «Գերի ազգերի համագումարում» ներկայացրեց Թուրքիայի չերքեզներին⁶⁷⁰:

Հյուսիսկովկասյան համայնքում «վերադարձի» գաղափարի տարածման հետ է կապված չերքեզական հասնրակական ինքնագիտակցության մեջ «հայրենիք» և «տարագրություն» հասկացությունների հստակ ձևակերպումը և հյուսիսկովկասյան ժողովուրդների ապագայի դիտումը հենց այդ տեսակետից:

Սակայն «վերադարձի» գաղափարների տարածումը Թուրքիայի վարած քաղաքականության համար անցանկալի և ետյնիսկ վտանգավոր երևույթ էր, քանի որ հակասում էր ԽՍՀՄ՝ որպես ժողովուրդների բանտի կերպարին, մի երկրի, որտեղ հնարավոր չէ ապրել: Դրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ «վերադարձի» գաղափարի ջատագով երիտասարդները հիմնականում ձախ հայացքների տեր մարդիկ էին և ավելի համարձակ կերպով էին քննադատում Թուրքիայի վարած ազգային քաղաքականությունը: Դրա հետ մեկտեղ հյուսիսկովկասյան համայնքում ձևավորվեց հակակոմունիստականություն որդեգրած և պանթուրքականության դեմ ուղղված մի հոսանք, որի հիմքում էին ուժացման վախը և դրա դեմ պայքարելու ձգտումը⁶⁷¹:

Հյուսիսկովկասյան համայնքում՝ Թուրքիայի վարած թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական ուղեգծին հակադրվող զարգացումների ծավալման լավագույն ապացույցն է չերքեզական մտավորականության վրա մեծ ազդեցություն գործած «Մտրակ (Kamçı)» ութեջանոց «ամսական քաղաքական թերթը», որը հրատարակվեց 1969–1970 թթ.:

⁶⁶⁹ Տե՛ս «Kuzey Kafkasya Dergisi», sayı 43, s. 31 (մեջբերվում է ըստ՝ *İzzet Aydemir, a.g.e., s. 25:*

⁶⁷⁰ Տե՛ս *İzzet Aydemir, a.g.e., s. 23:*

⁶⁷¹ Տե՛ս *Alexandre Toumarkine, a.g.e., s. 935:*

Ընդհանուր առմամբ, լույս ընծայվեց տասը համար, ինչից հետո թուրքական իշխանությունները փակեցին թերթը⁶⁷²։ Ի տարբերություն բոլոր մյուս հյուսիսկովկասյան հրատարակություններից, «Մտրակն» ուներ հստակ կերպով արտահայտված «չերքեզամետ (Circassianist)» ուղղվածություն։ Առաջին անգամ այդ թերթում սկսեցին հրատարակվել հոդվածներ, որոնցում շեշտվում էր, որ հյուսիսկովկասյան ժողովուրդների ազգային ինքնության պահպանման տեսակետից ԽՍՀՄ-ը շատ ավելի բարենպաստ քաղաքականություն է վարում, քան Թուրքիան։ Թերթում հրատարակվեցին Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետությունները նկարագրող նյութեր, արտատպվեցին այնտեղ լույս տեսնող գրականության, արվեստի և այլ բնույթի նմուշներ⁶⁷³, հյուսիսկովկասյան վտարանդիության առաջնորդների, օրինակ՝ Այթեք Նամիթոքի, հոդվածներ և աշխատություններ, ինչպես նաև Թուրքիայի չերքեզների պատմության դրվագները լուսաբանող նյութեր՝ անգամ վառ արտահայտված քաղաքական ենթատեքստով*։

Չնայած իր հրատարակության կարճատևությանը՝ «Մտրակը» ձգտում էր ապացուցելու, որ օտարությունում ցրված բնակվելու պարագայում չկա որևէ հնարավորություն պահպանելու մշակույթն ու ինքնությունը, և հետևողականորեն առաջ էր քաշում հայրենադարձության գաղափարը⁶⁷⁴։ Այսպիսով՝ թերթի քարոզած այն գաղափարը, թե մշակույթի և ինքնության պահպանման աղբյուրը

⁶⁷² Տե՛ս *Lowell Bezanis*, *ibid*, p. 146: Թերթի հրատարակիչներն այն դիտում էին որպես 1911–1914 թթ. Ստամբուլում լույս տեսած առաջին չերքեզական «Գուազե» թերթի ավանդույթների շարունակողի։

⁶⁷³ *Ibid*, pp. 146–147: Թերթի տպարանակը 1500 էր։

* Այսպես, թերթում հրատարակվեց 1923 թ. Արևմտյան Անատոլիայի չերքեզական գյուղերի բնակչության տեղահանման առիթով Իսմայիլ Բեքթոքի քննադատական նամակը՝ գրված Ռաուֆ Օրբային, մի նամակ, որը, փաստորեն, Աթաթյուրքի քաղաքականության քննադատություն էր, ուստի և՛ թրեդրեն պատժելի արարք (տե՛ս *Lowell Bezanis*, *ibid*, p. 147):

⁶⁷⁴ Տե՛ս *Prof. Dr. Erol Taymaz*, *a.g.e.*, s. 302:

պատմական հայրենիքն՝ է, հակասում էր «սառը պատերազմի» տարիներին Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությանը, ըստ որի՝ հիմնական թշնամին ԽՍՀՄ-ն էր։ Ի տարբերություն մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Թուրքիայի վարած քաղաքականությունից, երբ վտարանդիության գործոնը խորհրդաթուրքական հարաբերություններում հակադրման կետերից մեկն էր, և Թուրքիայի կառավարող շրջաններին հնարավորություն էր տալիս մի շարք հակախորհրդային ձեռնարկումներ արդարացնելու վտարանդիության գործունեությամբ, հետպատերազմյան Թուրքիայի արտաքին քաղաքականությունում որպես գործոն օգտագործվում էր արդեն ոչ թե առանձին վերցված կովկասյան քաղաքական վտարանդիությունը, այլ Թուրքիայում չերքեզական փոքրամասնության առկայությունը։ 1962 թվականից պետությունը նույնիսկ որոշ չափով ֆինասավորեց չերքեզական համայնքի կառույցների գործունեությունը⁶⁷⁵։

Հարկ է հաշվի առնել նաև այդ տարիներին Թուրքիայի քաղաքականության վրա ԱՄՆ-ի ազդեցությունը, որովհետև ինչպես Թուրքիայում, այնպես էլ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում բնակվող հյուսիսկովկասյան վտարանդիության «հակակոմունիստական» գործունեության ընդհանուր ուղղորդումն ու ֆինանսավորումն իրականացնում էր ԱՄՆ-ը⁶⁷⁶։ Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան վտարանդիության ղեկավարները կամ այնտեղ ծնված չերքեզները մշտապես մասնակցում էին Մյունխենում ԱՄՆ-ի

⁶⁷⁵ *A.g.e.*

⁶⁷⁶ Տե՛ս *Tuncay Özkan*, *a.g.e.*, s. 216: 1960-ական թթ. Թուրքիայի վրա ԱՄՆ-ի ազդեցության վկայությունն է մասնավորապես հետևյալ փաստը. 1963 թ. կառավարության նիստերից մեկի ժամանակ վարչապետ Ի. Բյույուկն ի պատասխան այն մեղադրանքին, թե չի վարում անկախ արտաքին քաղաքականություն, բողոքեց, որ նման հնարավորություններ չկան, քանի որ երկրում բոլոր մասնագետները օտարներ են, իսկ «եթե մեկին հանձնարական եմ տալիս, այն դեռ չկատարված, Վաշինգտոնում արդեն դրա մասին տեղյակ են լինում»։

նախաձեռնությամբ ու հովանավորությամբ անցկացվող «ԽՍՀՄ գերի ժողովուրդների» համագումարներին: Այսպես. Թուրքիայում հյուսիսկովկասյան վտարանդիության ներկայացուցիչների հետ սերտ կապեր պահպանող Բարասբի Բայթուգանը ղեկավարում էր Մյունխենի «Ազատություն» ռադիոկայանի հյուսիսկովկասյան բաժինը, իսկ Ահմեթ Նամիթոքը «ԽՍՀՄ մշակույթի և պատմության ինստիտուտի» հիմնադիրներից էր⁶⁷⁷, Ահմեթ Նաբի Մագուման Մյունխենի և Ստամբուլի հյուսիսկովկասյան կառույցները միմյանց հետ կապող օղակ էր՝ համակարգելով դրանց հակախորհրդային գործունեությունը:

Այնուամենայնիվ, 1967 թ., չնայած առանձին անձանց ակտիվ քաղաքական գործունեությանը, «Միացյալ Կովկաս» հանդեսի հրատարակության դադարեցմամբ 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը որպես գործոն դուրս թողնվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության զինանոցից: Միջազգային հարաբերությունների բնույթի փոփոխությունը, Թուրքիայի՝ որպես ինքնուրույն գործող անձի կարևորության նվազումը հանգեցրին հակախորհրդային պայքարի ձևերի փոփոխությանը, և դրանում մինչպատերազմական վտարանդիությունն այլևս տեղ չունե: Բացի այդ, Թուրքիայում հյուսիսկովկասյան փոքրամասնության առաջնային խնդիրներից մեկը, ինչպես նշվեց, դարձավ ազգային ինքնության և մշակույթի պահպանումը, մինչդեռ իրենց հայրենիքում ապրող հյուսիսկովկասյան ժողովուրդների մշակույթի, լեզվի, գրականության զարգացման բնագավառում խորհրդային իշխանության ներդրումն անվիճելի էր:

Վտարանդիության առաջնորդների դերն ստանձնած՝ Հյուսիսային Կովկասի Լեոնականների հանրապետության նախկին ղեկավարները պանդխտության մեջ իրենց վարած գործունեությամբ Թուրքիայում բնակվող երիտասարդ սերնդի չերքեզական մտավորականության համար դարձան լոկ տոկունության, անպարտելի

⁶⁷⁷ Տե՛ս İzzet Aydemir, a.g.e., ss. 152, 187:

ոգու և դժվարին պայմաններում պայքարի շարունակման վերացարկված մարմնավորում: 1960-ական թթ. վերջերից հյուսիսկովկասյան միություններում ղեկավար դիրքեր գրավեցին 19-րդ դարում Օսմանյան կայսրություն տեղափոխված մուհաջիրների շատավիդները:

Մերնափոխությունն ու քաղաքական ասպարեզից 1920-ական թվականների վտարանդիության հեռանալը արտահայտվեցին նաև 1960-ական թթ. վերջերից հյուսիսկովկասյան պարբերականների բնույթի փոփոխման ձևով. դրանք հակախորհրդային պայքարից ու հակակոմունիստական քարոզչությունից անցան «չերքեզականության» պրոբլեմներին՝ հիմնական շեշտը դնելով չերքեզական պատմության, մշակույթի, ավանդույթների լուսաբանման վրա: Այսպես, 1964–1975 թթ. Իզեթ Այդեմիրի խմբագրմամբ հրատարակվող «Կովկաս մշակութային հանդեսը» ո՛չ հակախորհրդային էր, ո՛չ էլ թուրքամետ⁶⁷⁸: Քարոզելով «չերքեզականությունը»՝ այն հրաժարվեց նույնիսկ հյուսիսկովկասցիներին թուրքական ծագում վերագրելուց⁶⁷⁹: Հանդեսը ոչ միայն այլևս չէր քննադատում ԽՍՀՄ վարած ազգային քաղաքականությունը, այլև գովաբանում էր Հյուսիսային Կովկասում ազգային կրթության մակարդակի բարձրացումը, ԽՍՀՄ-ում հրատարակվող աղբյուր քանաստեղծների ու գրողների ստեղծագործունեները թարգմանում էր թուրքերեն: Խմբագրությունում ներկայացված էին երիտասարդ չերքեզ մտավորականներ՝ Մեֆեր Բերգեթը, Օմեր Բեյուգան, Քադիր Նաթհոն, իսկ խմբագիր Իզեթ Այդեմիրը՝ որպես հայրենակիցների հետ կապերի «Ռոդինա» կազմակերպության պաշտոնական հյուր, 1968 թ. առաջին անգամ այցելեց Հյուսիսային Կովկաս: Սակայն վերադառնալուց հետո նա իր ուղևորության նոթերի տպագրության հարցում հանդիպեց թուրքական իշխանությունների կողմից հարուցված դժվարությունների: 1970

⁶⁷⁸ Տե՛ս Lowell Bezanis, ibid, p. 145:

⁶⁷⁹ Ibid.

թվականից հրատարակվող «Հյուսիսային Կովկաս (Kuzey Kafkasya)» հանդեսը որդեգրեց քաղաքական հրապարակումներից կամ ԽՍՀՄ-ում ու Թուրքիայում տեղի ունեցող պետական-քաղաքական իրադարձությունների մեկնաբանությունից խուսափելու ուղեգիծ, թեև լուսաբանեց հյուսիսկովկասյան վտարանդիության գործունեությունը՝ հողվածներ արտասույելով «Գորցի Կավկազա» և այլ վտարանդիական հանդեսներից⁶⁸⁰:

1971 թ. մարտի 12-ին թուրքական Գլխավոր շտաբը կառավարությանը ներկայացրեց մի հուշագիր, որը հանգեցրեց վարչապետ Ս. Դեմիրելի ղեկավարած դաշնադրային կառավարության հրաժարականի և մինչև 1973 թ. փաստացի ռազմական կառավարման վարչակարգի հաստատմանը: 1970-ական թթ. Թուրքիայում ծավալվեց աջ և ձախ կուսակցությունների միջև կատաղի պայքար, տեղի ունեցավ հասարակության քաղաքականացում, և այդ պայմաններում թուրքական հասարակության բաղկացուցիչ մաս կազմող հյուսիսկովկասյան համայնքում ընթացան նոր սոցիալ-քաղաքական զարգացումներ, փոխվեցին կառույցների բնույթը, պայքարի ձևերը, ինչպես նաև շրջանառության մեջ դրվեցին «սփյուռք», «արտագաղթ» հասկացությունները, համայնքում ձևավորվեցին երկու հակադիր հոսանքներ՝ «մնացողների» և «վերադարձողների»: Սակայն 1971 թ. դրությամբ 1920-ական թվականների հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունն արդեն վերջնականապես դուրս էր մղվել Թուրքիայի քաղաքական թատերաբեմից, և վերընշված զարգացումները կրում էին զուտ ներհամայնքային ու ներքաղաքական բնույթ:

ՎԵՐՁԱԲԱՆ

Ռուսաստանում 1917–1920 թթ. տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հետևանքով 1920-ական թթ. արտասահման գաղթած հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը, առաջնորդվելով «թեկուզ և սատանայի հետ, բայց՝ ընդդեմ բոլշևիկների» կարգախոսով, օտարության մեջ երկարատև և անպտուղ պայքար մղեց Հյուսիսային Կովկասում հաստատված խորհրդային կարգերը տապալելու համար: Այդ պայքարն առավել ակտիվ էր 1920–1940-ական թվականներին: Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը, Թուրքիայում և մի շարք եվրոպական պետություններում հիմնելով տարբեր քաղաքական կազմակերպություններ, կուսակցություններ ու միավորումներ, պատրաստ էր իր ամբողջ ներուժը տրամադրել այն պետությանը, որը շահագրգռված էր հյուսիսկովկասյան վտարանդիությանը աջակցելու և իր արտաքին քաղաքական ինտիրների լուծման համար նրան օգտագործելու մեջ:

Նման պետությունների շարքում առաջնային տեղ էր զրավում Թուրքիան, որին հյուսիսկովկասյան վտարանդիության մեծ մասն իր նախնիների օրինակով համարեց «երկրորդ հայրենիք», և որն իր քաղաքական շահերի համատեքստում ավանդաբար օգտագործել է հյուսիսկովկասյան ժողովուրդների անկախանալու ձգտումներն ու Ռուսաստանի դեմ մղած պայքարը:

Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության պատմության մեջ Թուրքիայի ունեցած առանձնահատուկ դերը բացատրվում է մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով: Դեռ Օսմանյան կայսրության շրջանում ձևավորվեցին նրա կովկասյան քաղաքականությունում հյուսիսկովկասցիների օգտագործման ավանդույթն ու քաղաքական ուղեգիծը, որոնք իրենց տրամաբանական շարունակությունն ստացան հանրապետական Թուրքիայում՝ վերափոխվելով հստակ քաղաքական ռազմավարության: Այդ քաղաքականության վերիվարումները մեծապես պայմանավորված էին

⁶⁸⁰ Ibid., p. 148:

միջազգային ասպարեզում Թուրքիայի դիրքերի ուժեղացմամբ կամ թուլացմամբ, ինչի հաշվառմամբ Թուրքիայի կառավարող շրջանները այդ քաղաքականության մեջ կատարում էին համապատասխան շտկումներ ու փոփոխություններ: 1920-ական թթ. հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության ակտիվ օգտագործման և ուղղորդման քաղաքականությունը 1930-ական թթ. կեսերից փոխարինվեց ֆաշիստական Գերմանիայի հետ այդ գործոնի համատեղ օգտագործման քաղաքական ուղեգծով, ընդ որում, Թուրքիան հայտնվեց հետին պլանում, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ գործում նախաձեռնությունն անցավ ԱՄՆ-ին:

Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության ներքին զարգացումները, հակախորհրդային պայքարի ձախողման գիտակցման խորացումը, հուսահատության զգացումն ու ԽՍՀՄ հետպատերազմյան հզորացումը, ինչպես նաև երկրորդ համաշխարհային պատերազմի և դրան անմիջապես հաջորդած տարիներին հյուսիսկովկասյան վտարանդիության մի շարք առաջնորդների ոչնչացումը հանգեցրեցին այն բանին, որ 1960-ական թթ. երկրորդ կեսից հյուսիսկովկասյան վտարանդիությունն սկսեց որպես գործոն դուրս մղվել քաղաքական թատերաբեմից: Թուրքիայում բնակվող այդ վտարանդիության ներկայացուցիչները աստիճանաբար ձուլվեցին չեքոսլովակական համայնքին և իրենց քաղաքական գործունեությունն ամփոփեցին համայնքային կառույցների շրջանակում:

Արխիվային նյութեր

Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ)

ֆոնդ 113, ցուցակ 3, գործ 23

Архив внешней политики Российской Империи (АВПРИ)

фонд 180, Посольство в Константинополе, оп. 517/2, д. 4226

Архив внешней политики РФ (АВП РФ)

ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, дд. 52987, 52991, 52992, 52994, 52997, 52998; папка 233, д. 53021, 53001, 53020;

ф. 08, Секретариат Карахана, оп. 8, папка 13, д. 39; оп. 10, папка 38, дд. 262, 263, 264, 265;

ф. 132, Референтура по Турции, оп. 1, папка 1, д. 18; оп. 3, папка 2, дд. 3, 33; оп. 4, папка 5, д. 8; оп. 11, папка 78, дд. 32, 34;

ф. 0132, Референтура по Турции, оп. 1, папка 1, д. 18; оп. 3, папка 102, д. 15; оп. 11, папка 78, д. 32;

ф. 0148, Референтура НКВД по Закавказью, оп. 5, папка 10, д. 80;

ф. 0301, Консульство в Трапезунде, оп. 1, папка 2, дд. 16, 17, 19

Государственный архив Российской Федерации (ГАРФ)

ф. Р-9401, оп. 2, д. 65

Российский государственный архив социально-политической истории (РГАСПИ)

ф. 558 (Сталина), оп. 1, дд. 1992, 4491, 5581

Российский государственный военно-исторический архив (РГВИА)
ф. 38, Департамент Генерального Штаба, оп. 7, д. 422

Российский государственный военный архив (РГВА)
ф. 461к., оп. 1, д. 236;
ф. 772 к, оп. 1, д. 91

Հրատարակված արխիվային ժողովածուներ

«Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)»: Պատասխանատու խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Դազախեցյան: Ե., 1999, 369 էջ:

«Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945 гг.», т. 1, 2. М., Госполитиздат, 1957, 294 с., 405 с.

«Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.», под редакцией Армана Киракосяна. Е., «Тигран Мец», 2010, 330 с.

«Армянская Революционная Партия Дашнакцутюн», (выписки из решений XVI с'езда армянской революционной партии Дашнакцутюн), Е., 1957.

«ТВММ Gizli Celse Zabıtları 1920-1924»:

Cilt 1, «24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921)», 457 s;

Cilt 2, «17 Mart 1337 (1921) – 25 Şubat 1337 (1922)», 894 s.
Cilt 3, «6 Mart 1338 (1922) – 27 Şubat 1338 (1923)», 1325 s;
Cilt 4, «2 Mart 1339 (1923) – 25 Teşrinievvel 1934)», 595 s;
Ankara, «Türkiye İş Bankası Kültür Yayınları», 1985

«Kafkasya Konfederasyonu. Vesikalar ve Materyallar, Kafkasya Konfeder»,
«Şurası Neşriyatından», 1937, N 2, Paris, 60 s.

Ժողովածուներ

«Դաշնակցության իսկական դեմքը», Ե., «Հայաստան», 1988, 82 էջ:
«Դրո», Կենսագրական, հուշեր, վկայություններ, Ե., «Ազատ խոսք», 1991, 411 էջ:

«Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (Քառասուներ շարք)», Դ հատոր, Աթէնք, 1995, 492 էջ:

«Беженцы 1918-1920, 1948-1952, 1988-1989», Баку, «Гянджлик», 1992, 448 с.

«История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945». Т. 3. «Коренной перелом в ходе Великой Отечественной войны (ноябрь 1942 – декабрь 1943)», М., Военное издательство, 1961, 659 с.

«История Северной Осетии. XX век», М., «Наука», 2003, 632 с.

Проф. Ю. В. Ключников и проф. А. В. Сабанин. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Часть III «От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской Революции». Выпуск I: «Акты советской дипломатии». М., Литиздат НКВД, 1928.

«Материалы для библиографии Кабардино-Балкарии, Карачаево-Черкессии и Адыгеи (1918-1940)» (<http://adiga.narod.ru/history/401.htm>).

«Нагорный Карабах в 1918 – 1923 гг. Сборник документов и материалов». Е., Издательство АН Армении, 1992, 755 с.

«Новейшая история Турции». М., Издательство “Наука”, 1968, 395 с.

«СССР и Турция 1917-1979». М., Главная редакция восточной литературы, 1981, 318 с.

«Crossing the Aegean, an appraisal of the 1923 compulsory population exchange between Greece and Turkey» /Edited by Renee Hirschon/. New York – Oxford: “Berghahn Books”, 2006, 103 p.

«Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar». Editor: Baskın Oran, Cilt I: «1919-1980». İstanbul, “İletişim Yayınları”, 2001, 900 s.

Հուշագրություններ

1. *Թորլարեան Միւսը*, Օրերուս հետ: Բ հրատարակութիւն, բովորովին բարեփոխուած եւ նոր հատկումներով: Պէյրուս, Տպ. «Հայկ», 1963, 502 էջ
2. *Агабеков Г. С.*, Г. П. У. (Записки чекиста). Берлин, Издательство “Стрела”, 1930, 264 с.
3. *Агабеков Г. С.*, ЧК за работой. Берлин, Издательство “Стрела”, 1931, 329 с.
4. *Аралов С. И.*, Воспоминания советского дипломата. М., Изд-во Института международных отношений, 1960, 222 с.
5. *Врангель П. Н.*, Записки (<http://militera.lib.ru/memo/russian/vrangell/index.html>).
6. *Деникин А. И.*, Очерки русской смуты, в 3 книгах. Кн. 3, т. 4-5, М., 2006, 414 с.

7. *Кузнецов Н. Г.*, Накануне (Мемуары) (<http://militera.lib.ru/memo/russian/kuznetsov-1/10.html>). «»

8. *Николаи Вальтер*, Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время. В сб.: «В. Николаи, М. Ронге, Ч. Э. Россель. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время», Киев, «Княгиня Ольга», 2005, 144 с.
9. *Расулзаде Мамед Эмин*, Сборник произведений и писем. М., Издательство «Флинта», 2010, 252 с.
10. *Топчибашев Али Марданбек*, Письма из Парижа. Баку, Азербайджанское государственное издательство, 1998, 56 с.
11. *Тачмырат Мырат*, Воспоминания (<http://turkmeny.h1.ru/memuar/m2.html>).
12. *Açba Leyla*, Bir Çerkes Prensesinin Harem Hatıraları. İstanbul, L and M Yayınları, 2004, 206 s.
13. *Ataturk Mustafa Kemal*, Nutuk. İstanbul, Kum Saati Yayınları, 2002, 704 s.
14. *Aydemir Talat*, Talat Aydemir'in Hatıraları. İstanbul, 1968, 360 s.
15. *Butbay Mustafa*, Kafkasya Hatıraları. Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 1990, 192 s.
16. *Cebesoy Ali Fuat*, Moskova Hatıraları (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, “Vatan” Neşriyatı, 1955, 352 s.
17. *Cebesoy Ali Fuat*, Siyasi Hatıralar. Büyük Zaferden Lozana. Cilt 1, İstanbul, Temel Yayınları, 2002, 369 s.
18. *Cemil Arif*, I Dünya Savaşında Teşkilat-ı Mahsusa. İstanbul, Arba Yayınları, 1997, 408 s.
19. *Cemil (Denker) Arif*, İttihatçı Şeflerin Gürbet Maceraları. Hazırlayan: Yücel Demirel. İstanbul, Arma Yayınları, 1992, 188 s.
20. *Ertürk Hüsamettin*, İki Devrin Perde Arkası. İstanbul, Sebil Yayınevi, 1996, 528 s.
21. *Eymür Mehmet*, Analiz. Bir MİT Mensubunun Anıları. İstanbul, AD Yayıncılık A.Ş., 1997, 217 s.

22. *Halil Paşa*, İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş. İstanbul, Kamer Yayınları, 1997, 381 s.
23. *Karabekir Kazım*, İstiklal Harbimiz. İstanbul, Emre Yayınları, 1995, 2606 s.
24. *Karabekir Kazım*, İstiklal Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkanı. İstanbul, Tekin Yayınevi, 1990, 381 s.
25. *Karabekir Kazım*, Günlükler (1906-1948). Cilt 1, 2. İstanbul, YKY, 2009, 1533 s.
26. *Keykurun Naki*, Azerbaycan İstiklal Mücadelesinden Hatıralar (1905-1920). Ankara, İlke Kitabevi Yayınları, 1998, 217 s.
27. *Kırimer. Cafer Seydahmet*, Bazı Hatıralar. İstanbul, EMEL Türk Kültürünü Araştırma ve Tanıtma Vakfı, 1993, 328 s.
28. *Kosok Pşimaho* (Kuzey Kafkas Cumhuriyeti Eski Devlet Başkanı), Kuzey Kafkasya. Hürriyet ve İstiklal Savaşı Tarihinden Yapraklar. İstanbul, Çeltüt Matbaası, 1960, 47 s.
29. *Leverkuehn Paul*, Sonsuz Nöbette Görev. İstanbul, ARBA Yayınları, 1998, 207 s.
30. *Dr. Rıza Nur'un Moskova-Sakarya Hatıraları*, İstanbul, Bogaziçi Yayınları, 1991, 365 s.
31. *Tengirşenk Yusuf Kemal*, Vatan Hizmetinde. İstanbul, Bahar Matbaası, 1976, 302 s.
32. *Tokçan Muhammet Emin*, Kafkasyalı. Kayıp Ülkenin Kayıp İnsanları. İstanbul, AN Yayıncılık, 2002, 235 s.
33. *Şevket Paşa Mahmut*, Harbiye Nazırı Sadrazam Mahmut Şevket Paşa'nın Günlüğü. Derleyen: Adem Sarigöl. İstanbul, İQ Kültürsanat Yayıncılık, 2001, 287 s.

Մենագրական աշխատություններ

34. *Արրահանյան Ա. Գ.*, Համառոտ ուրվագիծ հայ զաղթավայրերի պատմության: Բ հատոր, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1967, 423 էջ:
35. *Գնյազյան Դավիթ*, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ.: Ե., Հեղինակային հրատարակչություն, 2008, 200 էջ:
36. *Նիկոլայ Հովհաննիսյան*, Արաբական երկրների պատմություն: Հ. II, Եր., «Զանգակ - 97», 2004, 680 էջ:
37. *Абрамов Вадим*, Контрразведка. Щит и меч. Против Абвера и ЦРУ. М., «Яуза ЭКСМО», 2006, 320 с.
38. *Авакян Арсен*, Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Е., Изд. «Гитутюн», 2001, 421 с.
39. *Авторханов А (Уралов Александр)*, Народоубийство в СССР. Убийство чечено-ингушского народа. М., СП «Вся Москва», 1991, 69 с.
40. *Атаев Тюрккая*, США, НАТО и Турция. М., Издательство «Прогресс», 1973, 268 с.
41. *Бадерхан Ф*, Северокавказская диаспора в Турции, Сирии и Иордании. М., ИВ РАН, 2001, 118 с.
42. *Босворт К. Э*, Мусульманские династии. М., «Наука», 1971, 324 с.
43. *Волков С. В.*, Белое движение. Энциклопедия гражданской войны. М., «ОЛМА-Пресс», 2003, 672 с.
44. *Дзидзария Г. А.*, Махаджирство и проблемы истории Абхазии XIX века. Сухуми, 1975.

45. *Гасанова Э. Ю.*, Идеология буржуазного национализма в Турции в период правления младотурок (1908-1914 гг.). Баку, Издательство Академии наук Азербайджанской ССР, 1966, 161 с.
46. *Гилязов Искандер*, Тюркизм; становление и развитие (характеристика основных этапов). Казань, Издательство Казанского государственного университета, 2002, 204 с.
47. *Зареванд*, Турция и Пантуранизм. Париж 1930, 168 с.
48. *Кипкеева З. Б.*, Карачаево-балкарская диаспора в Турции. Ставрополь, 2001, 184 с.
49. *Лавров Н. М.*, Турция в 1918-1956 годах. М., 1956, 53 с.
50. *Леонтович В.*, Генерал Виктор Леонидович Покровский. Мюнхен, «Молодая Россия», 1923; 88 с.
51. *Лудшувейт Е. Ф.*, Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Военно-политический очерк. М., Изд-во московского университета, 1966, 386 с.
52. *Музаев Т. М.*, Союз горцев. Русская революция и народы Северного Кавказа. 1917 - март 1918 г. М., «Патрия», 2007.
53. *Муртазалиев А. С.*, Писатели дагестанского зарубежья. Библиографический справочник. Махачкала, Издательство «Эпоха», 2006, 102 с.
54. *Мухамметдинов Р. Ф.*, Зарождение и эволюция тюркизма (Из истории политической мысли и идеологии тюркских народов; Османская и Российская империи, Турция, СССР, СНГ. 70-е гг. XIX в. – 90-е гг. XX в.). Казань, Изд-во «Заман», 1996, 272 с.
55. *Несин Азиз*, Король футбола. Избранные произведения, М., «Художественная литература», 1985, 542с.
56. *Поцхверия Б. М.*, Внешняя политика Турции после второй мировой войны. М., Издательство «Наука», 1976, 314 с.

57. *Пыхалов Игорь*, За что Сталин выселял народы? Сталинские депортации – преступный произвол или справедливое возмездие? М., «Яуза-Пресс», 2008, 402 с.
58. *Романько О. В.*, Мусульманские легионы Третьего рейха. Мусульманские добровольческие формирования в германских вооруженных силах (1941 - 1945). Симферополь, 2002, 231 с.
59. *Соцков Лев*, Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера. (<http://lib.tr200.net/v.php?id=484&sp=15>)
60. *Трахо Р.*, Черкесы (Circassians – Northern Caucasians). Нальчик, 1992, 158 с.
61. *Червоная С. М.* Абхазия – 1992: Посткоммунистическая Вандея. М., Москгорпечать, 1993, 190 с.
62. *Abbaslı Nazile Dr.*, Azərbaycan Özgürlük Mücadelesi. İstanbul, Beyaz Balina Yayınları, 2001, 335 s.
63. *Ağanoğlu H. Yıldırım*, Osmanlıdan Cumhuriyete Balkanların Makus Talihî – Göç. İstanbul, Kum Saati Yayınları, 2001, 397 s.
64. *Akyaz Doğan*, Askeri Müdahalelerin Orduya Etkisi. Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine. İstanbul, İletişim Yayınları, 2002, 444 s.
65. *Arai Masami*, Jön Türk Dönemi Türk Milliyetçiliği. İstanbul, İletişim Yayınları, 2000, 222 s.
66. *Avagyan Arsen*, Osmanlı İmparatorluğu ve Kemalist Türkiye'nin Devlet-İktidar Sisteminde Çerkesler. İstanbul, Belge Yayınları, 2004, 302 s.
67. *Avcıoğlu Doğan*, Milli Kurtuluş Tarihi 1838 den 1995 e. Cilt I. İstanbul, Tekin Yayınevi, 1998, 421 s.
68. *Aydemir İzzet*, Göç. Kuzey Kafkasya'lıların Göç Tarihi. Ankara, Gelişim Matbaası, 1988, 220 s.
69. *Aydemir İzzet*, Muhaceretteki Çerkes Aydınları. Ankara, 1991, 243 s.
70. *Aydemir Şevket Süreyya*, Makedonya'dan Ortaasyay'ya Enver Pasa. Cilt III «1914-1922». İstanbul, Remzi Kitabevi, 1999, 660 s.

71. *Aydemir Şevket Süreyya*, Tek Adam Mustafa Kemal. Cilt II «1919-1922». İstanbul, Remzi Kitabevi, 1999, 520 s.
72. *Aktar Ayhan*, Varlık Vergisi ve “Türkleştirme” Politikaları. İstanbul, İletişim, 2000, 244 s.
73. *Bahadır İbrahim*, Ümmetten Millete. Türk Ulusu’nun İnşası (1860-1945). Ankara, Kalan Yayınları, 2001, 256 s.
74. *Balcıoğlu Mustafa Prof. Dr.*, Teşkilat-ı Mahsusa’dan Cumhuriyete. Ankara, Nobel Yayın Dağıtım, 2001, 321 s.
75. *Başkaya Fikret*, Batılılaşma, Çağdaşlaşma, Kalkınma. Paradigmanın İflosu. Resmi İdeolojinin Eleştirisine Giriş. İstanbul, Doz Yayınları, 1991, 235 s.
76. *Betül Aslan*, Türkiye-Azerbaycan İlişkileri ve İbrahim Ebilov (1920-1923). İstanbul, Analiz Basım Yayın, 2004, 357 s.
77. *Bozkurt Mahmut Esat*, Atatürk İhtilali. İstanbul. Altın Kitaplar Yayınları, 1967, 423 s.
78. *Cabağı Wassan-Giray*, Kafkas-Rus Mücadelesi. İstanbul, Baha Matbaası, 1967, 107 s.
79. *Çavdar Teyfik*, Türkiye’nin Demokrasi Tarihi 1950-1995. Ankara, İmge Kitabevi, 2000, 379 s.
80. *Çeçen Anıl Prof. Dr.*, Çeçenistan Dosyası. Ankara, Yeni Avrasya Yayınları, 2002, 416 s.
81. *Çulcu Murat*, Marjinal Tarih Tezleri. İstanbul, E Yayınları, 2000, 400 s.
82. *Demirel Emin*, Teşkilat-ı Mahsusa’dan Günümüze Gizli Servisler. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002, 467 s.
83. *Dündar Fuat*, Türkiye Nüfus Sayımlarında Azınlıklar. İstanbul, Doz Yayınları, 1999, 223 s.
84. *Erkan Aydın O.*, Tarih Boyunca Kafkasya. İstanbul, Çiviyazıları, 1999, 216 s.
85. *Feridun Cemal Erkin*, Türk-Sovyet İlişkileri ve Boğazlar Meselesi. Ankara, Boşhur Matbaası, 1968, 452 s.
86. *Hablemitoğlu Necip Dr.*, Kırım’da Türk Soykırımı. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002, 432 s.

87. *Hiçyılmaz Ergün*, Teşkilat-ı Mahsusa’dan MIT’e. İstanbul, Varlık Yayınları, 1990, 112 s.
88. *Kahraman Ahmet*, Darağaçları Gölgesinde Korku Cumhuriyeti. İstanbul, Tüzm zamanlar Yayıncılık, 1994, 241 s.
89. *Kaflı Kadircan*, Şimali Kafkasya. Umumi Bilgiler – Tarih – Güzel Sanatlar ve Kültür. İstanbul, Vakit Matbaası, 1942, 207 s.
90. *Karadaş Yalçın*, Çerkes Kimliği. Türkiye nin Sorunları. İstanbul, Sorun Yayınları, 2009, 256 s.
91. *Kundukh AYTEK*, Kafkasya Müridizmi (Gazavat Tarihi). Sadeleştiren ve Hazırlayan Tarık Cemal Kutlu. İstanbul, Gözde Kitaplar Yayınevi, 1987, 142 s.
92. *Küçük Yalçın*, Sırlar. İstanbul, YGS Yayınları, 2002, 319 s.
93. *Mansur Şamil*, Çeçenler. Ankara, Sam Yayınları, 1995, 224 s.
94. *Öner Çetin*, Şu Bizim Çerkesler. İstanbul, Can Yayınları, 2000, 105 s.
95. *Özkan Tuncay*, MIT’in Gizli Tarihi. İstanbul, ALFA, 2003, 620 s.
96. *Selek Sabahattin*, Anadolu İhtilali. Cilt 1, 2. İstanbul, Kastaş Yayınları, 2000, 400 s., 784 s.
97. *Sever Metin*, Kafdağı’nın Bu Yüzü. Türkiye’deki Kafkas Kökenliler. İstanbul, Doğan Kitapçılık, 1999, 190 s.
98. *Seyfettin Ömer*, Türklük Üzerine Yazılar. Bütün Eserler. Cilt. 16. İstanbul, Bilgi Yayınevi, 1993, 175 s.
99. *Soner Yalçın*, Teşkilatın İki Silahşoru. İstanbul, Doğan Kitap, 2001, 314 s.
100. *Soysal İsmail*, Türk Dış Politikası İncelemeleri İçin Kılavuz (1919-1993). İstanbul, EREN, 1993, 198 s.
101. *Şimşir Sebahattin Yrd. Doç. Dr.*, Azerbaycan’ın İstiklal Mücadelesi. İstanbul, IQ Kültürsanat Yayıncılık, 2002, 272 s.
102. *Tunaşar Seyhun*, Gizemli Bir Devrimci: İsmail Cambolat. Ankara, Piramit Yayıncılık, 2004, 106 s.
103. *Ünal Muhittin*, Kurtuluş Savaşında Çerkeslerin Rolü. İstanbul, Cem Yayınevi, 1996, 256 s.
104. *Yamauchi Masayuki*, Hoşnut Olamamış Adam – Enver Paşa. Türkiye’den Türkistan’a. İstanbul, Bağlam Yayıncılık, 1995, 352 s.

105. *Andrews Peter Alford*, Ethnic Groups in the Republic of Turkey. Wiesbaden, 1989, 320 p.
106. *Barron John*, KGB. The Secret Work of Soviyet Secret Agents. NY, A Corgi Book, 1975, 609 p.
107. *Butter Ruth, Peltz Judith*. Mythical Landscapes Then and Now. The Mystification of Landscapes in Search for National Identity. Yerevan, «Antares», 2006, 299 p.
108. *Hovhannisyán Nikolay*, The Armenian Genocide. Armenocide. Yerevan, «Zangak-97» Press, 2002, 104 p.
109. *Heper Metin*, The State Tradition in Turkey. Huntingdon, The Eothen Press, 1985, 218 p.
110. *Kohn Hans*, Nationalism in the Soviet Union. London, George Routledge & Sons, 1933. 164 p.
111. *Feroz Ahmad*, The Turkish Experiment in Democracy 1950 – 1975. London, The Royal Institute of International Affairs, 1977, 474 p.
112. *Mamouliá G.*, Les combats indépandantistes des Caucasiens entre URSS et les puissances occidentales. Le cas de la Giorgie. Paris, L’Narmattan, 2009, 448 p.
113. *Zurcher E. J.*, The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 - 1926. Leiden, 1984, 173 p.

Հոդվածներ

114. *Ավագյան Ա.*, Թուրքիայի՝ որպես մահմեդականների հովանավորի, դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում: «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր)», Եր., «Նախիջևան» հրատար., 2001, էջ 47 - 56:

115. *Մասունի Գ.*, 20-30-ականներու քրտական շարժումը և Հ.Յ.Դ. դերակատարութիւնը: «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք)», Գ. Հատոր «1918-1992»: Արէնք, 1995, էջ 238 – 252:
116. *Սարրէան Զունէ*, Համաշխարհային Բ. Պատերազմի սկզբնաւորութեան (1939 – 1940 թթ.) Սփիւրքահայ դիրքորոշումներ: «Հայկազեան հայագիտական հանդէս»: Ը հատոր, Պէրոս, 1980, էջ 127 - 146:
117. *Аветисян Грант*, К вопросу о «Кавказском доме» и пантюркистских устремлениях. «Этнические региональные конфликты», Книга 1, «Центральная Азия и Кавказ», М., 1997.
118. *Байтуган Б.*, Этапы развития национально-освободительного движения на Северном Кавказе. «Вопросы истории», М., 2001, N 5, сс. 12 - 25.
119. *Баммат Гайдар*, О прекращении сотрудничества Национальной делегацией Республики Северного Кавказа с Грузинскими официальными учреждениями в Париже, «Кавказ», N 3, 1934, Париж.
120. *Баммат Г.*, Репрессии против кавказских патриотов в Турции. «Кавказ», 1938, N 11(59), сс. 1 - 4.
121. *Былинин В. К., Зданович А. А., Кортаев В. И.*, Организация «Прометей» и «прометейское» движение в планах польской разведки по развалу России/СССР. «Труды общества изучения истории отечественных спецслужб», т. 3. М., Изд-во «Кучково поле», 2007, сс. 318 - 414.
122. *Габлани Гиви*. О кавказских добровольческих соединениях в Германском Вермахте (материал подготовлен Г. Мамулия, доктор истории, Париж), «Историко-культурный журнал «PROMETHEUS», N2, (www.chechen.org/page.4.355-zhurnal-chast.html).

123. *Джавахишвили Николай*, Вместе против большевизма (www.kavkazweb.net/forum/index.php?showtopic=48686).
124. *Егоров Н. Д.*, Разведка Красной армии против белой эмиграции (20-е гг). «Новый исторический вестник», 2001, N1 (3) (www.nivestnik.ru/2001_1/2.shtml).
125. *Жуликова Елена*, Повстанческое движение на Северном Кавказе в 1920 -1925 годах. Документальные публикации и новейшая отечественная историография (http://scepis.ru/library/id_1060.html).
126. *Земсков Виктор*, Репатриация перемещенных советских граждан (http://scepis.ru/library/id_1234.html).
127. *Казаков А. В.*, Возникновение северокавказской политической эмиграции после Гражданской войны в России (www.gazavat.ru/history3.php?rub=17&art=128).
128. *Киреев Н. Г.*, Секуляризм и национализм – два идеологических кита модернизации Турции. «Турция. Современные проблемы экономики и политики», М., ИВ РАН, 1997, сс. 5 - 31.
129. *Лакоба Станислав*, К вопросу о кавказской конфедерации (www.fatiha.ru/fatih/konfederac.htm).
130. *Мамулия Георгий*, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация: Гайдар Баммат и группа “Кавказ” (1934-1939). «Историко-культурный журнал «PROMETHEUS», N 5 (www.chechen.org/page.9.393-zhurnal-chast.html).
131. *Мамулия Георгий*, Идея кавказской конфедерации в рамках движения “Прометей” (к истории пакта Кавказской конфедерации). «Историко-культурный журнал «PROMETHEUS», N 1 - (www.chechen.org/page.5.348-zhurnal-chast.html).
132. «Осетинская эмиграция в 1920-30 годах», «Кавказский узел», 29 марта 2009 (www.kavkaz-uzel.ru/articles/152276/?print=true).

133. *Попов А. В.*, Мюнхенский институт по изучению истории и культуры СССР и вторая волна эмиграции. «Новый исторический вестник», М., РГГУ, 2004, N 1(10), сс. 54 – 70.
134. «Репрессии в Турции. Административные высылки». «Кавказ», 1938, N 10(58), сс. 29 - 31.
135. *Романько О. В.*, Забытый урок Ялтинской конференции. К вопросу о насильственной репатриации членов “восточных” добровольческих формирований западными союзниками в СССР (1945-1947). «Историческое наследие Крыма», 2005, N 9, (<http://a-pesni.golosa.info/ww2/oficial/krym/a-zaburok.htm>).
136. «Русские без отечества: очерки антибольшевистской эмиграции 20-40-х гг.». «Новый исторический вестник», 2002, N2 (2) (www.nivestnik.ru/2002-2/10).
137. *Симонова Т. М.*, “Прометеизм” во внешней политике Польши. 1919-1924 гг. «Новая и новейшая история», М., 2002, N4, сс. 47 - 63.
138. *Солнцева Елена*, Гусь с айвой. Как белоэмигранты встречали Новый год в Стамбуле (www.svobodanews.ru/articleprintview/371493.html).
139. *Хетагуров Г. А.*, ...Не говори красиво (www.darial-online.ru/2009_5/hetagurov1.shtml).
140. *Хотко Самир*, История адыгов в изложении краснодарских авторов (www.adygi.ru/index.php?newsid=58).
141. *Чирикба Вячеслав*, Абхазская диаспора во внутренней и внешней политике Абхазии. Сухуми, 2006 (www.abiblioteka.info/rus/politics/section_7/162.html).
142. *Эмир-Хассан*, Конфедерация Кавказа. «Северный Кавказ», N 2, 1934, Париж.
143. *Яндиева М. Д.*, Ингуши и Ингушетия в трудах и днях Абдурахмана Авторханова (К столетию со дня рождения) (<http://as-alan.com/index/index.php?view=article&catid>).

144. *Alankuş Sevda Doç. Dr.*, Ürdün Çerkesleri. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, ss. 286 - 299.
145. *Alankuş Kural Sevda Doç. Dr.*, Diasporik Bir Topluluk Olarak Çerkesler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 259 - 266.
146. *Alpkaya Gökçen T.*, Türk Dış Politikası'nda Milliyetçilik. «Modern Türkiye'de Siyasi Düşünce». Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 157 - 162.
147. *Bağ Yaşar*, Çerkeslerin Dramı: İşgal, Soykırım, Sürgün ve Göç. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 207 - 217.
148. *Bağ Yaşar*, Çerkes Kimliği. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişme», Ankara, Kaf Der Yayınları, 1999, ss. 5 - 16.
149. *Berk Oğuz*, 5 Yaşındayız. 12 Haziran 2010 (www.kafkasideporasi.com/haber_detay.asp?haberID=3436).
150. *Bilatti Balo*, Kuzey Kafkasya ve 11 Mayıs 1918. «Призыв – Çağırış», N 1 - 2, Май-Июнь 1938, ss. 9 - 11.
151. *Bora Tanıl*, Ordu ve Milliyetçilik. «Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu», Derleyenler: Ahmet İnsel – Ali Bayramoğlu. İstanbul, Birikim Yayınları, 2004, ss. 163 - 178.
152. *Cizre Ümit*, Egemen İdeoloji ve Türk Silahlı Kuvvetleri. Kavramsal ve ilişkisel bir analiz. Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, Derleyenler: Ahmet İnsel – Ali Bayramoğlu. İstanbul, Birikim Yayınları, 2004, ss. 135 - 161.
153. «Cumhuriyetin İlanı ve Azınlıklara Yönelik Politikalar» (www.kafkasevi.com).
154. *Duman Taner*, Örenşehirde Aile-Emek Örgütlenmesinin Değişimi. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişme». Ankara, Kaf Der Yayınları, 1999, ss. 143 - 151.

155. *Eser Mehmet*, Uzunyayla Bölgesindeki Çerkes Köylerinde Sosyo-kültürel Değişme. «Türkiye Çerkeslerinde Sosyo-kültürel Değişme». Ankara, Kaf Der Yayınları, 1999, ss. 53 - 141.
156. *Kandemir Feridun*, Enver Paşa'nın Kafkas Türklüğünü kurtarma hareketi ve çetin mücadeleler. «Tarih Konuşuyor», Cilt 3, sayı 15, Nisan 1965, İstanbul, ss. 1238 - 1242.
157. *Karpat Kemal H.*, Avrupalı Egemenliğinde Müslümanların Konumu Çerkeslerin Sürgünü ve Suriyedeki İskanı. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 88 - 90.
158. *Kuşba E.*, Türkiye Diasporası (www.kafkasevi.com/index.php/printpage/index/article/44/0).
159. *Önem Nizam*, Fethi Tevetoğlu. «Modern Türkiye'de Siyasi Düşünce», Cilt 4, Milliyetçilik, İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 622 - 627.
160. «Örnek Köyün Kurulması». (www.etimesgut.bel.tr).
161. *Özbay Yısmeyl Özdemir*, Sürgünün Sonuçları ve Geri Dönüş Konusu. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)», Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 218 - 228.
162. *Özdağ Ümit*, Türk Milliyetçiliği ve Jeopolitik. «Modern Türkiye'de Siyasi Düşüncüler». Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 168 - 178.
163. *Taşkın Yüksel*, Anti-Komünizm ve Türk Milliyetçiliği: Endişe ve Pragmatizm. «Modern Türkiye'de Siyasi Düşünce». Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 618 - 634.
164. *Taymaz Erol Prof. Dr.*, Diaspora ve Kimlik. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 300 - 308.
165. *Taymaz Erol Prof. Dr.*, Anayurta Dönüş Hareketleri: Yahudiler, Filistinler, Çerkesler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler,

- Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 241 - 258.
166. *Taymaz Erol*, Kuzey Kafkas Dernekleri. «Türkiyede Sivil Toplum ve Milliyetçilik». İstanbul, İletişim, 2001, ss. 451 - 460.
167. *Toumarkine Alexandre*, Kafkas ve Balkan Göçmen Dernekleri: Sivil Toplum ve Milliyetçilik. «Türkiye’de Sivil Toplum ve Milliyetçilik». İstanbul, İletişim Yayınları, 2001, ss. 425 - 450.
168. *Toumarkine Alexandre Dr.*, Diaspora, Dönüş hareketi ve Devlet: Dünden alınan dersler ve gelecek için perspektifler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Kafkas Derneği Yayınları: 15, Ankara, 2001, ss. 192 - 206.
169. *Toumarkine Alexandre*, Türk Kökenli Olmayan Balkan ve Kafkas Göçmenlerinde Milliyetçilik: “İthal Milliyetçilik ile Etki Altındaki Milliyetçilik Arasında”. «Modern Türkiye’de Siyasi Düşünce». Cilt 4, Milliyetçilik. İstanbul, İletişim Yayınları, 2002, ss. 934 - 938.
170. *Tutum Cahit Dr.*, 1864 Göçü ile İlgili Bazı Belgeler. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 7 - 51.
171. *Ünal Muhittin*, Kafkas Halklarının Anavatanlarından Sürülüşlerin 136 Yılı Anma Töreni. «Çerkeslerin Sürgünü 21 Mayıs 1864 (Tebliğler, Belgeler, Makaleler)». Ankara, Kafkas Derneği Yayınları: 15, 2001, ss. 112 - 117.
172. *Beeley Brian*, People and Cities. Migration and Urbanization, «Turkish Transformation. New Century New Challenges», edited by Brian Beeley. Huntingdon, England, The Eothen Press, 2002, pp. 37 - 58.
173. *Bezanis Lowell*, Soviyet Muslim emigres in the Republic of Turkey. «Central Asian Survey», vol. 13, No 1, 1994, pp. 59 - 180.
174. *Kamel Ayhan*, Turkish-Russian Relations During The Republican Era, «Foreign Policy» The Quarterly of the Foreign Policy Institute, vol. XXII, 1998, N 1-2, pp. 45 - 57.

Թերթեր և ամսագրեր

- «Առավոտ», 1939 թ. մայիսի 17
 «Հայկական բանակ» 2005 թ. N 2-4
 «Սովետական Հայաստան», 1957 թ. սեպտեմբերի 4
 «Кавказ», 1938, N 10(58), N 11(59)
 «Кавказ», 1997, N2
 «Независимая газета», 11.12.2009
 «Свободный Кавказ», Мюнхен, 1951, ноябрь-декабрь, N 2 (3); 1952, январь-февраль, N 1-2 (4-5); 1952, ноябрь, N 11 (14)
 «Der Kaukasus», Berlin, 1940
 «Cumhuriyet», 18 Ocak 1996
 «Kafkasya Gerçeği», sayı 9, Temmuz 1992, Samsun
 «Milliyet», 18 Ocak 1996
 «Radikal», 19/12/2005
 «Sabah», 15.06.2010
 «Тарих Конuşuyor», Cilt: 3, Sayı: 14, Mart 1965, İstanbul
 «Tempo», İstanbul, sayı: 07/950, 17 Şubat 2008
 «Yeni Kafkasya», 23 Ocak 1924

Առաջաբան	3
Գլուխ I	
Հյուսիսկովկասցիների գաղթը Թուրքիա 1920 – 1927 թթ. և կովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությունը մինչև «Պրոմեթևս» շարժման ձևավորումը	21
Երիտթուրքերի և ազգայնականների կովկասյան քաղաքականությունում լեռնականների օգտագործման ավանդույթը. 1908 – 1920 թթ.	21
Հյուսիսային Կովկասի անկախության խնդրի շահարկումը 1920 թ. ռուս – թուրքական բանակցություններում	41
Կովկասից մահմեդականների զանգվածային գաղթ կազմակերպելու խնդիրը 1920 – 1921 թթ. ռուս – թուրքական բանակցությունների ժամանակ	59
1921 – 1922 թթ. Հյուսիսային Կովկասում տիրող իրավիճակը և Թուրքիայում ստեղծված առաջին հյուսիսկովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունները	78
Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիության գործունեությունն ու տեղը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում 1923 – 1928 թթ.	126
Գլուխ II	
Թուրքիայի արտաքին քաղաքականությունում հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը «Պրոմեթևս» շարժումից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը	167
«Պրոմեթևս» շարժումը և եվրոպական պետություններում	

հյուսիսկովկասյան վտարանդիության գործունեությունը 1928 – 1934 թթ.	167
Հյուսիսկովկասյան վտարանդիության շրջանում Կովկասյան համադաշնության գանդափարի զարգացումը Թուրքիայի դիրքորոշման փոփոխության համատեքստում	188
Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում 1930 – 1938 թթ.: Վտարանդիության Բեռլինյան կենտրոնի ձևավորումը	202
Կովկասյան մահմեդական վտարանդիության թուրք-գերմանական համատեղ օգտագործման շրջան. 1939 – 1944 թթ.	234
Գլուխ III	
Քաղաքական թատերաբեմից հյուսիսկովկասյան վտարանդիության՝ որպես գործոնի հեռացումը և Թուրքիայի չերքեզական համայնքին նրա ինտեգրման շրջանը. 1945 – 1971 թթ.	264
Լեզեռնականների հավաքագրումն ու տեղափոխումը Թուրքիա 1945 – 1952 թթ.	264
Թուրքիայում հյուսիսկովկասյան միությունների ու մամուլի վերականգնումը 1950 – 1960 թթ.	278
Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքում 1960 – 1971 թթ. տեղի ունեցած զարգացումները	301
Վերջաբան	321
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	323

Տպագրված է «Բլանկիբատ» ՓԲԸ
ք. Երևան Պ. Սևակի 47
Հեռ. 24-54-00